891.99
Q-89

891·99
Գ-89
01 JAN 2009

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑԻ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

1870 թ.

Գրիգոր
1870 թ.

16841-58



ԳՐՈՒԹԻՒՆՔ

ՅՈԳՆԱԹԱԽԱՆՔ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ

ԱՊԱՇԱՒԱՆԱՑ, ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ

ՀԱՒԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ, ԶՂՋԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ,

ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՁՆԱՒՈՒԹԵԱՆՑ,

ԸՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՆՁՆՈՒԹԵԱՆՑ,

ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ, ՅՈՒՅՄՈՒՆՔ ԴԷՂՑՆԵԱՑ,

ՅՈՒՅՄՈՒՆՔ ԽԱԹԿԱՅԱՆՈՑ, ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆՔ ԹԱԳՈՒՀՈՑ։

Սկեղծիք զբաւորք վիրաց անբժշկականաց,
Գեղք ազդողականք ցաւոց անտեսականաց,
Հնարաւորութիւնք բազմահանգեայ երկանց վտանգից։

Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ

ԱՄԵՆԻՒ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԸՆԻՔ ԱՐՑԱՍՈՒԱՑ

ՊԱՏՃԱՌՈՔ ԸՂՕԻՑ

Ի ԽՆԴՐՈՑ ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՐՑ

ՄԻԱՆՑԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ

ԱՍՏՑԵԱՒ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑԻ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՐՈՒՔԻՆՔ ԳԼԽՈՑ ԱՂՕԹԻ

Աղօթք առաւօտու ։ ԲԸՆ Խ· ՀԴ · ՀԸ · ՂՌ ։
Աղօթք վերկացեալ · ՃՌ · ԽԸ · ՂԸ · ՂԴ ։
Աղօթք գոլման ։ Ի · Ը · ԻՌ · ԻԶ · ԻԸ · ՀԸ ։
Աղօթք խնդրելոյ զնորհս և զթողութիւն մեղաց ։ Դ · ՃԸ · Ի · ԻԴ · Ի
ԽԸ · ԻՓ · Ծ · ԾԸ ։
Աղաչանք հաւատոյ ։ Ճ · ՃԸ · ՃԳ · ԼԴ · ԽԴ · ՀԸ ։
Աղաչանք յուսոյ և սիրոյ ։ Ռ · ՃՌ · ԼԳ · ԼԸ · ԽՌ · ԽՓ · ԿԸ · ՀՀ ։
Աղօթք յառաջ քան զպատարագն կամ զհաղորդելն ։ Դ · Ե · ԻԴ · ԾՌ · ԾԴ ։
Աղօթք զնոքա պատարագին կամ հաղորդելոյն ։ Ե · Ե · ԻԴ · ԿԸ · ՂԸ ։
Աղօթք ի սուրբ չարչարանս Քրիստոսի ։ ԻՀ · ԼԶ · ԼԸ · ԽԴ · ԾՌ · ԿԸ · ՀԶ · ՀԸ · ՀՀ · Ղ ։
Աղօթք առ սուրբ Աստուածամայրն ։ ԻԶ · Հ ։
Աղօթք յաբեխոսութեամբ սրբոցն ։ ԼՆ · Հ · ՀՆ · ՀՌ · ՀԶ · ՀԸ · ՂՆ
Աղօթք առ հրեշտակս և առ պահապան հրեշտակն ։ ՀՆ ։
Աղօթք վասն բարի մահուան ։ Ռ · ԿԶ · ՀԳ Հ · ՀԸ ։
Աղօթք վասն բժշկութեան ։ Գ · ՃԴ · ՃԸ · ՃՀ · ԻԵ · Լ Ե · ԽՌ · ԽԳ · ԿԴ · ԿԶ ։
Աղօթք վասն հոգեվարաց ։ յիշատակաւ մահու ։ գերեզմանի ։ յարութեան ։ տատանի ։ Ն · Ռ · Ի · Ը · Ի · ԻԳ · ԼՌ · Լ Ը · Լ Ռ · Խ · ԿԵ · ԿԶ · ՀԴ · ՀՌ · Հ · ՀՆ · ՀՀ · ՂՆ · Ղ Ե ։
Աղօթք վասն ննջեցելոց ։ ՀԶ ։
Աղօթք վասն հարուածոց արտօրէից ։ Գ · ԿԳ · ՀՀ · ՀՓ · ՂՌ ։






ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР



Այս կացցէ առաջման յանձնառական խոստովանութեամբ
մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո, ամենակալ. Ծդ. 231

ԳՐԻԳՈՐԻ
ՆԱՐԵԿԱՑՒ ՎԱՆԻՑ
ՎԱՆԱԿԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱՆ Ա.

Ի խորոյ պրկել իօթ ընդ Աստուծոյ։



Ընդն հաւաչանաց հեծութեան սրտի՛ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տեսողդ զաղտնեաց. և մատուցեալ եղեալ ի հուր թախծութեան անձին տոչորման ըզպատուղ ըղձից ձեռաձերոյ սատանեալ մոռացս, բուրվառաւ կամացս առաքել առ քեզ։ Այլ հոտոտեացիս հայեացիս, զթած, քան ի պատարագն բոլորապատուղ մատուցեալ ծխոյն բարդութեան։ Ընկալ զսակաւամատնեայ բանիցս յօդուած քեզ ի հաճութիւն, և մի՛ ի բարկութիւն, ելցէ ի խորոց սատի զգայութեանց

խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ կամաւորական նուէր բանական զոհիս ողջակիզեալ զօրութեամբ Հարցոյ՝ որ յիւն է պարարտութիւն: Եւ ի դնելս իմ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիս, Տէր, մի իրրև ըզհամբարձումն ձեռաց ամբարշտեացն Յակորու, ըստ բողոքելոյն Եսայեայ, և զանիրաւութիւն Խաբելոնի, տաղտկալն քեզ երևեցի. զոր առակ եօթանասնեւերորդի երկրորդի սաղմոսին ազդէ. այլ իբր զբուրեալ խունկն Հաճոյական ի խորանին Սելովայ, զոր Դաւիթն կանգնեալ նորոգեաց տապանակին Հանդստեան ի գերութենէն դարձելոյ, որ ի վերատին դիւտ կորուսեալ հոգւոյ առակի, ընդունելի կամաց քոց լեցի:

Ր. Հայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ ուժգնիս հնչեցեալ ի ձորն վեհժ խնդրութեան՝ կրկնիս ինձ երկնմարտից յարուցմունս, այժմն զուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց, որ յիւմման անձին ցուցանի: Խռովութիւնս ամբոխից, հարեալք ընդ միմեանս զին առ սուսեր՝ խորհրդոյն հոյլք, չարեացն ընդ բարիսն, և գերեալ զնս ի մահ ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան զնորհին ժամանել առ խաղող ընտրեալն առաքելականացն դասուց Պօղոս՝ առ օրինակեալ զՊօղեան, զԲրիստոսի

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ

փրկութիւնն յաղթող ցուցանէ: Այսպէս զի թէ մերձ է օր տեառն, որպէս զիր ասէ, ի հովիտն անձուկ ասպարիսին Յովսափաթու և հեղեզատին Կեդրոնի, փոքր հանդիսարանացն իբառանց ժամադրութեանց, որ կենցաղական նաւ այսր յաւիտենից զհանդերձելոցն ինձ կերպարանեն, ապա ևս յաւէտ մերձեցաւ ի վերայ իմ արքայութիւնն Աստուծոյ մարմին եղելոյ, մեծապէս զտեալ զնս առիթ ճշմարտասաւանդ բազմաց տոկոսանաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից, քան զձեռին նորին վերակացումն անդ ուրեմն երբեմն ի հարուածս եղովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց բարբարոս ազգաց: Քանզի այն ընտրութիւն ամօք չափեցաւ, իսկ պատուհաս իմումն պարտուց առանց աւարտման ունի ըզսահմանն: Ընդ որոյ և որոգայթ անճողոպրելի, ըստ մարգարէին և առակողին. տազնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամենեցունց մշանջենաւոր աստէն գծագրել: Զի միայն քո է հրաշագործել պատուոյ դեղոց ի հնարս կենաց ամենաճարան տարակուսանաց հոգւոց վտանգից, քաւիչ ամենայնի՝ գովեալ ի փառս անճառս անսահմանելի բարձրութեան, յաւիտեանս յաւիտենից:

ԲԱՆ Բ.

Ա Ջ ՏՈՒՆ ՅԱՈԹԵՍՈՒՆ ԼՐԱՒՆ ՀԵՒՈՒԼԵԱՆ ՆՈՒՆ ՀԱՒԱՏՔ
ԱՒ ՆՈՅՆ ԱՂԷՔՍ ՆՀԱՂԱՆԱՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՊԻՏԻ ԽՕՍ ԸՆԴ ԱՍՊՈՒՀՈՅ։

Ը Եւ արդ քանզի առ բարձրեալն Աստուած յօդաւորական շրթամբք կարդաս, որ գործով միայն պրաւի և ոչ առեղծաբանութեամբ կաշաւի, որ Յեղիպտոս միշտ ունիս զսրտիդ զդարձն, զի՛նչ օրինակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական առտանօր եղիցի՝ անձն իմ պարտաւոր, պատմակիցս կործանեցելոյն Սոդոմայ, բմբերանեալ դատախազս Նինուէի, անարի բարբարոս քան զհիկին Հարաւային, վատթարագոյնս քան զԱնանան, յամառեցեալս քան զՄանղէկ, անբժշկականս քաղաք դրօշելոց, նշմար մնացեալ ապստամբութեան հինն Իսրայելի, յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն Ցուդայ, կշտամբեալս զեր քան զՕսէ, տարամերժեալս քան զՕսայդան, խորթաբարոյս քան զՄալկեա, աննկերելիս քան զանհաւանն Կաթաւնաւմ, պարսաւեցեալս իբր զՀորազին, բամբասեցեալս ընդ Ռեթսայիդա, անպարկեշտ ծաղկեցեալ ալեքս Եփրեմի, աղու աղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հանդարտութեամբ, Ի կորեանց առիւծուց անձնական օձս եղեւ

նային, կերպս ձուոց քարբից լսել ժանտու-
թեամբ, պատկերս վերջին հարուածոյն Ե-
րուսաղէմի, ըստ բանին ասէրնի՝ և տեսանո-
ղացն ձայնի, տաղտարս մերժեալ՝ հասեալ
՝ի կործանումն, խորտակեալ դրացս վստահա-
բան, և կրկին ծրդեալ շինուածս խօսուն,
Թողեալ ժառանգութիւնս յարմարական, մո-
ռացեալ տունս աստուածակերս, ըստ բանից
նախագրեցելոցն Մովսէսի, Դաւթայ և Ե-
րեմիայի, յարկս բանական՝ ունողս բորոտու-
թեան, հարուածեալ խրատու քերմանն, օ-
րինիս կազդուրեալ, օծեալ կաւովն՝ ողբական
հեզութեամբն, անճարակ գտեալ յելս հնա-
րից, քակտեալ վերատին ձեռամբ շինողին,
արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ
հրամանաւ հզօրին ՝ի տեղի անսուրբ, հերքեալ
տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնիս
առանց խնայելոյ, ծածկեալ դրամն յերկրի
չարեաք, ըստ աւանդակորոյս ժխտողին՝ որ
յաւետարանին ցուցանի:

Ր· Ա՛յլ դա, Ա՛ստուած, Ա՛ստուածդ հոգ-
ւոց և ամենայն մարմնոց՝ ըստ դաւանելոյ աստ-
ուածաշնորհին, երկայնամիտ և բազումողորմ՝
ըստ արբոյն Յովհաննու ձայնին, չնորհեա կա-
տարել ՝ի քոյդ հաճութիւն օրհնեալդ կամաց՝
զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ող-
ջերգութեան: Եւ ընդ լալով սերմանել բանիս

'ի նախընթաց չուս աստիճանաց օրհնանաց
պատրաստութեան, 'ի կատարածն ժամա-
նելոյ հաւաքման հնձոցն, դարձայց բերկրե-
ցեալ լսութեամբ քաւութեան՝ պողոյն երա-
նելութեան որպիսին բարութեան: Մի՛ տացես
ինձ արդանդ սրտի անորդի՝ իբր Իսրայէլի,
և տոհմս աչաց ցամաքեալս՝ ով ամենագութ:
Լուր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած,
նախ քան երկինի, և երկին երկրի, և նա ցո-
րենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա Իսրայէլի:
Եւ երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս
աղղեացէ, քանզի տարերաց ապականացուաց:
Դու ստեղծիչ՝ և ես կաւ, բայց տարակուսելոյս
'ի մուտս մաղթանաց այսր հեծութեան՝ կամն
քաղցրութեան՝ զօրանալ ասէին. զի մի՛ 'ի
բանալ վերնայինն երկնի՝ անընտիր գտեալ կրթ-
թութեան վայելման լուսոյ, իբր զնիւթ մանոյ
սպառեցայց ընդեալ 'ի միջոյ: Ոգի զգեկելոյս,
ըստ մաղթանաց գոչման ասողին, և ոյժ թա-
կացելոյս, և կեանք մնչելոյս՝ մնացս խղճիս,
այլ ոչ տաժանմամբ կրից՝ աշխատութեամբ
գբեղ խնդրելոյ, առ զաւանդ մաղթանացս,
և տուր զողորմութիւն քո շնորհացդ. ընկալ
զերդս 'ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ
'ի հզօրէդ. զօրացո զբանս զղջման, առաքեալ
'ի մեզ հոգի 'ի բարձանց՝ աստուածաշունչ
պատգամաբս 'ի սմա եղելոցս: Պարգեւեա,

պարերաբ՝ զառակին Աստուած, լուսաւորեալ առ ճշմարտութիւնն, մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ պղնձոյս պոյի անարդս ձայնի՝ զոսկի քո շնորհի· ընդ անզարդութեան երկաթոյս սեւութեան զունոյս՝ պղինձ պճնելի, ցոյց առաքինութեան, հրաշեկ Հրեանանս: Ընդէր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝ չերկնչել ի քէն, անճառ և ահաւոր: Մի եղէց անպտուղ ի փոքր վաստակոյս՝ իբր ապաջան սերմանող անբերրի երկրի: Մի լեցի ինձ երկինդ և ոչ ծնանել, ողբալ և ոչ արտասուել, խորհել և ոչ հառաչել, ամպել և ոչ անձրեւել, ընթանալ և ոչ հասանել, ինձ ձայնել և քեզ ոչ լսել, պաղատիլ և անտես մնալ, կողկողել և ոչ ողորմել, աղաչել և ոչ ինչ օգտել, զոհել և ոչ ճենճերել, զքեզ տեսանել և դատարկ ելանել: Այլ ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ, միայնդ հզօր· մի զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ թուով աւուրց մեղաց կեցելոյս չարագործիս ինձ հատուցաներ: Կեցո զիս զթած, լուր ինձ ողորմած, մարդասիրեա ներող, խնայեա երկայնամիտ, պաշտպանեա ապաւէն, բարերարեա հզօր, ազատեա ամենակալ, կենագործեա նորոգող, վերականգնեա ահաւոր, լուսաւորեա երկնային, բժշկեա հնարաւոր, քաւեա անբծնելի, պարգեւատրեա առատ, շնորհազարդեա

անձնախանձ, հաշտեա անախտակիր, ընկալ ա-
նոխակալ, սրբեա ՚ի պարտուց օրհնեալ: Եթէ
յառեցից զաչս իմ՝ նայեցեալ ՚ի հայեցուածս
երկուց վտանգից յաւուր թշուառութեան,
զբոյդ տեսից փրկութիւն՝ յոյս և խնամակալ.
եթէ նկատեալ դիտեցից ՚ի վեր յամենազրաւ
ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան
քաղցրութեամբ ինձ պատահեսցէ: Ցոյց ինձ,
տէր, ՚ի յելից աւուր ընչից արձակման՝ մաք-
րութեան ոգի լուսով ամբարձեալ ՚ի յերկնատա-
րացն երջանկաց՝ պարգեւօք սիրոյ քո եկեալ
հասեալ: Ի յարդարոյն կատարելոց՝ կարեաց
ինձ կցորդ ժամանեցուացես. զանահնկալն
բարի՝ չարիս ՚ի յուսահատութեանն աւուր
շնորհեսցես: Վաս լեցի քեզ, բարեբանեալ,
որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտա-
ցեալս քո ոչխարի՝ զաղան դժնդակ տացես
ուղեկից. մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք,
կործանելոյս պարտեօք՝ փրկութիւն:

Զ. Արդեօք մոռացիս զբարերարելդ՝ ա-
կընկալութիւն. անտեսեսցես զդիմաւորելդ՝
խնամոյ. այլայլեսցես զմարդասիրելդ՝ անփո-
փոխ. նհանջեսցես զկենսատուելդ՝ անվախճան.
թողուցուս զողորմութիւնդ՝ երջանիկ պատուդ:
Ընդաւաղեսցես զքաղցրութեանդ բարեշնորհ
ծաղիկդ. անպատուեսցես զնիւթ պանծանաց
քումդ բարձրութեան. ոչ պահեսցես զվայել-

չական զարդ պայծառութեան քումդ պատակիս։ Եթէ ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ, ո՛չ զողորմն պարգեւեցեալս փրկութիւն. ո՛չ մատուցանիցես դեղ վիրացս, ո՛չ սպեղանիս խոցուածոյս, ո՛չ դարման տկարութեանս. ո՛չ ծագեացես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգեւդ տիեզերաց, որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ իսկութեամբ և յարակայ մշտնջենաւորութեամբ, վկայեալ 'ի բնաւից, օրհնեալ և փառաւորեալ յերից յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Գ·

Ա՛ր ըստ յաւելուած երկին հեծութեան նորին հակիրճ
ասա նոյն աղերս մատնանաց քանի.
'ի խորոց սրտից իմոց ընդ Աստուածոյ։

Ա՛Տ֊Ե՛Ր իմ տէր, առիւծ պարգեւաց, ինքնաբուն բարի, ամենից տիրող հաւասարապէս, միայն արարիչ զենաւս յոչէից, փառաւորեալ, անքննին, ահեղ, ահարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անտանելի, անմերձենալի, անըմբռնելի, անխմանալի, անճառելի, անտեսանելի, անշրնելի, անշօշափելի, անորոնելի, անակիզն, անժամանակ, անշրջադարձ դիտութիւն, անսերկեւան տեսութիւն,

ճշմարիտ էականութիւն, բարձր և խոնարհ, օրհնաբանեալ գոյութիւն, անստուեր ծագումն, ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս, անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ, անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն, ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաստիչ հոգւոց հաց, օտար մթութեանց սէր, աներկբայ խոստումն, ծածկոյթ ցանկալի, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, զարդ փառաց, ձեռնկալու մեծ, ապաւէն գովեալ, անմուռազելի շնորհ, անպակասելի դանձ, անապական անձրև, արփիացնցուղ ցօղ, ամենատեղաց դեղ, ձրի բժշկութիւն, կրկնաձիր առողջութիւն, վեհագոյն խրախոյս, անպատիր կոչումն, համօրէն աւետիս, ստորկամեծար թագաւոր, աղքատասէր պաշտպան, մշտահարուստ տուիչ, անխափան դիմեցումն, աննահանջելի հրաման, անհամառօտ յոյս, երկար տեսողութիւն, անզղջական տուր, ամենաբաշխ աջ, արդարակշիռ ձեռն, անաչառատես ակն, միսիթարութեան ձայն, ըստփոփանաց լուր, բերկրութեան բերումն, անուն կենդանի, նախահինամեղ մատան, անդայթակղելի ելք, անխարդախ ընթացք, կենդանարար կամք, անսենդելի խրատ, անսխահանձ պատիւ, լայնական հնարք, անձկական պայման, անգտանելի հետք, աներեւոյթ շաւիղ,

անչափագիր պատկեր, որքանութիւն անսահման, անմանական տիպ, անզուգական գութ, ողորմութիւն բազմազեղ, խոնարհութիւն ոճնելի, համբոյր փրկական: Աչ եւս քան զայս ազգմունք վայելչականք՝ աստուածծութեանդ նուիրելիք. օրհնեալ, գովեալ, բարերանեալ, քարոզեալ, աւետարանեալ, հրեշակեալ, հնչեցեալ, պատմեալ, անխաբելի կամաք ազաչեալ, և որ ինչ առ մեզ բերին առ՝ի քէն հոսմունք քաղցրութեան, զոր հանդերձելոցն ճառից լուսաբանեն կերպատորութիւնք. որով զուարթ ցուցանիս՝ի փրկութիւնըն իմ, երանութիւն, իբր՝ի պարարտութենէ իմեքէ ախորժ տենչանօք լցեալ, զի ո՛չ իմովս ինչ անոտիապատուաստ փառատրիս երգով, այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝ մեծիդ փրկանաց:

Ն. Աչ քանզի առ ամենայն հասակ տընկեցեալ յերկրի ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նորոգ մատենի ողոց նուազի, որ զամենեցունց ոնի զկրից պատահմանց նշաւակեալ յիւրում պատկերի, իբր կցորդ մեծգիտակական կարեաց համայնից, առ բոլոր գումարս բազմահոգով տիեզերակոյտ քրիստոնէից, առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ կոչեցեալ չափու արքունն, առ որ՝ի կատարած աւուրն կալեալ՝

սակաւաձեռն ծերութեամբն, առ պարտաւորս և արգաս, առ ինքնարդոյ բարձրայօնն և սխալեալ անձնադատ գտեալն, առ բարիսն և եղեռնագործս, առ նկունս և առ արիս, առ սորուկս և ներքոյանկեալս, առ սեպուհս և դերաշխարհիկս, միջակայնոց և պայազատաց, շինականաց և տոհմականաց, արուսց և իգաց, հրամայողաց և հնազանդելոց, դեր եւ լոց և նուաստից, վհիկ և փոքունց, պատուականաց և ոամկաց, ձիավարժից և սակաւականաց, քաղաքականաց և դեղջկաց, արքայից զոռոզութեանց ՝ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց, միայնացելոց՝ վերնականացն խօսակցաց, մարդկականաց տիրանուէր զգաստութեանց, քահանայական երջանկակրօն ընտրութեանց, այցելութեանց բարեզգեստից դիտողութեանց, աթոռակալութեանց նահապահից սրբանուէր տեսողութեանց. որոց ոմանց աղերս աղաչանաց, և ոմանց խրատ բարեաց առ դէմն սղօթից այսու մատենիս մատակարարեցի, ձեռնարկեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմոգիմիս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ զթութեան մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ:

Գ. Եւ արասցես զսոյն ընթերցողացն ՝ի սիրոս յոտակ՝ բժշկութիւն հոգւոց և մարքութիւն յանցանաց, թողութիւն պարտուց

և արձակուրդ մեղաց կապանաց։ Աղեցի բղխումն արտասուաց սովաւ վարժելոցն, և պարգեւեալ տացի ՚ի ձեռն սորին ապաշաւ ըղձից։ Հնորհեացի տէր և ինձ ընդ նոսին առ ՚ի քէն ողջոյնն կամաց, և նոցա իմովք ձայնիւ շունչս բարեհամբոյրս. նուիրեացի՚ վասն իմ այսու մատենիւ պաղատանաւք նոցին, և բանիւս այսու հեծութիւնք նոցին ընդ իմ խնկեացին։ Ընդ համբոյր ճաշակման այսր ողբերգութեան, հնորհ լուսոյ քո մնեալ ընակեացէ։ Աթէ ելցեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սովաւ, ընկալ կենդանեօքն վասն քո, դթած, և զիս ընդ նոսին. եթէ ախտս ինչ սրբանուէրս կաթուածոց աչաց սովիմբ բերիցէ, եղեցի ՚ի քէն խնամակալ՝ և յիս անձրևեալ. եթէ դրեացի և ՚ի փրկութիւն կարգեացի հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւ քո օրհնեալ՝ և ինձ համարեալ։ Աթէ հեծութիւնս աստուածահաճոյս ՚ի ձեռն այսր բանի ՚ի գաղանեաց ուրուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քեւ բարձրեալ՝ և ես ընդ նմին. եթէ ձեռն մատուր՝ խնկով հանդերձեալ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմն ձայնի և աղաչողացն աղերս յառաջ մատուցեալ։ Աթէ պաղատանս բազմադիմիս ընդ իմն երկնեացի, լեցի և ինձ քեւ և վասն սորին կրկին նուիրեալ. եթէ յարգեացի այս անձին բանի

պատարագ՝ քեզ ՚ի հաճութիւն, նախայլոյն ընդ իս քեւ ընծայեսցի: Եթէ ՚ի տխրանաց ինչ ձանձրութենէ ոք նուաղեսցի, կանգնեսցի վերստին հաստատանաւ այս հառաչանաց՝ ՚ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վատահութեան մեղաք յատակի, այսու արձանաք պատկանեցելով աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուցցի: Եթէ յուսոյն ձգտարան սուսերբն յանցանաց հատեալ կտրեսցի, կցեսցի դարձեալ միւսանգամ կամաք ամենակալիդ բարւոք պատուաստեալ. եթէ վտանգ մահու անձնական ցաւոյ զոք պաշարեսցէ, գոցէ փրկութիւն սովաւ առ ՚ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի ՚ի սիրտ խոցիցի, քաղցրութեամբ քո՝ սովաւ ապրեալ ողջացի: Եթէ անքաւելի կորստեամբ պարտեաց՝ յանդունդս ոք խորոց իցէ ընկղզեալ, եկեսցէ ՚ի լոյս կարթիւ այս հնարից՝ քեւ պատսպարեալ. եթէ թմբրութեամբ խաբից խաւարին գործոց իցէ ոք վնասեալ, զօրացի անդրէն վասն քո՝ միայն ապաւէն՝ ՚ի քեզ ապաստան եղեալ: Եթէ պահպանակն վստահութեան զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնորդիւ ձեռն քո զնա՝ ամիոփեալ ՚ի նոյն հաստատութեան. եթէ ամայի ՚ի զգուշութենէ պահողացն ոք դեգերեսցի, սպասեսցէ սովիմբ առ ՚ի նոյն

դարձ Նորոգողիդ: Եթէ սարսուռ ղիւային ջերման դողութեամբ ինչ ղոք խոռվեսցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նշան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհրդոյ· եթէ անօրէնութեան մրրիկ խորտակիչ հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստատածս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս, հանդարտեսցի անդրէն ղեկաւ այս թեւոց 'ի քեզ պատկանեալ:

Գ· Նէ արասցես լինել դեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց և մարմնոց քոց ստեղծուածոց՝ զայս կարգեալ սահման ողջոց մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝ բարձրեալ: Ցսկսեալս իմ դու կատարեա. եղիցի հոգի քո խառնեալ 'ի սա. շունչ զօրութեան մեծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս. զի դու տաս զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենեցունց· ամէն:



ԲԱՆ Գ.

Ա՝ երրորդն յաւելուած երկին հիւծութեան ընդդէմ հակառակ առ նոյն առիթս հարկանելոց բանի.
՝ի խորոց սրտից իւրեանց Ասորւոյ:

Ա. Եւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ ՝ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հոգւոյս բազմազեղի, յիրաւի սարսեալ դողայեալ տագնապաւ մեծաւ յաւէտ երկընչիմ. վասն զի ահաւոր և անտանելի և ՝ի սահմանէ բանի փախչելի յիշատակ անճողոպրելի անաչառդ քո ատենի՝ ՝ի կշռամբուն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի: Այս զի և շնք իսկ բժշկութիւն բազմավտանգ սատակումեան վերացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց, որսողին զանճն իմ ՝ի կորուստ: Անաւանդ զի ոչ գոյ պատասխանի, զատ առակողին, յաւուր պատերազմի, և ոչ բանիւ իրաւանալի, և ոչ վերարկուաւ պատապարելի, և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մեղուչելի, և ոչ կերպարանօք երբէք խաբելի, ոչ յօդուածովք բանից ստելի, ոչ արագմամբ ոտից փախչելի, ոչ թիկանց դարձուցանելի, ոչ դիմաց ընդ երկիր մեծուցանելի, ոչ բերանով ընդ հող հաստելի, ոչ ՝ի խորս երկրի ղօղելի: Քանզի մերկ են քեզ ծածկեալքն,

և հրապարակեալ են անեւևոյթքն. արդա-
րութիւն իմ նուազեալ և խոպառ ունայնա-
ցեալ. մեղանքն յայտնեցեալ և յաւէտ ա-
ռաւելեալ. չարիքն իմ մնացական, և ես կո-
րըստական. իրաւանցն կշիռ պակասեալ և
անիրաւութեանն խոկոյն զօրացեալ. բարեացն
բերք հալեալ, և սխալմունքն արձանացեալ.
աւանդն կորուսեալ, և դատաւինիքն այժմէն
գտեալ. մահուն մուրհակ գծեալ, և աւե-
տեացն կտակ եղծեալ: Խարերարն տխրեցեալ,
և բանաարկուն ուրախացեալ. հրեշտակաց
գունդն թաղծեալ, և սատանայ խնդալիք
պարեալ. վերնական զօրքն ողբացեալ, և բա-
ռորնայինքն բերկրեցեալ. սպանողին միերքը
լցեալ, և պահողին դանձն կապտեալ. օտա-
րին կողմն կանգնեալ, և սատցողին պարգեւ
մատնեալ. հաստողին ձիր մուտացեալ, և կո-
րուսչին հաղորքն պահեալ. երախտիք փրկչին
հենդնեալ, և բելիար զուարթացեալ. կենացն
աղբիւր փակեալ, և գոռոզին ժանդ ժանդիս
ժամանեալ:

Ե. Եւ արդ ո՞չ ապաքէն ըղձալի էր, զատ
զրոյն կանխամիտեան նախաձայնելոյ, ոչ բա-
տեղծանիլն երբէք յարդանդի և ոչ նկարիլն
'ի յորովայնի, ոչ 'ի ծնունդ յառաջագիտիլ և
ոչ 'ի լոյս կենաց հասանիլ, ոչ 'ի թիւս մարդ-
կան զրիլ և ոչ 'ի հասակ աճմանն ամբառնալ,

1881-8

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм. ССР

ոչ ՝ի պատկեր դեղոյ զարդարիլ և ոչ բանիւ հանդերձաւորիլ, քան ընդ այսպիսեաց սատակադունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վնասոյ կարծրութիւն բերէ, թող թէ մարմնոյ լուծականութիւն:

Գ. Եւ արդ տուր բարեգութ՝ աղաչեմ զքեզ, տուր ինձ ողորմութիւն, որ զայսոսիկ դու ինքնին քեզէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր ասելով, թէ տուք զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ աստուածոյ, և տուրբ եղերուք. զի ողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագ: Ահա բարձրացիր վերատին խընկեալ այսր յիշատակաւ, որ ունիս զամենայն, և ՝ի քէն է ամենայն, և քեզ փառք յամենեցունց. ամէն:

ԲԱՆ Զ.

Վէրստին յաւելուած ի հնդուկեան նոյն հայոց
աս նոյն աղբս մանկանաց բանի.
ի խորոց սրտից իւոց ընդ Աստուծոյ:

Ա. Եւ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայուն գոյիւ զբաղեալ, և չիմարութեամբ պատրողականաւ գինեաւս չիմարեալ, որ ամենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ: Քանզի որովք դիմօք վերագրեցեալք նշանակօք աղարտեցեալովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում դատաստանիդ,

ով իրաւադատ ահաւոր, անճառ, անզգաստում, հզօր աստուած բոլորից: Ռանդի դասեալ աստատին 'ի սոյն զապերախտութիւն մեղուցեալ անձինս առ քումդ երախտիս, ցուցից զերաւունս քո միշտ զօրացեալ և զանիրաւութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ: Որ առարեր զիս 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն մեհիդ տպաւորութեան, զտկարս օժանդակելով:

Ր. Ջարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտաք ճոխացուցեր, իմաստիւք ածեցուցեր, հանճարով հաստատեցեր, 'ի ընչականացն որոշեցեր, հոգւով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյիւ պճնեցեր, ծնար հայրաբար, մտուցեր դայեկապէս, տածեր ըստացողապէս, անկեցեր զամբարիշտս 'ի քումդ դաւթի, ջրովն կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հացիւդ երկնայնով ջամբեցեր, աստուածային արեամբդ արբուցեր, անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր, զաչս երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր, լուսովդ փառաց վերածածկեցեր, զհոգանիւթ մատունս անմաքուր ձեռացս 'ի քեզ մատուցեր, զմեխիրս անարգ մահացու՝ իբր զինչոյլ լուսոյ յարդեցեր, զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդապիրապէս և անարժանս իմոյ անձին կնքեցեր:

Ոչ կիզեր զբերանս լցեալ նանրութեամբ՝ ի ժառանգակիցն կարդալ զքեզ, ոչ կշտամբեցեր զյանդգնեալս ի քո կցորդութիւն, ոչ ատելացուցեր զտեսիլ աչացս ի քումդ ակնարկութիւն, ոչ արգելանեաւ կապանաց ընդ մահապարտացն տարապրեցեր, ոչ խորտակեցեր զդաստակ բազկիս՝ որ անմանրբարձս առ քեզ համբառնայր, ոչ մանրեցեր զոտս իմոց մատանցս ի շօշափելն զբանդ կենաց, ոչ պատեցին զլինել մատախուղք ի ձօնելն զքեզ՝ ահաւոր, ոչ փշրեցեր զպարս ատամանցս յըմբռչխնելն զքեզ՝ անսահմանելի, ոչ գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հեաւղոյս, իբր ընդ վիսպեալ տունն Իսրայէլի, ոչ խայտառակեցեր ի հարսնարանիդ զանարժանս քումդ պարերգութեան, ոչ ի գՃուճ հանդերձին տեսիլ զաւրինեալս յանդիմանեցեր, ոչ կապանօք ձեռացս և ոտից յարտաքին խաւարն հալածեցեր։

Գ. Ձայս ամենայն մատունս բարեաց և զներելոյդ երկայնմտութիւն ընկալեալ ի քէն՝ բարերար, օրհնեալ և յամենայնի միշտ երկայնամիտ, փոխադրեցի զեաւտակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէնութիւնս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածոփ խորհրդոց յուզմանց

երկրաքարշումեանց: Զայսոսիկ քեզ, ասա-
ուած իմ և տէր, ընդ այսքանեաց բարեաց
փոխարերեցի. զայս քեզ ինձէն հատուցի չա-
բիս, քան մովսիսեան յանդիմանութեանն ա-
ռակի, մոռացեալ զնմանատութիւն և սիրոյս
յիմարութեան: Զայսց բարեաց երախտեաց
կաճառս՝ ընդունայնութեան գնացիւք՝ չարա-
չար ունայնացուցի. զայս լուսաւորութիւն շը-
նորհաց անճառից՝ ի բարձրելոյդ խնամոյ բար-
դեցեալ՝ մրրկաւն խելագարութեան ցնդեցի:
Ու թէպէտ բազում անգամ ծանուցար կար-
կառմամբ ձեռին քո այցելութեան ձգել զիս
առ քեզ, ոչ հաւանեցայ ըստ մարգարէին որ
ցնարայէլ ամբաստանութեան. և թէպէտ
խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյանալ, և
ոչ ընդ այսմ առհմանաւ ուխտիւ փակեցայ,
այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդրա-
տին յոճն առաջին մատեայ, փշոցն մեղաց
հերկեցի զանդաստան սրտիս յորմանն ար-
դիւնատրութիւն: Ու իս ելանէն առաջք աս-
տուածարեալ առըր մարգարէիցն. քանզի
ճնացեր յինէն խաղողոյ, և ես ընդ այնորիկ
փուշ շառաւիղեցի. զարձայ յանախորժ դառ-
նութիւն պտղոյ՝ այդիս օտարացեալ. բուռն
հարի զանհաստատ հողմոյ, որով միշտ տա-
տանեալ այսր անդր տարաբերիմ. ըստ ձայնի
երանելոյն Յոբայ ընդ ճանապարհ իմն ան-

դարձ գնացի. ՚ի վերայ աւազոյ շինուածս յիմարութեան կառուցի: Այնաւասիկ հեռուէ խաբեցայ կենացն անձկալեաց հասանել. փակեցի ինձէն զելից ուղեւորութիւն. բացի կամաւ զկորստեան խորխորատն: Ոչի զպատուհան լսելեացս իմոց առ բանիդ կենաց ընդունելութիւն. կափուցի զաչաց հոգւոյս հայեցուած առ ՚ի զկենացն զեղ նկատել: Ոչ ընդոստեայ ՚ի թմբրութենէ լքմանէ մոռացա ՚ի պատգամ փողոյդ սահատութեան. ոչ ըզդասուցայ ՚ի բողոք գուժի հրաշափոքձական աւուրն ընտրութեան. ոչ երբէք զարթեայ ՚ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ ՚ի կորուստն կարապետէ: Ոչ եռաւ հանդիսա քոյ հոգւոյդ ՚ի մարմնեղէնս տապաւարի. ոչ ընդ բրնութիւն ընչոյս խառնեցի զման ընտրհաց քումդ պարգեւի. իմոյս ձեռօք կոչեցի կոբուստ, ըստ առակողին, զհոգիս կենդանի մահացուցանել:

Դ. Եւ զի՞նչ է ինձ սակաւս և նուաղագոյնս յօդել սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ անցեալ է ըստ քանակութիւն և վճռեալ ըստ բժշկութիւն: Արդ քո է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս, և անհասկալութեամբ մատչել առ այցելութիւն դատապարտելոյս՝ որդի աստուծոյ կենդանւոյ. քեզ փառք յաւիտեանի. ամէն:

ԲԱՆԵ Զ.

Ա ԷՐՈՒՆ ՅՈՒԼԻՈՍԻ ԿԻՒՆ ՀԵՅՈՒԼԻԱՆ ՆՈՐՆ ՀԱՒՈՂՔ
ԱՒՆ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՀԱՂՈՒԱԾԱՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՊԻՏԻՑ ԻՍՏ ԸՆԴ ԱՊՈՒՈՅ:

Ա. Իսկ արդ զինչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն սահման ընթացից ձայնիս հեծումեան՝ լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վէրիս՝ խարանաւ բանիս արտաքս հերքել, և կամ զծանրութիւն սրտիս մխերեալ ցաւոյս հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութեամբ, մեղմամխիթ զղուանօք փսխել:

Ր. Ես քանզի ոչ գոյ արժանի պարծելոյ ի փառս ընդ սրբոյն դաս, որոց լի են բերանք նոցա ծաղու և շրթունք իւրեանց ցնծութեամբ, ըստ առակողին և սաղմոսողին, ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիան իմ յիշատակել համայն աստանօր. թէպէտ առ իմում թերութեան բարւոց անբարեաց՝ և նոքա յաղթականք լցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն: Ցօնելի եղեւ Մանասէ առ իմոյ պարտուցս առաւելութիւն. պատուեցաւ և փարիսեցին առ գժնէիս ամբարշտութիւն. գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ուխտազանցութիւն. յիշատակեցաւ կեղծաւորութիւն որդւոյն Ամմաւայ առ անշնորհութիւն

ապաիտաւորիս. օրհնաբանեալ եղեւ աւազակին, որ դատապարտն է անհաւատից. պատուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամոյրն ապաշաւողաց: Ոչ պակաս քան զվարաւօն զըստեղծուած սրտիս իմ խոստացուցի. ըստ օրինակի խոտորմեան մերկաց ծոմս ծփեցայ. ոչ այնքան ատրեցի և պատկառեցի ՚ի սատկումենէ քումդ հրամանի, որքան ալիք ծովուն յեղերացն: Ընդ թիւս չափուց կշռութեան աւ իմս գործոց՝ և աւազին կոյտ սահմանեցաւ. պակասեաց անբաւիցն շիղջ աւ համբարս իմոց անօրէնութեանց:

Գ. Ջի թէպէտ և յոյժ բազում են մանունքն ՚ի յափունս ջրոյն համահաւաքեալք, այլ ուրոյնք և առանձնականք ՚ի ծննդոց աճելումենէ. իսկ մեզանիք իմոյս յանցանաց՝ անթիւք. զորս անհնար է առնուլ ՚ի միտ: Որմն և ծնունդք իւր, որմն և շառաւիղք իւր, որմն և բիծք իւր, որմն և արկածք իւր, որմն և փուշք իւր, որմն և արմատք իւր, որմն և հաստուածք իւր, որմն և պտուղք իւր, որմն և նշխարք իւր, որմն և ճիւղք իւր, որմն և ոստք իւր, որմն և արմկունք իւր, որմն և ճիրանք իւր, որմն և մատունք իւր, որմն և խլրտմունք իւր, որմն և զօրութիւնք իւր, որմն և ազդմունք իւր, որմն և նշմարանք իւր, որմն և տիպք իւր, որմն և մնացուածք իւր, որմն և ստուերք իւր,

ումն և մթութիւնք իւր, ումն և յարձակմունք իւր, ումն և հնազք իւր, ումն և պատիրք իւր, ումն և դիտմունք իւր, ումն և դիմեցմունք իւր, ումն և չափք իւր, ումն և խորք իւր, ումն և գարշութիւնք իւր, ումն և կայծակունք իւր, ումն և կիրք իւր, ումն և մթերք իւր, ումն և գանձք իւր, ումն և ցնցուղք իւր, ումն և աղբերք իւր, ումն և գիւտք իւր, ումն և շանթք իւր, ումն և հրդեհմունք իւր, ումն և պատկառանք իւր, ումն և վիհք իւր, ումն և անդունդք իւր, ումն և բորբոքմունք իւր, ումն և աղջութիւնք իւր, ումն և ամպրոպք իւր, ումն և կայլակք իւր, ումն և հոսմունք իւր, ումն և հեղեղք իւր, ումն և սառնամանիք իւր, ումն և ձրունք իւր, ումն և շաւիղք իւր: Հնոցն և տապ իւր, հրաման և գոլորշիք իւր, հալոցն ճարպին և ճենճերմունք իւր, օշինդրն և դառնութիւն իւր, կործանիչն և հնազանդեալք իւր, բռնաւորն և յեղուզակք իւր, դռոզն և սպառազէնք իւր, աւազակապետն և դումարտակք իւր, գազանն և կորիւնք իւր, խածանողն և ծակոտուածք իւր, ապականադործն և նմանիք իւր:

Դ. Ընդ այսոքիկ պետք են գլխաւորութեանց ապականողաց ոգւոց համայնից, դասեալք ընդ ինքեամբք նուաճութիւնք մասանց՝ իւրաքանչիւրոք ՚ի սոցանէ բիւրք բիւրոց և

հաղարք հաղարաց. իսկ զհամայնիցս թիւ նա միայն զօրէ իմանալ, որ զառ ՚ի միջէ չէու-թիւնն զրեալ՝ իբր զէութիւն գործոց տեսանէ: Եւ արդ եթէ որ զանձն ոչ խարեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատասցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութեամբ վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և ՚ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախահիւ մասունս արկածիցդ վերադրելոց, թէ ոչ ընդունայն ինչ զրեցի և կամ զբնաւ իսկութիւնն սահմանեցի, որ ՚ի մերս բնութեան պատուակի ազգի ազգի վրիպականութիւն. այլ ՚ի բիւրուցն արգասեաց չարեաց չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք, թէպէտ և ոչ բառանդակապէս:

ԲԱՆ Զ.

Ա՛յրոմին յոյելոաժ կրկին հեձոնրեան նոբրն հակողք աա նոյն աղբրս մաղնանաց բանի.
՚ի նորոց պրպեց Լօսէ ընդ Աոպոնոյ:

Ա՛ Եւ զի մի զիրկութեանն վստահութիւն ՚ի սպառ կորեցիցէ, և ապաղէն եղեալ մատնեցայց այսքանեաց անսերեւութիւց ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք թշնամիք ինքնածին բուսեալք զոր վերադրեալդ սահմանեցին՝ զողբանութիւն պատակե-

րին ձեւոյ եղեալ ահարկուս, ցուցից առ սմին բազմաբոյլ բանսեղծեան մարտակացդ՝ զօրեղ ախոյեանս սատուածականս՝ ամենայաղթողս և անպարտելիս, թէ և կսկծելիս կիրս և դժուարակոծ պատուս ծառոյ անհատանելեաց, և անկոխ ճանապարհաց երկիր և տաժանմունք: Քանզի զայն ամենայն գունդս չարսեղծեան բանաարկուին զօրաց՝ սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց, իբր զճճիս զեռունս բազմատանիս խնայելիք երկրի տակաւ խլբրտմանց՝ անկեալ ի վերայ ծորումն ձիթոյ կամ գոյն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ. և գոյն մի հառաչումն սրտի հեծութեան եղեալ ի յոգւոյ, իբր շնչումն հարատւային ջերմութեան խառնեալ յարեւուտ, ըզսատնամանեայ սատկութիւն հալէ. քանզի ըստ միտս նմանութեան հեշտածինք են, և ըստ միտսմիտ դիմադրութեան դիւրամեռք:

Ե. Ընդ ես ոչ երբէք կասեցից զատել ըզդատապարտեալն՝ բանից կսկծմանէ, պարակ զպարտաւորեալն՝ իբր զինասակար անփրկանատոր անհամոզելի. վասն զի զոմանս սատակեալ ի յիմոց նեղչացն, ոմանց զօրութիւն տամ կենդանանալ առ հոգւոյս կորուստ: Տունկս դառնատեաս, որ զդարշութիւն սանատակ վարուց ծաղկեցի. բարունակս տապալանաբեր և մահոդկուզեան, որ զկորստեան

գինին երկնեցի. Քանանու զաւակ՝ և ոչ Յուդայի, ըստ ասից մեծին Դանիէլի. որդիս գեհենին, և ոչ աքքայումեան. ժառանգս դժոխոց, և ոչ փառացն փափաքելեաց. նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան: Ակերախտս առ երախտաւորդ, ապաշնորհս առ բազմապարգեւդ, միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ, գառնացուցիչս քաղցրութեան բարեբարիդ, ծառայս չար և վատ, ըստ տէրունեան յանդիմանութեանն, իմաստունս գչարիս գործել ըստ Նայեայ նախասացութեանն, ժիրս առ ժանդագործութիւնս զաղութեան: Փոյթս առ՝ի բարկացուցանել զտէրն, մշտաշարժս առ գիւտս սատանայականս, հանապազորդեան վիշտս ստացողին, թոյլս առ բարեացն թուիչս, ծոյլս առ երանութիւնն ընտրութեան, դանդաղս առ դիտմունս խոստացելոցն, անարիս առ կարիս պիտանեացն և օգտակարացն, պաշտօնեայս տիրադրուժ երախտամոռաց:

Վ. Վա՜յ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բարկացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեանն ձիր մոռացայ. վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց՝ որ ոչ գոյ հատուցանել. վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց գժնէից, որ չունիմ դառնալ առ հանգստարարն. վայ վնասակարիս տէրունեան պարտուցն, որ չիք հնար յանդիման

լինել հզօրին. վայ եղէգնախոհ կիզանողականս նիւթոյ, որ տոչորելոց եմ ի դեհենին. վայ ինձ առ այս յիշատակ, զի նեղք բարկութեանն աստուծոյ այլեցելովք են գործեալ. վայ յիմարութեանս, որ ոչ մտառեցի զծածկեցելոցն յայտնութեան հանդէս. վայ ամբարշտիս, զի միշտ անդադար ոստայնս չարեաց կկեցի. վայ զմարմինս պարարողի կերակուր որդանցն անմահից, կտտողացն թունաւորաց զիաւրդ համբերելից. վայ ինձ առ արբումն մահուն բաժակի, ո՞րպէս զյաւիտենականն տուժեցայց. վայ ինձ առ եղս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս, իբր դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց. վայ ինձ առ նուազութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն. վայ ինձ առ ճեպ տապնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի. վայ ինձ առ ձայնին ահաւորութիւն դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր թագաւորին վճռաւ կնքելոյն, թէ ոչ գիտեմ գքեզ:

ԲԱՆ Ը.

Ա Էջոյն յաբելաւթ լրկին հեթանոսեան ոգին հոգով առ նոյն աղբիւր ջաղանայց քանի. ի խոյոյ պրուէց խօսէ ընդ Աստուծոյ:

Ա. Ա՛ւ արդ զի՞նչ գործեացես անձն իմ կորուսեալ, կամ ո՞ւր թաքիցես, կամ զիաւրդ

ապրեցիս, կամ ո՞րպէս ելցես ի մեզաց բանդէ։ Քանզի բազում են պարտիզք և անթիւ հաստուցմունքն, սաստիկ կշռամբանքն և անվախճան նախատինքն, անողորմ են հրեշտակքն և անկաշառ դատաւորն, հզօր առեանն և անաչառ բեմն, քամընելի ապառնալիքն և անողորմ հաստուցմունքն, ահարկու հրամանն և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրեղէն են դետքն և անանցանելի վտակքն, թանձրամած խաւարն և արտաքոյ այցելութեան մառախուղն. ապականութեան է գուբն և մշանջենաւոր է տագնապն, ամենապրաւ տարտարոսն և անդերձ սառնամանիքն։ Եւ արդ արդարեւ քեզ են դարձեալ դատիցք այսոքիկ դժնդակք և տարժանելի օթեւանք անըմբերելեացդ պատուհասից, ով անարժան անձն իմ մեզաւոր, չարագործ, պոռնիկ, բաղմաբիծ, և սահմանն անդաստանի բնաւին անմնաբրութեան։ Ընդ զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեացես՝ թիւրեալդ ի յուղղութենանց և զառածեալդ ի մաքրութենանց, տարագրեալդ յարդարութեանց և ի կարգաց պարկեշտութենանց, ուռնայդ ի լիութենանց, հոգեպարզեւ հարստութեանց, նախանձարկու բարերարին և ամենակալ թագաւորին։

Ը. Եւ քանզի կառուցեր քեզ անել արդեան և անփախչելի ոտոգայթ, խոստովա-

նեալ քեզէն զանբժշկականդ քո վէր և զա-
նօրինակդ հարուած, վկայելով զանձինդ ըզ-
պարտականդ մահու զանբուժելիդ բնկութիւն,
ով չարդ ՚ի բարեաց, ով դառնութիւնդ ՚ի
քաղցրութենանց, ով խաւարդ ՚ի լուսազարմից,
ով կապտեալդ ՚ի ազնելոց, ով դարուեալդ ՚ի
դովելոց, ով անբարիշտ ՚ի բարեպաշտից, ով
շնչականդ ՚ի բանականաց, ով անմիտդ ՚ի
մտաւորաց, ով անհանճարդ յիմաստնոց, ով
անմաքուրդ յընտրելոց, ով մահացուդ ՚ի կեն-
դանեաց, ով խոհերականդ ՚ի սրբոց, ով սրբ-
շիւդ ՚ի պարկեշտից, ով կեղծաւորդ յարդա-
րոց, ով անպիտանդ ՚ի պիտանեաց, ով ա-
նարդդ ՚ի փառաւորաց, ով նուաղդ յառա-
ւելութենանց, ով զերիդ ՚ի զերապունից, ով
նուաստացեալդ ՚ի վեհից, ով աղքատդ յըն-
չեղաց, ով անարժանդ ՚ի փրկութենանց, ով
անանկդ ՚ի բարձրութենանց և ՚ի հոգեւոր հա-
րըստութենանց, և հաստատեալդ յօրհնելոց:

ԲԱՆ Թ.

Ա՛ստուած յաւելուած կրկին հեծութիւնս նորին հանդէպ
սա նոյն ապերջ հանգիստս բանի.
և խորոց սրտից իւրոց ընդ Աստուծոյ:

Ե՛ս արդ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բանբասանս շարադրեցից ՚ի կատակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ով անձն իմ

թշուառ, ամենապատկառ և առ պատասխա-
նիս բանից անբարբառ, անպիտան աստուածոյ
և սրբոցն մանանկցութեան: Օ՛ի եթէ ղեհ
մի ծովուց ՚ի յորակութիւն դեղոյ յերեկոյից,
և ղդաշտս ասպարիսաք բազմաք սահմանեալ
՚ի տարածումն լայնութեան քարտենի չա-
փեցից, և զպուրակս յոքունց անտառաց շամ-
բից եղէգանց ՚ի հատուածս դոյութեան զըր-
չաց կազմեցից, և ոչ զթիւ մի ՚ի բարդելոցն
անօրէնութեանց զօրեցից ընդ զրով սահմա-
նի զրաւել: Կա՛ զի թէ զմայրս Լիւրանոս
՚ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զեւառն
արարատեան ՚ի կէտ ամբարձման նժարի միոյ
արդարութեան միջնորդ կացուցից, ոչ հա-
սասցէ այնր հարթութեամբ համազուգակցել:

Ե. Ձառս ամբարձուղէշ՝ ստուարաստեղն՝
տերեւալից՝ ունայն ՚ի պտղոց, նմանակից յա-
ւէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր տէրն զօ-
սացոյց. քանզի սաղարթօք վարսից, այս է՝
արտաքին դիմօք բարեշուք կերպից՝ իբր պըր-
սակաւ իմիք պաճուճեալ, բացականացն զոս
բաղձալի. իսկ եթէ մերձեսցի տնկողն խու-
զել զենդրելին, գոցէ գբեզ ունայն ՚ի բար-
եաց և գարշելի ՚ի գեղեցկութենէ, ծաղը
տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց:
Օ՛ի եթէ ապաժամն յանդգոյշ ժամուն հե-
բաւանդ տունկն պտղակորոյս անկենդան, որ

գոյն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անիծիւք, և կամ երկիր ոտոդեալ ցօղով, և ոչ բազմապատիկ զաւանդս արդասեաց երկրագործութեան տաճողացն մատուցանէ՝ լքեալ մնանի. իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահման բանաւոր և առնկ կենդանի՝ և ոչ ի ժամու խրոմ պաղատուր, իբր ոչ գնոյն կրեացես պատիժ նախնում առակիդ: Այսպէս զի գհամայնն ընկալար ի քեզ անպակաս յաոաւելութեանց, սկզբնաւորեալ ի մարդն աոաջին և մինչև ի սպառումն ծննդոց նորին, զբերս գործոց նանրութեանց և զգիւտս նորոգս՝ առեալս և անախորժելիս հաստողին գքեզ աստուածոյ:

Գ. Եւ վասն զի եղի գքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մնացս՝ անձն իմ անպիտան՝ վհմոք ձգելոց արձանաց բանից, իբր զանընդել դաշան վայրենի՝ անողորմաբար գքեզ քարկոծել: Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յաոաջնումն պատասխանւոջ՝ իբր ընդ ոտոխ ումեմն՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստութեանն բանի. և զյոյզս մնաց խորհրդոցս գաղտնեաց իբր զգլխաւորեալ յանդաւորութիւն չարութեան գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ աստուած իմ և տէր: Ով որով չափով չափեցից զանձինս

ստգտանիք, ՝ի քոյդ աննուազ գթութեանդ այսրէն չափեցայց՝ ընկալեալ զնորհդ յաճախագոյնս ընդ մեծապունիցս պարտեաց: Եւ որքան վերացն հարուածք անբժշկականք և անհնարաւորք ճարակեացին, այնքանեօք չափովք կրկին առ ամին և խմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհոչակեալ լուսաւորեցին. և ՝ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ առատաձրութիւն բարեբանեալ միշտ պսակեացի, ըստ խնկաւորդ քումդ առակի: Օ՛ի քո է փրկութիւն, և ՝ի քէն է քաւութիւն, և աջով քո նորոգութիւն, և մատամբ քո զօրեղութիւն, և ՝ի հրամանաց քոց արդարութիւն, և յողորմութեանդ քոց ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութիւն, և ՝ի դիմաց քոց զուարճութիւն, և հոգւովդ քո բարութիւն, և օծմամբ խղոյ քոյ սփոփութիւն, և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութիւն. և դու տաս միսիթարութիւն, և մոռացուցանես զվհատութիւն, և բառնաս ըզխաւար վշտաց, և զհեծութիւն ողբոց ՝ի ծաղր փոխես: Եւ քեզ վայել է օրհնութիւն գովութեամբ հանդերձ յերկինս, և յաղգս հարցն և ՝ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ժ.

Ա Էջոպին յաբելաթ կրկին հեթանոսական նորին հոխոռճ
առ նոյն ապերս մաղանաց քառնէ.
Ի խոյոց պրակ խօսէ ընդ Աթոռածոյ։

Ա. Աչ արդ քանզի միապէս մատնէ կո-
րըստեան և զոչնումն ուժգնապէս և մեղան-
չելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեղ իմն
են՝ ի միմեանց այլայլութիւնք նմանութեանցն,
սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ
միմեանս եղեալ, զմի և զնոյն վհատութեան
ծնունդս արտադրեն։ Օվ մինն զհզօրին ձեռն
իբր ապիկար թերահաւատէ, իսկ միւսն ըստ
նմանութեան քառոտանեաց պաճարեղինաց
յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խզէ.
վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝
հանապազ խնդայ սատանայ, իսկ երկրոր-
դումն՝ ըստ նմանութեան լափիզող դժոխո-
րովային գազանի՝ իբր կերակրով արեամբ պա-
րարի։

Ա. Աչ արդ իբր զգանեալ բազմահարուա-
ծեան հեծանաւս և յաւին մահու ժամանեալ,
դոյզն ինչ դարձումն շնչոյ ընկալեալ և յոգի
կենդանի եկեալ կազդուրեցայք, պատապա-
րեցայք, կանգնեցայք, յարեայք յանկենդա-
նականս կորուստենէ, օժանդակեալ Քրիստոսի
ձեռամբն՝ որ գթածն է յամենայնի. ի քա-

րերար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և քաջկութեան պտուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս: Յս սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ ղհաւատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն 'ի նախնեացն սոքիմբք գինեալ, փոխեցաւ խլոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարութեանն դեղ ընկալեալ, ապաշաւանաց թոշական՝ զգրաւականն անեղծութեան առեն ժառանգեաց, 'ի վեր քան զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մըցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսին ճոխութեամբ փարթամացան: Խակ զնորահոյս տէրունի պաշտելի բանին յիշեալ առ սմին, զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն, է զի և զչափն ընտրականացն բարեմասնութեան առտուծոյ հաճելեացն զընտնեալ առտանօր, զայս պատկեր բանի ընկալաք նախնի գահերէց առ 'ի սրբութեանցն մուտ սովիմբ հանդերձել. առանց որոյ և ոչ տէրն փառաց զևրան առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ լծակից խնդրեաց բարերարութեան իւրոյ զհաւատոն մեր. ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բաւականութեամբ առընթեր գոլով աստուծոյ. քանզի հաւատք քո կեցուցին զքեզ,

օրհնաբանեալն աստուածոյ բերան վկայեաց։ Քանզի արդարեւ սեռն տեառնիւն և կատարեալ իմաստութիւն և առ աստուած ընտանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն՝ հաւատոյ մասն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ յարաձգեալ միայ անվթար և անփակելի, պատուակից դոլով սիրոյ և յուսոյ։ Օվ եթէ փոքու սերմանի գոյի հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք ըլերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս ՚ի սիրոս ծովու, ապա յիրաւի ընկալաք զոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ անեղկմիտ պաշտօն առ աստուած, որ զապատնեան և զծածկեալն առանց երկբայութեան ՚ի հոգւոյն աչս տեսանէ. Երրորդութեանն փառատրելի անուամբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն դասեալ և յուսոյ։ Օվ եթէ և զերիան հաստուածս առանձնատրականս ՚ի մի և ՚ի նոյն խորհուրդ դիտեացես, յաւէտ մեծասքիս նոքօք ՚ի յաստուած. քանզի եթէ հաւատաս ՚ի նա, և սիրես. որով և յուսաս անեղեւութիւդ պարգեւաց նորին։ Ամէն փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԺԱ.

Ա՛ջ ուրն յաւելուած էրկին հեթանոսին ուղին հանելոյ
ու նոյն ազէր հաղորդանոյ բանիւ.
Ի խորոց սրտից խօսի ընդ Աստուածոյ:

Ա. Եւ արդ ես յետինս գաւանողաց՝ ուս-
նայն ի բարեաց, նայեցեալ խորհրդով մեռա-
ցս ի սկզբնաւորն իմ եղելութիւն ի ձեռն ձեռին
ստացողին իմոյ յանէից յոլով հաւատամ
Յիսուսի Քրիստոսի առնել զոր կամի: Քանզի
հաւատացի, վասն որոյ և խօսեցայ խրա-
տեալ Պօղոսիւ, ուսեալ ի Դաւթայ, թէ և
արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ ա-
րասցէ. որպէս հաւատովք ճանաչել զնա, և
զզօրութիւն յարութեան նորա, ըստ առա-
քելոյ, և զհաղորդութիւն չարչարանաց նո-
րա, և որ զկնի բերին ասացեալքն: Այսորդ
է սմին և յայժ նմանատիպ՝ հաւատան խա-
կապէս և ի նորոգս այս փոխադրութիւն, որ
ի մեղացն ի քաւութիւն, և ի չարագործու-
թենէ յարդարութիւն, և յանմաքրութենէ
ի սրբութիւն, և յանքաւելեացս պարտեաց
մահու յանցանաց՝ յանդատապարտն երա-
նութիւն, և ի ծառայական կապանացս յերկ-
նաւորն աղատութիւն: Քանզի զնաւ ոչ
արդեօք չքնաղ քան զբան՝ և ի մեռութենէ
երկեւանութեան խաւարի զտեալ՝ և աստու-

ծով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի, որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առնին հեծէ հոգեպէս: Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութեան գերագունիցն կայից՝ ստորատուղեալ ծանրութեամբ յանդնդայինն վհին խորխորատ գբոյն կործանման, նորադիւտ մեղօքն անջելեօք, ունի և նշխար նըշուլից՝ փրկութեան կենաց հպատոր, իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի միտս և յոգի, որպէս զհուրն նշանաւոր և զարմանաւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վհին հրամանի 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոյն: Ասի և մեղուցելոյն խազատ թաղծելոյ, և ակնկալութիւն բարւոյն բարձելոյ, և համարձակութիւն շնորհին լքելոյ, յուսալ վերստին անդրէն միանդամ նախապարգեւիցն փառազարդութեանց դարձեալ հասանել. քանզի և յաստուածուստ անդուստ հանդերձի և այս՝ ներդործիլ առ օրհնս. վասն զի սա զուտղին զօրութիւն ամենահնար աւետարանէ: Որ խունկ հաճութեան մեծապէս հոտոտի աստուած, քան յամենայն բուրումն անուշից, և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ 'ի սպաս խորանին, որ է կերպարան անճանչ խոնարհից զիջեալ բնկութեամբ առ 'ի միութիւն նոյն նմանութեան: Ըստ որում՝ հարցեալ փրկչին ամենից՝ զոմանս ախ-

տացեալս տեսանելիօք, հաւատամ՛ք ասելով առ այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ, ոչ զարդեւեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն զրաւ ընկալաւ: Վասն զի՞նչ քան զմեռելութիւն քաւօրեայն դիոյ առ կենդանութիւն մեզ անյուսապոյն, առ որ կանանցն ժամանելոց՝ ի յոտս արարչին հաւատոցն հանդերձանօք, անյապաղաբար զգփառացն աստուածոյ տեսին զհանդէս՝ ի յեղբօրն կենդանութիւն:

Ն. Իսկ աստուածն անկապուտ շնորհին մինացելոց զկնի մեղանացն՝ հզօրագոյն են վըկայք: Նախ Աբնովք, զկնի Ահարոն, յետ նոցա Դաւիթ, դարձեալ և Պետրոս. ընդ որս և փոքրն Հղիազար, որ ի մեծէն աստուածոյ ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ: Ասելոցդ է առ այս և բանն առակի անաւակ որդւոյն. Թողում զպոռնիկն՝ որ ի տեսանել գովեցաւ, և զմաքսաւորն՝ որ ի բարեգործէն յիշատակեցաւ, և զառաքելն երջանիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն հաւատովք պահեցաւ և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղորդեալքն ըստանման մահու արարչին. առ որս և դլխաւորն ընտրելոց Պօղոս, որ երբեմն նախնին էր առաքինաց: Յորոց ոմանք ծանօթութեամբ օրինին զլսրեալք անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցութեամբ քան զնախա-

կրօնիցն առաւելութիւն: Իսկ որ նախ քան զօրինակին տուչութիւն՝ զաւանդն պահել հայրենի մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնահօրն դաւանութեան, որ և զնախնեացն պարտիս ինքեան վարկուցեալ, զնորայն իւրով քն տուժեաց կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ ՚ի յերկրի, այլ չարչարեցեալն մարմնով բանականաց բնութեան



կենաց կարապետ՝ յաղթող զօրապէս բռնութեան մահու փոխեցաւ: Իսկ ոմանք ՚ի բազում տհաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ, ՚ի կատարեալ տիս ժամանակին ոչ ՚ի բարձրութեանն կայից հոսեցան, քան թէ

'ի սոքունականաց թշուառութեանց դժնէից կենացս 'ի կամարն երկնից համբարձան: Եւ թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեղանակեալ հողոյս զոյութեան, և պատկերն արքունի 'ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթող դատաճանութեան զմերս ենթադրեալ բնութիւն, ապա առաւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորութիւն անքօղ և անվերարկու՝ տեսեամբ Քրիստոսի ուխտեալ. որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տէրունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան և կնիք հաստատութեան առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս: Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ պայմանի, համբուրեմ հաւատոյ շղթամբք զպատկեր բանիս, և ակն ունիմ փառացն հնորհի. քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ աստուածոյ՝ ոչ ոք զօրէ դատապարտ առնել, ըստ առաքելական բանին սահմանի:

Գ. Ա՛յլ յայս անստուերադիր վստահութիւն ապաստան, կամ՝ կործանեալս՝ կանգնուն, թշուառացեալս՝ յաղթող, վխրպեալս՝ 'ի դարձն

կենդանական, ամենամեշտաւ չարագործս՝ ի յոյն, մինչու մատնեցեալս՝ ի կեանսն, ընդ ապականութեամբ վաճառեալս՝ ի ձիրն, զբռնակալին զորձովք զրաւեալս՝ ի լոյն, բռնորնասէր անասնակենցաղս՝ յերկինս, կրկին գայթակղեալս՝ ի վերատին փրկութիւն, մեղօք կապեցեալս՝ ի հանգստեանն խոստումն, անբժշկական վերօք վարանեալս՝ ի դեղն անմահացուցիչ, առամբակեալս վայրագութեամբ՝ ի սանձան հանդարտութեան, սրացեալս վաթսական՝ ի կոչումն, ապառում զժնդակ՝ ի հեզութիւնն, ընդդիմաբան լուսացոզս՝ ի ներումն։ Ի Քրիստոս Յիսուս և ի Հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և ի կամս բարերարութեան Հոգւոյն Ճշմարտի. օրհնաբանեալ իսկութեանն և ի մի աստուածութեանն՝ զօրութիւն և արքայութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆՆ ԺԲ·

Ա Էջոպին յաւելուած էրին հեթանոսին նորին հայոզէ աս նոյն ասէրս հաղիանայ բանէ.
Ի Հոգոյ սրտէն Խօսէ ընդ Աստուածոյ։

Ե՛ս ես արդ քանզի յաւէտ յառաջնում զղջմանն յուսահատութեանն բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանսն ի մահ ձաղկեցայ, աստանօր ի յուսոյն կերպարան փոխեալ

յարդահատել համարձակեցայց, զերծրորդու-
թիւնն սուրբ կարդալով յօդնականութիւն
ինձ մեղաւորիս: Որ և անդատին իսկ յօրհ-
նաբանելն և ի դատաստին զկենդանարարն
բնաւից աստուած, իսկոյն և կոչումն ընտանի
ձայնի ահաւորութեան անուան շնորհաձիրն
բարերարի՝ մահացելոյս է կենդանութիւն, ըստ
մարգարէին նախաճառութեան, թէ՝ որ կար-
դայ զանուն տեառն, նա կեցցէ: Ոչ ես ոչ
միայն կարդամ, այլ նախ հաւատամ մե-
ծութեան նորին. ոչ եթէ վասն պարզեւաց
նորա մատուցեալ յողոք դեղերիմ, այլ իբր
զկենդանութիւն իսկապէս, և զընչեղ տուրեւ-
առութիւն հաւաստի, առանց որոյ ոչ է շար-
ժողութիւն կամ ընթացութիւն. զի ոչ այն-
քան յուսոյն հանդուցիւ, որքան սիրոյն կա-
պանօք բերիմ: Ոչ ի տուրսն, այլ ի տուողն
յաւէտ կարօտիմ. ոչ փառքն են ինձ անձ-
կալի, այլ փառաւորեալն է համբուրելի. ոչ
կենացն փափագանօք, այլ կենարարին յիշա-
տակաւն միշտ ճենճերիմ. ոչ վայելիցն տար-
փանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք
յերիկամանց աստի կականիմ. ոչ զհանգիստն
խնդրեմ, այլ զհանգուցչին ղերեսս աղաչեմ.
ոչ հարմնարանին ինձոյիւք, այլ փեսային
անձկութեամբ մաշիմ: Ի ձեռն որոյ զօրու-
թեան վստահապէս ամենակալութեամբ վերա-

զրեցեալդ յանցանօք բեռանց՝ անելիմիտ յուսով հաւատամ՝ ի կարողին ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և՝ ի զթութիւն և յերկնից ժառանգութիւն, թէպէտ և յոյժ եմ տարադրելի:

Ր. Եւ արդ բաղում պատկառանօք ամաչեցեալց դիմաց կորացեալ. զմիջնորդ աղդման կափուցմանց երկակի շրթանցս՝ արժանապիակ աղեխիւ կարկելոց՝ առ անհամարձակ լեզուիս շարժութիւն, նորոգեցից՝ ի յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանց աղիողորմ հեծեծանաց՝ ի բարձունս աղաղակելոյ:



Մաղթանք զօրաւորք արհաւրաց դիշերայնոց:

Գ. Ընկալ քաղցրութեամբ, տէր աստուած հզօր, ղդառնացողիս զաղաչանս. մատիր գըթութեամբ առ պատկառեալս դիմօք. փառատեա, ամենապարգեւ, զամենաւկան տըխրութիւնս. բարձ յինէն, ողորմած, զանբեւրելի ծանրութիւնս. անջատեա, հնարաւոր,

զմահացու կրթութիւնս. աւարեա, միշտ յաղթող, զեաբողին հաճութիւնս. բացադրեա, վերնայինն, զմոլելոյն մառախուղ. կենդեա, կեցուցիչ, զկորուսեալն ընդունմունս. ցրուեա, ծածկատես, զըմբռնողին չար զբոսմունս. խորտակեա, անքնին, զմարտողին զիմեցմունս: Ցեառնագրեա քո անուամբդ բոլոսանցոյց երդ յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տաճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոյ սենեկիս. կերպացո զքո նշանդ ՚ի հետս ելից մաղթողիս. ամրացո քո աջովդ զհանգստեանս խաշտի. մաքրեացես ՚ի հաղբից զծածկարան անկողնոյս. պահեացես քո կամքդ զոտառապեալ անճն ոգւոյս. անխարդախ արասցես զքո ընտրհեալ շունչ մարմնոյս. կացուսցես շրջափակ զպար գօրուդ երկնայնոց. կարգեացես ՚ի դիմի ընդդէմ դիւացն դասու: Ցուր հանգիստ բերկրութեան մահահանգոյնս նիրհման ՚ի խորութեան գիշերիս, բաբեխօսութեամբ հայցուածոց սրբոց աստուածածնիդ և ամենայն ընտրելոց: Ընդ փոփեալ պարուրեա զպատուհան տեսութեանդ զդայարանացս խմաստից անզարհուրելի զետեղմամբ ՚ի ծփական խոովութեանց, կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօսակականաց ցնորից, յիշատակաւ քո յոտոյդ անվեասելի պաշտպանեալ: Ընդ սթափեալ վե-

բլաւին ՚ի ննջմանէ ծանրութեան ամենա-
դգաստ արթնութեամբ, հոգենորոգ զուար-
թութեամբ ՚ի քեզ արձանացեալ, զայս ձայն
մաղթանաց բուրմամբ հաւատոց քեզ, ամեն-
օրհնեալ թագաւոր փառաց անճառից, փա-
ռաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ,
յերկինս առաքել: Զի դու փառաւորեալ ես
յամենայն արարածոց յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն:

ԲԱՆ ԺԴ·

Ա՛ջ տարին յաւելաւ կրկին հեծութեան նորին հոլով
առ նոյն աղբիւր հաղթանաց բանիւ.
Ի երեսս սրտիկ իմոյ ընդ Աստուածոյ:

Ո՛ Աստուած բարերար հզօր ահաւոր,
հայրդ բարի ողորմութեանդ հնարհի, որոյ ա-
նունդ իսկ մեծիդ զգթութիւն և զընտանու-
թիւն աւետարանէ, քաղցր զժնէից և ան-
պոհացողաց: Ընդ քեզ և որդիդ քո իբրեւ
զքեզ, զօրաւոր ձեռն իբրեւ զքոյդ, անժա-
մանակ տէրութեամբ ահեղ, ընդ արարչու-
թեանդ քում՝ բարձրացեալ: Եւ հոգիդ սուրբ
ճշմարտութեան՝ բղխեալ առ ՚ի քէն անսպա-
ռութեամբ, կատարեալ իսկութիւն դոյն, էու-
թիւն մշտնջենաւոր, հաւասար քո ամենայ-
նիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ:
Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անքննին,

տրոհեալ ՚ի դիմաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ համաձուլութեամբ, նոյնագոյ բնութեամբ տիրապէս, անշփոթ և անանջրպետ՝ միով կամաւք և կցորդութեամբ. ոչ ե-



րիցութիւն ումեմն ՚ի յումեմն և ոչ քթթել մի ակն առ նուազութիւն միոյն ժամանեալ, քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անբաժուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութիւն, միով պակաւ սրբասացութեան անսկզբնաբար աստուածաբանեալ: Վասնզի արդարեւ վերաճայնեալս այս խոստովանութիւն երեքփառատրեանդ դաւանութեան զվէմն Հաւատոյ Պետրոս երանեաց. իսկ զդատապարտելոյս

անձն մեղաք՝ բարեհրամանն քո ակնարկու-
թեամբ, ով խնդրողդ դերելոյս, հրաշանորոգ
արդարացուսէ: Ռանդի թէպէտ և քո իցեն
պարգեւք, և քո ողորմութիւնք, այլ ոչ՝ ի
պարգեւան ես այնքան հուչակեալ, որքան յո-
ղորմութեանն. զի երկրորդն զքոյդ յաճախէ
զփառս, իսկ առաջինն զճշնաւորացն յայտնէ
զզօրս. զի պարգեւք՝ վաստակոցն են վո-
խառութիւնք, իսկ ողորմութիւնք՝ մեղուցե-
լոյս բարերարութիւնք:

Ր. Եւ արդ մի զօրասցին մարդկայինս
գործք առաջի քոյոդ ընորհաց, աստուած
զթութեանց, թէ և անդր իսկ իցեն քան զօ-
րէնս հասարակաց բնաւորականս հոսմանց.
այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութեան,
նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկ-
րածնաց: Ռանդի և որ մաքրութեամբն պեր-
ճանային օրինականացն վստահութիւնք, ՚ի
լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներ-
կայիս, ամենանուաղ անձկութեամբ լքեալ
հրէութիւնն յեանեալ, և յաւէտ ընդ տա-
րաղրական ողորմելոցն, առաւել նոքա գտան
կարօտեալ մարդասիրութեան: Եւ քանզի
ամենայն ինչ հնարաւոր է քեզ, բարերար,
լուր պաղատանաց զոչման հեծութեանս՝ որ
կարդամն առ քեզ. ողորմեա, կեցո և մար-
դասիրեա: Օ՛ի քո է երկայնմտութիւն քաղց-

րութիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք յամենեցունց յաւիտեանց ազգաց. ամէն:

ԲԱՆ ԺԴ.

Ա էրոպն յա-ե-լո-ած լրկն հե-ր-ե-ան ոոլն հա-ոող աա- ն-ն ազէրս ն-ղնանաց բանի.
Ե էոլոց ոլոկց է-ո-ւ ընդ Ա-ա-ո-ն-ոյ:

Ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի անճառ մեծիդ աստուծոյ. խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց ապաւէն, նորոգ մերձեցեալ կրկին աստանօր ի հառաչումն նուաղս ձայնի վիրաւորելոյս:

Ր. Ոչ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ ի ձեռն աւազակացն սրոյ խողխողեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի անկռինչ էր. ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողոց՝ բաբերարիդ յանդիման կացոյց, քանզի միասապարտ էր. ոչ ի պատգամ բանից միջնորդի զղորմածիդ կամն հաճեցոյց, զի անայցելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ ներկուածով ձորձոց զգեթաձիդ զսիրտ ճմլեցոյց, վասն զի անյոյս էր. նա և ոչ ծնդովքն հատատումեամբ իբր զար-

շապարաւ ոտին վարեցաւ, այն զի անյարիր էր· քանզի կիսամեռն ասել կենդանւոյն՝ սակաւ ինչ նուազ է ՚ի մեռելութենէ: Ա՛ստա-ւանդ զի ՚ի քոյոցդ խրատեալ բանից, և բարերարեալ քոյդ ողորմութեամբ, և փառաւք քո լուսաղարդեալ, ոչ միայն զի ոչ վերջացաւ ՚ի հակառակն քո ընթացից, այլ առաւհակեալ ապստամբութեամբ յիւր թշնամեացն թիւս յաւելաւ, ընդ նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց առելեացն քոյոյ:

Զ· Լակոտ, բազմապարդեւ, բարերար, անոխակալ, ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործն մեղաց յիշատակ, այլ և ոչ բանիւ յանդիմանեցեր· ոչ ոան հարեր անկելոյն, այլ կարեկցաբար մատուցեալ զձայրագոյն ցաւսդ զենաման: Ո՛չ քահանայապէս ըստ ահաբոկեան տակաւ օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դառապարտիչն անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ ՚ի խորտակումն խոցելոյն արագեալ մատեաւ· և ոչ որպէս զեւտականն կարապետային անկատարագործ՝ ՚ի յերկուցն միջև բաժանեալ խորոց, հնոյն լուսին և նորոյս սկիզբն, ունայն ՚ի հոգւոյ յապաշխարանն հանդիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի սատակիչն օրինակութեամբ տապալեսցէ արմատակորս՝ զմահուն պաշտօն ՚ի քեզ նկատեալ, յառաջ քան զիորձ առա-

կայիցն սատակեսցի. այլ հեթանոսացն պահ-
պան անուն ասորեստանեայցն, որք ի հրէիցն
ընկալեալ զօրէնս ամբողջ պահեցին, զոր նոքա
մոռացան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերար-
կուաւ մերակերպարան խառնութեամբ, զա-
զատարարն զծագրեցեր զաւետիս առ օտա-
բազգիան. և աստուածարարդ ներդործու-
թեամբ անապականաւ ձեռն կարկառեալ,
յարուցեր զմարդն նախնի՝ մեղուցեալ ի մահ
իւրովքն ծննդովք: Ջորտմեցելոյն սիրտ բեր-
կրեցուցեր, և զվհատեալն հաստատեցեր, և
զերշուառացեալն միանգամ՝ կրկին զուարթա-
ցուցեր: Ցաղանիկն կենարար օծմամբն և բա-
ժակաւն լուսոյ լցեր. հացիւդ երկնայնով ա-



բարչականդ զոյին մարմնով նոր յեղանակե-
ցեր: Վերակացութեամբ երջանկացն ազանց
ընտրելոց յանճանձեցեր, զրգեցեր և խնա-
մարկեցեր: Հանդարտընթաց զրաստուն տա-
ծողութեամբ անդզուելի պահեցեր, մինչեւ

յարկին լուսոյ ածեր: Ի ձեռն երկաքանչելոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց տուչութեան կտակաց կենդանականեր, մարդասիրապէս զարմանատուրեցեր: Եւ որպէս երբեմն ընդ Մովսիսի՝ թեւս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա, և ի հանդիսան հանդարտութեան երկրին բարութեան առաջնորդեցեր, և զբանին կերակուր ջամբել հրամանատուրեցեր վարդապետութեանց:

Դ· Եւ արդ որ զբնաւն ծայրագունին բարութեան լուսոյ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր, զօրտողին զդանձ քեզ սեպհականեալ՝ զքո առացուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մնքրեալ ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգեւես և անպատրաստից· ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն, բարեգութ, զօրեղ, անքնին, անեղծ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս· ամէն:

ԲԱՆ ԺԶ·

Ա Էջտարն յաւելոյած էրկին հեծութեան նորին հոգոյ առ նոյն աղբիւր ճաշակաց բանի·
Ի խորոց սրտից խօսի ընդ Աստուծոյ:

Ա· Խակ դարձեալ աստուածատ վերատին առ նոյն հեծութիւն սրտիս վառանդի ինձէն մատուցեալ, սովին նուագաւ ի նոյն ոճ բանի՝ զա-

մենալարգելոյ արդահատեցից, տապնապեալ ոգւոյս վտանգիւ ՚ի սպառ. իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ աստուածոյ խոստովանեալ ընդ փառացդ քո զիմն անարգութիւն, և առ չարեօքս իմովք զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ զտայ քան թէ բժըշկեալ, և ամաչեցեալ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամոռաց:

Ո. Խակ կրկին առակն որ առ իս, որ ոչխարին տրուան տարացուցիւ, որ յետին անզգայութեանն էր մատնեցեալ՝ մոլորեալ, և ՚ի լերինս ուր ոչ է այցելութիւն՝ ընդ գազանականացն դիւաց և կռոցն վայրենութեան թափառեալ, ոչ մերձաւոր զոլ սակաւ մի հօտին. ոչ բան ունէի, որով և զքաւոցն աղէտ պատմէի. ոչ ձեռն ձգողական, որ համերցն է աղդողական: Խակ դու միայն զովեալդ յըսկզբանցն յաւիտեանց և յարդի ծնելոցս, զտեալ ըստ մաղթանաց զոչման երդողին՝ զիս զմեղուցեալս յանշոյին մոլորութեան, խնամոզօրէն տեսչութեամբ կամաց հովիւ կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն, հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութեամբ սիրոյ ՚ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրսն գասեցեր ՚ի հայրենիդ քո ժառանգութիւն: Եւ արդ դու հզօր կենարար

օրհնեալ այցելու զթածդ յողորմութեան, եթէ զնոսա ընկալար զապաբանեալն աղեր- սանաց, որ միմն 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անդ- զայութեան վտարանդի բացամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ, 'ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշա- նական, աստուածային բարեխնամութեամբդ տնտեսեցեր զտիեզերահրաշն խնամոդութիւն առ կորուսելոյն մեծ թշուառութիւն, յայտ- նեաց վերատին և արդ զթութեանցդ խորք և բարերարութեանցդ հոսանք՝ առ անօրին- եալս առաւելութեամբ վերագրելոցդ օրինա- կութեամբ, առ բազմօրինակ մահու պարտա- կանս, առ որ 'ի բարութեանց խառնից քաղց- րութեանց յատուկ համն չար, առ անդամն մարմնոյ արժանաւորս հատանեն, առ համա- ճարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս վե- րաւոր, առ հաւասարեալս անդգայութեանց անասնոց, առ օտարացեալս յընտանութենէ իմաստնոց, առ աննմանս հանդուներակից բա- նաւորութեանց: Որ եթէ տարացոյց զոյր, ես ասէի. թէ նմանակից զոյր իմ, պատմէի. թէ հանդուներակից զոյր, ես ճառէի. թէ հա- ւասար զոյր, ես գրէի. թէ զուգագործ զոյր, ցուցանէի. թէ օրինակ զոյր, ես ազդէի. թէ յանցեալսն, հայթայթէի. թէ 'ի ներկայումն

աստ, ես յուսայի: Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ ըստ նմանութիւն, զոր միայն քո է քաւել, բժշկել և կենագործել, կենդանարար Համայն մեռելոց, նորոգութիւնդ տիեզերաց:

Գ. Օի եթէ սրբոյն սրտի տեսութեամբ երջանկին Դաւթի անօրէնութիւն չարեաց բարձրացեալ ասի քան զգլուխ, և ըստ ծանրութեանց բեռանց դժուարակրելոց յանցմունք մեզաց, իսկ որ առ իս կրին սխալմունք դերազանցեն քան զհեղեղն Ջրակուսակ տիեզերասպղ



ամենասպառ ծովուն յորդութիւն, և զվնաց լերանց վերադրէ: Այլ ընչացի օգ քո քաղցրութեան իբր առ Նոյին, և որ զերկինս հալէ զօրութիւն, ցամաքեցուցանել զշնջիս Ջրակոյս բազմահոսակ՝ և երկրակործան խմոցս պարտեաց և լեռնակարկառ բարձրութեան մե-

ղացս ամբարձելոց: Եւ համառօտեալ զբան քո հղօր՝ ամենակար հնարաւորութեամբ հաւիրձ հաւուցմամբ, արասցես ահա ելս քաւութեան, բան մարգարէին, առ երկարաձիգս առնօրէնութիւն. և ներելով իմ յամառութեան, ով երկայնաժիտ ողորմած օրհնեալ, թողցես միանգամայն, բարեգործեացես իսկապէս, հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսացս տոյժս տարժանակիրս: Նա դի և չիք իսկ առ քեզ ցաւումն սրտի, և կամ բորբոքումն բարկութեան, որպէս ոչ կրբին նենգութիւնք և կամ նշմարանք մեծութեան. քանզի կեանք են ի կամաց քոց և ըղձս, և ոչ արարիր զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ բան Դաւթի և Սողոմոնի:

Դ. Եթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ ի բարեվճակդ քո կանոնաց՝ ոչ փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնից եօթն թողուլ անդուստ ի յաւուր գիւրաքանչիւր մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ ի բնութեան ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, ոչք օրինաւորին երևին յանդաստան սահմանի ամենարոյս փշածին բնութեանս, բան անստուտ քո վկայութեան, որ թէ միւք մարդոյ ի խնամս չարի են արձանացեալ ի մանկութենէ:

Զի որ զկատարեալ մաքրութիւն ունէր աւետարանիչն կենացդ բանի Յովհաննէս, և զինքն ընդ հասարակաց բնութեան չդակցեալ, հաստատեաց զշնորհատուութիւն քո առ իմն ստուգիւն յոյժ արդարացեալ. թէ ասեմք, ասէ, մեզ ինչ մեք չունել, սուտ առնեմք զնա: Այլ արդ կատարեալ է բան քո խնկեալ, և ի գուխ եղեալ անպակաս ի ստուգութենէ առ իմն մերորութիւն և դժնդակ անիրաւութիւն: Այսան որով խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրութեան ճաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից. ամէն:



ԲԱՆ Ժ.Զ.

Աչերսին յաւելուած իբրև հետեւեան նոքին հոլով
առ նոյն առնէր հաղորդակից բանիւ.
Ի Տէրոջ պարծեսցի ընդ Աստուածոյ։

Ո՛ Աստուած միայն ստեղծաւոր՝ բարձրեալ, բարեգործ. քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են ձիւք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնազք անխմանալիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք, դու սկիզբն և դու կատարած։ Վասն զի ոչ երբէք ստուերացոյցանէ զքոյս ողորմութեանն քո՝ խաւար սրտմտութեանդ. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ ի վերդ քան զբան։ Պատկեր անպարագիր անդր քան զորքանութիւն կշռութեան, անչափ լայնութիւն փառաց, անտարրափակ ընդարձակութիւն հատու զօրութեանն, անս մխիթարի առաւելութիւն բացարձակութեանն, անհակառակելի բարերարութիւն դթութեանն։ Դու դարձուցանես, ըստ մարգարէին, յայդ զստուերս մահու. որ իքեր կամաւ ի Տարտարոսն ներքին արգելականացն բանտի, յորում՝ և մաղթանացն դուռն էր աղեսեալ, և գերեալ անտի զմիերիցն կապուտ վարանդելոյն հոգւոց, սուսերք հրամանի

յաղթական բանիդ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կարծիս ցրուեցեր: Գարձ առ իս՝ որ զնդամ զնդանաւ վհիս տղմասիպ զբոյս յերկաթիս մեղաց, վիրաւորեալ խոցմամբ սլաքաց բանսարկուին նեռից:

Ր. Ալլ դու յամենայնի տէրդ բարերար, լոյսդ ի մէջ խաւարի, օրհնութեանդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անապատում, անքննին, անճառ, բաւական ըստ սրբոյն Յակոբայ, անհնարիցդ ամենից դիւրապատրաստ հնարաւորութիւն, հուր ծախիչ զխոհիս մեղաց, ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցութեան խորհրդոյ մեծի, յիշեա զիս յողորմութեան քո, օրհնեալ, և մի յիրաւունս քո. ի ներողութեան քո, և մի ի հատուցման. յերկայնմտութեան քան ի հաւասարութեան: Եթէ կշռեացես զմեղանաց իմոց ծանրութիւն, ընդ քաղցրութեան քո և մի ընդ արդարութեան. զի առ սակ նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր:

Գ. Արդ մատիր առ իս, բարութիւն, որպէս յոմնկանն բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն. բարձ ի մեղուցելոյս զհողմ մահու խառնուածեանս, զի հանդիպեսջիս ամենակալ հոգիդ խաղաղութեան: Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԺԵ.

Ա Ք ր ո պ ի ն յ ա ո ւ ե ա ա ծ կ ր կ ի ն հ ե ծ ո ւ ե ա ն ն ո ր ի հ ո վ ո ւ ե
ա ա ն ո յ ն ա ր ք ր ո ն հ ա ր ւ ե ա ն ա ց ք ա ն ի ։
Ե ի ս ո ւ ց ո ւ ր ե ն ե ի ս ո ւ ե ը ն ե Ա ո ր ո ե ն ո ւ ։

Ա՛ Աբդ աղաչեմ զնեռամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից թափօռմեանց հոգւոց վշտացելոց, մի յաւելուր հեծութեանս ցաւ, մի խոցեր զվերաւորեալս, մի դատապարտեր զպատժեալս, մի տանջեր զչարչարեալս, մի գաներ զհարուածեալս, մի գլորեր զանկեալս, մի կործաներ զդժոխագղեալս, մի մերժեր զհեռացեալս, մի տարապրեր զհալածեալս, մի ամաչեցուցաներ զպատկառեալս, մի կշտամբեր զհարթուցեալս, մի խորտակեր զբեկեալս, մի խռովեցուցաներ զամբոխեալս, մի ալեկոծեր զբքացեալս, մի սասանեցուցաներ զդղրդեալս, մի շփոթեր զմրրկեալս, մի կեղեքեր զդիշատեալս, մի ջաղջախեր զբեկեալս, մի գօշեր զմերմռքեալս, մի կուրացուցաներ զխաւարեալս, մի զարհուրեցուցաներ զապշեալս, մի խորովիր զխարշատեալս, մի մահացուցաներ զհիւանդս, մի բեռանց ծանրութեան մնասներ զտկարս։ Մի անուր յաւելուր կարկամալ թիկանցս, մի կրկնակի ողբումն դառն հեծութեանս, մի ուժգնագոյն վարեցիր առ հողս, մի սաստկագոյն առ մի-

խիրա, մի անաչառապես առ աստեղծուածս, մի ահարկութեամբ առ փոշիս: Մի ընդհարկանիր խստութեամբ մեզդ ընդ փոքուս, լոյզ ընդ ստոյնականիս, ընտիեամբ բարիդ ընդ ի ընէ չարիս, ողկոյզդ օրհնութեան ընդ պտղոյս անիծից, քաղցրութիւնդ խակապէս ընդ համային դառնութեանս, փառաւորեալդ անփոփոխս ընդ ամենևին անարգիս, կենացդ նշխար ընդ կառոյս զանգուածոյ, աչդ տերանց ընդ տղմիս երկրայնոյ, աննուազ լուսիւնդ ընդ չքաւոր սրտիկս, անվախուտ ճոխութիւնդ ընդ անպատուապար տառապելոյս, անկարօտ բարութիւնդ ընդ ամենաթշուառ աղքատիս: Քանզի ով զք հասեալ յառաւօտ՝ և ի ծագման լուսոյն խիթայ մթանալ, և կամ ընդ երեկոյ կենալ՝ մահանալ, կամ ազատութեան՝ և պարտաւորիլ, կամ հնորհաց՝ և դառնապատիլ, կամ փրկութեան՝ և մատնիլ, կամ նորոգման՝ և եղծանիլ, կամ օրհնութեան՝ և տարապրիլ, կամ բժշկութեան՝ և վիրաւորիլ, կամ լուսիեան՝ և նըւազիլ, կամ յաճախութեան հացի՝ և քաղցնալ, կամ պետոց հոտանաց՝ և պատքիլ, կամ մայրենի գթոց՝ և նենգիլ, կամ խնամոց աստուածեան աչդդ՝ և զղուիլ:

Ո. Եւ արդ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյն բորոտութեամբ հոգւոյս վտանգաւ

և ես պաղատիմ, տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Ընդ աչացուսայն նեղելոց մըշտապիշերն խարխափանօք՝ մեծակական ձայնիս հառաչեմ. ոչ որպի անուանեմ Դաւթի, այլ ծնունդ էիդ աստուածոյ դաւանեմ. ոչ միայն ոարբի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ կարծողական զիակն պիտելոյ, այլ տէր երկնի և երկրի հաւատամ: Ոչ ձեռինդ միայն ձգմամբ հպատրութեան, ոյ բարեգութ աստուած մերձաւոր, այլ ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութիւն: Ոչ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեանն կարծի նշանակ, ի մէջ արկանեմ կամելոյն և ողորմութեանն, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս զարարիչ. ասա բանիւդ, և բժշկեցայց: Ընդ հարիւրապետին հաւատոյ և ես լծակցեմ. ոչ մինչ անձուկ միայն բացակայութեամբ հեռի լինելով խոսան ի խոսանէ հաւատամ ազդել քոյ կարողութեանդ առ յաւութիւն և բժշկութիւն, այլ ի վերինն երկնի բազմելով և ի ստորինս երկրի բովանդակ, առ հրաշիցն զբանեղութիւն ոչ ունիմ հաստացանել:

Գ. Ընորհեա ինձ, որպէս դատաւկիք բանին քո վճռեաց առ պառնկին ընդունելութիւն, հնազից հարիւրոց զինաբաց պարտուց

շնորհաբաշխութիւն՝ աստուած բարութեանց և տէր երանութեանց, որ յաճախն ընձեռել՝ բաղումն փառաւորիս, և ի շատն մատուցանել՝ նովին չափ սիրիս, և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս, և յայսքան բարիս իրաւամբք գովիս, և ամենայնի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս, և որ զբոլորն ունիս՝ ընդ մերսն կշռիս, և անճառելեաւդ ձրիս մերայնովքս վճարիս, և ընդ երկրաւորիս զանվախճանն պարտ վարկանիս, և մեծապրեալ քո գմերն՝ վեհս գոհարանիս, և ի սակաւուն տուչութիւն դոյզն փառաւորել ոչ ամբարտաւանիս: Ըրա և ինձ զնոյն գթութիւն ունողիս զդործս անհամար պարտուց. զի և ի ճառս երախտեաց քոյոց պարգեւաց՝ նորին իսկ սակով սիրելն կարգեսցի. և քեզ փառք յամենայնի. ամէն:

ԲԱՆ ԺԲ.

Վէրպէն յաւելաւած իլլն հիւծութիւն նորն հոգոյ
աս նոյն աղէտս հղկանաց քոնէ.
է խորց պրեց խօս ընդ Աստուծոյ:

Ո՞ Արդ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարեւ անսահման բիւրուց քանքարաց տուժիւ գոլ հաւատացանող ի միամ աւուր: Այլ ոչ թէ առ փոքրկութիւն մարդկային մտաց հայցեմ ներութիւն, այլ

առ անմուաղ լեռնթիւն փրկչիդ Յիսուսի Քրիստոսի պաղատիմ մարդասիրութիւն. որ չէի երբեմն՝ և ստեղծեր, չմաղթեցի՝ և դու արարեր, չեւ եւս եկեալ ՚ի լոյս՝ և տեսեր, ոչ յայտնեցեալ իմ՝ և գթացար, ոչ կարգացեալ՝ և խնամարկեցեր, ոչ համբարձեալ ձեռն՝ և նայեցար, ոչ պաղատեալ՝ և ողորմեցար, ոչ կերպացեալ ձայնիս՝ և լուար, ոչ հեծեծեալ՝ և ունկնդրեցեր, գիտելով զարդեան դիպուածոյս՝ և չանտեսեցեր, նախահայեացդ աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութիւնն՝ և յօրինեցեր: Եւ արդ զքո արարեալս և զքեւ փրկեալս և զայսքանեաց խնամոց յանճանձեալս մի խոպան կորուսցէ մեզանէն հարուած գիւտք բանաստեղծութեան, մի յաղթեսցէ յամառութեանս իմոյ մառախուղ՝ ներողութեան քո լուսոյ, մի սրտիս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեանդ, մի մահացու մեղիս՝ ամենակատարդ լռութեան, մի տկարութիւնս նիւթոյ՝ անպարտելիդ բարձրութեան:

Ր. Ընդ կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս յանուն քո, հզօր, արասցես ողջ իբրեւ զառաջինն միանչ ՚ի դրախտին փափկութեան զպտուղն կենաց կթէի: Կաշկանդեալ գօսացեալ ՚ի կոր կործանմամբ ընդ կնոջն տապնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուա-

ռութիւն, ընդ երկիր պշուցեալ մեղացն կըքմամբ՝ սատանայական բուռն կապանօք, զի մի զերկնայնոյդ ընկալցի զողջոյն. խոնարհեաց առ իս, միայն ողորմած, զի բարձրացուսցես զիայոս խոնարհ բանաւոր անկեալ, և զբացեալս ծաղկեցուսցես ՚ի բարի կրօնս վայելչութեան, քան աստուածապանութեան սուրբ մարգարէին: Որպէս զ՚ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որով զատեղծչիդ նկատեալ զկերպ մաղթեցիդ, հզօր բարեգութ, միայն դու պաշտպան ակնարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ ՚ի ընչական խօսուն քո անօթս, յանէից գոյաւորութիւն լուսոյ հաստեցես: Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչարեալ վշտագին կնոջն տանջեցեալ՝ գետովք մեղանաց արեան հեղեղիմ. հայեաց ՚ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ոչ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զօրացեալ: Ոչ օծութեամբ իւղով պատժապարտս ընդ մեղաւորին մատուցեալ առ կենդանաձիր ոտից զարշապար՝ զկաթիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմամբ բազկացս սոյդ դաւանմամբ հոգւոյ ողջունիւ շրթանց կափուցմամբ զերկիր համբուրեմ, խառնեալ հեծութիւն աղբերցս

արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ։ Ա՛ամենալ մեղանաք հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղկութեամբ, և յերկուց կայից միայնակողմնամբ անհաստատ հետուք, զընթացեալ գործին՝ նահանջմամբ չարին՝ զհետեւական բարձողութիւն շինուածոյ մարմնոյս՝ առելս ծառոյն կենսատիպ պտղոյն խափանեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին, միայն հնարաւորդ առ՝ի փրկութիւն։ Ո՛վ ամենաբարեսէր հաստուածոյ կերպիս՝ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համրացոյց արգել հողմ բանաւարկուին. հոգիդ քո ազդեալ մեծագործմութեամբ, ըստ յաւետարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեացես բանգ կենդանի՝ ինձ խօսողութիւն անսայթաքելի։ Ընկեալ կամ չարեօք՝ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ խմումն թշուառութեան՝ ողբականօք քոքուանաց ձայնիդ, ով բարերար որդի աստուծոյ, օրհնաբանեալ աշացդ ցօղով վերականգնեացես՝ի կենդանութիւն, իբր զսիրելին՝ի յանշնչական մեռելութենէ։ Ստոյգ դառնացողս՝ի գրի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արեւ անաւուեր որդի բարձրելոյ, հանցես զիս՝ի լոյս քումդ նըշուլից։ Ընդ աղիողորմ թշուառութեան կանչման ձայնի այրուդն՝ի Նային մօր միա-

մօրին, տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն, և ես պաղատիմ վերջին հեծութեամբս, տուր յուսահատելոյս ըղքաջալերութիւն միխիթարութեան դիմաց քո բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի ստեղծիչ աշխարհի, թէ մի՛ լար զերի բազմաց ողբալի. որով ընդ պատանւոյն կենդանացեալ ՚ի վշտացելոյ ծնողին սիրտիանն՝ զամենապարտ ոգիս ընկալայց ՚ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ: Ընդ այսակիր անդպայելոցն դիւալուկ և քարակոշկոճ հեղձամղձուկ եղկելի անձանցն, քաւեցեալ դիսախուխ հերացն, վայրենաբերս բանդագուշելոցն, ՚ի քէն ողորմեալ փրկիչ բոլորից, իբրեւ զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ մերժեցեալս զղունդս չաբացն ապականողաց ՚ի քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի այսրէն հանգիցէ, լցեալ զմարմինս մաքրութեամբ հնչոյս՝ զգեցմամբ անդամոցս, զգաստ արասցես զևեալս զարեալս ամենաթշուառ: Ընդ զերեցեալ զրժոխաբնակաց վտարանդելոցն հոգւոց արգելեալ կամ ՚ի վտանգի. զճառագայթ ողորմութեան փառաց քոց ծագեալ՝ լոյսդ իմ անձկութեան, ՚ի կապանաց օձտողին զերծեալ զիս ապրեցուացես: Զաղտնորոգայթ աներեւութերակ վէրսակ արահետ զարշու-

թեամբ մեղացս ջրդողեցեալ ոգւոյս կերպա-
րան կայ ի տապնապի. զծածկեցեալն ի տե-
սողութեանց զչարադործին թիւնիցն այսուց-
մունս, քո ինքնաւորդ զօրեղութեամբ որդի
աստուծոյ, զթածաբար առողջացուացես: Ըզ-
բազմազան տարազս ցեղիցն զանազանիցդ ան-
տաւորութեանց մահացուցանողաց իւրակա-
նօք կորստեան բերիւք, դժնդակարմատն շա-
ռաւեղօք հաստատեցելովք ի յանդաստանի
անօրէն մարմնոյս, տարակորզեսցես ի ձեռն
ձեռինդ ամենակալի, որ արօրադրեալ միշտ՝
և մշակես զսահման հոգւոց առ բանիդ կե-
նաց արդիւնատուութիւն:

Գ· Եւ քանզի անցաւ ըստ նմանութիւն
օրինակութեանց յանցուածոցս վէր, ըստ
ճարակողն քաղցկեցի, առ բնաւ անդամն
մանաւորեալ զախտին տարածումն, չէք
սպեղանի իբր Իսրայէլի առ անչափութիւն
խարանացն մատուցանել· ի խարխաց բար-
ձիցս մինչեւ ցաւին կառուցման լրութեան
անդամոցս չէ առողջութիւն, այլ ամենեւին
անբժշկութիւն: Իակ դու՝ ողորմած բարերար
օրհնեալ և երկայնամիտ թագաւոր անմահ,
լուր պաղատանացս արդահատութեան սրտիս
վտանգի, որ կարդամն առ քեզ աչեր ի նե-
ղութեան:

ԲԱՆ ԺԸ.

Ա ԷՐՈՊԻՆ ՅԱՐԵԼՈՒԱԾ ԼԵԼԻՆ ՀԵՅԱՒ-ԸՆԵԱՆ ՆՈՂԻՆ ՀԱՒԱՏՔ ԱՒ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՀԱՄԲԱՒԱԾ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐԾ ՊՐԿԷՑ ԽՕՏ ԸՆԴ ԱՒԳՈՒՍՏՈՅ:

Ա՛Նայեաց ամենահայեաց տեսութիւն կենաց բարութեան յուսոյ ի մեծաբարբառ աղաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց: Ընհաս մեծութիւն, անուն ահաւոր, բարբառ կենդանի, լուր ցանկալի, ճաշակ ախորժելի, կոչումն պաշտելի, բարութիւն խոստովանելի, ազդումն խնկելի, իսկութիւն դաւանելի, էութիւն փառաւորելի, գոյութիւն օրհնաբանելի, տէր Յիսուս ընդ հօր քումմ գովեալ և երկրպագեալ, և ընդ Հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաձայնեալ, որ միայն մարմնացար վասն մեր բոտ մեզ, զի արասցես զմեզ վասն քոյ ըստ քեզ, լոյս ամենայնի, յամենայնի ողորմած, հզօր, երկնային, և այժմ զուսծեալ և զհորտակեալ հոգանութիւն անօթիս՝ աստուածօրէն հրաշակերտութեամբ, աղաչեմ զքեզ, Տէր հաստատեա: Ո՛քոյին պատկերս մեղօք հնացեալ՝ ի քոյս հայցացք կայծակմամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա: Ո՛խախտեալ շինուածս քումդ հանդստեան խորանի մարմնոյս՝ պահպանեա հոգւոյս, մաղթեմ բարերար, ի բնա-

կութիւն քեզ մաքրագործեա: Մի հատուցաներ չարեացն իմ զործոց զնոյն վոխատրութիւն: Աղբեալ եմ ըստ մարգարէին բանի՝ և ոչ ի դինուոյ. Թափեա զմրուրս անօրէնութեան Թմբրութեան մահու բաժակի՝ ազատարար հրամանաւդ ամենակեցոյց, զի մի զքոյդ քամեցից ի վերջին աւուր յեանում հատուցմանն:

Ե. Աղաչեմ ես յիրաւունս քո, և յաղթող ի դատաստանի. եթէ մահու մատնես, ճըշմարիտ են գործք քո. եթէ դատապարտես՝ աստուստ սկսեալ զտանջողականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո. եթէ յանդունդս խորոց տուզեացես, թէ զկենդանութիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութիւն ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես, թէ զկենացն ճառակ ի քեզ ինքն ամփոփեացես, թէ զհասարակաց կերակրոյս դարմանս բարձցես, թէ զաւուրցս հարստութիւն համառօտեսցես, թէ ընդ իմման քաղցրութեան ցօղոյ՝ և հուր տեզասցես, թէ ի լռութենէ բանի քո սովեցուսցես, թէ զականջացս դրունս խցցես, թէ զնորհիւդ ձիր կտրեսցես, թէ զգետին յատակի ոտից սասանեցուսցես, թէ յանճկալի երեսաց լուսոյդ քոյ հանցես, թէ ի համբէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլատակ-

մամբք հրոյ պակուսեցես, թէ անբժշկական ցաւոք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ դազանաց ժանեաք մանրեսցես, թէ հողմով ցասման հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն և սաստիկ քան զդեհենն, թունաւորագոյն քան զօրդունան, տարակուսելի քան զկասարն, երկիւղագին քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւնն, վկայեմ անճամբ անձին՝ յոյժ պարտապան գոլ սոցա:

Գ. Եւ քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանութիւնք փոխատրութեանցն առ աղգակցութիւն մեղանացս՝ իբր պատկերակից միաւեսակք զուգաշխիդք՝ նշանակիչք այսր խորհրդոյ, արդ կարեւոր է խոստովանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս առ ծանօթութիւն խնդրողին: Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ ընկերիս կարին մատուցայ, յիբաւի 'ի նախնումն վտանգին տապնապեալ սառնում: Եւ զի ոչ զցանկականն խրոխտականութիւն սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս զանղովանալի զկիզումն: Եւ քանզի ոչ սիրեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ 'ի մթութիւն ըմբռնողական միգին կորսեան վիպեալ դանդաչեմ: Եւ զի ոչ խորեցի ըզմանուն փոքունցն յանցանաց, իբր անվնաս

սակարք վարկանելով, պատկանապէս ՚ի խաչ
ծանողականացն զազիրն զեռնոց խթեալ խո-
ցոտիմ: Եւ զի ոչ ձեռն կարկառի առ կիրս
վանգաւորին՝ այլ առնել նմին, ՚ի դէպ իսկ
ըստ գծագրութեան այսր օրինակի ապակա-
նութեանն զրոյ նուիրեալ մանեմ:

Գ. Եւ արդ՝ ոչ յաստուածուստ ամենա-
բարի գանձուցդ չարիս, և ոչ ՚ի լուսոյդ նը-
շուղից խաւար, և ոչ յապաւինութենէդ զայ-
թազղութիւն, այլ ես ինձէն կորստեան որ-
դիս զտի զայսոսիկ. մեղանք անօրէնութեան
իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բար-
կութեան մթերս. Հոգւոյ իշխանին մոլորու-
թեան հնազանդեալ, թողի զտեղի քո նորա,
ըստ զրոյն խրատու յանդիմանութեան: Եւ
քանզի յայսմանեցաւ յետուստ զաղտնեաց ա-
ռականաց մարմնոյս անդամոց, և արկաւ զե-
րեսօք կերպիս անվայելուչ ստուեր ամօթոյս,
ըստ մարգարէին առակի, տղեղս ցուցեալ զիս
ամենեսին իբր մերկացեալ խայտառակեցելոյ
պոռնկի. ծագեաց յիս զոյս քաւութեան՝ ար-
քայ երկնաւոր. զի թօթափեալ զմեղաց փոշիս,
ըստ աւետեաց ձայնին զարձելոցն ՚ի Յաբե-
լովէ, նստայց վերստին կանգնեալ ՚ի հողոյ,
և ՚ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ
անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ
զզօրութիւն բազկի կարութեան նախնում

Մաքրութեանն, վասն մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգեւ քոյ աստուածութեանդ. օրհնեալ յաւիտեանս. ամէն:



ԲԱՆ Ի.

Ա՛ջ ողորմի յաւիտեան հեթանոսաց նոցին հալոցք սո՛ւտ նոյն աղբիւր հաղնանաց բանիւ.
Ի խորոց սրտից իւոյ ընդ Աստուածոյ:

Ա՛Տեր տէր անհասկալ և երկայնամիտ, ներող, բարեգութ, հզօր, ողորմած. ահա ճշմարտութեամբ են գործք քո, և խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւնք քո՝ տեսողդ ծածկութիւց: Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանոցական բոցոյն փորձեցան և ոչ վնասեցան ի Բաբելոնի, զնոցա թախծութեան զերդն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապըստամբեցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի:

Եւ քանզի մաքուր գոլով ՚ի ճշմարուց նոքա, և զայս խոստովանութիւն գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ ամին ողջոց երգութեան, և այլ յաւելից՝ ամենապարտս մնհու: Ընդ Դանիէլն երանեալ և սուրբ մեծ մարգարէի, որ ՚ի քում հարազատութեան ազգականութենէ տանն Յուդայի՝ շառաւիղ ընտրեալ, գնորայն առեալ ընդունական և նուիրական բանից պաղատանս, խոնարհ պատժականութեան գոչմամբ հեծութեանս և այլ կրկնեցից: Ի մէջ գիտութեանս՝ անպատշաճականս գնացի, զարտուղի սխալեալ գժնդակապէս. այս է ամենայնիւ ամենայն իրօք մեղանչելն: Ըստ սահմանի կշռութեան կամաց քոց արտաքս վազեցի. որ է հաւատոի կերպարան բասիր անօրէնութեան: Ընդհատիչն չափոց չարութեան գործոց լռումն յաճախութեան նիւթեցի, որ է ճշդիւթ պատկեր յանցաւորութեան: Ըսպառնացար, և ոչ զարհուրեցայ. արգահատեցեր, և ոչ երբէք լուայ. որ է ապստամբութեան յայտնի նշանակ: Վերզ արդարութիւն հանդերձեցեր, բարերար, և ինձ ամենի և պատկառանս պատրաստեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ, և ինձ մաղձ քացախեալ ՚ի կատարածի. քեզ բա-

թեքանութիւն անլռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի. քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն տարագրութեան անյուսալի. քեզ իրաւունս բազմարժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամենավարանս. քեզ բարձրութիւնս անճառ դովեստից, և ինձ զահիւն լեզելոյ պատիժ ձաղանաց:

Ե. Եւ արդ ընկալար դու բարեաց ընտրութեանց անկշիռ սահմանն՝ զբոյոցդ ախորժականաց կնդրկաց պտղոց վերառեալ ըստ քեզ, և ես զիմոյս աստէն առ սմին պարսաւանս յոգունս կրկնակի բարդեալ ինձ ըստ իս: Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր յանձնառութիւն, իսկ ինձ զոր՞ս հիւանցից շարս և տոգս բանից դարուվականաց, որ քան զամենայն դժնեայս յաւէտ վըխլեցայ: Պղծեցայ անառակ ընթացիւք՝ ի միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօսից՝ ի բանս երկրաւորս. զակատեցայ անկասելի՝ ի պատկառելեացն գործոց: Փքացայ, վերացայ, որ յետ սակաւ մի ժամանակի՝ ի հող մահու եմ իջանելոց. զոռոզացայ, բարձրացայ, որ և ոչ զդրաւական հողոյս տուրեւառութեան հնչոյս ունիմ՝ ի ձեռին: Ընդարտաւանեցայ փուշիս հնչաւոր, ամպարհաւաճեցայ կաւս ձայնաւորս, հպարտացայ հողս անարգութեան, ՝ի վեր ամբարձայ մնխիրս մերժելի, բաղուկ կառուցի

բաժակս մանրելի: Տարածեցայ առաւել իբր վհ, և դարձեալ իբր զհերքեալ առ իս ինքն ամիսփեցայ: Խարկութեանն բոցով ցոլացայ տիզմն բանաւոր, իբր զանմեռս ոք մեծամեռելի, որ ընդ քառասանեաց մահու եմ վաակեալ: Վիրկս արկի կենցաղոյս սիրոյ, և՝ ի քեզ թիկունս փոխանակ դիմաց դարձուցի. ՝ի թռիչս մտաց ընդ խաւար խորհրդոց սլացայ. զանարատ հոգիս մարմնոյս փափկութեամբ յաւէտ վատեցի. զզօրութիւն աջական կողմանս տկար արարի, ահեկանացս կայից ուժգնութիւն տալով յաղթեցի: Ո՞քեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ, զոր չէ աստ գրելի, և ոչ պատկառեցի. իբրեւ զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսէեան բանին առ Եփրեմ, ՝ի նախնին իմ սուղորութիւն: Յաղօթարանն վայրի ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանակեցայ. ոչ կացուցի յոտին զերիվար մտացս երասանաւ բանին: Ընդ հին չարութեանցն նորոգ ինքնաստեղծութիւնս զտի. անուրս ըստ Յոբայ ծանուննս և անտանելիս ինձէն ինձ սաստկացուցի. առիւծ անկարկատելի, ըստ Երեմիայի, զանձն իմ արարի. իբր զվիժած անզրելի կոչման, ըստ առակարկուին, ՝ի մարդկանէ համարոյ եղծայ. իբր զհանդերձս ինչ ապահարիչ, ըստ եսայեան բանին, զաղբացայ. որպէս զթրծեալ ամանն

խեցեղէն փշրեցայ անարծարծելի. ըստ բամբասանացն Նդոմայ ի մարդարէէն զչորրորդ չափն անօրէնութեան սատակման ինձ պատրաստեցի: Նա զի՞նչ ստութիւն առ այս՝ և զայս յաւելուլ ընդ այս. քանզի զվբանն իսկ դիւանուէր Մողբայ առի ինձ այսրէն՝ առ դժոխոցն ժառանգութիւն, լքեալ զերկնայինն յեղանակաւ իմն օրինակի նմանակիր ձեւակերպութեան, որպէս առակ պատկերի աստեղն Ռեփանայ բաբելականի՝ յԱրարատէ պատուեցեալ ցուցաւ ի Վինայ:

Գ. Իսկ արդ զե՛ի նախնի շնորհին հաստարձակութենէ զարձեալ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ, բաժանեցայ և անպատուաստելի կարեցայ, արդ ընկալ զիս տէր վերստին կերպարանեալ ի պատկեր հոգւոյ, զանարժանս կենաց իբր զմահապարտ, իբր զչարագործ, իբր զպատկառեալ, իբր զկոխան եղեալ բանսարկուին, որպէս զանբժշկելի մանրեցեալ, որպէս զհասեալ յատակս մահու, որպէս զգարշեցեալ, որպէս զխոտան գտեալ քո կոչմանդ, որպէս միանգամայն ի կորուստ վարեալ, որպէս դեղերեալ, որպէս վանեցեալ, որպէս տարակուսեալ, որպէս թշուառացեալ, որպէս վհատեալ, որպէս կործանեալ, որպէս խորտակեալ, որպէս բեկեալ, որպէս զթափեալ, որպէս յոգի տրտմեցեալ, որպէս թըշ-

նամանեալ: Լակ դարձեալ ակնարկելով քո՛ զթած, մարդասէր, հզօր, ի՛ յաղերս բանիս՝ որպէս զղջացեալ, որպէս խոստովանեալ, որպէս ի յոտս քո դիմեցեալ, որպէս զապաշխարեալ: Որ կշռես, զրես և մեծ համարիս զհառաչ հոգւոյ և զաղղումն շնչոց հեծութեան, զկսկիծ շրթանց, զպապաքել լեզուի և զտխրականութիւն երեսաց, զկամն խորհրդոց, և զյօժարութիւն խորութեան սրտից: Որ փրկութիւնդ ես անձանց, և տեսող ոչ դրծեցելոց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց անսերեւութից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամող տէր ամենեցուն: Եւ քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԲ·

Ա՛ջ ոտին յաւելաւ կրկին հեծութիւնն նորին հակառակ սա նոյն ազգս մաղթանաց բանիւ.
ի՛ խորոց սրտից ելոյ ընդ Աստուածոյ:

Ո՛ Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ ի՛ մահ՝ ոչ կացի երբէք ի յոտս մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ գրոյն, և քանզի ոչ փոփոխեցայ ի նախակարգելոցդ, և ոչ ընդ բարւոք ուղին ընթացայ, ընդէր ոչ զխոստմնական հետոյն խաւարայնոց զղէմս ցուցից ի սահման կարգի այսր ընթերցուածոյ: Ո՛ր որս ածեալ յար-

մարեալ առ սոյն կերպարան տեսակի բանիդ երեսաց, ըստ վերագոյնդ նշանակելոյ անփոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին դարձեալ առտանօր զննացեալ չարութեանցն զբիծս, զոր յայլորդւոյդ է իմանալի:

Ի. Օտար ժանտագործս արժանապատիժ՝ աճեցուն արարի զնացիւք անսաստութեան զգունդն Ղեւիայ: Կաքաւս կայթից և ցոյցս վազից խաղալկացն դիւաց գարշելեաց ճարտար խարդախ ծուլութեամբս իմով ընդհարեցի: Զանս գաղտնիս և խոցուածս անյայտս ի կործանեցելոցն գահճաց ընկալայ: Ոչ հերքեցի զվանեալսն խաչեան Քրիստոսի, քան թէ անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի: Վասն իմոյ հիքոյս անօրէնութեան անունդ Յիսուսի Հայհոյի ի մէջ այսականաց, որպէս վասն Իսրայէլի ի մէջ հեթանոսաց: Ընարուածս հարուածոց վնասակարս ապականութեանց ժանդոյ և թրթռոյ և այլոց կերշաց վատնողաց զծաղիկ հոգւոյս, ըստ սրբոյն Յովհելեայ հրաշական ողբոցն, որ ի ցոյցս երկրի վասն Իսրայէլի՝ յառակս հինից և չարաց հոգւոց, յիս ինքն տնկեցի. ստեղծանել զնոսա պատրաստեցայ, քան թէ սատակել: Ինձ կուտեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաղէնս. կշտամբիչս ինձ գոյացուցի անիրաւս և անպատկառելիս. ներհակս ինձ զո-

բացուցի ապառումն և անկումելիս. զառինս
ինձ առի մասունս ընդ քաղցրաւենեացն ճա-
շակաց, առ ատացողն միշտ նենգաւորս. և
առ բանսարկուն յաւէտ հաւատարիմս: Ըստ
աղէտիս, վիշտ վտանգիս, խաւար ամօթոյս,
մահ պատկառանացս. զիա՛րդ և առ բանիս
յանդիմանութիւն յամարձակեցայց. մեծ է
ձայնս գուժի, և անբերելի բողոքս աղաղակի:
Զանգղ թէ զհոգիս էր զիմ տեսանել, տը-
գեղս և նուաղս և ամենևեին ներքեւեալս,
ցաւովք հեծութեանս ի վերջինս վարեալ
վարանումն, և մրճոտեալ աղտեղեալ գունով
զազութեան իբր զպաշտօնատար մեհենի.
վասն զի նոյն է ապաս տանել ձուլեալ պատ-
կերի, և մեղաց ախտի: Ընդ ես գնացի ընդ
այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի.
եւոու զբաժինն քո ցանկալի յանապատ ան-
կոխ, ըստ մարգարէին որ առ քահանայսն
Իսրայէլի ամբաստանութեան:

Գ. Ես զիա՛րդ ասացից անձին իմում մարդ՝
դրեալս ընդ անմարդիս, և իբր անուանեցայց
բանական՝ անբանիցն յիմարութեան կցոր-
դեալ. և օ՛րպէս կոչեցայց տեսանողական
մեծացուցեալ զլոյսս որ յիս. և ընդէ՛ր համ-
բաւեցայց ղգայական՝ զիմաստիցս դրունս փա-
կեալ. կամ որո՛վք ցուցայց տպաւորութիւն

նկարագրութեան անեղծին շնորհի՝ անճամբ
ինձէն հոգի մահացեալ. նա և ոչ շարժողա-
կան և կամ շնչական ունիմ անուանել, թող
թէ հոգեկան կամ մտաց ընդունական. ան-
պիտանս՝ի թիւս անօթոց, անարգս՝ի քա-
րինս որմոց, արհամարհեալս՝ի կարգս կոչեցելոց,
վատթարս՝ի յաղգս հրաւիրելոց, արհաւրօք
մահու պակուցեալս, անխրախուսելի՝ի բոլո-
րեցունց՝ ցաւով և տանջանօքն Երուսաղէմի
ըստ Երեմիայի բանին խրատեցեալ, պակա-
սեալ աւուրցս՝ի հեծութենէ, և ընթացք
ամացս՝ի հառաչմանէ, ըստ նուագարանաց
երգողին: Իբր աստի՝ի ցեցոյ և փայտ՝ի
յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, ՝ի խիթ-
մանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից
մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան դառայ.
իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի,
ըստ մարգարէութեանն ձայնի, սպառեցայ:
Այլ ոչ՝ի մարդ ոք ունիմ ղյոյս, եթէ ա-
նիծեալ՝ի տեսանողէն անյուսադրելի վհատիմ,
այլ՝ի քեզ՝ տէր իմ ողեսէր, որ ընկղմեալ
՝ի քոյդ գթութենանց բարեաց անբաւից, և՝ի
բեւեռելոյն ժամու՝ի խաչին մաղթեցեր մեծդ
ողորմութեան առ հայր քո բարձրեալ՝ քո
չարչարողացն: Այդ շնորհեա ինձ յոյս քա-
ւութեան, կեանք և ապաւէն, և՝ի տուր շնչոյս

թշուառի առից զոգիդ քո բարի: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբոյ զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն:



ԲԱՆ ԻԲ.

Վ ԷՐՈՊԻՆ ՅԱՒԵԼԱԾ ԸՆԿԵՒ ՀԵՅՈՒԼԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՒՈՂԷ
ԱՍԱ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՀԱՂԵՑԱԾԱՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՍՐԲԿԱ ԽՈՍՔ ԸՆԴ ԱՊՈՒՀՈՅ:

Ա. Դարձեալ այլաբանեցից ՚ի նոյն շարունակ բարդեալ զկշտամբանացս եղանակ դրսովեալ անձինս, ածեալ մատուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ ՚ի նոյն պայմանի. Թերեւս դրեսցէ ինձ ամենագէտն զայս յանդիմանութեան դատաւճիռք կակծեցուցանողականս բանի ՚ի ճշմարիտ խոստովանութիւն համայնից զործոց գաղտնութեանց չարեաց:

Ր. Ա՛յլ ինն ձիս խօսնական կարծրերախ անձակոտոր արձակերասան, յոլանակս անհամբոյր վայրենական և անկրթական, երիվիզս աւղական անուղղական և անվարժական: Արդս մոլեգնական տարագրական և կորստական, մանուկս մեղանչական անխրատական և վարատական, անտեսս մահապարտական տարտամական և անզործական, բանականս անասնական գազանական և անմաքրական: Զիթենիս ամայական անպտղական և կործանական, մարմինս հոգւոյս իմ թախծողական դատողական և տանջողական, խոցեալս անբժշկական անխնամական և անկանգնական: Ոսկի շարս կայսերական՝ արդ-

վառնական և անգտական, ծառայս սխալա-
կան փախստական և թշուառական :

Գ· Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս
անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և
միշտ մտախոր, կամակոր իսկ և արտաբեկ,
ուշամոռաց և հանճարազրաւ, զգայաղերկ և
իմաստասպառ, յայրատատես և եղեռնալուր :
Ես աստուստ և անդուստ բանիւք բորբոք-
մամբք մահաբեր երկամբք ճնասեալ, ոչ միով
իւիք տեսութեամբ 'ի գործ ընտրութեան քեզ
սիտանացուս, տէրդ բոլորից· ողբամ զորո-
վայնն, որ երկնեացն զիս· աշխարեմ զստինսն,
որ դիեցուցին· ընդէր ոչ մեղձ մնակարդ եալ
ընդ կաթինն ձգեցի, և զնաւրդ ոչ դառնու-
թիւն ինձ ընդ քաղցրութեան ջամբեալ մատու-
ցաւ : Օ՛ի եթէ ես ինձէն անձին իմում գժնեայ
դատախազ համբարձայ այսքանեօք բանիւք,
և ունիմ տակաւին զառ բարկութեանս ան-
խոնարհելի, ոմ ոք 'ի յերկրածնաց աստ զիս
ողոքեսցէ· զամենայն խայտառակեցից, զընաւ
էութիւնս դատեալ տուժեցից, զհամօրէն
զվնասակարացն զդունդ դանեցից, զնոցդողացն
զինուորութեանց դատախազեցից, զգայակա-
նացն զխաւորութիւնս կշտամբեցից : Ա՛եղոյ
ամենայնիւ յամենայնի, ողորմեա զիմած· ոչ
նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեայ
մատախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պա-

տահմամբ պարտաւորութեան, անկցելի ձոր-
ձով սխալեալ առաջի քոյ՝ անփոփոխելի, և
դու միայն իսկապէս դիմած օրհնեալ մար-
դասէր, ընդ աջմէ իմոյս փրկութեան կան-
խեալ ներութեամբ անայլայլելի:

Գ. Ընդ մատոյ, խնամակալ, հզօր, երկնաւոր,
բարի, ամենից հասարիչ յոչէից, զբանիդ զօ-
րութեան իմաստիւ կայծակն ՚ի գործի աղգ-
ման լեզուիս շարժութեան, առիթ մաքրու-
թեան յամենատես զգայականաց գոյաւորու-
թեանց յիս մանաւանդ՝ քո ձեռակերտից,
սոքօք առ ՚ի քէն եղելով և բժշկելով կրկին
հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ
բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն
՚ի փառս մեծութեան հօրդ քոյ աստուածոյ
մերոյ, յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԴ.

Ա Էջսդին յաւելաւած կրկին հեծութեան նորին հա-
ւատոյ նոյն աղէքս մաղթանաց բանի.
՚ի խորոց սրտից իւոց ընդ Աստուծոյ:

Ա. Տէր աստուած ամենայնի, զօրաւոր յա-
մենայնի, անպարագիր և անվայրափակ տեղի
ամենեցուն. բոլոր իսկութեամբ հուպ յամե-
նեսին, անուրեք վայրից, և չիք սահման ա-
ռանց քոյ: Ոչ երեւեալ երբէք, և ոչ տե-
սականութիւն առանց քո ծագման լուսաւոր:

փառք ահաւորութեան, անուն անհասու-
թեան, կոչումն մեծութեան, ձայն անբա-
ւութեան, իսկութիւն անքննութեան, ան-
մատչելի հեռաւոր, և անընդմիջելի մերձա-
ւոր, տեսող հեծութեան, նկատիչ թշուա-
ռութեան, մնատակաց թախծութեան, ամե-
նաբուժ հնար անճարութեան, հայր գթու-



թեանց, ծագող ողորմութեան, աստուած
միխիթարութեան:

Ր. Ձայեաց տէր ողորմութեամբ ի պատ-
կեր վշտաց դառնութեան բազմավաստակ կը-
րիցս կարեաց, զոր հանդէպ քո տարածա-
նեմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի ի
խոյզ ընտրութեան կոչեր դատաւորաբար:
Ընդարեւ մեծ է վտանգ տարակուսանաց ցա-
ւոց այսր վարանման, յորժամ իցէ մարմինն
մեղօք գրաւեալ, և անձն ի գործոց չարեաց
ոչ մեկուսացեալ, գործնականացն գործի տո-
ւողութեամբն կարեաց կապեալ, զանգուածն

հանդերձանաց մահացու կրիւք շաղախեալ, ղգայութիւն սրտին խմաստից խեթիւ խոցոտեալ. ակնկալութիւն բարեացն բնաւին բարձեալ, և ի բանականութեանն ընդ անասունս դասակարգեալ, և զաղէր գարշութիւն ընդ գոյութեանն շարամանեալ, և տեսականացն ողջ ելով իմանալիքն վերաւորեալ, և ի սաստկութենէ յանցանացն յիշատակի յաւէտ յուսահատեալ, և տագնապաւ նախադրծելոցն միշտ տարակուսեալ, և յատակութիւն աղերսին ի սպառ պղտորեալ, և խղճիւ մտացն յոգմանց կրկին ձենձերեալ, և ձեռն ի մաճի գործոյն զյետնոցն հետազօտեալ, և կերպ ի յառաջ դիմեալ՝ ոտք ի վերջ կոյս յետահարեալ, և գիտութեամբ էիցն՝ ի չէիցն միշտ խաբեցեալ, և ի մտացն մարտ՝ ի փոքունցն յաղթահարեալ, և ի թառանչ սրտին հազգին դուռն հրդեհեալ, և խոնաւ զօրութիւն քմացն ամենայն ուրեք տոչորեալ, և անարեւ միգով յամենայն մասանց պարփակեալ, և լայնութիւն ակնկալութեանն ամենեւին ի սպառ ամփոփեալ, և անբերելեացն տոյժ ի զգալիսն տպաւորեալ, և եղկութիւն կորստեանն ի յուշ անդ եկեալ, և դառնակնիք հառաչմանն ի դիւանի մտացն գրեցեալ, և բարերարին ակն ի ցաւումն իմն երեւեցեալ, և լոյն բնութեամբ՝ զանգուածոյ հողոյս զայ-

բացեալ, և ահաւորութիւն էին ընդ փոքրըկութիւն բնութեանս ընդհարեալ, և միշտ որոտմամբ բանից բանաւոր մխրոյս բարկացեալ, և իրաւանցն վիմօք զարժանիս մահու կոշկռեալ, և որ իմն է տաղանդ՝ յանառակս աստէն կորուսեալ, և պատուական իրին բատացուած իբրեւ անարդ յերկրի թաղեալ, և տաժանմանցն արդասիք ծուլութեանն մթով ծածկեալ, և իբրեւ զի բաց բարձեալ նշմարան ճրագի չերեւեալ, և պատասխանարան լեզուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ, և անհամբոյր շրթանցս դրութիւն օրինաւոր դատմամբ պապանձեալ, և յուղմունք մտացս՝ ի զանազան մասունս ցնդեալ, և զկեանն ի վերայ օգտին ոչ ինչ դիտացեալ, և ի կշռութիւն բարւոյն ընտրութեան յիմար երեւեալ, և ընթացք ելիցն նհանգմամբ չարին խափանեալ, և վառարան խղոյն աճիւնովն հնոցի լցեալ, և անուանս զիր ի կենաց մատենէն եղծեալ, և կշռամբանք ընդ երանութեան անդ արձանացեալ:

Գ. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. եթէ պատգամաւոր, խստութեան. եթէ մատենագէտ, մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ աւետարանական, փոշոյ ոտիցն թօթափման. եթէ բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապառում, կակըծ-

ման: Եթէ ջրոյն ընտրութեան փորձիմ, խոր-
տակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սա-
տակիմ: Եթէ բերս նկատեմ բարութեան,
՚ի կարծեաց չարեացս փախնում. եթէ ձեռն
համբարձեալ, կորանամ. եթէ փոքր ինչ խըր-
տուիլ, սարսեմ. եթէ սակաւ մի թնդիւն,
ընդոստիմ. եթէ ՚ի խրախճանս ըմպելեաց հր-
բաւիրիմ, դողամ. եթէ մեծիդ յանդիման
լինիմ, սարսափեմ. եթէ ՚ի հարցումն բանի
կոչիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ,
համրանամ: Արդ այսքան ամենաթշուառ և
ողորմագին տարակուսանացս ՚ի վերայ մի-
մեանց բարդելոց, որք զստորեւ ղգայականաց
սրտիս գոյութեան ՚ի ներքուստ անտուստ ան-
բժշկական ցաւօք՝ անհերեւակի նետիւք խոցո-
տեալ, անարտաբերելի մշտակիր յարամնաց
հանապազամուխ բեւեռեալ աստուստ ընդ
հոգւոյս, լցեալ շարաւով կրկին հարուածով,
վտանգ սատակման մահու գուշակեն: Թարախ
մթերից պատեալ ղերկաթով գաղտնեացս ծա-
ծուկք ազդեն ինձ տագնապս՝ վերս պահեալս
անխնամարկելիս ընդ ելս շնչոյս տուբեւառու-
թեան. յորոց նեղութեանց չարաչար ճնշեալ
աղաղակ ձայնիս, խառնեալ արտասուօք՝ կող-
կողադին թախծանօք հոգւոյ, բարեգործիդ
հնարաւորութեան յերկրաստեղծից նահա-
տակաց ընդ իմ մաղթողաց, վերջին հեծու-

թեամբս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենեքումբք նուիրողք՝ զաղերսանս ըղձիցս ՚ի ստորնայնոցս սատի յերկինս առաքեմ: Ընդ-նորհեա տէր անդորրութիւն կենաց հանդըս-տեան ողորմելի վաստակեցելոյս ՚ի յընդունայն երկրագործութիւնս, համայնդ յամենայնում, ամենայնիւ ստացեալ քեզ փառս:

ԲԱՆ ԻԴ·

Ա էրոպէն յաւէլոաց կրկին հեթո-ընեան նոքին հակոբ
աս նոյն աղէքս մաղնանաց քանէ.
՚ի խորոց սրտէց խօս+ ընդ Աստուծոյ:

Ե՛ս արդ որոյ խնդրոց արժանաւոր վար-կանելով զիս մատչիմ աղերսել, արքայու-թեանն յորմէ վըխպեցայ, եթէ փառացդ վա-յելչութեան յորմէ զրկեցայ, թէ կենացդ ան-մահականաց յորմէ հեռքեցայ, թէ ընդ հրեշ-տակն պարակցութեան յորմէ տրոհեցայ, թէ ընդ արդարոն մանանակցութեան յորոց ձեղ-քեցայ, թէ ոուռ որթոյն կենդանւոյ յորմէ քանդեցայ, թէ ոստ անկոյն բերկրութեան յորմէ դօսացայ, թէ ծաղիկ փառացն շնորհի յորմէ թափեցայ, թէ պանձանացն ժառան-գաւոր յորմէ կորացայ, թէ հայրենի ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ, եթէ զգեստիցն լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ, եթէ ՚ի ստացող դարձին յուսացայց յորմէ խորթա-

ցայ, եթէ ՚ի լուսոյն իղձս դիմեցից յորմէ մեկնեցայ, եթէ Յիսուսի յոսկերան յօդիմ յորմէ մերժեցայ, եթէ ՚ի թիւս նորա մերձիմ յորմէ օտարացայ, եթէ յապաւէնն ապաստանեցայց յորմէ խեթացայ, եթէ ՚ի փրկութեանն նորոգութիւն յորմէ մահացայ, եթէ ՚ի զգաստութեանն զուարթութիւն յորմէ ես լքայ, եթէ ՚ի կանոնն կենացն ուխտի յորմէ փոխեցայ, եթէ ՚ի սահմանն հաստատական յորմէ սահեցայ, եթէ յանշարժ վիմին պընդութիւն յորմէ սասանեցայ, եթէ ՚ի շարս դումարտակին յորմէ հոսեցայ, եթէ ՚ի քաղաքն անդրանկաց շինիմ յորմէ գերեցայ, եթէ հանապազորդեան հացին աղօթեմ զոր ոչ վաստակեցայ, եթէ փոխադրութիւն երկանցն խնդրեմ յոր ոչ ըրանեցայ, թէ պարգեւքն պահեցայց յոր չհանդիսացայ, թէ արձանն ինձ կենաց գրեցից յորմէ ջնջեցայ, թէ զերախտեացդ ձիր յիշեցից զոր միշտ մոռացայ:

Ր. Ահա հատաւ և կամ խզեցաւ լար կենաց յուսոյն, տիրեցայ ՚ի բորոտութեանցն դարշութենէ համայն ախտացեալ, ամենայնիւ ապառեալ մարմինս ապականութիւնն շրջապատեալ՝ մեռոյց աստուծոյ: Դոյզն պակար փայլունակ տգեղ լինացեալ, մնացուած ինչ պահեալ նախնական երկդիմի կերպին, որ ըզ-

կրկին անմաքրութիւնն նշանակէ, պարծանացն նշոյլ ամենևին ինձ շինչաւ, փրկութիւնն մատնեցաւ, բարին սուտերացաւ, ելք կենացն բնաւին փակեցաւ, մխիթարութիւնն բարձաւ, դատաստանին առեան մերձեցաւ, թոյնք մահուն ինձ արծարծեցաւ, սպանեալն կրկին ինձ կենդանացաւ, լաստին դաղալք վիմօք խցաւ, շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելչութիւն սուտերացաւ, հանճարն առաջնորդական խափանեցաւ, կշտամբանացն փուշ բազմացաւ, անօրէնութեանն ուղէշ ծաղկեցաւ, բոց գեհենին ինձ բորբոքեցաւ, ծառայութեանն լուծ սաստկացաւ, սուրկութեանն կապ զօրացաւ, ունողն յարկին կառուցման ահա անկաւ, բարձրութեանն վտահարան կործանեցաւ, ընտանութեանն միաւորութիւն անջրպետեցաւ, սրբութեանն սիրող հոգին աստուծոյ տրտմեցաւ։

Գ· Եւ քանզի զվերջինն համբուրեցի դառնութիւն, տանջանս՝ խէթս՝ տխրութիւնս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս, տարակոյս անյուսադրելիս, ամօթանս անպարուրելիս, խայտառականս անվերարկելիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկայն ուղեւորութեան ապաճեռն անթոշա-

կութիւնս, իսկ դու փրկութիւն զօրութիւն և օգնութիւն, ողորմութիւն լուսաւորութիւն քաւութիւն և անմահութիւն տէր Յիսուս Քրիստոս, որդի աստուածոյ կենդանւոյ, ա- րարիչ երկնի և երկրի, որ ընձեռես ջուր պաս- քելոցն ի ծարաւուստ վայրս անապատի, օրհ- նեալ, բարեգութ, հզօր, մարդասէր, երկայ- նամիտ, խնամակալ, հնարաւոր, այցելու, պաշտպան անմահանձ, պահապան յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լեու- թիւն անմուազ, երանութիւն ոսկեղէն, ձեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ զիս զամենա- պարոս՝ բանդ կենդանի՝ առ հաւատարա- պատիւ քո հոգի, զի քեւ վերատին հաշտեալ յիս դարձցի: Եւ ի ձեռն քո իւրոյն կամաք մաքուր նուիրեալ, զօրեղն ինքնութեամբ զիս հօր ընծայեալ, անդէն առ նմին նուիրեմք միշտ ի քեզ ընդոյս ողջունիւ կապեալ ընդ հնորհիդ՝ ի քեզ միանալ անբաժանելի: Ա- ման որոյ քեզ ընդ հօր քում հոգւովդ սրբով՝ երրեակ անձնաւորութեանդ ի միում բնութեան և ի մի աստուածութեան փառք, և ի ստեղծա- կանաց էից դոհաբանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԻԵ.

Ա՛ջորդին յաւելուած լրկին հեթանոսական նոքին հակառակ
առ նոյն ապերջ մաղթանաց բանիւ.
՚ի խորոց սրտից խոտ ընդ Աստուածոյ:

Ը. Ոայց քանզի ՚ի վերայ այսքանեաց գեղեցկութեանց ամենաթշուառ վտանգաւորիս մի զմիով եւ ելս առնելոյ, զոր զկերպարանս անցիցին ՚ի մանուկ վերաճառեալքդ նախագրեցին, ուստի և փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն ազէտիս:

Ը. Ա՛յն զի ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանագոյն. յորում կոհակօք բազմօք անթիւ դիմեցմանց տատանեալ հոգիս ՚ի յայսմ աշխարհի մարմնոյս շինուածով իբր ՚ի նաւակի: Զոր Աստիւաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն որ ՚ի պարականն հինից՝ Երուսաղէմի և Սամարիայ կործանմանն, նմանութեամբ այսր օրինակի կերպաւորեցոյց. որ և առ իմն հոգեւորական խորհուրդս զուգաձայնել՝ ոչ է սխալական: Քանզի մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դոյզն կասկած արկածից ՚ի միտ բերելով առ խորոց փոքր միջոցին, որ ՚ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ իցէ ձըմեռն յամառայնի, բբաբեր հողմով ժամա-

Նեալ երեքալեանն դիմակցութեամբ ամբոխեաց զհանդարտութիւնն: Ապա նաեւ ՚ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ: Թեւոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման՝ ՚ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին Թուշարան յանկարկատելի ծուէնս պատուհասեցաւ, շինուածոյն շուք անզարդեցաւ, առասանք ձգողականացն խզեցաւ, տեսարան դէսոյն դիտակի խոնարհեցաւ, ապաւանդակին պարան կորեցաւ, ապաւինութիւն խարբսխին լուծաւ, լուծք ստուարք ամոլեցին կըցորդութեան բաժանեցան, սամիք ուղղչացն հետոց գալարեցան, լաստ հիմանն հաստատանի ընկղմեցաւ, դեկացն կառուցմունք անդրէն սուզան, չուոցն յարմարութիւնք պակասեցան, ողնաւիպայտին պատասպարան իսկոյն բեկաւ, կապարանք զատին հաստուածոյ յօշատեցաւ, գոգք ամիսիման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շրթանցն եղերաց խախտեալ ոստեաւ, պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչութիւն յատակեցաւ, գահաւորակին հանդատարանն շփոթեցաւ, մածմունք տախտակաշարք ՚ի միաբանութեանց միմեանց անջատեցան, հեղոյսք պնդման բեւեռացն քարշեցան: Արդասիք իրին յիշատակարան ողջոյ ինձ նմանեցաւ: Կաւուղին հանդէպ նաւին

դեպերեալ ողբայ, ձեռն 'ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ: Նշմարեր սակաւ միացուածոյն՝ 'ի ծայրից ծփմանց աղգելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր, ողորմագին թախծանօք հեծէ: Ո՞ան զի թէ զբարի նաւապետն երկնաւորքն զօրօք յաշխարհիս ծովու առ 'ի զնորոտակեալս իմ տապան իմանալի զոյութեանս առցէ աշխարել բանիս յարմարութիւն, ոչ ինչ վրիպեացէ 'ի ստուգութենէ: Ո՞անզի արդարեւ ելայց բարեգութն տէր յառակ մարդկութեանս զթադեալ ազգակիցն, ելայց առ նմին և զՀրեշտակէմ մեղեալ և զՅուդաս մոլեզնեալ, յորոց երկուցն կորեաւ վստահութիւն յօրինակ նմանութեան աղարտեալ նաւի. իսկ միւսն հասեալ յատակս անդնդոց՝ առասան յուսոյն ձեռամբ ունողին յանքոյթն արտաբերեաց խաղաղութիւն:

Գ. Ընդ իցէ թէ յաւելից հայել զբաղմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ: Իցէ արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ: Իցէ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերըստին կցեալ: Իցէ արդեօք տեսանել զյոդնախախիծ սիրտ վշտացելոյս բերկրեցեալ: Ընդ իցէ աչն ունել նայել զյաւէտ խաթարեալ կերպարան բնութեանս կրկին հանդերձեալ: Իցէ արդեօք թէ տեսից զքակտեալ

տաղտաւար թշուառացելոյն միւսանգամ կանգնեցեալ։ Յգէ արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս ազատեալ։ Ապաքէն գուցէ ակն ունել զանկեալս ՚ի շնորհէդ լուսոյ դարձեալ կաղդուրեալ։ Արդեօք տեսից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան յողորմութիւն ինձ երեւեցեալ։ Եթէ տեսից երբէք զամենատխուր կերպարան հոգւոյս ի մոյ ժպտեցեալ։ Արդեօք լուայց ընդ ձայնի գուժիս աւետաց համբաւ ինձ առաքեցեալ։ Արդեօք տեսից զբիւրակործան փշաստեցեալս անօթի կազմեցեալ։ Յգէ թէ տեսցեն պատուհանք աչացս իմոստից զմուրհակ պարտուցս իմոց պատառեալ։ Եթէ յայտնեսցի օրն իմ անձկութեան շնորհին քաւութեան բարւոք ինձ ծագեալ։ Արդեօք մտից ՚ի խրախճանութիւն խորանին լուսոյ քեւ առաջնորդեալ։ Յգէ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ Եզեկիէլի, ցամաքեալս ՚ի կենդանութեանց եկաւորութեամբ աղղոգական շնչոյս զօրացեալ։ Յգէ թէ յաւելից հայիլ ՚ի տաճար սուրբ քո, աղաղակեն մարգարէին ՚ի պորոյ կիսին, հերքեալս ՚ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ։ Եթէ լինիցի խաւարտնտեսս մթացելոյ ծագման առաւօտ։ Եթէ հասցէ տեսանել զառդնապետս միաստաւոյց յեղանակս զարնանն մօտ։ Եթէ տեսից ըզ-

ցօղ անձրեւոյն կանաչացուցանողն հոգւոց իմ
արօտ: Եթէ իցէ արդեօք նկատել զզազա-
նաբեկ հերքելն ոչնարս վերատին կամաց զբ-
թումթեան քո հօտ:

Դ· Ես քանզի ըստ բանին Յոբայ շուրջ
պատեալ են չարեացն հնարքք ընդ որ ոչ կա-
րացիմ անցանել· իսկ եթէ լոյս ողորմութեան
բարերար կամաց քոց ցուցցի, գթութեան
քո դուռն բացցի, ճառագայթի փառաց քոց
ծաւալեսցի, խնամք ձեռին քո յայտնեսցի,
արեգականդ կենաց օր տարածեսցի, առա-
ւօտիդ ըղձալի տեսիլ մերկասցի, առաւոտու-
թիւն քաղցրութեան քոյ աղբերասցի, վտակ
արարչիդ կողիդ հոսեսցի, ծորումն անապակ
սիրոյ քո հեղցի, ծագումն աւետեաց հնորհի
քո երեւեսցի, պարգեւիդ քո ծառ ծաղկեսցի,
մասունք օրհնեալ մարմնոյդ բաշխեսցի, հա-
մառօտեալն ակնկալութիւն հանդիպեսցի,
հառուածեալ ձայն ողջունի քոյ տէր լսիցի,
հեռացեալդ խաղաղութիւն մերձեսցի. յայ-
սոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանականաւ
հաւատ ընկալեալ յուսոյ հաստատեոյ, ապա-
ւինեալ ՚ի հոգիդ քո սուրբ, որ ընդ հօր քոմ
պաշտի ձայնիւ քաղցրութեան ընդ քեզ փա-
ռաւորեալ ՚ի լոյս անմատոյց, որով կեանք և
երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծա-
յեալ ինձ մեղապարտիս· յաւանդ անկորուստ

ընդ իս պահելով առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի, ի ձիր անեղծութեան անուամբդ անճառելեաւ ահաւորութեան հզօրի սրբոյ միայնոյ և անքննելի տէրութեան երրեակ անձնաւորութեանդ՝ որ եղ յիսկութեան յէութեան և յարարակայութիւն բարձրութեան քաղցրութեամբ ողորմութեամբ և մարդասիրութեամբ պսակեալ հանդերձեալ և թագաւորեալ: Եյո առ ամենեսին ամենայնիւ յաւէնայնի կարող ես, դթած. և քեզ վայել է փառք յայսմ յաւիտենի և ի հանդերձեալ միանձնաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի, յաւիտեանս. ամէն:



ԲԱՆ ԻԳ.

Ա ԷՐՈՒՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԼԻՆԻՆ ՀԵՆԱՐԻԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՒՈՂ
ԱՐԱ ՆՈՅՆ ԱՂԷՐԱ ՀԱՂՈՐԴԱԿ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ԱՐԱԿԵՑ ԽՕՍՔ ՔՆԴ ԱՒԳՈՒՅՈՑ:

Ա՛Ե արդ աստուածպէս և իրաւարար, ընդ որս որք բան ձայնից կողկողանացն և զբանիցն յարմարութիւն հանդերձեն, ի նոյն գիր բերեալ զաւարտմունս տանցին, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն բղխմունս. ուստի և բաղմեալ իմ ի գլուխս պարու ակնբից դասու այնր երախանաց՝ որք զլալեացն յեղանակին բանաստեղծութիւն, և ես ընդ նոսին նոցին հեծութեամբ աւազական ձայնարկութեամբ զանձինս տարածանեմ ըզվշտակրութիւն, որ ոչ բնաւին մեռեալ աշխարհի, և ոչ իսկապէս կենդանի աստուծոյ, ոչ ջերմ սուկ և ոչ ցուրտ յաստուկ, բան առակի աւետարանչին գրեալ ի յայտնութեանն. երից ատելի երրեակ տէրութեանն և ամենատես արարչութեանն: Ա՛Ե այս են պատկանեալ թախծականացն կերպագրութիւնք, կրկին ողորմելի այսու երեւեցեալ՝ որ ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զերշտառութեանցն զօրինակ, այսպիսի կցորդութեամբ շաղկապեալ:

Ն. Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձեւով մեծաւ ի տուժի, ես ապիկար մտանեալ անարժան գործովքս յիրաւի, վասնիչ արքունի գանձուց կրկնադատ և անթափելի, պատասխանատու մեծին ըմբռնեալ անհրաժարելի, բիւրք քանքարոց խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի: Ընդարեխօս կապեալ ի պահեստ գառն արգելանի հեծումն և վաստակ ցաւոց ճաշակեալ յանձնշոյլ բանտի, անապատէն տանջեալ անթոշակ կամ ողորմելի. այլ յեղանակ ինձ ողբականաց աստուստ կնքեցի, փոխատրեցի սովին բարբառով կոծ կսկծելի, կարգադրեցի շրջաբերութեամբ ի նոյն պայմանի, անհատական թիւս խորհրդական երկեակ տատնկի: Աղքատութեանն հնոց յամենատես մատանց մրրկի, անպատապար թըռուառ վտանգեալ սրտիս ի դրաւի, տարակուսեալ հոգւով ապաշնորհ այր ի վթիպակի, անխնամելի հայցմամբ գատաստանն յինէն պահանջի: Մեզայ և մահս զինուք զգայարան գաղտնեացս խոցի, անփրկելի մատնեալ բռնութեան չարեացս գերի, սուր յուսերաւ սատից գոյութիւն բնութեանս յօշատի: Յիշատակաւ բեմին սատարն ի գատաստանի, անծագելի մտայլ չարատես աչացս երեւի, անձեռնկալ կապեալ եղկելիս ի տարակուսի, ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տե-

ամնի: Յայժ անարեւ և անվերարկու ՚ի տարտարոսի, անապաւէն մոլար մորմնքեալ ՚ի հուր գեհենի, անյայտանելի կորուստ կործանեալ ՚ի մեղաց վհի: Ընդ զոր ունիմ արծաթի անպիտան ոչ երբէք յարդի, և ոչ ընդունի և կամ համբարի ՚ի գանձ տէրունի, հայցուած պղտոր և ձեռն անմաքուր աննուիրելի: Այլ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ յոյս առեալ դարձի, զդէմս ՚ի յերկիր եղեալ պա-



պատիմ մօրդ Յիսուսի, բարեխօսեա մաղթեա քաւութիւն ինձ մեղաւորի՝ դու զօրաւոր վերնականակ կենաց խակուհի երկնի, քեզ օրհնութիւնք ձայնից և բարմունք խնկոց ՚ի յերկրի, և անուշից խղոց մատուցումն յամենայնի:

Գ. Ընդ յաւագեալ ողբոցս հիւսուած այլ մանն յաւելի, բարերարին շնորհաց արտասուաց պատուղ մատուցի. զկորստեան խորս չափելով զողբանն երբէք ոչ գտի, մանաւանդ բանիւք ՚ի հանդէս նորին չանացի, զմտացս արագեալ զմեւս յերեւոյթ իրին ոչ

հասի, զուշին պարտութիւն յանվթարելեացն բաժակ բարկութեան ՚ի ձեռն իմ առի, ըզտարտամութիւն տարակուսանացս իբր ճաշակումն մնհու արբի. և այժմ զյանցիցն յաճախութիւն ողորմելի ձայնիւ յերդ արկի: Ընդերեւոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անզովանալի, անտեսական իմն զբոյս հալոցաց սաստիկ եռացմամբ անշէջանելի, սքանչելս նեռից պատկանեալ դեղով ՚ի շուքմարան խորութեան սրտի, խիթք ցաւոց խոցոտման մնհու ՚ի գնացս երակաց զոյութեան լերդի, կիրք երկանց անճարակ ճեպոյ ՚ի պատուաճ աղեացս անելանելի. անզօրելի դեղոց ջերմութիւն ՚ի յերիկամանց մաունս երկակի, անհնարաւոր գաւնութիւն մաղձի ՚ի նախադուռն իմոյս կոկորդի: Ընաղս ձայնից լքուցանողաց ՚ի փողս շնչոյս խաշորս հնչի, բազմահատուած էութիւն բնութեանս ներհակք միմեանց ՚ի պատերազմի, երկչոտութեամբ կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ ՚ի վտանգի. հարազատաց դաւաճանութիւն անհաշտելի ՚ի կոտորուածի, ոչ մեռեալ և ոչ կենդանի թաղեալ ՚ի մեղաց գարշութեան տղմի, կասկածաւոր պատժապարտութեամբ վերահնարկելով քեզ բարերարի, յանհնկալս կենաց վհէ արտաբերել ՚ի լոյս անձկալի:

Դ. Նոյն ինքն որ զայս բան տպատուրեաց՝

ընդ երջանկացն պսակեացի, ակնարկելով զո ողորմութեան անարատիցըն Հաղորդեացի, վասն զենման աստուածոյ բանիդ՝ բարեզործեալ զհս կենդանասցի, օրհնութիւն գովեալ զո շրթանց ՚ի գլուխ բաշխողի այսր մատենի, Հաստատեացի բղձականութիւն սողոմոնեան բանիս առակի, նկարագրեա Հոգւով զո բարձրեալ ՚ի նորոգումն անեղծանելի. զի զու միայն ես երկայնամիտ ներող զեզ փառք յաւիտեանի. ամէն:

ԲԱՆ ԻԴ՝

Ա՛ էջոպին յաւելուած կրկին հեթանոսութեան նոքին հակողք առ նոյն ապերջ մաղթանաց բանի.
՚ի խորոց սրտից իւրոց ընդ Աստուածոյ:

Ը՛ Ա՛ զանգի ընդ ողբաձայնիցն բանաստեղծութեանց վերընծայելոց զղրութիւն թուոցս յարմարեցի կաւան և հեծութիւն, Հառաչանք կողկողագինք, զառնութեան լալումն և արտասուաց երդ, զարձեալ սկսայց զՀառ պաղատանացս խոստովանութիւն զղջականաբար զղաղտնածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութեամբ սկզբնամբն և վերջաւորքն բառիւք, զնոյն Համաձայնութիւն ՚ի մի թախանձ նմին մաղթանաց Հոգևկեցոյցն խոնարհութեան աստանօր եղից:

Ր. Ո՛եղայ մեծիդ բարերարութեան՝ ա-նարգս մեղայ, մեղայ ծագմանդ ճառագայթիդ՝ խաւարս մեղայ, մեղայ ընդհատդ անբաւ ե-րախտեաց՝ արդարեւ մեղայ, մեղայ սիրոյդ վերնում դթութեան՝ յայտնապէս մեղայ, մեղայ ստացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ, մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց՝ անբաւս մեղայ, մեղայ անմուաղ լուսոյդ վա-յելման՝ նենգողս մեղայ, մեղայ ճաշակման անճառդ կենաց՝ բազումս մեղայ, մեղայ ան-հաս պարգեւացդ ձրիդ՝ հանապազ մեղայ, մեղայ գովեալ մարմնոյդ աստուածոյ՝ մահու չափ մեղայ, մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ իսկապէս մեղայ: Ա՛յս արդարեւ օրհնեալ է հաստուած բանի յուսադրական սրտի այսր մեղայի, սոյն սա պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեացն տուր, նախահարցն օրէն, համայնից թոշակ, անհերքելի բան, գօրաւոր պատասխանի, կենդանութեան կա-մուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց, ան-խզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատճառ, բաղձալի աղերս, փափաքելի սեղան, արտաբեկ հնչումն, անհնարից ճարակ, կար-ծրութեան վանիչ, աստուածապաշտից սահ-ման, հեթանոսաց գիրք, վարդապետաց կանոն, քրիստոնէից հարազատ, արարչութեանն յաղ-թող, անջրպետ հզօր, խորոց ահաւոր, ար-

ուեստ բարձրութեան, խորութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ կնքեալ. ընդ որ չիք ումեք անցանել, եթէ ոչ անբիծնելի մըտացս արագման զսա ծանիցէ: Զայն բարեպատեհ հրաշատրական, որ ոչ յիշատակեցաւ ի վերջին դատաւինիք դատաստն լքելոյ, գուցէ առ նմին խղեալ համառօտ զվերիժակն իրաւանց մահուան հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ, զսահմանն յաւիտենական քակտեսցէ: Ջարդ փառաց մեծութեան, որով նոյն ինքն աստուածութիւնն պսակեալ բարգաւաճի: Ոչանդն ոմ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութեան, և ոչ առ ժամայն պրծեալ ի պատժոյ անարատ գոտւոյ: Իսկ եթէ Ընքար զարմեան, և Պաւուղ կիսեան, և Յուդայ սիմինեան, ասելով զսոյն ոչ արդարացան, և ես վկայեմ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի ակամայիցն բռնադատելոյ ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն: Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմկրտութեան հարազատս:

Գ· Ա՛ղայ երախտեացդ մոռացութեան՝ վերատին մեղայ, մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեղայ, մեղայ առ կեանսդ դրժողութեան՝ իսկ և իսկ մեղայ, մեղայ բանիդ ապաիտ առնելոյ՝ չարաչար մեղայ, մե-

ղայ ՚ի յօր սատակման ինձէն սուիցեալ՝ վատ-
թարս մեղայ, մեղայ պարտականս անկենդան
մահուն՝ ձաղելիս մեղայ, մեղայ անպատկառս
քո բարձրութեան՝ տաղտկալիս մեղայ: Վ՚եր-
ջին ինձ կրկին աշխատ հոգեւոր՝ զի ՚ի կո-
րուստ և ՚ի կործանումն ինձ երեւեցաւ, զի
անդարձս վտարեցայ, զի որդիս թշնամի
դրեցայ, զի ՚ի բարձանցն երկնից ընկեցայ,
զի փուշս վարուց դիզի: Այլ եւս առ սմին
ողբք աղաղակի, զի անձամբ զանձն անար-
դեցի, զի բազին կորուսչին գտայ: Այլ ինձ
կսկիծ դժնդակ սրտի, զի զիս ունիմ առ որ
չեմ, զարտաքնայարդար բաժակս անմնաբուր,
զբռնաւ որմն գարշունակ, զսին պարծանօք
պաճուճեալս, զոյսս ՚ի մեայլ շրջեալ, զգե-
րանակիր անկնս՝ թշուառացեալ, զնահս փա-
ռաց՝ շինեալ, զամենայնիւս յամենայնի ամե-
նայն իրօք վնասակարս, առ անօրինականս
տէրունականս, առ յայտնութիւնն աստուա-
ծայինս, առ երեւմունսն արարչագիրս, առ
խոնարհութիւնն սարսափելիս, առ այն զոր
տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պա-
տասխանատուութիւնս քան առ համօրէն
աւետարանին զարմանս, հիացմունս, հոգս
հալոզականս, անդաճմունս անհնարաւորս,
թուականութիւնս մտաց անբարդելիս, եղմունս
անկատարս, իջմունս անհատուցս, յուսա-

հաստութիւնս յարմարական, յանդիմանութիւնս պատշաճական, ձաղանս պատեհադոյնս, նզովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս: Արդ այսքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուած ատնջանաուորութիւն:

Դ. Աչ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս թողուլ, և զեայթուածս մահու բժշկել, տէր ողորմութեանց, աստուած բոլորից, Քրիստոս թագաւոր բարձեալ հօր որդի, ստեղծիչ զիաճ բարեբար, օրհնեալ առաւ հարուստ, ահաւոր հզօր ողորմած, տեսուչ ձեռնկալ հաստիչ, ապրեցուցիչ դարմանիչ կեցուցիչ, երկայնամիտ անտխակալ ապաւէն, բժիշկ գովեալ երկնաւոր, անճառ լոյս կեանք, յարութիւն նորոգութիւն քաւութիւն. եթէ հայեացես մարդասիրութեամբ, քան զամ քոյդ են սովորութիւնք, նայեցեալ ի քեզ կողկողիմ և ես. եթէ լսիցես, հառաչեմ. եթէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անապցես, աղերսեմ. եթէ նեբեացես, ազաչեմ. եթէ առ իս դառնայցես, գոչեմ: Ապա եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեացես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սատեացես, դողամ. եթէ

խեթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդվայր հարկանիցես, հերքիմ. եթէ զողջոյ վհատութիւնս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախչեմ. ապա եթէ սպառնաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեացես, մերժիմ. եթէ կոչեացես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տացես, երկընչիմ: Զբարեացն պարգեւ մատնեալ, զերանութիւնն թողեալ, զընտրհն լքեալ, զուխտն ցրեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վստահութիւն կորուսեալ, զբնտեղծիչդ էիցս բարկացուցեալ, զանճառութիւն ընտրհին ընդոստնեալ, զպատուոյն պատկեր այլայլեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոցս մարդասիրեալ առ իս ժամանեցուցես, ոչ Յիսուս Քրիստոս զազդեալն գիր ընանիլ ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեզս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, և բնտեղծեալ կրկին ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԲ.

Ա՛ջ ոտին յա-ե-լո-ած կրկին հե՛յ-ո-ւիւն նուին հա՛յոց
աս- նոյն աղէտս հաղորդեալ բանի.
Ի խորոց սրտից իւոց ընդ Աստուած։

Ո՛Ւ ա՛րդ զո՞րս յայտնեցից, և յաղագս ո՞յց նշանակեցից, և վասն ո՞րպիսեաց ճառեցից, և զո՞րքան ծածկեալս մերկացուցից, և կամ վասն որո՞ց խոստովանեցայց. զներկայիցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն՝ զոր մ՛մ երեցի. զապագայիցն՝ յորոց կասկածեմ, թէ զբազմասահ շարժութեանցն՝ յորոց դլորեցայ, զփո՛քրն ինձ համարեալ՝ որ է աստուածոյ մեծ դրեցեալ, թէ զանկերպագրելին չ՛իշատակելի. զնուաճն՝ որ է առաւել, թէ զմ՛եմ եւագոյնն՝ որ են ծանունք. զհոգեկանացն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից ապանողաց. զառ դրունս հրեշտականացն, թէ զծայրակոտոր վնասակարութեանց. զանեռութիւնն, թէ զտեսականացն. զառաձնն հպատուրութիւն, թէ զառ նոյն իւրն շունչ հեռատուրութիւն. զլայնականն դիւրին խածմունս, թէ զերկարաւորն նետաձգութիւն. զխորութեանն զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ. զյողնագլխին պոռնկութիւն, թէ զառաղջութեանն անբժշկութիւն. զպարսրմն չարին մարմնովս, թէ զսովիլն բարւոյն

Հոգւով. զինամբ Հանդիսանալ յոչ ա-
խորժելիսն աստուծոյ, թէ զբռնադատու-
թեանն տուամբ ձգիլն ի նոյն մոլեգնութիւն.
զառ ի մնջն մեզաց, թէ զընդունայնութեանն
կարծեաց:

Ե. Ընդարեւ որպէս կամաւ խելագար զեր-
ծեալ ի ձորձոյ, զառակնացս տեսիլ յան-
դիմանելի, զընդդէմն զոռծեալ խմաստնոյն,
թէ հանճարեղքն վերարկեսցեն զամենեսին
իւրեանց, օտարացեալս ի կրօնից, հեռացեալս
ի կարգաց, ի սրբութեան անաւրէն, ի կա-
տարեալ անմնաքոյր, յարդարութեան ամ-
բարիշտ, ի բարեպաշտութեան ճշմարտապատ,
բերանով մերձ առ աստուածն և հեռի երի-
կամամբք, շրթամբքս պատուամատոյց, բառ
մարդաբէին, այլ ոչ եթէ սրտիւս: Եւ եթէ
պարտ է զքաւմնելիսն ասել աստանօր, չար
քան զոանձնանն յանդգնութիւն, իբր զուր
իմն պաշտօնատարս աստուծոյ, ի միտս ան-
կայունս երկեակ ճանապարհաւ մահու վա-
րանեալս՝ ջանամ և ոչ ինչ օգտիմ, պնդիմ
և ոչ հասանեմ, փութամ և ոչ ժամանեմ,
անձկամ և ոչ տեսանեմ, փափաքիմ և ոչ
հանդիպիմ, կարօտիմ և ոչ պատահիմ, ու-
նիմ զամենայն երկրի, և եմ պատգամատար
աղօթանուէր ամենայն աշխարհի: Այլ թող
զբազումն զայսոսիկ, բարերար, և մի ունիցիս.

դիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանատուրս աչով նկարել. վասն այնորիկ դրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ընչեացես, օրհնեալ, որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանեցար, բստ մեղթանաց բանի հեծութեան սրտի Աղբի երջանկի, յոյժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի բանին յիշատակաւ, որ զսոյն պատմէ. յամենայն կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ ի վիհ դարշութեան մեղաց անդընդականաց ապականութեանց. քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ, բստ Յորայ ձայնին: Արդ ես ինձէն ինքնադատով անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ բնութեանս, արդելի փակեցի ինքեցի առ յինէն յամենայն մասանց զկենացն հնար, զի ի փրկութիւն մեղաւք կապելոյս կրկին մեծասցիս գովեալ:

Գ. Եւ քանզի ի մարգարէէն բարւոք խրատեալ փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո երգեալ՝ յուսով հաստատանով ի քեզ ապաստանեալ, առէք ընդ ձեզ բանս, առ Ովսէէ, և դարձարուք առ տէր աստուած ձեր, և ասացէք ցնա, կարող ես թողուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն ի բարութեան անձինք ձեր: Ահա աստուած խօսեցաւ, և ոմ է որ ոչ լսիցէ.

նոյն ինքն վկայեաց, և ո՞վ է որ ոչ հաւա-
տասցէ: Երդ այսոքիկ վճիռ պաշտելի, նուի-
րեալ պայման, սահման նոյնագոյ, կենաց ա-
ւետիս, կէտ տէրունի, դուռն բարեմեծան,
սփոփանաց հրաւէր, ճշդիւթ պատկեր, ան-
ըսդդիւտ գանձ, անմոռաց յիշատակ: Ձյսու
առ սոյն և ես հաւատ ընկալեալ, աստուած
վկայեմ ամին՝ ընդ մարգարէին, կարող ես
յաւիտենից թողուլ զնեղանս բազմաբեղուն.
և ես զօրասցիս կրկին բարձրացեալ՝ առ ա-
ւետաշուառ կործանեալ հոգիս: Յաւիտենից
իշխես, աւիտենից բաւես, աւիտենից ուրեք հա-
սանես, աւիտենից բռնութեանց յաղթես, զա-
ւիտենից կարծրութիւն փշրես. զաւիտենից ընդ-
դիմահար վանես, զաւիտենից խաւութիւն
վաստես, զաւիտենից սրացեալ ընդոստես, զա-
ւիտենից դառինս անուշես, զաւիտենից դժուա-
բամբռելիս քաղցրացուցանես, զաւիտենից ըզ-
պարոս շնորհես, զաւիտենից յանցանս թո-
ղուս: Կարող ես զօրաւոր, հզօր, հնարաւոր,
աւիտենաբուեսա, զաւիտենեցուն զնեղս ընկղմել և
չքացուցանել բառնալ ի միջոյ, իբր զճաճանչ
փոքու կայծական սահմանեալ ի չափ ոչեից՝
անկեալ ընկլուզեալ կորուսեալ ի տիեզերա-
տարածն ծովու:

Գ. Երդ բանիւ մաղթանաց վերծանողացն
այսմ մատենի, ողորմեա վասն խաչի և չար-



չարանաց մահու որդւոյ քոյ, հայր գթու-
թեան: Ակիզբն առաքողի ողբերգութեան
ձայնի այամ արտօսրածին նուագի, որ զայս
դեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց,
եղեցի բժշկեալ յանուն քո հզօր: Որ հետս
ելից խոստովանութեան մեզ նկատեցոյց այսու
պայմանաւ պատշաճականաւ, լեցի անարատ
յիւրոցն պարտեաց: Որ զհպարտութեանն
թեւս հարթել մեզ վարդապետեաց 'ի սոյն
կանոնի կենաց պատգամի, եղեցի զերծեալ
'ի չար կապանաց մահու արկածից սկզբնա-
կանաց վերջնոց և միջնոց, Երկրորդութեամբդ
բարեզործեալ, 'ի նորոգութիւն լուսաւորու-
թեան. ըստ որում և մեք զրեսցուք երջանիկ
գտեալ ընդ սմին:

Ընդդիմամարտս դիւաց այս նուագ աղօթից, և գիւտարարուս Ջերմեռանդ ախտաւորութեանց Աստուծով փարատիչ:

Ե. Արդ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձիչ հայր ամենատեղծ՝ անունդ ահաւոր, ձայն սարսափելի, կոչումն ընտանի, բան համբուրելի, աղդումն սքանչելի, հրամանն սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաւելի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբռնադատելի, որքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի, պատճառ որդւոյ հայրութեամբ, այլ ոչ նախապրութեամբ. քեւ և՝ ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ սաստեա տագնապող և դիւական տենդիս ջերմեռանդութեան, որ սպրդեալ մեծաւ ընդ մեզաց, զի փախիցէ՝ ի մարդոյս՝ զարհուրեալ՝ ի սիրալի և յանբաւելի արեանն վտակի գառինդ երկնաւորի, որով սրակեալ միանգամ՝ ի միանձնաւորս համայն մկրտեցաք:

Զ. Եւ արդ յայց պատկառելի խոնարհութենէ արարչակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ՝ ի գործս չարեաց իւրոյն հրեշտակաց, տանջեսցի և հալածեսցի հեռացեալ և արտաքս առաքեալ՝ ի շինուածոյ խորանէ քումդ բնակութեան յարտաքին խաւարն: Եւ

ընդեալ մանրեա զարտասուս ողբոցս ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան ի սրտից մերոց: Եւ յիշատակաւ հարման



հեղուսիցն քառմնաւփուշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցաւեացի չարին: Եւ ի զոհաւերձ սայրատուր սպաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, ի սպառ ատտակեացի սկզբնարար մահուն: Եւ զի խոնարհեցոյց զգովեանն գլուխ յաւանդել զոգին ի ծոց քո բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն Ադեմայ ի կոր կործանեացի, ամենայնիւ հերքեալ ի կորուստ: Եւ զի զո-

ղեալ ծածկեցաւ անմահն խակութիւն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտու-



թիւն կարծեալ դուռոցն ՚ի յաւտակս մահու դժոխոց մերին ստուերին յառեալ դիտեցեր. և յիշեցեր զառաջինն հարուածն անբժշկական, որով մահացաւ դիմամարտութիւն թիւնից վիշապին կենարարն կրիւք ամենազօրին: Վ՚այն ղն ՚ի փառս քո, Հայր ողորմութեան, իբր ՚ի գովեստ որդւոյ քո հոգւովդ սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ սոսկ զօրութեանն ունի զմիամէն առ մի խորհրդականն խորութեան, այլ զանսկիզբն բանդ անճառաւոր ընդ անժամանակդ հօր փառաւորեմք: Ու քեզ միայոյ սուրբ Երրորդութեանդ, հաւասարապատիւ տէրութեանդ, համարուն անբաժին ինքնութեանդ՝ օրհնաբանութիւն, գոհութիւն, զօրեղութիւն և անճառ վայելչութիւն մեծութեան, բարեվճաճակ հարթութեան, զուգակշիռ հաւասարութեան յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԹ.

Վէրսոյն յաւելուած կղկղն հեթանոսեան նոցին հասոյ
աս նոյն աղբս հաղնանաց բանի.
Ի խորոյ սրտից խոսի ընդ Աստուածոյ:

Ո՜ Աս արդ դու միայն սկիզբն բարեաց, դիմումիւն անճառ, որդի բարձրեալ միոյդ աստուածոյ, որ զողջոյն զօրն թագուհեան ցուցեր փրկարան, և ոչ կորստեան դատապարտարան, յեղանակեալ ինձ զաւուրն չար առ մեծ աւետիս ակնկալութեան: Ժիւկ ախտացելոյս, հոմիւ մոլորեալ ոչխարիս, տէր ապաւինեալ ծառայիս, գինի անապակ մեծ տրամեցելոյս, սպեղանեաց դեղ վերաւորեցելոյս, ազատութիւն մեղաց գրաւելոյս, օրհնութիւն բարեաց մերժելոյս, կնիք հնորհաց խոտելոյս, օծումն կոչման կապտելոյս, կանդնումն վերատին կործանեցելոյս, պատսպարան հզօր պղորեցելոյս, օժանդակ վեհ դայթակղեցելոյս, դուռն բարձրութեան տարակուսելոյս, սանդուխք երանութեան եղկելոյս, ճանապարհ շաւղաց մոլորելոյս, թագաւոր նեղոյղ պարտելոյս, քաղցր յուսադրութիւն լքելոյս, ձեռնկալ կենաց հերքելոյս, մեծդ միայն և ամենառատ, որ պիտութիւն բարեաց սահմանեալ հեղուս անչափ յաճախութեամբ քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ Պօղոսի

դոհաբանութեանն: Քանզի իննուց յիսից և թուոց երից և չորեակ տասանց ՚ի վաղորդայնէ տունջեանն առ մուտս արեւուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ իսկ և իսկ ՚ի սոյն անարգել սրտիւ, ՚ի վեր է քան զաղերսանաց ակնկալութիւն մարդկան, բարեգործել միմեանց շնորհատրութիւն. իսկ առ իմն թշուառութեան և անարդութեան զքոյդ եղեալ փառս, ամենակարող զօրութիւն ահեղ, բոլորից աստուած, օրհնեալ տէր Քրիստոս, որովք սահմանեացի կշռութեամբ չափոյ հաստողիդ ընդ հողոյս հաւասարութիւն կցորդեալ: Քանզի ճնաս յայսոսիկ անբաւ և անհետազօտելի, ամենեւին բարի անմահն բարկութեան խաւարի, ուստի յոյժ նուազ են քում մեծութեան աստեղացն թիւք, զոր ս գոյացուցեալ յոչէից յորջորջմամբ անուանդ կինքեցեր, և կամ հիւթ երկրի՝ ՚ի յօգս հեղեալ, զոր ՚ի չգոյից հաստեալ տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նախապրեալ համարդ սակաւութեան, որովք քեզ նմանիլ վարդապետեցեր:

Ր. Ընդ ծածկեցաւ և ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կամաց երկայնմտութեան՝ հանուրց չարութիւն, իբր դոյզն մեայլ ՚ի տապ արեւու, և որպէս աստուստ իսկ կիրք բնութեանց ըզհասարակաց բարուց գուցանէ: Քանզի ով ոք

'ի մարդկանէ մեղաւ, և ոչ ղէնացաւ. ո՛վ ոք զաղջացաւ, և ոչ ամաչեաց. ո՛վ ոք զարշեցաւ, և ոչ պատկառեաց. ո՛վ ոք սխալեաց, և ոչ ապաշաւեաց. ո՛վ ոք կործանեցաւ, և ոչ հնձեցաւ. ո՛վ ոք զայթակղեցաւ, և ոչ սրբացաւ. ո՛վ ոք պարտեցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ո՛վ ոք պարեցաւ, և ոչ յոտից ելաւ. ո՛վ ոք ճաշակեաց լեղի, և ոչ զառնացաւ. ո՛վ ոք անկաւ 'ի բարձրութենէ, և ոչ ընդոստեաւ. ո՛վ ոք կորոյս մեծութիւն, և ոչ աշխարեաց. ո՛վ ոք զրկեցաւ յերանութենէ, և ոչ եղաց. ո՛վ ոք կապուեցաւ 'ի չնորհէ փառաց, և ոչ ողբաց. ո՛վ ոք զուաւ ինքեան փեսաւակար, և ոչ սգացաւ. ո՛վ ոք մերժեցաւ յերեսաց աստուծոյ, և ոչ հառաչեաց. ո՛վ ոք լուաւ զաստուծոյ սպառնալիսն, և ոչ սոսկացաւ. ո՛վ ոք ընդ մի չարեացն՝ հազարս չաւաղեաց. ո՛վ ոք մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ. ո՛վ ոք անօրինեցաւ, և ոչ քարամբք զմիտան կոծեաց. ո՛վ ոք եաես զաւրուէն յիւրում մեծութեան, և ոչ զկծեցաւ. ո՛վ ոք կատարեաց չարիս, և ոչ զինքն իսկ նզովեաց. ո՛վ ոք ախտացաւ, և ոչ զանձն դարմանեաց. ո՛վ ոք յամօթալեացն գործեաց, և ոչ զեւրն մարմին ձաղեաց. ո՛վ ոք 'ի պատկառելիսն հպեցաւ, և ոչ զօրն իւր անիծեաց. ո՛վ ոք զգործեցեալսն յիշեաց,

և ոչ տապացաւ. ո՛վ ոք զգաղտնիսն մոա-
բերեաց, և ոչ խորովեցաւ. ո՛վ ոք զծածուկսն
նկատեաց, և ոչ մահ կորատեան խնդրեաց.
ո՛վ ոք զաներեւոյթսն կերպաւորեաց, և ոչ
կրկին յերկիր կորացաւ. ո՛վ ոք ընդ մեղացն
հեշտութեան բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց.
ո՛վ ոք զինասակարսն բնութեանն, և ոչ պա-
պակեցաւ. ո՛վ ոք զկամաւ ներդործեալսն, և
ոչ սատակման ինքեան աղօթեաց. ո՛վ ոք զան-
ճառելիսն, և ոչ խռովեցաւ. ո՛վ ոք զանկը-
րելիսն էութեանն, և ոչ թափանցաւ. ո՛վ ոք
զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ. ո՛վ ոք զանբը-
ժութեանն ապականարարսն, և ոչ տոչորե-
ցաւ. ո՛վ ոք զտարագրութեանն պատճառ
յանցմունս, և ոչ տապնապեցաւ. ո՛վ ոք զե-
րեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկութեան
վերնոյն զանճն պարտ վարկաւ. ո՛վ ոք զմի
՝ի կարեւորացն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ
զինուք մահու խոցեցաւ. ո՛վ ոք զնայատառա-
կանացն, և ոչ վայս վհատութեան ընդ հե-
ծութիւնս ձայնին հիւսեաց. ո՛վ ոք յարքա-
յական գահոյիցն անանկացաւ, և ոչ կար-
կամեալ ՝ի վայր գլորեցաւ. ո՛վ ոք ընդ պսա-
կին պերճութեան հող ՝ի գլուխ եղեալ, և ոչ
կրկին չարչարեալ յոգի մահացաւ. ո՛վ ոք ընդ
պայծառ պատմուճանին քրձազգած եղեալ, և
ոչ տխրեցաւ: Ո՛վ ոք զկեանս իւր կորոյս, և

ոչ արեան արտասուս երկնեաց. ո՛վ ոք ընդ արկանելեաց լուսոյ խաւար զգեցաւ, և ոչ նուաղեցաւ. ո՛վ ոք ՚ի վերայ սգոյ սիրելոյ ոչ թառամեցաւ: Ա՛հա այս կերպարանք ճշդըր-տագոյնք պարտաւորիս յանդիմանութեան, տխուր դէմ, քաղեալ ճաճանչ, ցամաքեալ խոնաւութիւն, երիթացեալ շուրթն, անշըքեալ տիպ, տրտմեցեալ ոգի, այլայլեալ ձայն, կրկնեալ պարանոց: Ա՛ւ զի թէ ոք զիսկութիւնն իսկ նշանակեսցէ, ոչ անօրինէ, անամբարտաւան միտ, անհպարտ սիրտ, անխնդրող պարգեւի թշուառ, անաղերսալի պաշտեալ, ինքնակշտամբելի դեղերեալ, իրաւամբ սովեալ, արդարալուկ քաղցեալ, պատշաճաղատ հարուածեալ, ինքնավկայ մահապարտեալ, արժանապէս հանեալ, անձնանէծ եղկելի: Ա՛ւ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փարիսեցին կշռամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բարեհամբաւեալ:

Գ. Ա՛ւ արդ եթէ զչարիսն՝ հնարաւորութիւն բանսարկուին գտողն զմեզ գայթագղեալս, զիւրն ՚ի մեզ սերմանիս առ օրն հատուցի, զիա՞րդ ոչ զբարիսն անկեալս ՚ի մեզ հոգւոյ արութիւնս ՚ի խնամակալութենէ կամաց կեցուցչիդ ծնեալս զրեսցես, տէր բարեգութ, հզօր և յաղթող, քաւիչ մեղուցելոց, կարող յամենայնի առ ամենայն փրկութիւն: Ա՛յնէ

զանդունդս առ երկինս փոխես, և կամ ըզխաւար մթութեան ի լոյս հաստատես, եթէ զդառնութիւն լեզուդ ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սաստկութեան վշտաց ի պարս դասուս բերկրութեան հարսանեաց կարդես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ, և եւս քան զասսին բաւես առ նոսին տիրեալ համայնից ահաւորապէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Լ.

Ա՛ջոյն յաւելուած լինի հեթանոսական նոցին հալոցն առ նոյն աղբր մաղթանաց քանի.
Ի Տոմոց սրտէ Իսու ընդ Աստուածոյ:

Ո՛ Նա սրդ ճշմարտասցի բան քո, որոմամբ բոլորից աստուած, նևրող և օրհնեալ, ի բազմագթելին դարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեզաւորին. թէ և առ յետին իսկ շունչն իյէ ընտրութիւն, և կամ ի մէջ չարութեանն փոխադրութիւն: Անանաւանդ զի դժնեայ կցորդս այս անճնիչխանական՝ միշտ մարտիկ, խաբող շողոքորթ, յաբեալ ի ստութիւն, ըստ առակողին արածող հողմոց, դժուարունելի հաստատողին փախչող, գերեալ որսողին մելեկան մարմնոյս, ներհակ անկակից, յոչնապատճառեան ամենաստարան, զոր քո ի պիտել զքանեացն յաճախութիւն:

Եւ գինի մեղանացն, ողորմագին իմն ողբալութիւնս վհատականս տաժանակոծս բազմաւաղելիս, քո առաջի տէր գիտարկութիւնս գրեալս արտասուաւք, թառանչս թշուառութեանց կարդելոց անբաւս չար վտանգից մեղսատարափնապ պատկառեցելոյն:

Ե. Եւ գի մի կրկնաբանութիւնս ի շատախօսութիւն կրթեսցի, առաւել քան զոյն այսու ողբալի, քանզի ոչ երբէք համարձակի ինդրել իւր գաղթայութիւն, այլ գտանչանացն թեթեւութիւն. ոչ ընդ կենդանեացն ի լոյս, քան թէ ընդ գերեզմնականացն զդայական շնչովն ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն: Ի հանգրստեան իւրում վաստակեալ, ի խրախութեան ինքեան տրտմեցեալ. գիմօք ժպտեալ, և մնօք խոցեալ. կերպ ի ծաղր, և աչք ի յորդումն. երեսք զափսիանս ձեւացուցանէ, և արտասուքն զդառնութիւն սրտին ճշմարտէ: Ընդանակք երկու յերկանին ձեռին, միոյն արեամբ և միւսն կաթամբ. երկու բուրաստոցք կայծակնաւորք, միոյն խնկով և միւսն ճնճերիւ. սկաւառակք կրկին կրաւորականք հանց, միոյն քաղցու և միւսն գառնութեամբ. բաժակք զոյգ առ երկուս բերմանն, միոյն արտօսր և միւսն ծծումբ. տաշտք կրեցեալք ի ծայրս մատանց, միոյն գինի և միւսն լեղի.

դրունք տեսանելեաց ներհակաց, միմն ի լաց և միսն ի վիսպուսն. խանութք հալոցակաց նաց հակառակութեանց, միմն արծարծէ և միսն շիջուցանէ. հայեցուածք դիմաց երկուց, միմն դոյզն ողբանօք և միսն անանխայելի բարկութեամբ. համբարձումն երկակի բազկաց, ոմն ի հարուածս և ոմն ի մերժումն. դէմք կրկնակի կերպիւ, միմն տխրեալ և միսն ցասուցեալ. կշտամբանք ընդ միոյ երկու, միմն աստեացս և միսն ապառնեացն. ապաւինութիւնք կարծողականք, միմն գոնէ և միսն թերեւս. ի մի բերան երկակի բարբառ, միմն եղկութիւն և միսն խռովութիւն. երկուս ազգմունս ի միում սրտի, միմն կեղակարծ յուսոյ և միսն ճշգրիտ կորստեան. ամպ լըրթագոյն ահագնատեսիլ կրկին տեղացմանց, միմն նետս և միսն քարինս. որոտումն ահեղ երկոցունց բերմանց, միմն կարկուտ և միսն հրացան. ցայգ ցաւագին երկուց վտանգից, միմն լալոյ և միսն մահու. առաւօտ սգոյ երկուց բողբոջմանց, միմն սաստից և միսն ապառնալեաց. արեգակունք երկու ի յերկուց ծայրից, միմն խաւարի և միսն կիզման:

Գ. Եթէ հարուածոց աչ կառուցանի, ինքեան վարկանի. և թէ ձեռն պարզեւաձիր, ոչ իւր անն ունի: Ի պարծանս ուրուք կոբանայ, յամբարձումն գլխոյ ընկճի, ի չար-

եացն յիշատակ հնձէ, ՚ի ճառս մաքրոց պատակառէ, ՚ի պատմութիւնս հանդերձելոցն երեքի: Եթէ օրհնի յումեքէ յայտնի, ՚ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ. եթէ դարուեացի սատակապէս, ինքեամբ ինքեան վկայէ. եթէ ձաղեացի ուժգին, սակաւ հատուցումն առաւել պարտուցն գրեացէ. եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ, այո ասէ, և դարձեալ կրկնէ. և եթէ որոգայթ մահու ճայթեացէ յերկինէ, հազիւ զդէմն համբառնայցէ: Զիւրոց իրաւանցն մատեան խփեալ, զպատասխանութիւնն յոյս լքուցեալ, զհամարձակութեանն ընթացս փակեալ: Ու եթէ ոչ էր անփրկանաւոր կորուստ դերելոյն, զնովին երթալ ոչ ինչ դանդաղէր: Արդարեւ վայ մեղաւորին՝ որ տարակուսեալ կայցէ ՚ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հոգելից բանի խնամատոյն:

Դ. Ու արդ զնա՞րդ ոչ ողորմեացիս, բարեգութ, այսքանեացս ձայնարկութեանց կողկողագին հեծեծանաց, որ անուամբ այսու մեծացար, թէ ողորմած եմ ես տէր: Ընդ առ չարութիւն զերծոյս բարութիւն քո, առ մահապարտիս դառնութիւն՝ քաղցրութիւն քո, առ կորուսելոյս յայտնութիւն ճառագայթ քո, առ յանդգնելոյս մոլութիւն՝ ո-

ղորմութիւն .քո, առ խակութիւն միսասակարիս հեզութիւն .քո, առ կործանելոյս այցելութիւն աչ .քո, առ ընկղմելոյս վերբերութիւն ձեռն .քո, առ բժշկութիւն անողջանալի խոցուածոյս մտան .քո, առ պակուցելոյս պաշտպանութիւն ոտի .քո, առ ապախտաւորիս իմ վստահութիւն երկայնմտութիւն .քո, առ օձումն ամենադժնէիս զօրութիւն .քո, առ մեզաւորիս .քաւութիւն հրաման .քո, առ փախուցելոյս ապաւինութիւն ոտք .քո, առ սրացելոյս պատսպարութիւն բազուկ .քո, առ վթիպելոյս առաջնորդութիւն լոյս .քո, առ ուսրակուսելոյս հնարաւորութիւն հանճար .քո, առ անիծելոյս կրկին օտացումն օրհնութիւն .քո, առ վհատելոյս քաջալերութիւն խրախոյս .քո, առ վշտահնելոյս միխիթարութիւն բաժակ .քո, առ նեղելոյս ընդարձակութիւն կամք .քո, առ աւեցելոյս կոչումն սէր .քո, առ հաստումն սասանեցելոյս բան .քո, առ հոգով վիրաւորելոյս կաթուած արեան .քո, առ աներեւոյթ մեծիս ցաւոց ակնարկութիւն .քո, առ յուսահատելոյս անզրէն ընտրութիւն իշխանութիւն .քո, առ պատուաստումն կրաբեցելոյս կցորդութիւն .քո, առ խաւարաւ մահու ծածկելոյս նշոյլ կենաց .քոյ, առ խոտովեցելոյս իմ հանդարտութիւն խաղաղութիւն .քո, առ վայրագութիւն օտարացելոյս ողջոյն

քո, առ մեղուիցդ զարձատուրութիւն ձայն քո: Օձի դու տիրես ամենայնի զթուխեանէ, և չիք ի քեզ մահ ինչ խաւարի. և ոչ է բարութիւն առանց քո, և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն:

ԹՈՒՆ ԼԸ.

Ա էջոպին յաւելուած կրկին հեքեաթն Նոքին հոխոչ առ նոյն աղէքս մաղնանաց բանիւ:

Ե. Եւ արդ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս զաղէտ տապնապի հեծութեան ձայնիս մեծ հառաչանացս անսփոփելի իմոյ վտանգի. զի դու ողորմած սկզբնահայրդ խաստովանութեան անյայտ ծածկութիւդ որդի աստուածոյ կենդանւոյ տէր Յիսուս Քրիստոս, քաղցրութեամբ նայեցիս քաւել: Արդարեւ կարող ես, ճշմարտապէս բաւական ես, եթէ կամիս՝ հնազաւոր ես. կամիս առաւելապէս, որպէս և կարես: Ձարտասանս մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առնուլն, բազմանան քեզ գանձք ի ցրուելն քան ի ժողովելն, յաճախեն աստղուածք քո ի սփռելն քան ի ճշդելն, կուտին քեզ համբարք ի տարածանելն քան ի շտեմարանելն: Ձաւատամ այսմ ամենայնի՝ դառնալ քեւ եկք փրկութեան. հաւատամ անարգս ընդ պատուականին, յուսամ ընդ

Աբրահամու և ընդ Աննայի. զի միոյն բանիդ քո հաւատաց և միւսն քահանայապետին բարբառոյ անապատ: Այսոքիկ և ոմն 'ի խորին ծերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ, զառանցեալն և զամուլն արգանդ Սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութեան բազում՝ ժողովրդոց մարդարէից սրբոց և թագաւորաց ընտրելոց հայել յուսացաւ: Իսկ միւսն զանհանդերձելի երկիր ոբովայնին սենեկի եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց, որ է թիւ մի անբաւութեան գլխաւն նշանակելոյ զէութիւն, աստուածութեանն յարակայութեան սահման անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց անհատ յորդութիւն: Այս թիւ պանծալի, ոբուամ ոչ է կէտ կորդի և ոչ սպառուած վախճանի, այլ կոյս ոմն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւէտ անճառ վիճակաւ Համայն յաւիտենից, դժուարաթարգմանելի մերոց խմաստից:

Ե. Արդ համարեա յարդարութիւն անյուսալի փրկութեան հոգւոյս զամենավարան ձայն կողկողանաց սրտիս հեծութեան, ընդ նախագրելոցն երջանկաց եղեալ և դասեալ զայս դասանութիւն փոքր հաւատոց իմոյս խնդրուածոց. զի կեցից և ես առ նոքօք բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զնմոյ

գործոց գ-քոյդ ընտրեաց: Ա՛նսասանդ զի կրկին բարձունք են և փառաւորք և քան զչափ կշռութեան բանի զերազոյնք, իմումն խառնուածոյ հաշտարանք և հզօրապէս քաւարանք, և կարծեաց թերութեան մոաց սըլացեալք· ընդ արեան քո ահաւորի և ըստ մարմնոյ ծնողդ քո խնկելի· պարք առաքելոցն, դասք մարգարէիցն, գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն հետեւակ սպառազէնն արիութեամբ մերկամարտիկն մրցութեամբ, դումարք միանձանց, բոյլք բանականաց ընտրելոց, ժողովք բարեկրօնից, հոյլք հոգեղենաց յերկրէ երկնաւորաց, զինուորութիւնք վերնականաց ընդ մեզ կցորդելոց, աւանդք երախայրեաց, մատուցմունք զուարակաց, լուացմունք դամբարաց, բուրմունք խնկոց խղոց հանդերձանաց, յաղթանակք փրկական նըշանաց, կառուցմունք խորանաց աստուածաբնակաց, ձեռք քահանայից ընտրեալ կատարելոց: Ա՛ն շարժումն անձին յիշատակ աստուծոյ, առ փոփոխումն գարշապարի, առ կարկառումն աջոյ և ամբարձումն բազկի, առ բարիս դոհութիւն, և առ գթել աղաչանք, առ բանս ընտանիս, առ խօսս հաստարակաց, առ ձայնս բնաւորականս, առ գործոց յաջողուածս, առ առաքինութեան ջերմեռանդութիւնս, որ 'ի տունջեան և 'ի դիշերի՝ ընթացմունս

օգտակարաց Հոգեւորաց՝ քեւ առաջնորդեալք. ՚ի ներհել և ՚ի զարթնուլ, ՚ի պատերազմի ազգաց, ՚ի մարտս դիւաց, ՚ի հակառակութիւնս հերձուածողաց, առ փոքունս, առ մեծամեծս, առ ձգումն բմպելեաց և ճաշակումն կերակրոց և որ ինչ միանգամ ՚ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս եթէ տատամնելիս. վասն ոմանց ազօթս՝ ճնալ ՚ի նոսին, և յաղագս ոմանց՝ դի զերծ արասցես զքանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ յամենեցունց, թէ բաւական ես յամենայնի, կամեաբոյծ հասակաց, տիոց պատանեաց, մոաց վայրենեաց, ստամբակաց դուռղաց. մինչ դի առ թատերս տեսարանաց, և առ կոյտս խառնիճաղանճ բազմութեանց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հղօրիդ՝ ոչ ես մոռացեալ:

Գ. Ընդ դու ստացար զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեացիս ամենեցուն՝ միայն բարեգութ. դի թէ և մեղեցեն, քո են. վասն դի ՚ի քում համարի են. քանզի դիտեն զղօրութիւն քո, ըստ առակողին մաղթանաց: Որում և ես կցորդիմ թշուառս բանիւ վկայեալ սորին յանցաւորապէս. յանդրգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ զուարճութիւ, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթամիւք իցէ վարակեալ կրկնապատիկ պատ-

ժաւռութեամբ, առ այս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զհաւրդ ոչ ըստ իցէ: Յորս է տեսանել ՚ի մէջ արքնատես ագռաւուց՝ բազիտականիշ երամն աղաւնեաց, ՚ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոջս հանդարտաբարս, ՚ի թիւ շանց գազանականաց գառինս նուիրելիս, հեզութիւն ՚ի խստութեան, կատարելութիւն ՚ի թերութեան, խոնարհութիւն յամպարտաւանութեան, ճշմարտութիւն ՚ի սուտութեան, միամտութիւն ՚ի մանկութեան, անբծութիւն յայլայլութեան, բարօրութիւն ՚ի չարութեան, պարկեշտութիւն ՚ի լկտութեան, ողորմութիւն յանգթութեան, ապաշաւանք յանյուսութեան, քաղցրութիւն ՚ի բարկութեան, հաշտութիւն ՚ի թշնամութեան, անոխութիւն ՚ի խածանողութեան, քաջալերութիւն ՚ի լկութեան, օրհնութիւն ՚ի նեռաձգութեան: Յոր ոչ բաւականացայ երբէք ՚ի գտել ճշդութապէս, թէ ո՛վ յերկրածնաց առաւի կանխեսցէ ժառանգել զքեզ, որ միայն անաչառաբար կըշռամբես իրաւամբք զարդարութիւն՝ առ ամ պարիշտ մեքուրն և առ պոռնիկ զղջացեալն. առ ամենեսեան բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ ՚ի բարձունս և յամենայն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԲ.

Վ Ի Ր Ա Պ Ի Ա Յ Ա Ր Ե Ւ Ա Ն Ի Ն Հ Ե Տ Ո Ր Դ Ե Ա Ն Ն Ո Յ Ի Ն Հ Ա Յ Ո Ց
ա ր Ա Ն Յ Ա ս ա ղ Ե ր Ա Մ Ա Ր Տ Ի Ր Ո Ս Ա Ց Ք Ա Ն Ի .
Ի Խ Ո Ր Ո Ց ա ր ի ց Խ օ ս Ե Լ Ը Ա Ռ ա ջ Ե Ա Յ :

Ը. Եւ արդ ես յետնեալս ի նախադրութեանց արժանաւորաց գրեալ ինձէն ընդ պարտաւորն պատժոց, հայցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթանաց. ընդ ներկունս և անհամարձակս, ընդ տկարան և փոքրկունս, ընդ ընկեցիկան և արհամարհեալս, ընդ տարագրեալան և առ քեզ դարձեալս, ընդ երկուացեալան և ճշմարտեալս, ընդ կործանեալան և յարուցեալս, ընդ ընկճեալան և հաստատեալս, ընդ գլորեալան և կանգնեցեալս, ընդ մերժեալան և ընկալեալս, ընդ առեցեալան և կոչեցեալս, ընդ ապշեալան և ըզդաստացեալս, ընդ անառակեալան և զսպեալս, ընդ հեռացեալան և մերձեցեալս, ընդ հերքեալան և սիրեցեալս, ընդ պատկառեալան և զուարթացեալս, ընդ ամաչեցեալան և խնդալմըտեալս: Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեղան Երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանառութեանն որ առ ժողովուրդն նախնի, և կամ տանն Յակորու զանօրէնութիւնս նորա, այլ իմոյս ժամանեցեալ յայսնութեան. քանզի աւաղ ընդ աղէտս մահու

յարելով ըստ մարդարէին, յանդիմանեցից զնա ինքն ինձէն իմով ձայնիւ ըստ սաղմոսողին. որպէս զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութենէ ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն ի սպառ սրբեցայց օրհնեալ հրամանաւ էիդ:

Ն. Եւ արդ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զի մահ գլորմանն ցուցից կերպարան. որ ի հող խոնարհեալ մածայ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորստեան՝ առնամական գեհենաքարշութեան սղնոյ սահեցմամբ՝ կամաք բեւեռեցայ: Այլ ի քեզ տէր յեցեալ՝ իբր ի հաստարան կենաց գաւազան ի յարմատոյն Դաւթի ընծիղեալ մարմնով անճառ շաղկապմամբ յանեղ աստուածութիւնդ, կանգնեցայց անդրէն կիսայար՝ պատկառեալ ի քոյդ երախտեաց ի վայր կորացեալ դիմօք, աչք ի բարձունս յառեալ ողորմագին տեսութեամբ ի քեզ մերձ ի հեծութիւն, բնաւին ողորմութիւն, բոլորովին քաղցրութիւն, զլեզուացս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ վերընծայեցից: Որ ամենառատ անմուազ երկայնմտութեամբ՝ քո դառնացուցչիս, միայն դու ի յամենայնի սահման վրկութեան, աստուածբոլորից, անճառ մեծութիւն, անբովանդա-

կելի բնութիւն, անքննելի խոկութիւն, հզօր զօրութիւն, կարող բարերարութիւն, անպատկառ լռութիւն, անճառ ժառանգութիւն, վայելչական վիճակ, առատ պատրաստութիւն, անստուեր խնամատութիւն, տենչալի տուրք, անձնական ձիր, բաղձալի բերկրութիւն, անտխուր Հանգիստ, անտարակոյս գիւտ, անկասուած կեանք, անծախելի առատութիւն, անփոխանորդելի բարձրութիւն, ամենաբուժող բժիշկ, անսասանելի հաստատութիւն, դարձուցիչ մոլորելոց, դարձիչ կորուսելոց, լոյս ապրիմնելոց, լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցեալոց, ծածկարանդ փախուցելոց, անդորրիչ խռովեցելոց, փրկութիւնդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատրպարանդ սահեցելոց, վշտակիցդ գայթազղեցելոց, երկայնմտութիւն տարակուսելոց, լուսոյ տեսակ, ցնծութեան ցոյց-ք, օրհնութեան անձրեւ, հոգի երեսաց, զօրութիւն դիմաց, հովանի դլխոյ, շարժարան շրթանց, աղդումն բանի, կառավար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երասանակազդ սրտի, ընտանի անուն, մեքձաւոր ձայն, կցորդութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի, խոստովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր տիպ, երկրպագեալ տէրութիւն, բաբեբանեալ յիշատակ, խնդութեան մուտք,

անվթեպ շաւիղ, փառաց դուռն, ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ անդուդք: Նա այլ բազմութիւն բանից դոլեսաից անհամար կարդաց և տանց անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգեղէնք:

Գ. Նա քեզ հայի ամենայն աչն տեսողի, աստուածդ ամենայնի. նայեա ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց ծառայից, և եթէ յաղաղանաց ոք աղաչեսցէ: Նա ընկալ զյօդ ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս ցանկասիրի՝ յանարատ ուս մարդեղութեան քո, Քրիստոս, և օրինակաւ խորհրդոյ հեթոց կնոջն յանցաւորի՝ զառ քեզ դարձն և զդաւանութիւն, և համբուրիւ շրթանցս առ ճաշակ փրկութեան կենացդ հաղորդութեան՝ համաշնչապէս զանբաւ միութիւն. և զնոյն դիմութիւն նորին ողորմութեամբ ընկալեալ ի քէն, բարերար, զրաւականեացես զմեծդ պարդեւ ընդ փոքու հաւատոցս. և ի ձեռն դիմութեան սիրոյ քոյ առ քո անձկալի առնոնդ խոստովանեալ ծառայիս, դարձցին ձմերունք հոգմոյն խաստութեան ի յօդ հանդարտութեան, և մրրկին սաստկութիւն ի սիկ ախորժութեան, և կարծիք երկիւղին ի մեծ վստահութիւն, և պատուհաս պատժոցն յեբանութեան պատահումն, և վտանգք թախ-

ծանացն 'ի հոգեւոր խրախճանութիւն, և ա-
լեկոծութիւն ծփանացն 'ի խոր խաղաղու-
թիւն, և զեկացն թեւարկմունք յանդրիթ
նաւահանգիստն, և բերք բեռանցս մեղաց
փոխարկեցի 'ի թռչակ շնորհաց: Եւ յայս-
քանեացս ամենից բիւրուց բարութեանցս 'ի
քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ
և խոստովանեալ, ամաչեսցէ բանսարկուն չա-
րեաց՝ հերքեալ և հալածեցեալ, ունայնասցին
մուրհակք մեղացս, խղեսցին հաղբքն, որո-
շեսցին որոգայթքն, կապտեսցին կապանքն,
վանեսցի վիհն, վերասցին ժլատքն, պարեսե-
ցին պատարանքն, ջրեսցին մեղքն, պատա-
ռեսցին պարիքն, խորտակեսցի լուծն, քակ-
տեսցին քեղկքն: Եւ ընդ մեայլ մեծութեան
չարեացն յանցանաց և դիւացն բանակաց
պաշարողաց՝ արեւ փառաց քոց ժամանեսցէ
կեցուցանել փրկել և լուսաւորել, յաջմէ և
յահեկէ, 'ի դիմաց և 'ի թիկանց. և եղիցի
նշոյլ առաւօտու հոգւոյ պարնայնոյ ընդ ա-
կընկալութեան սպասողացն քումդ երեւման:
Ո՛վ դու ես բարերար առ ամենեսին, և հնա-
բաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն ըղ-
կեալն կամիս և զփրկութիւնն բաղձաս:

Դ. Ով ամենասպարգեւ ձեռն Յիսուսի
Քրիստոսի, և առ իս դարձցիս կարկառմամբ
շնորհի աջոյդ քոյ սրբոյ բնակեալ միացեալ

և ոչ հեռացեալ յանձկութեան սրտէ սիրոյ սենեկիս. և անեղծական քո նկատադիր՝ նըշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փըրկաւէտ կոչմանս՝ ընդ իս պահեցի, միշնորդեալ ընդ քեզ՝ ի մնառեան յաւիտեան կատակաւդ կենաց հոգւոյդ աւետեաց երկնից յօրինողիդ: Եւ քեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ՝ ի միոյ պատճառէ, և ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորութեանդ և միոյ աստուածութեանդ վայելէն փառք յերկնաւորացն վեհից, ՝ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԼԴ.

Ա՛ջորին յաւելոած երկին հեծօղիսն նոցին հոկոզ
աս նոյն աղէքս հաղնանաց բանէ.
՝ի խորոց սրտից ընդ Աստուածոյ:

Ա՛. Ընդ գլխաւորութիւն պաշտօնեան բանիս ՝ի խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ, օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազդեստիցն զուգամանուածս խառնեացես ՝ի յանուշութիւն կաղմութեան իւղոյն Աարիամու կնոջ բարեպաշտի: Յոր հաւատարեալ նոյնութեամբ ընդ երջանիկ պատնկացն ՝ի քէն ընկալելոցն յաւէտահրաշ յարդանաք, պարարեացիս մեծապէս իմովս բանիս նուաստիս, ընկալեալ յանհաս և ՝ի բարեբանեալդ գլուխս բարձրե-

լոյդ, անկշտամբելի՝ ի բամբասանաց սաղմոսին, մի օծցէ զտերեւ ոստոց զպաղեղեան իւղ մեղաւորին: Ա՛յլ արասցես զօրանալ կրկին յաճախութեամբ բուսման խոստովանութեան այսր մատենի՝ ի բազումս աղղեալ, համասփիւռ ամենատարած և աշխարհալիր տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութեան նոցայն յիշատակի: Զանդի դու նոյն տէր ըզգաստացուցիչ նախանձի չարախորհից կանանց մեղաւորաց, որոց առակեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ սոսին անճառ ներգործութեամբ՝ ի յիս վերաբերեալ զծայրագոյն ընդհին կատարումն: Ընդ անանձանական զարուն կերակրոյ զբազմահամբար պրտուղ ցորենոյդ կենացդ հացի, ընդ ապականացու արծաթոյն՝ զարքունականդ պատկեր, ընդ յիմարաբար թմբրութեան գինւոյն՝ զբաժակդ արեան արարչիդ, ընդ իւղոյն առելոյ՝ ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն՝ զօծումն ընտրհին առ իս դարձելոյ, ընդ ներծմանն գլխաշուք կատարոյն՝ զանապականութեան վերարկուն, ապարանջանին սքնութեամբ՝ զիոխիչ բարեմանութեան, օրինիւն և աւետարանաւն՝ հանդերձ գործնական առաքինութեամբն, ընդ ունկանն գնդի վայելչականն զաջդու՝ զանստուեր յիշատակ տերունականդ

ձայնի, ընդ քայս պերճութեան լանջացն՝ դյոքնահասաք աւանդս ուղղութեան քոյի-նակրօն լծոյդ քաղցրութեան:

Ր. Հայց զի՞ է յայսոսիկ ինձ պարծել, և ոչ վերատին 'ի սոյն պատկառել: Ա. Յայլ օրինակ փոխեալ զմտաեան մաղթանաց այսր ողբերգութեան, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հատուցից զպատիժ պարտուցս իմոց մեղանաց, 'ի մարդպարէիցն տատից բերեալ համառօտս՝ 'ի սոյն յարկ մուծից սահմիկ դատախազ. ընդ որոց նոցին լծակցեալ, քան թէ ընդ բերկրումն նոցա պարել՝ յորս հառաչանս, ձայնս հեծութեան, բողոքս բարկութեան, նախատինս խորտակմանն, լալումն կարեւոր: Ա. մեծիդ աստուծոյ զթութիւն ամենաժամանն՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութիւն, առ որս՝ զղջմունս, խոստովանութիւնս, աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս, խրախոյս աստուածայինս, փառաց ժառանգութիւնս, հրաշից յայտնութիւնս, աքանչելեաց տեսութիւնս. յորոց ոմանք յոյս ընձեռանն, և ոմանք վհատութիւնս բազումն մատուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորատեանն վիճակեցայ: Օ՛ի եթէ զգեաց աստուծոյ զվարագուրին պատրուակ սասց Ղեկիէլ, յորում՝ արար ժողովուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել սէ 'ի նոսա,

իսկ ոչքան պատիժ անմաքրութեանս եղիցի դաստուած զգեցողիս նեղքոյ և արտաքոյ։ Ոչ արմանամ, թէ զնա՛րդ ոչ կիզում. հիանամ, թէ իբր ոչ այրիմ. ափշիմ, թէ ո՛րպէս չյափշտակիմ՝ առանձնալ, լքեալ, չարչարեալ, ջաղեալ, մանրեալ, խորտակեալ, կտրեալ, բաժանեալ ՚ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ըստ գրոյն։ Այլ այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի փրկութեան յուսոյ, զի քրիստոսեան աւետարանն կեանս է ամենեւին, ՚ի կերպարանաց պատկերի բանին ծանուցեալ. որով առ մեղանան դարձն, առ պարտիսն շնորհն, առ եղծումն նորոգութիւնն, առ անօրէնութիւնն քաւութիւնն, առ վէրն բժշկութիւնն, առ վտանգն անդորրութիւնն, առ պատիժն ներումնն, առ պատերազմն հանդարտանալն, առ հուրն անձրեւն, առ պատուհասն պարգեւն, առ ակնկալութիւն սատակմանն՝ ձիրն, առ գործարան մահուն՝ կենացն աղաւթիւն։

Գ· Այլ զի՞նչ է ինձ զայսքանեաց յիշմանց ՚ի թիւ արկանել, և ոչ զանճառելիսն աստանօր դասել։ Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կցորդութիւն, յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն, սոցին ակնարկութեամբ ընդ հոգւոյ հաղորդութիւն. խաչին փրկանք, բանին սփոփութիւն, բարտաք վարձ կամացս

առ կշռութիւն դիտողին, աւազանն կենդա-
նարար՝ հաշտութեանն միջնորդութիւն, և
այլք ամենայնք անթիւք բարիք՝ ի բարերա-
րէն բարեգեալք, ազատ՝ ի հարկէ, արձակք
՝ի լծոյ, իշխանականք և ոչ իշխեցեալք: Ա-
սոքիկ են, որ ինձ՝ ի մէջ դառնութեանս մա-
հու՝ կեանս անտարակոյս աւետարանեն.
քանզի եթէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ
արդեօք կորուսեալ էի իսկ և իսկ ըստ բանի
երգողին: Ոչ փոքրկութեամբ որդւոյ զհայր
փառաւորեմ՝, ոչ նուաստութեամբ հոգւոյ
զորդի նախադասեմ. համախառն ունիմ զե-
րեսեան՝ և նոյն արարչութեամբ: Քանզի և
՝ի դէմն հոգւոյն սրբոյ այս են աղաչանք, նա-
խընծայ սկզբան պատարագին՝ յորում՝ դառնդ
երկնաւոր զենանի, զայս աղօթեցի:



Աղօթք, որ նախ քան զպատարագն մատուցանի։

Դ. Ամենակալ բարերար մարդասէր աստուած բոլորից, յօրինող երեւոյթից և անեղութենից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հղօր հոգի հայցեմք բազկատարած մաղթանաց զոչմամբ հնազանդութեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ։ Արատչիմք մեծաւ զօրութեամբ սաստիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քոյմ անշնչին զօրութեանդ, իբր աթոռակից փառակից և արարչակից հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկութեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Իմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի։ Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միանական աստուածութեանդ, յորոց մի և դու Ճանաչիս անհաս։ Որեւ և ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառաւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալն և զդալոցն, զեղեալն և զոչ գոյացեալն անստուերաբար բարբառով բանի վերապատմեցին։ Որպէս աստուածոյ քարոզեալ զքեզ Մովսէսի, որ ի գնալն քո ի վերայ Ջոջոն, անպարագիր զօրութիւն, ահեղ շքշարկութեամբ տածողականաւ՝ թեւապարփակ պաշտ-

պանողօրէն գթասիրեալ ՚ի ծնունդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր: Զոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկատարուածանել զլոյծդ մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր, կարող տիրապէս, զթովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից դոյից ամենայն էից յանէից: Զեւ առեղծանէն ՚ի նորոգութիւն յարութեան ամենայն եղեալքս, առ ՚ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղոյ, և օր առաջին երկրին կենդանեաց: Զնեղ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս հօրն իւրում ազդակիցն քո, էակիցն հօր անդրանիկն որդի մերոյս կերպիւ. զքեզ աւետարանեաց ճշմարիտ առաւած հաւատար և համազոյ հօր իւր հզօրի, և զառ ՚ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զառաւածամարտիցն զքո հեռանալոյն չարաբանական բերանս կարկեաց, և զիւրն շնորհեաց արդարն և անարատն գոհիչն ամենայնի, որ վասն մերոց մեղաց մերոց մատնեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ: Զմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:





Դարձեալ կրկնեսցի ՚ի նոյն կարգ բանի, մինչեւ վստահութիւնն լուսոյ հրաշապէս յայտնեսցի ազդեալ, աւետարանել վերստին զկրկին խաղաղութիւն։

Ե. Աղաչեմք և աղերսեմք արտաստուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ անեղծ և անստեղծ անժամանակ հոգւոյդ զթածի որ բարեխօսդ ես վասն մեր յանմահունչ հեծութիւնս առ ողորմածդ հայր. որ զսուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ հօր։ Ընդ աղաւեաս զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի շնջեսցին առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ՚ի տեսականացս աչաց խմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց։ Եւ քանզի մինդ Հոգւոյդ սեպհականեդ պատարագի, և միադ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտա-

բար արեամբ անդրանկի իւրոյ, իսկ դու ընկալեալս զմեր պաղատանս, և յարդարեացես զմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունել զայս անմահացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան: Եւ հալեացի ի հրոյս յայսմանէ զայթագղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակմամբն ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քարոզեացի զթութիւն, որպէս որդւովզ աստուծոյ՝ հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկան յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան: Այո՛ այո՛ և ես մի եմ ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս: Օ՛ի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո աստուածութիւնդ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար ի մի կամս և ի մի իշխանութիւն գովութեան. զի քո է զթութիւն և կարողութիւն և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԸՆ ԼԴ.

Ա էրոտն յաւելոած էլլին հեծութիան նոքին հոգոյն
աս նոյն ալէքս մաղնանայ բանի.
Ի խորոց սրտից խօսի ընդ Աստուծոյ։

Ը. Արդ աս այսքիկ թշուառացեալ հնչոյս իմոյ իղձք, և աս քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն՝ աստուած, զոր ՚ի նախնին ճառեալ՝ և յերկրորդումն ցուցից։ Իսկ յանդիմանութիւնս զրաբանականս՝ ՚ի կոյտս բազմութեան ազգաց, և թարգմանութիւնս ժողովրդոց, զայս արդահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանապրեն զոհաբանութիւնք։

Ի հանդիսարանս խօսից առնի բանս մաղթանաց, որով հոգին աստուծոյ հաշտեալ հասանէ յօդնականութիւն։

Ը. Ազաչեմ զանվոխոխելի սէրս քո ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքեա զշօշ քաղցրութեան քոյ, և բարեգործեա ՚ի յանձին և յիշխանական ազգման զգայութեան զամենալից շնորհս բազմապարգեւ քո ողորմութեան։ Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս յընդունակութիւն արդասաւոր հոգեւոր սերմանդ։ Քեզ ամենիմաստ էութեանդ խոստովանիմք

զամենայն պարդեւս ՚ի մեզ ծաղկեալ և ա-
ճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս, լցու-
ցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս,
բարբառեցուցանես համբս, և բանաս զփա-
կեալ ականջս խլից. որպէս աղգակիցն քո
Էակիցն հօր անդրանիկն որդի քոյին գործակ-
ցութեամբ ներգործելով զայս ամենայն, քա-
րոզեաց զքեզ աստուած հաւատարակից խա-
կութեանդ հօր: Ընդհանէ և ինձ մեզաւորիս
խօսել համարձակութեամբ զկենդանարար
խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետեւել
արագախուժ ընթացիւք մտաց ընդ անհուն
ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց: Եւ
՚ի մատչել իմ ՚ի գլուխ հանդիսի մեկնութեան
բանի՝ նախաժամանեսցէ առ իս սքնութիւն
քո, խօսելով յիս զարժանն և զպիտանին և
զհաճոյն քո ՚ի ժամանակի, ՚ի փառս և ՚ի
գովեստ աստուածութեանդ քո, և ՚ի լուս-
թիւն շնութեան կամուղիկ եկեղեցւոյ: Եւ
կարկառեա ՚ի վերայ իմ զամենաձեռ աջ քո,
և զօրացո զիս հնարհօք զթութեանդ քո.
փարատեա ՚ի մտաց իմոց զմէգ մթութեան
մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զս-
խալաբար մեզաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝
՚ի կենցաղոյս երկրէ ՚ի բարձունս: Ուսուցիր
՚ի յիս վերստին զնագումն անստուեր հրաշից
գիտութեան աստուածութեան քոյ, հզօր,

արժանի լինել առնել և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր ղողաց: Նա քեզ ա-ւետեալն փառք յաւիտենից, ընդ հօր ամենա-կալի և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն:

Լակ ղՀաւատոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կանոնի առ համադոյ սուրբ Երրորդութեանն՝ զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարդիդ վերանկարէ:

Երրորդութիւն անայլայլական Նորոգ ստեղծաբանութեան ազդակաւ աստուածոյ, յոր ինչ ի նիւթոյն սահմանեցաւ Հաւատ:

Զ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրպագեմք զզուգափառ միութիւն աւե-նատուրբ Երրորդութեանն, աստուածութիւն անճառ, միշտ բարի, նոյնադոյ, հաւասարա-պատիւ, անհաս իմաստից թեւոց սլացման, ի վեր քան զօրինակ և անդր քան զնմանու-թիւն, զերազանց դոլով սահմանի անպարագիր բացարձակութեամբ, յառաջ քան զհիմն յա-ւիտեանցս անտարրալուծ էութեանց ստեղ-ծականացս կարգաց, օրհնաբանութեամբ ան-թարգմանելեաւ աւենահարուստ մեծութեամբ յաւէտ պսակեալ, հաստիչ ժամանակաց և որ ի ժամանակի են կերպաւորեալք, ինքն պատճառ հանդերձիչ և յարմարապէս յօ-րինիչ տեսականաց և անտեսութիւց: Ոչ ան-

ուամբ չափեալ և ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ նմանեալ և ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ օրինակաւ ձեւացեալ և ոչ որպիսութեամբ ծանուցեալ, ոչ ՚ի թերութենէ տարածեալ և ոչ ՚ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբէքի գրաւեալ և ոչ ՚ի տեղւոջ վայրի երեւեալ:

Ի· Հայր զթութեանց՝ ունող ամենայնի, և աստուած հանուրց որ յերկինի և որ յերկրի, բաց ՚ի բանէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի. ստեղծիչ և տուիչ ընչից ամենից, բաց ՚ի հոգւոյն իակակէ որով զհամայնն կազմեաց:

Ե· Մինն յերջանկափառ համազօր ահաւորութենէ երից անձնաւորութեանց խոնարհեալ ՚ի վերուստ՝ անտուստ ՚ի ստորինս, որ էրն իսկ ՚ի բնէ անբաժ ՚ի ներքնոցս՝ անկապուտ ճեալով փառացն աթոռոյ, և անկարօտ դիմացն ծնողին իւրոյ, մնեալ ՚ի սենեակ կուսին արգանդի պարզաբար, և ելեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս անոթոշելի, անթերի մարդկութեամբն և անպակաս աստուածութեամբն: Մի որդի հօրն միայնոյ և միածին անդրանիկ աստուածամայրն տիրածին կուսին, արարիչն յեղանակումն մարդ ելով ճշմարիտ սկզբնածին. ահա ոչ գինի եղելոց երկրաստեղծից նմանութեան, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ, որ ոչ

ցուցաւ ՚ի դարս, և ոչ գոյացաւ ՚ի ժամանակս, անդրանիկ ըստ սաղմոսողին, քան զամենայն թագաւորս երկրի. անապական խառնութեամբ կերպացեալ զմերս ՚ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ. և կամ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ անջատեալ: Նոյն ինքն եկեալ կամաւորութեամբ ՚ի խաչն մահու, իբր զգառն անարատ ՚ի սպանդ վարեցաւ, և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութեամբ զարատածոյ իւրոց փրկութիւն. չարչարեալ խակութեամբ կենդանեօք՝ եղաւ ՚ի շիրմի անտրոշելի յաստուածութենէն. եւ օրեայ թաղմամբն ՚ի դժոխս՝ անդադարամեռականացն վըհատելոցն բանտարգելիցն քարոզեալ ցուցաւ նորոգումն և լոյս: Եւ աւարտեալ զանօրինականացն զվրկանաւորն զանառեալութիւն, աստուածապէս վերակենդանացեաց. և կատարեալ ՚ի թեւս հոգւոյ՝ եկեալ ՚ի Քրմբէս ամպով անքննութեան ծածկեցաւ. համբարձեալ դեր ՚ի վերոյ ամենայն երկնի, նստաւ ճախութեամբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հաւասարութեան, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկնացաւ, անկորուստ առեալ զմիմեանս և անխառն սեպհականօքն: Որով և եկեսցէ ՚ի դատաստան հատուցման, քննել զծածկեալսն կշռութեամբ չափոյ արդար իրաւանց. որում

սպասեմք և յոր աղօթեմք, հաւատացեալք յամենայնի՝ ամենայնիւ ամենակալ տէրութեան նորա. որ արդարեւ միոյն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկրպագեալ:



Օ. Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ հօր և ս. հոգւոյ էութեան նոցին, ամենատօր, ճշմարիտ, կատարեալ և սուրբ, որ յանէից գոյացոյց զբոլոր եղեալքս ամենայն, ինքնագործ հոմիշխան երկուցն եւս ընդ նմին անեղծ և անսահման թագաւորութեան. որ ինչ պատճառն առաջին և բանն ահաւոր նորին ինքնութեան, նոյն ինքն և հոգին բարձրա-

ցեալ: Քարի ինքնակալ, ամենից բաշխիչ ըստ-
հօրն սպարգեւս ՚ի գովեստ անուան փառաց
միածնին. որ ազդեաց յօրէնսն, շնչեաց ՚ի
մարգարէսն, վիշմամբ ազգակիցն տապաւորեցաւ
յառաքեալսն. կերպիւ աղաւնւոյ ցուցաւ ՚ի
Յորդանան ՚ի մեծութիւն փառաց եկելոյն,
փայլեաց ՚ի դիրս աւանդականաց, արար հան-
ճարեղս, զօրացոյց խմաստունս, լցոյց վար-
դապետս, օծ արքայութիւնս, օժանդակեաց
թագաւորս, եւ վերակացուս, հրամանատարեաց
փրկութիւնս, շնորհեաց ձիրս, հանդերձա-
ւորեաց քաւութիւնս, զմկրտեալս ՚ի մահն
Քրիստոսի՝ ՚ի բնակութիւն իւր մաքրազար-
դեաց. զոր Հայր և որդի, ընդն և հոգին
ներդործեաց, և ինքն է աստուած խնկեալ
տիրապէս ամենայն յամենայնի:

Ո՞վ Քանզի ոչ նախանձուելովն Աստըւած-
դութեանն ոք մեծ ինչ քան զմիւսն, և կամ
զկնի անուանին նուաստագոյն առ նմանն, և
կամ ՚ի միմեանս ասելով խառնակութիւն զոյ
դիմացն, և կամ յերիցն տրոհումն ուրոյնու-
թիւն ել կամացն: Քանզի անմեծար Հայր
ամենայնիս, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան
զօրութիւն. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝
անհագագ ոմն և անկենդան և առ ամենայն
հրաման նուազեալ: Իսկ բանն եթէ ոչ ան-
ապամբ հօրն ծանիցի, որբ ոմն և կամ լքեալ

և կամ ՚ի մահացուէ ումեմնէ ոչէի: Որպէս և Հոգին ելէ ոչ ՚ի պատճառէն նշանակեացի, ապաշուք ումն թ ասիտեալ՝ իբր զրունչ ինչ անդասելի: Ա՚լ ելէ ոք հակաճառական բանիւ յաւակնի կապոել զՀայր ՚ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն յորժամ և չէր, և անբանութեանն բամբասանօք պատուել վարկանի զվեհին մեծութիւն, և կամ սորկութիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով Հոգեւոր, որով այլ իմն գոյութիւն օտար մուծանել և կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Երրորդութեանն, զայնպիսին քարամբք պարսից Հաւատոյ բանից, իբր զգժնդակ գեւս դիմամարտիկս գազանականս, հերքեալ ՚ի միջոյ ՚ի բաց հալածեմք, եղեալ ՚ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս դաւթի: Ուստի զսուրբ Երրորդութիւնն փառաւորելով ՚ի նոյն տէրութիւն միակցորդ Հաւասարութեան, զուգաձայն սրբաբանութեամբ, Հանդուգնատիպ Հարթութեամբ, օրհնեալ և փառաւորեալ յերկինի և յերկրի, ՚ի ժողովս անդրանկացն, և յաջոյս երկրագնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ը· Ա՚րդ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերպաւորելոց յայսմ մաւնի՝ ամենալուր

ականջաց մեծիդ աստուծոյ ընծայեցուցի. սովիմն սպառազինեալ, և ապա մուխ ի հանդէսն: Ելիր ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ճայնի այսու մեծանալոյ, որ միևչև ստեղծեալ էր քո ամենայն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչօքն անմահիցս և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն ի քումդ լոյսդ հանեալ փառաւորեալ իսկ էիր. այլ զի զմեծանալս զնա յարդեացես, անձառ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ: Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենաց կանանիդ ասել Ղեռնայի տէր, և ըզհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զնա զոսկեղէն տախտակս խօսուն՝ նուխբեալ քումդ պատգամի, զդրեալս մատամբդ աստուծոյ՝ եղծի, որ և խորտակեցն է իրաւացի. և ես տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ: Ելիր զքանզի բազմօք պատճառեցայ զրուակօք խանդաղատանօք, որ ոչ է զրնալ ի յայս կարգ ճայնի, լուր, բարեզութ, ըստ ամին բանի այնմ ամենայնի: Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթիցս յօդեալ ընդ նոսին. թեռեալս ի մաքրոց և ի կամարարից այս նուէր հացի պանից բաղարջուց իւղով զանգելոց ի տեղան փառացդ քոց մատիցէ:

Թ. Ելիր դու բարեբար և յամենայնի մալ-

դասէր Քրիստոսդ մի՝ աստուածոյ միոյ, հզօր և ամենակալ, որ յաղթես պիտութեամբ խնամոյ քաղցրութեան քո, ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոյ դոյակցաց, առ որս յաւէտ է ամբոխութիւն և բիւրամանեայ հակառակութիւն, այլ և հրեշտակացն ա-նախատականութեան, նաեւ և եւս քան զայս՝ սրբամանեցոյն անարատութեան. յորոց մի էր և Ջեհիա, որոյ ցոյց-ք խաւարութեանն՝ ի Քրոբեր լերինն նշանակեցաւ յերիս օրինակս, ՝ի շարժումն ահագ, ՝ի հողմէն ուժգին, ՝ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեղութիւն երկայնմտութեան՝ ՝ի հանդարտութիւն մեղմութեան օդոյն քաղցրութեան. քանզի կամաց ողորմութեանց դու միայն ես, ըստ գրեցելումն: Ա՛ստ զի թէ և հաճոյք դուն մերասերըս առաքինութեամբն յեղանակեալ յայլ նմանութիւն վերնային, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք՝ ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ խակութեամբ բարիդ, յամենայնի օրհնեալդ, ամենևին փրկութիւնդ, ամենայնիս հանգիստդ, համոյնից անդորրութիւնդ, համօրէն ախտացելոց դեղ առողջութեան, աղբիւր ջոյց կենդանւոյ ըստ Երեմիայ: Ձարձ առ իս և ողորմիա ինձ, որ այնքան ծարաւեա զարբիս անկարօտդ աստուածդ իմում փրկութեան, մինչ զի զուարթնոցն երկնից

անմահից օրհնաբանողաց բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ միանձնեաւոր պաղատանս օրհնելդ քո զբթութեան ՚ի մերոց դիմաց կենցաղականաց վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել, ողորմեա Աբրոսագէմի, որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայսանութեան առ հրեշտակականն թափուր տեղւն ստորանկելոց ՚ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինակաւս, Աբրոսագէմի:

Ժ. Աբդարեւ լուսոյ բարեգութ, անսացեր թագաւոր, ունկնդրեցեր կեանք և յոյս, ՚ի միտ առեր երկնաւոր, յարդեցեր հզօր, նբկատեցեր ծածկագէտ, տեսեր խնամակալ, կարեկցեցեր անպատում, խոնարհեցար միշտ բարձրեալ, նուաստացար ահաւոր, յայտնեցար անճառ, ամփոփեցար անսահման, քանակեցար անքննին, մանար ճառագայթ, մարդացար անմարմին, շօշափեցար անքանակ, կերպարանեցար անորակ, լցեր իսկապէս զաղաչողացն բաղձանս: Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախճան, նուէր մաքրութեան, ողջակէզ անծախ, բաժակ անապառ: Ընդ ողորմած,

մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոց կենդանատուաց, զովհաւ երկայնամիտ. և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆԵ ԼԵ·

Ա՛ երդին յա-ելե-ած կրկին հնձո-ին նոքին հալոցք
սա նոյն ասէրս հաղնանաց քանի.
Ի խորոց սրտից խօս+ ընդ Աստո-ած:

Ե՛ն արդ, տէր զօրութեանց, մեծութիւն ահեղ, անտարակոյս տեսաւորութիւն, կամք ամենընդարձակ, առատութիւն անսպառ, ոմ ոք զօրեացէ ոճնել հանդիսիւ պարերգութեամբ ի միոյ կաթուածոյ ցօղոյ քումդ բարութեան, որ ցանկ դեղերիս պատրաստել պատճառս հնարից իմում փրկութեան: Եւ զոր մեծն է զրեցից պատմել յապառնիան, քանզի ոչ անուանեցար հրեշտակաւոր, և որ զպետութիւնս նոցունց հասատատեցեր. այլ և զերկինս զամբարօք նոցին զմատանց քոց գործ, ոչ զրեցեր երբէք սիրել զնոսա. այլ առեր ի պատիւ մեծաց զովեսից առաջին դասեալ զմարդասիրութիւնն: Վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անճառ ի խորհուրդս սուրբս. զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր զնոսին սպասաւորս և զվեսաւորս յաւուրս մատակարարութեանց· իսկ

զատրնային ծնունդս մահկանացուայ տիրա-
կան և աստուածական պաշտելի անուամբդ
պերճացուցեր: Ընդեալ վերստին ըստ սահման
կշռութեան չափոյ, լայնեցեր զքեզ կտակ
զրոց ձառից անբաւից զանապակ ծորմանն
ծայրագունին վերնում բարութեանն: Նա և
ի մարդանալդ քո միդ յէութենէն, ոմանց
վասն ինքեանց և կիսոց վասն այլոց զեղեր
առաւուրեամբ զառուս կենաց, արուեստ
բազմօրինակս, սքանչելիս աստուածագործս,
նշանս ճշմարտատեսիլս: Որպէս զի թէ ան-
դամալուծին պակասելոյն ի հաւատոյն՝ հո-
գւաբարձայն առաջարկութեամբ զթոյլս յօտոյն՝
դիմացեալ ողորմեցար, և ծիշաւ զօրեացէ
առաւել բան զքո ամենակար առ ախտալից
մարմնոյս մաքրութիւն աղաղակողիս հառաչ-
ման. զանգի արդարեւ մեծ են չափք հրաշից,
զան զանմաքրեալս հոգի առբր հաստել, զը-
լուացեալս պատկեր անեղրելի աղտոյ ներ-
գործել. նա զի և երկրորդս առաւելութեամբ
յաւազանին շնորհ յաճախեալ զփառան հայ-
բենի բարձրացուցանէ:

Ր. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս
ընտրելոյն քոյ նախատապատրեցեր Պօղոսէի,
դու ես, որ ի մեզ և յանօրէնութիւնս վե-
բակացու եղեր առհմին Յակոբայ, մինչ յե-
պիպատացոյն երկրի ընդ խաւարն հեթանոսաց

ընտանենային: Դու ես, որ օրհնագէտ առնես զմեղաւորան ՚ի ճանապարհի, ըստ բանի երդողին Դաւթայ. դու ես որ փոխատուես ըզքարեղէն սրտից կարծրութիւն ՚ի լոյծ կակղութեան մարմնոյ պոյութեան բանի ընդունելութեան: Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել ՚ի քէն ըզբովանդակ կենացն սահման. դու ես, որ տաս ղերկիւղ քո ՚ի միտս խաւսութեան առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի:

Դ. Ջօրհնեալ քո շրթանցդ զաշխարհաստեղծ բերանոյդ գաւառաւածեղէն անձրեւացդ ղկեցուցանողդ կաթուած մատռ լսելեացս դրանց բացարան, որով զօձին խորամանկութիւն բանաարկուին թիւնից բարձցես և բըժըշկեացես: Ընմնակալդ ձեռօք զհօսնակացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեա զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի. զի դաստիարակեալ զպաշտաճականն՝ մի յանդգնաբար խօսելով իբր ըզնախանձն լքայց ՚ի յուսոյդ, և անբանութեան մատնեցայց վանեալ յորսողէն: Լուսաւորեա վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակութեանն շնջեալ լապտեր հնչմամբ վիշապին՝ ՚ի ներքոյ զրուանին սատրածածկեցայց:

Խարհ զանօրհնութիւնս իմ, տէր, և ընկեա

՚ի խորս ծովու. որ է փոքր առակ մեծութեան քումդ անբաւութեան, ըստ մարգարէին, զեմս ընկղմել չարութիւն: Կանգնեա կործանեալս անձին նշան վստահութեան, զի մի յուսահատութեանն կոխոզ կառուցեալ զծածկեսցին բողոքեսցէ: Ահա, հզօր և զթած, ըզբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ ՚ի ներքոյն մշակութեան կորուսչին սերմանց՝ մանկաղաւ կամացդ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես: Դէմ եղեալ հետեւել առ քեզ բոլորիցդ աստուած՝ պետրոսեան օրինակութեամբն, ՚ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց ընկլուզայ. մատո ժամանեա զաջդ կեցուցիչ յօդնականութիւն ինձ սասանեցելոյս: Ընդ քանանուհւոյն ձայնի ՚ի խորոց սրտիս պաղատիմ՝ սովեցելոյս ասպականասպաս կաղկանձողական ամենաթշուառ վտանգաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի ՚ի բազմաղեղդ քո սեղանոյ մասնաւորեսցես: Ըրա փրկութիւն նիւթոյ խորանիս որդւոյս դառնութեան, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս կորուսեալս: Ո՞վ քո է մեծութիւն, յաղթութիւն և զօրութիւն, և դու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգութիւն և երանութիւն, և քեզ վայելէ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԶ.

Ա ԷՐՈՒՆ ՅԱՐԵԼՈՒԱԾ ԼՐԿԼՆ ՀԵՅԻՈՒԼԵԱՆ ՆՈՐԼՆ ՀԱԿՈՂՔ
ԱՐ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՆԱՀԱՏԱԿՈՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՊՐՈՒՑ ԽՕՏ ԸՆԴ ԱՊՈՒՀԱՅ:

Ը. Ա՛Ե զանգի անթիւ են յաճախեցեալ և զերազանցութեամբ միշտ առաւելեալ փըրկանաւորդ արդասիք ընծայից առ պարտուցս իմոց առաւելութիւն, չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն: Ոչափդ ամիսոփիչ ամենից հոգւոց զոյից արարիչ ի գործարանի մահուն նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկութիւնն իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես: Ոչընթացողականդ լծակցութիւն երկոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեանս պատճառ՝ ի պատուհարանի փայտին մածուցեր, զի զփախուցեալս վայրագութիւն թշուառացելոյս զրաւականեսցես զթածաբար:

Ր. Ո՛չ գօսանալ ձեռաց կուիողացն հրամայեցեր օրհնեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ առժամայն չորացուցեր, զի և զառ իս ներելոյդ օրինակ կանխաւ աւետարանեսցես: Ո՛չ գանողացն ապիրատութեան զնոստուվանեալդ աստուած սպառնացար, որ զարուսեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին բարութիւն հանգստեամբ հանդերձ գործեսցես: Ո՛չ գնայհոյչացն հնարաւոր չարաբա-

նոքին կապտեցեր, որ զուսնին պատկեր երանգաւ սբեան գունեցեր, զի զանհամար-ձակ լեզուս ՚ի գովեստ քեզ զօրացուցես:



Ո՛ նախատողացն մոլեգնութեան սատեցեր: որ զտարերս սատանեցեր, զի զիշատացեալս պրկս զթութեանդ օծմամբ իւղեացես: Ո՛ ՚ի մերբեցուցիչն կարգալ զքեզ սատուածասպա-նիցն զօդուած ծնօտիցն բաժանեցեր քակ-եալ ՚ի միմեանց, որ զկարծրութիւն վիմացն հերձեր, զի զանուսնակս բարեաց հողիս՝ ՚ի բերմանէ ընդունայնութեան ողորմութեամբ հանդարտեցուցես: Ո՛ զպահապանացն սուրս ընդերաց իբեանց մատուցեր, որ զորովայն

օձին սահելման հողոյ մասնեցեր, զի զտա-
ռապետս մարմնոյ ոսկերս իրը ՚ի դանձարանի
պահեալ, կենաց յարութեան արժանացուցես:
Ոչ ՚ի կնքելն գշերմին փականս կենդանակիր
քո դերեզմանին՝ անգէն յորսայսեալս զնոսին
յանդունդս երկրի սուղեցեր, զի ՚ի տապա-
նակի անձինս գնշխար լուսոյդ հանդուցես:
Ոչ ՚ի համբառնէն գքեզ կորուսեալ, և իրը
գերկրաւոր մարմին դողացեալ, համայնաջինջ
և ամենատապառ զսերմն ծննդոց կրճատեցեր,
զի զիս զանարժանս յիշատակի ընտրութեան
բարեաց՝ անկորուստ և անվնասելի ընդ փըր-
կեչելոցն հաղորդեացես: Ոչ յարծաթոյն
կրկնակապէն կաշառաճգութիւն, որ ՚ի դան-
ձարանէ հօր քոմՆեւիրանաց քեզ զրաւ մատ-
նութեան և անարգութեան մանաւորեցին՝
զրաց ողացն մերկնելոց, քան հին հարուածոց
հանուցն Մովսեսու ՚ի յարձան քարի յեզա-
նակեցեր, զի զիս զվճիռսեալս ՚ի հատատու-
թենէ և ընդ իշխանութեամբ մահու վա-
ճառեալս՝ արեամբ քո փրկեալ, ՚ի հատա-
տութենն վիճիդ կատարեցես: Օրհնեալ կրկին,
օրհնեալ վերստին, յամենայնի միշտ օրհնա-
բանեալ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԼԲ.

Ա ԷՐՈՒՆ ՅԱՒԼԱԾ ԼԻՆԻՆ ՀԵՆԱՆՔԱՆ ՆՈՔԻՆ ՀԱՒԱՏՔ
ԱԲ ՆՈՅՆ ԱՂԷՐԱ ՏԱՂԱՆԱՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՊՐԿԵՑ ԽՕՍ ԸՆԴ ՈՍՈՒՆՑԻՑ:

Ո՛ Աբդ այդ դումարտակ վերադասեցեալ բարեհնորհութեան քոյդ պարգեւաց առ իմն երախտիս, ով ամենազութ բարերար գովեալ և ամենազօր, թէ և սակաւք շարագրեցան աստանօր եղեալ, այլ արքայազունք են և իշխանականք ինքնակալութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վեհիս, մեծափառք, լուսանորոգք և հրաշալատիպք. յաղթողական վերամբարձութեամբ դրօշիւք հռչակեալք ըստ դէմոց դէմոց պատկառազնեայ դեղաղարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանողաց, համբոյրս հեզս երջանիկս և խաղաղականս աստուածային հարազատութեանց այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթիր տէր զգօրութիւնս քո, և եկ կեցուցանել զմեզ. որք յոյժ զօրեն հալածել զմեզս, և զանյուսութեանն կարկուտ հալել և փախուցանել, քան թէ նախամարտիկն զինուորութիւն երկնային պարուն զդիւերավարն խաւարասէր սկզբնաներհակ բարոյն աստուծոյ: Քանզի և զբնաւն այսքանեացս ձրիւ որ ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ

տկարիս, թէ հնամեայս և ապահաստատ ծառայիս, անճառ է ասել· իսկ եթէ համարձակեցի ոք զօրել խօսել, զսակաւս ՚ի բազմացն քան թէ զնախկոթիւն համանդամայնիցն. առ այսոսիկ զառաջինն նիւթն յիշելով յորմէ հաստեցաւն, իբր զտկար ոք նկուն ՚ի զօրութենէ մեծէ հերքեալ պարտեացի:

Ե· Ա՛յլ թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ զնոյն վկայեմ առ թերի խակութիւն հողոյս՝ և կատարելութիւն հաստողիդ, և առ բարիան իմ չարժանութիւն, սակայն ամենայն անհնարանձ և բազմազեղուն գովեալ աբարչութեանդ զօրեղութեան վանեալ են կարծրութիւնք արտաբերութեան սրտի բանասարկուին որ քարին առակաւ՝ յուսահատն վըհատութեան, սպառմամբ խոպանման աղբերացս երկուց, որ ՚ի զգայականս Եդեմայ բղխել պատրաստեաց անկողն, զի ոտոզեալ ծաղկեացի նոճաւ՝ որ ՚ի յիս բարեգործութեան կենսատունկն դրախտ, ահա մի՛ ցամաքութեամբ արտատուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խորամանկեցեք վերատին հանել ՚ի փափկութենէ նախնում վիճակին: Իսկ յորժամ կացցէ աստուած համբարձեալ հրաշինք արուեստից ՚ի մէջ աստուածոց հաշտարանացն խաղաղութեամբ, բարձեալ ընդ ինքեան զընտրհացն կտակ, առ որ ամենայն

ինամակարութիւնք խարդախութեանց և կարճմտութիւնք սրտնեղութեանց իբր ընդ վիմեղէն լերին պնդութեան բախեցեալ ցընդին, ջոյց օրինակաւ սակաւու հեղեալ, և կամ հողոյ խորտակմամբ փշրեալ:

Գ. Ընդ չեւ իմ կշռամբանքս՝ ըստ ձայնի Յորայ՝ ի մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին հրամանիդ, մեռեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս, սոսկամ սասանեալ յամենայն կարծեաց. ապաւինիմ և արդ անձամբ բեկելով ի յոյզ հաստատութեան կենդանի անեղծ. դու ողորմութեամբ նայեցեալ ի յիս իբր ի պարտաւոր կորառեան պատժոց, առաջի բարերարութեան երկնայնոյդ յանդիման եղեալ ապաչեմն անթոշակութեամբ, զքոյդ երախտիս անպատում փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մոռացմամբ զքաղեալ նիրհես, և ոչ թարթափմամբ աչաց ընդմիջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես: Վերացո յինէն, ազաչեմ զքեզ, խաչիդ լուսոյ զլեղդ վտանգիս, հոգարկութեամբ տրտմութեանդ՝ զտարակուսելն տրխրութիւնս, փշանիւթ պատկան՝ զոզջոյ մեղացս, զարկուածով գանին՝ զհարուած մահու, ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս, թշնամանաւք թքոյն՝ զանզոմանելն գարշութիւնս, լեզուին ճաշակմամբ զհոգւոյս դառնութիւն:

Ահա քո են այս ամենայն բարութիւնք անբովանդակելիք՝ աստուածոյ միոյ միածին որդւոյ. առ որովք զբարութիւնս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ իմանալեացս պաղատանօք: Տես՝ ի խոստովանութիւն զղջման պարտութեան ամաչեցելոյս, և տուր ողորմութիւն որդւոյս սատակման մահուն անմահի. զի՝ ի բազմութեան իմոց մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աճեցմամբ առաւելութեամբ՝ քո ողորմութիւնդ աւետարանեսցի, հռչակեալ հնչմամբ ահաւորութեան յերկինի և յերկրի: Աւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս ամէն:

ԲԱՆ ԼԸ.

Ա՛ջորդն յաւելաւած կրկին հեծութեան նոցին հոգւոյ աս նոյն աղերս խաղնանայ բանի.
Ի խորոց սրտից իւրոց ընդ Աստուածոյ:

Ա՛ Հայց արդ որպէս երբեմն յայլ ընթերցուածի որ՝ ի սկզբնաւորականացն կարգի՝ զմեղանացն դիսաւարային ծնունդս գլխաւորացն օրինացն մարմնականացն անդամոց գրեցի, յորոց տիրեցայ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահման ընտրութեան բանի զուսանելոցն զաղատարարն օրէնս հոգւոյն կենաց որ՝ ի տէր Յիսուս՝ յիշատակեցից նը-

ազգս յոքունց, իբր յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ:

Ե. Վասնզի են արդարեւ կայսերականք ումանք ի բարձրութեանն գահի բազմեալք, թոշակաւն շնորհաց լքեալք և հարստացեալք: Թագաւորն և սիրեցեալք իւր, արքայ և պատուաւորք իւր, պսակեալն և իշխանականք իւր, բարեհռչակեալն և հնչմունք իւր, յաղթողականն և փողք իւր, զօրաւորն և մարտիկք իւր, դովեցեալն և փառք իւր, փեսայն և պարաւորք իւր, դշխոյն և օրիորդք իւր, փեսաւէրն և հանդերձանք իւր, ազատութիւնն և շնորհք իւր, այցելութիւնն և ձեռն իւր, խոստումն և քաւութիւն իւր, պահպանութիւնն և աչ իւր, պարգեւն և ղարդ իւր, նշանն կենաց և ամրութիւն իւր, կնիքն և նկարագիր իւր, ամպն և հովանի իւր, արուեստն և հրաշք իւր, հոգին և անեղծութիւն իւր, բանն և կատարած իւր, ուխտադրութիւնն և լուսին իւր, զօրութիւնն և հրամանք իւր, լուացարանն և սքանչելիք իւր, մանանայն և անապականութիւն իւր, վէմն կենդանի և վտակք իւր, սիւնն հրոյ և ճառագայթ իւր, որոտումն և ազդմունք իւր, յոյսն վերին և փրկութիւն իւր, ծառն օրհնութեան և պտուղք իւր, բարութեանն և բարութիւնք իւր: Եւ զի մի զբնաւն ասելով յամենայնէն վրի-

պեցայց, իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութիւն, ՚ի շատն ասել լուեցից և ՚ի սակաւն ժամանեցից, բաւականացեալ ամենապիկար կարիւ:

Գ· Ոչ այց աւաղ յաւէտ աստանօր թերահաւատելոյ եղկելի անձինս, քանզի կարդ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս բողոք դառնութիւն. վասն զի ընդ այսոսիկ առընթեր սորին գայ արդարութիւնն և կշիռքն, վճիռն և հատուցմունքն, քննութիւնն և լոյսն, յանդիմանութիւնն և դատաստանքն, մերկութիւնն և պատկառանքն, յայտնութիւնն և ամօթն, ամբիծն և վաստակքն, թիւրեացն և պատիժքն:

Գ· Դարձեալ վերատին աշխար կրկին եղկելոյս, քանզի գայ հասանէ առ հասակ հասակիս անհնարին բարկութեամբ մանգաղն առ հունձան, դատաւորն առ առեանն, հզօրն առ բեմն, սպառնացեալն առ կորուստն, բազուկն առ դատաստանն, դատաստան խրատուն առ հարուածն, սպառազինութիւնն առ նահանձն, հովիւն առ ընտրութիւնն: Քանզի բանն զոր խօսեցար ընդ իս, նա դատի զդատապարտեալս՚ի վերջնումն աւուր հատուցմանն: Այլ կանխեա, բարեգութ, նախընծայ քաղցրութեամբ առ նուազ հեծութիւն վարանական երկիւղիս, և զօրութիւն ընձեռեա ձեռամբդ օրհնութեան ՚ի յետին տագնապիս

առաջինդ քո օգնութեամբ միսիթարել, բժըշկել, քաւել և կենագործել։ Եւ քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ԼԹ.

Ակնկալութիւն յաւելուած լինի հեթանոսական նորին հակողից առ նոյն ապերջ մաղթանաց բանիւ.
Ի խորոց սրտից իւրոց ընդ Աստուածոյ։

Ա. Եւ զանղի զկերպարանն առաջին լքի ի փնասակարին թելադրութենէ խմոխ ծուլութեամբ կորուսեալ ի սպառ, ցուցից արդ այժմուս զհնոյն իսկ տեսակ, ողորմելի հեծութեամբ թախծեալ ի հոգի, անաչառ խոյտառականօք հրապարակաւ ի յեկեղեցիս բազմութեան աղգաց վերապատմեցից բարձր ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով։

Բ. Աստեանս շնչական բարդեալ ի յինքեան ներքոյ և արտաքոյ ոգւոյ և վայս և ձայնս, ըստ տումարի տեսչեանն Ագնկիէլի, քաղաքս անպատուար և անմահարձան, յարկս ունայն ի դռնապահաց ամրութեանց, աղս տեսակաւ այլ ոչ համեղութեամբ, ջուրս աղտաղին անախորժելի ծարաւեաց արբման, գետինս անօգուտ հերկագործութեան, սահմանս լքեալ հեղեղավայրս կնիւնոյ, խոպանացեալ և տատասկաբեր անդաստանս, աստուածախնամ երկիրս անճնաւոր՝ որ բանսար-

կոին պատրանաց մշակեցայ, խղճնձիւզ փայտս պղակորոյս, հատանելի ծառս ունայնաբոյս, կրկնամեռ խօսուն տունկս անոյս, ամենաչէզ ճրագարանս անլոյս: Արդ վերատին առ սոյն բերելով զայս նմանութիւն աւաղականաց, բազմաք կրկնեցից· որ ամենայն դառն պատուհաս պահեալ կայ հնքոյս, կրճումն առամանց և անկէտ լալումն աչաց եղկելոյս, հայրական ցաւումն անապուժելի՝ դառնութեան որդւոյս, ապականութիւնն անեղծոդելի՝ մեղուցեալ մարմնոյս, նոր կշտամբութիւն դատիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս, տարտամ տագնապի տարակուսանաց՝ երից գերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն թշուառեցելոյս, ի խրճուռս որոմանեցն վկայելով վտանգեցելոյս, ի ձայն ահարկու զանբժշկութիւնն ազդել լքելոյս:

Գ· Ահա արդարեւ երգս կատակերգութեան ընարահար սրունկի, յածեալ և կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ողորմելիս և զկծեցուցիչս, ըստ առակաւոր բանին Նասայեա՝ որ ի պատգամին Տիւրոսի: Օ՛ի թէ նա զդխպուածն փղբր անցից ապառնեացն ի մեռոյ լմն տպատուրեալ, բողոքէր դիմակս դիմակս կերպից կերպից աւաղականաց, ըստ կոծողացն կաքաւելոյ, իսկ առ իս ոչխարս և ոչխարիս ձայնս մլմնջեցից վհատեցուցիչս, որ գալատեանն

տեառն սպասեալ առանց վհատանաց, մնացի անպատրաստ և անհանդերձելի: Արդ եթէ զդատաստանացն ահաւորութեան կրկնեցից, բազմացուցից ինձ աշխար. ապա եթէ զփորձն իսկութեամբ ցուցից, յաճախէ ինձ երկիւղ, իսկ եթէ զկերպարանացն տեսիլ գրեցից, առաւելուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նըկատեալ զսոյնս և ոչ անագան ապաշաւեցի: Այլ խնայեա յիս, զթած, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգեւ Քրիստոս Թագաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԹ.

Վէրոյն յաւելուած էրին հեթանոսական դրին հոգոյ
առ նոյն ապէրս մաղթանաց բանի.
Ի խորոց սրտից ընդ Աստուծոյ:

Ա. Ամենակալ աստուած բարերար ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչանաց ձայնիս վըտանգի, և յերկիւղէ տագնապի ապագայիցն կարծեաց փրկեա կարող զօրութեամբ զերծեալ ի պարտեաց. քանզի բաւական ես յամենայնի առ ամենայն հնարս զօրանալ անբաւ մեծութեամբ և իմաստութեամբ անսահմանելեաւ:

Բ. Եւ քանզի ուշիւ մտացս տեսեալ ի հեռուստ զհանդերձելոցն հանդէս ահաւորապայծ, նկատեմ ինձէն աստանօր կանխաւ

զհիւն լուսոյ սրբոյն յուսոյ, զօրն խաւարի պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յէից առ պատսպարան փախստեան. ոչ անդունդք խորոց, ոչ վիհք վհից, ոչ բարձրութիւնք լերանց, ոչ անձաւք քարանց, ոչ կարծրութիւնք արձանաց, ոչ ծերպք ծակաց, ոչ փապարք փոսից, ոչ սորք հեղեղաց, ոչ բաւիղք խորշից, ոչ շտեմարանք յարկաց, ոչ ծածկութիւնք սենեկաց, ոչ եմակք հովտաց, ոչ ծործորք դժուարաց, ոչ վերադրութիւնք բլրոց, ոչ արձակմունք շնչոց, ոչ անբաւութիւնք ծովուց, ոչ սահանք յորձանաց, ոչ հեռաւորութիւնք եղերաց, ոչ ողբմունք ձայնից, ոչ հեղեղք արտասուաց, ոչ տատանմունք մատանց, ոչ համբարձմունք ձեռաց, ոչ պաղատանք շրթանց:


Զ· Ա՛յսոցիկ սաստկութեանց մասանց անճողոպրելեաց դու ես, տէր Քրիստոս, հնարք և դադարք դիւրութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ, արդ հայեա ՚ի յանդերձ վտանգից շրջադրութիւն՝ միայնդ քաղցր առ ամենեսեան: Լսեցեա սուսերաւ յաղթական կենագէն խաչիդ զցանցս վարմիս, որ յամենայն կայից պաշարեն ՚ի մահ զգերիս, և հան ՚ի յանդորր զոտս սասանեալ թիւր ընթացողիս: Ո՛ժշկեա զհրատապ ջերմնական տոչորումն մղձկեալ սրտիս, մերժեա զդիւա-

յին չարահնարութեանս շղուկ քո պարուա-
տիս, հալածեա զյուսահատ անձկութեան
հոգւոյս մթութիւն չարի կենակից, ցրուեա
զնխամած թանձրութիւն բռնութեան մեղաց
երեւոյթ մտելոյս ՚ի յիս, կորո զզազիր թխա-
տիպ կրից ապականութեանս կարիս: Ա՛յ-
րոգեա զպատկեր լուսոյ պաշտեցեալ փառաց
մեծութեան անուան հզօրիդ յոգիս, զօրացո
զընորհիդ փայլումն ՚ի դեղ դիմացս և ՚ի կեր-
պարան տեսութեան մտացս հոգեղինիս, յար-
մար յերիւրմամբ կացո յարդարեալ՝ որ զքոյդ
բերէ նկատումն՝ նշուլազարդ մաքրութեամբ
զտեալ զմտայլս մեզաւորիս, աստուածային
կենդանի անեղծ երկնաւոր լուսով քո ծածա-
կեալ յօրինակս երիս: Ո՛վ դու միայն ես
օրհնեալ ընդ հօր ՚ի գովեստ հոգւոյդ սրբոյ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԽԱ.

Ա՛ջողին յաւելուած կրկին հեգնութեան նորին հակոզ
աս նոյն աղէքս մաղնանաց բանի.
Ի նորոց ոտից ընդ Աստուածոյ:

Ա. Որդի աստուածոյ կենդանւոյ օրհնեալ
յամենայնի, հօրդ ահաւորի անքննին ծնունդ,
որ տկարանայ առ ՚ի քէն և ոչինչ. որ ՚ի ծա-
գել անստուեր նշուլից ողորմութեան քոյ փա-
ռաց՝ հալին մեղք, հալածին դեւք, չնչին



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ-Арм.ССР
Ц. им. А. Мясникяна

յանցանք, խղճի կապանք, խորտակին շղթայք, կենդանաձնին մահացեալք, բժշկին հարուածք, ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախնու խաւարն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փարատի մըռայլն, ապառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տապնապն, չքանան չարիքն, հալածին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակար, քաւիչդ ամենայնի:

Ե. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկինի անճառ, և յերկրի անզնին, 'ի տարր գոյի, և յեզերս ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լսմամբ, օրհնեալ 'ի բարձունս, և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԲ՝

Ա՛ջ ոտին յաւելու՝ կրկին հեծութեան ձորին հասուչ
ու՝ նոյն աղբիւր մաղթանաց քանի.
'ի խորոց սրտից խօսի ընդ Աստուծոյ:

Ե. Տէր աստուած պիտութեան, փրկութեան և ողորմութեան, քաւութեան և նորոգութեան, բժշկութեան և առողջութեան,

լուսաւորութեան և կենդանութեան, յաբրութեան և անմահութեան, յիշեա զնա յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենաստեղծ, կենդանի, դովեալ, ամենակատար, մերձ ՚ի հեծութիւն համայն եղելոց: Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո և ոչ կապեցեալ, ոչ կախեալ և ոչ բեւեռեալ, ոչ կռփեալ յանուն մեծիդ և ոչ անարգեալ, ոչ լսկեալ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ և ոչ մահացեալ, և արքայութեանն արդարոց մասին անձկալեաց լուսոյ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոց, փառաւորեցեր առ յոյս փրկութեան ՚ի սպառ լքելոյս:

Ռ. Օրհնեալ օրհնեալ և գարձեալ օրհնեալ, և զնա ընկալեալ նովին հաւատով քանզնեա ՚ի կործանմանէս, բարերար, բժշկեա ՚ի հիւանդութեանցս ախտից ողորմած, յեղերաց մահուս դարձո զնա ՚ի կեանս, կենդանութիւն. քո եմ և ես, կեցո ընդ նմին, ապաւինութիւն. անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո, յարութիւն, կեանք, անմահութիւն, անպակաս բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն, աջ ամենազօր, ձեռն ամենիշխան, մատն ամե-

նամերձ: Կամեաց տէր և փրկեցայց, ակնարկեա միայն դԹուԹեամբ՝ և արդարացայց. ասա բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց, մուտացիր զԹիւս չարեացն՝ և անդստին համարձակեցայց, առատաձեռնեա՝ և արդէն ՚ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԳ·

Ա՛ջորին յաւելոյած լուին հեթանոսեան նորին հանողք
ասա նոյն ասելոյս մաղթանաց բանիւ.
՚ի խորոց սրտից խոստ ընդ Աստուածոյ:

Ը· Ո՛ժշկական կրԹականուԹեան ամենաւարժ հնարաւորուԹեամբ պատճառ կենաց անախտականաց, ԹագաւորՀոգեւոր երկնաւոր՝ տէր Յիսուս Քրիստոս. աստուածածամենեցուն, իմմանալեաց և տեսականաց. ահա դու ՚ի յիս ըստ մարդարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդուԹեան. առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միուԹեան, լուսաւորեցայց կրկին ողջացեալ շնչով և մարմնով, յամենայնի կարող և անվանելի:

Ը· Որ ոչ կարօտանաս սպեղանեաց առ պատրաստուԹիւն պատանաց հոգեկան վիրաց, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգուԹեան, ոչ փոփոխս մատուցանելոյ, ոչ հատման, ոչ խարման, ոչ

սրագործութեան, քան երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ է վճիռն և ամենասիրալ տարակուսութիւն: Ալլ քեզ ապրչիդ հոգւոց և մարմնոց ամենայն ինչ լաւագործեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ դրեալ է, ամենայն ինչ դիւրին է, համայնն հնարաւոր է, իմաստն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամեն կատարեալ է, քո կտակն աւետարան է, քո վճիռն ազատութիւն է, քո մատեանն չնորհ է: Ոչ փակեալ ես ընդ օրինաց, ոչ պարտնակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արգելեալ ընդ նուագութեամբ, ոչ խոնարհեալ ընդ հնազանդութեամբ, ոչ պարապրեալ ընդ փոքրկութեամբ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ, ոչ վճռեալ 'ի բարկութենէ, ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ, ոչ սխալեալ 'ի խաւսութենէ, ոչ ամբոխեալ 'ի խռովութենէ, ոչ դզդդեալ յանդիմութենէ, ոչ փոփոխեալ յողորմութենէ, ոչ պակասեալ 'ի բարձրութենէ, ոչ լքեալ յայցելութենէ, ոչ տկարացեալ 'ի փրկութենէ: Դու սկիզբն և լրումն ամենայնի, և 'ի քէն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆԵ ԽԹԴ.

Ա՛ջ տուր յաւելուած կրկին հեթանոսական նոքին հակառակ
աս նոյն աղբիւր մաղթանաց եանէ.
Ի խորոց սրտից խօսէ ընդ Աստուծոյ:

Ը. Աստուած անսահման, ծնունդ աստուածոյ հարազատ անթարգմանելի, արարիչ բնաւին եղելոց, Քրիստոս թագաւոր, լոյս ի խաւարի սրտից մեր ացելոց. ընդ մեզ լսմամբ և ընդ առաքչիդ խոկութեամբ, մերոյնիս գթոյնիդ ծանուցանող հրաշապէս: Այլ քո օրհնեալ երկիւղաւոր անճառ՝ որ առաքեացդ



գքեզ ի վերուստ, ամ փառակիցդ և արարչութեամբ. այնքան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ, մինչեւ գքեզ իսկ մատնեաց մարդկան: Իսկ դու կարող գոլով ի վեր քան զիշուս, զանաւասութեանն աւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցելումն զմեզհուն ճաշակել բաժակ անթերի մարդկութեամբ և անպակաս աստուածու-

թեամբ: Եւ հոգիդ սուրբ կենդանարար՝ որպէս քո և հօր քոյ իսկակից, և համապատիւ էութեամբ ծնողիդ և ծնեցելոյդ: Մի Երրորդութիւն կատարեալ՝ ի դիմաց երից անորոշելի հատուածոց, անսկիզբն և անժամանակ, բնաւին բարերար, համայն կենդանարար, բոլորից խաղաղարար, ստեղծիչ գոյից և յօրինիչ ամենից, անբակութեամբ և միով բնութեամբ փառաւորեալ:

Ն. Իսկ եթէ հայրն գիտաց երկնաւոր հըզօր՝ մին յէութենէ՝ ասան մահապարտիս յանցանաց մատոյց զիմայնակ ծնունդդ յանքնին ծոցոյն, ոչ անխայեալ յորդիդ՝ ի հանապատիդ և՝ ի սիրելիդ, այլ կամաւ նուիրեաց մահու չարչարողացն պնոու, ըստ մարգարէութեանն Ովսաբիայ. ասան զի զարթնուլ սրոյն՝ ի վերայ հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն նուրբ նախագրին և ուխտադրութիւն խորանին և նուիրումն արեան սպանդին և առակ խորհրդոյ սբրահամեան պատարագին, զերկութիւն թշուառացելոյս՝ ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրեր, և արդ հիմ արտմիս անձն իմ կործանեալ՝ ոչ յաստուածուստ հնարաւորութենանց, այլ՝ ի քումդ ինքնագործ հակամիտութենանց, կամ ընդէր զիս խառնեա՝ յու-

սահատութեամբ սատանայականաւ զմիտս հա-
բեալ. յուսայ յաստուած, խոստովան լեր նմա,
և նա հոգայ վասն քո, բաւ գաւթեան սաղմո-
սին, և այլ մարգարէի կենսախրախոյս բանի:

Գ. Իսկ յեղանակ ինամարկելոյ հաստողին
'ի վեր է քան զսահման կշռութեան մնաց
հրեշտակաց և երկրականաց. և եթէ բիւրս
կրկնեսցի, ոչ լինի չափեալ. քանզի անբո-
վանդակելոյն և բարերարելն է անճառելի:
Այս զի ոմն օրհնեալ զոմն օրհնաբանեալ
յերրորդական համագոյութենէն առաքեաց.
իսկ նա 'ի հաճութիւն կամաց առաքչին մե-
ռաւ. և միւսն ահաւոր՝ 'ի յերկուցն հաւա-
նութիւն՝ մեծաձայն բաղձանօք մաղթէ: Իսկ
համաբարեաց միաձայնութեանն ցուցակ՝ առ
'ի գնոյն բարի ներգործել, որպէս հոգին կեն-
դանւոյն և բանն բանականին, պայծառու-
թիւն փառացն և կերպարան էութեանն: Ար
կեանն փոյթ, առ ողորմութիւնն սիրափ,
առ ձեռնկալութիւնն պատրաստ, առ փըր-
կութիւնն կարմ, առ առաւութիւնն յորդ,
առ յաճախութիւնն զեղուն, առ անբաւու-
թիւնն լի, առ աննուազութիւնն փարթամ,
առ երկայնմտութիւնն ճոխ, առ անհատու-
թիւնն բարձրեալ. մի Երրորդութիւն կատա-
րեալ 'ի յանձանց երից, օրհնեալ յաւիտեանս
ամէն:

ԲԱՆ ԽԵ.

Ա՛ջորին յոտնաքաշ լինին հեծելոցն նորին հակառակ առ նոյն աղբիւր հաղնանաց բանիւ.
Ի խորոց սրտից ընդ Աստուծոյ:

Ա. Ես արդ յոյս բարեաց տնկեալ ՚ի սրտի՝ անձն իմ կործանեալ, և զօտեաւն հաւատոց սնդեալ զերիկամանցդ երկակի մասունս՝ ըզկրկնապղտոր խորհրդոցդ զցանկականիդ դործարան, խոստովան լեր բարեբարին աստուածոյ՝ զմտացդ իրրեւ զդործոց, զխորհրդոցդ իրրեւ զլուծեանց, զանտեսիցն իրրեւ զյայտնեցելոց, զսրտիդ ծածկութիւ իրրեւ զբարբառումն ձայնից, զակնարկութեանցդ իրրեւ զարդիւնականաց մեղանաց, զազդել շրթանցդ իրրեւ ՚ի գլուխ եղելոց չարի, զոտիցդ հետոց իրրեւ զպատուիրանաւն աստուածոյ վաղողաց, զձեռացդ ձգումն առ ցասումն իրրեւ ՚ի հեղումն արեան դործողի, զծիծաղելն բնաւին իրրեւ զկամաւորական լքումն շնորհի, զերդձնականն՝ որ թէ ՚ի հանդէսս թէ ՚ի տարադեալս՝ իւր զդործակցութիւն խարդեն, զամբարտաւանութիւնն իւր զհին կործանիչ նախատեղծին բարձրութեան, զսրտին նեղութիւն իրրեւ զմերկութիւն հաւատոց, զմեղկութիւնն իրրեւ զպարտութիւն զօրաւորին պնդութեան, զտրտունչն առ վտանգս կրեցն՝

իբր զուրացութիւն ուխտին որ առ տէրն, զապարասանութիւնն իբր զԹոռն իմն անզգամութեանն, զամբարհաւաճութիւնն իբր ոչ էիւք առ վերնն գոռոզութիւն, զհպարտութիւնն իբր զկամակոր հարապատ գտողին չարեաց, զակամայիցն ընդ կամաւորացն, զբռնացելոցն ընդ հաւանականացն, զեկամտիցն ընդ բնաւորականացն, զանօրէնութիւնն ընդ ապաստուածութեանն, զփոքունն ընդ սատակադունիցն, զնուազունն ընդ յոլովիցն, զանճառիցն իմոց իբր զճառելեաց գիտողին, զանդրելոց վերատուցն իբր զնկարելոց տեսողին ՚ի յարձան մագնեսիոս վիմի, զԹեթեւապունիցն առ խտիր մոռաց իբր զստուար ծանրութիւն բեռանց, զինդիր չափոյ ծածկելոցն իբր զճշդով պահանջումն սատերն սակի ՚ի բերանոյ կիտին կորինի չորեքգրամեան կշռութեամբն, զանդնդականացն զործոյ իբր ՚ի յականջս աստուծոյ արագ ժամանելոց։ Ո՛չ այսոսիկ յաճախեա կուտեա կրկին յանճառութեամբ, վերատին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ զէտցն իբր զեղելոց, ընծայեալ աստուծոյ զպարտութիւն վանեցեալ անձինդ. զի ընկալցիս ՚ի փոխատուէն զնորհօք Թողութիւն պարտուց մեղաւորին, զոր տէրն արդարացոյց և հրաշափառապէս հռչակեաց, ամենապատիկ ներբողիս կրկնեալ զգովեստ զղջմանն. քան զպարսաւանս մեղացն։

ՐՆ. Խարդեա և դիզեա անձինդ մեղա-
պարտի բամբասանս յոքունս զքոյն խոհերս
բազմամանեայս, անձն իմ կշտամբեալ յոք-
նախենանդ բանիւ. զչարութիւնն, զանօրէ-
նութիւնն, զվնիպութիւնն, զառ՝ի մարտին
հանդիսէ փախուստ, զպարտութիւնն, զմո-
լեգնութիւնն, զամբարշտութիւնն, զապշու-
թիւնն, զթմրութիւնն, զքունն արթնական,
զառ՝ի յընթացսն զնիրհումնն, զխորհուրդն
օտարոտի, զբանիցն նանրութիւն, զզազրու-
թեանն հաճութիւն, զյամենալն՝ի նմին,
զփափագելն աստուածոյ ատելեացն, զաներ-
կիւղութիւնն, զանամաստութիւնն, զանհար-
թութիւնն, զթերութիւնն, զթիւրութիւնն,
զլուծութիւնն, զճշդութիւնն, զանկապ ար-
ձակումնն, զծիծաղականն, զվնիջողականն,
զկատակերգականն, զգայթակղականն, զը-
պատրողականն, զանդէպ քաջութիւնն,
զանյարմար մարսան, զառանց օրինի արիու-
թիւնն, զխեղդմունն հոգւոյն, զառատանո-
ղականն զերկչոտութիւնս, զբաղմաստեղ-
նեան ճիւղն զբահետականս, զանպատկառ
փարաբմունն, զդժոութիւնն, զդժգնիու-
թիւնն, զանդատ առելութիւնն, զմարմնջ-
մունն դիւրմբռնողականս, զվոքունցն զան-
կշռութիւնս, զխոստմանցն զրժողութիւնս,
զուխտիցն մոռացութիւնս, զնմանեացն այ-

լակերպութիւն, զկեղծեացն զողարկութիւն, զփառամոլութեանն մերոսութիւն, զյօնիցն հաւակնութիւն, զապիրատութիւնան, զնենգ-նասիրութիւնանն, զնախագահիցն տենչութիւն, զհատուցանելն եղեռնականացն, զնոցինան զանշահ աղճատանան, զվայրապար բերմունան, զընթացակցութիւնանխորամանկութեանբան-սարկուին, զբանին սերմնակաթուղիկ, զվա-ճառումն կենացն ընդ զնոց սատակմանն, զզ-կորուստ աւանդիցն, զհայրենեացն ծախս, զկապարանն ձգողական, զփոկով լծոյ երնջոց անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւնան, զյա-բաթաթաւ տղմաբնակութիւնս, զլքումն լա-ւացն, զընթադրութիւնս անկարծիցն, զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական, զնորոգ մոռացն, զօտար խորհրդոցն, զանկայուն կա-մացն, զհաչման հաղագին, զէութիւն չնչոյն, զեւան քան զահման կանոնացն դրութեան՝ զեկեղեցականին զամենասփիւռ բացարձակու-թիւն, և զոր չէ ճառելի և կամ գրելի և կամ պատմելի և կամ յերեսս դիմաց բերելի։

Գ· Լ՚ս արդ զիա՞րդ բժշկեացիս, անձն իմ եղկելի, ՚ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ, բարձեալ թողեալ այր մի տարագիր անող-ջանալի, ըստ մարգարէին· քանզի մի ՚ի վե-րագրելոցդ բաւականապէս զօրէ սատակմանն, թող թէ այսքան դասք սպանողաց դժնէից

դահճաց շուրջ պաշարողաց: Ա՛նսաւանդ զի ոչ այսու և եթէ նմանագոյնութեամբ կշռի առաքացոյց տարժանեցելոյս, այլ զոր օրինակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց՝ ի տորին մասունս ծայրից տանոցն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մանչկեղէն արկեալ ամփոփէ զելեզն շաւիղ կապարանին շրջափակութեամբ, ցուցանի արտաքուստ բարիոք, իսկ ի ներքուստ համբարբ չարի և պահեստ կորստեան և կոյտ կսկծման և զործծնեայք սատակման և մշակք մահու: Ա՛րդ այսոքիկ են ամբարեալքն քո անօրէնութեան տաժանեալ թշուառալիցն թոշակք, անձն իմ պարտական կրկին սատակման. որ կամուորաբար ընկալար ի քեզ, զոր թշնամին սերմանեաց ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս. ով այր անմնքուր՝ ամբարիշտ և ծոյլ, բնաւին ատեցեալ, սիրողդ մոացդ ախորժմամբ զլցեալն ամենայն ապականութեամբ, և զոր առաքեալն ցուցանէ զթիւս բանիցն սարսափելեացն կշռամբողաց, աստուստ սկսեալ մինչեւ ի կատար կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են, ասէ, յաստուծոյ իրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսիսն գործեն և կամ կամակից են, արժանի են մահու: Ա՛րդ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կորստեան սա-

տակման՝ ի մահ դատապարտութեան. այլ անխայեա յիս ողորմութեամբ՝ բարեգութի, կենդանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԶ.

Ա ԷՐՈՎՆ ՅՈՒԼԻՈՍԻ ԿՐԿԻՆ ՀԻՆԳՈՒԱՆԻՆ ԴԱՐՁԱԾ ՀԱՅՈՑՆ ԱՍՈՐԻՔ ՀԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ:

Ը. ԱՐԴ վըիպեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ գժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ, արածոզս զերա-



մակս զազիրս վայրագասունս խողից արօտականաց զարշութեան մեղաց նախատ վարձականութեանց. հովիւս տածողական գՀօրանս ուղուցն ամենայնականաց՝ ի վրանս հովուացն,

ըստ երգոյն երգոց առ իս առակին. որ ոչ իսկ ծանեայ զիս երբէք գիտել, թէ յո՞վ և յո՞ր պատկեր և վասն ո՞ր գոյացայ:

Ե. Ահա ՚ի յոտս տանողականս կրողաց երկուց միակցորդ խորհրդականաց, ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար, իբր ՚ի թռիչս թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց յաշխարհն հայրենական հայել, ով յիմար, զիաւրդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիս անապատականս համարեցար: Իբր զճրագ բազմաբեռանեան ՚ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ գլխոյդ բոլորութիւն, զի և այսու ՚ի յօրինակէն ընդհէ մի օտարացիս զաստուածս տեսանել, և զմնացականացն խմաստասիրել: Ռանականութեանն յարգանօք կրկին ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեանն որ առ քեզ եղեն՝ անարգել լեզուով խօսեցիս: Զեռնդ հաստմամբ յարմարոստեան մատանցդ շառաւեղօք՝ զդործնականացն տնօրինել զանտեսութիւն, իբր կցորդ համացեղութեամբ ամենաբաշխ աջոյն աստուծոյ՝ աստուած կոչեցար: Ուրիշ հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ ՚ի քեզ ընդ նոսին ՚ի նոյն և պատշաճական մասունս չափոց ազդողականաց հինգ զգայութեանց, զի մի և երեւելիդ նիւթականութիւն քումդ

տեսութեան՝ մուացդ դիտման անդատ եղիցի. զի ոմանք աստուածք են և զօրաւորք, և այլք փոքունք են և պիտանիք, կէսք կարծրակերտք և ազդողականք, են և գողտրականք և պատուականագոյնք, դարձեալ կարեւորք և պատկառելիք: Ակ թարգմանութիւնք սոցին տեսութեան՝ ի քեզ են նկարեալ իբր յարձանի անջնջականի անձն իմ եղկելի. որպէս զի և տարր ժամանակաց և շարունակ հետեւման աւուրցն առ պակաս ամին, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ անսխալ և անայլայլելի պահեսցի:

Գ. Դարձեալ այլ օրինակ հոգեւորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ՝ ի մի առ եկեղեցի, քեւ խորհրդածի. իբր զի առանց բնաւից զուգամանութեան կապակցել լծով հաւանականաւ զվէհն ընդ փոքուն, ինասեալ է հաստուածոյն անարատութիւն յանուն Քրիստոսի ժողովելոցն, որպէս՝ ի հաստութեն և՝ ի նուազութիւն միոյ յանդամոցս անարդացս պատուաստելոցս՝ ի մարմնի, կրճատեալ ինն է յօրինուած կազմութեան մարմնոյ քում սենեկի զգայականի, և շրջեալ է ընտանութիւն պատկերին յանարդ փոփոխութիւն: Եւ արդ այսպիսեաք, և եւս բազմաք անզուգական հրաշակերտութեամբ եղական պատկեր աստուածոյ՝ կշտամբեալ՝ ի սպառ ոգի իմ գերի-

և թէպէտ յառաջին նմանութենէն կողոպտեալ զտար պատուիրանին յանցաւորութեամբ



'ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսաղարդ շնորհիւն զհոգւոյն փչումն առեալ, նմանութիւն ես կերպարանին. և արդ ընդէր կորուսեր զփառան երկնաւորս, իբր նախաստեղծն երբեմն զվճռեալն երկրաւոր Ադին դարաստանի. ընդէր փակեցեր քեզէն քեզ զերկին, և զվերելից դուռն աղխեցեր. ընդէր խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան զախտ արատաստացդ տարժանութեան. ընդէր ըզլուացեալ զճորձ վերարկուին զարշելի գործովք զազրացուցեր. հիմ զեղեալ հանդերձին մեզայ պատմուճան անառակ վարուք քեզ արկեր. ընդէր զտանողացդ ոտից սրբութիւն ճանապարհան ժանդից ազտեղեր. ընդէր կրկնեցեր իրաւադատին զուխտազանցութիւն

հին պատուիրանին. ընդէր մերժեցար ՚ի պըտղոյն ընտրեաց, իբր զԱդամ ՚ի ծառոյն կենաց. ընդէր նենդեցեր քեզէն քո կամաւ զանբասուեր յուսոյն յարակայութիւն. ընդէր պատկառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպաստեցեր. ընդէր զինեցար ընդդէմ քո ներհակ, ով ընդունարան խելագարութեան. ընդէր որսացար ՚ի ծուղակ մահու՝ թողեալ զարահեան վաստահութեան. ընդէր կալմիս պատրանաց ածար հաղորդդ մարմնոյ կենդանարարին: Այլ վիրաւոն յուսացեալ ՚ի նա կարդա նմա ապաւինելոյս քաւիչ ներողիչ փրկիչ կեցուցիչ և կենդանարար, ողորմած խնամով մարդասէր և անտիրակալ բազմագութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԷ.

Ա՛ջոպին յա-ելա-ած լրկի՛ն հեձա-ըկան նոքի՛ն հալոյ
աա՛ նոյն ազի՛ա մաղկանաց բանէ.
՚ի խուց պրկեց իւոյ ընդ Ա՛պո-ձոյ:

Ո՛ւ ևս արդ զինչ դոյ ասել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համրանալ և հոգ ՚ի բերան եղ՚ալ լռել ՚ի սրտի, ըստ մարգարէութեանն խրատուս, ահա ՚ի բարւոյն կարկառեալ ՚ի յոյս: Խակ եթէ զիսկանս շարժողութեան շրթանցս բացից, բռնադատեցից խօսել կամեցեալ, գարձեալ

զնոյն ձայն կրկնակական եղերերդութեան լա-
լեաց բազմութեան խէթ մուացս յառաջադրէ:

Ի. Եւ արդ ողբակից մեծ մեղաւորին ա-
նօրինելոյ կամաւ առ ի մահ՝ զնորին գոչումն
երկրորդեցից և ես ընդ նմին. մեղայ ահեր
մեղայ, և անօրէնութեանց իմոց ինձէն վկա-
յեմ: Լիւսեալ ընդ նմին ղբանս յիմաներորդի
սաղմոսին, անթիւս պրեմ զպարտուցս սակ
անձինս մեղաց՝ քան զհիւղ երկրի հողմահոս
փոշւոյ ընդ օդս ամենայն տարածեցելոյ:

Գ. Մեղայ յերկինս և առաջի քոյ, ընդ
անառակ որդւոյն պատկառեցելոյ հայրենի
դթոյթ վերստին դարձեալ թախանձ արկա-
նեմ. և զողորմելին ձայն աղերսանաց արտօս-
րածին ողբովք գոչման ի տխուր դէմս մա-
տուցեալ առաջի քո տարածանեմ, հայր
դթութեանց, աստուած բոլորից, չեմ արժանի
կոչել և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ
միայն որդի, այլ և անպիտան ապարան վարձ-
կան: Ընկալ զսովեալս տարադրական, պար-
տական ճնասուց. և զքաւ քաղցոյս լինանց
նեղոյս նուազեցելոյս՝ կենաց քո հայիւդ բժըշ-
կեացես: Լեր ընդ առաջ քո ողորմութեամբդ
ի սկզբնաւորս ապաւինութեան. զդեցո, զըլ-
թած և անօխակալ, անօրինեալս մեղապարտի
զնախահապատս հանդերձին ծածկոյթ. աւան-
դակորոյս ձեռացս աղտեղեալ մեղաք՝ զկնիք

մատանեղն համարձակութեան ամենառատ կամաք մատուցանես. զդարշապարացս թշուառութիւն մերկութեան ոտից՝ պատապարութեամբ աւետարանական ամրավերարկու օդիցս կօշկաց՝ ի յօձին թիւնից միշտ ամրացուցանես: Զգուարակդ պարարակի եղինդ երկնային, որ է միածին որդիդ քո օրհնեալ իսկապէս մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց նուիրեա. որ մատուցեալ միշտ և անպակաս մնայ՝ ի լուծեան յարակայ զննեալ՝ ի սպանդարանի անթիւ սեղանոց անասնոց ութեամբ, բոլոր յամենեսին և բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս և իսկութեամբ՝ ի տորինս, աննուազ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ. փշրեալ և բաշխի՝ ի մատունս անհատս, զի զհամայնն հաւաքեացէ առ՝ ի նոյն մարմին իւրումն զկեանքեզ փառք ընդ նմին, հայր ողորմութեան, յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԸ.

Ալէլուիա յաւելուած կրկին հեթանոսական նորին հոգւոյ
առ նոյն աղբիւր մաղնանաց բանիւ.
ի երից որոց խօսէ ընդ Աստուածոյ:

Ը. Բարձրեալ, հզօր, անսկիզբն, ահեղ, անբովանդակելի, աննիւթելի ակնդ նկատող, ծնող անքնին փառաց միածնիդ. իրաւա-

ցուցես զնմա ողորմութիւն հերքեցելոյս ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս: Ցծնեա զկեալս կորուսելոյս վերնականացն պարերգութեամբ, աւետարանեա բանիւդ օրհնութեան զկենդանութիւն իմ մահացելոյս, զբարեբաստութիւն կամացդ յայտնեա, զովեալ բոլորից պոյից եղելոց, առացիր անուն քեզ անճառ և ինձ թշուառիս նորոգ փրկութիւն, կորուսցես զմիր մարհակի մեղուցելոյս ամպատանութեանն, զվճիռ հոգւոյս մահու ջնջեցես կայլակօք արեան որդւոյդ սիրելոյ, վառահութիւն փրկութեան բարեաց արեամբ Քրիստոսի քո նկարեցես, ցոյց զսքանչելիս քո բարեգործութեանդ ի ճաշ հարանեաց քոյմ հարազատի: Մի փակեսցես դիմելոյս առ քեզ զառապատ սրահի կենացդ յարկի, մի որոհեսցես ի բաղմահատնացդ և ի բարեացդ քո զրկեսցես, մի զահեսցես ի դանձարանիդ դիսիթեալ իմ պարտուցս անօրէնութիւն, մի կնքեսցես ի քոյակ բարեացդ զղազրութեանց իմոց գարշութիւն, մի երկարս ինձ զվէր մեղացս ի յախտալից մարմնիս ծածկեսցես, մի զիւրութիւն նեխութեան ցաւոցս ինձ անկակից մահու մեռցուսցես, այլ բարձ բանիւ քոյդ ողորմութեան զժանտութիւնն ապականարար, որպէս զի զատեալ ի հիւծմանց ախտից՝ առողջու-

թեանն պատրաստեցայց. Հնարաւորեա, զբ-
թութեանդ Հայր, մեծ խոցուածոյս զօրեղ
սպեղանիս, կարեւոր կօրճանմանս՝ բարի այ-
ցելութիւնս: Օ՛ի քո եմ, տէր ողեաէր, թէ
և առ մի նուազ բիւրս մեղեցեմ, բայց ոչ
դրեցայց Համայն մեղուցեալ, առիչ կենաց
իմոց բարեբար, ՚ի շնորհ պարգեւաց կենաց
քոց ապաւինեալ· զի ձանաչելդ զքեզ բո-
վանդակ արդարութիւն է, և պիտել զզօրու-
թիւնդ քո՝ արմատ անմահութեան, որպէս
և կանխաւ իսկ դրեաց իմաստունն. և դար-
ձեալ՝ տիրելդ քո՝ ասէ, ամենեցուն, խնայել
ասյ քեզ ամենայն. և դարձեալ, մծա է քեզ
յորժամ և կամիս կարող գտանել:

Ր. Աչս Սողոմոնի յուսոյ ազեւրանք իմոյս
առեալ տիպ· քանզի ոչ այլ զբ բազմամեղ
որ քան զնա ինձ գտագաշափ· երբեմն որդի,
ապա առեալն· երբեմն միշնորդ խաղաղութեան
աստուծոյ ժողովրդեանն, և յետոյ խորոց
որշման բաղում խոտոմութեան· երբեմն օրէնք
կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու
հատաւտեալ· զերկնաւորին պաշտօն ընդուն-
նեալ, և զօտարին անուն ծանուցեալ: Ընդ-
պատճառ օգտող, անկարօտ զրկող, անասելի
գող, զրպեալ տրտնջող, վաւիկացեալ վա-
խըստական, սեղանանենդ ապաստացեալ, ան-
պատասխանի ճնասպարտ, քաղցրաւնոյց

հայհոյիչ, զաւակ հայրատեաց, կռակարա-
նացն մատնիչ, Մովսէսի չարախօս, մոռացող
երախտեացն, իմաստուն սխալական, ամե-
նագէտ յանցաւոր, ամօթ ապարտ զղջացեալ,
տարակուսեալ աշխատող, աղաչաւոր կռա-
պաշտեալ. յամրային դարձաւոր, կաղակարծ
ընկալեալ, կասկածաւոր հաշտութիւն, յա-
պայս յիշատակ, յերկբայս փրկութիւն, չա-
ւատալն գիւտ, ի մատնէ մնացուածք, խար-
դաւանեալ գերի, կիսակատար պրծեալ, կա-
մաւոր անձնամատն, տմարդի յղփացեալ,
բազմալեզու հանճարեղ: Ի յընթացս բանից
երկեակ որոշմանց՝ ամենայն ուրեք բանս ար-
կեալ ողոց և ձաղանաց, մեծ պարսաւ և
փոքր գովեստ՝ իբր ի վերայ ինքնագրաւ կո-
րըստականի, երգիծանութիւն խառնեալ ընդ
աշխար. բան նորա թելադիր բարգաւաճու-
թեան ամենայն հասակի, և խոտորումն նորին
ի շրթունս բնաւից թառանչ թախծութեան
ողորմելիս ինն ազդեալ:

Զ. Ոչ արմանամ, վհատիմ տարակուսեալ
ապշութեամբ. զի թէ նա այնքան գիտաց,
ինձ զինչ պատահեցէ. զիարդ անկաւ ամ-
բարձեալն, զիարդ սասանեցաւ հաստատեալն,
զիարդ կործանեցաւ կառուցեալն, իբր օտա-
րացաւ ծանուցեալն, զիարդ զակատեցաւ զա-
ւակն ընտրութեան, զիարդ սրացաւ մերձա-

ւորն, զի՞րդ աղօտացաւ փայլեցեալն, զի՞րդ պատանդեցաւ աղատեալն, զի՞րդ անօրինեցաւ ուսուցիչն, զի՞րդ նուաղեցաւ Հոչակեալն, զի՞րդ անարգեցաւ փառաւորն, զի՞րդ փոքրկացաւ մեծատունն, զի՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն, զի՞րդ ամբարհաւաճեցաւ ընտրոլն, զի՞րդ ունայնացաւ պատարուն, զի՞րդ կորեաց զուխան որ ընդ բարձրելոյն: Պատկառեմ ասել, Թէ և ընդ սանդարամետականին կապեցաւ. զի՛ կայր նորա և կռոյ, ուստի՞ սէրն ընդ պատկերաց, վասն էր կանքն ընդ խորանայ. զի՞րդ ոչ յիշեցաւ յանդիմանութիւնն Սամուէլի առ Սաուղ եղեալ, Նմայք, ասէ մեղք են, և ցաւս և աշխատութիւն ածէ Թերափ՝ ի վերայ. զի՞րդ ոչ հայրենի յանդիմանութիւնն, կուռք, ասէ, հեթանոսաց դուք և անշունչք են, և նման նոցա լինին պաշտօնեայք նոցա: Ցէր միայն ածեր զնոսա, Մովսէս նախապրեալ յառաջաձայն ձաղանօք սաստիկս իմն ամբաստանէ, ոչ էր ընդ նոսա ասէ աստուածս օտարոտիս, զոր ոչ ճանաչէին հարքն նոցա: Ո՞ւր է մահամատոյց այլանեայ արձանն փաղուելոյ, ո՞ւր տպեղն և անպանծալին սիդոնացւոց իգական ամենանզով ձուլածոյն, ո՞ւր կանացի կերպին անդրելին խայտառակութիւն զաղիր տեսակին, որով ամենեցուն մարգարէքն

զանազանօրէն դիմեցումն անխտրաբար յանուն չարութեան անժուժկալ դիւին անաստուածարար ձգնակ մղէին: Տարաւ զէութիւն բարեբաստութեանն՝ որ զնախնին որպէս զի կորուսա, յաղթեաց մեծութիւնն խաստիցն առաւելութեան, զերիսց զօտզութիւնն, յիմարեցոյց փափկութիւնն, վանեաց արծաթն ծառայեցուցիչ, յոյի գառնացաւ զայրն տօնելն հին զէնն կործանողին, ի զրկացն առաւծոյ հանելով ի յոտս առաքեալին զթեցոյց, մեռոյց մեղկութիւնն, թմբրեցոյց ծուլութիւնն, արբեցոյց շուայտութիւնն: Ով դիւրապատիր մարմին երկրածին, որովք ձայնարկութեամբք զբեզ աւաղեցից. քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբանութիւնս, այլ առնից սխալողաց՝ կամաւ վրիպելոց, վասն զի նոքաւ է խմանալ, թէ առնիրաւ է պարծել յիմնառս մարմնոյ, եթէ ոչ աստուածով գառնալ ընտրեացի, որ զի թէ առ այս պայմանի յիմար ոք իցէ, և ի հաստչին կամս յուսացի, ոչ եւս ի նորայոյ անտի ինչ կրնացէ:

Գ. Ալ քանզի աստիկս և քառմեկիս ունի Սողոմոն զդարձին իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կշտամբութեամբ, իբր մեռեալ իսկապէս համայն աշխարհիս անձնասիրութեան. զոր եթէ զեսկն ոք նկատեացէ,

Ընայնութեամբքն է իմանալի. այլ և ի մա-
տեանս քահանայիցն և ի գիրս Ա.բիայ սի-
ընացւոյ, յորում պիտոյիճն իւրում ընթացիցն
արտասուելիս իմն յեղանակէ. զուր ջան, ան-
օգուտ վաստակ, անմիտ հետեւումն, անշահ
արշաւանք, անկայուն երկ.ք, օտարին իմաստք,
ոչնչից հոլով.ք, բամբասելի բերք, անյարմար
վարկած.ք, մնոտի սերմանիք, աւազափուլ
շինուած.ք, ապականացու ստացուած.ք, քա-
մահանաց տաժանմունք, ինքնամարտ կռիւ,
ընդ ոգւոյ իւրում դատ, ընդունայնաբեթոպ
քիրտն, միաստակար փափաք, կորստական
շաւիղ, վնասակար ճանապարհ, կործանական
կրթութիւնք, մոլորապատիր վարժութիւնք,
հանապազասխալ տեսութիւն, ակնայայրատ
պչրութիւն, պոռնկակերտ կերպարան, ախ-
տաբորբոք նիւթ, դժնեաւտեսիլ գոյն, յոր-
նատխուր գեղ, յոլովամեղձ ծուխ, շոգի ցըն-
դելի, վաճառ մերձ ի յատ, տաղտար քակ-
տելի, ընդվայր աղաղակ, անպատճառաւոր
ծաղր, արհամարհելի ասպարէզ, անճնաւա-
ճառ գիր, սատակչական եղ.ք, անաստուած
մոածմունք, ստայօդ ճառ, զայրացուցանող
զոյց.ք, եպերանաց խծբիծ, խելագարութեան
խնդիր, ամբիանաց ցոյց, խայտառականաց
յայտնութիւնք, առակ ապառնեացն, ապա-
շաւանաց գործ, ըմպահկանաց պատմութիւն,

հեղգացելոց օրինակ, խորխորատ ծածուկ, որս խաւարային, մահադուշակ վիհ, անյատակելի անդունդք, ուղեկցութիւն սպանողաց, յիմարութեան բարբաջմունք, դարանակալաց վայր, խարխուլ յարկ, շինուած սասանեալ, կամուրջ խախտեցեալ, երեւոյթ վախչելի, խաբող շողքորթ, անոպայ մատնիչ, ընդդէմ բարձրելոյն հակառակութիւն: Այս ամենայն մասունս բանից խոստովանական կանոնադրութիւն, ի սիրտս բնաւից նախասերմանեաց ժողովողս կանոնադիր դարձելոց զղջման. որպէս զի մի պարծեսցի ոք ի մարդկանէ բամբասաւորօք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կատարիչտ է քողով ծածկեալն, որ զկերպարանն միայն ունի, և զոչ ախորժելիս ստեղծչին կատարէ:

Ա. Այս արդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ որքան զղջացաւ, մի ի սպառ պախարակեսցի. այլ յիշեսցի այլն այն ի բարի, իբրեւ զհին յուսադրութեան ի տէրունի ոտն դիմելոց, յորժամ հոգւովն էջ յայցելութիւն աստուածութեամբն անբաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալն. զոր մեռեալքն ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս: Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ ի մաստութեանն ոչ ժամանելոյ, ի մեղանացն

մանն կարդեալ, բարեբանեալ մեծիդ պաղատիմ. լից զնուազդ իմ բանագրութիւն ՚ի յերջանկին հանճարեղութիւն. նիւթեացն ներկայիս հայցմունք ՚ի բարգաւաճին յարգաւորութիւն՝ ՚ի գերաշխարան արքային աղերս. այցելութիւն խնդրոյս դիցի քո ընտրեցեալ վիճ արքայորդւոյն, զոր միածնիդ օրինակեցեր: Յարեանն կցորդութենէ զքո փառակիցդ ճաշակեցաք. տուր փրկութիւն քոյոյ ծառային, ամենահնար, զօրեղ, ահաւոր, ՚ի ստեղծողիդ փառս աճեցուցեալ զանքաւելի մեղացն ջնջումն: Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեացես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրութեամբ զաստուածութիւնդ քո քարոզեալ ՚ի մատեան լուսազարդ կտակի, եկեղեցւոյ ընծայեաց հետս բարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ, հայր: Ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալն, թէ անյուսութեանն կաթուած չէր անկեալ ՚ի յեռանդն սրտին ըղձից, որ զճեպ պղջմանն փոքր ինչ կասեաց:

Ո. Ընդ ՚ի յուշ բերեալ զոր ՚ի քեզ անճառելի բարեմասնութիւնք, զղթութիւն քո ողջունեացես. որով զկոչկոճեալն ՚ի բազում դարուց՝ բամբասանաց քարաձգութեամբ, եբանութեան վերարժանացո. որ յոքնահոսան

արտասուաց ելիւք զմէջ յատակի յարկին հեղեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սաստկակիզն ապաշաւանօք, հօրն կրիցն զերազանցեաց ողորմելի ոգւոյն հեծութեամբ. զոր ՚ի յաչաց բանիդ քո արտօսր՝ առ որ մերովս ՚ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտդ ներողութեամբ միացուցեալ խառնեացես, զբեթած. և զանյարմարն առ նա կարծեցեալ զսաղմոսին բարեբանութիւն, ՚ի փառս էակիդ որդւոյդ կնքելով նովաւ կեցուացես զնա քաղցրութեամբ ընդ աղքատս ժողովրդոց: Օ՚այս պուեսիկոս ոմն բարեշնորհ արդահատէր ընդ Սողոմոնի, ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաճայնութեամբ՝ իբր կենդանեօք նովաւ ընդ նմին վանն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ անտեսէ: Վանդն և օստացոյն ՚ի նմանէ ստեղծեալն բազմահրաշատուրն մարգարէաճառն պատմագրութիւն աստուածութեանն արդարացուցիչ՝ զՍողոմոն ողորմեալ կարգէ. որ զի անպարտաւէ աղօթելն, քան չարաբանելն վանն նորին:

Ի՚. Օ՚որ և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել զոչումն. զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գործոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչիս. իսկ եթէ գտցես, այնքան բարձրանաս, որքան

մեծութեանդ քում վայել է. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս ողորմածութեամբ, քան նախահրամանն սաստկութեամբն: Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութեամբ ի խնամն պիտութեան ձրի և ամենառատ պարգեւօք սիրոյ միխիթարել յաւէտ զտրտմեալքս համաշաւիղ տագնապաւս տապոյ տուչորման անբժշկականի: Զեռն եղեալ փրկութեան նորոգեացես վերստին, քաւեալ և պատապարեալ ի մեղսակործան խորտակմանէ: Եւ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ և սկզբնաւորիդ սկզբանց՝ սուրբ Երրորդութեանդ և միոմ աստուածութեանդ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆՆ ԽԹ.

Ալէլուիա յաւելուած կրկին հնչումեան ասէին հայոց
առ նոյն ալէլու հաղնանաց բանիւ.
ի խորոց սրտից ընդ Աստուծոյ:

Ե. Եւ արդ մի տիրեսցեն անօրէնութիւնք քում պատակերիս կայսերականի արքայութեանդ վերնում, աստուած բոլորից լուսոյ, մի կապտեսցէ դռռոցն ապաստամբ զզարդ փրկմանդ շնորհի ի քո ստեղծեալս կերպէ, մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի առ ի դրաւել զիս ի նոյն: Զի

իմ թագաւոր առ իշխել հնչոյս բաց ՚ի քէն, Քրիստոս, որ անբռնադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրութեան, որ բառնաս զկարիս մեղաց ամենապարզեւ բանիւ, որ արեամբդ քո սուրբ և մարմնովդ կերակրեցեր. որ կարդեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի, որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ գրելով, հօր քումմ մատուցեր ժառանգակցապէս. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, ստեղծիչ ամենից և կեանք: Դու ես աստուած ամենայն հոգւոց, որ մեծացուցեր զայս տուրս հնոր հայ քան զամենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս իւրովքն զարդուք և հրեշտակացն պայծառութեամբք, ոչ զերկիրս և զմարդկութիւնս և որ առ սոսա են զարմանութիւնք, ոչ զսահման լայնութեան ծովու և որ ՚ի նմա են եղելութիւնք, ոչ զանդունդս աղխիւքն հանդերձ և որ ՚ի նմա են անբաւութիւնք, ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վեհիւք՝ որչափ առ քեզ կարեկցութիւն, յասելն քո սուրբ մարգարէիւն՝ քաղցրութեանց յուսոյ բարութիւն, ոլ է աստուած իբրեւ զքես կարող թողուլ միշտ զմեղս և ջնջել զանօրէնութիւնս: Ահա արդ խնկեալ են բանք քո, ողորմած, և խոստովանեալ բարերարութիւնք, փառաւորեալ խորք

խորհրդոցդ, և երկրպագեալ զեղմունք ընծորհացդ:

Ը. Արդարեւ ոչ ոք բաւէ յէից թարգմանել խօսիւք նիւթական լեզուի՝ ի մասանց այսի քումդ զթութեանց զոր առ իս ցուցեր, յօրինիչ. քանզի և մեծ իակ է զօրութիւն՝ զննացեալն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան յանգոյիցդ ստեղծադործել: Նէ զի ոչ է քո տկարութիւն, որ զօրութիւնդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ՝ զլուծիւն գործոյն դլեսաւորէ, ահա յարիցես փառաւոր լինել, բարեգործ, ի սատացուածս այս կրկին անյուսալի փրկութեանս. զի իրաւամբք ուխտի բարձրասցի՝ հաստատուն եղեալ մեծապէս օրհնաբան առետեաց քո ձայն ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ողորմութեան լուսով ուղերձեալ, քան ի ճանապարհ ստեղծանելոյն: Զի առ միոնն արարիչ միայն ճանաչիս, իակ առ միւսն՝ առաջնով կոչմամբն և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն և քաւիչ, ընդ նորոգելոյն և բարերար, ընդ հաստելոյն և ողորմած, ընդ կազմելոյն և հնարաւոր, ընդ յօրինելոյն և հեղ, ընդ նկարելոյն և ամենազօր, ընդ առաջնորդելոյն և լոյս, ընդ տածելոյն հովիւ, ընդ դարմանելոյն ինամիչ, ընդ ողջ պահելոյն բժիշկ, ընդ ձեռնկալութեանն զօրավար, ընդ

անպարտութեանն թագաւոր, ընդ արարչու-
թեանն քաղցր, ընդ ամենատուր պարգեւացն
առատ, ընդ միշտ անսալոյն ներող, ընդ ոչ
բարկանալոյն անհնակալ, ընդ կարեացս վըշ-
տակցելոյ ծածկագէտ, ընդ յանձանձելոյ զը-
թոցն ապաւէն, ընդ գերունակ գորովոյն աս-
տուած, ընդ անսպառ բարութեանն՝ օրհնեալ
յաւիտեանի:

Գ· Արդ որպէս ստեղծեր միոչ ոչն իսկ
էի, և ծանուցեր ինձ գոյացուցիչ, և այժմ
պհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ յար-
դարեա անդրէն վերստին յանարատութիւն
մանուր սրբութեան նախնի լինելութեանն.
զի բազմասցի առաւել աճեցուն եղեալ յա-
ճախ տուչութիւն անսահմանելի քոյդ սքան-
չելեաց նորոգ ներկայիս, քան զանցելոց հը-
նոցն ստուերականաց: Եւ ընդ ճառելոյս ըզ-
թիւս մեղացս՝ որքան մոռացս թեւս ընթա-
նայ զանբերելիսն յիշատակել, արդարացայց
յանուն քո հզօր. և ի պատմելս ինձէն զան-
ձին իմոյ բիծ, և դու թողեաս զամբարշտու-
թիւն բազում մեղանաց խոստովանելոյս, հզօր,
ծածկաւես, ամենաւրհնիչ. զի մի ծայրագոյն
լռութեամբ աւետացս, դարձեալ նախնումն
կարօտացայց՝ երանելով սաղմոսիւն զնորհօք
փրկեալսն միտութեամբ. և փշով մեղաց
յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեցի յիս ա-

առաքեալքն այժմէն վերատին, ծանրս առնելով զբեռն պարտեացս քան զքաղցրութիւն պարգեւացդ, այլ ազատեա զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու: Վասն լեցի, թէ անկցի ընդ տկարութեամբ ահմանաւ ճշմարտութեանդ ծագումն իրրեւ զդրոյն օրինակ. քանզի ուր քաւութիւն է թագաւորեալ՝ վատրեալ են մեղք, և՝ ի խրախոյս կենդանի բանիդ՝ ոչ է յուսահատութիւն, և ամբարձեալ քոյոցդ շնորհաց՝ հալածեալ են պարտիքն, և մերձ գոլով ձեռինդ աստուածոյ՝ ոչ գոյ անհնարութիւն, այլ ամենեւին լուսաւորութիւն, բովանդակապէս զօրութիւն, անպարտելի կարողութիւն: Վասն է փրկութիւն, կենդանութիւն, նորոգութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, արքայութիւն, անեղծութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ը·

Ա՛ջ ոտքն յաւելաւ էրկն հեթանոսեան նոքին հակառակ
աս նոյն աղէքս մաղնանայ բանիդ.
Ի խորոց սրտից խօսէ ընդ Աստուածոյ:

Ը· Ա՛յլ արդ, քանզի որպէս ոչ է առանց Քրիստոսի աստուածոյ օգուց փրկութիւն, և ոչ առանց տեսման աչաց՝ առ լոյս զուարճու-

թիւն, և կամ առանց արուսեակին նշուլից արեւու երբէք քաղցրութիւն. այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութիւց և ստգտանաց անձին՝ քաւութիւն: Ոչ զի՞նչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս, և կամ զի՞նչ ճնասեցեն զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գովեցայց, և կամ ո՞ւր ասի պարսաւեալ մարգարէն Յովէլ՝ երիցս կրկնելով զանձինն եղկութիւն, և կամ զի՞ գուցէ սրբոյն դատաստան առ՝ի յիշատակ աւուրն մեծի, և կամ իբր արդեօք անմաքուր իմասցի շրթամբք Նոյին՝ հեռին՝ի գործոց տանն Իսրայէլի, և զիաւրդ աստուածպարտաւոր պաշտի առաքեան մարմնովն՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել, և կամ յո՞րս թարգմանի առած առակին, թէ սիրտ իմաստնոյն՝ի տան սգոյ, և սիրտ անմտին՝ի տան ուրախութեան: Ոչ որ զսխալեցեն Աստուած անձին իւրում ոչ գրեսցէ, և զմեղս ամենից ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զՀարցն, կորոյս զիւրն արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ բնութեանս. և ոչ բերկրի սիրտ առ զուարթութիւն երեսաց աւետեաց յուսոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաքելոյն Քրիստոսի ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ աստուածոյ տրտմեցի:

ԻՆ. Ընդ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգեւոր հանճարեղին, զոր տէրն իսկ երկրորդեաց, երթալ նատել ոչ յառաջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրախորհուրդ ժողովելոց, ուստի Դաւիթ և Երեմիա ուխտիւ կանոնի սահման հաստատեալ հրաժարեցուցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մեղաւք՝ և ի դառնաստանաց մեծին պակուցեալ ահիւ հատուցմանն, յետնոցն հաւասարեալ աստէն ի յերկրի կամաւ խոնարհութեան, ուստի բարձրեալն աստուած պարարեալ բերկրի. որով ընդ նախադասեալսն ի բազմականն երանութեան համարձակեցայց, թէ ես և թէ նա հետեւեալ սովիմք: Որ զերծեալ ի բամբասանաց բանի մարդարէին, որ ի վէս ոմանս ակնարկի. մի յիս, ասէ, մերձենար. մաքուր եմ, և ոչ գիս տեսանիցէ: Այլ զանկշեհն խոնարհութիւն երջանկին Դաւթի ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին, ես իբրեւ զանասուն համարեցայ հերքեալ ի ղդայութենէ, և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան և փտեցան վէրք իմ ի յանզգամիս անբժշկութիւն, և զայլոց ոմանց ընտրելոց ի յաստուածատեաց՝ զկամաւորն կշտամբութիւն մեղապարտութեան անձանց անարատից. ընդ որս և զՅոզբի մեծի քահանայի զասելն՝ ես

ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զերեսս բառական իցեմ համբառնալ ի վեր առ քեզ աստուած:

Գ. Արդ ես ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զեմս խառնեալ ընդ նոցին պարտիս, և ի նոցայոցն զառ իս դառնութիւն կրկին առաւելեալ, նոքօք հեծեծեցից. թէպէտ և չէ ինչ պիտոյ գարշութեան գունոյ՝ գարձեալ տգեղութիւն: Ահա արդ մեղայ, զի անմտութեամբ գործեցի զոչ հաճոյսն քո բազմօք սխալեալ յանցաւորութեամբք, նայեա յիս, գթած, որպէս երբեմն յոտքացն ըմբռնեալ Պետրոս, զի յոյժ ունայնացայ: Լուսաւորեա ինձ զողորմութեանդ քո ճառագայթ, ամենեւին բարերարութիւն. զի ընկալեալ զօրհնութիւն քո, աեր, արդարացայց կեցից և մաքուր եղէց յանառեղծին քո իմոյ լկողաց: Զունիմ համարձակութիւն զմեղապարտ ձեռինս հաստուած առ քեզ տարածանել, մինչեւ մատուսցես զօրհնեալդ քո զաջ ի նորոգութիւն դատապարտելոյս: Արդ յաղթեա վերատին իմում յամառութեան քոյին հեզութեամբդ առ իս ժամանեալ մարդասիրապէս. և զամենայնն յամենայնի ամենայնիւ քո կարողութեամբդ՝ զառաջին չարիան միջնովքն և վերջնականօքն թող ինձ, հնարաւոր անհասից Քրիստոս թագաւոր լուսոյն արգարոց:

Դ· Զեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի վճռակար եմ բարեգործիդ մահու հարուածոց առ կնիքն, առ շնորհն, առ փրկումն, առ պարգեւն, առ աւանդն, առ ձիրն, առ անունն, առ որդեգրութիւնն, առ պատիւն արքայական, առ պատկերն, առ դրոշմն, առ օծումն, առ ճոխութիւնն, առ համարձակութիւնն, առ ընտանութիւնն, առ կեանսն, առ լոյսն, առ երանութիւնն, առ յոյսն, առ փառսն, առ անխոնարհելի բարձրութիւնն, առ պահն անկապտելի, առ խոստմունսն ծածկեցեալսն, որ քեւ տէր Քրիստոս, բաղմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս լիժիս և քարբիս՝ ոնկնախից և լսելափակ անլուր ականջացս· որ միշտ յառաւելութեան քումդ բարութեան յոքնապատիկ յաւէտ քան զսոյն չարիքն իմ յաճախեալ, ի սպառ կործանեցին, մերժեալ ի կենաց ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականութեան: Եւ արդ դու միայն իրաւակշիռ և ճշմարտադատ բարերար՝ օրհնեալդ ի գթութեան, մեղայ քեզ անօրինեցայ անիրաւեցայ· վասն որոյ և եղծայ զեղծայ յանցեալ ամբարշտեցայ· և ոչ լուայ խոստովանեալ և երկրպագեալ դովեալ քո բանիդ, որ դու իսկ երեւեցար անճառելեաւ քո սիրովդ, զոր դրեալն իսկ մեծ է, և նշանակելն սարսափելի: Քեզ արդարութիւն և

փառս և մշտնջենաւոր գովութիւն, և ինձ պատկառեցելոյս ի քէն, խնամակալ, քաւութիւն և ողորմութիւն և բժշկութիւն, օգնութիւն և պահպանութիւն սրտի և ոգւոյ. բարեբանեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԱ.

Վէրջին յաւելուած երկնաբնեան նորին հոգւոյ
առ նոյն աղէքս մաղթանաց բանի.
Ի ԽՈՏՈՐԴ ՊՐԿԻՉ ԽՕՏ ԸՆԴ ԱՕԳՈՒՆԵԱՅ:

Ա. Ա՛ւ արդ առ երկրածիւն ոք պաղատեցայց այս մահացու ամենապատիր, եթէ ընդունայն է ազաղակելն. առ մահկանացու բանական, եթէ սուտ իցէ փրկութիւնն առ յուսոյն վստահութիւն. առ մարդ ոք եղծական, եթէ ընդ ակարութեան բանին և նաւնիր է զօրութիւնն. առ իշխանս երկրաւոր դահից, եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն. առ եղբայր ոք հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անճինն անդորրութիւն. առ հայրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուազութեանն. առ մայրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան ղթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն. առ թագաւորութիւնս աշխարհի արդեօք, որք զմահացուցանելն միշտ արուեստաւորն քան զկենա-

գործելն. այլ առ քեզ բարերար աստուած օրհնեալ ՚ի բարձունս, որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի, որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել:

Ե. Ար եթէ փախնումք ՚ի քէն, դու զկնի ընթանաս. եթէ տկարանամք, զօրացուցանես. եթէ վրիպիմք, շաւիղ դիւրութեան ուղղես. եթէ պատկառիմք, քաջալերես. եթէ ախտանամք յանձն և ՚ի մարմին, բժշկես. եթէ գարշանամք մեղօք, մաքրես. եթէ ստեմք, քո ճշմարտութեամբդ արդարացուցանես. եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք, յերկինս վերացուցանես. եթէ ՚ի կամաց մերոց ոչ դառնամք, դու դարձուցանես. եթէ մեղանչեմք, ողբաս. եթէ արդարանամք, ժպտիս. եթէ օտարանամք, սգաս. եթէ մերձենամք, տօնես. եթէ տամք, ընդունիս. եթէ յամբանամք, երկայնամտես. եթէ մեք ժխտեմք, դու առատապէս շնորհեալ ընձեռես. եթէ լքանիմք, տրտմիս. եթէ արիանամք, խնդաս:

Զ. Որպէս հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնաբան հրաշալուրական զվհատելոյս զսիրտ սփոփէ, և մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեանն հանդէս. որ յաղթականն է դիւաց և տարակոյս բանսարկուին. որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաղդ պանծալի պաշտելափառ, անխոնարհելի բարձրութեամբ

լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեամբ կանգնեալ է ախոյեան անվանական և անշարժական ամենայնիւ յաւիտենական ընդդէմ անբարի բարուց բռնութեանն Նեղիապայ, որ ունի յինքեան զանձս հոգեւոր օգտից գիտողաց մտաց ընծայեալս զպարտուն մտհոլ և զլուծումն մեղաց, և յոյս կրկինս յերկուս յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութեան արդարոցն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուրս զրեալս հոգւովն աստուծոյ. որպէս ամենայն իսկ երդ սաղմոսացն մաքուր սրտից է տեսանելն կատակ կենաց մարդկան նկարեալ:

Գ. Ջի թէ ի նախնումն տկար կերպարանն զայս աւետիս և վստահութիւն ընդդողեալ ունէր՝ կործանման մտհոլ նախաժամն մեծ աւետարիր և կեանս երկնակրօնս վերնակենցաղս միշտ անճառելիս, և այն՝ ջնջական դիրն և յեղանակաւոր օրինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատութեան յանցաւորացն, և խափանելի կտակն երկրային, և տկար հաշտարարութիւն միջնորդացն, և թերութիւն բանից մաղթողացն: Որ դի թէ Մանասէի փրկութիւնն խոստովանելի է անտուտ վկայեալ յետ այնքանեայց մեղանաց անբժշկականաց. որ արեամբն արդարոց ելից գնութիւնն մեծի թագաւորին հրաշանուն

քաղաք Հայրենի. ըստ մարգարէական անսուտ պատմութեանն. որ և զմեծն իսկ տեսանողաց բաղմերախտիս ձեռնկալութեան խնամոզօրէնն պաշտպանութեան նախնական յարկին տեսչութեան, մանկավարժ ինքեան և նախնի, մեքենայիւ մահու սղոցեաց, ՚ի յերկուս մասունս խզեալ դժնդակ տանջանօք մարեաց, իբր խորհրդով ապստամբութեան գյուտոյն փրկանակ կորեալ: Ընդ որով դչար յաւելուածն մոլեգնական՝ գ.բրէական վերնամարտութիւնն ՚ի բարձրեալն յանդգնութիւն. քանզի ոչ պատկառեաց երբէք զաստեղծողին պատիւ և զանուն յիւրաբնակ խորանէն մերժել. հալածեալ զաստուծոյ հօղին, Քելիատոյ զանձն դաւանեաց: Քանզի զնոյն ատաճար սիրական խնկարկութեան հաստողին սահման՝ հռչակաւորն երկրի տեսարան՝ զատաւելիսն ազանց արբարան, ուր տեսիլք հրեշտակականք և աստուածայինն հրամանք յաղթողականք լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ երեւէին, զայն վայր երկնանման ատհաւոր սքանչելատես՝ Քեւանայ ումնին քահադիմակի նախանձարկու պատկերի աւերածոյն անապատի պաշտօնատեղ գարշելի և դիւահնձաձեր զոհարան պատրաստեալ կազմեաց: Ոչ րկեալ զարքայն երկնաւոր ՚ի յարքայականն կայից, զամենահարուածն՝ ունայն

'ի ստացուածոց իւրոց, զտանուտէրն՝ անհան-
դիստ և թափառական տատանեալ, Ո-
հեղբուղայ ձեղուն նկարեալ, և զանունն
ահեղ վտարանդի արարեալ. զերի տարեալ
զաւանդ գովելոյն, ողբալի զողորմածին ման
նուազեցուցեալ. աղուեսուն փոքու ապարանք
զբարձն լուսոյ կարգեալ, և բնաւից ունողին
և ոչ գլխոյն տաղաւար յիւրայոցն եդեալ.
հատեալ զցանկ հզօրին, բախտից հմայից
զեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման
երեւեցուցեալ: Ի այնեալ հետս բազումս ըն-
թացելոց 'ի գայթագղութիւն, հովիւ կորըս-
տեան հօտին սատակման, մոլորութեան բուռն
վարդապետ, և այն՝ գիտութեամբ կրօնիցն
օրինաց, հայր ունելով զմեծն Աղեկիա զնա-
նակիցն Դաւթի:

Ե· Ընդքան ստացեալ զամենս չարեաց,
որ և զաստուածոյ պատիւն՝ որ զարքայութեանն
փառս ընծայեաց նմա, հայհոյեալ և թշնա-
մանեալ, և զաղօթիկերացն բազմութիւն սու-
սերաւ մահու խողխողեալ: Ընտանի դաւա-
ճան, մերձաւոր վատնիչ, հարազատ սատա-
կիչ, կցորդակից սպանող: Ո՛ւ աստուած ոչ
դայր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զԱ-
բրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի
նմանէ. Իսահակաւ ոչ էր աղօթել, զի նը-
զովեալ էր 'ի նմանէ. Իսրայելիս ոչ էր պարծել,

զի տարագիր էր անուան կոչմանն մեծախոր-
հուրդն չնորհի. զգաւթեան երգ ոչ էր նը-
ւագել, զի կշտամբիչ էր նորին. ՚ի քաւարանն
ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. ՚ի տա-
պանակն աստուածագիծ ոչ էր ապաւինել,
զի ընդ գարշութեան ձուլածուին էր փոխա-
նակեալ. առ Մովսէս ոչ էր կարդալ, զի ան-
քաւելի էր պարտիքն որ առ նա. առ Ահարօն
ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա.
առ մերձաւոր մարդարէիցն գոնդ ոչ էր դի-
մել, զի սպանող էր նոցա: Ու նորա քաւու-
թիւն մեզաց, և արքայութիւն թագաւորու-
թեան վերստին պարգեւեալ տուաւ. զի քեզ,
բարերար, բազմացուացես կարգեսցես գովեստս
անճառս և անլռելիս ՚ի յաղգս տոհմից և ՚ի
դարս ժամանակաց, և զդուռն յուսոյն մնից
անփակելի պահեսցես ՚ի փառս քոյդ բար-
ձրութեան և ՚ի փրկութիւն դատապարտելոցս,
անմահութեանց պարգեւաց տուիչ Քրիս-
տոս, գովեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԲ·

Ա՛ջ ոտն յաւելաւած լինի հնձանդեան նորին հակառակ
առ նոյն ազբար մաղթանաց բանի.
՚ի նոցա սրտից իւրեանց ընդ Աստուածոյ:

Ա· Օրհնեալ արիաբար ՚ի քումդ էութեան,
անսահմանելի և անփոխադրելի իսկապէս բա-

բի, պաշտօն խնկելի և երջանկութիւն խոս-
տովանելի ամենայն երկրի, երկայն յուսոյ ա-
մենապատրաստ տեսութիւն, դիմած ողորմած,
որ ոչ պահես ինս բազմութեան ամաց մե-
ղանաց քթթել մի ականի, որ հրաշատուր
զարմանալիս դեր քան զամենայն ազնիս նախ-
նեացն անսահման առաւելութեամբ կրկին
ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութեան
վերնահոս վտակս ամենախնկաւորս ի հնոր-
հաբաշխութեանս նորում: Եւ զանտուստ ըզ-
մուտս լուսարանի պատուհանին անձկութեան
նշուղիցն աղօտականաց, չափով դիտութեանցն
ըստ Սողոմոնի, և իւր իսկ նմին և ինձ ընդ
նորին բացեր ընդարձակեցեր թշուառացելոյս
զառապատան անջպետարան ելիցն ողորմու-
թեան ձրի պարգեւացն աստուածականաց.
զոր ընդ մէջ իմն մանուածոյթ աւետաւոր յի-
շատակաց և ի հնումն զայսր տպաւորութիւն
օրինակաւ նկարագրեր, զդարձարուքն առ իս
և ես դառնամ առ ձեզ. և յորժամ զարձիս
և հառաչեսցես, յայնժամ կեցցես: Ահա դի
և զաղջամիջին սեւութիւն դունոյն վտխար-
կել ի ձեան սպայծառութիւն, և զարանցն
արեամբ նեռկելոցն յեղանակել ի պատահումն
զեղման, ըստ Եսայեայ և Ովսաբեայ, և ի
մէջ բարկութեանն դարձեալ զոյգ զողորմու-
թիւն. քանզի անապատանալ քաղաքացն

Իսրայէլի և գարձեալ բնակիլ, և ճանապարհայն առնել լինել ՚ի չգոյէ մնորդական և անդրէն հետեւիլ, և լքանիլ ՚ի առջին ոգւով և գարձեալ զօրանալ ձեռամբ, և գնալ առաւծոյ ՚ի տեղի իւր զայրացմամբ և գառնալ ողորմութեամբ, ըստ ներողութեան գելոն, և ՚ի մէջ սատիկն սպառնալեացն կրկին պաշտպանութիւն, և ՚ի սրտին խոռվութեան յուզումն խնամոց գթութեան:

Ե. Ա յս մարգարէիցն ձայն խնկելի, որ զօրհնեալդ քո գալստեան զաղաւարարդ հրամանն կանխաւ ազդէին, և զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւս արկանել վասն անբաւութեան, փոքունք են և նուազունք օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք առ աւետեացդ քո յայտնութիւն և խաչիդ փրկագործութիւն: Որ յամենայն վայրի կառուցեր զնորանն փկայութեան առեան քո ուխտի, որք մեծաբարբառ միշտ աղաղակեն քան զդաւաճինիք մահուն Տէրելի զյաղթանակ բարեաց քումդ հանդիսի, կեանս կրկինս և անմահականս շնորհաց, մկրտութեան, յարութեան, նորոգութեան, աւ քեզ ընտանութեան, ընդ հոգւոյդ սրբոյ միութեան, քաւութեան, ազատութեան, լուսաւորութեան, մշտնջենաւոր մնքրութեան, խակապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան,

անկապուտ փառաց. 'ի շրթունս մեր ձայնիւ բարձրելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք: Եւ զոր ահաւորն է ասել, կարգեմ աստանօր յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց, աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ Պօղոսի բանին, ոչ ունէր օրէնն: Այլ դու, փրկութիւն, եկիր հայրենիդ քո հաւրբստութեամբ, արարեր և կատարեցեր ըզյուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ անհամառօտելի, քաւիչ ամենայնի: Եւ քեզ փառք ընդ հօր քում 'ի գովեստ բարեբանութեան հոգւոյդ քո սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:



ԲԱՆ ԻԳ.

Վ ԷՐՈՒՆ յաւելուած լրկն հեթանոսական նոցին հաւուց
առ նոյն ասէրս հաղիանաց բանի.
Ի ԽՈՐՈՑ ԱՐԱՒՆ ԽՈՍ ԸՆԴ ԱՍՈՒԱԾՈՅ:

Ա ՏՀԸ տէր զօրութեանց, բոլորից դոյից թագաւոր, օրհնաբանեալ ողորմութիւն, աստուած ամենեցուն, որ յաղթես սահմանի յաւետատարած ընդարձակութեան, ամենայն անբաւութեանց դու ես ոչբանութիւն. մինչ դու կարծրն քեզ հնանուտ է, և լոյծն քեզ պնդակազմ, և չիք քո իր անհնարաւորական, յաղթող զօրութիւն ահեղ, հուրն ցօղ լինի է զովական, և անձրեւն բոց կիզանողական: Օ քարն բաւես ցուցանել կերպարան ազդման, և զբանականն դնես անխօս և անշունչ արձան: Օ պարտաւորն ողջեալ պատուական առնես, և զկարծեցեալն մաքուր՝ իրաւամբք քննեալ դատիս: Օ մատուցեալն ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ զուարթ տեսութեամբ օծեալ դարձուցանես: Կապնես զմահանեալն հաղթից դլորման, և զսասանեալն՝ ի վստահութիւն վիմիդ հաստատես: Օ ախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ կարգես, և զյուսաչատեալն դարձեալ անդրէն ի յոյս նահանջես: Եւ յորժամ սպառին առ ի մէնջ բարիքն, զա-

ուսել զարմանալեան յայնժամ ներգործեա. քանզի վասն քո գիտես թողուլ զմեզս և չնչել զանօրէնութիւնս, և քաւիչ լինել ա- նիրաւութեանց և զմեզս մեր ոչ յիշատակել, ըստ Եսայեայ և Երեմիայ:

Ե· Ակն առ հնարս նորոգ փրկութեանս բազմօք գոհաբանութեամբ հետեւեալ, ՚ի յա- ճախութիւն անբաւից լսեալ առ սմին խոկոյն կարկեցայ· քանզի կրկնեալ զուսոյդ անապատ բարիդ, որ ՚ի քէն առ իմ յամառս թշուա- ռութիւն, քոյին աղերսիւ առ քեզ մաղթե- ցից յարմարեալ դարձեալ ՚ի նիւթս բանիս զսուտ ողբերգութեան այսր մատնի, լից թախծութեամբք և հնծեծանօք: Ակն առեալ խառնեցից ՚ի տուողիդ հաճութիւն ընդ ցա- ւոցն զղեղն, ընդ վհատութեանն զխրախոյսն, ընդ յուսահատութեանն զյիշատակդ անուան հաստոցիդ, ընդ սխրութեանս զափսիանդ, ընդ խնամն զառնութեան զբազդատութիւն կե- նարարիդ, ընդ պատիժ օրինին զշնորհն, ընդ պարտս անհնչից զաղաւաւար օրհնութիւնդ, ընդ մարմնոյ մահուն զամենայնիւ նորոգու- թիւնդ:

Զ· Ճաւատամ հզօրիդ բանի, ուստի վկա- յեմ. լուր լռութեան սրտիս, տէր Յիսուս, որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար զոչելոյ: Որ մարմնակից և պատկե-

բակից մեր եղեալ, և քահանայապետապէս անօրինակդ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ զենման մահու անանունին՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ անմահապէս միշտ մատուցանիս, և աննուազաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն միայն, այլ և որոց հատեալ է ակնկալութիւն առ ելս կենաց: Ով որքան զօրէ մարմնոց անդամոց առ մեղս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունիցի յերկարաձգութիւն, յորժամ աստուածդ բոլորեցուն վասն սորին կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ ի քաւութիւն: Ով ոչ եթէ մարդութեանդ աղբիւր պարտական զոյ մահու յօրըստօրէ կատարիլն, այլ կամօք քովք՝ հոգւոյդ զործակցութեամբ՝ ի հաճութիւն հօր և ի մեր հաշտութիւն ցանկ մատուցանիս: Ցակ եթէ ամենիցդ աստուածանքնին՝ իմովս վասն իմ առ իմ փրկութիւն, ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան ես իցեմ մարմնով պարունակողեդ կցորդ միացեալ. և դու, բարերար, յաղագս իմ ի յիմն կերպի փոխանակեալ ընդ իմում պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ զմահապարտիս ճեռասուց պատուհաս, և ի յիմ անուն յանցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ, բազումն մեռեալ և մնաս կենդանի. ոչ ուրա-

ցողացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատով աստուածապէս նուիրեալ և ի մասունս անձ հատս բաշխեալ:

Գ· Ասէր ոմն ողբաւոր՝ չաւատալեացն պաշտօնատար. մեծ ինձ և անկշռելի առաքինի դատէր անյարմարագիր անձին յուսադիր, ճաւատամ զիտաս և զերջանկութիւն, քան թէ մարտիրոսութեամբ իսկ՝ թող թէ ուղղութեամբ իմն թշուառութեան յանցաւոր մարմնոյ վախճան ընդունել: Այսպէս զանճառութիւն խորհրդոյս այսու գիտեցի. դաւանէր իսկոյն, որ զի և մնքրոցն անձինք առանց նուիրման այսր յիշատակի չեւ են իսկապէս կատարեալք ի սպառ, եթէ ոչ ընդ այս հրաշակերտութիւն մեծութեան հոգւով խառնեսցին: Այսպա թէ մեղաւորիս մասին կրկին մատուցաք բաժին ասելով՝ յուսայր, իբրեւ այն թէ ես ինքն եղեր ճշմարտիւ, զբաւեալ զնմն դաժանութիւն ընդ քում հաղորդութեան, պատարագեալ քոյինանիւթ զանգուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ: Այսու ամենայնիւ ի վերնատանն նախանձուէր բարեշնորհութեան՝ անհնարաւոր ախտիցն ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց ի քաւութիւն, ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ. յուսոյս օրինակ յարգաւորութեամբ զրել զնս ի

փառս, այսմ փրկանօք հաւատալի երեւեցուցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ աստուածականիւդ առ մարդ զօրութիւն, և տիրական աստուածախառն



մարմնոյն կամաւորական նուիրումն առ աննահանջական սպանդին մատուցումն, և անմահն առ մահկանացուս, լոյսն ահաւոր առ աստուածայինս, յաւիտենականն քան զանցաւորս, բարձրեալն քան զերկրաւորս, անսահեղծն քան զեղականս, բարին իսկութեամբ քան զիւրեալս բնութեամբ, մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն, օրհնութեանն առիթ քան զանիծիցս պատճառ:

Ե· Ելոյ տուր խոցելոյս ի սիրտ և յոգի, աղաչեմ զքեզ, զաւ ի յերկնաւոր ընծայեալ զղեղդ կենաց, մատիր քաղցրութեամբ առ ախտացեալս մեղօք, քաւեա ի պար-

տեաց՝ ամենակատար բաւականութիւն: Իսկ առ ի յինէն այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից ի սուրբս բնակեա. և ըստ տարազու սերմանն և հնձելն է իրաւացի, ըստ ճշմարիտ բանին Պօղոսի, և աշխատացայն ի տալ արեւու ոչ է զօրութիւն: Այլ դու, բարերար հաստիչ յոչէից, յարդես յաւէտ իսկապէս համայն և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և դու միայն մնաս պայման աւետեաց համօրէն յանցաւորաց տարակուսելոց: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԴ.

Վէրսին յաւելուած լինի հեթանոսական նորին հակառակ նոյն ազգաց հաղնանաց բանի.
Ի խորոց սրտից իւոց ընդ Աստուածոյ:

Ա. Եւ արդ յամենայնի առ ամենայն ակընկալութիւն քո է ողորմութիւն, սկզբնակոյտ աչաց տեսանելեաց և սրտի խնամոյ Յիսուս, քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն: Դարձ առ իս զթութեամբ, և հանդերձեացս դառնալ առ քեզ ինձ կրկին քերկրութեամբ. զի առանց քոյ կամացդ ոչ

անիմ լինել նորոդ փոփոխական. և եթէ ոչ կամք քո գիտացին, ոչ զօրեմ փրկիլ մանոյ պարտականս. և եթէ ոչ կատարդ յարդարեացես պատրաստել ինձ հետս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խոցոց յաջմէ և յահեկէ:

Ն. Ընդ ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս, ոչ պանծամ զօրովեալս, ոչ խրոխտանամ լքեալս, ոչ մեծաբանեմ պատանձեալս, ոչ ըմբռատանամ ձաղեալս, ոչ երջանկանամ եղկելիս, ոչ արդարանամ ամբաստիչս: Զի ոչ երբէք հարէի ընդհանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ լինէ գործէ առանց մանձակալի, և ոչ երկուորեակք լծոյն ի ճահ ճեմեացին առանց եղողի, ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին և կամ գումարին առանց ժամանակին, ոչ արեգակն փոխաբերեալ ուր ընդհանակի առանց տարբական օդոյ, և ոչ ես նոքօք հանդերձ առանց բարեզործիդ հրամանաց ակնարկութեան: Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց և խնամիչ կարգաց հոլովմանն արարածոց, և ի քէն է ինձ փրկութիւն, քան սաղմոսողն. և դու ձայնես բարբառ խնդալից առեառաց հնչման յականջս լսելութեան ամենայն հասակի, Ակայք ի

հանդիսա իմ բնական աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ ի պարտեաց: Իսկ զինչ օգուտ ի լուացմանէն, եթէ կրկնակի զագրացայց. և կամ ո՞ր օգուտ ի ճաշակմանէն, եթէ զհենեին մատնեցայց: Եւ կամ զիա՞րդ Աբրահամ պարծեցայց խորհեցեալս ի գործոց նորին որպէս զարշաւեան հօր ամենեցուց, և մօր քեռացուց կամ քանանացուց, ըստ մարգարէին որ առ իս յանկատուր ձայնի. ժառանգս մերժելի եթովպացի և ոչ սենեկին Սառայի, ըստ տեսանողին առ իս առածի, եղբայրս Համմնի և կամ Գոմորայ, համբակս անլուացս և անաղելի խակակութ պորտոյն խակութեան Ողայ և Ղողիբայ, ըստ Եզեկիէլի կրկնանախատինս կշտամբութեան:

Գ. Եւ քանզի ի ծուխս բազմաստանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զգուեալ ուժ-



դին լիանօք ի սպառ տապնապմամբ ի ծովին, փոխեալ ընկեցեալ ի վտակն վայրենական ողողիչ. առ որս զմաստունս ձեռացս այսր

անդր տարաբերեալ, իբր ՚ի հոսանաց բռնու-
թեանց գարնանազայր գետոց, արտաձգեալ
յակամայ ընթացս ողորմալին գլորմանն, ջա-
կուլ ոգեսպառ պղտորարբուքեամբ, դաժա-
նահոտ սկախառն մամռարմատ խառնախուխ
մահաբեր երկամիջք վանեալ, ըստ որոց յուզ-
խիցն հեղեղեցեալ՝ հեղձուցեալ: Ա՛յսու առա-
կաւ և ես եղկելիս՝ խօսիմն և ոչ իմանամ,
գոչեմն և ոչ ինչ լսեմ, բարբառիմն և ոչ զարթ-
նանամ, հնչեմն և ոչ փոխադրիմ, փողեմն և
ոչ գումարիմ, վերաւորիմ և ոչ եւս ղգամ,
կռոցն գարշութեանն նմանեալ թափուր յաղղ-
մանէ բարեաց իմաստից: Ա՛րդարեւ չար
առաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ՝
ճշմարտութիւնս, առելի և մեղադրելի և
առնիմն Քրիստոսի արժանապէս մատնելի:

Դ· Ե՛ւ քանզի անդառնալի ուղւոյն յի-
շատակ առտեսցս պարտեայ զայս կտակ թո-
ղի որոց ընթեռնուն, իմովս բանիւ առ աս-
տուած կարդալ հանապազորդութեամբ, այս
կացցէ սահման յանձնառական խոստովա-
նութեամբ միանձնաւոր ձայնարկու առաջի
քո, ամենակալ· զոր դիւրդ ընդ մարմնոյս և
բանդ ընդ հոգւոյս զանսահմանելիդ միշտ թա-
խանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ըն-
կալեալ աղերս ՚ի յիմոյս ձայնէ, բարեգութ,
մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԵ.

Ա՛ջ տալն յաւելուած լինի հեծելութեան նոյնն հասկանալ
առ նոյն ասէրս հաղորդաց բանի.
Ի երից պրակ իօտ ընդ Աստուածոյ:

Ը. Եւ վասն զի սպասեալ ոգւոյս Թեւոք ի Թիւս անպատից ծննդոց մարդկան՝ եղի ի կշեռս իմանալեացս մտաց, ոչ գտի համեմատ զոք ինձ պարտաւոր. և առ այս զղաւթեան սաղմոսին զբանն ի յերդ ինձ առի գտան կշռամբութեան գաւազանաւոր գործաւար. ով յարիցէ ընդ իս ի չարիս հաւասարել յանօրէնութիւնս: Եւ քանզի այս բան ամին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր երաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ ի սպառ, քան իմոյս բանիւ բազմաց տապարիլ. Թերեւս սովիմբ առ այսու արդեօք և ինձ չնորհեացես, չնորհողիս զպարտիս իմոցն:

Ը. Եւ արդ զինչ քեզ տպերս հաճոյական ի յայսմ և ի սոյն, և ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից, գովեալ Թագաւոր երկնաւոր Քրիստոս, եթէ ոչ զառ ի յինէն անիծեալն օրհնել մաղթեմ, զկապեալն արձակել, զպատասպարեալն, բարեգործել զնզովեալն, պահել զիշամանեալն, ափոփել զարամեցեալն, դարմանել

զխորտակեալսն, խնամել զսարսուցեալսն, պատսպարել զնեղեալսն, զվիրաւորեալսն ՚ի մարմին՝ յոգի բժշկել: Եթէ օրհնութեան բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի՛ հայեցիս ընդունել, զթած: Ես տառապեալս ամենաթշուառ ՚ի վերջին սպասաւորութեան մաղթանաց այսր մատենի ՚ի բովանդակ մտաց հնորհեցի խոցն՝ փակեալ առ ՚ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաշուք ձայն. և դժնէից նենգողացն խոց՝ ընդ բարիան ՚ի բոլոր սրտէ հաշտութեան արդահատեցի. վասն որոց և ծունր պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա յայց եղեալ առաւել ողորմեացիս ըստ քոյդ մեծութեան, զովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկարիս, ամենակարդ՝ վարանելոյս, իմաստութեանդ աղբիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս: Քանզի յաւէտ սխալեալ անկայ իբրեւ զողոզակ մթայինն ոչ ընդելական ՚ի հաղս մահու անզգայապէս, չհմացայ ըզկորուստն, չգիտացի զորոգայթն, չտեսի զըմբռնող որսոյն ծածուկ մեքենայս, չկարծեցի զնաբուման կերպարանաց կեղծաւոր վարմին, չնկատեցի զդայթադղութիւնն շուրջանակի, չչօշափեցի զպատանդիչ զգանցարկ կարթին, ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին:

Գ. Հանդէ և որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ բարուք թուեցար, չար ասել զմահ առ չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ ի մովս բանիս. քանզի իբր զանզգայ պատճառս անատնոց մեռանիմք և ոչ զարհուրիմք, կորընչիմք և ոչ հիանամք, թաղեցեալ լինիմք և ոչ խոնարհիմք, տարագրիմք և ոչ տագնապիմք, եղծանիմք և ոչ գղջանամք, մաշիմք և ոչ մոառեմք, պակասիմք և ոչ պատրաստիմք, գնամք և ոչ զգուշանամք, գերիմք և ոչ եւս զգամք: Իսկ Հանդիսատ ասել երջանկին Յոբայ զվախճան մարդոյ, և ես խոստովանիմ զոյն ընդ սրբոյն, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան մահացու գործոց բառնաձեալ: Մանաւանդ զի որոգայթն գազանի և հնարադիւրն աներեւակի, տարր ժամանակիս յանդիման, անցեալն անյայտ և ապառնին կարծողական, ես անհամբեր և բնութիւն թերահաւատ, ոտք անհաստատք և միտք ցնդեալք, կիրք հարկաւորք և բարք անժուժկալք, մարմին մեզսամակարդ և յօժարութիւն երկրասէր, դիմամարտութիւն անկակից և խառնութիւն ներհակական, բնակութիւն կաւեղէն և անձրեւք ուժգնակիք, կարիք անթուելիք և պատահարք ամենագրաւք, միտք չարախնամք և տենչմունք բարիաւետացք, կեանք առօրեայք և զմբաղք սակաւաւորք, խաբմունք յիմարու-

թեան և խաղալիք տղայականք, աշխատու-
թիւնք ընդունայնք և վայելմունք երազականք,
համբարբ ոչնչից և պահեստ հողմոց, նման-
նութիւնք ստուերաց և կերպարանք ծիծա-
ղելիք: Զանգի իբրև եկն եհաս պատուիրանն,
ըստ պօղոսեան բանին, անդադարատ գտեալ
զիս ինքեան, մեղք կենդանացան յանդիման-
նեալ յարդարութեանցն, և ես մահացայ կե-
նացն և կենդանացայ կորստեանն:

Պ· Գողացան օտարքն, չարին գումարքն,
զատացուածս սրտիս խմաստից, ըստ զրոյն
կանխաբանութեան· որով եկն եհաս իսկոյն
ստանալ խմաստութեան ինձ նուազանալ,
ըստ առակողին, և առաւելուլ ոչ բարւոյ ցան-
կութիւն: Ոչ յառեցի զակն ոգւոյս ի գլուխն
իմ կենաց Քրիստոս որով ընդ ուղիղն հե-
տեւեցայց: Զանգի կամելով ուժգին ընթա-
նալ՝ ընկալայ սաստկապէս, յանչափն ձգտիլ՝
իմոյն ոչ հասի, ի մեծագոյնն ամբառնալ՝ աս-
տուստ գլորեցայ, յերկնայինն ուղւոյն անդնդոց
մատնեցայ, ի զգուշանալն առաւել՝ յաւէտ
գիտացեալ, յանարատն պահիլ՝ մանր խոր-
տակեցայ, կարծելով ընդ ահեակն մրցիլ՝ յաջն
գթեցի, ի գերկրորդն խուզիլ զնախնին կո-
րուսի, ի խնդիր սակաւոն՝ ի կարեւորացն
զրկեցայ· ի յուխտին պահել՝ դաշինն զրժեցի,
առ սովորութեանն կորիլ՝ կորուսիչս գտի, ի

փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ, զոր ես ինքն ինձէն ստեղծեալ՝ չարաչար դատախազ անձին կարզեցի: Յորոց փրկել զմատնեալ գերիս դու միայն զօրեացես, կենաց մատուցեալ զընծայեալս մահու գՀոգիս, դի դու միայն, տէր Յիսուս, ճանաչիս բարերար, անսահման փառօք ընդ Հօր և Հոգւոյդ սրբոյ օրՀնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԾԶ.

Ա՛էրպէն յաւելուած է հեթանոսական նոքին հաւատք առ նոյն աղբիւր հաղնանաց բանիւ.
Ե՛ Էրոց պրէյ Էօտ ընդ Ասուածոյ:

Ա. Իակ զառիթան մահու դիպուածս դժոխարժան ծառոյս դառնութեան պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դաւաճանողք, ստորագրեցելովք մատամբդ նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ:

Ր. Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպալուր, ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս անեղկիւղ, հետք խոտորնակ, շունչք ծխախառն, դնապք խաւարային, գոյութիւն լերդի վիմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմտութիւն սասանեալ, անձն

տարագիր, աւանդ վաճառեալ: Պատան վիրաւոր, թուչուն նետահար, փախստական քարաւիժ, ըմբռնեցեալ գիւտասպարտ, աւազակ ծովակուռ: Ջինուոր նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեզգացեալ: Աղօթական անխրախոյս, բժական ստոյնաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական անմուէր: Պալիր կշռամբեալ, իմաստակ խելագար, ճարտասան անճոռնի: Վերպ անպատկառ, դէմք անամօթ, երեսք ըմբշեալ, գոյն անհամբոյր, տիպ տմարդի, գեղ ծանակեալ: Խորտիկ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, այգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուռճահալ, մեղր ի մկանց ճարակեալ, անպատուական անկեալ: Անապարձ յուսահատ, անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ դոռոզ, անանձնօրէն ապիրատ, դժոխային ագահ, անեբաստան յանդուգն: Մոլեգնութիւն անաստուած, ձեռնաձգութիւն սպանող, տատասկացան երկրագործ, երջանկութիւն եղկելի, մեծութիւն վատթարեալ, վայելչութիւն անշքեալ, կարողութիւն տկարացեալ, բարձրութիւն խոնարհեալ, փառաւորութիւն ընդոստնեալ, պատուիրանազանցութիւն յարակայ, սխալանք ինքնակամ: Մատակարար կամակոր, խոր-

հրեղակից նենգաւոր, բարեկամ հատուածեալ, հազարապետ գողամիտ, մերձաւոր կծծի, բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ, ոգի անախտակիր, խղճք անսէր, բարք ատելոդ, աղիք անդիմակալք, գնացք անխոհեմ, անեղբեւոյթք ընտանալք, ծածուկք անիծեալք, դիպուածք թշնամանեալք: Վաճառական վաճառիչ, շահարար շուայտեալ, պաշտօնեայ արբեցող, գանձուց ոսոխական երկմիտ, պատգամաւոր բանսարկու, դռնապան քնէած, աղքատ հպարտ, մեծատուն ժխտող: Դիւանապետ անօրէն, պահապան մատնիչ, բնակակից չարախօս, սուրհանդակ անժամանց, թղթաբեր պարտաւոր, առաքեալ խոտվարար, միջնորդ անիմաստ: Ընքայ արտալած, թագաւոր թարմատար, կայսր ոգեկործան, իշխան տիրադաւ, զօրավար զրկող, դատաւոր ակնառու, ռամիկ ինքնագործ: Նախատողն ծաղր, սիրելոյ աշխար, բանագրի դարով, յանդիմանչի գատախազութիւն: Վասնզի և ի վեհագունիցդ կոչմանց էր ուրիք արդեօք զի էի, իսկ ի վատթարականացդ մատանց եկն երբեմն ևհաս զի եղէ: Ընդ այսքան ինաստակարութիւնք խարդախութեանց յաճախադունից, յորոց յոմանց խաբեցայ իբրեւ ըզյիմար, և յոմանց տիրեցայ իբրեւ զկար՝ կամաւ մատնեալ զիս ինքն մահու:

Գ· Արդ զմբա՛ ի վերագրելոցդ մասանց՝ քեզ առնելաց և իմ կորուսչաց՝ ի սպաս պաշտաման քեզ ընծայելոյ, զմբպիտիս ապականութեամբ պարագրեալ՝ ամենասուրբդ քո մեծութեան հանդէպ կացուցից, և կամ ոբքանեաք երկայնմտութեամբք համբերեսցես այսքանեաց պարտուց, ոբքան ներես, ոբպէս լռեսցես, զնաբդ իսկ անասցես, ըբ ոչ մատնեսցես հարուածոց գանից զարժանիս սատակման մահու: Արդ այսոցիկ աննշոյլ մըթութեանց հոգւոց խաւարի ողորմութեամբ լուսոյ քո պատահեսցես բժշկել քաւել և կենագործել, զօրեղութիւն անվթարելի. և քեզ փառք յաւիտեանի. ամէն:

ԲԱՆ ԾԲ·

Ա՛ԷՐՈՊՆ յա՛ԵԼԵ՛ԱՅ ԼՐԻՆ ՀԵՅՈՒՐԵԱՆ ՆՈՐՆ ՀՈՎՈՒՆ
ԱՐ ՆՈՅՆ ԱՂԷՐ ՀԱՂԻԱՆԱՑ ԲԱՆԻ.
Ն ԽՈՐՈՑ ԱՐԻՆ ԽՕՍ ԸՆԴ ՆՈՅՈՒՆ:

Ն· Քրիստոս աստուած անուն ահաւոր, մեծութեան տեսակ, անքնին բարձրութեան պատկեր, անսահման զօրութիւն, կերպարան փրկութեան լուսոյ, պաշտպան կենաց, դուռն արքայութեան վերնում հանգստեանն, ճանապարհ հանդարտութեան, ապաւինութիւն նորոգ և անխափան երանութեան, ամենակալ ինքնիշխանութիւն բոլոր էականութեան,

օրհնութեան կոչումն, աւետեաց ձայն, բերկրութեան բաղբաղ, անմահութեան դեղ, որդի անճառ աստուծոյ միոյ. որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհաս է, քեզ սահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպատոր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. որ ինձ յուսահատութեանն է, քեզ սիրելեաց է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվտանգելի է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան դրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մեայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրահերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ կենդանութեան զօրութեան ընդ ոչ դոյն համարեալ է:

Ր. Ա՛յլ դու ողորմած աստուած բոլորից տէր Յիսուս Քրիստոս, և այսմ զօրես առնելոյն հնար՝ եթէ զթասցիս. վասն անուան

փառաց մեծութեան Հօր քոյ օրհնելոյ, վասն կամաց զթութեան ոգւոյդ քոյ սրբոյ, տես ի տաժանատուրս կրից յանդիմանական յայտնութիւն, և ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութիւն. նայեա ի բնութեանս ամենապատաղ խակութիւն, և պարգեւեա բժշկութիւն վիրացս և հնարաւորութիւն կորըստեանս, զերծումն բազմամանեայ մահուս և շափիղ կենաց ապականելոյս, նորոգութիւն եղծմանս և մուտք յուսոյ ամբարշտելոյս։ Եթէ ես զաննմանն ինձ կամս ցուցի, օրշափ առաւել դու զբնաւորականաղ քո զբնտանի բարերարութիւնդ. եթէ ի փշոց պտուղ բնծայեցաք քաղցրութեան, օրշափ առաւել ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես իմոց առելեաց ողորմութիւն մաղթեցի, դու քոյոյս զիաւրդ ոչ կրկին մատուցես, հզօր, յանենուադդ առատութենէ։

Գ. Ընդ տես ի քոյդ մեծութիւն, բարձրեալ, նայեցեալ ի յիմն փոքրկութիւն. բնկալ զաչաւ խոստովանութիւնս անհամար մեղացս, որ զբնաւն համայն տեսանես. և որպէս զվիմին զթել ոչ զրեցեր, և զաւազոյս փորս սասանել մի համարեացիս. և իբրեւ զվաւթին՝ ընդ մեղայն անել՝ իսկոյն անցուցեր զպատիժ պարտուցն, և առ իմ ձայնիս հնծութիւն զնոյն զործեացես, երկայնմտու-

թիւն. որ տաս ամենեցուն առատապէս ա-
նաչառութեամբ որպէս յաղթող բարի բազ-
միմաստ, և ոչ նախատես գլեանալ ստրուկս
որպէս ողորմած և ամենատեղեակ. տապալիր
վերատին. և մի՛ կորուսաներ զբուժեալս ար-
եամբ քո և զբուժեալս ստեամբ քո, զի ած:
Ովի քո է փրկութիւն, և՛ քէն է քաւու-
թիւն, և քեզ վայելէ փառք յամենայնի յա-
ւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԸ.

Ալէլուիա յաւելուած երից հնգամբիւրեան ոչխարն հալոյ
առ նոյն ալէքս հաղթանապ բանի.
Ի խորոց սրտից խոստ ընդ Աստուածոյ:

Ա. Օրհնեալ տէր Յիսուս ընդ հօր, և՛
կամն հաճութեան հոգւոյդ քո սրբոյ. և օրհ-
նեալք ամենայն առ՛ի յօրհնելոյդ օրհնեցան.
օրհնեալ միայն որդի օրհնելոյ. չիք իմ թա-
գաւոր իշխեցող շնչոյս բաց՛ի քէն, Քրիս-
տոս: Այս է օրհնութիւն Յակոբայ, ասէ
Աստի, յորժամ բարձից զմեզս նորա:

Ռ. Ընդ ողորմեաց ինձ, տէր բարեգութ,
ըստ նախնիդ քո սովորութեան, և օրհնեա
զանօթս քո բանական, ըստ ձայնին Դաւթի
և ըստ Մովսէսի. զի բանիւդ քո փրկութեան
ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ
՛ի քէն: Աստուածապէս ինձ հրաշագործեա,

ողորմած աչքդ երկնաւոր, որպէս անկելոցն ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոցն ի սրահին Ղեթհեղդայ: Զորոց մի էր և կրկին Թերահաւասն՝ երից տասանց և ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում ոչ անխայեցեր զբժշկութեանն ձեռնտուութիւն, իբր գիտելով զանբոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան դառն գիշերին տիրամարտութեան՝ երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ: Որ թէպէտ և կանխաւ իմն զդուշացուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկնեացին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբուրելի դատողացն զքեզ ի խաչին: Եւ դու այնպիսւոյ անչարիր չատուկ մահու ծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անճառ բարութիւն, սխրալի մարդասիրութիւն, սարսափելի ներողութիւն, սոսկալի երկայնմտութիւն, անբաւելի քաղցրութիւն, փառատրելի հեզութիւն: Որ միշտ յաղթիս ի զթութենէ և ոչ թշնամանիս, պարտիս յողորմութենէ և ոչ պարսաւիս, բռնադատիս ի մարդասիրութենէ և ոչ անգոսնիս, հարկիս ի բարութենէ և ոչ հայհոյիս, ստիպիս ի սիրոյ և ոչ բամբասիս: Պաղատիս զարձին իմ առ քեզ և ոչ ձանձրանաս, արագես զկնի ապերասանիս և ոչ լքանիս, ձայնես չառղիս և

ոչ սրտմտիս, փութաս մեղկելոյս և ոչ խա-
փանիս: Ու չարս ես բարի, առ ամենապարտս
ես ներող, առ մեղաւորս ես քաւիչ, առ խա-
ւարեալս ես լոյս, առ մահացեալս ես կեանք:

Գ. Ա յս են պիղծք ամենայն հոգեշունչ օդ-
տակարութեան, որ յառնիս ծնանին երկ-
նաւոր պտուղս անճառս և զարմանալիս: Ա յս
և ինձ թիշատացելումն, օրհնեալ ամենա-
պարգեւ, արի առ զմահիճս խշտեացդ մեղաց
'ի վայր կործանմանդ, և հետեւեալ ժամանեա
յանդորր հանգիստ անաշխատ կենաց: Խղես-
ցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի
զերիզամնդեալ մահաղեաստս պարիսակութիւն
զժոխամնեայ կապանացս, և լոյծ ինձ զհան-
գոյցս խեղդողականս ոգեպահանջ սատկու-
թեանս, առաքելով զարժանաւորս մահու յա-
զատութիւնն վերին անանց բերկրութեանն,
կենսաբեր և աստուածային քո բանիդ: Մ ի
տակաւ տակաւ ազդեացես, և մի օր 'ի յօր
յերկարաձգեացես, զի մի առաւար ծանրու-
թիւն բեռանցս մեղաց սիրեցեալ թիկանցս
ազդերաց, և կործանեալ զիս կորացուսցէ
հայել 'ի զժոխս, և ուժգնակի զոռոզ բըռ-
նութեամբ անպարտալ հոգեւորական զինուն
արարեալ՝ մահու ծառայեցուսցէ: Ա յլ օգնեա
ինձ, բարի վշտակից հեծութեան կարեացս
մահու երկանց, առեալ յինէն զփայտ սա-

տակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին. որով կառուցես զվայելչականն յաղթանակի արի զօրութեան, սնդապէս հաւատով յուսոյն կարծրութեան ընդ քեզ բեւեռել անասպիսելի: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԾԹ.

Ա էջոյն յաւելուած լուին հնձողիկան նոյն հոլոչ
առ նոյն աղէքս հաղնանոց բանի.
Ի խորոց սրտից իսոփ ընդ Աստուածոյ:

Ե. Հաւատամ և վկայեմ մտաց գիտութեամբ՝ ի քէն ազդեցեալ ոգւոյս իմաստից աշխատ տեսանն, զի ըզձալի են քեզ, բարերար, աղաչանք մեղաւորաց քան զնդրուածս արդարոց: Օգի միոն զգաստութիւն անձինն յայտնեալ՝ հնարիվք քո ապաւէ, առ որ ծանուցեալ զնութեանս չափ, և մեծ կշռամբ բիչ ատեն համբարձեալ ինքնագոր մարտակից նմին իսկ ինքեան և դառն դարմիչ և ծանկատես դատախազ: Իսկ միոն յարդիւնս բարեացն իւրոց նայելով, յանձին հարեալ ձեռն վատահութեան, մոռանայ զահմանն բնութեանն, և պարգեւաց քան ողորմութեան դիտեալ ակն ունի: Վ ասն որոյ առ միոն անթիւ են առեղծուածք ճառից, որք զողորմութեանցդ քո փողով բարբառոյ ազգին. իսկ

առ միւսն լռեալ են քոյդ, անքնին ահաւոր և ամենահնամ, ամաչեմ ասել՝ թէ և երկրաւորիս գործոց պատմութիւն գքոյդ յառաջեալ: Ընդ արի տէր, և մի զօրասցի քան գքոյդ ալ Հողեղինի. մի կշռեսցին ողորմութիւնք քո ընդ չանից մարդկան:

Ե. Եւ արդ առաղչքն անզամոք անկարօտք են բժշկութեան, և տեսանողականքն աչօք չունին պէտս առաջնորդի, և փարթամքն ընչիք ոչ դեղերին առ դուրս լեցին, և ամենայնիւ յղփացեալքն ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի, և սուրբքն վարուք ապէնիազ են ողորմութեան: Եւ արդ ինձ գթասիրս ողորմել, բարձրեալ երկնաւոր հզօր, ամենաախտուր վարանեցելոյս: Վասնզի թէ էի իրրեւ զՅոբ, ասէի զանձն իմ իրրեւ զնա արդար և անարատ. թէ էի իրրեւ զՄովսէս, ասէի վստահութեամբ զնորայն, ծանիցէ տէր զայնոսիկ որ իւրն են. թէ էի իրրեւ զԴաւիթ, ասէի՝ արարի զիրաւունս և զարդարութիւն, և դարձեալ զմեծն քան զընտութիւն մարմնոյ, զմեղս թէ տեսանէի ՚ի սրտի իմում, մի լուիցէ ինձ տէր. թէ էի իրրեւ զՂեւիա, ասէի զանձն իմ այր աստուածոյ. թէ էի իրրեւ զԵրեմիայ, գքոյդ ճշմարտութիւն յանձն օրինակէի. թէ էի իրրեւ զՂեկիայ, պարծէի զբարւոքն և զիբաւացին՝ գնացի առաջի քո արդարութեամբ.

Թէ էի իբրեւ զՊօղոս, ասէի զնա բնակարան աղաւարան և ընդունարան աստուածոյ բանին: Այլ ես անօրէնս՝ ի մէջ դիտութեան օրինացն. ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարդանօք բանից իբրեւ զնոսա, և զբնաւին չարս որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշատակել, այլ և ոչ զամենեսեան գոյից ընդարեհոչակեալ անունդ հզօր ամբարշտեալս եղուամբ գովել: Այսք դու առ ամենայն հնարս օրաւուր՝ մատոյ ինձ ոգի փրկութեան, աչք պաշտպանութեան, ձեռն այցելութեան, հրամանն բարութեան, լոյս ողորմութեան, բան ներողութեան, պատճառ քաւութեան, դաւազան կենաց օգնութեան: Ի դու ես յոյս ապաւինութեան, աէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Կ·

Ա՛ջորին յաւելաւ լալն հեծելեան նոցին հալոչ
առ նոյն աղէտս հասեալսդ բանի.
Ի խորոց սրտիկ խօսէ ընդ Աստուածոյ:

Ը· Աւ արդ որպէս զի ոչ վայելէ օրհնաբանութիւն՝ ի բերան մեղաւորի՝ ի ձշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, զիարդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատիկս, որ հանապազ ընդունիմ անէծս՝ ի

սաղմոսիս բարեբաստութեան: Ոչ իբր երեցից ինձ վտանգս և արձանացուցից նախատինս, և՝ ի մերկութեանս զրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից. զնաիրդ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զաստամնս մե-



զաւորաց փշրեցես. զնաիրդ զարձեալ, թէ մի անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց. զնաիրդ, թէ դատ արա ինձ տէր ըստ արդարութեան քո, ըստ ամբծութեան իմոյ որ յիս. զնաիրդ, թէ կատարեսցին չարիք՝ ի վերայ մեզաւորաց. զնաիրդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և դայն որ զկնի. զնաիրդ, թէ տեղասցէ՝ ի վերայ մեզաւորաց որոգայթ հուր և ծծումբ. զնաիրդ, թէ սատակէ տէր զղջմունս նենդաւորս և զնեղուս մեծամանս. զնաիրդ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ոչ գտեր անիրաւութիւն. զնաիրդ զյաջորդն ամին, թէ

ես պահեցի զՀանապարհս խիստս. զի՞րդ զնա, թէ ես արդարութեամբ երեւեցայց երեսաց քոց. զի՞րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա. զի՞րդ զմիւսն, թէ Հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում և ըստ սրբութեան ձեռաց իմոց. զի՞րդ անձամբ ինձէն զատութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյն, թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ. զի՞րդ ՚ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս բամբասեցից. զի՞րդ զերջանկին պարծանս թշուառացելոյն կերպասորեցից, թէ դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում դնացի. զի՞րդ օտարս ՚ի բարեաց՝ զիտողիդ գաղտնեաց արդահատեցից, թէ մի՛ համարիր ընդ ամբարիշտս զանձն իմ. զի՞րդ ես ինքն զոլով զայլս անիծեցից, թէ տուր նոցա տէր զգործս նոցա, և ՚ի կարդ բանիցն համարձակեցայց:

Ն. Քանզի թէ զյեսայինս բանիցն առաջնովքն աստանօր եղից, կրկին ծանրանան ինձ ցաւք և յաճախեացեն դառնութիւնք: Նայց ՚ի շեղջեցելոցն արտաստաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացայց հանապազորդեան յանդիմանութեամբ սաղմոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ. առ որս և սպառնացած քառասներորդի հինգերորդի հատուածի բանի յանդիմանողն զիս գարշե-

ցուցեալ, Հանապազ խոյտառակէ. խցեալ զբերանս ՚ի փառաբանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ, աստուածային ձայնիւն դատապաղեալ, յակնկալութենէ կենաց լքանէ, միանգամայն և վերջս մահու ինձ իբր ՚ի պատնէշ առաքէ: Զանգի թէ չար է անէծս առնուլ յօտարէ, ապա անձամբ զանձն անիծանել կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ նախատինք ՚ի մերձաւորաց օրէնք են, ապա ՚ի տեսողէն հայել զայսոսիկ, կրից արեան տաժանմունք, վիշտք աղէտից և խէթք մտաց: Գայց թէ առ խոնարհութեան անձին իւրում մատնեսցի, ջնջել և կշտամբել անիծիւք ՚ի լեզուէ իւրմէ, ՚ի խոստովանել և յամենիշխանն շրթանց բերանոյ վերնոյն օրհնեսցի. զի ճշդրտեալ թարգմանեաց դղարձն իւր առնա՝ գՀետս կենաց ոչ լքանելով. սահմանաւն սիրոյ զպարտեացն արմատ կրճատեաց, ոչ տիրեալ ՚ի խարդաւանաց չարաբանողաց. ոչխար հօտին Քրիստոսի դառ բժշկեալ՝ դիմելով ՚ի յաղն բուժիչ աղեացն արկածից: Գայց եւս անբանական բարոյից է՝ առնն կենդանեաց ՚ի մէջ դալարոց ծաղկածին վայրից կենաձիր բանից թմբրութեամբ մտաց ՚ի յարօտս մահու ճարակել:

Գ. Ընդ արդ քանզի իմ է առակս վերջին կշտամբողական, և առ ի սկսարկէ զդիպուա-

ծոցն չար պատահմունս, որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս կիզանողականս հրոյ տոչորման, հոսեալ ՚ի յերկինս ստ զդոյիս գա- գաթանս խմաստնարանի բազմակիս: Զանգի դիա՞րդ ՚ի յարդիւնս ինձ օգտից սաղմոն ե- կեսցէ, յորժամ անպտուղ ՚ի բաղմերգութենէն լինիցիմ, ոչ նուագել հոգւով, ըստ Թելադրե- ղին Պօղոսի· զիա՞րդ ընդ մարգարէին եւս զտէրունին խառնեցից մեծս մեղաւորաց՝ նկունս պիտանեաց, ասել ընդ սրբոյն, Թէ ՚ի բաց կացէք յինէն ամենեքեան որ գործէք զա- նօրէնութիւն. զիա՞րդ ոչ ունելով ՚ի բազմացն պատուիրանաց կատարեալ՝ ընդորինն եւ օրինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ ինքն արար զոր մեզ կանոնեաց, Թէ քանզի ծառայս քո պահեցի զայս, եւ որ զհետն գան ասացեալքն. զիա՞րդ Թափուրս ՚ի լսութենէ իմաստից կե- նաց ընդ երկիւղածս տեառն օրհնեցից· զիա՞րդ ընդ մեծին մաղթանաց զիմն յօդեցից· Թէ զմին խնդրեցի ՚ի տեառնէ՝ զտեսիլ վայելչու- թեան նորա եւ զհրամանատարութիւն տաճարի նորա· զիա՞րդ ՚ի հրաժարելին ինձ ձեռնա- միեցից, յորժամ լսեմ, Թէ ուղղոց վայելէ օրհնութիւն· զիա՞րդ շրթամբք իմովք զանձն իմ անիծից՝ ասելով զինի յոլովից առեալն, Թէ երեսք տեառն ՚ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա յերկրէ· զիա՞րդ

զմիւսն դարձեալ, Թէ չարք վաղվաղակի սատակեսցին. զիա՞րդ զկերպարանացն իմ նմանութիւն, Թէ բազուկք ամբարշտաց խորտակեսցին. զիա՞րդ սատակմանն ինձ պաղատեցայց, Թէ ահա մեղաւորք կորիցեն. զիա՞րդ զբազմայածեան լեզուս 'ի յօրհնեալն բան միեցից, Թէ ասացի պահել զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով. զիա՞րդ փշով մեղաց հեղձեալս զանարատին պարծեցայց, Թէ այլ զիս յանդգնութեան իմում ընկալար. զիա՞րդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր ըզհանգուցեալիցն զարուեցից ապրել 'ի նոցունց, Թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս աստուած:

Դ. Զիա՞րդ իբր ոչ կռապաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ Դաւթի, միթէ մոռացեա՞լ իցէ մեր զանուն աստուծոյ, կամ ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց. քանզի որ 'ի մեղս գարշութեան խոնարհեսցի, առաջի կայ նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն յաւանականացն ախտարծարծիչն պոռնկապատիր պատկերացն կերպարան՝ Ստարտայ և Բամովայ և Մեղքոմայ արուարձանի և Թարահատայ Թարմատարի, ընդ զազրոտեացն կանացեաց՝ իշանդամիցն պատկառանք անվերարկու ծանակութիւնք: Իբր ոչ պատկա-

ռեցից սովիմբ ասել ընդ նահատակին, որ զայս դիմագրաւութիւն առ բարին ունէր միշտ, թէ վասն քո մեռանիմք զօրհանապազ, և որ ՚ի կարգին է սորին սաղմոս: Ի՞ր յիմարս յարս և վատթարս ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեացէ զիմաստութիւն և սիրտս զհանճարբեր մարդելոյդ կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից· բեր զկրկին երկրորդեալն մեծանունն բարութիւնս, թէ հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց: Օ՞իա՞րդ ունողս անբաւից մեղաց զարդարոյն առեալ կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք, առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ· զիա՞րդ զիս ինքն մատնեցից կորստեան յասելն զայս բան, թէ մի ողորմիր դործողացն զանօրէնութիւն· զիա՞րդ, թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց աստուծոյ· զիա՞րդ զրպեալս ապականացու փափկութեամբ՝ սահմանեցից զանմանն ինձ բան, թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ, և զաղգակիցս նորին ընդ նոյն, թէ ես ՚ի նեղել նոցա քուրձ զգենուի, և իբրեւ զսգաւոր և զտրտում խոնարհ առնէի: Ո՞րպէս հանդարտեցից զնմանեսացն իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեանն աստուծոյ ոչ սպառեացի, և արբցեն ՚ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի·

իբրեւ զեւան առ սմին, թէ զամենայն եղջիւր
մեղաւորաց փշրեացես: Զի՞րդ զապերախ-
տութիւնն Յակոբայ ՚ի ճառ առեալ հեգնեցից,
որ ընդ ստուերին զՀշմարտութիւնն ընկալեալ,
մոռացայ ընդ Նոսին Նոցին թերութեամբ զե-
րախտիսն Քրիստոսի աստուածայնով քն ար-
ուեստիւք խաչին փրկանօք, քան նոքա զղօ-
րավարութիւնն Մովսէսի ցպոյն սքանչելեօք,



որ զօրինակն նկարագրէր սէրունական տնտե-
սութեանն: Զի՞րդ զյարուցելոյն ՚ի վերայ
դիւաց զաղէտս ցուցից, իբր նոքա զօտարա-
ցեղից խուժադուժ ազգացն ասելով, թէ ար-
կին զդիակունս բարեացն որ ՚ի մեզ՝ կու
ՀԱստուածարացն Թուխցին, այս է՝ այսոցն օ-
դայնոց. Որպէս զանկեալ զաբրմն բանին ՚ի
Ճանապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ
չարին՝ սուրբ անուանեցից. իբրեւ զնմանակից

առ ի նոյն շահիլ չարին պատերազմի՝ դու-
պար գաղտնամարտ մոռացս օգտելոց, զոր ևս
զօրացուցի զործակցեալ հնարից բանսարկուին։
Եւ ոչ ունիմ աղերսել, թէ մի լսեր և մի
դատարեր, աստուած. և խորհեցան ի վերայ
սրբոց քոց և ասացին, զոր ի կարգէ սաղմոսիս
է աղօթել։ Քանզի յոյժ պատեհագոյն է
առնուլ զայսոսիկ ի վերայ բռնութեան մո-
լեկան դիւաց միշտ ձակատելոց առ ներկայիս
խռովութիւն, և ընդ նոսին նոցին մշակաց։

Ե· Զորոց դու, տէր Քրիստոս որդի բար-
ձրեալ մեծիդ աստուծոյ, պահեցեր և ամրա-
ցուցեր երկնային զօրուդ շքեղափակութեամբ՝
յամենայն ընթացից խարդոյն հողմոց խաչիդ
լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ դի թէ և զբա-
ցին յիս անօրէնութիւնք բազմօրինակք, այլ
ոչ հայհոյութիւնք։ Որ ոչ հանգեաւ ի կո-
րուստ նմանեցայն իմոց ամբարշտելոց, այլ ա-
մենազորով թախանձմամբ ընդ եղծման ջրո-
ղոյն զաղբատզործս կրկին վշտացար, տաղտ-
կալի զմեհու նոցա դիպուածն քեզ զրեցեր,
ասելով զղարմանալին լսողաց բան, ածեալ
զմտաւ ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն
գործոց մարդկան։ Եւ միխիթարիս մեծ իմն
պարարեալ ընդ կեանս անմաքրից և պար-
տաւորաց սատակման. որ երբեմն առակաւ
դիմենտոյն զանխայեղն ի կործանելիան ցուցեր,

ողորմած, և առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վառանդեալ ընդ յամրանալ անձրեւին առ ուրացողացն դարման: Ընճառելիս ցուցեր բարեմիեան տեսակս յիշատակաց ծննելիս՝ ի վերջին աւուրս. քեւ ի ձեռն առաքելոց քոց՝ ողջոյնս հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր: Ահա և յիս ցօղեա կենդանի գՀայրենի գթութեանցդ զսէր, զի և ես փրկեցայց քառեալ ամենառատ քո այցելութեամբդ: Եւ քեզ ընդ Հօր Հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԱ.

Ա՛ՀԲՈՒՆ յաւելոած լինին հեթանոսիան նոքին հալոչք առ նոյն ապէքս Տաղիանոյ բանիւ.
Ի ԵՐԵՍ ՕՐԻՆԷ ՅՈՎՍ ԸՆԴ ԱՍՊՈՒԱԾՈՅ:

Ե՛Ս ընդհէր է ինձ բնաւն որ ի սաղմոսին այնպիսեաց բանիցն ի կիր արկանել, որ ի նախատինս միանդամայն և ի նզովս ինձ յարակայիս, հանապազ երդել իմովս տաւղօք: Վանդի զիա՞րդ արդեօք զլուք երջանկին ինձ դաւթապարտելոյս նմանեցուսից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեան սրտիւ: Ո՞իարդ զկարդադրութիւնս տանցն ի յայսմանէ գինի թուելոցն զարհուրեցուցանէ ընդակից կայից կանոնաց օրինաւորին՝ գինաւորին և թադաւորին և մարմնական հրա-

մանատուին, որք և երկնայնոցն են համբու-
բելիք ասելով, ոչ յուսահատ եղէց ՚ի կենաց
պատմողս աւետեացս և նորոյս աշակերտս ան-
մահն յամենատես բարեկարգութենէ: Օ՛է-
ա՛րդ ըստ իրաւախորհ արդարոյն, ընդդէմ
մեղաւորացն մահու ղենեցայց առաքաւ ա-
ռաւօտին ՚ի սկիզբն արքունութենէն միշտ
պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամն
մարմնոյս զանեալ խրատեցի. զի՛արդ մաս-
նակցեալ մեծին արուեստն՝ անտակեցից ՚ի
քաղաքի տեառն զանօրինեալսն, որ և ոչ ըզ-
բուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի: Օ՛իարդ
առեցից զրողին չեւ յայտնելոցն, թէ զմեռեալ
որպէս հայց կերայ. զի՛արդ, որ ոչ միացուցի
յիմոցս կրից կաթիլ մի պղտոր ընդ յատակ
արտօսր աղբերց երդողին՝ ասեմ ընդ նմին,
թէ զմնալելիս իմ արտասուօք խառնեցի, և
արտասուօք իմովք զանկողինս իմն թացի:
Օ՛րս ինձ զրեցից մեղօք մահացեալս, յոր-
ժամ սիրողն աստուծոյ ՚ի բոլոր սրտէ ըզ-
յանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ
մեզաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և
յանցեաք, և որ ՚ի վախճանն յանդի սաղմս
իրաւամբք առ իս, քան առ Խորայէլ: Զրո՛մբ
յարդեցայց դասիլ ընդ բարիսն, յորժամ
մարդկային հնարիցն այս դեղ պատուեցաւ՝ որ
ոչ յիս գտաւ, ՚ի զարշութենէ կերակրոյ ՚ի

մահ սովիցեալք և յաճախութենէ ճգանց հոգւոց նուաղեալք, ըստ խորութեան ինքնօրէն կրծնից հրէից և հեթանոսաց: Օ՞չ արդարութիւն իմ մնայ յաւիտեանս, զոր ոչ քնաւ իսկ կատարեցի:

Ր. Եւ զի մի տագնակացայց յամեալ 'ի բանիս. 'ի համառօտել զոյն փութացայց: Օ՞չ ունիմ ասել 'ի տեղի բանիցն՝ զոր աստուածաշունչ ձայնն նուագեաց օրհներգուն Դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. զիաւրդ ընդ սմին զմեծն քան զայս, թէ յաւիտեան ճանապարհէ չարեաց արգելի զոտս իմ. ի՞ր ընդ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի սրտի իմում թաքուցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ: Որպէս զունայնութեանցն իր զլուծեանց ճառեցից ընդ պարս մատրոց թէ 'ի պատուիրանաց քոց խմացեալ, ատեցի զամենայն ճանապարհս չարաց: Օ՞չ զհեզոյն ճշմարտութիւն իմում ատութեան միանձնական երդմնահարութիւն կարպեցից ուխտեալ ընդ հաւատարմին, երդուայ զոր հաստատեցի պահել զպատուականս արդարութեան քոյ: Օ՞չ ինձ հրնշտակ մահագոյժ անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից թէ հեռի է 'ի մեղաւորաց փրկութիւն: Օ՞չ չարս իսկապէս՝ զբարեացն զրեցից՝ որք 'ի տեառնէ առնուն զնոյն հա-

տուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց սրտից: Օ՜հա՛րդ զհամառօան փոխատրութիւն անաչառութեան՝ վսեմպեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթիւրեալսն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Օ՜հա՛րդ զաստուածաշունչսն պանծանս ամաչեցելոյս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին աստուածալքն: Օ՜հա՛րդ զանճառն քան զմարմին բան՝ ի ցոյց առից քաջալերութեան վկայելոց ես զանձ զնհնեին, ասել ընդ օձեալն աստուծոյ հոգւովն, թէ յատաջադոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն ի լեզուի իմում, ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսիս մինչեւ ի լրումն աւարտման բանիս: Օ՜հա՛րդ դասակցութեան գժնեից՝ մարդոց համարան այրս մահու և որդիս սատակման բարբառիմ զբարեհնորհին, ո՛չ ահա զատելիս քո տէր ատեցի, և զմնացուածն սորին կարդի: Օ՜հա՛րդ մեծաւն վըստահութեամբ ոտնկնի վնհին, անձն իմ և դու աշխար աշխարհի, զանդատ քո ոդի յատաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պատկերին, թէ փորձեա զիս տէր և տես, թէ իցե՛ն անօրէնութիւնք ի ձեռս իմ, և դյաւելուածն որ զհետ սորին: Օ՜հա՛րդ ես դոլով և յայլոց

աղօթեմ ասպել՝ յուսացելոցն յաստուած ձայնակցեալ, պահեա զիս տէր ՚ի ձեռաց մեղաւորի և ՚ի մարդոյ չարէ: Օվա՞րդ համբարձայդ ընդ փառաւորեալն մաղթել աստուծոյ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց: Օվա՞րդ իբր հանդիսացեալ ընդ ճղնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով զառաւելեալն քան զօրինակ աղերս աղօթից, թէ ինձ սպասեցեն արդարք քո մինչեւ հատուցես ինձ:

Գ. Նարեքանեալ է և այս իմաստ հոգեւոր և տէրունի դործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց, յորժամ զամենայն արհամարհիցէ և սկզբնապատճառն եղելոց միայն ընտրիցէ ասելով, թէ երանի ժողովրդեան, որոյ տէր աստուած է նոցա: Սէնճ է և այս բարձրութիւն շնորհի և զգուշական համարձակութիւն լցեալ երանութեամբ, թէ սուրբք քո օրհնեացեն զքեզ: Ընձայի է և այս ընտանութիւն մերձաւորական հոգեւոր հաղորդութեան՝ յաստուած յուսալ և ՚ինոյն արձանանալ բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր. և զկարդ բանին կատարէ, մինչեւ զողբալին և զգուարճալին ազդեացէ, թէ պահէ տէր զամենեսեան որ սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ տէր. ՚ի գլուխս լման գրոց նուագա-

բանաց սաղմոսի՝ իբր թէ զօրինական իսկ եւ ցոյց վերջին հատուցման արդարոց եւ մեղաւորաց: Հուպակսորդք են միմեանց եւ զինի երկեցեալ.ս. զի թէ ընդունի գինեզ սէր եւ խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր, ապա ինձ ոչքան եղկութիւնք կան առաջի. իսկ եթէ հաճի սէր ընդ ժողովուրդ սուրբ, եւ բարձր առնէ զինեզ ՚ի փրկութեան, ապա հեքեաս ՚ի բարեմասնութեանց ես ոչր հատուցայց. իսկ եթէ օրհնելի է աստուած ՚ի սուրբս նորա սիրապէս, ապա օտարս ես ՚ի մաքրութեանց ընդ ոչս դասեցայց. իսկ եթէ ՚ի կանխերպին մերձ այսր եղից յիշատակաբան ինձ կշտամբութեան, թէ սիրեցէք զտէր սուրբք նորա, զի ստուգութիւն խնդրէ սէր՝ եւ կրկին հատուցանէ ամբարտաւանին, ապա յորժամ գնդի ես զտայց զերեսս ՚ի գաղտնեաց գտողին չարեաց: Քանզի զոր օրինակ տատանին տապնատաւ սերեւք անկոց եղեւնի ծառոց շարժեալք ՚ի հողմոյ ուժգին բախելոց հռսեալք ՚ի խոնարհ, այնպէս չանացաւ չարդել զընթացից իմոց վերարձակութեան քաջաբեր ուղիշ՝ գյարմարեալս ձեռամբ անեղ միակիդ: Որ հատատեսցես արմատացուցեալ վերտին գարձեալ նոր պտղաւորութեամբ անապականաւ, յանդատան կենաց խնամոյ քոյ կամացդ ամենասարգեւ թագաւոր Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆԸ ԿԶ.

Ա ԷՐՈՊԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԼԻՆԻՆ ՀԵՅԻՈՒԲԵԱՆ ՆՈՒՆԻ ՀԱՒՈՒՆ
ԱՒՐ ՆՈՅՆ ԱՂԷՐՍ ՀԱՍՆԱԱՒԱՑ ԲԱՆԻ.
Ի ԻՐԵՑ ՊՐԻՆՑ ԽՕՍԻ ԸՆԴ ԱՌՕՐԻՆՅ:

Ը. Աչխ արդ ընդէր ոչ ՚ի վերապրեցեալն սաղմոս նախաճաշական և այլ մարդարէիցն մատն ինչ յօդեցից: Քանզի զի՞նչ վայելումն իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ. և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ ՚ի միտ առնուցում: Քանզի նզովեմ զիս ինքն ՚ի նոսին և ոչ իմանամ, լուացեալ լինիմ և ոչ պայծառանամ, արեւս ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղս ճաշակեմ և ոչ քաղցրանամ, ուտանիւ ընանիմ և ոչ բժշկիմ, միշտ կանխեմ ՚ի նոյն և դատարկ երեւիմ, հանապազ ձաղիմ և ոչ երբէք խրատիմ, ողբիմ դարձեալ և ոչ զղջանամ:

Բ. Ընդարեւ մեղք և անօրէնութիւնք իմ չիս, և ես մնշիմ ՚ի նոսին, ըստ մարգարէին որ ՚ի դիմաց պատրաստուցային բանի և տէրունական առակին հին անկոյն և նոր զինուցն: Վ՚աւն զի թէ սաստկին անօրէնք և մեղաւորք ՚ի միասին, ըստ Աստուածայ ձայնին, ապա և ինձ զժնեխանոյն բաժին հանդերձեալ պահի: Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հաստուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւա-

նութիւն. և կցորդեմ ամին զընթերցուածն, թէ օր տեառն ՚ի վերայ Հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ, և որ ինչ կարդ տային ցուցանէ. յաբեմ առ ամին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի յերկրէ, և անիրաւք մերժեսցին ՚ի նմանէ: Ոդբք ինձ կարդացէք առ ձայնն, թէ զոր օրինակ վառի եղէգն ՚ի կայծակունց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք ՚ի բոլբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես ՚ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք ՚ի բանս աստուածեան վճռին մարդարէին աղեղեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մահ հովուեսցէ զնոսա. աղի արտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ Իսրայէլի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք թշուառացեալս, յորժամ այլ մարդարէ զնոյն դիցէ, վայ նոցա զի վաղեցին զնենդ: Ոարբառ փողեցէք ՚ի սիրտ մեձկեալ նոր աղաղակի, յորժամ տեսանողն աստուածով ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ ընդ ապարատան տանն Յակոբայ, տեսէք արհամարհոտք՝ զարմացարուք և եղծարուք:

Գ. Ելէ դարձուսցես և ամիոփեսցես զբարթարսեալ զառաբարկութեան ահաւորիդ սպառնալեաց՝ ի սարսուցելոյս յերեսաց մեծիդ, և ինամով աջոյդ բարերաշխութեան առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարգեւատրեսցես քո աղաչողիս: Եւ քեզ փառք յերկինս՝ ի բարձունս, և ի մահացուաց յերկիր՝ ի խոնարհ, ի սահմանս բոլոր ազանց և յաւիտենական յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԴ.

Ա՛ջ ոտն յաւելաւած երկնի հեծութիւնն նորին հալոցն աս նոյն աչքս հաղնանայ քանի.
Ի ԵՐԵՍՍ ՊՐԿԵՑ ԽՕՏ ԸՆԴ Ա՛ՍՊՈՒՆՅ:

Ա. Բարերար և բազմագութ, մարդասէր և երկայնամիտ միայն թագաւոր, ընդ հօր քոմ պատուական և օրհնաբանեալ տէր աստուածոյ կենդանւոյ. անպատճառդ միշտ իմում կորստեան, որ ամենեքեան անփորձ ես ի չարեաց, որ ոչ կամիս զմահ մեղաւորի, որ փրկութիւն են ի քոց կամաց ընծայեցեալ, որ դարձուցանես զմերթիկ մեղաց ի յօդ քաւութեան, որ զհուր բարկութեան յանձրեւ փոխարկես: Որ զանանձալ զկինն ի բարեաց՝ կրկնակի զոյիւ նահանջեր երկեակ բնութիւն ի նոյն արձանի, ոչ խակապէս ընդ անպատրան, և ոչ համայն ընդ

պատժաւորան: Որ զուարթութիւն ծովուն սա-
հանաց իբր զկարկառս քարանց կառուցեալ



յեղանակեցեր. որ զկարծրանիւթ վէմն անա-
պատին՝ ի վիժակս վտակաց հոսեալ բղխեցեր:
Որ զՅորդանանու ջրոյն սրաշարժ վայրեկու-



թիւն՝ հրաշատուր անդրադարձութեամբ՝ ի յետ-
նորդս հեթանոսաց լուացումն աւազանին՝ ի

թիկունս առաքեցեր: Որ զպատուաստեալ պարիսպն Երիքովի, յօրինակ կործանման բռնութեանն սատանայի՝ իբր զթեւթեւութիւն յարդի ցնդեցեր. որ զվնասակար ջուր նորին՝ ի յառակ այլայլութեան առ՝ ի բարին փոխարկութեան՝ քանանացւոցն փրկութեան խորհրդական ազիւն համեմեալ անուշեցեր: Որ զՄեռային դառնութիւն, իբր զմոռաց անհաւանութիւն, կենացն փայտիւ՝ ի քեզ յարմարեալ սիւտանի արարեր: Որ զառեալն՝ ի դեռոյն՝ ի գծագրութիւն անսահմանդ քո հրամանի անորակիդ գունակութեան՝ ի նոր երանգ բոսորային մածեր արիւն՝ ի ցամաքի: Որ զանկենդան ցուպ գաւազանին, ի կերպառութիւն առ՝ ի զքոյդ մերոմս նկարագրիլ, այլ և յօտարազնիցն ընտրութիւն, ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապի նմանեալ ցուցեր: Որ զերջանիկ ձեռն աջոյն Մովսէսի, ի ցոյցս տեսութեան ապագայիցս հրաշից մարդեղութեանդ քո, բարձրեալ, և քեւ ախտաւոր մարմնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրութեամբ՝ կրկին գուշակեցեր: Որ յայսքանեացս շնջագրութիւն բարեխնամապէս առեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեզառաց կորստականաց նշանակեցեր, օրհնեալ ամենագութ:

Ե. Որ բուսուցանես յերկրէ գալարի ըղ-

մեռեալն յանշնչականէն, որ զանշարժն իբր
ընթացող կառավարես, որ յանարդ աբ-
դանդէ կոչես քեզ պատկերակից, որ տաս
պատանեկաց աղօրիս ըմբռշխնելիս, որ յայտս
մաքուրս հերս ընծայես, որ զսաղարթ սեւու-
թեան վարսից ՚ի ձեան կերպարան զարմա-
նագործես, ցուցեալ՝ թէ առ ամենայն սահ-
մանի հեռաւորական յաղթող ես հզօր, որ
փոփոխես զբնութիւնս բնաւորականս, ըստ բա-
նին Յորայ, ՚ի կամս հաւատարիմս։ Որ սա-
սանես զերկիր և զսիւնս նորին ՚ի հիմանց, նը-
շանակեալ հաստուածին գոյիւ՝ թէ դու միայն
մնաս անկործնչելի. որ հոլովես զտարերս իբրեւ
զանցաւորս, և դարձեալ ՚ի նոյնն կապես իբրեւ
զյարակայս, յայտ արարեալ՝ թէ և առ մեզաց
բազմութիւն դիւրաւէս ունել կամ թողուլ
դոյնպէս զօրաւոր իցես։ Որ զարուսեկին ան-
ըղդայ էութիւն իբր երասանաւ իմն դաստի-
արակես երեւեցուցեալ այնր իրի կերպիւ, թէ
զընութեանս չար դիմեցումն յորժամ և կա-
միս հանդարտ առնիցես։ Որ զանբարբառ բո-
լորակ լուսնին կարգես ունայնս և պատարուն,
լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսո-
ղաց՝ թէ ՚ի նուազութենէ բարեաց զպար-
տաւորս մարմին դու ածես ՚ի լրութիւն ա-
ռաջնաստեղծ հարստութեանն։ Որ զպատկերս
անխօս աստեղաց իբր զդասակս դոյզն հօտից

որոհես և ժողովես, յոյս իմն կենաց առ այս խորհրդարերեալ, քաղցրահայեաց տեսութիւն, թէ և անաղաչաւորաց լեզուաց կարողապէս բառես ողորմել: Որ ՚ի մէջ մահու և կենաց շափիղ վճռահութեան ուղղես ՚ի ծովու, վկայութիւն եղեալ հաւատոյ, թէ և յանկարծաւորն վայրի քեւ պաշտպանիմք անզգայթապղել. որ իբր զնուր կաթոսյից ՚ի հրոյ եռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խափուցանես: Որ հայիս յերկիր և տատանես զսա, զի անբարեխիւն բզմոաւորս զգաստացուցանես. որ իբր զակատ մի անձուկ նաւի ՚ի վերայ շարժութեան աւազաց՝ զանբաւ թանձրութիւն գետնոյս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաստատուածոց՝ թէ իցես աներկբայելի, որ ՚ի բան քո զօրել հիմնացեալ ունիս զամենայն: Որ սերմանես զարտաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկորուստ պահեալ կրկին կենդանացնես, որ ապականացուս աւանդեալ՝ անեղծս առնես, որ ընդ մահացու նիւթոյս՝ զնշխարդ կենաց խառնես, որ հրամանաւ ակնարկութեան ՚ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կացուցեր զանդարդութիւն ամենից եղանակաց: Քո է զօրութիւն և կարողութիւն, որ շջնանակես զժամանակս ամաց հոլովմանն աւուրց յայլ նմանութիւն բարե-

պատիճ տեսողութեան. որ կարդաս զանազանէն իբրեւ զկենդանիս. որ ազդես միայն, և նոքա ընթանան, որ միայն հնուս անկանես անճառ արուեստիւ հնարագիտութեան մէջ և առաւօտ: Որ յետ նախակարգ յօրինուածոյն առաջնատեղծ լինելութեանն, արարեր զիրառաւորեալսն մեծամեծս հրաշակերտիցն հանդիպեց, ըստ գրոյն երջանկութեան կանխահիացն զարմացման, այլ իմն գոյացութիւն ոճնելի տեսակի անեղծ աշխարհագործութեան եւս քան զոյն ի մարդանալդ քո, որոց ոչ գոյ թիւ:



Գ· Որ ահա զվնասն մեր քեզ գրեցեր, որ զարդարութիւնն քո մեզ շնորհեցեր, որ ընդ քեզ կրեցեր զհաշտութեանն մերում փրկանակ, որ ոչ երբէք լքանիս յողորմութենէ,

դարձո զամբարշտեալս 'ի պաշտօն բարի եր-
կիւղիլ, զմերբեալս 'ի պղատուիթիւն արիա-
նուիթեան սրտի, զանմաքուրս 'ի սրբուիթի-
պայծառուիթեան կերպարանի, զբազմարի-
յանդգնուիթիւն հանդարտական սուրբ պատկե-
րի, զբեկեալս յողջուիթիւն, որ 'ի դիպմանց ո-
խորտակի, զայեալս 'ի խնդուիթիւն զուար-
թուիթեան անտխրելի, զյուսահատեալս 'ի ա-
միաւորիչ անքակտելի, զամաչեցեալս 'ի վստա-
հուիթիւն հաստատուիթեան անշարժելի, զպ-
խաւաբեալս 'ի լոյս երանուիթեան անմեկնելի
զմահու գերեալս 'ի կեանս որ ընդ եղծմա-
ոչ անկանի: Օ՛ի փառաւորեսցի անուն քո
Յիսուս. խոստովանեալ յամենայնի ընդ Հօ
և ընդ Հոգւոյդ սրբոյ 'ի բարձունս երկրի և 'ի
ստորեւս 'ի բնակիչս նոցա, յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԴ.

Ա՛ջորդն յաւելուած լինի հետեւելեան նորին հա-
ւա նայն ասելոք բանիւ.
'ի Տէրէ սրտիւ խօսէ ընդ Աստուածոյ:

Ո՛ Ա՛ր արդ առ ամենայն բան յամենայնի
ուղիղ ես, աստուած, իրաւամբք դատիս, ար-
դարութեամբ կշռես, ճշմարտութեամբ չափես,
օրհնութեամբ հետեւիս, բարւոք ընթանաս,
ստուգութիւն սիրես, յատակութիւն կամիս,

լուսաւորութիւն համբուրես, փորձիւ յանդիմանես, երկայնմտութեամբ քննես. ոչ ունիս նենգութիւն և ոչ գոռոզութիւն. այլ ամենևին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն:

Ե. Արդարացար վերին իմաստութիւն անայլայլական հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անդեղջ գովեսիւ յորդեորեցելոցն ընտրհօք, ըստ բանին սրբութեան՝ որ աւետարանաւն կենաց ՚ի քէն ընկալաք. որ ոչ ՚ի կոծելն ողբացի, և ոչ ՚ի փողելն կաքաւեցի: Ասացեր անօրինիս՝ թէ մի՛ անօրինիր, և ես ՚ի նոյն չարիս պնդեցայ. մեղաւորիս՝ թէ մի՛ ամբառնար եղջիւր ՚ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի, և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ ՚ի ձեռն քո են եղջիւրք արքայութեան հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ Ամրակումայ, Դաւթի և Ղազարիայ: Օրհնութիւն ինձ կամեցար, ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարապրութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մնան. սիրեցի բարկութիւն և ոչ բարութիւն, շռշափեցի ըստ զրոյն զհաւար, և ոչ զայս, կենդանի ձայնիդ քո զթած, ապաւումն պատասխանեցի: Ողորմն անմահ ասացեր բանիւ Ղազարեայ, և զհուրն անշէջ և զկշտամբութիւնն անվախճան և զոտեղին յաւիտենից և զօրինակ նմին ասկալի,

և ես ոչ իմացայ ըստ սազմոսղին և ոչ մոա-
ւեցի, այլ ՚ի մեայլ մոաւորական կուրթեան
գնացի: Յուցեր մարգարէին, թէ զօրհնու-
թիւն սուսցի որ զօրէնս դնէ, և ես համա-
ռօտել զնոյն փութացայ: Աբգան հոգեւոր
վիճի գրեալ մատամբ քո, տէր Յիսուս Քրիս-
տոս, զԱաւթի իւրովքն բանիւք կանդնեցեր,
ասելովն ինքեան ընտրութեամբն առ սոյն, թէ
պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւի-
տեան. անդրադարձութեամբ բանին միջնոր-
դեալ զկրկին հաստատութիւնն, թէ և յա-
ւիտեանս յաւիտենից. ընդ որս և զսորին նը-
մանիս պարծանաց առ իմն խրախոյս, և ոչ
զկնեցայ. ճեպեցայ ՚ի տունս Աահաղու և ոչ
աստուծոյ. ՚ի յերկուս հետս երկմտութեան
կրկին կազացի կասեալ ՚ի բարեաց, ըստ եր-
գիծանելոյն Հեղիու: Ընդիմ զՄովսէս իւ-
րովքն օրինակօք եկեալ ՚ի մեռելոց, և զտաւս
մարգարէիցն գրեալ ՚ի յոգի, և զմատեանս
առաքելոցն ընդ մուացս մտան յեռեալ. և ըզ-
տէրդ հասարակաց կառավարն աւետեաց յա-
րուցեալ ՚ի թաղմանէ անթիւ ննջեցելովք, և
անհաւատացոյն քան զՀնգետնին եղբայրակ-
ցութիւնս այնր մեծատան, որ է առակ իմն
յարմարական, նմանեալ զդպրականացն մա-
սանց անողորմիցն յղփացելոց, ճնացի իբրեւ
զալ դարբնաց անոստ՝ յամառեալ քարա-

ցեալ սրտիւ, որպէս օրինակին է Յեղիսաբայ, և ոչ ապաշխարեցի:

Գ. Ամէն աղդեա վերատին առ սոյն կերպա-բան լքեալ կրկին ողորմութիւն բարի, ահա-ւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան թագաւոր, զօրու-թեամբ պանծալի խաչիդ խորհրդոյ, ՚ի կար-ծրացեալս մեղօք անբեր անդաստան երիկա-մանցս յիմարութեան և անպտուղ սրտիս լքութեան զի առեալ նպաստ օժանդակու-թեան ՚ի գթութենէ կամաց ամենակալիդ, որոտասցէ բղխեսցէ հոգիս, ընծայեալ աչաց վշտադնեցելոյս վտակս արտասուաց սրբու-ցանողաց ինձ ՚ի փրկութիւն և ՚ի մաքրու-թիւն, և քեզ ՚ի հաճութիւն ընդունելու-թեան, ամենապարգեւ տէրդ բոլորից, փա-ռաւորեալդ յաւիտենից. ամէն:


ԲԱՆ ԿԶ.

Ա՛ԷՐՈՒՆ յաւելաւ ելկն հեթանոսին ոգին հայոց
առ նոյն աղբիւր հաղնանաց բանիւ.
՚ի խորոց սրտից իւրոց ընդ Աստուած:

Ա. Ես արդ եւ նախնիս ամբարշտաց, գլուխս մեղաւորաց, պետս անիրաւաց, առաջինս պար-տաւորաց, պատկերս յանցաւորաց, առտի-կեցիս ըստ վատթարութեան՝ այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա զանճառիցն խմոց

Ճառեցի, զպատկառելիան խայտառակեցի, զդաղտնիսն հրապարակեցի, զծածուկսն յայտնեցի, զթաքուցեալսն ցուցի, զամիտսվեալսն տարածեցի, զդառնութեանս մաղձ ժայթքեցի, զդործակցութիւն չարին մատնեցի, զամբարեալ թարախ վերիս քամեցի, զևորս պարտեաց խոց ծանուցի, զպատրուակն կեղծեաց առի, զքող տգեղութեանն վերացուցի, զամօթալեացն զդեստ մերկացուցի, զդարշելսն յանդիմանեցի, զմրուրն մահու փսխեցի, զպալարս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Քրիստոսի բացի։ Յանձինս վտանգ ոչ անխայեցի, մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի, զարմատն հնութեան տեսիլ արարի, բնութեանս կարեաց ոչ ողորմեցայ, զմիաբանութեանն կապ խզեցի, զդղեակ սրտիս քանդեցի, ընդ կամացս որսոյ իբր ընդ դարանակալի մահու կռուեցայ, զպահեստ անյայտիցն արտաքս հանի, զմերկերիցն դանձ՝ մեծին դուշակեցի, զդատախազն դատաւորին հանդէպ կացուցի, զապաշնեացն զիորձ այժմէն իսկ գտի, զդաշն կործանողին կտրեցի, զուխտ խաբողին ցրուեցի, զկատարած մարտին յաղթութեանն՝ ի քեզ տէր Յիսուս ապաստանեցի, զպատերազմին խումբ գրգռեցի, զդիմադրութիւն դիմեցմանն՝ բանիդ աստուծոյ յուսացայ, զևաւարասիրացն փաղանգ լուսեղինացն զինուց սադրեցի։

Ր. Եւ արդ, ստեղծիչդ ամենայն եղելոց Քրիստոս որդի բարձրեալդ աստուածոյ, զաստէն դարուվեալս յայսպիսեաց բանից և ըզհարուածեալս յայսքանեաց դանից մի կըշտամբեսցես կրկնակի դատել ՚ի մեծի աւուրն: Ահա, հզօր անքնին անճառ բարերար թագաւոր անմահ, առ այս կերպ պատկառանաց ինքնապարտաւս խոնարհութեան, որ ինձէն զանձն մեծաւ ձաղանօք յոգի դատեցի, լեց նուագօք այսր մատենի անարգանօք ամօթոյ զդէմն սատանայի, և զերեսս կերպի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացո: Միասցի



կնիքդ լուսոյ ՚ի գեղ տեսակիս, ամրութեանդ նշան հաստատեսցի ՚ի տիպ դիտակիս, երեւակ կենացդ փայտի ձեւասցի ՚ի պատկեր այսոիս, արուեստող հրաշից ՚ի ճակատիս շուք նշանակեսցի: Մի այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապաճոյճ, մի բարձցի ՚ի տեսանելեացս բըլոց ճաճանչդ օրհնութեան, մի մերժեսցի ՚ի գլխոյս առհասատչեայդ վստահութեան, մի

սասանեսցի ՚ի բերանոյս ամբութեան սեմոց
փառք տեառնապրութեանդ: Պահպանակ
երկրպագելի ՚ի զգայարան սրտիս միասցի, չո
լիցս նիւթոց իմոյս զոյութեան քառաթեւիդ
նշոյլ աղեսցէ, ձեռինս կարկառման փրկչիդ
իշխանութիւն օժանդակեսցէ, մատուցման
հաստատածոյ մատինս՝ խորհրդարանդ համար
ձակութեան բարեզործեսցէ: Ի մէկնելս իմում
մի հեռասցի սրբութիւնդ, մի լքցի պատիւ
՚ի պատիւն պարտաւորիս, մի մերժեսցի ՚ի
յոգւոյս անդաւաճանելիդ փրկութիւն, մի ջնջ
ջեսցին գիծք կենդանատուիդ ՚ի քո գրեցեալ
շնչոյ, մի եղծցի նկարումն արեան զօրութեան
՚ի տիրատիպ խորանէս, ընդ իս բնակեսցէ
յիմում դերեզմանին. ՚ի ծորել մարմնոյս թըշ
ուառի՝ օծումն չնորհիդ առ իս պահեսցի, ՚ի
նորոգութեանն աւուր սոփաւ հանդիպեցայց
փառաց փեսայիդ, ՚ի քոյոց այտի ծանուցայց,
քոյովդ վաստակօք պճնեցայց, երախտեօք
մեծիդ յարդեցայց, աւազանին զղեսուիս պեր
ճացայց՝ քաւեալ ողորմութեամբ: Ա՛ստո,
բարեգութ, զվերարկուդ անապականութեան
տաժանեցեալս մեղօք մարմնոյս, մի յարիցէ
ընդ քոյս՝ բանսարկուին, հնացուցիչ հոգւոյս
վասնեսցի, խաւարաբնակացն պատիրք մի ընդ
իս վերերեւեսցին: Օրհնեսցի անուամբ քո,
գթած, վիհն իմ հանգստեան, ողորմութեամբ

.քո լցի զուբն իմ դերութեան, ընդարձակեացի .քեւ ինձ տեղին թշուառութեան, անդորր ե- ղիցի, խնամող, ինձ բանան բարկութեան, մնուացէ զիս առ յաճումն արդանդն մթու- թեան, յուսով քո շտեմարանեացէ զիս յարկին այն անձկութեան, ձեռամբ քո պահեցայց ՚ի խշոյին տարտամութեան, թեւօք քո ընկալայց ՚ի տունն տապնապի, դու, զովեալ, ընդ իս ՚ի սենեակն վտանգի: Ազաղ ինձ աստանօր ՚ի թիւս հազարաց, զի երբեմն էի վերնային և այժմ անդնդային, երբեմն տօնելի և այժմ աշխարելի:

Գ· Ալլ և արդ կրկին դու օրհնեալ ՚ի բոլորից զոյից յերկնայնոց և ՚ի ստորնայնոց և ՚ի սանդարամետականաց մեռելոց, անպար- տականդ այս տարագրութեան: Ես վբիպեցայ, ես օտարացայ, ես չիմարեցայ, պարտեցայ և խոտան գտայ. ես լքայ, կամեցայ և կործա- նեցայ. ես մոլորեցայ, ես մատնեցայ, ես մեր- ժեցայ, ես խորթացայ, զերեցայ և գայթագ- ղեցայ. ես նզովեցայ, ես թշուառացայ, ար- բեցայ և վատթարացայ. ես ընկլուզայ, ես խաբեցայ, ես անօրինեցայ, ես ապականեցայ, մահացայ և ՚ի սպառ եղծայ. չկը քո առ այս ինչ մնան չարի, որ ես միայն անփոփոխ բարի: Արդ կամք քո չիս, և խաւարն ինձ ճառա- գայթ. ճրագ յուսոյ քո անդ, և զիշերն վա-

ղորդային. մարմնոյ քո հաղորդեալ, և յամօթոյն կարծեաց ապրեալ: Խակ ես ոչ դրեմ զանձն իմ կենդանի վասն անփախչելի վախճանին, դարձեալ զնա ոչ վարկանիմ կորուսեալ վասն անսերկեւան նորոգմանն: Որ և փակեալ համարիմ ինձ զնա կենացդ վասն անքաւելեացն պարտեաց, դարձեալ՝ բացեալ ինձ ըղդրախան՝ վասն փրկութեանն աւետեաց. քանզի ոչ այնքան վհատութեանն գոյժ տագնապէ, որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ: Արդ տուր, տէր, տուր ողորմութիւն, առ ամենայն ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԶ.

Ա՛ջորին յաւելուած լինին հեթանոսին նոցին հոյովք
ասա նոյն աղեքս մաղթանաց բանիւ.
Ի խորոց սրտից իմոց ընդ Աստուածոյ:

Ե՛ս Արդ որ զբ և առցէ զայս դեղ մաղթանաց այսր մատենի պարկեշտականի պատեալ սուաւ, եթէ՝ ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց և ես իմովս բանիւք կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գոյցէ և ես սովիմբ ընդ նմին ողորմեալ նոցա: Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ դրեալ զեղկութիւնն, և ես ինձէն վկայեմ այսմիկ: Այլ յիշեցէ նա

պողոմն և զբանս նորա պհոդեշունչս, թէ
ով ոք վստահեսցի սիրտ սուրբ ունել, և կամ
ով պարծեսցի մաքուր լինել ՚ի մեղաց, և զի
ոչ յարեաւ մարդ երկրածին ազատեալ ՚ի պա-
տասխանեաց, և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վա-
զիւքն, և ոչ՝ թէ և ՚ի թռիչս ամբարձման
թեւոց բերիցի. առ որ զդոյշ լինիցի կրկին
երկուցեալ ՚ի վիմին իսկ հաստատութեան ու-
սեալ ՚ի պօղոսէ, զուցէ անկեալ ՚ի յերկիր՝
սահմանողն այսմ կանոնի իրաւադատի կըշ-
ռեալ նմանեսցի: Այլ առցէ զայս կշռամ-
բութիւն մաքուրն՝ նիւթ պակաց, առ ՚ի չի-
ջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրու-
թենէ. և պատժապարտն՝ առիթ ազատու-
թեան. որով ամբարձեալ ՚ի կործանմանէ հո-
գեւորական մահուն՝ ապրեսցի յուսով: Իսկ
ինձ եղիցի պատգամն այս բանի արձան փո-
րագրեալ ամենևին անեղծանելի, որ փոխանակ
իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ անդադար
հնչմամբ հեծութեան լալոյ առանց լռելոյ միշտ
աղաղակէ, լեցի և ոսկերացս քակտեցելոց ՚ի
հողապատեան շերիմ վերարկուին՝ անմռունչ
ձայնիւ զայս խոստովանել. հասցէ և մարմնոյս
՚ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անազդելեաւ
ծածկաւեսիդ զսոյն պաղատել:

Ն. Տէր դթութեանց, աղբիւր ողորմու-
թեանց, պարգեւք բարութեանց, որդի բա-

ձրելոյ տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա, խըն-
նայեա, մնդղասիրեա, նայեա ՚ի վտանգս, ակ-
նարկեա ՚ի բեկումիւնս, խոնարհեաց ՚ի թըշ-
ուառութիւնս, տես ՚ի տարակոյս անճեռնհաս
տատնապիս, հասիր հաղորդել կորստականս
կարեաց: Շօշափեա բժշկապէս զամենաթըշ-
ուառ ախտաւորութիւնս, ունկն մատուսցես
քաղցրութեամբ ողորմագին հնծութեանս, լուր
՚ի խորոյն անդնդոց մահուն դերեզմանի ան-
մընչելի հառաչմանս, մոցէ յականջս ամենա-
լուր լսելեացդ ձայն պաղատանաց վաստեալ
անդամոց: Ու վասն զի զրաւական կենդա-
նութեանս անապական է, անփոփոխ լիցի և
սիրոյդ քո զթութիւն, կցորդ լեր հեղութեամբ
տաժանաւորս տկարութեան: Վեռեալ պատ-
կերիս մի՛ ոխս պահեսցես, ընդ անշունչ կեր-
պարանիս մի՛ ի դատ քննութեան մոցես, մա-
հու տանջեցելոյս մի՛ հարուածս յաւելցես, ընդ
բեկեալ խեցեղէն անօթոյս մի՛ ուժգնութեամբ
մարտիցես, վճռաւ կոշկոճելոյս մի՛ բարկու-
թիւն կրկնեսցես, կործանեալ շինուածոյս մի՛
պատուհաս մատուսցես, շանս սպանելոյ մի՛
քարինս արձակեսցես, լուսոյս ջախջախելոյ մի՛
սաստիկս որոտասցես, հողոյս անպատուելոյ մի՛
իբր անբարհաւաճի ուժգինս մընչեսցես: Ըղ-
մոխիրս մերժելի մի՛ ի դատ ընտրութեան կո-
չեսցես, զփոշիս ցնդելի մի՛ իբր զքո դիմամար

գացես, զոհիցն տաղտկալի մի իբր զոսոխ վար-
կանիցիս, զգարշելի ինչ անդոանելի մի իբր
զընտանեաբոիկ վանեսցես, զկեղծ 'ի բաց ըն-
կենլի մի նիւթ զեհենին պահեսցես, զայս-
քանեաց բազմապատիկ բանից կշռամբեալս
մի վերատին յանդիմանեսցես:

Գ. Ա յս ամենաթշուառ և խաւարարգել
շերմին են ահա սրտաբեկ և յոդնաթափիծ
արգահատութիւնք. հասատատեսցէ օրհնեալդ
քո բան անփոփոխական լինել, ըստ սրտի ար-
գահատելոյս. քանզի և այժմ մինչ կենդա-
նեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ. որպէս
'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ
հրամանի անեղծ եմ հաւատովքս: Արդ ա-
ղաչեմ զքեզ, տէր Յիսուս Քրիստոս, հա-
յեաց յիս ողորմութեամբ, և մի թողացուս-
ցես լինել անկակից ինձ Ներքաբայ. և զմա-
հազկոյդ տապանին աղդումն անկենդանաւորն
Թնդման թշուառն Թաղման՝ աղազակ ձայնի
հառաչման լսեաց քեզ հաշտեցուցչաց՝ յար-
դեսցես լսել, միայն բարեզործ, հոգեսէր, հզօր
մարդասէր. և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ
իս՝ լոյս առնելով ինձ 'ի խաւարին: Ա՛նասցեն
ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մա-
սունք. զի իբր զաւանդ գանձու զիս պահեալ
'ի քեզ, կենաց նորոգման ընծայեցուսցեն. օ-
ձառք անվատնելի զինուց ինձ պատկանեսցին,

ընդ իս յարակայեալ քարինք պարսից հո-
գեւոր հնարից՝ զչարին հալածել զդունդ:
Սարան որ առ իս քեւ, տէր, վանեսցի. զի
եթէ յարիցէ ՚ի վերայ իմ պատերազմել, տե-
սեալ զքաղաքն ունայն ՚ի զօրաց և զազդո-
զականացն գործի ապաձայն, զքեզ տէր ունիմ
մշտնջենաւոր և անխիրհելի պահապան:

Դ. Օ՛ի եթէ այժմ իսկ կանխաւ արա-
գեալ յառաջ քան զօրն կատարածի, և ան-
շուխիզ արգելան ինձ պատրաստեսցէ, առա-
քեմ զաղօթսն տէրունականս նմին գան մա-



հու. եթէ ՚ի վայր զնա հնարի կործանել, զ-
ծնրադրութիւն արարչին. եթէ ՚ի մեխիր երկր
թաւալել ձեռն բերիցէ, երեսացն աստուծ

ի նոյն մածուցումն դնա հերքեսցէ. եթէ վատակս ինձ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն զանդեալ փրկչին աշխարհի դնա խուեսցէ. եթէ յրնթացից բարեաց ղշունչս իմ պատանդեսցէ, կապանք ամենատեղծին դնա արձակեսցէ. եթէ յուրացութիւն պարդեւաց լուսոյն բռնադատեսցէ, հայհոյութեանն համբերութիւն յաստուածամարտիցն՝ զնոսին ընդ նոյն կարկեսցէ. եթէ հարուածս նետից դաղտնաձիգ զինուց ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղան փառաց հօրն կապարճից ամին պատահեսցէ: Եթէ քողով լուսոյ խաւարականի մոռանել ընդ աչս անամօթեսցի, կուիռն զլեռնն ձորձով պատեցեալ լմանն ամենից դնա տանջեսցէ. եթէ մոլեսցի զվստահութիւն ձեռինս կապել, եղէգն մատուցեալ ի յաջ դոյացուցչին դնա չարչարեալ ըմբեռանեսցէ. եթէ ձաղանօք այպանման զնս կատակեսցէ, տանելն ծաղու ամենազօրին դնա հեգնեսցէ: Եթէ բժժանօք ինչ յուռթից կախարդել խորամանկեսցէ, ապտակն դիմաց հզօրին աստուծոյ դնա սաստկապէս ամաչեցուսցէ. եթէ 'ի մուտս դիշերային մթութեան խաւարաւ խաբէութեան լինեալ մարտիցէ, 'ի ճառագայթից լուսոյ երեւման քո, տէր, խայտառակեսցի. եթէ 'ի միջօրէական տապոյ փորձութեանցն արեգակնակէզ վատ-

նիչ խորշակին գնա 'ի յարմատոց խախտել կարծիցէ, 'ի զօրութենէ նշանիւդ լուսոյ խլեալ գօսասցի: Եթէ 'ի փչմանն շնորհէ ունայն գնա առնել հնարաւորեսցի, թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէից ընդ մեզաւորիս գնա պատկառեցուսցէ: Եթէ ժանիք խածողք ինձ ցուցանիցէ, լռութիւն երկնաւորին բերանոց գնա պապանձեցուսցէ. եթէ խածմունս աղուականս հոգւոյս ազդեսցէ, բեւեռացն հարմունք հաստողին բնաւից գնա կակծեցուսցէ: Եթէ յընթացս անիրաւութենանց խորհրդոց



գնա ժոլորեցուսցէ, սեւեռք ոտից անհասանելոյն գնա կապեսցէ. եթէ հրապոյրս ինձ դըժնեայս արբուսցէ, քացանն ընդ լեզուին խառ-

նեալ 'ի յարբումն բարերարին՝ զնա դառնա-
ցուսցէ: Եթէ առաջին ճաշակմամբ փայտին
զիս գոցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբըռ-
նեալ 'ի սպառ պարտաւորեսցի. եթէ ընդվզել
ընդդէմ հնազանդութեան տեառն հրամանի
զանձն իմ ուսուսցէ, բերումն պարանոցի ան-
սահմանելոյն զնա կործանեսցէ. եթէ 'ի մահ
սատակման զիս վանեալ վերաւորեսցէ, սուսր
տէգ զինու միելոյն 'ի կող սեղծչին Աղամայ
զնա հերձեսցէ. եթէ երկամբք վշտաց դժոխա-
կանաց զիս պաբփակեսցէ, պատանացն կոտո
էից ունողին զնա ըմբռնեսցէ. եթէ յատակս
մահու հայել զիս խարդախեսցէ, բնակել կեն-
դանւոյն 'ի վէմն մահու զնա մեռուսցէ. եթէ
խնդասցէ ընդ մարդկօբէնս իմ գայթագղու-
թիւն, կրկին կորացի կարկամեալ կամաւ,
յորժամ անմահն սատուած յարուցեալ փա-
ռօք ընդ իւր նորոգեաց զբնաւ մահացեալս:
Եթէ ընդ լուծանել փոքր կապանաց հազա-
բամէից բերկրեսցի, դողացի կրկնեալ վերըս-
տին իսկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագ-
նապին ըմբռնման սատակագունի յանվախճան
տանջանարանին: Եթէ ընդ առաջին հար-
ուածն դժուարեսցի, գոյժ կորստեան յեա-
նում սատակմանն անշէջ գևհենին, որ պատ-
բաստեալն է նորա և նորին հրեշտակաց, նմա
պատմեսցի, որ յաւուրն մեծի մեծին առնի:

Ե· Լսեք ինձ ապաւինելոյս ի քեզ տէր Յիսուս, միայն թադաւոր ինքնակալ զօրեղ, ստեղծիչ երկնի և երկրի և ամենայն զարդուն որ ի նմա, որ գալստեանդ քոյ ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ. ի յոյս քո անկանիմ, և զդարշապարիդ հետս համբուրեմ, զպարտութիւնս խոստովանիմ և զմեղանս հրապարակեմ, կշտամբանաց քոց բամբք կոծիմ և հառաչանօք սրտիս տապանամ, ի խէթ խղճիս խոցոտիմ և բոցով շընչոյս ճնճերիմ, աղի ցօղով արտասուացս այրիմ և երիկամանցս ագդմամբ կիզանիմ, յուսակտուր օդով ցամաքիմ և դառնաշունչ հոգմով շնջանիմ, թախանձանաց բանիս երերիմ և կողկողագին հեծութեամբ դողամ, տաժանելի կրիւք տուայտիմ և տանջապատ հոգւոյս տատանիմ, ի կոծ մրրկաց ծփիմ և ի բախմանէ ալեաց սասանիմ, ի լռութենէ համբաւոյն սարսեմ և յիշատակաւ ահին կորնչիմ, կերպարանօք առնին հալիմ և սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լուր բազմագութ, քաւիչ մարդասէր և երկայնամիտ, քաղցրութիւն անճառ, օր բարի և տիւ տենչալի: Քանզի կարող ես յամենայնի և առ ելս շնչոյս իմոյ՝ փրկութեան մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԷ.

Ա՛ջ ոտն յոտնատեղի իւրմէ հեծա՛ւ ի նա՛ւ նորին հանդէ
առ նովն աղերս հաղորդեաց բանի.
Ի ե՛ւ ոչ ոտիւք իմովք ընդ Աստուածոյ։

Ե՛ս Հայց քանզի յոյժ արդար է բան իբրաւանցն Քրիստոսի աստուածոյ առ իս քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ. զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի հնազեալ



պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանիս բոլոր էութիւն կերպին իսկութեան մեծին աստուածոյ՝ միացոյց ինքեան անշուշտ խառնութեամբ։ Վասն ոչ են շնորհեալ ի բազմացն, և ինձ զբովանդակին եհեղ առատութեամբ. վասն նորա ոչ երբէք չարչարեալ, և վասն իմ հանապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և ես միշտ վայելեմ ի փրկութեանն. նա վանեալ է խաչիւն, և ես ղօրացեալ նշանաւն. նա հերքեալ ի լուսոյն,

և ես միացեալ ընդ փառացն. Նորա ոչ խոս-
տացաւ Հանդիստ և յերկրի, և ինձ զերկինս
սեպհականեաց. զնորայն կորեաց զառհա-
ւատչեայ, և զիմն առանց խղելոյ յարակա-
յեաց. զնա յերամակս խոզին արկել, և յիս
ինքն զօրացաւ. զնա կարճաց օրինակեաց, և
զիս ճառագայթ նշանակեաց. զնա սողոմոն
նմանեցոյց, և զիս իւրովն անուամբ կնքեաց:

Ը. Իսկ ես զերախտիսն աստուածոյ լքի զայս-
քանեաց բարեաց արարողի, և չարին զկնի
միտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց.
ահա անարժանս բարեաց, անճիրս երախ-
տեաց, անընդունակս սիրոյ, տուռամբք մեղաց
ճգեալս, յերիկամունս խորոց խոցեալս, քան-
ցեալ ծառս արմատնուոյ, զինիս յեղաշրջեալ,
ցորեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս
պատառեալ, կնիքս այլակերպեալ, նմանու-
թիւնս փոխեալ, արկանելիքս կիզեալ, ըմ-
պանակս կորուսեալ, նաւս ընկղմեալ, մար-
գարիտս մանրեալ, ակնս պատուական սու-
զեալ, տունկս գոսացեալ, նեցուկս խորտա-
կեալ, փայտս ամենեւին փտեալ. մանրագոյն
աղաւաղեալ, յարկս տապալեալ, խորան
խարխլեալ, բոյսս արմատաքի խլեալ, ձէթ
հեղեալ ՚ի գետնս աղբեւաց, կաթնս հոսեալ
՚ի կոյտս մնխոց, այրս մահու ՚ի յարեաց
գնդից: Քանզի միշտ խրատեալ ընդ Նրու-

սաղէմի առակաւ Նաբեղոնի ՝ի մարդարէիցն ձայնից անձն իմ ողբալն, և ոչ ինչ խրատեցեալ· որ աստէն անդոռնեալ եմ և անդէն խայտառակեալ, աստ դարմեալ և անդ կըշտամբեալ, աստ ձաղեալ և անդ նախատեալ, աստ թշնամանեալ և անդ յանդիմանեալ, աստուստ ապշեալ և անդանօր լքեալ: Ըստ հեծումն և անդ հառաչանք, աստ կարծիս և անդ կատարած, աստ խէթ և անդ հատուցումն, աստ արկածք և անդ հանդէսք դատաստանի, ուր ոչ է բան իրաւանց և ոչ ձայն պաղատանաց, ոչ թիւք աւուրց և ոչ ելք ժամանակաց, ոչ ուղք յուսոյ և ոչ դրունք ողորմութեանց, ոչ աչ պաշտպանութեան և ոչ ձեռն այցելութեան:

Գ· Ամէն դու ապաւինութիւն, դու ինքն փրկութիւն, դու այցելութիւն, դու և քաւութիւն, դու երանութիւն, քեւ բժշկութիւն, քո ողորմութիւն, միայն հզօր, կենդանի, անճառ, տէր Յիսուս Քրիստոս բարերար աստուած, օրհնեալ, օրհնեալ և գարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սրբոյ յաւէտ բարձրացեալ ՝ի փառս հայրենի իսկութեան մեծիդ յաւիտեանս յաւիտենից· ամէն:

ԲԱՆ ԿԲ.

Ա ՀԲՈՒՔՆ ՅՈՒԼԻՈՍԻ ԼՂԱՒ ՀԵՅՈՒԼԻԱՆ ՆՈՂԻՆ ՀԱՒՈՂ
ԱՒ ՆՈՅՆ ԱՂԲԻՒ ՄԱՂԻԱՆԱՑ ԲԱՆԻ.
Ի ԽՈՐՈՑ ՊՂԻՆ ԻՈՒՒ ԸՆԴ ԱՒՈՒՆՅ:

Ն. Ե՛ւ արդ ի յիշատակ ահարկութեան վերադրեցելոցդ՝ որք յաստուածուստն սպառնալիք ինձ ժամանեցեալք, զիաւրդ դադարեցայց ի նորոգ ողբերգութեանց, և կամ որպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս: Օվ ևթէ զչորեքվտակեան առաջս դեւտոցդ յորդահոսան ծաւալմանցդ՝ որ զՆդեմ և զերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութեամբ բաշխեալ ամենայնի, և զբղխումն ելից իւրեանց առ աչս իմ եղեալ, զանձինս մեղաց սաստկութեան զբոց զովացուցանել ոչ բաւականասցին: Ե՛ւ կամ մարդաբէին սրբոյ ըղձականութիւն կրկին ինձ լցի զլուխս ջուրց բազմութիւն, և ճրագարան տեսութեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկման ոգւոցս չափել զվտանգ ոչ ձեռնարկեացեն. և ոչ եղերականք ջայլից համօրէն բանահիւսից կանանց լալականաց ի սիրտ և յոգի վերաւորելոց՝ զաղէտս վտանգիս ի յերդ արկանել և կամ ի նուագս ձայնից բերել:

Ն. Իմ է օրն լինելութեան նզովեալ, և ոչ

Յորայ կամ Երեմիայ. քանզի տծնեալն է օրն նոցա, զորոց մի՛ ի նոցանէ ոչ արժէ աշխարհ,



և ոչ տարագրելի. ապա ուրեմն ղես նկատեալ եղեալ զոչ արժանիս լուսոյ և կամ միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծին՝ յորում ես գոայ կորառեան որդիս և մահու դրացիս, միակս մեղաց և արբանեակս անօրէնութեանց: Որ ոչ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր, աստուած բարերար. ոչ գնացի՛ ի քո պատուիրանն կենդանական անմահացուցիչ, ոչ վաստակեցի՛ ի հունձս արմրութեացն, որով՛ ի մուտս ձեռանն աւուրցն խոովութեան կերակրել պատրաստեցայց. ոչ կառուցի ամրութիւն որմոց և ոչ ձեղուն յարկաց ձգեցի, որով՛ ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. ոչ համբարեցի նշխարս պաշարաց՛ ի յաղին անեղրակաս, որով զտապնասպ սովոյն իմ բժշկեցից. ոչ հանդերձաւորեցի զեզ ա-

ղերս աղօթիցդ, որով առաջի քո կալ համար-
ձակեցայց. ոչ կազմեցի թոշակ փրկութեան
վարուց մաքրութեան, որ զնորոգութիւն ինձ
երաշխաւորէ. ոչ եառ ղընտրութեան հաշիւն
'ի կենցաղոյս ճանապարհի' իմոյ մատնչին, զի
'ի դատաւորին ձեռանէ աստէն իսկ փրծայց.
ոչ լրութեամբ ձեռին օրհնութեան մատեայ
յանդիման, որով օրէնսդրին մատնակից դասայց
արբեցեալ: Ոչ դիմաց եառ զղուշութիւն և
ոչ թիկանց պատսպարութիւն, ոչ աջոյս իմ
ղինուորութիւն և ոչ ահեկիս պարածածկու-
թիւն, որով 'ի պատերազմիս վտանգէ ղերծայց.
ղերիվարս ոչ զղեցուցի զրահիւք, և ոչ զմար-
տիկս սպառազինութեամբ, որով զՃակատան
յարդարեցից: Ձկանուին ոչ կապուեցի պուղ,
և անագանին ոչ ժամանեցի, և ահա տարա-
կուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրութեան ծա-
ղիկ ոչ ունիմ և ոչ իւղ ողորմութեան, և
դիշերոյն մեայլ՝ անհոգ. 'ի նիրհումն մահու
հնջեալ եմ, և տապնապ կոչողին փողոյ սոսկ-
պէ. զղարդ հարսանեացն կրկին մերկացայ,
և զձէթ վարուցն վերստին լքի, և դուռն
մտին հարսանեացն առասիկ փակի:

Գ. Ձ արդ զնաւրդ առիւծ մխիթարութիւն
այսքանեաց վշտաց, և կամ ընդ ոքբանեաց
տարակուսանաց խաւարի՝ լուսաւորութիւն
յուսոյ կենաց խառնեցից, և կամ ոսր արդեօք

զդարշապարս ոտին կառուցից, և կամ յոր վատահութիւն զաչս իմ յառեցից, և զինչ անզորրութիւն ծփանացս նկատեցից, և կամ յոր ըղձական դիւրութիւն ձեռն համբարձից: Զի եթէ ի ձեղուն բարձրութեան երկնի,



անտի անձրեւեաց Հուրն Սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ յատակ խորութեան երկրի, սա երբայց զկոկորդն ըմբռնողական և եկուլ զԴաթան բանակօքն Աբիրովնի: Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն, գուցէ կալցի զիս վիշապն ահագին: Եթէ ընդ գաղանս ինչ թափառեցայց, արագունք են ինդրել զվեհ սատաղէն առաւել առ իս քան երբեմն զնզիսէին առ մատաղ մանկունս բեթելացիս քրմորդիս: Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն, այն եղեւ եղիպտացւոցն խաւար շօշափելի: Եթէ ի թռչունս բարձանց, նաքա են կոչեցեալք ի սպանդն զոհին բոսորայ զի-

ականցն: Եթէ ՚ի տկարան խիղախեցից, վատնիմ ՚ի պիծակացն, և զի՞ պիտոյ են ինձ առիւծունք: Եթէ յարջոյն պատառողաց ապրեցայց, մի իիւքն արեան ծարաւիք ինձ պատահեսցեն: Եթէ յանհոգս ուրեք նստիցիմ, մի զուկքն անարդագոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման զինեւ մաղեսցին: Եթէ յեղջերէ միեղջերուոյ փախուցում զերծեալ, նկուն ճիրանք աղկաղկաց մնոցն մրմնջողաց՝ զիս կերզեքեսցեն: Եթէ ՚ի սենեակս շտեմարանաց խորշից զօղեալ ամփոփիցիմ, տաղտկատեսակ գարշուելիւն գորտոցն՝ մեղաց օրինակքն զիս զաղջացուսցեն: Եթէ ՚ի վայրս ինչ անդաստանաց կացեալ զետեղեցայց, շարք շանաճանճոցն տարմից զինեւ պատեսցեն: Թողում ասել զնաւնիճն և զջորեակն զզօրն զօրաւոր ընդ թունաւորն թրթուր և ընդ անկենդանական երեւիլն, հանդերձ ջրակարծ կարկրտիւն և ապականագործ եղեմամբն. որ առ աչաց տեսիլ ապազինք և նուաստագոյնք. բայց ՚ի յահնարկելն աստուածոյ յաւէտ զօրաւորաբար ուժգնութեամբ հարին հանին վանեցին զՀպարան ամբարհաւաճութիւն փարաւոնի բռնութեանն բուռն գաւազանին՝ յաղթող վեճակաւ. որ են կերպարանք թագուցելոցն կրից լկողաց անձնականացն ահներեւութից եգիպտացւոցն անօրէնութեանց՝ յոգի և ՚ի մահ տանջողաց՝ զաղտնի վնասողաց:

Դ· Ա՛ղ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բոլորից, ՚ի յաւելման հանդիսացիր հերքել զնոսա. և ինձ ողորմեա կրկին զթութեամբ ձեռն մատուցեալ փրկութեան տալ զակուսեցեալ կոշկռձեալ վարանեալ ՚ի մահ պարտելոյս: Ո՛չ դու միայն ճանաչիս առաւած փառաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԹ·

Ա՛ջորդն յաւելաւած լրկին հեթանոսական նոքին հալոզ
աս նոյն աղբս ճաշակաց բանէ.
՚ի էութ պրէց իսա ընդ Աստուծոյ:

Ե· Ես արդ, վասն զի ՚ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմն եղանութեան տեառն և աստուծոյ՝ իբր ՚ի քրայս ընտրութեան փութիդ քոյ սիրոյ հանապազ եւամ և ոչ երբէք պարպիմ, միշտ խառնիմ զուգիլ և ոչ եւս միանամ, ահա զուր արծաթագործդ երկնաւոր իմ Ճարտարապետ, ՚ի մնոտիս վաստակեալ առ իս աշխատիս, բստ մարգարէին յայտնի առակի, և չարութիւնս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ իբր զնեղլատար դիւաբախ իմն ողորմելի յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զնմն զպարտիս աճեցուցանել, քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել: Ես զի մի անընդել դիպուած

և անկիրթ պատահումն և անհաւասար հանդիպումն՝ պատրաստութիւնք հանդերձելոց տանջանաբանացն ինձ երեւեցին, ամենեւին անմոռաց պահեաց աստատին ՚ի յիմում մարմնի նշխար մնացուածոց նախնումն անիծիցն. զոր ՚ի փոքուէ տարրէ անարգէ զմեծն է ուսանել:

Ր. Վանդի խաղային ինքնաբերական գիւտք որովայնի՝ բոռոտք ճապուկք շարժողականք և ազդի ազդիք, որդունք աղեաց գաղտնակուրք, խաղաւարտք հրակայծակք և բիծք բոցակիծք և անիծք անկերպաւորք և երամակք ոմանք քրտնածինք գազրաթորմիք կսկծեցուցիչք և մարմնջողականք: Ասպատակք այլոց վայրենեաց, ըստ նմանութեան դիւաց պիշերամարտից և մեկնաղէն բարբարոս գնդից խաւարասիրաց, և գազանութեամբ քանասար գայլոց արաբացւոց, կորակոր գնացիքն, արջնաթոյր գունդն, կրկնապարոյր կռածագ կոցաւն, որ զօրէն ունի խայթոցաց կարճի, իբր դժնիկ փշով խոցոտեալ ծծեն ձգեն զարեանն խոնաւութիւն, և յանկողնիս մահճաց հանգստեանն վաստակս կրից ցուցանեն: Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհատուցումն նոցա նոցին, վաղվաղակի զգան զվնաս վտանգին՝ զոր ազդեն մարդոյն. և անդէն իսկոյն լերկամարմին փոքր հասակաւն իբր թեւաջ իմն թռիչս արձակեն, և ըստ

մարախի ձեւոյ ոստոստեալ այսր անդր տա-
բաբերին. և ըստ բազմապատիկ նենդութեան
բարոյից դաւող աղուեսուց՝ խորամանկեալ
խուսափեն ի պատուածս բազում ելից, զի
յերկիւղէ մահուն ապրեսցին: Եւ այնքան
չքոտի և անքաւ անձամբքն ոչ միայն զռա-
միկն և զխաւնիճաղանճս, այլ և զթագա-
ւորս հզօրս և ահագինս վախուցանեն հանեն
տարագրեն ի դատիկն յարկի ապարանիցն
բարձրութեան, և կամ ի բացի բնակեցու-
ցանեն. քաջք արանց արեաց, որք իշխեցին
ամբոխից և տիրեցին ժողովրդոց և առին ըզ-
քաղաքս աղգաց, զպարծութիւն իւրեանց զօ-
րաւոր ձեռինն ինքեանք վկայեն, թէ քանզի
ոչ կարացաք ի դիմի հարկանել վեհից բըռ-
նութեան, վասն այնորիկ խոյս տուեալ հա-
սաք յայս տեղի:

Գ· Եւ զի՞նչ է ինձ զփոքունց և զանկածից
ծաղրականաց ոմանց գոյութեանց ի կիր ար-
կանել, որք զօրեղ և անհերքելի ջատագովք են
աստուածութեանն՝ յիշատակել ինձ զհան-
դերձեալսն, որք ի մարմնոյս անօրինելոյ ըն-
ծային պատուղք դառնութեան: Ընդ որս և
եկամուտ սատակչականացն ախտից գիւտք,
և կերչացն կոյտք անողոքելիք· յորոց չէ զեր-
ծանել, քան թէ հարկաւ մարմնոյն վտանգի
զապագայիցն սոքօք իմաստասիրել. և ոչ տեղի

է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց Քումդ ակնարկութեան և մարդկային կարք և հնարք վրիպեցան: Լակ դու, բարերար, զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Հ.

Ակտորին յաճախ լինին հեծութիւնք նորին հոգւոյ առ նոյն աղբիւր մաքրանաց բանիւ.
Ի երից տրտից ետու ընդ Տեսութեան:

Ը. Եւ զանգիտ համբարձեալ զընթացս բանիս ի փոքունց աստի երկրայնոց չհամարելոց ընդ գոյս եղելոց՝ ի մեծագունիցն տեսակս, ասացից զոմանցն հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան: Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն աստուածոյ իբրեւ զնախածանօթ հայրապետութիւնն, և կամ մաքրագոյնք որպէս մարգարէքն, կամ անբծագոյնք իբրեւ զառաքեալսն, կամ ընտրելագոյնք որպէս մարտիրոսն, եթէ ոչ դու մարդասիրեացես անդուլ բարիդ և անխոտիոխ խնամակալութիւնդ և անպակաս ողորմութիւնդ, ընդունայն է ինձ փրկութիւնն առ ի նոցանէ:

Ը. Զի եթէ առ նոյն ինքն Աբրահամ

ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետէ, ՚ի տապոյ անտի պաշպակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութեան: Իսկ եթէ առ Մովսէս և նա զգածեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ գհայթայթանաց կրկուան ՚ի պահպանութեանն աւուր ժողովէր. իսկ եթէ առ Ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի. իսկ եթէ առ Դաւիթ, ՚ի մէջ բարեացն առաւելութեան ստգտեալ է և նա. իսկ եթէ առ Նոյ և Յոբ և Դանիէլ, զայս Եզեկիէլ մարգարէ մեկնեաց յանուանէ իսկ յիշատակեալ ընոսա, և զայն ընդ նոսին իբր ՚ի դիմաց աստուածոյ ազդեալ, կենդանի եմ ես ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուսերս և զդստերս իւրեանց ՚ի բարկութենէն որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին. իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ, ՚ի բռմէ խնամոյ նորա խոն մի խոխթացեալ և նա ընդ կրիւք իմն դրաւեցաւ: Թողում ասել զբազմացն գումարութիւն խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք իցեն. ընդ որս և Յովասաւ ոմն մարգարէի ՚ի մէջ աստուածաշունչն սպասաւորութեան մարդկօրէնն գայթագղութիւն՝ մնայ յոլովից անթարգմանելի.

թէ և ՚ի դէմս իմն մեկնութեան ձեւակերպեցի:



Զ· Եւ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ և զօրացեալք ամենակալիդ, կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ, շնորհեալք ազատեցուցչիդ և բժշկեալք անախտականիդ, կենդանարծեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետեւ դիտացեալ զսակաւ ողբանութեանց հոգածին բնութեանս, որ մխիթարեն օրինակաւն նմանաբար հարազատապէս վստահութեան յուսահատելոց, ահաւասիկ քեզ դիմեցից՝ որդի աստուծոյ կենդանւոյ Քրիստոս օրհնեալ յաւիտեանս: Ամենաւանդ զառակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ, զվերադրելոցդ բան վերահին ար-

գարացուցանէ· բարի է, բան իմաստնոյ ումեքն երջանկի, անկանել ՚ի ձեռս տեառն, և մի ՚ի ձեռս մարդկան· զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին: Ըստ այս բան թէ և զԱստուածութիւն իմն գծագրէր, որ զերեքմանեան հարուածն աստուածեան առաջի եղեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զդպատակնիկ մահուն սատակմանն՝ իբր զկենդանի Քրիստոսի հաւատոցն յաճախութեամբ, քան զերկուսեան եւս այլ փոքրկունան՝ որք տանջենն և ոչ ողորմին, սակայն և իմն օրինակութիւն բանից պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յայմութենէ· զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ ՚ի մատենի այսր ողբերգութեան, առանց որոց ոչ է մատչել առ տէր, այլ զփրկողին անուն պատկեմ, և զնորհ նորին առ ամենեսին բարեհոչակեմ, և զընաւսին բարձունսն ՚ի թոիչս վարուց խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ողորմութեանն դեղոյ:

Ա· Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն, դու անմահութիւն, դու երանութիւն, դու լուսաւորութիւն· արա ինձ անդորր ՚ի մեղացս աշխատութեանց, զի և քեզ լիցի հանգիստ ՚ի մշտադատս հեծութեանց՝ ձանձրացուցիչս թախանձանաց· որ ոչ այլ իւիք, քան թէ փրկութեամբ մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս· ամէն:

ԲԱՆ ՀԱ.

Ա՛ջ ոտին յա՛ռ ելանել հեթո՛ւմեան նոցին հոգով
առ նոյն աղբե՛ր մաքրառնաց բառիդ.
Ի ծո՛ւց պղտից խո՛տ ընդ Աստո՛ծոյ։

Ա՛ն ա՛ն քանզի երջանիկդն և փառաւորեալք սրբոցն պարք, յորոց ոմանք դոյզն ինչ գիմեցին և յաճախագոյնս հաստատեցան, փոքունս սասանեցան և մեծագոյն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան. յորոց միոյն զգանգուածոյն յայտնէ զհասարակաստեղծն տկարութիւն, իսկ միւսն զգերազանցն քան զբնութեանն օրէնս, վարս և առաքինութիւնս հրեշտակականս։ Նա՛ արդ նոքա որ օրհնեալքն են յամէնիշխանն բերանոյ աստուածութեան հօրն Քրիստոսի, ընտրեալքն ծանեալքն ինկեալքն և բարերանեալքն, իբրեւ զանդամս Քրիստոսի պաշտեցեալք, և իբրեւ զօթեւանս հոգւոյն սրբոյ յարդարեալք, յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենեւին անկեղծութիւն և լուսաւոր արդարութիւն, և որքան մարթ է ըզմարդն աստուածոյ՝ աստուածոյ նմանեցուցանել։ Երեսք պարզք և անպատկառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստք և անսոդոմանելիք, պաշտօն առ աստուած կարծր և անփոխարկելի, ընթացք արիականք

և անկասելիք, ճշմարտութիւն միաւարր և անցնդելի, դիմագրաւութիւն զօրեղ և անհերքելի, տեսաւորութիւն պայծառ և անապշելի, իմաստասիրութիւն վերնական և անկոխելի, պատկեր մնքուր և անաղարտելի: Ոորոց կերպարանս և զիշատակս անուանցն աղաչել՝ աստուած իսկ վարդապետեաց, և նոքօք հաճութիւն ի մէջ խառնութեան առաքելոց:

(Բանք պանծալիք հաշտեցուցիչք աստուծոյ.)

Ր. Ա՛յլ ես անպիտանս յամենայնի, և որքան բան զօրէ պարապաւեալս, որ միւնչդեռ արթունս եմ՝ նկրհեմ, միւնչդեռ զգաստ եբեւիմ՝ թմբրիմ, ի բարեպաշտելս խմում գայթագղիմ, միւնչդեռ աղօթեմս՝ և վըխպիմ, ի յընթանալս խմում և կասիմ, յարդարանալս իմ և մեղանչեմ, ի խաղաղանալս իմում ամբոխիմ, միւնչդեռ արշաւեմս՝ առ ի յետոյսն հակամիտեմ, ի չուելն իմում՝ ընդ կրունկն դառնամ: Ընդ լուսոյն մահին և խաւար յարեմ, ընդ քաղցրութեանն ճաշակ՝ օշինդր խառնեմ, ընդ կուռս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանդնելն և կրկին գլորիմ: Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ, ասեմ և ոչ առնեմ, խոստանամ և ոչ կատարեմ, ուխտեմ և ոչ վճարեմ, կարկառեմ և անդրէն

ամիսոիեմ, ցուցանեմ և ոչ ընծայեմ, մերձեցուցանեմ և ոչ մատուցանեմ: Ի ձարակել խոցուածոյս անդրէն վերաւորիմ, ՚ի հաշտեցուցանելն՝ վերստին խռովեմ, զուր հանդիսանամ և իրաւամբք պարտաւորիմ, գրիմ և իսկոյն եղծանիմ, նաւեմ և ՚ի դիծն թուլանամ, սկսանիմ և ՚ի հանգիստն ոչ ժամանեմ: Կարգիմ և դարձեալ ապականիմ, ընանիմ և կրկին հեղուսմ, շարունակիմ աստ՝ և անդ ՚ի ստորեւս հոսիմ, բարգիմ և անդրէն տոչորիմ: Ջիմն արկանեմ և ոչ գլեաւորեմ, սակաւ վաստակիմ և բիւրս վատնեմ, դոյզն գանձեմ և անթիւս սպառեմ, զայլս խրատեմ և ես ինքն անփորձ եմ, միշտ ուսանիմ և երբէք ՚ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանեմ: Ոչինչեալ չարիսն նոյնչափ արծարծեմ, սուղ ինչ քաջալերիմ և առաւելապէս լքանիմ, լարիմ և իսկ և իսկ առ նմին մեղկիմ, զայս կարկատեմ և զայն պատառեմ, խլեմ զեղիճն և տատասկ տնկեմ: Ընդ ամբառնալն և այսրէն բերիմ, մտեմ ՚ի բոյնն աղաւնի և անտուստ ագռաւ ելանեմ, գամ սակաւ մի սպիտակ և սրանամ դառնամ բնաւին սեւացեալ, ասեմ զիս քեզ դաւանել և սպանողին նուիրիմ, ընդ յանդիման լինելն և թիկունս դարձուցանեմ: Ապրիմ և այլ մերձոտիմ, լսանիմ և նովին զազրանամ, կեր-

պարանիմ գԱաւթին և գործք գԱաւուղայն կատարեմ, շրթամբք ճշմարտեմ և սուրբ եւ բիկամամբք, աջոյս մատակարարեմ և ահեակ կողմամբս աւերեմ: Ընդ երկրպագծութեան ցորենոյն՝ որումն սերմանեմ, ի բարձրագոյն իմաստից ի վայր իջեալ, ես ինքն գտանիմ: Հրեշտականամ յերեսս և ի խորհուրդս դիւանամ, ի յոտս հաստատիմ և ի միտս տատանիմ, սուտ ձեւանամ և իրօք խոտորիմ, կեղծաւորիմ արդար և արդեամբք ամբարշտեմ: Գասիմ ի պարս հեղոց և ընդ այս կաքաւեմ, ի մարդկանէ գովիմ և ի տեսողէդ պարսաւիմ, ի հողածնելոցս երանիմ և յորդւոցն լուսոյ աւաղիմ, հաճոյանամ յերեսին ռամկին և թագաւորիդ մեծի յաչաց ելանեմ: Ոչ ատեանն դատաւորին թողեալ, խառնակրօնիցն աղերսեմ. հերքեալ ի վեհիցն, սոսկականացն սպրդիմ. մարմնոյս արտաքուստ պճնիմ, և անձամբս երփնիւ ճաշին ճանաչիմ. հպատրիմ դաշն հաստատել, և ուխտակորոյս արուսաբս մերժիմ: Ընդ յաօր մաքուր հոգեկիր և վաղիւ մոլի խելագար. զհերոնի պատուէրն լքեալ, թելադրութեան օձին հետեւիմ. արիանամ զօրապէս, և վատթարագոյնս ընկրկիմ. զծանրութիւն աւուրն բառնամ, և ի ժամ վարձուն անմասն ելանեմ. ի բացուստ ճոռոմն խօսիմ, և ի պա-

տասխանատուութեանն պահու պատասխանել կարկիմ. 'ի յեղս արեւուն հարուստ երեւիմ, և ընդ երեկս ունայն դնդերիմ: Յաթոռս ծերոց բազմեալ, և խելայեղից կոտրտիմ. ննջեմ խեթիւ, և արհաւրօք զարհուրեալ զարթնուում: Անդաստանս կամացս չարաչարս հերկեմ, փոյթ խնամով 'ի չարիս, միշտ առնառակ որդիս, անդարձ տարապրեալս, անզղջական զառածեալս, անմխիթար տրտմեալս, ինքնագրաւ դերեալս, մահու և ապականութեան ծառայեալս, անողոքելի տանջեալս, անփրկելի մատնեցեալս, անպատուաստելի հատուածեալս, անարծարծելի շիջուցեալս, անկազդուրելի խորտակեալս, անհանդերձելի կործանեալս: Եւ եթէ պարտ է զսաստիկն աստանօր ասել անօրինեալս անձին նախատինս, ահա գրեմ, գրեմ և ոչ անխայեմ զխիւնիւթեալ գեհենին: Սատացուածս նախանձու նորոյս Ադամայ երկնայնոյ, որպէս և Այնէնն առաջին հնոյն և հոգեղինին. որ ունիմ ըզբնաւն աստուստ 'ի յանձին զնշանակ ամբաստանութեանս, ոչ դընչոյս տուրեւառութիւն, այլ զանիկաս կշտամբութիւն:

Գ· Եւ արդ ուր իցեն փրկութիւնքն, ուր սկզբնահայրն հաւատոց 'ի յուսահատութեանն վայրի զանղթութեանն իմ չարիս կրկնէ, մեծն մարգարէից քարամբք բանից կոշկոճէ,

արին բարեփառ աշուէին նիզակաւ ՚ի մահ
սատակէ, պատկեր ճշմարտին ընդ Աքարու
համայնիւ ջնջէ, աստուածարեան վհուից՝ յա-
րատոցացն վրիժուց մատնէ, մարդարէածին
տեսանողն՝ ընդ ամպեկացուցն առաջի տեառն
սպանանէ, նախանձաւորն աստուծոյ երկնա-
տեղաց բոցոյին վատնէ, աստուերին լրումն և
նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտրութեամբ հո-
սէ, պետն առաքելոց ընդ Սափիրայի ՚ի կե-
նաց զրաւէ, զարմանալին քննութեամբ հո-
գւոյն՝ բուրումն ինձ մահու ընդ կենացն քա-
րոզ խառնէ: Ընդ անաչառք և ինձ կաճառք
երջանկացն, և ուժգնութեամբ հրամանի վեր-
նոյն արի սպառազէնք. ընդ հրեշտակացն և
մարդիկ, ընդ տիեզերաց երկրի և տարերք,
ընդ անզգայիցն և շարժողականք, որով զա-
տեալ միշտ լինիմ տուժիւք լկանաց յօրինակ
և յիշատակ սոսկալեացն սպասգայից. իբր
հողմով փոթորկի ալեաց յատէտ մրրկեալ
կենացս վատահութիւն, ճնայ անկայուն ՚ի
հաստատութեանց: Զոր եթէ ոք իմաստու-
թեամբ ՚ի քնին առեալ խուզեսցէ զլուսա-
կացն բազմատեսիլ զանազանութիւն, զմա-
նուկն փոքունս ընդ մեծամեծացն դասեալ,
որ առանց թուոյ և քանակութեան համա-
րոյ թիւնդս առեալ անբաւ երամոց եւան զե-
ռան սլանան ՚ի մարմնիս ծովու, վկայեսցէ և

հաստատեցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանադրութիւն:

Դ· Ա՛յլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս, աստուածոյ կենդանւոյ միածին որդի, հզօր բարձրեալ անքնին անճառ քաւիչ ահաւոր, սաստեա ի ձմեռն ամբոխեալ ալեաց ոգւոյս ծփանաց, արձանացո զծաւալս մոլեդին շարժման սրտիս խառնուածեան, ընդոստնեա ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման զգնդեալ մտացս վայրագութիւն: Աղեխի խա-



զաղութիւն հրամանաւ մեծիդ ամենակարան բջոյս սասանման, սատակեա խափանեա ըզբազմագլխեան անդամն ուրուականս զազանեաց ամբիծոյս երկրակենցաղս հինից: Գրեսցես աղօթիս մշտամատոյցս զայս նորընծայ տաւ ողորմելոս թախծագին ձայնի ողբերգ-

արկութեան այսր մատնի. Հան ՚ի խորոց մահուս անդնդոց չքնաղ ապրեցեալ ընդ մարգարէին փրկելոյ. ընկալ զխոստովանութիւն անձնադատ բանիս ՚ի հոտ անուշից. շնորհեա միխիթար դառնութեան վշտաց ուժգին հեծութեան յուսահատելոյս: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԲ·

Վէրսին յաբէլաց կրկին հեծութեան նորին հալոյ
աս նայն ազէրս մաղթանաց բանի.
՚ի խորոց ձորից ես ընդ Աստուծոյ:

Ե· Աւ ահա ձեզ ասեմ, ով եկեղեցիք միանձանց և աշակերտութիւնք կրօնաստանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռաք առ ակնկալութիւն յուսոյն պարգեւաց բարեացն անբաւից տեառն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորհրդոց բանիկ ընծայեցուցի, ընկալարուք զայս աւանդութիւն խոստովանութեան ՚ի շինուած փրկութեան հոգւոց: Ծաներ[ուք] սովիմբ զմարմնոյս պարտութիւն, յիշեցէք զմարդարէականն ընդ առաքելականին առեալ մեզ ՚ի խրատ, զի մի պարծեցայի ամենայն մարմին առաջի աստուծոյ, և զոչ որ է արդարն և ոչ մի: Ծ[ո]ւբ[ո]նականն մի մոռանայք, ՚ի կատարածն իսկ

պատուիրանին դոդջնք զձեզ ծառայս անպի-
տանս. մի եղեցի լինել ձեզ որպք խաբողին.
զգուշացարուք և գրոյն, թէ կերակուրք նորա
ընտիրքն: Քանզի և ես իսկ, որ զայս նուա-
զումն մանաւանդ պղծոյ ձեզ չամբեցուցի,
վկայեալ զանձնէ կամաւորական սուգանաք
բիւր բամբասանաց անբժշկական մեղանաց,
՝ի սկզբնահայրն սկսեալ մինչեւ ՝ի սպառումն
ծննդոց նորա՝ կամայականն յանձնառու-
թեամբ հաստեցի եղի զնա ամենայնիդ պար-
տական չարեաց:

Ր. Լուայ յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ
հաճեցայ, ՝ի յասելն նորա անյարմարապէս
առ այն, որոյ առաջի ոչ է արդարանալ մար-
մնոյ երկրածնի, թէ ոչ երբէք ընացայ, ոչ
պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ համբու-
րեցի ճաշակս մահու: Այլ ոչ ընդհատ ինչ
յանօրէնութենէ. Թողեալ նմա աէր աստուած
զայսոսիկ. Թէ և ճշմարիտ իսկ գրեցաւ, ոչ
ընթացաւ, որքան Թէ գթեաց, ՝ի յասել
զանյարմարն ՝ի դիմաց ժողովրդեանն Իսրա-
յէլի բանիւ Ովսեայ, օրհնեալ աէր, և
մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կեր-
պարան: Այլ ես քանզի գիտողին աստուծոյ
մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս անե-
րեւութիւնն մտաց ՝ի կշիռս եդեալ՝ համարի
դատել զնա նոքօք ամենիւրաւ հատուցմամբք,

ոչ կերպարանեցայց տեսողին, ոչ կեղծաւորեցայց քննողին, ոչ ատելից զոչ գործեցեալսն նկատողին, ոչ խաբէութեամբ ընդ միտ ինչ մտից մեծին, ոչ ի տեսիլ բարւոյ ցոփութեան զբաս քողարկեցից, ոչ ի պատկեր ընտանի զապիկարս երբէք յարդեցից, ոչ խնդնեղացայց ի զարդ օտարոտի, ոչ զգեստեցայց այլով պայծառութեամբ, ոչ պատճուճանս յարմարեցից տգեղութեանս գեղոյ: Ոչ ոք մեղաւոր իրրեւ զիս, ոչ ոք անօրէն, ոչ ոք ամբարիշտ, ոչ ոք անիրաւ, ոչ ոք չարագործ, ոչ ոք վրիպեալ, ոչ ոք սխալեալ, ոչ ոք մոլեկնեալ, ոչ ոք խարդախեալ, ոչ ոք շաղախեալ, ոչ ոք ամաչեցեալ, ոչ ոք դատապարտեալ, ես միայն եմ և այլ ոչ ոք, ես ամենայնին և յիս ամենեցուն: Ոչ հեթանոսք, զի ոչ պիտէին. ոչ հրէայք, քանզի կուրացան. ոչ տգէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին խմասից: Պետ վարժից կոչեցայ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և ըզդովեան առ աստուած եղծի. բարի ասացայ առ եղկութեանն ժառանգութիւն. սուրբ վըկայեցայ ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի աստուծոյ. արդար դատանեցայ ամենայն իրօք ամբարիշտս. հեշտացայ ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատենին Քրիստոսի. յաւազանէ կոչեցայ Ընթուն, և ես ի

քուն մահու ննջեցի. Ի փրկութեանն աւուր Հոգող յորջորջեցայ, բայց զգաստութեանն աչս կափուցի: Ահա դատաստան, ահա յանդիմանութիւն, ահա նոր կշռամբանք և հին դատապարտութիւն, ահա ամօթ դիմաց և տաղնապ հոգւոյ, ահա ինդիրք փոքունց և կշիռք մեծամեծաց:

Գ. Այլ դու միայն տէր աստուած մարդասէր, անօրհնակալ և երկայնամիտ, համբեաց մեղապարտս անձին ընդ վերջին պարտաւորութեան աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս: Մի լսայց Ի քէն զայսոսիկ, զթած, փոխանակ զի ես ինձէն անձինս զրեցի: Արդ բարձես և վերացուսցես զպահ պարտաւորութեան կանոնիս ընդ քեզ կապելոյս տենչանօք հոգւոյս: Հան զնախատինս պատկառանաց խայտառակութեանս, ծածկեա աչմէդ կարողութեան զոդել տեսակ մարմնոյս մերկութեան, մատո հանգստեան զթոպեալս ուժգին մեղացս բեռամբք, կարգեա ինձ սահման հետոյ բարութեան առ ելս կենացդ, պահեա յիշատակ ինձ ողորմութեան և զինի մահու կեանք ամենեւին, օրհնեալ յերկինս և գովեալ յերկրի, բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆՆ ԺԴ.

Ա՛ջ որպէս յաւելուած կրկին հեթանոսական նորին հակառակ առ նոյն ազգս տալոնաց բանիւ.
Ի խորոց սրտից ետուր ընդ Աստուածոյ։

Ը. Թագաւոր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեալդ միայն տէր Յիսուս Քրիստոս, զոր է փոխարկել յանակնկալս կենաց յուսահատութեան զաւտակիչ անէծս առ կեցուցանող օրհնութիւնս, զպարտաւանս վհատութեան առ զուարթացուցիչ զովութիւն. ընդ ամօթոյն՝ համարձակութիւն, ընդ պատկառանացն՝ պատիւ, ընդ տարագրութեանն՝ յոյս բարութեան, ընդ բաժանմանն՝ ակնկալութիւն միութեան, ընդ սպառնականացն բանից՝ ողբական սփոփանս, ընդ միանգամ դատապարտութեանն կրկին ազատութիւն։

Ը. Ողորմեա, տէր, մեզ մեղապարտիս յաւուր արձակման ընչից կենդանութեան, մինչ աչացս ողորմելոյն հայեցուածս ի բարձունս կողկողիցի, զբազմարկածեան ուղւոյն զանզերծ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մտացս տեսանելի զանձնայնիս վտանգեալ. և ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յելեցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մատանցս, կարկամ հառաչ-

մամբ, նուազ հեծութեամբ, նրբական ձայնիւ, յոգի թախծութեան յոքնամանեայ տարակուսանաց՝ ի խորոց աներեւութից ըզգործեցելոցս ողբալով հառաչեմ: Կարող ես, բարեգութ, և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութեամբ ասելով, թէ ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ, և կամ թողեալ լեցին քեզ մեղանք քո, կամ թէ երթ ՚ի խաղաղութիւն սրբեալ ՚ի մեղաց: Այլ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ով երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց: Յորժամ, որ այժմ բանապատճոյճ խրոխտաձայն սիգացող բարձրապարանոց, անկեալ դնիմ դի անկենդան, կարկեալ ՚ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ անդամօք, խփեալ շրթամբք, կափուցեալ աչօք, տախտակ անշարժուն, կոճղ կիսայրեաց, արձան անղգայ, պատկեր անբարբառ, դոյութիւն անշունչ, ողորմելի տեսիլ, աշխարհի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտաստուերի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօթափեալ ծաղիկ, ծորեալ գեղ, շիջեալ ղամբար, դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ, աղխեալ ազդարան, սպառեալ աղբիւր, թալկացեալ մարմին, ժողխեալ որովայն, քակտեալ տաղաւար, կոտորեալ ոստք, բաժա-

նեալ յօդք, հատեալ ծառ, սղոցեալ արմատ, թողեալ տուն, հնձեալ արտ, ստորախուզեալ բոյս, օտարացեալ բարեկամ, մոռացեալ պատեհատ, թաղեալ գարշելութիւն, մերժեալ ատելի, բարձեալ խէթ, անարգեալ կմախք· և իբր զանպիտան առ ոտն կոխեալ: Կարօտեալ այլոց մաղթանաց, որք զհատատոց թշուառիս ձայնիւ նուագեալ աղերս հառաչմանն, ցօղով արտասուաց բարերարիդ գթութեան ի բարձունս տարածանեն: Ջառ քեզ դարձն յեղանակին արգահատելով, զոր օրհնեմ· ըզնշան խաչիդ փրկութեան, զոր երկրպագեմ· զյարութեանն ճշմարտութիւն, որում հաւատամ· զփառացդ քո յայտնութիւն, զոր փառաւորեմ· զդատաստանիդ ահաւորութիւն, զոր խոստովանիմ· զբանիցդ յանդիմանութիւն, յորմէ զարհուրիմ· զհոգւոյդ սրբոյ ինձ ուղեկցութիւն, զոր պաշտեմ· զօծմանդ տեառնագրութիւն, զոր և համբուրեմ· զթագաւորելն ընդ քեզ, տէր Յիսուս, որում պաշտիմ: Ընդ լքաւ մերժեցաւ բարձաւ տրոհեցաւ փախեաւ սպացաւ տեղի ետ կցորդութիւն զուգութեան կենցաղոյս կենդանութեան, և յոյսդ որ ի քէն պարգեւ՝ ճնացական և անջնջական յիշատակարան պահեցաւ:

Գ· Տէս ողորմութեամբ ի տարակուսանս վտանգելոյս· միայն բարեգութ փառաբանեալ

որդի աստուծոյ, քաւել բժշկել կենդանացնել պաշտպանել նորոգել նկարել կանգնել հաստատել, վերստին ստեղծագործել յերջանիկին անարատութիւն. քո է կարողութիւն, քո է փրկութիւն, քո ողորմութիւն. չէք քո անկարութիւն, այլ ամենեւին զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, անվախճան թագաւորութիւն, իսկութիւն, ինքնութիւն, ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լուսաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և անյաւելուած, խնկեալ խորհրդով անթարգմանելեաւ Աղօթարդութեանդ սրբոյ, գոհաբանեալ յաւէտ և եւս առ ամէն ՝ի նոյն պաշտօն հաւատարմութեան միագահու զուգականութեան, երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԴ.

Ա՛ջ որդին յաւելուած կրկին հիւծութեան ոգին հոգւոյ աս նոյն աղբր հաղորդաց բանիւ.
՝ի խորոց սրտից իւոյ ընդ Աստուծոյ:

Ը. Աբբայ երկնաւոր, տէր բոլորեցուն, առ ամենայն բան յամենայնի միշտ երկայնամիտ, աստուածոյ կենդանւոյ անքնին որդի: Ահա անդ է ողորմելն իսկապէս, յորում հաւատաւ ակնկալութիւն վաստակոյն. անդ է բարեզործելն, յորում տեսութիւն իմաստից խափա-

նեցաւ. յայնմ ժամու է մարդասիրեալն, յո-
րում տկարութեանն վտանգ պաշարեալ տի-
րեաց նեղեալ և արտաքոյ. անդանօր է բժըշ-
կութիւն աստուածային քո ձեռինդ, յորժամ
բնաւ անդամոցն տեղի ետ կենդանութիւնն.
այն վայր է այցելութեան, յորում ելք հնա-
րիւց ոչ գոյ: Այն է քո մեծութիւն, յորժամ
դյուսահատութեան վէրն ողջացուցանես. այն
է հարազատ քումդ ազգակցութեան, եթէ
յանահնկալն ժամու արուեստաւորեացես փըր-
կութիւն. այն է հանդիսարան քում յաղ-
թանակի, եթէ զփակեալն մուտս կենաց 'ի
սպառումն հնչոյս բացցես. այն են քո շնորհք



վայելչականք, եթէ զարբեացս իմոց մոռա-
ցեալ՝ զբարեացդ քո յիշեացես: Յայմ ես
անոխակալ, եթէ ապախտաւորիս ընդ երախ-
տաւորացն խնամարկեացես. 'ի տեսին ծանեալ

գիտացից՝ եթէ նայեցար ՚ի նուէր բանիս նախ-
նի գթութեամբդ, եթէ զսովորութիւն չա-
րեացս բարձցես:

Ա. Յաղագս այսորիկ հիւսին բանք և ե-
ղանակին նուագերգութիւնք, յորժամ տէրն
բարի՝ չարն ծառայի զբարեգործացն պար-
գեւեսցէ. որ մինչ իրաւամբք մնասցէ բանտի,
նա արքայական ապարանս զնա հանդուսցէ.
մինչ հրաւիրեալ է ՚ի գուբ տղմոյ, նա ՚ի բաղ-
մականս ամենապատիկս զահուց զրկեցուցա-
նիցէ. մինչ բրելոյ զաչսն դիտեսցէ, նա ՚ի
բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ.
մինչ ծայրատութեան մատանցն սպասէ, նա
մատանի համարձակութեան մատուցանիցէ.
մինչ հայի հարուածոց գանից, նա զթոց
գիրկս արկանիցէ. մինչ պատրաստեալ յու-
սայ կորստեան, նա երեւելի տեսողաց բաղմաց
առնիցէ. մինչ ակն ունի սատակման մահու,
նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ. մինչ
հատման գլխոյն նայեսցի, նա զնոյն պսակաւ
պայծառացուցանիցէ: Այս պտուղք օրհնու-
թեան, գթած, աքանչելարմատ քումդ շառա-
խիղաց. այս արդասիք կենաց արարչականդ
քո հրամանաց. այս իղձք խորհրդոց խոս-
տովանելդ քո տենչանաց. այս նշոյլք լուսոյ
ամենասփիւռդ ճառագայթից. այս ախորժու-
թիւն ճաշակաց բարեբանելդ քո քաղ-
ցրութեան:

Գ· Ա՛ո միայնոյ են այսոքիկ, տէր· Ի՛ քէն աղղեցաւ գրել ինձ զսոսին· ահա գքոյդ յաւուկ աղերս աղաչեմ, օրհնեալ, Ի՛ քոյոց այտի պարգեւեալ շնորհեա· բաց, տէր, զքանձս քո բարիս, ըստ աղերսանաց առաքին: Մ՛ի խառնեացես Ի՛ համբարս բարեացդ քոց Ի՛ չարեացն իմոց· մ՛ի շեմարանեացես զառելիան քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրելիան քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք· մ՛ի պահեացես Ի՛ տացուածս քո պաշտելիս զանախորժելիան քո՝ որ են մթութիւնք և դաժանութիւնք, և զիմ վնասելիքն՝ որ են մեղք և թշուառութիւնք: Մ՛ի զրեացես աջովդ օրհնութեան Ի՛ մատենիդ կենաց զմուրհակ պարտուց իմոց անիծից· այլ զանհնարաւորսն ինձ համարեալս՝ մեծացուսցես կրկին առաւել զանուն քո տէր Ի՛ նոսին, ցուցանել զդոյն ինձ դիւրինս և հեշտականագոյնս: Ե՛աւ են իմ պարտիքս և անդր քան զթիւ, այլ ոչ այնքան հրաշալիք իրրեւ զքո ողորմութիւնդ· բազում են մեղանքս, այլ յաւէտ են նուազեալ առաջի քոյդ նեղողութեան· յաճախ են չարութիւնքս, այլ յաղթական են համայնից, հզօր ամենակալ, քոյդ մարդասիրութիւն· ինձ են անհամար իմոյս անձին բիծք, այլ քեզ յոյժ գրաւեալ են ընդ սահմանաւ: Ա՛յ են այնքան զօրաւորք

առ կենդանութիւն զինք մեղանաց պատկառեցելոյս պղտոբերութեան, որքան յիշատակ մահու կենդանոյդ առ վանումն կործանողին բռնութեան: Օ՜ինչ ազդեսցէ փոքր խաւար՝ աւուրդ առաուծոյ, զիաւրդ բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ մեծիդ ճառագայթից. զիաւրդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակութիւն հեշտութեան մարմնոյս տկարութեան: Օ՜ինչ երեւեսցի յաչս ամենակալիդ քո առաուութեան՝ կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց. ահա կոշտ մի հողոյ դիւրաւիրեալ՝ ի կարծրութենէ բախման վանեցեալ, իբր զպղպջակ անձրեւոյ բազմաղեղ հոսմամբ քո կամացդ չքացեալ պայթեալ անդստին: Օ՜ինչ պիտոյ են քում զօրութեան ամենահնարդ կարողութեան ժամանակաց առաւելութիւն առ յանցաւածոյ իմոց քաւութիւն. ոչ քթթել մի ական, ոչ խոն մի տեսութիւն ածանցական, ոչ սակաւ մի նայեցուած փայլական, ոչ կիսամանեայ յամրութիւն, ոչ փութացելոյ ոտից հեղեղումն, ոչ յելից բարձրութենէ միոյ կանղնոյ կաթի անկելոյ, ոչ դիծ մի չափոյ մնաց հետեւեցելոյ, ոչ նշուղից արագութիւն, ոչ շնչոյ տուրեւառութիւն, ոչ ինչ յայսմ յանդոյ և յանտապաւորական նմանութենէ անձեւ օրինակաց յաւէտ անկայից՝ այնքան առաժամայնք կամ հա-

բեւանդիկք, որքան եղծմունք, ցնդմունք և
հալմունք մեղացս սառնամանեաց պահեստի
քումդ զօրութեան, աստուած ամենայնի տէր
Յիսուս Քրիստոս, որդի անքննին կենդանւոյդ
աստուծոյ: Որ տաս պարգեւես արեւ քաղ-
ցրութեան՝ շարաց ընդ բարիս, և անձրեւես
երկաքանչիւրոցն անաչառապէս. կշռես սահ-
մանես իրաւամբք և զվտանգս կրիցն հաւա-
սարաբար, որոց մեծ է հանգիստն առ ակընա-
կալութիւն պարգեւին, փոքր խթանաւ փոր-
ձութեան զգակաւութիւն պարտուցն աստէն
վճարես. իսկ որ զերկիր ընտրեցին, ներես
ողորմութեամբ, տալով և սոցա գարման ընդ
նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպասես: Եւ
քեզ փառք ամենազօրիդ առ ամենայն հրա-
շագործութիւն բարեխնամող երկայնմտու-
թեան, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԲ·

Ա՛ջորին յաւելաւած լինի հեծեալին նորին հոլով
առ նոյն աղբրո մատնանաց բանի.
Ի խորոց սրտից իւոց ընդ Աստուածոյ:

Ը. Եւ արդ ընկղմեալ զմայլեալ և ի սպառ
ծածկեալ ի յանճառութենէ առաւելութեան
բազմամանեայ յաճախութեան մեծիդ և-
բախտեաց, որ ամենառատ լրմամբ անհուա-
զելեաւ յաջմէ և յահեկէ ի դիմաց և ի թի-
կանց համբարեալ կան անբաւութիւնք:

Դարձեալ առ նմին կրկնապատիկ երկրորդութիւն աստուածային հոգւոյն ազդեցեալ, որ ինչ յառաքելոցն սահմանեցաւ առաղութիւն՝ առ ամենայն լուսաւորութիւն եկեղեցւոյ դաւանութեան՝ մկնոպէս եղեալ աստանօր։ Եւ որ առ անշնչականս նիւթեղէն ցանի երանաւոր կերպարդութիւն անճառելի։

Ր. Ա աստուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ դովեստի դաւանման ճշմարտականի։ Ո՛չ որպէս երբեմն հերձուածականին չարափառութեամբ ամենապատիրն խաբէութեամբ նենդողին կարծիւն հատուածեալ ՚ի բաց հերքեցայ՝ եղեալ ՚ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ՝ ՚ի յաւանդ իսկապէս շնորհի անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ՝ ՚ի թռիչս թեւոց լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետեւեալ։

Գ. Ա՛յլ քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հոգեւոր երկամբք ծնիցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ ամենից կուսից իսկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի. զի ծանիցի ցուցցի և այլոց եւս ապագայիցն ազդաց պատմեցի որքանութիւն փառաց խնկելոյն, արժանապէս պաշտամամբ պատուեալ իբր մեքուր մարմին ընդ դշխոյ մարդեղութեան բանին աստուծոյ, ՚ի յիշատակ ճառիս հաւատոյ Երրորդութեանն դաւանութեան։ Եւ արդ ՚ի յայս օրինակ հո-

գենկար պատկերի բանի, որ գնորանէս լուսոյ յարմարի, ընկալ գնս, գթած օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ ի սմին: Ձան սովաւ ի հոգւոյս զնախատինս մեղացս, անմեղս և անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցս, յաւել զկարս ի տունն Դաւթի, և անտուստ փոխեալ ի տունդ աստուածոյ, ըստ մարգարէին ձայնի՝ որ ի քեզ Յիսուս ակնարկի: Մի սոսկ զմոիցն, և մի անօգուտ զելիցն հետեւութիւն արասցես, մի զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարեսցիս, և մի զհամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանիցիս, մի զպաշտօնն ապաշնորհ գրեսցես, և մի զեբկրըպագութիւնն անխորհուրդ լքցես. մի անպատուղ լիցի տեսականութիւն պատկերին, և մի աննշոյլ՝ կերպարանին աքանչելութիւն, մի անհուր ողջակիզին սպանդ մոռասցի, և մի պատարագ ուխտի այս ճառի՝ արուսեքոյ ցրեսցի. մի ճաշակդ լուսոյ ինձ մահու լիցի, և մի բաժակ քո կողիցդ արեան՝ ի դատապարտութիւն եղիցի:

Դ· Աղաչեմ զքեզ, տէր Յիսուս միդ յեութենէդ, որով զգիտութիւն հօր քոյ և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծանեաք. քանզի ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգեւ կարգս եկեղեցւոյ, և ի սմին աղօթանուէր լուսաբան կենաց փրկութեան բարեաց, տա-

բաժեալ զսիրտս ձեռաց համբարձմամբ զայս կնդրուկ բանի բնակողիզ՝ ի սմա տիրոջիդ բնաւից երկնաբնակիդ մատուցեալ յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեան:

Ցառ. որ՝ ի նիկիայն սահմանեցաւ բան, այլ իմն խորհրդածութիւն աստուածային առանձնութեան:

Ե. Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութեան երգոց՝ ի հաւատս պաշտամանն բանի զբարեհրամանն պատճառն եղելոց զերբորդութիւնն անակիզն՝ անհամեմատ բարձրութեամբ, անհասական խորհրդոց և անըմբռնելի իմաստից, անզննելի զգայութեանց և անքերելի եղելոց, քանակութիւն վերնականն երկնի և անսահման ներքնային խորոց, լրութիւն սպառմանց և նախադրութիւն սկզբանց, մի յերից անչափոյ կերպից, և երից՝ ի միոյ անհատուածելի իսկութեանց, ՝ի վեր քան զմտաց անարդելութիւն յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ: Անփոփոխ բարի, անսասանելի ուղղութիւն, անխառն կերպարան սիրոյ, մեծութիւն անչափարդ, բարձրութիւն անխտարհելի, անվասանելի տեսակնութիւն, բարերարութիւն աննուազելի, կամք կայուն, հրաման կենդանի, ակնարկութիւն փրկչական, երանութիւն ճշմարիտ, ակնկա-

լութիւն հաւատոյ, խոստումն անսուտին, ա-
ւանդ արդասաւոր, ստոյգ աւետիս, վերամ-
բարձումն անձեռնարկելի:

Ը. Մի հայր միայնոյ որդւոյ՝ միական հոգւովն պատուեալ, ամենահարուստ բարու-
թեամբ ամենեւին ունայն ի չարէ, օրհնա-
ձայն գոհաբանութեամբ անքնին ներբողել գովեալ:

Թ. Մին բարձրեալ ահաւոր անուն՝ հա-
մապատիւն կցորդութեանց, անպատուա-
կանութեանց, եռալուսեանն զուգակցու-
թեանց, անյաւելուածն լրականութեանց, ինք-
նիշխան կամաւորութեամբ պատուասիրեալ առ հայրն հանգուցատիպ՝ գործակցութեամբ հոգւոյն սրբութեան խոնարհեալ իջեալ ի յերկինից, աննուազ գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մնանել յարդանդ մայրենի աս-



տուածածին կուսին մաքրութեան. յորում աճեցոյց զբոյն օրհնութեան ի լուսաւորման անդաստանին անարատութեան. ընդ ամենա-

կատարն էութեան համամանեալ յանանջրպետ միականութիւն, թափանցական խառնուածեամբ յաստուածութեանն ողի բաղկացոյց զգոյութիւն ընդոյս հրաշապէս: Որով անբաժանելի երասանաւ սանձաց կրթութեան զատահակութիւնս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պողոյն կենաց ՚ի ծայրս լուսոյ անմահականն տնկոյ. ՚ի մահ վերաւորեցաւ՝ աստուածութեանն անընդմիջելի ՚ի մերասերն մարմնոյ, որով կենսացոյց զգործին պարտեաց, արարչութեանն իսկութեան ՚ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վըճռացեալ: Իջեալ ՚ի վայրս խաւարային դժոխոց, եհան զկապուտն իբրաստեղծ ՚ի կապանաց օձոտողին. և իբր ՚ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն նահանջեալ զդիմեցումն մահու, կանգնեցաւ կենդանացաւ աստուածապէս՝ եղեալ ՚ի յերկրէ հացն կենաց և հովիւն հօտից բանաւորականաց: Յաւատարիմ եղեւ յաշխարհի, և երեւեցեալ նոյնութեամբ ամենեւին աննուազելի, որպէս եկն համայն, և համբարձաւ բովանդակ. բազմեցաւ նստաւ ՚ի դերունակն գահոյս նախնականին պարզութեան արարչական փառաւորութեամբ: Զոր խոստովանիմք աստուած բարերար և տէր բոլորից, որ դասի զամենայն երկիր արա-

դար ընտրութեամբ յաւուրն մեծի, որ ինքն է սկիզբն և ինքն կատարած, նոյն առաջին և նոյն առյաւտեան, անպակաս բովանդակութեամբ թագաւորեալ ՚ի լոյս անմահութեան:

Ը· Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ և ընդ սուրբ հոգւոյն՝ նոցին փառակից հոգւոյն տէրութեան· որ ստեղծ ղբնաւս և կենդանացնէ զամենայն, որ անդատին իսկ ՚ի բնէ համեմատարփակ մտութեան աշխարհակալն միոյ շրջէր նկարէր և կերպարանէր ամենուն նակ ջուրքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ ՚ի կատարումն արդեան խորհրդոյս՝ զսուրբ աւազանն լուսոյ: Նախ արար և այժմ գործէ, գոյացոյց և միշտ կատարէ՝ արուեստս, աքանչելիս, նախատեսութիւնս սրբանելոց, աղղմունս աստուածօրէնս, զօրութիւնս զարմանատուրս, մարգարէս, առաքեալս, վարդապետս վարժողս կրթութեան հանճարոյ: Ընդ սրբարարն մատուցման արեանն Քրիստոսի յարդարեաց, քաւութիւնս անձանց, առողջութիւնս մարմնոց, ըստ նմանութեան Քրիստոսի ողորմութեամբ հրամայեաց: Ա՛կրտեաց և դեր քան զջուր, ինքեան միայն բաւականութեամբ նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նովին բարեգործութեամբ զօրանայ: Ա՛կայեաց միածնին աստուածութեանն ՚ի հոսանան Յորդանանու, օրինակաւ տեսու-

թեան ամպոյ ցուցաւ ձայնիւ հօր ՚ի լերինն Թաբօրական: Ի նոյն տիպ նմանութեան հովանի եղեւ յակոբեան տոհմին ՚ի յելն Եղիպտոսի. յուղեկնացութիւն զօրավարութեանն Մովսէսի՝ հողմով սաստկութեան զիարատան ընկղմեաց: Վահանայս կատարագործէ, խմաստունս կազմէ, թագաւորս զօրացուցանէ, քաւութիւնս ընձեռէ, կեանս շնորհէ մահացելոց ՚ի նորոգութիւն յարութեանն: Նոյն ինքն է օծումն մարդացելոյն աստուածոյ. միանձնաւոր հաւասարութեամբ ընդ հօր երկրպագեալ՝ ՚ի պատիւ մեծութեան որդւոյ, աննահման փառաւորութեամբ օրհնեալ յաւիտեանս. ամէն:

Նորին ասացեալ ՚ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց:

Թ. Դաւանեմք ՚ի հաւատ ուղիղ և անխոտորնակ ամբծութեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկառուցեալս խորան յանշնչական արձանաց՝ աստուածային բնակութեան եկեղեցւոյս շինուածոյ. որ զերազանց գտաւ և երկնի ամենազարդ բարձրութեամբ, որ ՚ի նոցին իսկ յառաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, ՚ի սպասաւորաց բանին պաշտեցաւ: Ակիզբն առեալ կենացս այս դանճու ՚ի վերնայարկին սրահէ,

խորհրդակատարն վայրէ, զոր Հոգին աստուածոյ լցոյց, փայլեցուցեալ ՚ի նմա զօրութիւն յաւուր մեծի պենտակոստէին. նախ զառաջն



բարեեռեալ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաքելութեան, յորում ապա և ՚ի նմին բնակեցան տուաւ լուսանոտոգ բարեփառութիւն: Ասաի արիւն հզօրին աստուածոյ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զ՚արեւլեան մահտեղուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեան կենդանութիւն անմահութեան ՚ի սմա ազդելով: Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական ՚ի սպառաւորութիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ թեւօք սուրբն պահեցի. նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեղուն օրհնութեան ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք հերքի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան

զաստուածային պատարագն մատուցանէ. մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն՝ յայս նուիրան ընծայեցուցէ: Մի՛ ի սմա լուացումն՝ ի մահն Քրիստոսի, զի մի յանդէտս անարդեալ աստուածութիւնն՝ ի ծանուցելումն զնախինին կրեսցէ. մի ձեռնադրութիւն՝ ի պատիւ օծութեան լուսոյն, զի մի յանքծութիւնն խաբէութիւն խառնեսցի. մի և շնորհօք քան թէ ապաշնարհութեամբ քառութիւն, զի մի ճշմարտութիւնն կերպարանօք խորամանկեսցի. մի յընտրութիւնն ապառնի՝ հաւատ, զի մի ապառնալիք հատուցմանն զթոյրս ինչ օտար համբաւոյ գրեսցի. մի երկաքանչիւրոց գոյութեանց մերոց իրաւամբք կշռամբութիւն, զի մի կիսամանեայ առ մարդն նեղքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութիւնն կարծեցի յանմահ զօրութիւն արքայական որդեգրութեանն, զի ընդելութեամբ երկրայնոյս առաւելութիւն վերնոյն թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի. մի յոյս կենդանութեան առ անեղծութիւնն սրբոց, զի աներկեանութիւն խոստացելոյն՝ ի միտս ունկնդրացն ծանուցեալ հաւատասցի:

Յ. Ա յս դշխոյ պաշտելի անշնչական եկեղեցի տայ կեանս և մահու իշխէ, ըստ օրինակի ազամեան պողոսն յարմարապէս ճա-

շակելն. զերազանց քան զբանական յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին նկարեալ ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ: Գրեալ եւս է տեսակ մեծութեան վերնումն կամարին սկզբնատուր յառաջակատուցդ քան զբնակիչս հոգեղինացն ի նմա զօրութեանց: Ոյր իմն ընծայէ թռիչս մարմնոց ընդ թեթեւութիւնս հոգւոց, պատուականին հարըստութեամբ զանարգն յարգատրել: Ոչ ինքնակիր մեզոք զազրանայ, եթէ ոչ ի մարդոց չարաց և կամ՝ յանհաւատից կռիւիցն: Տիպ իմն է զարմանատուր յաղթող խնամատից մերս տեսութեանց. անբանն ի բանաւորէն կատուցեալ, նմին օժանդակեալ իբր վհատողին յաւէտ նուաստի: Պետ է քան զմարդ, որքան ընտրելոյն Մովսէսի ցուսոյն յաղթողական. առաւել քան զբանաւոր, որքան զՀարսին գաւազանն խորհրդական ծաղկեցեալ. զերազանց քան զմնաւոր, որչափ զնշխաս և զնշխարս գեղահերձ մաշկեանն բազմանշելահրաշ փայլեալ արուեստիւ: Օգնութիւն պարգեւէ կրկին ամենակատար սրբատնեալ ձեռաց մաքրարար, քան թէ զնիւթական մարմին նիւթական քարի և հողոյ, զոյակից հարազատ զգայականաց և սրբոց: Իբր բզկտեմն անմահ կենդանի ի կործանումն է և ի

կանգնումն. որպէս զդաստուրն ամենից հոգւոց Հանդիսանայ հրաշապէս աղղմամբ յանէծս և յօրհնութիւնս. իբրեւ տեսող անեղութենէ զոմն հրապարակէ և զոմն տածէ, առ ինքն կոչէ զբնալ յանուանէ իւր զտիրող հրամանատար էիցս: Իւր զբնաւն յատենական անհարուածելի է՝ ի դիմամարտից. ըմբռնէ զհոգեւորս իւր զհնարագրութիւն մեծին արուեստի. անմեղս և անվնասութիւնս ըստ Քրիստոսի հետոյն ընթանայ, բարձր ճոխութեամբ անպատկառաբար համարձակապէս զօրէն գովելոյ գլուխ ամբառնայ:

ԺԱ. Այնքան մեծ ունի արժանութիւն, մինչ զի զորս ըստ պատկերի առաւծոյ եղեն, կանոնաւ խոյրէ: Յետ յոգունց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեսցի մարդ զբ սխալեալ՝ ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի, այլ ընդ անպատրաստիցն թերութեանց զբժուարի. ոչ նգովի, այլ տեղի տայ ոչ պիտաղացն զնորհին զբափ. ոչ լքանի ինքեամբ պարտաւոր իւրումն դառնալ, այլ՝ ի մերոց գործոց խրթնանայ. ոչ թողացուցանէ երկիցս մուտչել յբմբռնումն ոտիցն կենդանատուաց, ըստ տիրական անճառ խորհրդոյն. ոչ կրկին յատուր զնոյն ցուցանէ զև մի անբնտրաբար նուիրանն խայտառակեսցի: Վշտակէ կաթեաց զօրապէս իբր անախտակիր ապակա-

նոքա ասեն որ՝ ի մեզ չարժմանց. առանց բարբառոյ սիրատիպ հրամանաւ դատի:

ԺԱ. Նա զի և տատան իմն է մարդկան, կրկին երջանկական, ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան. ոչ բաղմօք անբանիւք դաւանաց դասուք և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինն ինքն հաւաքէ. ոչ յաչխ խառնիլեան բերի, այլ՝ ի բարձրութիւնն երկնի համբառնայ: Որք զաշակերտ հրահանգեալ հոգւոյն աստուծոյ վախչեն՝ ի նենգութենէ. ոչ՝ ի բողոք մահու մարմնոյ հաբուածոց, այլ՝ ի կենացն աւետիս ըմբռնեալ ածէ. ոչ Աստիւ ձեռնարկեալ գործի, այլ հաստոցին հրամանաւ շինի. ոչ Մովսէս ընդ Ռեսելիէլ, այլ միածինն աստուծոյ հոգւովն սրբով զսա հանդերձէ. ոչ յարաշարժ հանապազաւոխ, այլ մշտակառոյց հիմամբ անսասանելեաւ զսա հաստատէ: Պարձեալ իբր զառաքեալն անխոս վայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութենան տեսողականաց մեզ առաջնորդէ, որպէս կերպարան անքանակ Նչին յառաջ հետեւեալ՝ ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատրաստէ: Ընդ Ադիեղի անտուտ սասակէ, եթէ ոչ խաչապէս յոդի բերիցի. սպանանել վանեալ վազվազակի առժամայն, եթէ անանայինն լծակցութենամբ երկրաւիրաբար գետնակոխ սայլիւք

իբր զանօթի ինչ՝ ձեռնադիրն բարձեալ տա-
նիցի: Ոչ լեզուաւ մտրմունչ, այլ բանիւ հրեշ-
տակաց խօսի. ոչ ունկան պղտկանութիւն,
և սրտագոչս մատուցանել լսէ. ոչ ձայն կեր-
պատրական բարբառոյ, և զպատգամն գոր-
ծոյն Քրիստոսի համարձակ պատմիչ
հռչակէ. ոչ խաղալեաց շարժականութիւն,
և աստուածայնով իմն կենդանութեան հա-
զագաւ ազդէ: Ոչ ոսկեթաց և ջլոց յօդուած,
և երկուք հազարօք կանգնօք լայնութեամբ՝
իբր զդրունսն անհամար բարձրեալն աստուծոյ՝
զկենդանական զօրուն զումարտակ հերթայա-
կան վառեալ ամբոխին, և այժմ ընդ նոսին
իբր զանմնաքուրս ի սրբութենէ՝ զոմանս ախ-
տիւ մեղանաց ջեռեալս հատուածեալ յին-
քենէ հեռի, ուղեկիցէ ապրեցելոցն ի տաժա-
նաւոր աղետարկութեանց: Այլն իսկ էու-
թիւնն աստուծոյ մարմին եղելոյ՝ անուամբ
այս վեմի նշանակեցաւ, պատառմամբ կողին
զբնաւս արբուցեալ: Ոչ արեան երակաց ըն-
թացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք թա-
փանցանց միութեամբ զոյն կենդանացու-
ցեալ նորոգ պաշտպանէ. ոչ Սողոմոն կամ
Օհրաբարել մահկանացուաց ոսոխկանու-
թիւն, այլ ամենից ունողին իմաստ զսա գծա-
դրէ. ոչ աննուիրական հասարակաճաշակ ի-
ղով առ ի Յակոբայ պարարի, այլ ահաւորին

արեամբ և փառօք մեծին օձանի: Ոչ առն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ առաուծոյ զարբին որդիս կնքեալ ձեռնադրէ, ոչ կենցաղոյս յերկրէ յղայմունս, այլ աբքայութեանն երկնից ժառանգս կրթէ. զի ծոց իւր զրդեալն զոգոյն Աբրահամու ընծայեցուցանէ: Փեսայ հարսնութեան սորա որդին աստուծոյ կենդանւոյ, օրիորդք խընճոյից սորին՝ հայրապետացն գումարք: Սոյն ինքն մուտացումն առնէ այսպիսիր բարձանցն կառամոլութեան, զի զերկնայնոյն աստուծոյ ունի զծանօթութիւն. օտարութիւն է ամենայնիւ դիցն դրօշելոց, զի ի համօրէն քարինս սորա Քրիստոս երկրպագի. քակտումն է յայտնապէս ուրուական ըղձից անստուագ, զի ի բնաւից մայրից աշխարհի նմանութեամբ կենացն փայտի ի սմա տէրն նուիրի. խորտակումն է համայն դիւապատիր յուսոյ արձանաց, զի քարն գովեալ կարկհան աակամբք և վիմօք կենդանեօք այսրէն հաստատի:

ԺԳ· Ընդ այս յարկ չքնաղ և աստուածընկալ ազատ է միանդամայն ի յամենատես ծառայութենէ. ոչ օրինակ վերնոյն Սիոնի, քան թէ ճշմարտութիւն նմին ճանաչի. ոչ կառապետութեանն կապատ բազին և կամ լծով օրինին տեղի պարտաւորութեան, այլ տէրունի բարերարութեանն պարգեւարան ի

մէնջ Համբուրի: Ոչ սասանի երբեք յայլ ինչ կերպարան ձեւոյ փոխարկեալ, այլ ՚ի նոյն շուք փառաց մնծապէս ընդարձակի. սոյն ինքն և երկինն երկնի՝ յերկրի լուսապայծառ կերպիւ հռչակի: Որպէս չէ սասանց հօրն Աբրահամայ, և ոչ սասանց այսր մեր արդանդի յորի կատարիլ: Ընտան շրջի անբովանդակելին, եթէ ոչ ՚ի սմին տան տաղաւարեսցի. ոչ ունի տեղի գլխոյն Հանդստեան տէրն բոլորից, եթէ ոչ ՚ի յայս կայարան կենաց մըտեալ ապանիցի: Զան ՚ի կամար վերնայինն երկնի՝ ՚ի յայս հիմնաւոր բնակութիւն առնուել պարծի, անբաւութիւն սատուածեան լուսոյն, որպէս զդէմն մարգարէին և զօրինակս սորին ծածկեցին, որպէս փախեան ՚ի փառաց երեսաց Նորին, և նմանութեան սրտին՝ որ ՚ի տաճարին՝ ոչ Հանդարտեցին, ՚ի տօն Հանդիսի մեծի զովեստի, և ՚ի բանակացս դասուց խմբեալ նուագի. սատ օրհնի կրկին բազմանօք, քան ՚ի դրախտն վայելչական:

ԺԴ. Այս մայր հոգեւոր երկնաւոր լուսաւոր, քան թէ երկրաւոր շնչաւոր մարմնաւոր, զիս զգուեաց որդի. կամ՚ն սուրբ արիւնն Աբրահամայ: Եթէ սատուածածնին իսկ պատկեր զոյն ոք գրեսցէ, ոչ անօրինի Իբր զնշան խաչին փրկութեան զօրութիւնս

զարմանագանս և արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշագործէ. բեմ ահաւորին առնի՝ ի սմա հաստատեալ տեառնի. սոված խորհարարարոյին հերձուածողաց մոլեգնաճառ բերանք կարկին: Ընդ և քարինս իմն իմաստալիս և բանաւորականս, որով զդազանամիտս անմաքուրս բացուստ ի բաց հալածեալ տարագրէ: Ծնանի և աստուածս ոմանս եղականս՝ պատկերս մնքուրս միոյն աստուծոյ Քրիստոսի: Ընդ և զդիրն իւր ընդ արեւելս՝ ի տեղի խոստման բնակութեանն մերոյ առաջնոյ. ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զդալստեանն աստուծոյ շաւիղ, զփայլականն առակ տիրական՝ ի դէմս բերեալ մեզ վարդապետէ, զերկուքիւնն՝ ի յելից անտի ծագման արուսեկին քրիստոսեան երեւմանն՝ ի վերջնում աւուրն արարածոց երկրի թարգմանէ: Յաւս հալածէ, ախտաժէտս բժշկէ, դիւաց բռնութեանց զօրէ: Ընդանդ որովայնի սորին աւազանն կենդանարար. ի պար հարսանեաց սորա դասք առաքելոցն: Ընդքան ճոխացաւ բարգաւաճեալ երանութեամբ, մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ վայելչապէս յորջորջեցաւ. տիրամօրն լուսոյ կոչմամբ՝ ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ: Ծփելոյ մեզաւորաց նաւահանգիստ հանդարտութեան, խրախճանարան վերնոյն դա-

սուց, բժշկարան անսխալելի տարակուսեալ պարտաւորաց: Երրորդութիւնն անպատում ՚ի սմա փառաւորի օրհնեալ յաւիտեանից:

ԺԱ. Իսկ եթէ ոք ձեռն չարութեան ՚ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, և դիւտ ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ արուեստ երկրաւկնցաղ զսահմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգեւ առաւել կենաց և ակնկալութիւն աստուածային և հոգւոյն սրբոյ յայտնեալ լուսաւորող նախադրութիւն և երախտեաց բարձրելոյն ամենատուր լեսկանութիւն և կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան և առաքելոց ձեռինն աջոյ բաբեհանճար հիմնարկութիւն, և միանդամայն ասել՝ դուռն երկնից և քաղաք աստուծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ ՚ի պարտեաց և ճշդրիտ տեսակ կերպի երեւակիա բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շօշափելին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեանցն անդանճառից զերազանցեալ նոր սրբութիւն և քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոտովանողն մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ ՚ի ձեռն բանին իւրոյ էակից, բարձեալ ՚ի նմանէ և զաւանդ հնորհի հոգւոյն փառակից. փակեսցէ զդուռն կենացս այս

առագաստի յանդիման նորին: Իսկ մեք զորս զրեցաք՝ սմին և վկայեմք, հաւատացեալ որում կարեցաքս, յանուն և ի փառս ամենակալ Երրորդութեանն և միում աստուածութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ես իմ հաւատ յերրորդութիւնն, և այս ի մայրն իմ լուսափառ խոստովանեալ գաւանութիւն:

ԲԱՆ ՀԶ·

Ա՛ԷՐՈՒՆ յաւելուած երկին հնգտասնեան նորին հոկտեմբեր նոյն աղէքս հաղնանաց քանի.
ի խորոց սրտից իջոյ ընդ Աստուածոյ:

Ը. Աստուած ողորմած, բազմագութ, հզօր, ահաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անճառ, որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո իր անձեռնարկելի, որ և մնաց է անհնարաւոր. քո է հաւուցանել պատուղ քաղցրութեան ընդ փշոց խաւարութեան, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել առեալոյն և ազօթս ի վերայ հալածչին, և փրկութիւն հայցել խոցողին, և սպանողին ներումն խնդրել՝ ի քէն ընծայեցաւ պատուղս այս հրաշից, որոյ քաղցրութիւնն անճառ է քան զօրինակ և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք և գովեալ շքեղութեանց քոց ճաշակելիք. հոգի երեսաց և զօրութիւն գեղոյ մերոյ տէր Քրիստոս օրհ-

նեալ ՚ի բարձունս: Այլ մարդք երկրածինք և ամենավխտք՝ և բարեմասոյց ձեռաց չա-
րիս դարձուցին. իսկ դու լոյս և տուիչ լուսոյ,
ոչ լաս անէծս, ոչ ախորժես չար, ոչ կամիս
կորուստ, ոչ ըղձանաս մահ, ոչ յուզես ՚ի
խռովութենէ, ոչ տիրես ՚ի ցասմանէ, ոչ
հարկիս ՚ի բարկութենէ, ոչ մթանաս ՚ի սի-
րոյ, ոչ այլայլես ՚ի զթութենէ, ոչ փոփոխես
՚ի բարութենէ, ոչ թիկանց շրջումն և ոչ
երեսաց անդրադարձութիւն, այլ ամենեւին
լուսաւորութիւն և նկատումն փրկութեան:

Ե. Եթէ քաւեցես, կարող ես. եթէ
բժշկես, զօրաւոր ես. եթէ կենդանացու-
նես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես.
եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ
պարգեւես, ամենալի ես. եթէ արդարացու-
ցանես, ամենաբուխտ ես. եթէ մխիթարես,
ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես.
եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես.
եթէ վերատին հաստատես, արարիչ ես. եթէ
կրկին դոյացուցանես, աստուած ես. եթէ
հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կոր-
ծես ՚ի մեզայ, այցելու ես. եթէ չարժանեսցս
ընձեռես, օրհնեալ ես. եթէ յորսողէն ըեր-
ծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես ՚ի քոյոցդ
՚ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան ՚ի մէնջ
խնդրեն դու կարկառեսցես, անկարօտ ես.

եթէ լայնես նեղութեանս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. թէ զսասանեալս հաստատես, վեմ ես. թէ պատքելոյս արբուցանիցես, աղբիւր ես. թէ զծածկեալսն երեւեցուցանես, լոյս ես. թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես. թէ զրիծան անտես առնիցես, երկայնամիտ ես. թէ ընդ փոքուս ՚ի դատ ոչ մուտնիցես, բարձրեալ ես. թէ ծառայիս ձեռն մատուցես, ստացող ես. թէ աջովդ քո պաշտպանեացես, յանձառիչ ես. թէ վհատելոյս զարմանս մատուցանես, կերակրիչ ես. թէ զանդէտս պարարեացես, վարդապետ ես. թէ զդիմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես:

Զ· Նէ արդ քո են այսոքիկ, տէր ողորմութեան, ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և զլեառնեալ, նախնի նահատակդ համբերութեան վկայից, որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրապէս յասպարիսի ճակատուն, զի կակղեացես զկարծր բռնութիւն մարմնոյս զոռոզութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. և յանպարտակիրդ մարմին չափեալ զբնութեանս մերում զտաժանականն տապնապ տուժի, զի զթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես ՚ի քեզ օրինակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԺԱ.

Ա Երդման յաւելուածք երկին հեթանոսական նորին հաստատ
առ նոյն ազգըս մաղեանաց քանի.
Ի խոտոց ոտից ընդ Աստուածոյ:

Ա. Ես քանզի օր է օրհնատանեալ և լուսանորոգ կշռութեան երկուց ընտրութեանց արարածոցս աստանութեանց՝ յեղանակելոյ յայլ իմն էութիւն երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութեան և կործանելոցս վերբերութեան, սարսափելի Աբրաքամու մեծի պատերիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ զրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ ասել աստանօր ի քոյոց այսի՝ զոր ընդ իմ կրեցեր, աստուած բոլորից:

Ն. Կացեր յատենի քում ստեղծածոյն իմոխ կերպիս, ոչ խօսեցար տուիչդ բանի, ոչ բարբառեցար հաստիչդ լեզուի, ոչ ձայն արձակեցեր աստանիչդ երկրի. ոչ մինչեցեր ամենազդեցիկ փողդ մեծութեան, ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր, ոչ մատնեցեր ամենայն զմատնիչն զքեզ տանջանաց մահու, ոչ ի կապելն զքեզ զիմազարձեցեր և ոչ յապտակելն զժուարեցար, ոչ ի թքնուելն թշնա-

մանեցեր և ոչ ընդ կռփելն երբեք խռովեցար, ոչ ընդ կատակելն սրամտեցար ! ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր : Ա՛երկ տյուցին զըզդեստ պատմուճանին իբրեւ ՚ի տկարէ, և դարձեալ ապուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ : Եթէ ոչ էր արբեալ կրկնակի քաջախ զանգեալ ընդ լեզուդ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեանն. ճաշակեաց վհատութեամբ և արդել անդէն տարակուսանօք, առին մեղեդնաբար և դարձեալ մատուցին անպատկառապէս : Զանիւ հարուածոց յետին անարդութեան ՚ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին, ծուռն կրկնեցին նախատանաց և պակ եղին արհամարհութեան :

Զ· Ո՛չ եսոն հանդիսա կենդանարարիդ, եթէ ոչ զդործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրեւ զհեզ, բարձեր որպէս համբերող, ըստանձեալ իբր զպարտական զփայան վշտաց. որպէս զծաղիկ շուշանաց հոտոյց՝ ուստ բերեալ զգէնն կենաց, զի յարհաւրաց պիշերայնոց զնրբակերտս գահատրակս մարմնեղէն զոյութեանս պահպանեսցէ ՚ի դատապարտութեանն վայրի իբր ՚ի խրախճան ընծոյից : Ո՛չ անին արտաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զնոյն Աբեկայ ձգեալ զեղջերացն, տա-

բաժեցին ՚ի սեղան խաչին իբր զպատարագ, բեւեռեցին որպէս չարագործ, սպանեցին իբր զապստամբ, զնաղատութիւնդ երկնաւոր իբր զաւազակ, զանկապատ մեծութիւնդ իբր զտառապեալ, զառ ՚ի քրովբէից պաշտեցեալդ իբր զքամահեալ, զսահմանդ կենաց իբր զարժանաւոր սատակման մահու, զաւետարանիս նկարիչ իբր զհայհոյիչ օրինին, զտէր և ըզկառաւարումն մարգարէից իբր զհամառօտիչ դրեցելոցն, զճառագայթդ փառաց և զլինելիք անքնին խորհրդոցդ հօր իբր զներհակ ծնողիդ կամաց, զօրհնեալդ իսկապէս իբր զտարապրեալ, զկապոյ օրինին լուծիչդ իբր զայր ՚ի նզովս դրեալ, զհուրդ ծախիչ իբր զհերքեալ իմն կալանաւոր. զհաւորդ երկնի և երկրի իբր զհաւատոի պատժաւոր, զի լոյս անմահացոյց ծածկեալդ իբր զհողածին ըմբռնեալ:

Դ. Ով քաղցրութիւնդ և երկայնամտիւթ բարերարութիւնդ ողորմածիդ պիտի՞ էր, որ վասն ապախտաւոր և անօրինեալ ծառայիս տէրդ բոլորից զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական հաճութեամբ տալ՝ մարմնոյդ միութեամբ ՚ի քեզ ընկալար, և միշտ ՚ի քնարան շիրմին տապանի անպակաս ՚ի լուսինէ ամբողջ նոյնութեան աստուած անքնին՝ զնոյն կրեալ նախատինս անճառ համբերութեան, յարեար կենդանի

ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ, անեռաղ մարմնով և անթերի աստուածութեամբ։ Օրհնեալ փառաք, գովեալ զթութեամբ, բարեբանեալ միշտ ողորմութեամբ, յաւիտեան յաւիտենից. ամէն։



ԲԱՆ ՀԸ.

Ա՛ր ոտքն յա՛ր-ե՛ր-ա՛ծ կրկնո՛ւ հե՛ծ-ու-ե՛լ-ա՛ն նո՛ր-ի՛ն հո՛ւռ-ի՛ն
ա՛ռ- նոյն ա՛ղ-բա՛ս ո՛ս-կ-ե՛ղ-ա՛ծ բա՛նի.
Ն՛ ի՛ր-ո՛ց ո՛ր-ո՛ց իւ՛ր ը՛ն-դ Ա՛ս-տո՛ւ-ծոյ։

Ը. Ա՛ւ արդ անկեալ յերեսս հողանիւթ կերպիւս, ՚ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ, զբարեգործիդ ողորմածութեան զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

Ր. Աղաչեմ զքեզ, միայն խնամակալ, մեր-դասեր, զթած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան, մի ունայնասցի վաստակք աշխատութեան փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ աստուածոյ, մի սոսկ եղիցի քրտանցն կա-

թուած խառնեցեալ արեամբ ի մատնութեանն աւուր պիղերին. մի լեցի ստուերացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառացելումն ինձ պարգեւեցեր. մի ջնջեսցին չնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի անշահ եղեցին կրիցդ պտուղք, զոր կարօտութեանս իմում մատուցեր. մի պարծեսցի բանսարկուն վանեալ զքո ստացեալս իբացուցանել. ահա յաղթեսցես կամաք քո՝ ըղձից չարին, վերստին ապշեսցի միանգամ զարհուրեալն, կրկին պարտեսցի ի սպառ դատեցեալն. մի անխայեր զաղատարարդ քո բան, որ զատեզծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ: Ո՛չ անճառն արարեր բարերարութիւն յանակնկալ ժամուն յուսահատութեան, յորժամ բնաւ իսկ կորեալ և օտարացեալ էր կենդանութեանն շարժողութիւն. մեռար անմահդ և զմահացեալս նորոգեցեր. եթէ ըղկանուն համաձեւութեան օրինին փոխեցեր, արդ զղիւրինն և զհեշտականն և զեւս հնարաւորն մի արգելցես, սկզբնաձիր ողորմածութեան բարեգութ օրհնեալ և երկայնամիտ թագաւոր: Ընդեա բանիւդ ամենազօրաւ, որ զգոյութիւն լուսոյն ստեղծեր ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոխոխեալ գոայց ի լաւ անդր. և փոխանակ զի ես ոչ խընդ-

բեցի հետեւել լուսոյդ, դու ելցես ինձ յայց՝ ճառագայթի ծագման հայրենի կերպիդ, և կո-
չեցայց առաջի քո ծառայս ճշմարտապարտ՝ ո-
ղորմեալ ընդհեալ առ՝ի քէն. ոչ է ժամա-
նակ յերկարաձգութեան առ՝ի պալատան հա-
տուցանել, ահա ընդհեա ինձ տառապելոյս
ղերեսս քո՝ լոյդ՝ի խաւարի սրտից վհատե-
լոց: Արդել և կնքեա ղընթացմունս ելիցն,
որ միշտ ղեղուն բարիքն հոսեալ՝ի յուշոյս
իմ տեսութենէ. պահեա ինձ ղընդհ ամե-
նապայծառ դանձուդդ միացականաց, որով
պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտ-
պանեալ՝ի քէն, անսահման բարի:

Գ· Ահա ողորմեա ինձ, ղթած, ազաչեմ
ղքեզ ողորմեա ինձ, հզօր, կրկին ողորմեա:
Մի փոխարկեր երկունս ցաւոց ընդ չարեաց
իմոց, բարիդ ամենեւին. մի բառնար՝ի փոան-
դելոյս զառ՝ի քէն պարգեւեալդ հնոր, մի կապ-
տեր զփչումն ամէնօրհնեալդ հոգւոյ, մի լուծա-
ներ զենկեալ զինիք արբունական պատկերիդ:
Մի յայտնեացներ փուշք մեղանացս՝ի սրբու-
թիւնս մտացս. մի խզեր զկապ միութեան
ընդ քեզ սիրոյն պնդութեան, մի մերժեցեր
զարուեստ զօրութեան լեզուոյս յարմարու-
թեան, մի պակասեցուցաներ զաջողուած ա-
ջոյս առ՝ի զլուսոյդ մատունս բաշխել: Մի զրեր
՝ի դպրութեան կենաց մատենիդ զմահն

պարտիս, մի պահեր, մի ինձ համարիր, մի յիշեցուցաներ, մի ամաչեցուցաներ, մի նախատեր, մի ոտն հարկաներ, մի արձանացուցաներ զմեղկութեանցն, մի ամբարեր ըզկորստեանցն, մի իբր գտեալ իմն ամբաստաներ։ Մի յարուցես ընդ իս զձառն անիծից, մի արձակեր 'ի յիս զսաղարթ վնասուցն, մի ընծիւղեր զձաղիկ մեղացս, մի բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս, մի արտաբերեր զէութիւն պտղոյն։ Մի թուեսցես 'ի ճիւղս երկրաստեղծ մատանցդ զգիւտս գործոցս, մի մատուսցես բան ընդդէմ ահեղ զանօրէնութիւնս իմ յիշատակել, մի մատնեսցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս վարել 'ի գերութեան, մի աստէն զիս փառաւորեր՝ զի անտանօր դատապարտեսցես, մի նուազութեամբ այսր անցաւորի դյաւիտենական բարիսն տուժեր, մի 'ի սակաւում այսմ ժամանակի զանվախճանելի զփառսն չափեր, մի ընդ հովիտս վշտաց հեծութեան զանախտական զկեանսդ գրաւեր, մի ընդ ստուերի այսր մահութեան զանճառելիդ լոյս փոխանակեր, մի զերասնակ մուտս լքցես՝ ըստ արտուղի հետս հետեւել, մի զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն. մի զհովիտ հանճարոյս ստուերական պահեր 'ի հանդերձեալն իմ հրապարակել։ Եթէ ամբարես

զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն. եթէ շահամարանես ՚ի սրտի, աստուածն կիզեալ անբոց այրեցայց. եթէ քընեցես զանօրէնութիւնս, առանց յանդիմանի քեզ լինելոյ ՚ի սպառ հալեցայց. եթէ տրնկակից ինձ թողցես զմեղսն, ՚ի նոսին վատնեալ մնաց եցայց։

Դ. Ակնարկեա, միշտ զօրեղ ամենակարող, փախնուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. հրամայեա, պինած, խնամակալ, գովեալ, լոյս անշիջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս մարմնեղէն յարկի անդամոց. յորում հանդուցեալ անլքքանելի բնակեցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղացս մերժեալ ՚ի սպառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես ամենակեցոյց թագաւոր անմահ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՀԳ.

Ա Էրսպէն յաւելուած լրկին հնչուածքեան նորին հանդէպ սա նոյն ազբս մաղթանաց բանի.
՚ի խորոց սրտից իւրեանց ընդ Աստուծոյ։

Ե. Յիշեա տէր, տէր գթութեանց, սիրողդ իրաւանց, աստուած ճշմարիտ, նայեա

վերատին ՝ի ընութեանս կերպարան միշտ սխա-
լական. զինեա՛ ինձ դարձեալ զամէնրնթաց
տարածմունս ելից արեանս շարժողութեան.
բժշկապէս մատիր տեսանել, զի մարդ եմ
հաստատեալ մնոք խակութեան թերի խոր-
հրդոց յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տե-
սողդ ոչէից՝ միայն դու անմահն ստուգեան
խաւարի: Ապա իրաւունս է զրել ինձ ընդ
մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալ-
մամբ պարտեալ կրկին իբր զերկրածին մա-
հացու մարմին, քան բանիդ քումմ տուտ ե-
րեւել. քանզի արդարեւ զիտակ իսկ ես, թէ
չար է սրարն և ընդարոյս չարութիւնն մեր,
և ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան,
ըստ հոգեհանճար իմաստնոյն կանխագիտից
առակի:

ԺԱ. Թևթեւացո զաստակութիւն տանջա-
նացն, որ պատրաստեալ և մնայ ինձ՝ սր-
կանել զորդիս զեհենին զարդ մահուն յա-
ւիտենականի. բարձ զամօթոյս պարտիս, որ
պահեալ է յայտնել թշուառականիս յեսին
առենին յանդիմանութեան: Խրատ խաղա-
ղութեան յառաջապարգեւ ողորմութեամբ քո
ընծայեցո. զի մի՛ անտանելիքն ահաւորու-
թեան ՝ի ցոյց ինձ եկեալ կերպարանեսցին,
անյոյս ապշութիւն ընդ կենաց զղջման ա-
ռաջի կարկեալ, զատաստանն ահաւոր, ան-

կաշառ և անխարեպի դատաւորն, ամէնն սոս-
կալի, կշռամբանքն սարսափելի, յանդիմա-
նութիւնն անփախչելի, տագնապն անճողոպ-
րելի, պակուցումն անխրախուսելի, դողումն
անվճարելի, լալումն անսփոփելի. կրճտումն
ատամանցն անդժշկելի, ապականութիւնն ան-
ողջանալի, անէծքն սարսափելի աստուածա-
յին քո բանիդ, փակումն դժոխոյ և արդե-
լումն ողորմութեանն: Որ ընդ դալարելն եր-
կնի և ընդ երկրի դղրդելն ընդ կարծրութիւն
յատակիս, ըստ կատակելոյ կոհակաց խոս-
վութեան ծովու իբր փախստեան կերպ ցու-
ցանելով, մի զմիոյ հետս խափանեն կասել
յերկոցունց. և տատանեալ սասանեալ լայ-
նատարած գետնոյս թանձրութեան ի հիմանց
անտի, ընդ ուժ գնակի բախման թնդելոյ նեղք-
նոյին խորոց հարթէ զերկինս, և հալեալ հրդ-
դեհին բնութիւնք վիմաց և ամենայն տարե-
րաց գոյից. այլայլեն երկինք յանեղծ փոփո-
խութիւն, և յեղանակին արարածք տարե-
րօք իւրովք ի նորոգ նմանութիւն: Ծած-
կութիւնք գործոցս հրապարակին և անեղե-
ալք կրից մեր յայտնին. վարք կրօնից ներ-
գործեցելոց ի մարմինս մեր նկարին. թագա-
ւորն երկնից յատենի նստի, վճիռ հատուց-
մանն ի ձեռին իւրում: Ահա վայ ինձ եօթ-
նից անգամ կրկին եղկութեամբ, ըստ չափոյ

կշռութեան այսր համարոյ, որ զանբաւութիւնս թիւնս թուոց պարագրէ: Ոչինչ գործեցից ողբալիս հոգի յայնմ մեծի աւուր վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զհանդիպումն. զոր ոմն մարդարէ զօրինակին նմանութիւն ի դէմս բերելով ըզճեպ տապնատի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն. զորօրինակ եթէ փախնուցու զ' ի ձեռաց առիծու և պատահեսցէ նմա արջ, և փախնուցու յերեսաց արջոյն և մտանիցէ ի տուն և յեցուսցէ զձեռն իւրում ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի զտեսիլն քառմեալն. ո՞չ ապաքէն, ասէ, խաւար է օր տեառն, օր խաւարոյ և մթոյ, օր ամպոյ և մառախղոյ:

Զ. Յորժամ հրեշտակն պահպանողական կենակից հղօր ոստիկան իրաւամբք ամբաստանեսցէ, և հատուցանողն ահաւոր արդարութեամբ յանդիմանեսցէ. սպասաւորք թագաւորին առանց խնայելոյ խուճապեն, զոմանս ի կեանս հրաւիրեն և զոմանս յամօթն դատապարտեն. կիսոց դէմս լցեալս ծաղու ցուցանեն, և ինձ ահարկուս և քառմեալս երեւեցուցանեն, ոմանց պակս լուսապաճոյճս մատուցանեն, և այլոց կորուստ մահու բողբեն. արդարոցն ձայն աւետեաց, և ինձ

գոյժ անվախճան վշտաց: Յորժամ առ քա-
րին՝ մեհու յաղթութիւն ՚ի սպառ մեռանիլ,
և ինձ չարաղդութիւն կրկին յարակայի. ուր
դրանն բախել ոչ ինչ ազդիցէ, վճար եղեալ
գերութեանն առ իս: Յորժամ դպրութիւնք
հրաշիցն զարմանալեաց, որ են ծածկեալքն
յայժմուցս հասարակաց վարուցն տեսակք
մարդկային ընութեանս գործոց. յաղագս
որոյ եղեն գոյութիւնք ամենայն էից, յիւրա-
քանչիւր մարմինս անպակաս զրութեամբ
իսկոյն երեւին. և խորութիւնք անճառիցն
ինքեցելոց յիմաստից աստեացս առաջի աչաց
մերոց կերպարանին: Որ այժմ շահաւա-
ճառութիւնք ողբոց և արտասուաց զերկինս
զրաւեն, և անդր իբր զապաժաման ընդունայ-
նութիւնք արհամարհալք լքանիցեն. հառաչ-
մունք հեծութեան ոչ կանխաւ աստի առա-
քեալ, չէ երբեք գտանել անդէն. ողորմու-
թիւնք ճշդով սերմանեալ, ոչ պայծառ վաս-
մամբ դնան առաջի: Որ տասանն նախա-
յանցիցն և կատակարանն տիրանարդիցն և
նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ
մեծաձայնս դատախազեն. յորում սոսկալի
վայրի ոմն զուխան կցորդութեան հայրենի և
ոմն գլխորանն վկայութեան անտեսիցն և ոմն
գարիւն մեծին աստուծոյ ամբաստան իմն
իրաւացի առաջի իմ տարածանեն: Ոչ տան-

Ջանարանան բազմապատիկս անձամբ անձին աստէն իսկ պատրաստեցի, զնաւրդ միսիթարեցայց Համառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոյն, որ փառաւորեալքն են երանութեամբ, սարսեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակորոյս սատակման որդիս ոչ երեւեցայց. որ ոչ միայն չեմ պսակելոց, այլ և պատուհասն իմ անտանելի և կորուստն անսպառելի:

Դ. Ա՛յլ արագեա, ամենապարգեւ զօրութիւն անճառ, ձեռն փրկութեան 'ի կորուստ գերելոյս. զի օգնեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվտանգելի պրծեալ 'ի պատժոց. աստանօր տեսեալ մեռացս իմաստիւ զապագայիցն դիպուածս, բաւականացեալ 'ի լուր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝ ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց. և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել առատամբքն դազանութեան. զի զորովային մահուն լցուցեալ՝ զատուստ պարարեալս անդ ձգեալ հալեն, ուր անսպառ պահի մեռացուածք մեծերիցն 'ի ծախումն յաւիտենից: Օ՛ի դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման 'ի կեանս և

յերանութիւն, բնաւից ապաւէն թագաւոր լուսոյ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Զ·

Ա Էրուին յաբելաց լրկին հեձուրեան նորին հակառակ առ նոսն ասէրս մաղեանաց քանէ.
Ի էուց պրէց էօտ ընդ Տէրո-հոյն:

Ը. Եւ արդ ի վերայ այսքանեանց յուսահատութեանց և ահարկու սրտաբեկութեանց, պակուցանողական սաստկութեանց աստուածային բարկութեանց տագնապել ոգւով թախծութեան ի սպառ, աղաչեմ զքեզ սուրբ աստուածածին. հրեշտակ ի մարդկանէ,



մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայուհի, անխառն իբրեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանութեան պատկերի արուեստին բարձրութեան, գերազանց քան զընակութիւն անկոխելին սրբութեանց, երանաւոր խոստմանն տեղի, Եդեմ հնչական,

ծառ կենացն անմահից բոցեղէն սրովէն պահ-
պանակեալ, ՚ի բարձրեանն հօրէ զօրացեալ և
հովանացեալ, հանգստեամբ հոգւոյն հանդեր-
ձեալ և մաքրագործեալ, բնակութեամբ որ-
դւոյն յարդարեալ և տաղաւարեալ. միածինն
հօր և քեզ անդրանիկ, որդի քո ծննդեամբ
և տէր արարչութեամբ. ընդ անաղտ մաք-
րութեանդ և անբիծ բարւոյ, ընդ անարատ
սրբութեանդ և խնամակալ բարեխօս: Ընդ-
կալ զմաղթանս այսր աղերսանաց քոյոց
դաւանողիս, և մնասո ընծայեա ընդ սմին
խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի
՚ի քոյդ պաղատանս, հիւսեա միացո զմեղուցե-
լոյս գառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ
և խնկաւորեալ հայցուածոց, տունկդ կենաց
պտղոյն օրհնութեան, զի ՚ի քէն միշտ օգ-
նեալ և բարեգործեալ, և ՚ի մաքրական քո
ծնելութենդ ապաւինեալ և լուսաւորեալ,
կեցից Քրիստոսի որդւոյ քո և տեառն:

Ն. Օժանդակեա թեւոցդ աղօթիւք,
խոստովանեալ մայրդ կենդանեաց, և ելից
իմ յերկրէս հովուէ, առանց լկանաց հետեւել
՚ի կեանս օթեւանացդ պատրաստութեան. զի
թեթեւասցի կատարածն իմ ինձ ծանրացելոյս
անօրէնութեամբ: Արասցես ոմն ինձ բեր-
կրութեան զօրն իմ տապնապի, ողջացուցիչ
երկանցն Հայի, բարեխօսեա ինդրեա աղա-

չեա, զի բան անճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն: Արա- տաստաւք օգնեա վառանդեցելոյս, զովեալդ ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտու- թիւն, ծնողդ աստուածոյ. ընդ իմում թշուա- ռիս հոգա, խորան բարձրելոյն. ձեռն առաք անկելոյս, տաճար երկնային. վառաւորեա զորդիդ քո ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրա- շագործել քաւութիւն և ողորմութիւն, ա- զաչեն աստուծոյ և մայր. բարձրասցի պատւ քո ինեւ և յաւցցի փրկութիւն իմ քեւ:

Գ. Եթէ զիս գտցես՝ տիրամայր, թէ ինձ ողորմեացիս՝ սրբուհի, թէ զկորուսեալս շա- հեսցիս՝ անարատ, թէ զհարթուցեալս յան- ձանձեսցես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յա- ռաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յուսահա- տելոյս ինձ միշնորդեսցես՝ միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ աստուծոյ, թէ յիս յաւցցես զդիմաստութիւն՝ լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ, թէ ի խռովութեանցս յաւզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ զովեալ, թէ վանն իմ մոցես ի հանդէս՝ մնհու նահանջիչ, թէ զդառնութիւնս իմ անուշեսցես՝ քաղցրութիւն, թէ զբաժանմանն իմ խաղոց քակտեսցես՝ հաշտութիւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձ-

ցես՝ եղծման ընդոստնիչ, թէ զմատնեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս, թէ զլաւեացս ձայն հատցես՝ բերկրութիւն, թէ զխորտակեալս կազդուրեսցես՝ դեղ կենաց, թէ ի կործանեալս յիս ակնարկեսցես՝ հոգելից, թէ ողորմութեամբ ինձ պատահեսցես՝ կատկնուիրեալ։ Օրհնեալդ միայն ի շրթունս անբիծս լեզուաց երջանկաց, ահա կաթիլ մի կաթին քումդ կուսութեան յանձն իմ՝ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ տեառն Յիսուսի արարչին երկնի և բնաւին երկրի, զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովդ և համայն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութեամբ և անքննութեամբ մերոյին բնութեամբս միացելով, ամենայն և յամենայնում, մի Աստրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԶԸ.

Ա Էջոփն յաւելուած կրկին հեթանոսական նոցին հոլովք առ նոսն ազգս մատնանաց բանիւ.
Ի խոյց սրտից իւոց ընդ Աստուածոյ։

Ա. Ընդ աստուածածնին մաղթանաց՝ ահա և զվերնոցն անմահ հրեշտակացն լուսակերպից գաղերս հայուածոց, որ վասն իմ գոչեն առանց լռելոյ հանապազորդեան արդահատութեամբ մաքուր բերանոց, ընկալ բարեգութ.

որք են բարիք բարեգործեալք ՚ի բարերարէդ անկիրթք չարեաց, հաստեալք յամէնիշխան հրամանաց էիդ, զօրութիւնք հզօրք ակնարկութեան բարձրելոյդ, սուրբք, մաքուրք, ա-



նարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթողք և անպարտելիք, և ըստ ընթացից տեսութեան մնաց արադունք:

Ր· Որք և պատշակորոյս անկոյ թզենւոյն եւամեանն դատարկութեամբ, որ զբնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակին՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ, յայդի աշխարհիս արմատացելոյ, սէն սաղարթիւն պաճուճելոյ՝ զգեաալ ՚ի պտղոյ, որ է ճշդիւթ պատկեր թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք, հանդերձիչք, այլ և խնամակալք· որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրից կարեկցելով, բարեմասնութեան մեր սպասեն· և յաւիտենականն կենդանութեամբ

փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զդարձս ձեռաց քոց մի՛ անտես առներ: Քանզի արդարեւ մեր են այս աղաչանքս՝ ի բարեբարէդ աստուածոյ վասն մեր կարպետալ առ նոսա, զի նոքա բանիւ են առեղծեալ, և մեք ձեռօք ներդործեալ: Որք և գալոց են ընդ միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հատուցման, ձշմարտասան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին առենի յայտնիչք իրաւամբք զմատակարարութիւնն որ առ մեզ, որ և անտանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զվշտանուէրն նուագ ձայնիւ, ողորմեա՛ դու առեղծեր, մի՛ կորուսաներ:

Գ· Արդ ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոց անմահականացն վեհից՝ և ի մեր հնձութիւնս հոտոտեսցիս, բնաւից արարիչ, որ յաղթես զթշուառեամբդ քո վերնոցն և ստորնայնոցս· քանզի քո է բարեբարելդ առ մեզ և առ նոսին: Արդ վասն բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մնքրոցն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն և անվանելեացն, ամենաճեղուն առաւելութեամբ ի բարձրն ընտրականութիւն պերափայլ յաճախ պիտութեամբ՝ անցուրտ ջերմութեամբ ջեռուցանողք ինքնաբուն տապոյն աստուածսիրութեան բուռ ինքեանց զմեզս սառնասեր սրտից անբորբոք

շնջումն, այրիլ անաղօտ ՚ի մեծախորհուրդ սրբում սեղանիս՝ որ ՚ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդաղանաց ապատել հրամանաց երանելեանց կեցուցիչ կամաց ամենատեղծիդ, քրովբէօրէն առաքինութեամբ յաստուած միացեալք անբաժանելի: Ունք երկնաւոր պետութիւնք են մեզ, և գինուորութիւնք անբիծք, ահաւորք, երկնաւորիդ աստուածոյ աղաւոտնեայ պաշտօնեայք, ՚ի յամենայոյդ լուսոյ ցօղք նշուղից:

Դ· Որովք և ինձ մեղաւորիս հոգեղենի մարդասիրեացես ողորմել, Յիսուս, աղաչանօք իմոյն հրեշտակի, զարձուցանելով զիս, տէր, ՚ի բարիդ քո հետս լուսոյ· զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զընկալեալն ՚ի քէն ՚ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեզադրելի առ ՚ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութեամբ քեզ, աղքայ բարձրութեան փառաց անհասից, ՚ի խրախճանս կենդանախումբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսջէ, զովեալ ողորմած: Եւ քեզ անքնին ընդ հօր անհասի՝ թուակցութեամբ հոգւոյդ անճառի վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից· ամէն:

ԲԱՆ ԶԲ.


Ա ՔՐՈՊԻՆ յաւելուած լրկին հնձուելուն ադբին հոգոյ
աս նոյն ազբս մաղթանաց բանի.
Ի խորոց սրտից իւոյ ընդ Աստուածոյ։

Ա. Տէր աստուած բարերար, բազմապարգեւ թագաւոր, կենաց պատասխարան, լուսոյ կերպարան, լայնատարած հանդստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար, ործեցեր զանապատումն և հանդերձեցեր դհրաշալիսն, մինչեւ կատարեցեր զառեցեալն ընդ ամենայնիւր աստուածութեանդ։

Ե. Արդ ահա առաքելոցն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց և հոգւովդ սրբով օծելոց, զորոց զգօրէսան սրժանաւորութեան ըստ իմում կարի՝ առ ի փառս քո տէր ամենայնի, յայլում բանի պաշտեցի, և ինձ ողորմեացիս յիշատակաւ սիրոյ նոցին ընդորութեան։ Զաւիղ ինձ ելից նոքօք հանդերձեացս յերանութիւնն փափաքելի, ձայն բարի հովուութեան նոցին ի յողջոյն ինձ կենաց քաղցր լսիցի։ Ահան կալայց ի յանեղծութիւն փրկութեան ածնեցեալ յուսոյն ընդ առաքնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն գաստուց, գեսոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ

ապնելոյն, 'ի զարդ անկասլուա զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութեան տիրական լուսոյն կատարելոց:

Գ· Ընդ աշակերտաց մեծիդ Հրամանի բարձրեալդ աստուծոյ Քրիստոսի՝ և մարտիրո-



սացն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հոգեզանգուածն բնութեամբ մարտուցեալ ընդտարր զոյից ամենայն նիւթիւ՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս· արիաբար եղեալք 'ի յերկրէ, ըստ մարգարէին,

վկայ.ք ճշմարիտք ամենափորձն մահու իմա-
նալեացն անտեսին և ծածկելոց աներկբայ
բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիչք.
աշակերտք առաքելոցն և չարչարակից.ք նո-
ցին. որ հաւատարեալ գործով.ք ընդ նոսին,
կատարեալ լրմամբ անպակասելեաւ պարեն 'ի
խրախճանս անկէտն երանութեան. որոց հա-
ճոյական և ընդունական մաղթանաք, արիւն-
ընծայ վաստականուէր քրտնակնդրուկ աղեր-
սիցն յարգմամբ՝ ընկալ զիս նորոգ ըստ նոցին
մասին անեղծ փրկութեամբ 'ի քեզ արձա-
նացեալ:

Գ. Ընդ խաղացեալսն հուրք և սուսերք
արեամբ ներկելոցն, և ճգնաւորացն սրբոց
հարցն միանձանց և քեզ հետեւելոցն, որպէ
աստուածոյ, անպարտելի քաջութեամբ և ան-
պատիր զգաստութեամբ, ընդ դժնեայ գոռոզի
մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ,
սովիմբ վանեցին զանմարմինն Նեղեար. և մըշ-
տամարտ հանդիսիս յասպարիսի կենցաղոյս
առանց զզուանաց ծանրաբեռնութեան 'ի լայ-
նածաւալ ծիանաց աշխարհիս ծովու տա-
պանակաւ մարմնոյս թանձրութեան զթեթե-
ւութիւն հոգւոցն թռուցեալ՝ 'ի նաւահան-
գիստն կենաց հասին. և իբր սիրողք վեր-
նում վճռակին առանց յետնոցն մնացութեան,
զթագն յաղթութեան համարձակապէս պայ-

ծառ ճոխութեամբ պճնեալ իսկապէս ՚ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր մնղթա-նաց և նուիրական հայցուածոյ և զիս զմե-ղաւորս ՚ի պատժականաց ընկալ ընդ նոսին:

Ե· Եւ ահա խառնեալ դանմնքուրս բան ընդ նախապրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ ՚ի հաճութիւն, և ես ընդ նոսին իբր դառ-նութիւն եդեալ ընդ քաղցու, կամ տատասկ ընդ ողորկութեան, տգեղութիւն ընդ վայել-չութեան և տիղմ ընդ գեղեցկութեան մար-գարտի, կամ հող ընդ յատակութեան ոսկւոյ, և կամ քարինս անարգս ընդ պայծառու-թեան արծաթոյ, բացատութիւն ընդ ճշմար-տութեան, կամ աւազ ինչ աստմնառու ընդ կակղութեան զանդուածոյ հացի. արդ լուր, հզօր, հնարաւոր, դովեալ, գնոցայն վասն իմ և զիմն ընդ նոսին ՚ի նոցին դովեստ, ՚ի փըր-կութիւն իմ և ՚ի փառս քո, ամենատուիճ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքնին, անճառ, անեղծ և անաւեղծ: Քո են պարգեւք, քո են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի: Ոչ ես դառա-պարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ.

ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ. ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացուցիչ, այլ մխիթարիչ։ Ոչ եղծանես, այլ պրես. ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ոսն հարկանես, այլ ափոփես. ոչ պատճառս յօդես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես ՚ի կամս շարժեալ սատակման, այլ ՚ի փրկութիւն ողորմութեան։ Ոչ մոռանաս գայցելութիւն, ոչ լքանես զբարի, ոչ արգելուս զպիտութիւն, ոչ բերես վճիռ կորստեան, այլ կատակ ազատութեան։ Ոչ թշնամանիս յառաւութեանց, ոչ բամբասիս ՚ի շնորհաց, ոչ հայհոյիս ՚ի պարգեւաց, ոչ նախատիս ՚ի ձրի ձրից, ոչ անպոռնիկ յերկայնմտութեանց, ոչ եպերիս ՚ի ներութեանց, ոչ բանսարկիս ՚ի բարութեանց, ոչ անպատուիս ՚ի քաղցրութեանց, ոչ քամահիս ՚ի հեզութեանց, ոչ առաքին այսոցիկ տրտնջմունք, այլ անբաւի գոհաբանութիւնք։ Խարճ զմեզս իմ, հզօր. լոյծ զանէծս իմ, օրհնեալ. քաւեա զպարտիս իմ, ողորմած. ջնջեա զյանցանս իմ, պիտաց. մատո մտան այցելութեան, և անդստին իսկ կատարեցայց. զի՞նչ քեզ, տէր, քան զոսին դիւրագոյն, և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարեւորագոյն։ Այլ կենդանագրեա, բարեխնամ, քոյինատուդ պատկերիս փչումն կրօկին ՚ի շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական հնարի զամենամեզս ոգի պաշտպանեալ։

Ը. Մի ածեր, ողորմած, ինձ օր տարա-
ժամ ՚ի համառօտս երթի՝ անթոշակ ապա-
ձեռնութեամբ ընդ անկատար ուղին հետե-
ւել, մի մատուցաներ բաժակ դատնութեան
՚ի ժամ ծարաւոյ. մի փակեր, ղթած, իմ
հանդէպ դյաջողուած հոգեւոր օգտիս, և մի
իբր յանկարծադէպ հիներց աստղատակ պիշեր
մահուն ինձ պատահեցեր. մի տայ օդոյն
յանապատեայս պահուն զարմանոյս հատեալ
ցամաքեցուցէ, և մի լուանական դիպուածք
հասեալ գաղտնեօք վնասեցին. մի պահեցեր
ինձ սառն մեղացս, և մի հոսանք ուղխից
կենցաղոյս զիս ողողեցեն: Մի հանդիսան
մահ բերիցէ, և մի ննջումն ՚ի սատակումն
յառաջեցէ. մի քունն ինձ կորուստ լինի, և
մի նիրհումն ապականութիւն գործեցէ. մի
վախճանն անյարմար ՚ի վերայ իմ արշաւեցէ,
և մի շնչոյս վերադարձութիւն ըմբռնեալ ՚ի
խոնարհ լքցի:

Ի. Դու ես տէր, դու զթած, դու բարե-
բար, դու երկայնամիտ, դու ամենակարող,
ու ամենայն բան անհատութեան անճառ զո-
րաւոր, քաւել փրկել կենդանարծել լուսաւորել,
վերստին հաստատել, ՚ի ժանեաց կերչաց գա-
զանաց և կամ յատամանց վիշապաց ՚ի կեանս
կորզել, ՚ի խորոց անդնդոց ՚ի լոյս բերկրու-
թեան ածել, և ՚ի հեղձմանէ ծփանաց մեղաց

ընդ արդարս երջանկաց փառաւք բազմեցուցանել: Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ կատարեալ քումդ շնորհաց, եթէ երկնայինք և եթէ երկրաւորք, եթէ անկածն մեղաւք և եթէ ամբարձեալսն արդարութեամբ, եթէ տէր և եթէ ծառայ, եթէ տիկին և եթէ աղախին. և ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն: Ընդ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԳ·

Ա՛ երդուին յո՛ւսալ ի քեզ հեթանո՛սքն նորին հալոցք
սա՛ նոյն ազգը մաղթանաց բանի.
Ի խորոց սրտից խոստ ընդ Աստուծոյ:

Ո՛ Խարճեալ անքնին, զօրութիւն ահեղ, տէր արարածոց, թագաւոր երկնի, ստեղծիչ հրեշտակաց, դոյարան մտաց, հաստիչ հրեղինաց, պետ բարի հոգւոց, ազ ապաւինութեան, աննդորրութիւն հանգստեան, տեսարան լուսաւորութեան, պայծառութիւն բերկրութեան, ճանապարհ երանութեան, պատճառ կենդանութեան, տուիք բանաւորութեան, վրկութիւն առանց չարութեան, առաջնորդ խաղաղութեան, պարիսպ ամրութեան, պատուար պահպանութեան, ցանկ բոցոյ մեծի օրհնութեան, սահման անսխա-

կալութեան, յիշեա յայսմ ողբերգութեան մատենի բանից խոստովանութեան և զոր ՚ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ՚ի բարի, և արա կատարեա նոցին քաւութիւն և ողորմութիւն։ Մի բարկացիս նոցա վասն իմ, տէր, իբրեւ զառաջս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ որպէս ղարս կշտամբողաց և խրատամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նոցա։ Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո, արդարատատ, ոմանք առ մեզ ճշտապարագոյնք սակաւուք, թերեւս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ, ամենապարգեւ, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս։

Ո՞ւր յիշեա զքո մեծութիւնդ, տէր, նայեցեալ ՚ի յիմն անարգութիւն. և ընդ ինդրելս իմ ՚ի քէն բարի իմինն առնելեաց, և դու առ քոյս ըստ քում մեծութեանդ անճառելիս հրաշագործեացես։ Մի սատակեացես զիմն խուճանողն, այլ փոփոխեացես. իսկեալ զնոսանս բարս երկրաւորս, զբարիսն սրմնատացուսցես և յիս և ՚ի նոսին։ Մանաւանդ դի զու լոյս ես և լոյս, և ես խաւար և յիմար. զու իսկութեամբ բարի գովելի, և ես համայնին չար ապիկար. զու տէր ստուերից և երկնից, և ես անիշեան շընջոյս և հոգւոյս. զու բարձրեալ ՚ի կարեաց

զատեալ, և ես տաժանաւոր և վտանգաւոր. դու ՚ի վեր քան զկիրս երկրիս, և ես կաւ անարդութեան զարշութեան. դու բան մարգարէին մեռաս յանիրաւ բարձրութեան, և ես միշտ կորնչիմ՝ բան նորին բանին. ՚ի քեզ ոչ է մեծութիւն կամ նենգութիւն, և ես բաւանդակն իսկ իցեմ՝ որ զաւանդն իմ ոչ պահիցեմ: Ձան զիս ՚ի բանտէս, արձակեա ՚ի կապանացս, զերծ ՚ի շղթայիցս, փրկեա ՚ի խեղդմանէս, ազատեա ՚ի տագնապէս, քակտեա ՚ի յերկաթիցս, լոյծ ՚ի պաշարմանցս, արուսաբեա յերկմտութեանցս, սփոփեա ՚ի տխրութեանցս, հանդո ՚ի նեղութեանցս, փարատեա ՚ի վշտացս, հանդարտեա ՚ի խռովութեանցս, ապաքինեա ՚ի լալոյս, մերժեա ՚ի հեծութեանցս, հեռացո ՚ի յողբոցս, կազդուրեա ՚ի կականմանցս: Ստուած ողորմութեան և պարգեւատու քաղցրութեան, մի զգրաւեալս արեամբ հզօրիդ անտես առնել ընդ վայր կորուսաներ. կանդնեա զհասեալս յափն մահու ՚ի բազմավտանգ հիւանդութենէս:

Գ· Ահա բարդեցան կուտեցան շղթանակք ամոցս ընդունայնութեան, յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ յոչ պէտս երեւեալ, ՚ի յանդաստանէ մօրն իմոյ սենեկի փուշս դժնիկ մեղաց շառաւիղս. մի լինիր ինձ խայթող

խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին Յուդայի, և կամ զաւակին Եփրեմի: Եւ քանզի բուսուցեալ անկեցի յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութեան խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ դրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիան, զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ գարշելի անդաստան անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ: Ոչ սերմանեցի արդարութիւն ըստ բանին Ովսեայ. և զիա՞րդ հնձեցից և ժողովեցից զկենաց պտուղն: Ընկաւ առինք կուսութեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ առ Յարայէլ, կարող ես տէր ՚ի նոյնն հաստատել: Այնեցի ընդարձակեցի ըստ մոլեկան բարուցն Յուդայի զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, ՚ի ձեռս քո է ամփոփել զարձեալ ՚ի նոյն զգաստութիւն: Եթէ մարմնապէսն կցորդութիւն ընդ տեսանողին անարատ գործեաց զպտուղին, իսկ դու փրկութիւն հոգեպէս միացեալ ՚ի յիս՝ կրկին մաքրեացես. եթէ արեգակինս այս անկենդան ստեղծեալ առ ՚ի քէն երկրիս մատակարար, և զկատարումն մօրից ցամաքէ և զտհաս պտուղս հատուցանէ, իսկ ստացողդ ամենից հոգիդ աստուծոյ ո՞րքան զօրեացես զտիզմ չարեաց աղտոյ և զթարախ պղծութեան մեղաց մերոց խլոյն սպառել: Ա՛ման այսր կանխաւ իսկ ժամա-

նեցի հայցել առ ի քէն բարի՝ առելացն իմոց ի կարգ այս բանի, զի գՀերբեալ գեասակարս պարտուց մահու յամենախնամ աչաց Հզօրիդ մի մերժեացես, օրՀնեալ զթութիւնարդ կենադործեա զնս զամենաամեղս անդամօք մարմնոյս ընդ բնութեան Հոգւոյս խորհել միշտ գքոյդ։ Խակ բարեգործացն խընդրել բարիս, բնութեան են օրէնք՝ անբռնադատ կրիցն յարակցապէս առ սոյն բերումն։ Վանդի արդարեւ առ միդ այդ պատուէր ամենայն հասակ զօրանայ, իսկ միւսոյդ երկրորդի առաջնովդ խնամով Հանդիպել՝ առատուածականիդ է նմանութիւն. յաղագս այսր իրի նախնի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս քան զերախտաւորացն բարիս։

Գ. Եւ արդ յիշեա զնոսա կրկին ընդ միոյ, որ ի քո անուն բարձրացեալ զանարժանս զնս ընկալան, և տուր նոցա, տէր ամենառատ բարերար և անսխակալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէ և ես յաւէտ թափուր իցեմ յարժանեաց, բայ Հաւատոց նոցա և առ յոյս նոցին ակնկալութեան, որ առ պարտաւոր գերիս ողջամիտ կամաք ակնարկեն, որպէս թէ ի մասանցդ քո կեցուցչաց ի պահպանարան Հոգւոյս ծածկութիւն լինի ունիցիմ։ Եւ զպատժատուս անամփոփելի ի քոց տեսութեանց և յանխաբելի ի յուղիղ կըշ-

ռութեանց՝ քաղցր դիմութեամբդ աննահանելեաւ մերձեցեալ առ իս մնքուր սրտացես, անխայտառակելի պահելով ՚ի տիեզերական յանդիմանութենէն: Եւ որպէս շուք իմն վայելչական դնել ախորժէն ինձ անարժանիս սիրելիքն քո վասն քո, նայեցեալ ՚ի կրօնս ղեկտուս բարեկերպութեան, չգիտելով զբիծս զազանեացն՝ երջանիկ կարդան եղկելոյս, և դու հնարաւոր ամենապարզեւ օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վասն ամենաթշուառիս հեծութեան հաշտեալ ընդ նոսա բուռ հաւատոյ նոցա. ընծայեալ նոցին մատռ պարգեւեա զանեղծ մեծութիւնդ և զանթառամելի զպատկդ յահաւոր աւուրն յեանում հատուցմանն ամենափորձ ընտրութեանն:

Ե. Օ՛ի դու ես պրաւ փրկութեան մեծութեան անվատանելի և անծախ գանձուց սուրբիս և սովեցելոյս, ՚ի վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ որ ՚ի քէն՝ յարդեալ ճոխանանաք: Կառո ինձ սահման ջոյ հանդըստեան. արձանացո, անփոփոխ, պատրաստական վաստահութիւն. կարգեա, օրհնաբանեալ, անկազակարծ յուսոյ ամրութիւն. տուր, ամենախնամ դու անսչառ պաշտպանութիւն, սատանեցելոյս բարեաց անդորրութիւն, տարակուսելոյս լուսոյ ապաւինութիւն, աշխա-

բելոյս մեծ երջանկութիւն, վհատելոյս կենաց օդնութիւն, լքելոյս անդադրապղելի օժանդակութիւն, նահանջելոյս անսայթաք վերընթացութիւն: Ո՞վ քո է բնաւդ և ո՛վ քէն է ամենայնդ, և ո՛վ ձեռն քո բաշխին հաւատոյ թինք պիտանացուաց համայնից կենաց. և քեզ վայելէ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՆ ՀԴ.

Ա՛ջ ոտն յա-ել-ա՛ւ ելին հե՛դ-ո-ղե՛ան նոքին հալոյլ
աա՛ նոյն աղբո՛ւ հալե՛ցաւ քաղ.
ն՛ ե՛տոյ տրտմ ե՛ա՛ւ ընդ Ա՛տո՛ն-ծոյ:

Ա՛. Աղբիւր երկնաւոր, թագաւոր բարձրեալ, տէր բոլորից, ամենից ակնկալութիւն, ստեղծող տեսականաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղանութեանց, կազմիչ հանդերձելոց, տուիչ լուսոյ, աւիթ առաւօտու, պատրաստիչ վաղորդայնի, երեւեցուցիչ երեկոյի, տարրիչ խաւարի, արուեստաւոր բարեհնար, իմաստութեան դործօնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մեղանաց, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց, պահպանարան հանգստեան, հնարք նիրհման, յարմարիչ քնոյ, պարգեւիչ ննջման, շնչոյ յարակարգութիւն, զգայութեան տեւողութիւն, ցրիչ ցնորից, յեղանակիչ անկողնոյ, փոխարկութիւն զարհուրմանց, այլայլութիւն տխրութեանց, խափանիչ խիթ-

մանց, ընդարձակիչ կարծեաց, համադրութիւն ծփմանց, ահաղնութիւն խարդախմանց, հաբուածիչ դիւաց, փախուցիչ ախտից, ընկղմիչ դայթագղութեանց:

Ո. Պաշտպանեա երկնաստեղծ ձեռամբդ, զօրացո բարձրացեալ քո աջովդ, ամփոփեա ամենակալդ թեւօք, ծածկեա աստուածեան խնամօքդ, ամրացո վերակացութեամբ վերնայնոցդ, շուրջանակի պարսպեա զումարուածոքդ անմահից, ի յամենուստ պարփակեա կցորդութեամբ հրեշտակացդ, վանեա զընդդիմամարսն իմ զինուորութեամբ զուարթնոցդ, պատսպարեա զստանեալս՝ աստուածածնիդ մաղթանօք, զբանակս անդրանկացդ բարեկարգեա ինձ պահապան: Ոտից ընդ աչացս դիմաց և զմուացս իմ տեսանելիս, ըզդաստ արա ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրից դանդաղութիւն. վերացո, տէր, ի զգայութեանցս զմածեալս յիմարութիւն. բարձ, միայն բարեգործ, զպատրուակիս թանձրութիւն: Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զողորմութիւն քո ծագեա. ընդ ելից արեւուն՝ արդարութեան արեգակնդ ի յանձկութիւն սրտիս մտցէ. ճառագայթ քո փառացդ ի յիմաստից խորհրդոցդ Ջահեցի. խաչիդ տեառնապրութիւն ընդ շունչս և ընդ մարմինս համաստիս տարածեցի: Յանձն առնեմ քեզ յաւուրս

դքո յարմարեալ տագաւարս պահպանաւ ո-
գւոյս՝ որ ՚ի սմին: Զի դու ես աստուած ան-
քննին, առ ամենեսին բաւական և յամենայ-
նում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՁԵ·

Վէրսին յաւելուած երկին հեթանոսական նորին հասոյ
առ նոյն ապերջ հաղնուածոյ բանի.
՚ի խոչոց արուեր իսուտ ընդ Աստուածոյ:

Ը. Իսկ արդ վասն զի արհնականին մեր զաւարհամբիւն քեզ ննջումն իմն է համա-
բեալ, իսկ ՚ի խոր թմրութիւն լուծին՝ վասն
ոգիոյ հաւատոյն ՚ի քեզ՝ անթարթափ բա-
ցութիւն աչաց, ուղղեա հոգւոյդ քո իմաս-
տասիրեամբ զյաջողեալ ձեռինս գործոյ ընդ
հնձութեան ձայնիս մնղձանաց: Զօրացո,
տէր, ՚ի հանդէս բարի ճգնաւորական արի
վաստակոյ, կցորդ լեր կարեացս տկարութեան,
թեթեւս կացո զաշխատութեանս այս սկիզբն.
արագեա, միշտ կարող, դյաւաջադրեալ ձե-
ռակերտս, դիւրաւորս ընթացո ՚ի յաւարտումն
լմնանն: Ի վախճան իրին բերկրութեամբ զիս
հասո, ժամանն կացուցանես ՚ի հանդիպումն
յուսոյն, կցորդ լեր ուզոյն ճանապարհիս ըն-
թացից, ՚ի թռիչս ամբարձմանն փութացուա-
ցես յօդուածարն, ընդ աջմէ իմ լեցիս ՚ի
վաստիպ ծանրութեանն, դձայն քո լուո ՚ի

յանձկութեանն պահու, ձեռամբ քո կեցո ՚ի կորստեանն ժամու, մատամբ քո ապրեա ՚ի սահմանին անձկութեան, հարթեա զկատրոց ամենաչար խափանմանն, հոգեղինին առաքմամբ քոյ Աստուածայ լինձ հնարեա, բան լինձ չնորհեա ՚ի յաւետնի բազմութեան, իմաստութիւն յիս տնկեա ՚ի հանդիպման քննութեան: Ամպով կամաց քոց հովանացիր հրաշապէս, հանդարտեցո փայտիւդ կենաց զծովս մրրիկ, սանձեա զաստեաց կենցաղոյս



պատկեր քոյին հրամանաւդ· քանզի թէ աստ ողորմութիւն քո, տէր, կամեսցի, այս լուծութիւն կոհակաց կարծր է քան զվէմ. և թէ ՚ի ցամաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ պնդութիւն յաստակիս ՚ի ներքոյ աստի հոսեալ սասանի:

Ն· Արդ ընկալ, Յիսուս, զպաղատանացս ձեռնարկութիւն քեզ ՚ի հաճութիւն, և արա լինձ զամենակարծն գոյութագղութիւն մեծ վըստահութիւն: Որպէս ՚ի ջրահեղձոյց ամենա-

կործանն դարու, որք ի հարթ տարածման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողորմելենէդ ամայի մնացեալ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստիւն յոդնատատան հիմանն հայթայթանօք յանուն դիածիդ յեցեալ պահեցան. ընդ որս և զաղաչողս մշտատատան ի նաւահանդիստն խաղաղութեան մարդասիրապէս պրծեալ ապրեցո. վարձս ի քոյոդ ընդ իս բերելով հոգեւոր շահից, զատորաբերս այս ստուարութիւն պարտուցս լքեալ բանիդ առակաւ, ի քեզ տէր անկայց միացեալ ի սպառ անբաժանելի օրհնեալ յամենայնի: Եւ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուրք ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք ջրով և հրով փորձեցան, և յելից պերճանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութեան, ասասցեն ընդ մեզ համարանաբար զուգամանութեամբ՝ եղիցի եղիցի:

ԲԱՆ 22.

Աչերսին յահելոյ կրկին հնձուելոյն նոյն հոյոյ
սա նոյն սրբոց հաղթանաց բանի.
Ի երից սրտից իսոյ ընդ Աստուծոյ:

Ե ընդ այսր հատաչանաց թախծութեան ողբոց ի բազմաց կերպիւ շարակարգելոց, և ամենից հոգւոց ողբմա, գովեալ և երկայ-

նամիտ թագաւոր: Այս և այսոցիկ առաւել
որոց հատեալ է ակնկալութիւն փրկութեան
կենաց. որք ննջեցին անպատրաստաբար չի-
ջեալ լապտերօք իւղոյն պահաւութեան: Ա՛յս
յիշեա, տէր իմ գթութեան, և՝ ի յայս եւս
պատճառ իրաւունս ինձ դրեա: Վասնզի թէ և
՝ի փառս ահաւորութեան աքանչելեաց մեծիդ՝
հակառակեցան հանդերձեցեր զկազմած մար-
դոյս, զոմն ծանր և զոմն թեթեւ, զմին զով
և զմիւսն հրային զի դիմադրութիւնն ՝ի հա-
կառակայն հարթ պահեցեալ՝ արդար կոչես-
ցուք հաւատարիմ հաւասարութեանն. և՝ ի
յայսմ ՝ի դատման առաքինութեան վերա-
բերեալ ընդ ամբարձելոյն, զնոնարհութիւնն
առ կաւն դիտման անմոռաց պահեալ՝ պատ-
շական ընկալցուք ճգնաւորական: Այլ քանզի յայսմ
կանոնէ ուխտ վճռեցաք, և անաստնաբար
սահեցմամբ բան հոգոյն զնջման ընդ երկիր
մածաք, այլ ոմն ախտիւ և այլ ոմն անզգու-
թեամբ, մերս մասն մոլութեամբ ամենաբաղձ
կերակրոց իբր գազան մշտաբոյծ յարակայ
կապեալ ընդ բնութեանս: Ապա ՝ի քառիցս
ոմն անբմբռնելի և անողոքելի սպացմամբ ՝ի
բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ.
եթէ ջեռնումք տապով սիրոյն որ ՝ի քեզ՝
նշխարաւ բոցոյն որ ՝ի մեզ, յուրան առընթեր
կենակից նմին զնոյն կասեցուցեալ բարւոյն

ընդմիջէ. եթէ օդականաւն հրեշտակայնովն յառիցիմք ՚ի քեզ, ծանրութիւն թանձու անդրանիկ նիւթոյս այս հողոյ ՚ի ստորեւ քարշեալ խափանէ:

Ր. Եւ արդ յամենատես պարտեալ և ՚ի սպառ լքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ, վատնեալ ՚ի բազմից ՚ի մահ դրաւեցայ. վասն որոյ ՚ի պարզեւականէն զրկեցեալ՝ յողորմութեանն կողմ նայիմ, և պատկառեալ դիմօք համայնից ուղղոց զընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կորստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ զօրելի է. նա՝ զի և ընդ անտակար կարելոյդ և կամելդ է ախորժելի:

Գ. Արդ այսց երկուց բարգաւաճ շնորհաց նորոգչաց առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի և յուսահատութեանն վհատութիւն ազգաց մեզաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս հոգւոց բժշկութեան քումդ հրամանի, տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ 24.

Ա՛ջ ըստ յա-ելս-ած կրկին հեթա-ընկան նոքին հակառակ
սա- նոյն ազգս հալածանաց բանի.
Ի խոց սրտիս իմոյ ընդ Աստուածոյ։

Ա. Ե՛ արդ քանզի ի գլուխ կատարման հասեալ սակաւամանեայ կատակի այսր ողբերգութեան, արա, տէր, վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մնդղմանաց ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք։ Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց ակնկալութեան դատապարտելոյս՝ ասելով, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչեցի մի ոք ի փոքրկանցս. և դարձեալ, այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալն ոչ կորուսից։

Բ. Ահա օրհնեալ ես ի զթութեան, բարեբանեալ միշտ ի քաղցրութեան, խոստովանեալ յերկայնմտութեան, ծանուցեալ ի յայցելութեան, քարոզեալ տէր ի փրկութեան, ներբողեալ դու յառաւութեան, պատուեցեալ ի պաշտպանութեան, փառաւորեալ ես ի փրկութեան, երկրպագեալ յանբաւ բարձրութեան, պաշտեցեալ ի յանքննութեան, դովեցեալ միայն ի յաղթութեան, վերաձայնեալ ի մեծ զօրութեան, խնկաւորեալ յողորմածութեան, համբուրեցեալ յանճառ հե-

զութեան, ճաշակեցեալ ՚ի խոնարհութեան: Ընդ քեզ և ծնողդ քո երկնաւոր աստուածդ բոլորից միխիթարութեան. ըստ որում Հոգիդ քո սուրբ բարութեան, որ զանկեալ զդրասո թշնամւոյն և զգայթագղեալ մարդն անբա- նութեամբ՝ կանունեցեր ոչ անտես առնել: Ո- րոյ երախտիս Հզօրիդ ՚ի յիս, և առաքինու- թիւն մեծիդ ՚ի բարձունս ուսնեալ անդադար յանվախճան փառաբանողաց. որով.ք զայս ձայն աղերսական յարդեալ ընկալեիս մար- տիրոսացն պաղատանօք ՚ի հոտ հաճութեան բուրման անուշից: Եւ այսու փրկանօք հաշ- տարար բանի՝ զնախնեացն պարտս և զանե- բեւոյթ վերս միջնով.քն և վերջնով.քն մահա- ցուցանողօքն զանձն և զմարմին բժշկեա, ամենակարող, զնեբքինս և զարտաքինս, ըղ- տիպ.քն և զդիծ.քն և զնաբանս հարուածոյն. բարձեալ և մաքրեալ դեղով.ք ողորմութեանդ զկտեալ խածուածս բազմագունիս. որք զար- շելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէ- ութիւն բնութեանս:

Գ. Եւ եթէ հասից յամն ծերութեան քեւ առաջնորդեալ արժանիս մնալոյ, մի թողցես զկարութիւնս, մի անտարդեր զալիան, մի կո- րացուցես զկործանեալն, մի զնջուացես ըղ- կքեալն, մի վայրաբերեր զնոնարհեալն, մի ընչման հողմոյ մատներ զառկայծեալն, մի

ընդպահկեացես զդեղեւեաին, մի անվերարկու առներ զառուցեալն, մի անդարման լեցի տապնապեալն, մի առանց տաճելոյ յարկին խարխալեալ, մի անպատիւ պատկերն հնացեալ, մի պարարտութիւնն անհամեալ, մի շուք շնորհին անարդեալ, մի հնութիւնն քամահեալ, մի նաւ հոգւոյս ալեկոծեալ, մի երկարութիւն յուսոյն կարիցեալ, մի լար շաւղին խղեալ, մի ուշ իմաստին բարձեալ, մի դոյին կազմած զեղծեալ, մի ամբարձմանն թևք փետտեալ, մի զուարթութիւն զեղոյն տղեղեալ, մի ճաճանչ նշուլին քաղեալ, մի պատուհանք աչացս փակեալ, մի լուսատուութիւն նորին խափանեալ, մի պատկերն լուսոյն անկեալ: Ահա աղաչեմ զքեզ, բարեգութ, ամենայն սրբովք պաղատիմ, լուր ստգին ինձ կանխաւ, զի զանազանն մի մնասցիս: Դու առաջնորդեցեր ինձ ըստ տաղմատղին և ապրեցուցեր, հան, տէր, ընդ երդոցին և ի կարծեացն կատակածանաց, յորմէ երկնչիմ: Խակ ես չեմ արժանի ի քէն և ոչ հաստարակաան կերակրոյն վարձու, այլ դու կարող ես սովորաբար և առ զայցողս բարեգործել: Որո են զարմանալիք անճառից բարեաց. միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութիւն, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԸ.

Ա՛ջ ուրդ յա-ելը-ած լրկի՛ն հե՛յ-ը-ե՛ան նո՛ր-ն հա՛յ-ոջ
ա՛ն նոյն ա՛ղբր մա՛ր-ն-ա՛ց բա՛նի.
Ի ԵՐԵՑ ՊԱՏՒԻՐ ԵՒՍԵ ԸՆԴ ՅԱԿՈԲՈՍԻ:

Ը. Եւ արդ ջուր կամաց և կաթ արտա-
սուաց՝ բեկումեամբ հոգւոյս մեռացս լքմամբ՝
խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի, զմար-
գարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն Մա-
մեւէլի, զոր առեալ եհեղ ՚ի սկաւառակէ յան-
դիման քո, ամենատես, առ ժողովրդեանն
օրինակութիւն զանճն արկանելոյ խոստովա-
նութեամբ և հնազանդութեամբ կենդանա-
բարդ զարշապարաց:

Ը. Եւ արդ ընկալ զայս հիւսուած բանի
աղիողորմ հեծեծանաց, և հոտոտեացիս յայս
նուէր բանի անարիւն զոհի, թո՛ ապաւոր երկնի.
և օրհնեալ սրբեա զտառ մատենի այսր ողբ-
երգութեան, և գրեալ գրոշմեացես յարձան
յաւիտեան ընդ հաճոյականացն սպասաւորու-
թիւնս: Կացցէ առաջի քո միանձնաւոր, և
յիշատակեացի ՚ի լսելիսդ քո հանապազ. բար-
բառեացի շրթամբք ընտրելոց քոց, և խո-
սեացի բերանովք հրեշտակաց քոց. տարա-
ծեացի հանդէպ աթոռոյ քո, և ընծայեացի
՚ի սրահ սրբութեան քո. խնկեացի ՚ի տաճար
անուան քոյ, և բուրեացի ՚ի սեղան փառաց

քոց. պահեսցի ՚ի գանձարանի քում, և համբարեսցի ՚ի առացուածս քո: Պատմեսցի ՚ի յականջս ազգաց, և քարոզեսցի ՚ի լուր ժողովրդոց. նկարեսցի ՚ի դրունս իմաստից, և տպաւորեսցի ՚ի սեամն ղպայութեանց. իբր կենդանեօք զնմն պատմեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն. և թէպէտ վախճան ընկալցի իբր զմահացու, այլ յարակայութեամբ բանի այսր սուիերի՝ գրեցայց կենդանի: Սրնաացէ սա անեղծ ՚ի կամս քո, տէր, ինձ պատժապարտիս համբարձեալ միշտ անդուլ դատիչ, անաչառ կշռամբիչ, ընպատակաւ յանդիմանիչ, անանխայելի գործիչ, անողոքելի պարտաւիչ, անհամբոյր ծանակիչ, անմարդասիրելի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ կառափիչ, անխնամելի յայտնիչ, ապառում հրապարակիչ, աշխարհալուր բողբիչ: Փողով մեծութեան ազգման առանց լսութեան և կամ դադարման զնմնցս պարտեացս խոստովանեսցի:

Գ. Սոյն գիր իմովս ձայնիւ իբր զնս ընդ իմ աղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն, հռչակեսցէ զդաղանիսն, կանանեսցէ զկատարածն, հնչեսցէ զմոռացեալսն, յայտնեսցէ զանհրեշտութիւն, բարբառեսցէ զբարբարոսն, քարոզեսցէ զնորոյն, պատմեսցէ զմեղայն, մերկացուսցէ զանտեսիլն, ցուցցէ զկերպարանս

թաքուցելոցն: Հօշափեսցին սուտ որպէս, գոցին գայթագղութիւնքն, յանդիմանեսցին անճառքն, քամեսցին չարեացն մնացուածքն: Եւ թագաւորեսցեն կեանքդ հնորհաց ողորմութեան քո, Քրիստոս, ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց. որով ի ժամանակս կենդանականս սկզբնաւորը լուսոյ մտի գարնայնոյն նորոգման աւուրն պայծառութեան՝ քոյովդ ցօղով յոգի աճեցեալ այսու փրկութեամբ անմահականաս, և անցամաքելի վերամբարձութեամբ շառաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝ դարձեալ դալարացայց և կրկին ծաղկեցայց ըստ քոյինաշունչ գրոյն յուսադրութեան: Եւ քեզ միայնոյ փրկողի և հոգւոյդ քում հօր իսկակցի, միամանական տէրութեանդ և անճառ Երրորդութեանդ խորհրդական գովեստիւ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ 28.

Ա՛ջորին յաւելաւած լրկին հեծելեան ազգն հալոզ
աւա նոյն ազէրս հալնանայ բանի.
Ի խորոց սրտից ետուր ընդ Աստուածոյ:

Ը Աստուած և տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ, անսխալական, մարդասէր, ամենագութ, պարգեւատու, փրկիչ, օրհնեալ, գովեալ, բարերա-

նեալ: Դարան ամբութեան, պատսպարան վտահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղաց, ողջացուցիչ վերաց, անհասանելեաց հնարք, անմատչելեաց հպատար, անյուսութեան ելք, անուն քո խոստովանեալ աստուածոյ որդի. և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Զ.

Ակնարկ յաւետարանական հեթանոսական նոքին հակառակ աս նոյն ազգս մանկանայ բանիւ.
Ի խոտոց արտից խօտ ընդ Աստուծոյ:

Ա. Հարեբանեալ աստուած երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարերարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն ոծնելի, պահպանութիւն խընկելի, բարձրեալ անքնին, մերձաւոր կամարար, ապաւէն անկասկածելի, միխիթար սրտից, փարատիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, ապառումն վհատութեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի, շրջապուռ

թիւն ընդդէմ, կացուցիչ հապաղի, ամփոփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս, և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես:

Ն. Զոհարանեալ միշտ երախտաւոր, որ հեզութեամբ անհպարտութեան երկայնամտեալ հանդիպիս տենչանօք անճառ հրաշիւք յանձինս սրբոց: Թագաւոր էից համայնից, ամենայնիւ ծանուցեալ զթած. սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս 'ի լոյսդ վերին: Չեռնկալու մեծ վըստահութեան, որ ոչ թողացուցանես դայթագղելոյս 'ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ. ապաւինութիւն հանգստեան, որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան: Զգաստութիւն շնորհաձիր, որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց. առատութիւն աննախանձելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հողոյս ճոխացուցանես: Պայծառութիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես: Վաւիչ մեղանաց բաղ-

մաց, որ գՀերբեալս ՚ի փրկութենէ առաջնումն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելէ- ցացուցանես: Նոյնպէս դիւրահաս առ ա- մենայն անբաւ դերամբարձութիւն յաւէտ յառաջեալ, եւք վստահութեան առ խոս- տացելոցն վայելս. երանութիւն անձկալի, յոր գկենդանութիւն շնչոյս լքանելն է ախորժելի, գի գքեզ գտից՝ կենդանի: Կամք անփոխա- դրելի առ ՚ի քաւութիւն գերեալս զօրացեալ ամենագովելի. անսխալելի դեղ կենաց, որ և մեռելոց բնաւին եղծելոց առնես զաքանչելիս: Ամենաստեղծ անեղկրայելի, որ գՀուրբ կի-



գեան և գՀողմով Հոսեան և գժանեօք դա- դանաց ծախեան ՚ի քթթել ական նոքին հիւթականութեամբ անպակաս յարուցանես: Ընհատատար համարձակութիւն, յորում՝ առ- տուածօրէն պանծանօք պարծելն է իրաւացի:

Գ. Նայեաց, տէր, յերկնից զուարթ քաղ- ցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և արա անեղորդ Հանգստական դիւրաւոր ՚ի

բաղմատաքնապս հեծութենէ: Եւ զյարուցեալ զումարս սատակչացն, եթէ սպառազինք այսական զժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղաց տգեղ և քո առելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժեացես հանդես հատցես խափանեացես և հալածեացես հեռի սահմանաւ 'ի սպառ տապրեալ անդարձ որոշմամբ վերստին կորըստեանն. և կառուցես կացուցես նպաստակ կենաց և ամուր մահարձան զնշան խաչիդ սպասելեալոյս 'ի քեզ փրկութիւն: Եւ յայսմ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան լուծցին որոգայթքն գաղտնածածուկ սատանայականք, կապտեսցին մեքենայքն, վատնեսցին դայթագղութիւնքն, խայտառակեսցին հաղթիցն դրութիւնք, յայտնեսցին երեւոյթք որսոյն, գացին նենգողին ծուղակք, վերասցին վարմին վերարկուք, տոչորեսցին որոմանցն բոյսք, նզովեսցին բռնաւորին չարաբանութիւնք, կտրեսցի լար խաբէութեան 'ի մահ որսողին, պարտեսցին պատրողին բանսարկութիւնք, պակասեսցին զինք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սադրողին պատրաստութիւնք, արձակեսցին տոռունք տապնապողին: Ելոյզեսցին սուտ կերպարանք

կեղծաւորին, սատակեսցին խրոխտականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կցորդութիւնք կերչացն, բաժանեսցին աղնիք աւազակացն, քայքայեսցին բոյլք բարբարոսացն, քանդեսցին ամրոց ապստամբողացն, արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրեւք, հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին: Խորտակեսցի եղջիւր դոռոզին, մանրեսցին ամբառնալիք դրոշեցն կերպարանացդ, փշրեսցին ամբարհաւանութիւնք հպարտացելոցն, նահանջեսցին դիմեցմունք ճակատելոցն, քակտեսցին միաբանութիւնք զօրացն Ներելիարայ՝ թէ անմարմինք և թէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ճանապարհ ի մի շաւղաց հետոց յեօթն տարակոյս. ի դուռն ինձ փորեալ ինքեանք ընկճեսցին: Յեղանակեսցին ձմերունք ձանձրացուցչին, հատցի կապն կցորդութեան մշտաջան աւազակին, նողկացի մուացս կայից համբոյր շողոքորթին, ընդմիջեալ մեկնեսցին նետաձգութիւնք նեղչին, կացցէ ի սատանման նաւ խարդախողին, խլեսցին յարմատոց անտի առատմունք խաժանողին:

Գ. Ա՛ման փայտիդ օրհնութեան կենաց՝ յորում պրկեցար աստուածդ անպարտնելի, յիշատակաւ բեւեռացդ՝ որով ի գործի մահուն մաճուցար արարիչդ երկնի և երկրի, արեամբդ

տէրունականաւ՝ որով զվիշապն մեծ կարթիւ
ածեալ որսացար, լեզուին դառնութեամբ՝ զոր
արբեալ, զդեղատուութիւն կորուսանէին սրտաբո
հեղեր, պատմնբանութեամբ ըղձական ճա-
ռիւք կրիցն սարսափելեաց՝ որով գլխոյթիւն
հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր,
անուամբդ անհասականաւ ամենայնիւ ան-
թարգմանելոյդ՝ յորմէ զոգան և դատա-
պարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ
բնութիւնք ամենայն երեւութից և աներեւու-
թից, եղեցին այս ամենայն պարգեւք հնորհաց
խոստովանելոյս ՚ի պաշտպանութիւն, ՚ի բժըշ-
կութիւն և ՚ի քաւութիւն: Եւ մնահարեր
դառնաթոյն օձին, և որ ՚ի նմա սղղեաց
տիեզերատաւ չարութիւնն, ՚ի սատակումն և-
ղեցի նորին. նոյն ինքն ՚ի կորուստ և յան-
բժշկական հարուած տանջանացն սոսկաւ մատ-
նեսցի, կապեսցի և ըմբռնեսցի: Եղեցի ոզոր-
մութիւն սուեղծողիդ ընդ իս, և շունչ ոգւոյս
իմ ընդ քեզ անբաժանօրէն կապաւ միա-
յեալ ՚ի մի:

Եւ որ զք ընթերցող զայս աղերս ձայնի
մաղթանաց գոչման աղօթից հայցման ձերոյ
և տալոյց, կամի և երիսասարդի, և եթէ
յաղախնաց զք պատասեցի սատուածսիրա-
բար, հաւասարակից անաչառութեամբ ըն-
կալցին ՚ի քէն մասն եւանութեան պարտուց

աղատութեան, հաստեալ վերատին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ զարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի: Ահա տիրապէս հնարաւոր, զօրեղ անպատում, անհաս, անիմանալի, տեսցես աստանօր ՚ի հառաչանս կողկողանաց այսր հնծութեան, որ ՚ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի, աստուածածնիդ բարեխօսութեամբ և խընդրուածովք ամենայն սրբոց: Օ՚ի դու ըստեղծեր զամենայն. և ՚ի քէն եղեն ամենայնք, և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յաւիտենից, միդ յիսկութենէ անժամանակ Երրորդութեանդ, զուգակցապէս փառաւորեալ յանբաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՂԱ.

Ա՚ջոգին յոյեալ. լցին հեծութեան նոցին հոգիք սո նոյն աղբր ծաղկանաց բանի.
՚ի խորոց սրտից իւրեանց Աստուծոյ:

Ա. Տէր տէր զթութեանց և աստուած ողորմութեանց, անուն մեծութեան, ձայն աւետարանութեան, կոչումն սատկութեան, լուր անհասութեան, բարբառ դողութեան, հընչումն հիացման, յուսադրութիւն բարերա-

թութեան ամէնողորմ քաղցրութեան. յորմէ երկուցեալ սատանին ամենայն բնութիւնք եղելոց՝ ի քո սպառնալեաց ահիդ պակուցման, սաւառնին սերովբէք, ամիսոիին քերովբէք, պարուրին պարք լուսակերպիցն, երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն, նոյնք ցընծան դողութեամբ մեծաւ՝ ի մի նաւակատիս բերկրութեան, զարհուրին դեւք, ընկրկին չարութեանցն գունդք, պակասին խաւարասիրացն հոգիք, անդնդոց մատնին հրեշտակք. օտարին: Կապին նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին, փակին՝ ի սորին բանտի քինաւոր ամազակացիքն, անխզելի հանդուցիւք պաշարին խումբք հակառակորդին, արգելին անզերծ զընդանաւ՝ մահաղնացն կաճառք, այնդին՝ ի մեռաղս ահեղ հրամանիդ այսականացն գումարք, պապանձին կարկեալ ընդդիմաբանիցն դասակցութիւնք, պարաւանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն ժողովք, անլոյծ շղթայիւք նեղին առաքելութիւնք Դևերաքրիստոսին:

Ր. Ընդ կարկառեմ մատամբք ձեռինս ըզտեառնագրութիւն նշանիդ՝ ի ժամ դիշերիս, որ ոչ մեծանաս խաւարաւ անդիտութեան, ամենեւին տեսականութիւն, քան թէ՝ ի լոյս անմատոյց հանդուցեալ բնակես: Ընկալ զաղաչողս վտանգատուր գոհաբան ընդ պահպա-

նոքեանք թեւոց հզօրիդ, փրկեա ՚ի ցնորից եկամուտ պղտորութեանց, սուրբ արա զզգաստարան հայելեաց սրտիս նկատմանց. ամրացո փայտիւդ կենաց ՚ի տխրական անրջոց, արեամբ քո սրսկեա զղջարկութիւնս կայիցս, զհետս ելումտիցն կաթուածով կենարար կողիդ գծագրեա, երդոյն պահպանարան քառակերպիդ ձեւակերպութիւն եղիցի, հանդէպ տեսութեան աչացս ամբարձման փրկականդ քո կրից խորհուրդ առդիցի, ընդ բարաւոր յարկիս չարչարանաց քոց գործի հաստիցի, զծառոյդ օրհնութեան հաւատոք յուսոյ իմոյ կախեացի: Ընդել, տէր, սուաւ զաստակիչն հոգւոց, մոցէ անխափան պաշտպան լուսոյ, և ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս և զբեռն պարտեացս թեթեւացո, զոր ՚ի լարանի մուացս ամփոփման մահճացս անկողնի ուշաբերեալ զյուսահատութեանցն դառն պտղոցն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մեաւնս գործոց չարաչար անօրէնութեանցս:

Գ. Հանդո զվաստակեալս ՚ի բազմածուփս աշխատութենէ, բարձ զտապնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութիւնն ընդ վշտացն, զհեծութիւնն ընդ կարեացն, զանձկութիւնն ընդ թշուառութեանցն, զըհատաչմանն ընդ խորտակմանցն, զբեկութիւնն ընդ ապշութեանցն, զլմբրութիւնն

ընդ շրտմանցն, զարբեցութիւնն ընդ յիմարութեանցն, զթերամտութիւնն ընդ խելագարութեանցն, զասառումն սիրոյն և զհրային ջերմութիւն աղուական ախտին: Ովժանդակ լեր տկարութեան բազմատխուրս տարտամութեան, բարեգործ աչխոյդ շնորհի, ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի, փառօքդ մշտափայլի, յարակայութեամբդ անեղծի, երեսօքդ զուարթականի, խնկութեամբ էիդ պաշտելի, բարձրութեամբդ երկրպագելի: Ո՛տտո զչարաչար հեծութիւն կորստականս խեղդման, զնոր գիւտ չարին, զհին խարդախութիւն բանսարկուին, զօտար ազդեցմունս ի մահ կրթողին, զանչարմարական երեւոյթս հանապազորդեան եղեռնագործին, զառ աչս հնարագրութիւնն դժնդակ դիւին, զողբական բոցաշնչութիւն ձգող կախարդին: Պահեա ի տեղւոջ հանգստեան մեռօրինակ այսր դադարման յաներեւոյթ մտածութեանց, ի մանաւանդ սխալութեանց, ի մեծագոյն գայթագղութեանց, ի փոքրագոյն ոտնառութեանց, ի խարեբայ չար ձանձրութեանց: Ո՛եռացո զանհանդէպ մտածութիւնն ի զգայութեանց ծառայիս յանցաւորի, զկիրս բասբելիս, զվարս թշնամանելիս, զդիպուածս պատկառելիս, զհետս վրիպելիս, զպատիրս ձաղելիս, զխորհուրդս անգոմանելիս, զաւելա-

բանութիւնս նշկահելիս: Նախայ հոգւով և անշաղախ մարմնով զապատիեալս ի քեզ հանդերձեա, ի շնչմանէ հոգւոց, ի զարկմանէ բռնութեանց, ի բախմանէ փոթորկաց, ի յոտմանէ մրրկաց, ի յարձակմանէ գազանաց: Ի կափման աչացս հայեցուած սրտիս մի ատուերասցի, այլ զուարթասցի պայծառասցի վայելչասցի ընդ քեզ փայլեսցի, տէր Յիսուս Քրիստոս, լուսաւոր վառմամբ անշէջանելեաւ: Մանիւ քո սրբեա զպատասպարանս բազմականիս ի խորամանկութեանց, ի զբաղմանց, ի քո ատելի յիշատակաց, ի վերնամարտ մոռացմանց, ի քրէական մոռոսութեանց, ի տիրանենդ անշնորհութեանց, յասուուածընդդէմ հերձուածութեանց: Զնդիւք վերնայնոցդ վերակացու ինձ լեցիս, պետութեամբք, իշխանութեամբք զօրաւորօքն անյաղթականաց մաքուր մատակարարաց սուրբ աստուածութեանդ. առաքեալքն աւետեաց աւետարանաւն, մարգարէքն կատարանօքն, մաղթանք երջանկացն ի կատարած աւուրն ընծայեալ: Որով նիրհեցից երկիւղիւ քոյ քեզ տրտմութեամբ, և զարթեայց շնորհօք քո կրկին ուրախութեամբ, եթէ վհատութեամբ ննջեցից, յարեայց դարձեալ հոգեւորական բերկրութեամբ. եթէ ընկողմնեցայց մեղանօք, կանգնեցայց վերստին զատեալ ի խղճէ անաղտ անբծութեամբ:

Դ. Լ ուր խնդրուածոց ամենահառաչ ձայնիս հեծութեան, միայն բազմագութ, բարեխօսութեամբ սրբոյ աստուածածնիդ և ամենայն արդարոց և նահատակաց ընտրելոց: Եւ քեզ փառք յամենեցունց իմով դոչմամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահականաց դասուց, ի գովեստ հօր քոյ աստուածոյ մերոյ և հոգւոյդ սրբոյ բնաւից հաստատողի և նորոգողի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՂԲ.

Ի ՓԱՌՑՆ ԵՐԱՆԱԿ ԲԱՐԵՊԱՏՈՒԹԵՆՆ ՅԱՄԲԱՐՁՈՒԹԻՒՆ ՅՈՐՀՐԴԱՆՈՒԹԵՆՆ ԱՂԱՋԱՆՆ ԵՒ ԵԼԱԿ ԸՆԴ ԿԵՐՊԱՐԱՆՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՆ

Ե. Գոհանամ ղքէն, բարեգութ, միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի աստուածոյ կենդանւոյ, այն ինչ զարթուցեալ անձկութեամբ սիրոյ քո յիշատակի ի լութիւն հնչման փայտիդ հրաւիրման: Որով բախեալ զձայնարձակութեանցն զազդոզարան, սեմափեցաք կանգնեցաք, ի վեր յարուցեալ ի մեռօրինակ թմբրմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի բերեալ ձգեցաք ի ժամ պաշտաման օրհնաբանութեան, յանդիման լինել քեզ ուրախութեամբ հանդէպ հաստուածմանս քեմի:


HINRI

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

Ր. Ա՛հա փառք քեզ, անսահման անուն և անբովանդակելի զօրութիւն, որ այսքանեօք հնարաւորութեամբք ընդ փրկութեան իմում հոգացար. զոհաբանեալ անեղծ խակութիւն, որ կերպարանեցեր հրաշիւք աստուածին զհանդերձելոյն նմանութիւն, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ առ քոնս անյարիր սաստիկս որոտացեր. որպէս թէ ընդ ծուլութեանս դանդաղութիւն դյանդիմանութիւն խրատուդ խառնեցեր, ի հայրենի սիրոյդ հեզութիւն զուժգնութիւն ձայթմանն յարեցեր. յընդոստ զարկուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր անձրեւեցեր. ոչ մեղութեամբ մեղմական վանդիւ նիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութեամբ զոտուապեալ հոգիս զարհուրեցուցեր: Ծնրադրական երկրպագութիւն բոտեղծիդ բոլորից, որ այժմէն ցուցեր համայն յայտնապէս զօրինակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յարութեան, կենդանացուցեր ի դադարմանէ դժոխական անբանութենէ, ի խընդիր եղեալ կոչեցեր զպակասամիտս ի դինիդ ուրախութեան. արարեր զոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ սէր փեսայիդ. երկուցեր փոքր այս խոհանաւ զապարասանին զվնիխարութիւն, լուծ ստուար կրթութեան ստամբակին ուսոյ զայս իր գործեցեր, վարա-

պան վանիչ չարախօսին կղակաց եղեալ կազմեցեր: Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութիւն մեծիդ աստուածոյ, որ փոխարկեցեր զիայտին պարտիս յաղաւաւթիւն շնորհիդ կենաց, իմաստնացուցեր վերստին դարձեալ զյիմարս ցնդեալ՝ հոգեւորական հանճարովդ, կարկառ կռճմամբ զանբժշկութիւն հարուածոց օձին առանց մուացման միշտ թարգմանեցեր, ընդ Աղբորդութեանդ գծագրութիւն զկապն երեքկին իմ ՚ի կատարած ին սովիմբ կրկնեցեր:

Գ. Գովեստ ներբողից բարբառիմբ խնկոց վերառաքեմ քեզ, ամենահնամ, զի ՚ի առապատիր կողն բազմաստուածութենէ առաւել յաճախագունիւք որսացար զանձն իմ պարտաւոր ՚ի քո երկրպագութիւն, խրոխտ և ահարկու նուիրեալ փայտիւս զճշմարտութիւնն քարոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճականաւ զնոր աւետարանութեանդ պատիս: Սոյն ինքն աղաղակ բարձրութեան գոչման ապաւազնութեանդ քո, արքայ պետութեանց կայսերաց երկրի տէր Քրիստոս. նշան խրախութեան աւարտման հանդիսի մնորի քո, Յիսուս, յորում իմանալին փառաւոն կապեալ ըմբռնեցաւ, կափիչ հանապազորդեան զլոյ գագաթան հպարտացեալ չարագործին՝ ներտս այս տաշեցեալ: Սովաւ

գումարին 'ի պատերազմի որդիք Աիոնի ընդդէմ աշխարհակալին խաւարի. տուն իմն աստուածաւանդ կրթութեան կարգեալ 'ի հեռուստ այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ խափանման, նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուցման 'ի բացուստ անդր ծանուցմանէն, ազգակից հանդունանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտիդ աստուածոյ, կոչարան բարւոյ հաւաքման փոյթ ընթացիւք 'ի յարկն օրհնութեան, պատկեր տեսակի անկոյն գիտութեան 'ի կարգ ընտրութեան բարւոյն և չարի, յիշատակ մեծ տեառնագրութեան յերեսս կերպիս հոգւովդ սրբով զնշան խաչիդ, նախագուշակոյց աւետաւմատոյց փառաց գալստեան 'ի դշխոյն պահեալ սուրբ թագաւորիդ, յորդորիչ քաջալերական մանրապարիսի խրախճանութեան, անախտական սիրարկու անճնահամբոյրն կրցորդութեան շքեղաշուք քողընծայ ամենածին կուսին թագուհւոյ, յարդարիչ ծածուկ պճնութեան՝ որ 'ի հոգին է վայելչութիւն. նմանութիւն պատգամին Աինայ, որ 'ի տէրունեացն արտաքս առաքիւր. միշտ օրիորդ պանծալի անշաղախ որդւոց մայր անարատից՝ սուաւ փառազարդէր:

Դ. Գերագոյն քան զձիրքովին փողոքն եղջերեայ զբնութիւնն Ելեհարայ սուաւ

հարթեալ տապալեցեր, քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ՝ ընդդէմ Գողիաթու, դայիան նորոյ կառուցեր վկայ ահարկու կործանմանն սատանայի, զի խոր ածեցեալ արմատս մեղացն մերենայիւս այսու խլեցեր, զմոռացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր ե- րախտեօք ընդ իս կապեցեր: Զոր եթէ այլ իմն ձայն բանիդ սատուծոյ անուանեմ նա- խապատում եկաւորութեանն, ոչ սխալեմ քան թէ ճշմարտեմ. ՚ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութիւն գործոցդ Յի- սուսի առաւելապէս պատմեալ հռչակի. բիւ- րաւոր օգնականութիւնս վերնապարգեւս և քոյինատուրս ՚ի յայսմ անպատասխար ապա- ւինութենէ երկրականաց զարմանապրեցեր:

Ե. Խոստովանեալ անուղղ անքնին մար- դասիրիդ բարեխնամութեան, խնկեալ խոր- հրդով սրբամանութեան անգծապրելի կեր- պարան լուսոյ, որ կրկնաձիր նշանաւս այսու նետս արձակեցեր հեռաձիգս ձայնատարականս օդաչուս և յարմարաթռիչս ունողս յինքեան հոգի կենդանի, որով անսխալ հանդիպմամբ զնպատակն խաւարային ազեղնաւորին գաղտ- նութեան յաւէտ կործանմամբ ՚ի յեաս ընկ- ճեցեր: Որ զպատնէշս ամբարիւծ բերդամար- տութեան կանղնաւորս անվայրարկելիս՝ ա- ռատաւտ անդանօր գկտեալ դիպուածս այս

փայտի զարկման հրեշտակ կամարար թշնա-
մոյն ներհակ վերյուզարկեցեր: Հանիւ հրա-
մանի մեծիդ անյաղթութեան, օծութեամբ
շնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր
խեղճիկիչ մոլի գոռոզին իւր զեռչիդ փրկանակ
յեսանեալ սրեցեր: Ի մեծ ազդմանէ այսր
աղաղակի դեր քան՝ ի վերնոյն քանդեալ
վերացաւ դրանդն ամբութեան կամաց անվա-
յելուչ և ամենակիզում խենեշութեան կար-
ճամտին, ընդ հրէական սրտին խմաստից և
սուտերական տանն կործանութեան:

Օ. փառաբանութիւն քեզ վերընծայեմ,
անմահ թագաւոր, զոր արարեր և հաստա-
տեցեր աջովդ քո հզօր, աղաչեմ զքեզ, կրկին
ներդործեա: Ընդուցեր սովաւ հերքեալ առ
՝ի մէնջ զևէթ դժնդակ խորամանկութեան
բանսարկուին, զսաժանական տապ մեղաց,
զհոգւոն դառնութեան հնչման խաբողին, ըզ-
տարր արկածից մահու երկիւղի, զառ՝ ի յո-
դից ցնդմանէ վնասակար բերմունս սխրեցու-
ցիչս, զայսահառն հեծեծութիւնս թալկա-
ցուցիչս: Յրուեա վերստին քոյինապէն հեծա-
նեալ՝ օժանդակեալ թեւօք նշանիդ՝ զամպս
հրաժինս, զորոտմունս կարկտաբերս, զցաւա-
գին ցոլմունս հրախառաւ կեղծաւորութեան
փչման բազմոտանի վիշապին, զսուր սատակ-
ման, զճակատամարտ դիմեցման, զյարուցե-

լոյն ՚ի վերայ վայրենական խորհրդոց զգի-
ւացն կաբաւս: Յորմէ զարհուրին յայսմ իրէ
փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողութեամբ,
կիրթ իմն ծանօթութեամբ յայտնի գիտացեալ,
թէ յայս ազգ ձայնի յառնէ տէր ՚ի դա-
տաստան: Եւ խրախուսին հոգի արութեամբ
զբահեալ պնդապէս սուսերաւ հոգւոյն աս-
տուածարեալ մարտիկք ամենայն ՚ի ձեւ կա-
նոնի այսր յիշատակի, որ զամենափորձ հրոյն
ընտրութենէ դոչմամբ անկերպագրելեաւ հա-
մօրէն ազանց քարոզէ ՚ի յօրինաւոր ասպա-
րէզ երջանկաբար նահատակութեան:

Եւ Ձարաւ ահա փող աւազափող, համ-
բարձաւ սովաւ աստուած օրհնութեամբ,
պատմեցաւ սովիմբ ամենայն երկրի, հնչեաց
՚ի լսելիս բաժանման հեթանոսաց, ձայն պա-
հապանաց մեծին զօրացաւ, ըստ բանին Ե-
սայեայ, և ՚ի նոյն բարբառ առ հասարակ
ցնծասցուք: Յղեցան ջրոյն առակաւ ՚ի ձեռն
սորին թշնամիք խաչին, անպատուեցաւ ճա-
շակն պտղոյ առաջին փայտին, տօնեցաւ նիւթս
այս խորհրդական կենաց անուանեալ, անար-
գեցաւ երկաթ առ ՚ի պէտս պատերազմի,
իբր զսրբութիւն տեառն ՚ի սանձս երիվարին
մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմա-
րադրեցաւ, ամիոփեցաւ օծեալս ցպով հովուին
երկնայնոյ սուրբ իշխանութեան մարդկային

ձեռին: Ոչ գծեաց ՚ի քար տաճարին մուրճ
ինչ գործողն· իսկ յաստուածակերտս խո-
րան փայտս այս նուիրեալ ընդ խաչին Թե-
ւոց սլացեալ զօրէ: Ոչ ՚ի դլուխս ամենցն և
կամ յեօթնից եօթներորդս յորելենիցն՝
յանկեան ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ
ծագս տիեզերաց և ընդ ծիրս եղերաց՝ ՚ի ծոցս
ջուրց բազմութեան ծովուց և կղզեաց նոցա
յաճախ սաստկութեամբ անարգել ճայթմամբ
իմն աստուածայնով հնչեցեալ աւետարանէ:
Կոտորեցան սուսերք սատակողին այս փայտի
ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխա-
ձեւեալ ՚ի խոփս և ՚ի մանգաղս:

Ը· Ոչ արձագանք արձանաց ՚ի խորոց ինչ
դանչութենէ խիստս առաքեցեալ, և ոչ դժըն-
դակապէս ըստ իմաստակի ումեմն օտարի զօդ
վերաւորեալ, ոչ անախորժ սրութեամբ ընդ
ունկն մտեալ և ոչ զաման ուղղոյն անկամա-
կութեամբ չար թնդեցուցեալ· ոչ ոսկերցն
փուշ խրտուցման յանձն բուսուցեալ և ոչ
մտացն այլայլ ապշութիւն առաջի արկեալ,
ոչ զանգակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ
և ոչ քար ընդ վերգս սալի առանց քաղցրու-
թեան առ նոյն զարկուցեալ: Պարփակարան
անխորտակելի նորոյս Սիովնի, մի սա ՚ի սպա-
սուցն կազմուածոց արարչաւանդիցն գլխաւո-
րաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ

ղեւտականացն ղղուշաւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողին բան՝ հաւատն կոչմամբ այսու առեալ զայն տպաւորեաց. նոր զորձի շնորհի նուագարանաց աւետարանին՝ զարթուցիչ հոգւոյն աստուծոյ առ մեզ, քան առ օրհնաբանութիւն սաղմոսարանին՝ ի վերայ Եղիսէին: Ակզբնապար նախընթացութեան աղէ յարմար ջութակաց բարեաւսիլ ողբերգարկութեանց՝ բարացուցական բամբռան բառացի բարառնութեանց. սրինկ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ, ոչ հեթանոսօրէն ուրուածոյն հնչման և կամ հրէաբար խակախորհութեան, զոր մարգարէն տերամբ ապրեցոյց՝ ի բաց արա յինէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մանքրական տածմամբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պատահարաց:

Թ. Եւ արդ ընկալայ օրհնաբանութեամբ յարգեալ զոմեսիս զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառաւորութիւն, քո պաշտօն և իմ զոհութիւն, անապանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանդ: Որպէ ձայնդ այդ աստուածարեալ ընդ պատուաստ յօդիցս շաղկապութեան հանել ի հոգւոյս զպատիրս դիւաց և զմեռաս անիծից՝ և մեղաց ապականութեան:

Ընտրեալս լինել զայս իր նշանակիչ Ջնար Ջահատրական, անջնջելի նամակ, Ջատագով անխափանական տէրունական անօրինականացդ: Ահա պարգեւեա սուտ, բարեգութ, ազատեմ, հզօր կրկին մեզ ընդհեա պահպանութիւն 'ի դիմամարտից յաներեւոյթ և յերեւելի: Ընձեռեա մեզ, ձեռն ամենալի, որ բանաս և մատուցանես պատրաստաբար բաշխմանդ 'ի մատունս բազմապիսիս, օդոց քաղցրութիւն, անձրեւաց շահեկանութիւն: Պահպանեցին քոյով հրամանաւ այսու բարբառով հոգի տապալեան, ընդունի ցաւսբեր, յարձակմունք հինից չար խարդախութեան. սուտ խափանեցին ամենայն դիմամարտութիւնք գինուորութեանդ դժնեայ մատնչին, հալեցին հատցին և մեռցին յերջանիկ ձայնէ օձեալս այս փայտէ որդն և ուտիչ, և ամենայն նմանք սոցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին: Ընդունացո մեզ սուտ տունկ երանութեան գյուսոյդ 'ի քեզ մեծ պաշտպանութիւն, ստեղծիչ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ Սաբեկայ, որ ունի կախեալ 'ի դիտակ ոստոյն զաւանդ սուրբ նորոգ այժմ փրկութեանս ծաղկեալ քեւ, Քրիստոս, 'ի պտուղ կենաց անմահականաց: Փախիցեն յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բարեզեկոյց

ձայնարձակութեամբ՝ նէսարք ներհակք սուտ-պատիրն սուորնականաց բազմաձեռնեան խարդաւանողաց: Մերժեսցին սուտ՝ ի յանդոց պողատոհմական արօրադրութեանց մերոց սահմանաց և՝ ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վերք վատնիչք և հոյլք մորմոքեցուցիչք. կտրեսցին սուտ յաւելուածք կրկնատոզեղ և անվայելուչ պատահմանց՝ ՝ի հնարից չարին ՝ի մեզ յայտնելոց. իսկապէս վանեսցի սուտ, որք յերկաքանչիւրոց բնութեանցս մերոց վերերեւին ինքնաստեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց. յումեմն օտարին վրիպակ մրատածմունս, և յայլումն գարշ գոյութիւնք անմաքուր զեռնոցն ապականողաց: Փրկեա, տէր Յիսուս, աղաչեմ՝ զքեզ, փրկեա, բարերար. կարկառեա առ իս զաջդ ամենագով, և օգնեալ ինձ սուտ՝ զերծո զիս յամենեցունց ընդդիմացողաց:

Յ. Խառնեսցի միասցի հրամանն քո ՝ի սոյն՝ առ ՝ի փոխարկել զադամանդեայ սիրտս յիմարեալ՝ ՝ի քոյին բանիդ արդիւնաւորութիւն. հարցես մխեսցես զայս նեցուկ հրաշից քումդ աքանչելեաց ՝ի սիրտս ծորեալս և յոգիս լքեալս, և հաստատեսցես կազմեալ պնդապէս ՝ի կայումն ուղիղ անսասանելի. իսկ զանընդոստան կակղացուսցես զարթնուլ և զգաստ լինել յոգի հեզութեան աստուածաւանդ քո

պատուիրանիդ· որպէս զՊօղոսն և զՊատթէոսն: Յիշեցո՝ մարդասէր, պատուեալս այս փայտիս զերախտիս խաչիդ, որով զանճառսն ներդործեցեր· բարձ յինէն կեցուցիչ, զխաղող պարտեացս պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տապանակիդ: Ցացցին կամօք քո, Հզօր, ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց, լսիցեն յայս մեծի բարութեան ի քումդ ակնարկութիւն՝ ականջք խլից· պարզեացին ի ձեռն սորին լեզուք յամրացելոց· լուսաւորեացին ի սոյն տեսարանք աչաց, հայել մաքրապէս ի քեզ պչուցեալ անապականաբար· զբղջացին դարձցին կազդուրեալ կամք յափրացելոց· ընձեռեալ տացես, տէր, տադնապելոյս անձրեւ արտասուաց: Ղևիցի քեւ սա մեզ լուր ցնծութեան, ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նուագ հանդստեան, նիւթ երանութեան, պատճառ փրկութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց, խըզումն խեղդմանց, ընդարձակութիւն նեղութեանց, համառօտումն խեղճմանց, հալածումն հեծութեանց, թեթեւութիւն թառաչմանց, յառաջխոհութիւն կարեաց, կարդադրութիւն կրից, սփոփութիւն վհատմանց, բժշկութիւն ցաւոց, տեւականութիւն հեղգութեանց, ուշադրութիւն անտեսից:

ԺԸ· Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր

և անխուռնական, և ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահեաս սանդուղ երկնաշուք, առ հայր քո օրհնաբան ահաւոր անուն ձգեալ մատուցանես, բարերար, հոգւոյդ առաքնորդութեամբ միանալ ի քեզ անընդմիջելի. որով և սրբոյ միոյ միայնոյ և միասնական սէրութեանդ և անեղծ արարչութեանդ ի կենդանեաց և յանշնչականաց հաստելոց վայելչական գոհութեամբ փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲՈՒՆ ՂԳ.

Ա՛ջորդն յաւելուած երկին հնչմունեան ձորձն հանոյ առ նոյն աղբեր հաղնանաց բանի.
Ի խորոց սրտից իմոց ընդ Աստուած:

Աղօթք թարգմանօրէնք վասն սրբալոյս խաղոյն Միւռոնի.

Ը. Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անապատում, անձկութեան փափաք յարախորժելի, ի սրբերդենիցն փառատորոզաց միշտ սրբաբանեալ բնակեալդ ի սրբում, լի և ամենազեղուն բարութեամբ առատաձեռն անդնուաղելի, լոյս բարի և ծագումն գովելի, երկրպագեալ փառատորութիւն. ահեղ և անթննելի, ամէն և յաւիտեանս: Ա՛յսու բանիւ դաշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութեան, հզօր, այո, ամէն, ալելուիա. գովեալ թագաւոր

հանուրց, սատուած բոլորից, ստեղծիչ գոյից և տէր կամարար, միայն առիթ պատճառատուրաց, փրկիչ և օգնական հնատակալուելի։

Ե. Ուսոմ մեկնապէս թարգմանեալ ՚ի մեզ զայս գանձ անմահաւ և հարստութիւն անփոխադրելի, Յիսուս Քրիստոս ազգայ երկնաւոր. որում դողութեամբ մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչութիւնք, կրկնեալ քեզ յօժարութեամբ ՚ի հաճութենէ անխոտոր միոց, ծունր դողութեան ստեղծող էութեանց, որ են ՚ի սեսման և ՚ի ծածկութեան։ Որ եզ և էիր միայն բովանդակ ամենեւին անպակասելի, առեր զմերս իսկապէս համայն, զի ՚ի լրութենէ քումմէ լրացես. օրհնեալ և բարեբանեալ, ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութեամբ մեզ ՚ի փրկութիւն, ՚ի փառս և ՚ի գովեստ անճառ բարձրութեան ահաւորիդ բարերարութեան։ Սկզբնաւիր օծմանս շնորհի մեծախորհուրդ հրաշազարդութեան. քանզի լոյս քո մեզ ծանուցեալ ճառագայթ անհաս, ծագումն անսահման, արեգակն անհաչառասիրս, աստղ սահմանիչ երկակիշս առաքութեանց, Հրաշ ոսից և լոյս հետեւմանց, որով ՚ի գոյից խմաստից եկեալ տեսութեամբ բանիս այս յարմարութեան, ածեալք պարերգութեամբ հրեշտակօրէն յառակամբ-

տարար փրկչավայելուչ կնդրկաւ խնկեալ ըղ-
պարգեւաբաշխս առատասրտութիւն ամենիմաս-
տիդ յիւղ զուարթ անբիծ դաւանման: Քանզի
՝ի սկզբան անդ կապտեցելոց ողորմելի տխրա-
կանութեամբ ՝ի փչմանէ բարձրադոյն շնորհին՝
հայրն իմ՝ սկզբնաստեղծ՝ և հնացեալ յաւէտ
մեղացն գերմամբ ՝ի մահ գրաւեցաւ, կապեալ
ընդ եղծման ապականութեան անզերծ հան-
դուցիւ, ՝ի ծառոյն պատճառաւորեալ յան-
կումն անյարիր ամենակործան գլորման, հեր-
քեալ ՝ի լուսոյ այսր խաւարին վայրի մատ-
նեցաւ. իսկ դու, զթած տէր ողորմութեան,
քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ըս-
տեղծեր, և ոչ չէիցն ակնկալութեամբ չեկաց
յոր ինչ էրն, որով անկարողանայր իսկապէս
տեսանել ՝ի լոյն վերին անմատոյց գերակայու-
թեան աննահմանելոյդ, որ մշտափայլ յա-
րակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր,
այլ գիշերայնոյն ոսնալոփիւծ մթին արհաւրաց
ձեռնկալութիւն ձիթոյ շարամանութեամբ
նիւթոյ պատրուգի ընդ նոյն զանգելոյ՝ յօ-
րինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ
խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմե-
ցեր. զի որ ՝ի սուերս մնհու տարագրեալ
գտաք՝ կանխակորուստ անկոծիւ պարտեաց,
՝ի պատճառ իրին ազգակցաւ պտղոյն ջահա-
ւորեցեալ հաւատոյն վառմամբ ՝ի նոյնն դարձ-

ցուք խնկաւորութիւն. որպէս և փայտիւն մահու՝ մնծմամբ քո ՚ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ, առաքա մեծի խորհրդոյն միաւորեալ ՚ի փայան կենաց:

Գ· Եւ արդ որպէս ոչ է օր լրմամբ առանց պիշերոյ, և ոչ անօրէնութիւն յարկի առանց ձիթոյ պիտոյից խնդրոյ· քանզի իբր օրինակն հասարակացին ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութիւն լուսաւոր առնէ, նոյնպէս և մարքեան քոյինաշունչ շնորհին ընտրութեամբ անխմանալեաւ զաներեւոյթ հոգիս միութեամբ ՚ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ: Զի որպէս յիջումն լուսարանի առաքն աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատամբ առնուլ սրբութիւն, սոյնպէս ՚ի յօծումն իւղոյն պարարեալ յուսով զհոգւոյն զօրութիւն սովիմբ և ՚ի սոյն համարիմբ ունել ամենայնիւ աներկմտելի: Եւ որպէս հրամանդ աէրունական օրհնաբանելի զքաւութիւն մեզաց ախտացելոյն նախաժառէիր, իսկ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանակաց անտուաւ առ նմին մարմնոյն տեսակի հաւատարիմ՝ վկայ անդարձիցն հաստատեալ, սոյնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ ՚ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ ջներքին մարդս աներեւակ ծածկապէս մտեալ՝ նոր կենդանացնէ:

Գ. Պատկեր պանծալի այս գանգուած նիւ-
թոյ արարչիդ երկնի. քանզի որք զերծոյն
կրեցին օգտութիւն՝ որ յողորմութենէն շահ-
ընծայութիւն, և զու՝ ի զովեսս քեզ զայս
բան սահմանեալ, թէ ողորմած եմ՝ ես ահեր.
քանզի որպէս սիրոյն անուան կցորդիս աս-
տուած, նոյնպէս՝ ի մանուկ և այսու զիջեալ
գծագրիս՝ ըստ անտեսութեանն որ առ մեզ:
Վ եհապոյն մեծութեան խորհրդոյ յարմա-
րաւոր դիմակերպութիւն այս ճարպ պարար-
տութեան երկրի թանձրութեան հոգանիւթ
զոյականութեան. զի որպէս սոյն մանն՝ ի
կենդանւոյն ոչ՝ ի կերակուր հրամայիւր անդ
ըստ օրինին, այլ արարչութեանդ բոլորովին
պատուղ որոշիւր, նոյն նմանութեամբ եւս և
աստանօր իւր զղօրութիւն՝ տեսանն մատչելի
յայս աւանդ հաճութեան էիդ աստուծոյ
վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարա-
զատ զուգաճանապարհ, արարողիդ պահեալ
և ուխտեալ. քանզի ոչ շունչ արեան և ոչ
ճենճեր ինչ զուարթութեան օրինակ հոգւոյս
իմոյ և կարոյս ընդ անդամալիւս մնոյն ծախի,
այլ աբբայութեանդ վերնում՝ վիճակի տէ-
րունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝
այս նիւթ չահաւորական միտաբորբոք ան-
աղօտելի:

Ե. Ոչ էր մատչելի՝ ի նախադահութիւն

արու անդրանիկ դաւիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր. ոչ քահանայութիւն ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր: Յակոբ զբարին պատկեր Աքիմին, ի խորհուրդ երկար՝ խորանին շնորհութեան, օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջումն անճառ բարձրելոյդ տեառութեամբ առնդղոյն յարմարութեան, և զես ի վեր տանելոյն անդուդակցութեամբն, զարհանն իղեալ կառոյց նպատակ ի ցոյցս ապառնեացն յիշատակի: Ընտրութեան քահանայութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ առուծոյ օծմամբն ճոխանայր. որով ի գլեայ անտի ի մօրուսն զեղեալ զերափառ իղբոյն զարմանագան կենդանագրութիւն, բուռ աղմուղին, զփառաց նախնեացն առակէր անդրադարձութիւն և զնորհիդ կենաց արբութեան ընդ մեզ խառնութիւն: Թագաւորութիւն ոչ էր պանծալի անդանօր պատկերաւն առեղծագործիդ, եթէ ոչ եղջերը իղբոյն օրհնութեան ձեռնադրեալ՝ պատկառ պճնութեան թագին յանուն քո, Քրիստոս, գլուխ ամբառնայր: Եւ զեամբդ զնախնին վիհից մահացոյ, զծառայն մեծիդ և զիերպատանն անդարադրելոյդ. ո՞չ ահա Մելքիսեդէկ յօրինակ ճշմարտիդ ահաւորութեան ի ձիթատառանեաց լերինն, ուր յետոյ ոտք մարմնացելոյդ

աստուծոյ զեսեղեալ կացին, ՚ի վերնոյ անտի հրեշտակաց ՚ի պատոյ տնղոյն իղեցաւ. ուստի շիրմի սկզբնահօրն պաշտպան եպիսկոպոսական արքայապատիւ ճոխութեամբ ՚ի քէն հանդերձեալ նստաւ, մինչեւ յայտնեցաւ երեւեալ լսմանէ հանգոյն իսկութիւն ազամային կենադործութեանդ:

Զ. Եւ արդ, քանզի քո են հնարհք և քեզ վայելեն գոհարանութիւնք, օրհնաբանեալ որդի աստուծոյ, դու ինքն յարմարեա բարեհաճեալ ապաւորութեամբ զաղաչանս իւղաւրականաս ինձկապատարս զմեռանելիս պատճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան. մատո, տէր Յիսուս, վերացս աներեւութից զայս ձէթ լուսանիւթ, և արկ ՚ի սոյն խարանս խոցոյ մահացուի զկաթուած օրհնութեան իւղոյդ փրկութեան անապակ գինեաւ սիրոյդ, միութեամբ արարչականաւ պատապարեալ պատանօք խնամոց. զի յիշատակարանս թարգմանօրէնս բանիս մաղթանաց՝ վայելչական իմն յարմարութեամբ ՚ի թեւս հոգւոյդ զկարգ իւր գոցէ: Ի վերայ Դաւթի հոգի քո, բարձրեալ, յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութեամբն նոր իրեցաւ. Աստուած յայր յայլ և ՚ի մարգարէս ոմանս անտուաւ իսկ գրեցաւ, յորժամ՝ օծումն ժամանեցաւ գաղթական նորին. արքայութիւնն



աստեստանեայց օծմամբն զրաւեալ մատուցաւ ի կցորդութիւն տանն Իսրայէլի. կայսերս ոմանս նշանաւորս վեհս և երեւելիս ի խժականաց բարբարոս աղգաց իւղս այս կենսացընդուղ ցօղով անձրեւեալ՝ իբր կարթիւ որսացաւ ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ աստուծոյ. բանն որ առ Կիւրոս երկնաւորին պատուասիրութեան՝ զօծեալն ձայն նմին մեծ վարկաւ. ձայն սաղմոսողին զեր քան զմարդարէութիւն զօծեալն անուն նախայարմարեաց, կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր աւանդեալ, մի մերձենայք և մի մեղանչէք. առ Չեղիսա առաքելութիւն աստուածային հրամանատարութեան, նշանակ իմն հանելոյ ի պաշտամանէ անտի Նահաղու, զօծելութիւնն ի Յորեբ աղգեաց Յեհուայ և Ազայելի: Իւղ թափեալ անուն փեսայիդ ի

հոգելից բանից խմաստնոյն վերավկայեալ՝ կանխաւ իսկ դրեցաւ. որպէս զի հոգին, աստուածոյ յաւէտ պատկեր և նշանակիչ, զի փոքուս զմեծդ կերպագրութիւն քեւ նկարագրեալ՝ ընդ քեզ միասցուք առմամբ քո շնորհիդ:

Ի· Ից զի եւս երկարս պատուածօրէնս բացականագոյնս գծագրականս և առակաւորս շարագրեցից առաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղծութիւնս. սէրդ և կենդանարարդ՝ արարիչդ երկնի և երկրի՝ ի յօծմանէ անտի սկսար քարոզել գաւետարանն արքայութեան, վկայեալ անտուաւ՝ ի Յովհաննէ՝ օծեալ և գառն աստուածոյ բարձող



մեղաց աշխարհի: Օ՛ի թէպէտ ընդ օծմանն օրհնութեան հոգին էր քեզ իսկապար լցմամբ և աստուածութեանն խառնութիւն բովան-

դակապէս, այլ անունն պաշտի խորհրդեամբ
շնորհին հրաշափառապէս ազդելոյ ի սուրբն.
ղի զարկութիւն ազամեան մարմնոյն մեծա-
նալ յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ
արասցես: Նացեալ զառաջս մարգարէու-
թեանն Եսայեայ՝ դու ինքն աստուածութիւնդ
մարդացեալ ընթերցար, հաւատարիմ առնել
զբան ծառայից քոց, տէր. և իբրեւ ծանու-
ցեալ եղեր օձութեամբն ի կարգ անդ բանին,
թէ հոգի տեառն ի վերայ իմ՝ որով և օծ
իակ զիս, ապա փակեցեր ի հանդիսափառն
օծելութենէ զողբանութիւն երկաքանչիւրոցն
յայտ արարեալ խաւրոցաւ սահմանի՝ ընդար-
ձակ հեռատրութեամբ մեծաւ կնքեցեր, զը-
մերս կամաւածով ինչ շնորհազարդեալ, և
զքոյդ իսկութեամբ ընդ հօր և ընդ հոգւոյդ
հաւասարութեամբ թարգմանեալ: Նախա-
ծանօթ մերակերպութեանն պանծալի իմն
դովեսիւ՝ օծեալն կոչմամբ ի հրեշտակացդ
փառատրոցդ արարածոց երկրի ծանուցար:
Որ մարգարէն կանխաւ զուշակեաց զի
Յորդանան, և յրնտրեալն լեառն թաբօրա-
կան հայրենի ձայնիդ եկաւորութիւն, թէ որ
պատմէ ի մէջ մարդկան զօծեալ իւր. զոր
սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հղօրիդ
փառաց զայս պատիւ առ ի զառեալդ ձեռ-
նադրելոյ, օծ զքեզ աստուած՝ աստուած քո
իւղով ուրախութեան:

Ը. Հոգի երեսաց մերոց տէր Քրիստոս, որ է օծեալ անուն[ը] իսկոյն, որով զիչումն կենդանութեան ի դէմս մեր լոյս բարերարութեամբդ քո աղեցեր. իմաստութեամբ ումեմն երջանկի՝ մարդասիրութիւն խոստովանելով, ասելով առ ոմն, թէ եղ վկայութիւն առաջի տեառն օծելոյն. զնոր աւետեացս վկայելով, թէ կոչիկս անգամ ոչ առի յամենայն մնեղեաց: Երդոցն երդ իւղափեցական զինի գաստուածով ծանուցեալ զկորհուրդն ի գովեստ հարսին սուրբ եկեղեցւոյ՝ զմուռս առաքինութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն. և եւս զմուռս և կնդրուկ մաքրութեան վարուց ամենայն փոշեաց անուշից իւղովքն զանգեալ՝ անդստին և այսր յառաջաբերեաց: Դանիէլ զկենսատու մահու քո, Քրիստոս թագաւոր երկնի, ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի զայս անուանագրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն և հինն եօթնեներորդացն սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց: Հրաշակիր աշտանակն Զաքարիայ Ադոմայ՝ որ ի Բաբելեայ իւղոյն բարերաշխ բացատրութեամբ ի մատունս եօթանց առաջադրութեանց զընդդիմին վառելոց՝ ի ջահէ անտի զօրութեամբ անեկամուտաբար վճռակատարեալ, զի քոյդ լրութենէ ի մեզ փրկութիւն և օծելութիւն գե-

բարնապէս նախաղեկուցեր: Զոր ըստ օրինին անտուստ դուշակմամբ ՚ի խորանին որ ՚ի տաճարին՝ ամենընդել իմն կրթութեամբ սովորաբար մատուցեալ լինէր. պանք բաղարջընծայք և նաշհոք իւղով խառնեցեալք, և զուարակք եղանց իւղարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ոմանց թաթաւումբ յազգակից ճարպին ՚ի յարիւն, այսր խորհրդոյ առձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ միաձին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ աստուծոյ. միայն դու օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնութեամբ համայն էութեամբ իսկապէս լսմամբ ամենայնիւ անպակասելի:

Թ. Ա՛ զի՞ եւս իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ճաշակել զքեզ, քաղցրութիւն. իմանալ քեւ զայս՝ թէ զի՞նչ իցէ իւղն, եթէ ոչ զտխրութիւնն ՚ի փայտն պարտեաց սովիմբ բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ զործեսցես, և զի՞նչ պարարտութիւնն, եթէ ոչ զկերակուրն մահու սովաւ մոռասցուք լցեալ ՚ի սմանէ, և զի՞նչ օծութիւնն, եթէ ոչ ըզմխրոյն թշուառ տեսութիւնն ՚ի ձեռն սորին փոխարկեսցուք ՚ի պայծառութիւն յաւէժ ուրախութեան, անուամբ քո փրկեալ յոգի զօրութեան՝ հօր անուանեսցուք. և զի՞նչ ար-

դեօք մարգարէին Հոգեւոր ըղձականութիւն ամենատենչ բաղձանացն իւէ իմանալ, որոյ ծերութիւնն առակի՝ ի ձէթ պարարտութեան, և կամ օծանելն իւղով զդլխոյն վերամբարձութիւն, եթէ ոչ զՀին խարդախութիւն սպոյն սատակութեան՝ ի մահ կործանմանն կենագործեալ զեղովս այս կենաց՝ պատապարեալ օժանդակեացես. և զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն, եթէ ոչ՝ ի մէջ իմն անյուսութեան մեղացն միգի և կապշտութեանն խաւարի՝ կերպակցապէս միութեամբ՝ ի յիս Աստմանուէլ. և կամ զի՞նչ մարգարէն աստուածաբանեալ՝ ի սփոփանս զուարթարարս օրհնութեան՝ նշանակ յայտնի վայելչապէս ոմանց աւետէ, օծեալն իւղով՝ ի մերոյ պարզելոյ. և կամ իմաստունն՝ ի գիմաց հարանին ասէ օրհորդացն, հաստատեցէք զիս իւղով և զեղեցկազարդ խնծորով յարկեալ ծածկեցէք, և՝ ի պարտէզ իւղենեաց տածեալ զրզեցէք, եթէ ոչ այսր ահա ընտրական նիւթիւ Հոգւովդ քո լցեալ՝ ի սոյն լոյս տեսցուք զանխմանալիդ՝ ի մեզ բարձրութիւն զովեալ: Եւ արդ քեզ, միայն խնամակալ, պատճառ բարի բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս, երիկամանցս զործակցութեամբ, սրտիս հեծութեամբ, լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ. լուր

ողորմութեամբ, տէր, պատասանաց խընդրուածոց առ քեզ կարդալոյս. Հնորհաւորեալ այսու պարգեւօք՝ զոհաբանութիւն քեզ վերընծայեմ, հզօր ահաւոր բարձրեալ անքննին, անփակ փափաքմամբ միշտ համբուրեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգածայնութեամբ: Ընձեռեա առաւել բարեբարութիւն ի սպառ վթիպելոյս. տուր յոյս քաղցրութեան՝ ոչ մասին միոյ մատուցմանն լուսոյ արժանաւոր լինէ հանդիպելոյս, լայնել քեւ, բարի, զնորութիւն ծածուկ խորհրդոյս, զրդութիւն խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ Դաւթի, ընկալաք աստուած զողորմութիւն քո, և զծածուկս զաղտնեացդ անտեսից՝ ի մատուցութեամբ քով յոյսին տարարեր:

Ժ. Եւ սրդ մեծութիւն քեզ, ամենակալ առաւաձեռն անմատչելի, ամենատիրեի առ ի պիտութիւն, մշտայօժար ի բժշկութիւն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր գիւրագիւտ ընտանի նիւթոյս զհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութեան: Քանզի զոր երկին ամենայն բարձանց՝ երկրիս լայնութեամբ և անդնդոց ներքնոց խորութեամբ՝ ձուլուց բազմութեամբ ոչ զօրէ տանել, այլ իբր զդպրն ի մեծ բերի, ի փոքր զոյս տեսանիցեք զօրութեամբ՝ տահմանեալ ճըշ-

մարտապէս անհրապուրելի. զի մի նորոգ ինչ երեւելով յայլ էութենէ՝ առ աչս հարեւանցի երեւականութիւն ինչ վարկանիցի, վերաւորել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մերս: Վանդի որպէս մարմին քեզ հաւասատապէս, օրհնաբանեալ որդի աստուծոյ, խոկութիւն և ոչ օրինակ՝ ի յարդեանցն ցոբենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կողիդ զարիւն խաղողոյ, և արդանդ կենաց հոգեւոր ծննդեանն զառաւտութիւն ջուրց յոլովութեան, նոյնպէս և զհոգի անմահիդ փչման՝ սուաւ և ի սոյն արդիւնատրեցեր. երկունք կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկելոյն և ոչ հեթանոսութեամբ է փոխարկութիւն, որպէս ոչ տեառնագրութեան խաչական փայտի ինչ երկրորդութիւն, նըստելոցս յերկրի խաւարի ըստ նմանութեան քո, տէր, ծագեցեր: Վանդի յայս կերպարան շնորհի զանպակաս լրութիւն անհատիդ յայտնեալ աշխարհի լուսաւորեցեր, զի մի տրնանկն կարօտասցի և մի ընչեղն բարձրամիտեսցէ, ըստ օդոյ հաւասար բաշխման և լուսոյ արեգական տարածման և ջրական վտակաց ղեղման. զի հաւասարապէս բաշխիւր երկրածնաց մանանային զուգամասնութեամբ՝ փոքունցն առաւել քան մեծամեծացն:

ԺԱ. Իսկ այս նիւթոյ տեսաւորութիւն

խորին խորհրդոյ և՝ի բնաւսո անսուսա հրա-
շապէս ունի զթարգմանութիւն. որպէս զի
ոչ երկմիտ ինչ շուարեփութեամբ անհաս-
տատապէս զտեղի փոխէ, և ոչ նենգոզաբար
զընակութիւն ինքեան լքանէ. քանզի ոչ վերջ-
նականօք անճառով հերքի, և ոչ յընդդի-
մակէ ումեքէ ողողեալ արտաքս ելանէ: Այս
զի որպէս պատահումն գունոյ յէութիւն մար-
մնոյ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ գո-
լովն գոյացուցանէ և ոչ գոլովն ապականէ,
այսպիսեաւ իմն յարմարութեամբ իւղոյս զօ-
րութիւն անդատին՝ի յիւրոց անսի կերպա-
րան զառեալն ունողն միաւնական զուգու-
թեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր, տէր Յի-
սուս Քրիստոս, ընդ իրին գոյի և զօրինակին
լծակցելով. քանզի դանիմանալին տեսութեան
աչաց և մտաց ըղձից՝ի դէմն բերեալ կեր-
պաւորեցեր, ի պաղոց երկրի ճնշեալ մղելով
զարմանալեօք հրաշագործութեամբ մատա-
կարարիլ մեզ պատրաստեցեր: Մանաւանդ
զի ոչ յոլովից խառնից՝ի մի եկելոց խմբակ-
ցութենէ զանազան ծաղկանց, ըստ հնոյն և
ստուերին բազմաբուրեան այլայլութենէ, զայս
իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր
զօրինակ փոխեալ զայն առ այս՝ դու ինքն
խառնեցար՝ի սոյն մաքրութիւն վերնալոյս
ձիթոյ: Որ թէպէտ անճառ են համեղութիւնք

քումդ անուշութեան, և ընդ օրինակաց իրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի և շուշան հովտաց և նարդոս ընտիր և եղեգնախոնկ խառնեալ հալուէիս, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար փառաւորեալ անունդ անքնին, որ զամենայն ընուս, և յիրի իմեքէ ամենեւին ոչ կարօտանաս: Ասաի ոչ շփոթելով՝ ի հակառակաց բռնադատութեանց բաժանեալ կամաց մեկին առակի, այլ՝ ի սիրոյ հաւանութենէ աստուածապէս՝ ի մէնջ պարարիս, վասն մեր ըստ մեզ առ ամենայն վայելչական նմանութիւն օրինակեցեալ. առ որս լոյս բարի և հուր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ ընչման անպիտական սառնացրութեան այս զանդուած նիւթոյ կամուածոյ ձիթոյ մաքուր մտաց տեսեալ իմանի, որով յիրաւի սուաւ՝ ի յաստուած է միանալի: Ընդ Սողոմոնի օծելոյ որդեզրեցելոյ աստուծոյ երեզեմ բերանով հարսինն երկնաւոր փեսայիդ բարեբան զոհաբանութիւն, համբուրեալ՝ ի յիղձս մտաց զհոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս, և իբր զբանս կենաց յաւիտենականաց ունողի, ըստ հոդելից բանի իմաստնոյն և աստուածարան աւետարանչին, զհետ քո՝ ի հոտ իւղոյ քոյ ընթացուք լուացեալ զե-

բեաս Ջուրըք կենաց, որ ի վեր է քան զերկին օդոյս այսորիկ, և օծեալ զղբսխս անախտա-
կան իւղովդ երկնայնով յանդիման եղէց քեզ ուրախութեամբ, զուարթասէս և ոչ տըխ-
բարար:

ԺԲ· Ձայս իւղ խնկիկն պաշտելի և երա-
նելի, ոչ սակ օծումն ուղղոյս սնեակի, և կամ հերաց վարից գազաթան նպաստ ինչ մա-
տուցանի, եթէ ոչ աէրունական կենսատու խաչիւդ տեառնագրեսցի: Սոյն իւղ զարմա-
նահրաշ օրհնութեան լուսոյ դհրեայն և զը-
խուժն՝ զհնդիկն և զբուրբարոն՝ զսկիւթացին և զելենացին՝ զղուժն զժնեաբար և զար-
հաւրառնական շանապղսխն սոսկավիթխար, զաէրն ազատ և զաւրուկն ծառայածին՝ քրիս-
տոսեան արարեալ, անուամբ քո հնչէ, և հոգւոյդ սրբոյ ընծայէ, և հօրդ երկնաւորի հարազատ որդի հաստատէ: Նազմօրինակ են սոքա սրտեսեաց տեսմունք յարմարեցեալք նախ նմին ոյն, ապա զօրութեանն: Քանզի իբր անօթ փայտիղէն միաչեղ օծեալ ի՛ջէ՝ դիւրաբար հերձի և անօգուտ եղեալ անպա-
տուի, նոյնպէս և մարդ ոչ իւղեալ սուրբ՝ հեշտեալ խորտակի, և մեկուսի եղեալ առ ի քէն՝ ոչ լուսաւորի: Սատն սա քո, Յիսուս, որով զհրաշալիսն զարմանագրես. քանզի իբր անդծելի կազմութեամբ կարծր պահպանակաւ՝

ամենապատրաստ շրջարկութեամբ պաշտպանեալ ծածկէ յայլազունակ խրթնի եկամտից. մինչ դի այսու մաքրութեամբ թափառեսցի ՚ի սմա ոչ ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւ այլոյի: ՚Այս դի և թափանցանց իմն խառնութեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն մերոյս գոյութեան մտեալ անցանէ. դի թէ անէծք սաղմոսդին ձիթոյ առակաւ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, ո՛րչափ եւս հոգիդ սոյն ճարպով լուսոյ զաներեւոյթ ներքինոյն տեսակս կենսագործեալ ողջացուցանէ, ազդումն առեալ ՚ի խորոց անտի շնչման հագագին՝ մինչեւ ՚ի սպառուած ծայրից եղերաց զբնաւն ընկղմէ գյիշատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդանական զօրութիւն քո միշտ ահաւոր, տէր Յիսուս Քրիստոս, ՚ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ:

ԺԹ. Այս օծումն բարեսեպհել և առ բռնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս իբր զօրաւոր հնարիւք կերպարան ճգնաւորական անըմբռնելի ձեռաց ներհակին օրինօք պաշտի, դիւաց և ախտից հզօր ահարկու: Քանզի յոգնապաճոյճ պճնութիւն բանին Աղեկսիւսի առ իմնալին փարաւօն, հենդնաւոր առաքաղութեամբ ողբականօք շարայարմարեալ յորժամ եղեր, ասէ, և հանդերձեցար ընդ

օծելոյ քերովբէին, ուր արձանքն հրեղինք հաս-
տատեալ կառուցան: Որ՛նաբանեալ ա՛հա-
ւորութիւն ամենակալին, որ միշտ անճառ ես բանից և պերազանցեալ
քննութեանց, որ աւետարանաւն կենաց խընա-
կիս յարակից իւր նորածին օծեալ ՚ի քաղաքի
Դաւթի, և ՚ի քահանայապետին հարցմանէ,
դո՞ւ ես օծեալն որդի օրհնելոյն, և յերա-
նատուն դաւանութենէ Պետրոսի օծեալ մի-
այն որդի աստուծոյ կենդանւոյ, և յապա-
հաւատ քննողացն, եթէ դո՞ւ ես օծեալն, ա-
սէն, ասա մեզ համարձակ. և՚ի կանոնականացն
քոց հաւատամք յօծեալդ ուսուցիչ և տէր
ամենայնի. և ՚ի երովդէս յառաջ քան զոյն
զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ. և
զնաւդ զրեն, դու իսկ ասացեր, զօծեալն աս-
տուծոյ զտէրն Դաւթի զանակիզեն որդի՝ ժա-
մանակաւ որդի: Վասնզի այսպէս ընկալաք
վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ ՚ի մեզ
բերի ծայրն կաւարման խորհրդական կոչմանն՝
վճակ քրիստոնէից նախատաստութեան:

ԺԴ· Ընդ այնքան ունի ահաւորութիւն մի-
անդամայն և սրբութիւն իշխանական խընա-
կաւորութիւն սոսկալի անունս օծութեան,
մինչ զի որպէս ոչ է համարձակել ուրուք
յերկրայնոցս աստուած անուանիլ՝ այլ աս-
տուածային, նոյնպէս ոչ բերէ մարմին ըզ-

Քրիստոսդ անուն անձին համարել, այլ ըզ-քրիստոնեայն, անտանելի նախատոյն մեծու-թեան մկրտչին՝ ըստըք գՀոգին Հրաւիրողին. քանզի չեմ՝ ես, ասէ, օծեալն, այլ առաքեալ



առաջի նորա: Սակաւ շրջէին, որպէս բանն ազդէ աւետարանչին Մարկոսի, առաքելա-կանացն լծակցութիւնք, իբր ազգակից հա-րազատ ձեռինդ աստուծոյ՝ այսու վարեցեալք. քանզի իւղով օծանէին և առանց մարդկային հնարից անուամբ քո բժշկէին: Ա՛ան զի որպէս խաւար՝ ի լուսոյ և գաւ յառողջութենէ, գիշեր՝ ի տուընջենէ և մահ՝ ի կենաց, այսպէս

և ՚ի սոյն իրէ սիրասարդեւէ ամենայն չարին երեւոյթք մերժին խափանին և բնաւին ամ փոփին: Քանզի որպէս ճանճք զաղբըք և փոքր զեռունք սարդից և ոնկնաւմոից իբր ՚ի դեղոց մահու յայս նիւթոյ սպառեալ պակասին, սոյնպէս լսութեամբ շնորհի օրհնութեան սոյն իւղ զօրացեալ՝ և զայս վանէ և զմարմնական չարեաց ջնջէ և զվճիռ մահու պատառէ: Ոչ է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդակութեան: Եթէ աւազակացն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ փրկութեան մատուցեալ տուաւ. եթէ անճարակ վիրացն Յակոբայ և Իսրայէլի, սոյն իր պատուական յիշատակեցաւ. այս իւղոյ փափաքեալ Դաւիթ՝ իբր ձիթենի պտղալից ՚ի տանն աստուծոյ յուսով յարակայի, լքեալ զմիլիատութիւնն՝ անդատին զմկրտութեանս շնորհ գուշակէ: Եւ զի՞ է ինձ զայսմանէ ճառել, և համոյնին կարծել հասանել, որ և ոչ վերինքն զօրեն ձեռնարկութեամբ ինչ բանի զսոյն խորհուրդ ՚ի մատնաւորել՝ ինչ ճառելով նշանակել, թողում ասել՝ թէ չիսկութենէ:

ԺԱ· Փառք քեզ միշտ և յաւիտեանի, անմահ թագաւոր, ՚ի յայժմու երգեցեալ օրհնաբանութեանս, զոր արարեր և կատարեցեր առ իս, բարեխնամ զթած և երկայնամիտ հարուստ և առատ ամենայաղթող·

անդատին ՝ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչեւ ՝ի լրումն ածեր զիսկութիւնն ճշմարտապէս: Զոր լոյս իսկ բնութեամբ և արեգակն միատապայծառ, և զաշակերտացն դաս լոյս անուանեցեր, որով զարարածս ամենայն երկրի ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լուսեղեր: Ընկալար զնուէն անուշութեան յումմէ՝ ՝ի յոտս՝ յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ, և ՝ի միւսմէ պառնկէ ՝ի գլուխ՝ նշանակ սիրոյ պիտութեանդ առ մեզ. միշտափափաք բաղձանօք անսահմանելիդ ՝ի սոյն հոտոտեալ, մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրաման պատուէրս կենաց ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաւաձեռն իւղոյն յարգաւորութիւն, զարմանս հրաշից լուռեայն առ ապառնեացն յուսադրութիւն: Զուք օծութիւն ունիք զսրբոյն՝ ասաց երջանիկն առաքելութեանց, մնկնեալ զնորհուրդն որ ՝ի մեզ պեղեալ յառաւելութենէ կենդանարարիդ անպակաս բովանդակութեան: Զատի յաւէտ իմն յարմարաւոր և հանդուգնաւոիսպ առ ՝ի մանաւորն նմանութիւն լուսոյդ և հոգւոյդ սրբոյ՝ այս կաթուած օրհնութեան ՝ի վերնոյդ բարեբաստութեանց անապատաբար սրբակեցեալ ՝ի մեզ, և ասի լոյս, իբր զնախաթիւ դոլ ստեղծուածոց և արարչութեանդ սլատ-

կերակից, որով զնաւաբ մեռանեան մեղաց հալածես. իսկ հուր, զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի զուգութիւն ըստ էականին կշռոյ բաշխութեան, ծածուկ և յայտնի, լռեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի 'ի հակառակէն, ոչ յինքնասաստ յօժարմունենէ բաղձայ բորբոքիլ: Դարձեալ և օծումն, զի արքայաբար որդեգրեալ ընդ քեզ 'ի ժառանգութիւն հօրդ մատուցես. ողորմութեանդ աղագկացս նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հանդերձեալ փառան փայլեացուք. դարձեալ և հոգի, զի մաքրեալ զարկածս խաբէութեանն՝ որ 'ի բանսարկուին ներգործութենէ, նորոգ փոփոխմամբ հոգւով և ճշմարտութեամբ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք, բեւեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք, ամենապարգեւ:

Ժ.Օ. Ահա արդարեւ յաւէտ իսկապէս իւղս այս լուսապատար խնկալիր՝ վերնականիդ սիրոյ տեսութիւն: Ո՞ւր են որոյ և Պօղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ձառ գոհաբանութեանն՝ ասելով յայտնի, որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս Յիսուս՝ աստուած է, որ և կրնքեաց զմեզ և ետ զառհաւաստեայ հոգւոյն 'ի սիրտս մեր. և դարձեալ, մի՛, ասէ, տրըտմեցուցանէք զՀոգին սուրբ աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկութեան: Պատկա-

ելի և անվանելի օծումեանս յորջորջումին՝ իբր ՚ի նորումն յաւետ քան ՚ի հնումն. քանզի բանն դաւթեան սաղմոսին զաւրական անօրինականացդ սկզբնաւոր կրիցդ խորհուրդ՝ ճշմարտապար վերաստահմանէ, ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց վասն տեառն և վասն օծելոյ նորա: Սարգարէութիւն մեծ տպաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս հրէականումբ չար մոլեգնութեանն՝ որ ՚ի տէրդ յանդգնութիւն, ոմ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տեառն և քաւեսցի. քանզի թէ և յաղագայնոյն սպանաւ Յաւուղ, այլ ոչ ՚ի սպառ մերժեցան յամօթ և ՚ի նախատինս ազգաց օտարաց, մինչեւ արեանդ աստուածոյ հաղորդեալ դտան: Գրաւական մեծ յիշատակի սպազայիցն ժառանգութեան աղօթանուէր աղերսարկութիւն ասել սաղմոսին. վասն Դաւթի սիրելոյ քո մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ. և դարձեալ, նայեա և տես յերեսս օծելոյ քոյ, և արա ողորմութիւն ընդ օծելոյ քոյ:

ԺԱ: Ձեռին քո, Քրիստոս, երկրպագեալ պարգեւատրութիւն այս հիւթ լուսակիր. քանզի ոչ այլ մեծ բարձրութիւն յաղքատութեանն ճոխութենէ ասէ մարգարէն ՚ի դիմաց քոց, տէր, քան թէ դտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա:

Ուստի կիրթ իմն յիշատակաւ զքոյդ համբուրեալ լուսոյ օծումիւն, տէր Յիսուս Քրիստոս, ծանիցուք զքեզ անփոփոխ միանձնատրումիւն, թէ դու ես ամենայն՝ և յամենայնի միայն թագաւոր թագաւորութեանց, և ճշմարիտ օծեալ իշղելոց, փառաբանեալ երկրպագումիւնեամբ երէկ և այսօր: Քանզի զոր օրինակ պատրոյգ թագեալ ՚ի ճարպոյ երեւեցուցանէ ինչ նշոյլ մինչեւ հուրբ լուցեալ վառիցի, սոյնպէս և այս օծումիւն լուսոյ առ ՚ի մեզ հեղեալ ՚ի հանդերձեալն ջահաւորի: Ընդ այս է կերպարանին մեհնաւոր բացերեւումիւն, ՚ի նախնեացն և այսր բերեալ բարենշան իմն յարմարութեամբ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ:

ԺԲ· Երդ այսոցիկ պատճառ վերադոյն մատանց կեցուցչաց աստուածականաց արարչութեանդ հարազատաց, առանց որոյ ոչ է դրիլ Քրիստոսեան, և ոչ նազովրեցի անուանիլ, և ոչ յիշատակիլ յորդիս Յուդայի, և կամ խրախոյս բառնալ յանուն աստուածոյ Յակոբայ, այս հիմնականութիւն օրհնութեան ձիթոյս, յորում սուրբ Երրորդութիւնդ խառնեցեալ միաւորի, ճառագայթ շնորհաց, շուք մերոց դիմաց, նկարագրութիւն երեսաց, բարեձեւութիւն պատահմանց, լուսաւորութիւն աչաց, տեառնագրութիւն բերաց, վայելչու-

թիւն այտից, զարդ կերպարանաց, պահպանարան շրթանց, հանդերձիչ կրծից, յարմարիչ վարուց, շաղկապ հաւաքմանց, զօրութիւն անձանց, ուժգնութիւն դիմեցմանց, խափանիչ յուրթից, քակտիչ հմայեկաց, նահանջիչ ձեռնածուաց, խայտառակիչ կախարդաց, գտիչ աղանդից. բռնախոյեան դիւաց, փարատիչ ցաւոց, կատարիչ կնքեցելոց, տենչանք երախայից, անզնին արտաքնոց, հիացումն հեթանոսաց, նախանձարկու անհաւատից, մերկացուցիչ գաղտնեաց, յարգանք յետնոց, փառք ստրկաց, պճնումն կանանց, աճեցումն տղայոց, հրճուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, զգուշութիւն մաքրոց, պրսակ թագաւորաց, ճոխութիւն արքայից, յառաջադրութիւն կայսերաց: Կանգն զոր օրինակ ամեն ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է ներքնայնոցն մեծագնութեան, նոյնպէս բարձրութիւն շնորհին ի մեզ սուաւ ծածկեցեալ յանուն քո, աստուած տէր Յիսուս Քրիստոս, վայելչական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակի: Իսկ անունն իսկոյն անդստին ի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգելից ածանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անտի ըսկսեալ, ի դէմս ածելով զերին կերպարան՝ ահաւոր խորհրդոյ պատկեր:

Սակս սրբալոյս խաղոյն Միւռոնի ։

ՃԽԹ. Վանդէ միւռոնս այս օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց գրեթէ զսոյն աղերսեալ խնդրէր, ըստ քերթուԹեանն բառի որ ըստ խորուԹեանն Հոմերոսի, Թարգմանեալ իմանի, ինձ մայր. այսինքն է՝ առ ի յինքն ձգող զմերս բնուԹիւն զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ փոփոխմամբ զջուրց լուծականուԹիւն առ աւազանին լուսաւորուԹիւն. և իբրեւ զդեղ մածուցիչ կաԹին՝ ի նոյն ինքն յեղանակել զյնդհեալս իմ վայրապարուԹիւն, և զաղբերց հեղեղեալ մշտահոսուԹիւն։ Իակ մանաւանդ՝ որ և այս միւռոն, ըստ այլում բառի ցուցանի. այսինքն է՝ մեԹին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն դիմաստուԹեան չէ օտարացեղ. քանզի արդարեւ յիրէ անտի անունն նշանակի. վասն զի անքնին է այս խորուԹիւն յաւէտ քան զաստուածային սրբուԹիւն սրբոց։ Օ՜ի ոչ եԹէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնուԹեամբ զսիրտն հաստատէ, այլ նորոգ իմն յարմարուԹեամբ՝ ի մաստնս ազդողականացն անօրինապէս տեառնագրի. սակայն անհաստուԹեամբն վերնականաւ և զանունն ունի անքնին։ Վանդէ որպէս աստուած իսկ

և իսկ ՚ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութեամբն յեղանակաւ իմն անբաւութեան ՚ի խաւար անգնին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ ՚ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծորումն լուսոյ ՚ի լերուանց ոմանց ձարտարաց ՚ի ճահ ճեմութեանց դրախտապէս անուանադրութեամբ մեայլ առձայնի, վասն ոչ զօրելոց երկրածին բնութեան զնոսին գիտելոյ: Իսկ զերկաքանչիւրս աստուածականացն անդատին յինքեան հարստաբար սիրապէս ունի. քանզի ՚ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւղս այս նուիրեալ ամենաբուրեան աղնիւ կնդրկաւ. վասն զի աստուածմեր հուր ծախիչ է ըստ Մովսէսի, և դարձեալ լոյս է ըստ Յովհաննու. ուստի և Եսայի ճշմարտապէս զոյն ակնարկէ, եղեցի, ասէ, լոյսն Իսրայէլի ՚ի հուր:

Ի. Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ ՚ի նոյն պատկեր յայտնութեան իրի. վասն զի ոչ մոռանամ զիմն նողկութիւն՝ որ ՚ի դիմութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին զովեսիս օրհնել. քանզի Մեռայ՝ որ է դառնութիւն, այսինքն՝ նշանակ իմն չարչարաւոր կրից տաժանմանց, որ և միւռոն աստուածանեալ մեկնապէս ըստ մեզ՝ մեռելութեան աղդականութիւն: Քանզի այսու

օծմամբ հոգեւորականաւ խղեալ կամ հա-
տեալ ՚ի մտոհմաեր մնհակերպարան տաղա-
կաղաղրական հեշտութեանց հակառակողին,
որ օգախոնաւ մեղկութեամբ ղբնարս ձայ-
նատրական և կամ զարկուած վերածածկու-
թեան մինարհեաս ուժ գնարարբաս խրոխտա-
հնչական կազմուածոյ թմրկիս զործականու-
թեան ջրացիր իմն գիջութեամբ անվայելուչ
թուլադաշնակեալ՝ ՚ի ստորեւ կորստեան քարշէ
զօրինակ մերս դոյութեան, կապիմք յուսով
վերատին դարձեալ ընդ անճառ խորհրդոյ խաչի
քո, Քրիստոս, մկրտեալք ՚ի մահ կենդա-
նոյդ՝ անվախճան կենացդ սոված հաղորդիմք,
՚ի քեզ իսկ աստուած համոյնիս խրախուսեալ
՚ի սպառ ամենեւին անհաստուածելի:

ԻՆ Ա՛յս խղ զղջօշեալն քառակուսեան
յանուն քո, Յիսուս, նշանի բարձրելոյդ հա-
ւասար հաստէ. ընդոր ընձեռեալ զուգափառ
և նմանատիպ արեան կեցուցչիդ նոյն անվա-
նելի փառօք պսակեալ մեծացուցանէ: Փայտ
անուանի խղոյ օրհնութեան, ըստ մարգարէին
կանխաձայնութեան, զ՚ի հաւատարակաց կազ-
մեցեալ բուսոց անստուաց զօրապէս ուղղեալ՝
՚ի խակութենէ չարին արկածից և օտար կար-
ծեաց ՚ի ստեղծողդ վերաբերեալ առ նոյն
նիւթս կենաց հաստն ներզործէ: Զի և որ
՚ի մեղ մոխրն պատուհանաց միտաբացիկ թա-

փանցանցութիւնք՝ յանուն մեծութեան ա-
հաւորիդ զօրութեան՝ ի խոհական իմն հա-
մեստութիւն քեզ տեառնապրեցեալ առ՝ ի
յերգակերտ օթեւան հոգւոյդ անապղեղ
պատրանաց չարին խաւարահողմ խարդա-
խողին, այսու լուսով զսպեալ ամիսփիսիք՝ ի
նուագ գոհութեան երեկորեան պաշտամանն
ընդ երկնայնոցն զամբարաց՝ առ օրինակ վառ-
ման ընորհիդ որ՝ ի մեզ. ի սոյն յիշատակ
փրկութեան բարեացն սովաւ անկեցեալ ծագի,
և ծագկաւէտ եղեալ պտղածնի, ի սպաս ըն-
թրեացն պատրաստութեան յետնում դիշերի
՝ի մեծիդ գալստեան. ահա զայս լոյս ճրագի
համարեալ՝ ի կիր արկանեմք:

ԻՆ. Դարձեալ ըստ գծագրացն դումարու-
թեան քսան և չորից շարագրութեան՝ որ
յալփափետաց անտի վերաթոփ մինչեւ՝ ի
քսաներորդ երկրորդն կարգի, յորում զայս
խորհուրդ խորութեան անտուստ թարգմա-
նեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին ջամ-
բել պատրաստեմք ամենակազմ յարմարու-
թեամբ. քանզի յումեներորդէ անտի զրոյ
՝ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ ստուգաբանօ-
րէն քննութեամբ ընդ ձիթոյն անուան նիւթ
ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմո-
րոյ յինքն բերողն զղանդուածն զօրեղապէս.
որ ոչ սակաւն՝ ի յոլովէն պարագայի, քան

թէ՝ ի նոյն իրն դարձուցեալ, ըստ աւետա-
րանական առակին, զամենայն առ ինքն վե-
րաբերեալ ածեցուն առնէ:

ԻԳ· Սոյն իւղ հեզութեան միշտ համ-
բարձման և խոնարհութեան օրինակ և նմա-
նութիւն, առ ոմն կակուղ պատառաւ մա-
տուցեալ ջամբի, հարթակշիռ և բարեյարմար
բանի կերպարան. իսկ համայնից լուծակա-
նաց հոսանուտ և առողջածորելի նիւթից դե-
րափառ վերաշրջական հրաշափառ խորհրդոյ
պատկեր. քանզի և յամման ինչ մերթոյ ար-
կեալ՝ ոչ ըստ դինւոյ ձեւոյ և կամ ջոյ թա-
ցոյթեան մեղկէ, այլ ի սահման պատշաճին
պահէ: Ընդսէս ընկալեալ զքոյոցդ բարեաց
անհատասար առաւելութիւն, որդի աստուծոյ
կենդանւոյ, զսրբանուէր այս օծելութիւն ի
ճակատ դիմացս արեամբք քո գրեմք, և ի
բնութիւն շնչոյս հոգւով քո տպաւորեմք,
հաւատացեալ խորհրդով մեռացս, եթէ յաւէտ
յայտնեացի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ
ծայրարձակութեամբ ի տարածումն յոգնա-
տեսիլ զարմանահրաշ ընդարձակութեան՝ սլա-
տուզ իւղոյ ընծայեալ զոյս ի փառս ապառա-
նեացն հանդերձելոցն: Ընդս ճարպ հոգեւոր
երջանիկ և վերնանշոյլ ի դէմս երեսաց իմ
պատկերի՝ քումդ նշանաւ ջահաւորեացի:

ԻԴ· Եւ քանզի իբր անհաս ոչ ըմբռնա-

կան այս մեծ զօրութիւն արագ սլացմամբ՝ ի թեւս թեթեւս մտաց պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից անհուն հեռուման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ՝ ի սպառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ կցորդաւ, ոչ նմանեցաւ զուգամանութեամբ, ոչ սահմանեցաւ ձեւակերպութեամբ, ոչ կըշռեցաւ ընկերին չափով. այլ ահա ընդ աստուածեան խաչիդ նշանի հաւասարութեամբ արեան կեցուցչիդ հոգիապէս գերազանցեցաւ: Եւ արդ օրհնեա զմեզ, տէր, սովաւ և՝ ի սոյն. եւս և անուռնդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և զարմանաւոր, ՝ի գովեստ փառաց անճառից մնքրակրօնից բուրվառաւ խնկեալ, սուրբ, սուրբ, անքնին, անպատում, բարձրեալ, ողորմած, վերերդեալ, ճշմարիտ, բարերար և սուրբ, արա սովաւ փրկութիւն, տուր և քաւութիւն, պարգեւեա բժշկութիւն, հանդերձաւորեա շնորհ, առատաձեռնեա ե-րանութիւն: Յօժումն այս ձիթոյ երկնանձրեւ լուսոյ անարատ գտայց. յիւղեալս այս թեզան բանաւորական մի մոցէ և մի զրաւեսցէ տխրականութիւն աղտոյ մեղանաց՝ շաղախել երբէք զոգւոյս կերպարան: Նշխիկ սոյն ինքն որոց մատչին օծանիլ սովաւ հարանապաճոյճ պանծանօք սքնել զեղայօրէն սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս հոգի զարդա-

բեալ: Եղիցի հուրս այս լուսափառ և աստուածաձիր՝ մերձեցելոյն ի սոյն ընտրութիւն՝ մուխ կրկնեռաց և բարեփափաք ջերմութեան այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենասպառրաստ պնդութեամբ՝ ի կարծրացանումն անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացայց ի քեզ հաստատեալ անսերկմտելի: Լիցի նշանակ վերնամրցանակ այսր պարդեւի սուրբ վառելոյն, ոչ ողողել ջուրբ, ոչ այրել հուրբ, ոչ ցրտանալ ի սառնութենէ, ոչ ջնասակար հողմով շիջանիլ, ոչ աղտեղիլ յուրուական ինչ պղծութենէ, ոչ զպահեալն՝ չարին մատնել, և ոչ ի ստորեւ ելիցն զմիթերս գանձուն կենաց յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատշաճ ճոխ ի թեւոց քոց օգնականութենէ, և ոչ զեացեալն ի մեզ օծութիւն անմաքրապէս ի բաց մերկանալ: Այլ եղիցուք քեւ ի սոյն հրացեալ, սովիմբ պարարեալ, սուրբ լուսաւորեալ, այսու արդարացեալ ազատացեալ պսակեալ և թագաւորեալ: Եւ քեզ միայնոյ միայն օծելոյ յամենեցունց օրհնութիւնք երգոց, ալէլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթականութիւնք դաւեսից, բարեբաստութիւնք շքեղանց, սրբաբանութիւնք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այն իմ ձեռնարկութիւն ի սրբութիւն, և այս արձանագրութիւն ի սրբութեանցն սրբութիւն:

ԲԱՆ ՂԴ.

Ա֊ջբօդին յա֊ելը֊ած լ֊ին հեձա֊ը֊եան նը֊ին հա֊օղ
ա֊ա նոյն ա֊ղբա֊ ժաղնա֊ած բանէ.
Ի ԽՐԻՍ֊ՈՍ Ի֊ա֊ ԸՆԴ ԱՒԳ֊ՈՍ֊ԵՑԻ.

Ա֊ Ա֊տուած յաւիտենական, բարերար և ամենակալ, ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք ի մահու և լոյս ի խաւարի, յոյս ակնունդոց և երկայնմտութիւն տալոյ, որ ամենարուեստ իմաստութեամբ քո դարձուցանես յայգ զստուերս մահու, անհուազ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զՀեծութիւն կապելոց և Հայիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զինդրուածս նոցա, աստուած իմ և թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Քիստս Յրիստոս աստուածդ ամենայնի, սուրբդ Հանգուցեալ ի Հոգիս սրբոց, միսիթարութիւն վշտաց և քաւարան մեղուցելոց, որ զիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա. առաքեա զպահպանողական զօրութիւն քո և փրկեա զնս յերկիւղէ գիշերի և ի գիւէ չարէ: Որպէս զի զյիշատակ սոսկալի և սուրբ

քո անուանդ միշտ համբուրեալ շրթամբք հա-
պուոյ ըղձութեան հնչոյ, կեցից պահպանեալ
ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ ի բոլոր սրտէ:

Ո· Եւ ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր
աստուածային արեամբ քո ներկեալ նորոգե-
ցեր, և ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ
մկրտեցեր, և ի փառս պատկերի քո նկա-
րեալ յօրինեցեր, այսու պարգեւօք աստուա-
ծականօք ամաչեցուէ սատանայ, քակտեցին
մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտես-
ցին մարտուցեալքն, պակասեցին զէնքն սայ-
բաստրք, մերժեցի մէգն, փարատեսցի խա-
ւարն, մեկնեսցի մառախուղն: Ճազուկ քո
հովանացի, և աջ քո կնքեսցէ. վասն զի
զթած ես և ողորմած, և անուն քո կոչե-
ցեալ է ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ
ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանու-
թիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՂԵ·

Ալէլուիա յաւելուած կրկին հեծանութեան նորին հանուն
սո նոյն ալէլու մաղթանաց բանի.
ի էրդոյ սրտիկ իմոյ ընդ Աստուածոյ:

Ո· Աբեգային արդար, ճառագայթ օրհ-
նեալ, լուսոյ կերպարան, փափաք անճկու-
թեան, բարձրեալ անքնին, զօրեղ անպա-
տում, բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսու-

թիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք: Եւ արդ զԹերութիւն վերպանաց բազմասխալ ձայնի եղկելոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուցես յաղերս հաճութեան հօր քումմ բարձրելոյ: Որ վասն իմ՝ ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն, ամենեւին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամող տեսուչ համայնից: Օվ եթէ յանձն առեր մեռանիլ վասն իմ, աստուած և տէրդ բոլորեցուն, որչափ հաճեացիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթիւով ազգակցաւ մարմնոյդ առելոյ՝ ի մէնջ առ համապատիւդ քո հայր:

Ր. Եւ վասն արեանդ պատուականի միշտ մատուցելոյ՝ ի հաճութիւն կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս, թողցին պարտիքն, ապաքինեսցի ամօթն, մոռացին պատկառանքն, բարեգործեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վերասցի լալն, հանդարտեսցէ կրճումն ատամանցն, սպառեսցին ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալածեսցի խաւարն, վաներսցի հուրն սատկութեան, հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք:

Գ. Ընկեսցեն զԹութիւնք կամողիդ և պար-

դեւողիդ կենաց ամենից, ծագեսցի լոյսդ, ա-
բագեսցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ,
ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօղդ
ողորմութեան, յառաջեսցէ արբուսցէ զան-
դաստանս պաղքեալ՝ անկեալ ոսկերացս թըշ-
ուառութեամբ ՚ի վիհն մահու, ծաղկեցուսցէ
պտղաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կե-
նարարիդ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ,
որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ
կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց: Օվ
ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնոյս մե-
ղաց՝ շնորհօք քո, գթած, ՚ի քեզ զօրացեալ
քեւ նորոգեցայց, զատեալ ՚ի մեղաց անմահ
կենդանութեամբ ՚ի յարութեանն արդարոց,
հօր քում օրհնեցեալ: Ընդ որում քեզ
փառք, և հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն
վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և
յաւիտեանս յաւիտենից· ամէն:

ՎԱՃԱՆ

ԸՍՏ հոչակման քաջացից ամենակաց յառաջ շարժութեան, որ զատ լրասպատարն ձգտութագիտն արիւնաճաճանչ յուսակիրն օրակշիռն մխոտափարատն անձնապարար ականն արեւու՝ ստեղծականն արուսեկի, որ համբարձ հոչակէ կուտէ ամաց յոյվութիւն՝ ի չափս դարուց ջնչասպառ. եւ կենդանաձորոգ առուղեկան յաւիտենից, ՚ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, ՚ի սկիզբն պսակելոյ մոլ տասնեկին յաբեթեական տոհմիս տոմարի, յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալչստեան ՚ի կայս եւ ՚ի կոյս կոչմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղթող եւ մեծ կայսերն Հոռոմոց Բասլի, յորժամ զնդարձակ եւ մակագաւիթ կանոնաւ սիւնաւորաձեր՝ վիսահման եւ անիսարոց ՚ի ստուարակարկառ կոթողս կարճր արձանաց՝ ՚ի ձգումն ձեռին եւ չանխզելի չարս պարանոց երկարագումնից՝ անթարթափ ՚ի նոյն վերաւացեալ ՚ի յաչ եւ չահեակ՝ սեպհականել յաւելոյ բաժինս մասանց վիճակաց խըմբից աշխարհաց ՚ի ծոց իւր. արդ ՚ի յայմ անդորրութեան միջոցի, յորում եղեալ ընդոստնեցաւ թշնամիք եկեղեցւոյ, զսուտացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուռեցի, արձանացուցի, դիցի, բարդեցի, կացուցի, գուցի, հաստատելով ՚ի հրաշակերտութիւն միագոյ իրի զբազմատեղեանն դրուագս դրութեան այսմ սուրբի արգասաւորի, եւ Գրիգոր կրօնաւոր քահանայ, չեսիմ բանաճիւսաց եւ կրսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծավառ. եւ բարձրասլատիս. ուխտի վանականի. որք իբրեւ զմի մարմին բանական ՚ի չերկուց առ մի կերպարան շինեցոյ դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարազատք, այլ եւ միաշունչք միակրօնք համասպատիւք զոհաւանք, ՚ի քառից աչաց առ մի եւ նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք:

Այդ հայցեմք ՚ի ճաշակողացդ յայսմ սեղանոյ չոքնշարեն եւ ախորժահամ հանդերձելոյ՝ չիշատակել զմեզ ՚ի մաղթանս ուղիղս եւ ՚ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրով ՚ի միտս բարիս. որով եւ դուք եղիջիք գրեալ ՚ի մատեանս կենացս վերին դպրութեանն:

ՅԻՇԱՏԱԿ ՎԱՐՈՒՑ ՀՈԳԵՒՈՐ ՀՈՒՆՏՈՐԻ


ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ

ԱՐԵՆԱՓԱՌԱՏ, նշոյլս ճառագայթից ջնորհաց հոգւոյն առատաձոյ՝ չուառապատար պայծառազարդեաց՝ հրեշտակն ի մարմնի առքն **Գ**րիգոր՝ էր յանձնառացեաց գառատե վաստպրաւկան աշխարհին. որպէս տեառն **Յ**ոհաննու անձնառացեաց եպիսկոպոսի. ի ժամանակս կայսերութեան յուստց **Վ**ասլի եւ **Կ**ոստանդեայ. յառաջս **Ա**նեքարիմայ հայոց արքայի, եւ ի հայրապետութեան տեառն **Վ**ահանայ կաթուղիկոսի: **Ո**ր սնեալ ի կարգ կրօնառորութեան ի վանս **Ն**արեկայ, որոմ եւ եղեւ առաչնորդ, ուստի եւ հռչակեցաւ **Ն**արեկացի: **Ա**յն սա երկիւղածութեամբ վարդապետութեամբ գերափայլեալ՝ մնկնեաց զերգն երգոց **Ս**ողոմոնի. գեղգեղեաց զձառս խաչին, եւ զներբողեանս ի սուրբ աստուածածնին, ի համբերձն գունդս առաքելոց, եւ ի սուրբն **Յ**ակոբ մեծաւ. եւ զքարոզս գանձից: **Ա**յլա բանասլաքոյն պերճախոհութեամբ գրեաց զայն զԼԵ բանս աղօթից ի խնդրոյ հայցման հարց միանձանց. զոր թողեալ մեզ վերջին ժառանգութիւն անասպառ. մինէից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերիտասարդական հասակի, ի թուականին հայոց՝ ՌՃԾԲ. եւ ամփոփեցաւ ի նոյն վանս **Ն**արեկայ: **Ի**սկ յորժամ **Ա**նեքարիմ արքայ փոխեաց զտէրութիւնն ի փոքրն **Հ**այաստան, ապա եւ միանձանցն **Ն**արեկայ դիմեալ մերձ ի կողմանս քաղաքին **Ա**կնայ եւ **Տ**իւրիկեայ, շինեցին վանս յանուն **Ն**արեկայ, ուր բերեալ հանգուցին զպատուականն մարմինն, քէ եւ այժմ է աւերակ, եւ կոչի ուխտ **Ա**ղակայ, յորմէ լինին ճշմարիտ բժշկութեանն ի փառս աստուծոյ: **Ո**րոյ աստուածահաճոյ մաղթանաց օժանդակութեամբ արժանացուք զմայլական տեսութեանն աստուծոյ. որոմ սպատիր փառաց ճնշագրական երկրպագութեամբ յաւիտեանս. ամէն:

ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՑ ՆԵՐԲՈՂՆԱՆ ԸՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՆ

Ը. Գումարք խմբից դասուց երջանկացն պատուասիրեն բիւրաբեղուն բանիւք գովեստի զկղզնալոյն կենաց գոյից ի կիցս բանից ըղձայայնութեանց. և որպէս փողովք տաւղօք և քնարիւք զպայական սրտի շարժեալ զգործի՝ զգերազանցեալն ի լոյս անմատոյց ուրախութեամբ վերադրուատեն: Նա զանճառ արարչութեան հրաշագործ ամենատեղծն տէրութիւն օրհնելով պատճառ փառաբանութեան իսկութեան հաստչին զհաստատածոցս առնուն գոյութիւն. որպէս և ճշմարիտն բան ցուցանէ, ի ստեղծանելն ինձ զայս ամենայն. բայք զորաց դասուց երջանկացն օրհնեցին զնս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին զնս: Նա արդ եթէ հրաւիրէ և երազընթացն փառաբանչօք վերնահռիչ պատգամաւորօք հոգիանիւթ և անեղծական կենդանեօքն նա օրհնաբանի. որ թէպէտ և նոքա վեհք են բնակութեամբ կայից առաքից, և նշոյլ երկրորդ լուսոյ առաջնոյն, այլ սակայն յոյժ անտեսաբար տպաւորութեամբ առ բնութիւն բարի բանին բարձրելոյ բարեզարդաբար բերկրանօք բերին. և որ զոհաբանի առ ի նոցանէ սուրբ աստուածութիւնն լայնաձիգ հեռատեսութեամբ և ընդարձակ միջոցաւ յաւէտ անջըպետ նշուլիւքն ծածկի ի նոցունց:

Ր. Ապա զայն որ զանհան հրեղինաց ի հողեղէն յարկին պարսնակեաց, և զանճառն ի սերովբէից զգալի մարմնոյ յօգիւն պատեաց, և զկերակրիչն գասուց հրեշտակաց կաթնասուն ստեամբքն զիեցոյց, ըր երդ պատկառելիք ի ձահ գովեստից օրհնեալ պատուասցէ: Օ[illegible] ճնարանն անտեսին և զձեմարանն մեծին, զտաղաւարն [illegible]


I.N.R.J.

բական և զեօրանն աստուածական, զնաւնարանն ճաշակման անապական խրախճանութեան. զպրպարանն մաքրութեան և զընդունակն զգաստութեան, զնպատակն կուսութեան և զօրինակն երանութեան, զհարսնարանն անլուծանելի՝ անժամանակականն փեսային, զընակարանն հաճութեան կամաց անեղն աստուածութեան: Այսքան փառազարդ շնորհաց ընդունակ և ոչ նոքին աստուածութեանն օրհնառաք հրեշտակացն պարք որպէս պարան է պատուել ժըպրհին, թող թէ մարդ երկրային՝ ի կշռոյ չափոյ բերանոյ հողագանգուածս հիւթոյ մեղիս մարմնոյ. քանզի անճառութեամբ անհասականաւ վեհագոյն ամենեցուն փակեալ գտանի. և ոչ զօրեն երկնայինք զարարչին անհաս անօրէնութեանն զանքնին ծնող արժանապէս վերաբարոզել: Քանզի թէ ըստ առաքելական ձայնին Պօղոսի, մարդն անձնայեալ ոչ յումեքէ պատմի, ապա որ զԼուսթիւն բանին էութեան աստուածութեանն յղացեալ կրեաց ի մարմնի՝ զնմանդ զընենսէ շարժութեամբ շրթանց լեզու մարմնեղին զնա ճանաչել: Այլ թէ գաւաք պետութեանց անմահից վեհից վերնոյ բնակութեանն՝ եկեղեցեաւս յայս խորհուրդ խորին յառնեցան, ապա յայտ է թէ մեծ է առ նոսա հիացումն սքանչելի գործոյս այսորիկ, քան զհասումն երկրաւորացս բանիցդ պատմութեան:

Զ. Քայց սակայն երդեսցէ բանս ողբան զօրեսցէ ի բաղձանաց սրտի փափաքմանն՝ նմին ընծայ օրհնառաք փառաց տեսչութեան, նա զի քէ երկինք փառացն աստուածոյ լինին պատմարանք, և յանդիմն գարձ տեառագրելոց տոհմին Յուդայի ժողովք ժողովրդոց տեսին զփառս անեղին, ապա այժմ յերեւել բանին ի մարմնի և լինել մարմին ազատեան կերպիւ, հարկ է յոյժ ձահողապէս՝ ոչ միայն անմարմնոյն, այլ և զգայնոցս արժանաւոր ըղձականութեամբ հնչել ըղ-

ձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհնութեանց։ Քանզի խոնարհ այս երկիր եղեալ տիրակիր, գասա լծակից ընդ աստուածակիր երկինն վերին. վասն որոյ խրախուսական հոգևորական հրճուանաք երկուցն գասուց ի մի խառն պարու, ոտն տարևկանս փրկչին փայլման կատարին, ղոյական սեռս եղևականաց, և անմարմին դասք հրեշտակաց. յերեւելիս տեսականաց, և յիմանալիսն ծածկեցելոց։ Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի գուսան վերինն յարկի երկնայինն առագաստի, պարեմք հոգեղէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց։

Դ. Ով ամենատէր արարչեակալ տիրուհի և աստուածածին, որ զանտանելին երկնի բարձրութեան և երկրի լայնութեան, ծովու խորութեան և անդնդոց անհատութեան, զի՛ քեզ մարմնացեալն խոկութեամբ էութեան յորովայն անձառ սուրբդ քում սենեկի կրել զօրեցեր։ Ընդ որ հայեցեալ երջանկին Յովսէ՝ պատուարանեաց ի ձեռ առակաց, զանբաւութիւն մեծին սքանչացեալ, յումմէն դիմաց ասացեալ՝ եթէ չունիմ զնա, և զայլմէ՝ թէ չէ ընդ նմա։ Ապա երջակցեալ վեհին Յովհաննու ի բանն Յայտնութեան ասէ հիացմամբ. փախեաւ երկին և երկիր ի մի տեսանութիւն ի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ. քանզի արդարեւ յաչս անձկութեամբ ամրոխին ի բերեան բովանդակութեան արարչական բանին հանդստեան։ Ասէ դու ընտրեալ ի զարմէ և ի զանգուածէ մարդոյ զաւակի սուրբ աստուածածնին, տարար զնա ի քեզ ախորժ հանդստեամբ կամացն հաճութեան, եղեալ երկիր անձնական բանական բուսոյն, և ըղգայական անդաստան կենացն հացի, և վաստարան բոլորքման անձէջ կայծական, և վայր գալարաբեր հայրական ծոցածին ծաղկին, և ծառ երկնուղէշ անթառշամ ինձորին, և գործարան գոյութեան լուսատու մարգարտին, և լեառն

սրձանուշնակ երկրալեր վհծին, և այդ սրսիկատիզքն առաւել առաւօտին, և յարկ զիստապետին բանական հօտին, և արքայարան լուսակերտ անմահ թագաւորին, և մեղր կաթնամատոյց բնաւից առնդծողին, և հարան սրբուհի հօրն Աբրիամոսի:

Ա. Խնդա և ուրախ լեր ձայնիւ երգոցս օրհնութեան քումդ երանութեան բանադովութեան, խրախայլեր և ձայնիւ ողջունի գարբիելեան աւետեացն, բնկրեալդ ի կանայս, բնակարան արժանաւոր բանին խոնարհութեան, անկաստաղրի մարմնոյ աստուածութեանն խառնարան, իւզարան օծելութեան քրիստոսական անուանադրութեան. որ նախ քան զծնանիլ բանին առ ի քէն անթերի լուսականութեամբ հրեշտակական թեւոցն սքողմամբ ցանկարկիաղ պահէիր անաղտ անբծութեամբ: Աւ որ հաճեալ հաւանութեամբ երկոցդական վճռոք աստուածութեանն, ճանապարհ սրսոր հանդատեան. քանզի հոգին սուրբ եկն ի քեզ յօրինողն անախտ սրբութեան. և բարձրելոյն հօրն զօրութիւն մերձ հովանացաւ. որպէսզի պատրաստեալ զքեզ ընդունակ: Աւ որ բնակեցաւ էակիցն հօր բարձրելոյ՝ էր անժամանակ. և որ յօդաւոր մարմնով ի քէն ծնաւ՝ սկիզբն ունի էութեան նախ քան զարուսեակ. ուստի և զյօդաւոր մարմինն միակ՝ խառնեաց ընդ աստուածական բնութեանն իւր անքակ. և սեպհականեաց զամենն հօր իւրոյ Դաւթի յաւիտեան, թագաւորեալ առնս աշխարհի և երկրիս քաղաքի. արիեալ սոցա ուղ ճանապարհն զիւրատակերտն զործի՝ հանել ի կամարն երկնից տաճարի. և կանգնեաց զնուրանն կործանեալ ադամեան մարմնոյն ի նորոգութիւն շինութեան քրիստոսական ուխտին զաշնաւորութեան: Ընդ այսպիսեաց բազմաթիւ և բարձրադոյն բարեաց ընդունակ և մեռանկարար միայն դու մարգարէ կուսութեամբ էիր խնկարան տիրուհի

օրհնեալ սուրբ աստուածածնին. քանզի իբրեւ զնշանին խառնութեան խնկոց հնդկիկ եւ զմահի ընդ տաշխին եւ կաթիայի բորբոքեալ հրով մաքրութեան, բարեգեղեր զծուխ բուրման անուշահոտ սրբութեան ի հոտառելիս աստուծոյ եւ հօր հաճութեան. վարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեզութեամբ արձանացեալ, առաքինութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ սուրբ աստուածամայր:

Ը. Խնդա եւ ուրախ լեր յարկ անճառ ծնելոյդ ի քէն անեղդ աստուածդ, որ ի նմին յորդւոյն քո խնամոց հրաշազարդ փառօք ամրարձար ի կատար աւարտման վերնայինն երկնի լուսապէս, եւ թեւօք թեթեւութեան հոգւոյն սլացեալ՝ յիմանալիսն վերաշուեցեր ի կայանս հանգչել: Աստի եւ զանհասանելին իշխանականս իմացման՝ զանկապտելիսն լըզդայութեան սրտի նկատման վայելս անտեսիցն անձնապէս հոգիագրիեալ, զանեղծին փառաց ճոխութիւն քեզ սեպհականեցեր, սուրբ աստուածածնին:

Ե. Ներբողեալ ես մաքուրդ փայլումն կրող արարչին աստքինութեան, որ աքանչելագործեաս հրաշիւք ներգործեալ քեւ ի մեզ զիմիմիսումն մեծ արգասեաց փառացն ընդ վրդքուն յերկանակեցեր. քանզի զանհայրն մանուկ մայրդ որդեպէս գերազգուեցեր. եւ ըմբռնեալ բարձողաց ձեռացդ բազկօք զանպարագիրն էակ մարդացեալ՝ ի համբոյր հրելոյ մատուցման շրթանցդ ողջագուեցեր. որում զասաք մեք ժառանգակիցք սրբոյ հայր զաստուած առնայնել ի ձեռն քումդ միջնորդութեան, սուրբ աստուածամայր:

Զ. Խարհամբառեալ ես մաքրութեան շուխդ նախընթաց կուսից, որ զլըութեամբ ունողն գոյից կարօտաբար կաթամբ լցուցեր, եւ սնոյց մարդկութեան զանեռան ի մարմնի եւտուր նկատել. վասն որոյ զամենայն բերան գոհութեամբ ստացար քեզ օրհնաբանս անձկով տարփման, սուրբ

աստուածածին: Արանեալ ես դու ի լեզուս անբիծս ընտրական շրթանց Յաղկիդ Յեսսեայ պտղոյն մեր կենաց. որ ի դրութենէ խառնութեան քառից յեղանակաւ տարերաց՝ անկցորդ ճեացեր ի մանէ հողածնելոցս հասարակաց. ոչ բերող Յանդութեան բնակիւր համաստեղծս կարեաց, այլ քրովբէօրէն հրաբերան բղեսող նշուլից: Ասասի երագ ընթացիք հետոց հեռացեալ՝ ի վայրն անմատոյց յարիւն վերին ընծայեցար, սուրբ աստուածածնայր:

Թ. Խրախացիր յաւէտ հրճուանօք բերկրեալդ ի կանայս, որ գժուարընդել գաստիարակաւն խաչի վարժեալ կրթեցար. որդւոյ քո կցորդակցութեամբ միաբեւեռական ժուժկալութեամբ կրեալով զերաշխէպ վշտաց Յնիցելոյդ ի քէն տեառն՝ մշտաչարչարն մեռելութեամբ անձնատուր աօթով խարուեալ. իբրեւ զորոջ անարատ քահանայական նուիրմամբ ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեաւր, ասպարեզս և ստեւադիսակ գեղձնարարձ մաքուր պատարագ. ի ճգնաւորական վարս ողջակիզեալ, քան թէ ի սրոյ հանդէս խողխողեալ: Ալան այսորիկ ի նուէր քոյ զենման հրեշտակացն պարզ պաշտպանեալ, ընդ առաքելոցն գումար դասակցեալ. զմիայն արժանիդ պատուեալ գովելին, սուրբ աստուածածին:

Ժ. Խրախացիր հանդերձ տարփանօք բերկրեալդ ի կանայս, որ ի կոյս և յանարօր արգանդէ բան բեղնաւորեցեր՝ ցաւոց անիծից ալմատ օրհնութեան, հօրն Ընդամայ որդի բերկրութեան: Ալան որոյ շնորհ ունելով քեզ օրհնեալքս ի յորդիդ քո փրկիչ աշխարհի, երանելիք քեզ, սուրբ աստուածածին:

ԺԱ. Խրախացիր անբաւ բերկրանօք հարան լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ, որ յօրէնս երկայնին աղցատոյ կրից՝ զերկնային ածեալ մատուցիր, և զանմահն նմանեաց մահաղանգուած ազգի մարդկութեանս ի չափ հասակի գեղոյ

զնդակիկ զտեղն վայելուչ ի Հրեանէ մեզ պարգեւեցեր Աւետի ղպտակեր նախահօրն ի քէն ստացեալ՝ նորոգ հաստատեալ, գոհաբանեմք զսուրբ սիրտդ։

ԺԲ. Խրախացիր յողջոյն նախընծայ երկնային աւետաւորին, տաճար սրբափայլ. որ լուսով աստուածականաւ ուռճացեալ լցար, և երկրաւոր մարմնով երկնայնոյն աթոռ կազմեցար, և արեգակնապէս հոգւովմամբ առ արուսեակն եբրագ ընթացար։ Ալան որոյ բացեալ զերբան պատուոյն ամենից որդւոյն, օրհնէր զօրհնեալդ ի կանայս սուրբ աստուածածնին։ Ելա և դու լցեր զտունն Օ՛ւաքարիայ բարբառովն գոհութեան, յորինակ հանրական եկեղեցւոյ, որ է քո միշտ օրհնաբան. զի երանեն ահա յայնմհետէ քեզ ամենայն ազգք ըստ բանի աստուածազգայիկ քումդ դաւանութեան. սկզբնաւորք կուսից անարատութեան, ի բերկրեալ լեզուս շրթանց զուարթնոց միշտ բարեբանեալ սուրբ աստուածածնին։

ԺԳ. Վառեալ արդ եկեղեցի դասուց անդրանկաց ի քէն մարմնին ի բանէն անանձնաց համապատիւ հօր փառաւորէ յերիս սրբասաց. առ որ հպարտ քո գոլով ահաւոր խորհրդոյդ տեսող՝ զանճառն ուրախութիւն յաւէտ վայելես։ Օ՛ի զոր նոքա թեւաւոր ղեմսց ծածկութիւ ի բացատ ակնարկեն, դու յաւէտ համարձակ նմին կամենաիր մայր ցուցեալ ծանուցար, և ի մէջ դաստակաց ձեռաց որպէս զմանուկ զծերն հինաւուրց դգուանեալ ընկալար, եղեալ կառք անձնաւոր կայից բազմելոյն յաթոռ քրովբէից։ Ալան ղի ոչ ընդ քեզ միայն, այլ և ի քեզ. ոչ միայն փարեցար բաղձեալ, այլ և բնակեցար տաղաւարեալ. ոչ միայն միացար ի ջանդուած մարմնոյ, այլ և մարդացար՝ առեալ զկերպարան ի քէն սկսելոյ. ոչ միայն մի զոգեցար Վրիաոս յերկուց գոյութեանց, այլ և ընկղմեցար յանապական անօսր

էութիւնն մարմնոյն վերբերումն. ոչ միայն միջնորդաւ անձինն ընդ հողոյ միաւորեցաւ զիմակ տեսակիք, այլ եռամասն խառնեալ էութեամբք միաւորեցաւ անշփոթելի: Ա՛ի սրտի սիրոյն բնութեամբ յաթոռ հօրն իւր աջոյ յերկնաւորացն միշտ պաշտպանեցաւ:

ԺՂ. Յաղագս որոյ և մեք երկրաւորքս զնատակարարդ և զպատասու մեծս խորհրդոյ երանելիք ըղձական երջիք՝ զանժամանակն էութեան երջանիկդ ծնող. որ զամենայնի և ամենեցուն պահակն հոգեշունչ երջիք՝ ի քեզ ընկալաւ, ոչ ի մասնէ, այլ ի լրութենէ. ոչ հատմամբ, այլ հատատութեամբ. ոչ բաժանաբար, այլ ամբողջապէս. ոչ փոփոխմամբ, այլ փոխատութեամբ. ոչ ի ծիրս սահմանի տեղոյ, այլ ի սենեակ լայնատարած ոգւոյ: Վառեղ ղեկտրոն ի կշիռ ձեռին զերկիր և զերկին տարար յարգանդի. և ոչ միայն ի տես նկատման աչաց նայեցար ի նա, այլ և շօշափմամբ ձեռացդ ծանեար. ոչ միայն ողջունեալ զանհուն շրթանց, այլ և ըմբռնեալ. ոչ միայն զննեալ զհատարակաշէն խորան մարդացեալ բանին, այլ և անուանեալ կոչմամբ Յիսուս՝ զՔրիստոսն ատուածոյ. ոչ միայն ստեամբդ անուղեր զանժամանակն ըստ աւուրց, այլ և ածման հատակի զնոյն ընծայեցեր: Զոր խոստովանի հանրական եկեղեցի զծնեալդ ի քէն աստուած ճշմարիտ՝ ընդ նախեղակ գոյակին միացեալ ի տեսութենէ իմաստից քննութեան մեր վակեալ: Յորոյ սիրոն ապացուցի խաղողն Յակոբ ըմբռնեաց զմարտուցեալն ընդ իւր պնդապէս, և զանխոս խորհրդով զաստուածատեսն անուն ընկալաւ: Ընդսիս և որ ի քէն ծրնեալդ մարմին ի յարգանդ սրբոյդ սենեկի ընդ աստուած խառնեցար. և խարեալ զԼդմն մարդկան թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրացար. վասն որոյ ոչ տեսող աստուծոյ՝ այլ ճշմարիտ աստուած անուանեալ, զամենա-

սեան Իսրայէլ անուն փոխադրեաց։ Սակս որոյ լի բերա-
նով զպաշտպանդ փրկութեան այսմ մեծս խորհրդոյ՝ երա-
նելիք զհիւրհիւդ սուրբ աստուածածնին։

ԺԱ։ Որոյ տեսչութեամբն աստուածոյ նախագիծ ի ծովէ
քարն պատուական հրափայլ և սպիտակ մարգարտին մա-
քուր կերպարան գոյացեալ ցուցաւ։ Վասնզի արդարեւ դու
ես ան պատուական ի յաշխարհիս ծովէ ընտրութեան, որ
զաստուածային հրոյն տարար կերպարան։ Որ ոչքան մեծ
է ի քեզդ աւարտեալ խորհուրդ, սրբուհի. զի թէ առաջք
մարգարէիցն հոգևկիր չղացմամբ Իսրայէլի ծնողք ասացան,
ապա դու որ զքանն առաւուած անձնաւոր՝ հայրենի բնու-
թեանն հպաւոր՝ ի սենեկի քումմ մարքրականի մարմնապէս
բացածանուցեր, զերպիսի արժանապատիւ գովութիւնս ոչ
ընդունիցիս։ Որ շնորհաշուք գեղով արփաւոր ծածկութիւ-
յանմատոյց գեղեցկութենէն պաճոյճ փաղփաղեալ. ոչ հա-
մատ հեզութեամբ, խոնարհ անբծութեամբ, կերպասիւք
լուսոյ ի հոգւոյն պարաքօղեցեալ. ոչ զարդուք երկնայնով
ոսկեզօծ սրբութեամբ արծաթափայլ մաքրութեամբ, ակա-
նակաւ պսակ քեզ փառաց զբարձրելոյն հովանի ի գլուխ
ընկալեալ. ոչ քառեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր ու-
լանոյն յեռմամբ, աստուածոյ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ,
ի մի էութիւն երկոյն հիւսմամբ ի յորդւոյն լանջք սուրբ քո
շնորհաք առլցեալ։

ԺԲ։ Որհնեալդ միայն ի կանայս շրթամբք քահանա-
յապետ մեր մարգարէին Յովհաննու, փառաւոր և ի դա-
սուց հատուցեալ նմանացեալս ցանկալի երգոք ներբողականս
տալոք։ Զի թէ բանականս մարդոյ գոյութիւն պատկեր
աստուածոյ ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղագաւ ստեղծո-
ղին զշնորհս կալաւ, ապա եւս առաւել քեզ պարտական
եմք երկրպագութեամբ ունել շնորհս, տիրամայր, որ աստու-

Ծայ՝ ի Ծառայի կերպարան առեղծման եղեր պատճառ. առ որ ի լուսին աւարտման մարդարէական կտակին հասանելոյ, այն զոր ասէ, եղեցի՝ ի վերայ առն ձեռն քո, և աջ քո՝ ի վերայ որդւոյ մարդոյ՝ ի քեզ խրախուսելոյ: ՈՂ և կարողութիւնն և բազուկն հօր միածինն՝ ի քեզ հանդուցեալ, և զամենայն որդիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ: Ոչյն նկարագիր և կերպարանն հօր գոյութեան՝ ի քեզ բնակելովն, սրբութիւն և արդարութիւն լման աշխարհի ընձեռեալ: Ապա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք, սուրբ աստուածածին:

ԺԱ: Ի մարդկային զարմ հրեշտակ երկնային, յեղծանաց սեռիցս անմահ սերովբէ, ի հողային նիւթոյ ոսկի Սոփերայ, ի ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ, ի յեսսեանն բուսոյ քաղցրաղուշտ ծաղիկ, ի յաւուրց նախնեացն ճիւ օրհնութեան, յօղոյն հանդարտի ամպ անձրեւաձիր, արեւուն ծագման ակն արփիափայլ, մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի, զիշերային մթոյն խօսնակ բերկրանաց, օրինի սուրբերին տառ ճշմարտաձառ: Սակս որոյ իրք զնիւթ գործոնեայ այսպանեաց բարեաց օրհնակ ես դու՝ ի կանայս, նախաստեղծին մերկացելոյ փառք անկապտելի, վերստացելոյ անմահապարտ մօրն սփոփիչ քաւութեան, որդւոց նոցին խռովութեան՝ խաղաղութեան ձայնատու: Եւ արդ ո՞ր բան բաղդատելով՝ զանհամեմատ քո մեծութիւնդ լեզի կարող գերահռչակել, արարչին մայր, անհասին ծնող, անբաւին դրկարան, ամենակալին յանձանձիչ, փառազարդողին զգեցուցիչ, վերծրնելոյն զրկիչ: Ընդ յաղագս այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի յիրաւի տացուք քեզ երանի, մայրդ Յիսուսի:

ԺԲ: Աննիւթելի դիտմամբ տեսակ լուսաղեր աչօք նկատեալ, կտակ մակագիծ անեղծ պայմանաւ արձան հաստա-

տեալ, սահման յարակայ մեծութեան կցորդութեանն, երկուց միութեանն անայլայլականի կապ պատկանակիր, վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ, թեթեւ պարզութիւն հիւթեւ բաղկացեալ, տառ տարրերական տողիւ ձեւացեալ, տումար տնջալն անսխալ դրոշմեալ, մատեան մեծութեան ընծրհիւ նկարեալ, նամակ ընտրութեան բանիւք բարդեցեալ, արձան անձնական խմատիւք զգեալ, կնիք մատանւոյ տերամբ կերպագրեալ: Օգեստ լուսանիւթ երկինից արքային, օթոց սրբութեան անմահ բնակողին, յարկ վայելչութեան անեղ շինողին, առիթ մարդկութեան, բանի անեղին, գործի մարմնութեան վեհին բնութեան, պատճառ պատշաճից անպատկառ ձգնութեանց, օրինակ ուղղութեան անայլայլակ վերպութեան, անպակաս ամենութիւն լրման թևրութեան, խոկուհի երկնային կենդանեաց դաւառին, մատնակից շնորհնական հայրական դթութեան, անպարտակիրն ազդակցութեան երկնիւ վերսին, անամանաւն արգանտի ծանուցող ծննդեանն:

Յոմ. Դու զՀօրն լուսոյ զորդի հարաղաս՝ ի տոհմիս կոյս աշխարհի մայրենի կամեմբ ջամբեալ դիւցուցիր, և որպէս թեւովք խնայական պահպանութեամբ զպարսնակողն պարփակեցեր: Նա դիւնցաղոյս ընծայեալ ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր, և ըստ նմանութեան արագման օդային թռչնոյ ի յանցաւորաց տոհմի փոխեցար, և ի մեջ դասուց հրեշտակաց ունող աստուծոյ յայտնեալ ծանուցար նա լուսարիի ամպով առ ի նոցանէ պատուեալ համբարձար, և հողեղէն հաստատած ի քրովբէից աղի հանդուցար, և ի կանանց աղանցն կերպիւ արուսեկին տեսակաւ տեսար, և զինեալ բնութեամբ մարդկային յանճառաշնորհ խորհուրդ ծածկեցար, և ի տեղծողէն քո և համայնից հպատակօրէն ձեւով պաշտեցար, և հաստողին ծագաց աշխարհի մայրօրինակ անուամբ ձայնեցար, և մեղուցելոյ կնոջն առաջնոյ

առանց յանցանաց զատ ակ գովեցար, և ամենայն անբծաց
ընտրութեան պսակ սրբութեան դու գաւանեցար, և իբրեւ
ջնջուպատ երինջ անարատ սրտիւբաղձանօք լծոյն մատուցար,
և իբր յաւանակ կամաց անբաւին աստուածութեան հետե-
ւեցար, և ի խորոց ծովէ աշխարհի շուշանական շաւղաք
ամբարձար, և իբր ի գժնեայ փշոց խստութեանց յաշխար-
հիս զքաղմանց ծագկեցար, և իբր ի գառն սրմտաց երկրի
քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար, և Երկրորդութեանն
անուանս թագնութեան խորհրդակից սիրոյ կոչեցար, և ծա-
ծուկ հաւաքման բանին իբր լուսատու ձոյնով պատեցար,
և անքակ էին տերութեան սահման սխման վերակացեցար,
և ի սրբանեալ միջոց քո ստանալ զանկեան ի տաշեին ծը-
բար թագուցեր, և ի կուսական քում բարուն ակ զանմա-
հարարն ողկոյզ հասուցեր, և միջնորդ կենաց երկոցունց ըս-
քանչելապէս համարձակեցար, և հանդիպ ի խաղաղութիւն
մերկածուփ շարժմանց կացուցար, և խրախակից վերնոյն բար-
ձրութեան անկապաւեղն անուամբ պատուեցար:

Ի· Ընդ յայսքանս և ի սոյնսիսկս, և յիւս ընտրելական
երգս բանահիւսից գերահռչակեալ ես վեհմեան վարուց
նախընթաց և յառաջաշուխղ սուրբ աստուածածնին: Ո՞ան
զի որպէս երեւանալն ի վէմն միածին անդրանիկ բնութեանն
հօր՝ սիրելոյն ասի հետեւման խաչատնակ մահաբեր ճգանց,
այսպէս և բանեալդ և բարերանեալդ գերբրինակ յուցման տե-
սակի աստուածակրօն կարդաց ծագեցար: Վասն զանմատոյց
հաւն կիզանող անապական ծագմամբ ծախեցաք, քեզ զա-
բադանն ի թեւս օդոյնս ի քառընթաց կենդանիս տեսաք,
քեզ զանկղզին անտականաց ի մարդկային կերպ նկատեցաք,
քեզ զդովեալ բարձողն մեզաց իբր զգառն ճաշակ ընկալաք,
քեզ գառնէրն ի չարագործաց որպէս աստուծոյ ճշմարտի
երկրպագեցաք, քեզ զանճանաչելն հօր տերութիւն ազդակ-

ցսպէս օրհնաբանեցաք, քեւ զմեւ բհակ պարտուց անիծիցն
ի յաւազանին ջուր ընկղմեցաք, քեւ զանուան աշաց հրեշ
տակաց տղայական տիպ դգուեցաք, քեւ զանսահման բանին
բնութիւն ի հասարակածին տիպ հաստատեցաք, քեւ զՔ-
դամն նոր հոգեղէն ի չար հասակի առաջնոյն տեսաք, քեւ
զարեգակն արդարութեան կենդանարարիչ մեր կոյրդ ստացաք,
քեւ զանժամանակ բանին էութիւն՝ սկսեալ ի Դաւթայ
պատմեցաք, քեւ զանհամեմատն մարդոյ պատկերի մեզ նմա-
նատիպ գործով գրեցաք: Արդ այսքանեաց արբանեական մա-
տանցս ձառեցելոց դու միայնակ պատճառ, անարատ կուսիկ
նպատակ կրծնից, տիրամայր սուրբ աստուածածին:

ԻԵ. Վրանգէ թէ չէր ի քէն ածեալ ուղիշն երկնային,
ոչ էր պղտաբերեալ զանճաշակելին ի շրթանցն մեր հաղոր-
դութիւն. և թէ չէր երեւեալ հօրն արդարութիւն ի յեր-
կնից, չեւ էր սկսեալ ճշմարտութիւն ի յերկրէ. և թէ չէր
յղացեալ յանփորձականդ քումմ արգանդի, ոչ էր մար-
մնացեալ. և թէ չէր յայտնեալ մերով բնութեամբս, ոչ
էր շօշափեալ և ըմբռնեալ անհան խտասից. և թէ չէր
կրեալ ի գիրկ բարձողաց հոգեղէն բազկաց, ոչ էր ծանու-
ցեալ. և թէ չէր համբուրեալ երկրաւոր շրթամբք, ոչ էր
ճառեցեալ. և թէ չէր հետեւեալ ի մարդկան ընթացս, ոչ
էր քարոզեալ էանն ի յէից. և թէ չէր թափեալ իւրն
անապական ի վհատուն էն, ոչ էր զմեզ օծեալ. և թէ
չէր խառնեալ զմեզս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. և թէ
չէր խրախուսեալ մարդն ի յերկինայնումն, ոչ եւս էր սբբ-
բեալ. և թէ չէր խոնարհեալ բարձրն ի յընտանի փառացն,
ոչ էր վերացեալ ի ստոյնայնոցս առեցեալն:

ԻՒ. Բայց մարմնացաւ, որքան մարդացաւ. նոյն և յայտ-
նեցաւ, ըստ որում ծանուցաւ. աւետարանեցաւ, ուստի փա-
ռատրեցաւ. իսկ մաքրեցաւ, որպէս երդեցաւ. իսկ մկրտե-

ցաւ, որ և վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ. իսկ անանկացաւ, որով ճոխացաւ. իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բուռնեցաւ. իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ. և պատաւ որպէս վերնային, թռեաւ որպէս հրեղէն, ծածկեցաւ որպէս զանգրին, փախեաւ որպէս զանհաս, ի յամպս երկնից եդ զդնացս, գովեցաւ որպէս միածին, բոսորաբուխ կոյսակօք ներկեաւ, անկից վերայն բոցով հարցաքննեցաւ, ի վհից անմահ հրեշտակացն հաւատացաւ. յաղթող մրցման և մարտի փառաւորեցաւ, դատաւոր արդարակշիռ յամենայն աղգաց վերապատմեցաւ: Վասդն ի քէն հիմնադրեաց զսկիզբն մարդեղութեան անեղն խոստիւն. և յընտրեալ անպատում շնորհէ զայս ամենայն անփոխանորդելի պարգեւական ձիրս ընկալաք. և քեզ ամենայն այս պատրաստութիւն բարերաստութեան բազմերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ: Եւ զամենայն փառս երանական լուսոյ նշուլից վերնոյ և ներքնոյ ծածուկ խորհրդոյդ բաղմադովիստ պայծառ յօրինման նոր արարածոյ անձառ շինուածոյ սուրբ եկեղեցւոյ, ի քէն ծնիցելոյ կերպիս մերոյ և բարձրացելոյ անուանն Յիսուսի ծնկովք կրկնելովք մատուցանեմք: Ասատ և քեզ բերկրեցելոյդ զսովորականն օրհնաբանութիւն բանիս երկրորդեմք:

ԻԳ. Օրհնեալ ես դու ի կանայս, գլուխ նոցին պանծանաց, և պայծառ պսակ: Պսակ կուսութեան մաքուր հարսնութեան, պսակ ընտրութեան անփոյթ գովութեան, պսակ անեղծութեան, լուսոյ նմանութեան, պսակ շնորհանորոգ էին ծնելութեան, պսակ երանական բանին հօր մայ-

բութեան, պատկ սուրբ պանծանաց կենացն բարեբութեան, պատկ պայծառափառ վարուց իմաստութեան, պատկ տիրապատուաստ երիցահանձարին զիտութեան, պատկ պիտանական եկեղեցւոյ գեղեցկութեան, պատկ պաշտելութեան Աիօնի նորոյ զբդարման, պատկ յաջնանկար յարիւից եօթանց փայլատակման, պատկ առաջնորդական վերնոյն ազգակցութեան, պատկ անբծութեան շաւղացն արդարութեան:

Ի Գ. Ընդ ամենեցուն վերակարդելոց Թուոցս այսոցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ընդունարան ընտրական կամաց անբաւին զքեզ խոստովանիմք երկրաւոր ծնունդըս սատրատեղականն Ղազարայ. որոց անհամար և անթիւ ազանց ամրական և պահպանական պարիսպ կառուցար: Վանեցի յարժանահայց և յամենազքոյ քոյ բարեխօսութիւնդ միշտ ապաւինեալ մնամք ի հաստատութեան, խնամեալք և հանգուցեալք ընդ հովանեաւ պաշտպանութեան ամուր պատուարի սուրբ աստուածածնիդ: Պատուար պճնայօրէն ի զանազան մաքրապարզ ականց յարմարեալ. պատուար հրապարփակ անմատոյց ընդդիմադային հինից. պատուար բոցաշնջել անհուպ և անհաս մատուցման դժնեայ դիժողաց. պատուար ամենահրաշ ըստ Եզեկիէլի, որ ալեհեալ զմուտ քո ճշգրտապատում գրեաց. պատուար շքեղապարիսպ ըստ Դաւթայ, որոյ հիմն անշարժութեան ի բարձրելոյն հաստատեցաւ. պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ Պօղոսի, որում զհանուրս բնակիչս արարեր: Վանեզի զաստուած ծնար ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր Աիօնի որդիս արարեր վերնումն հոգևորի: Որոյ աղաղակ օրհնեցաւ արդարդ քո կուսութիւն ի շրթունս նոցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնաբար և տաճար հոր խակիցին:

Ի Ե. Որով արդարապէս ի քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեզ օգնական և տուն ապաւինի յուղխից հե-

ղեղաց յաւուր անձկութեան. մաքրութիւն կուսից և սկզբնա-
շաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութեան հաստա-
տութեան եկեղեցւոյ, և ծնող անարատ բանին աստուծոյ:
Զքեզ յաւէտ օրհնութեամբ միշտ պատկերք ի նուիրեալ
տեղիս սրբութեան քումմ տաճարի, և ի թեւս պահպա-
նութեան լայնատարած քումդ մաղթանաց ապաւինելով,
ղեռս մեր ի սմա տարածեմք. և աներկբայ յուսով հաւա-
տամք ասրիլ: Ընդ աղաչեմք ընկալ զերդարան օրհնութիւն
մերում ընդուն. և հաճեալ տացես սմա զիւրս շնորհաց
Սիոնի և Ռեթղհէմի: Ուստի արժանասցուք ընդունել
մեան փրկութեան յաւուր դալստեան մեծի յայտնութեան
փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միոյն
աստուծոյ, տեառն Յիսուսի: Նա իբր զպատճառ սկզբնա-
շաւիղ այսքանեաց բարեաց՝ ի սոյն կամարի զեղափշնեղոյ
զքեզ պատուեսցուք, անժամանակ էին բարձրացեալ ծնող:



Գերազանց չափոյ կշռման երկրային բնութեան, և քրովբէականն նախագաստութեան եղեալ վհկան. սրբուհի պայծառ առագաստ Փրկչին Յիսուսի, և նորուն իսկ տաճարիշ վանն մէջ. ծաղիկ կրկնեցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեա վանն մեր առ ծնեալդ ՚ի քէն աստուած ՚ի մարմնի։

Թոպիից յոգնաթիւ մասանց բերկրութիւն, աղջաց և աղանց արմատ օրհնութեան. ՚ի ծագմանէ փառացն երկնայնոյ անստուեր նշոյլ տարփալի շողեալ ՚ի տարերին տեղի. անորոշ հպմամբ մերձաւոր անմատոյց լուսոյ, անճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ ՚ի մահու պարտեացն զերծո զառ քեզ ապաստան ծառայքս քումդ որդւոյ։

Ի յերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուցն՝ երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր, Աստիամ առիթ տեսութեան նոցին զանգնին որդւոյն կերպարան։ Աստի տեսին զանկէտն սկզբեալ, և երանեցին զարմատ և զպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւն կենաց, և պաշտպան զերբամբրգ ձեռնտուութիւն։

Գվնաւորեալ այսօր ՚ի քեզ զիմանալին փարթամ մեծութիւն. որ սլացեալ հասեր ՚ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման մարմին, յորմէ պատկառեաց ամենով պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ տեառնդ կենակից սուրբդ տիրամայր. արդահատեա միշտ զողորմութիւն որոց պանդղևսիմք ՚ի վհկս ներքին։

Ունող հրճուանաց անթիւ խրախութեանց աստուածամբին անկէտն խոստմանց ՚ի բուսաստանս անդաստանաց տիրական անկոյն, որոյ ստեղունք շառաւիղացն երկրային հնարիւ գերազանց. անդր մուծցես զքո դաւանողքս, սուրբ տիրուհի մայրդ Յիսուսի։

Ողորմիք ՚ի քէն աղերսիս բանի, որ ես քաղցրալուր զրաւ

աչխարհի. միայն երանելոյ և բարեբանելոյ, հօրն հաճու-
թեամբ հովանաւորեալ. որդւոյն ծնող, հոգւոյն վերընդու-
նող, Երրորդութեան փառացն տարող. վերանկարեա զառ-
յաւաքանէն անախտ արդանդէ զկարդացեալս անուն ի կիր
մատենի վերնում դպրոցիդ: Եւ զերդաքրութիւն սակաւա-
մանեայ այսր գովեստի՝ արձան հաստատեա միշտ անկործան
սրբոյդ առաջի. ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ. և ըզ-
դայական շնչոյս զպատկեր բանիս: Ձի երբ ի գոյից երկուց
զուգելոց ի մի խառնութիւն միոյ կենդանւոյ, միշտ փառա-
ւորեսցիս դու սուրբն օրհնութեամբ, որպէս անեղծ պաշտօ-
նէիցդ օրհնաբանութեամբ: Թերեւս ի ձեռն զօրեղ քոյին
հայցուածոց լեցի մեզ անդատապարտ համարձակութիւն յա-
տենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին: Եւ գոցուք ար-
ժանի անբիծ վարուք, և ուղիղ դաւանութեամբ՝ հաւա-
տոցն հաստատութեամբ հանդիպիլ և անդանաւր ընծայիւք
բանից քումդ երանութեան. փառաւորել ընդ քեզ և ընդ
քոյն յանդիման դիմաց պաշտելի և պսակելի քոմ աս-
տուածափայլ և լուսանշոյլ մեծ պայծառութեանդ գէու-
թիւն անքակ և անքննելի սուրբ Երրորդութեանն ի միում
տէրութեան և արարչութեան: Որում վայելչական պատիւ,
և գովեստ անդադար երգոց այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

Համառօտութիւն աղօթից եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ Գոշի խստակրօն Ճգնաւորի և բանիբուն հռետորի՝ ասացեալ ի սուրբ Պատարագին։

Տէր աստուած իմ Յիսուս Քրիստոս բան հօր և կերպարան, կենդանի և կենդանարար, յոյժ և փրկութիւն ամենեցուն որ կարդան առ քեզ։ Որ շնորհես առաւել քան զարժանն, և տաս խնդրուղացն զպիտոյս կարեաց։ Օ՛ի ոչ միայն արարեր և ստացար ի վերստին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քո, այլեւ միշտ զքեզ ետուր փրկանս կենաց մարդկան։ Ա՛ման որոյ մեծ եղեւ միջնեւ յերկինս ողորմութիւն քո, և յամենայն երկրի ցուցաւ փառք քո։ Նա այնքան զերազանցեաց պարգեւաց քոց նշանակ, մինչ զի ոչ միայն մարդկայինս հիանան ազգք, այլ և երկնային զօրքն և առաւել մերձակայքն. ընդ որս սոսկացեալ փառաւորեն անլռելի ձայնիւ ասելով, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց. զորս և ուսեալ մեր՝ երգեմք ի ժամ անմահիդ զենման՝ կցորդելով անմարմնոցն երջանկաց։

Օ՛ի զառ մեզ զանճառն տեսանելով զնօրհուրդ՝ զօրինակ մահուն Ճշմարտի, ընդ մեր եղեալ՝ մարդկապէս ընդ մեզ եղանակին զերգս օրհնութեան։ Օ՛ի ևթէ զօրինացն անգիտանան գովասանութեան՝ միայն զսուրբն կարդան զանուն, ուստի զերեսան ծածկեն և զոտն. մեք զո՛ր ասացուք զօրհնութիւն և զգովութիւն, բայց միայն զքեզ օրհնացուք սարսափմամբ, և հաւատով մերձեցուք յանեսանելիդ և ի տեսանելիդ անճառութիւն։

Օրհնեմք զՀայր՝ զառաքող փրկողիդ։

Օրհնեմք և զՀոգիդ սուրբ՝ զկատարիչ և զսրբիչ զդալոյն օրինակի։

Օրհնեմք զանխմանալի զքո խոնարհութիւնդ։

Օրհնեմք և զմեծ քո քաղցրութեան կամաց։
Օրհնեմք՝ որ զկենդանարար մարմին և զարիւն քո սուրբ
ընդհնգիլը մեզ ի քաւութիւն։
Օրհնեմք՝ որ հոգւոյ աստուածութեան քոյ՝ ոչ կիզու զընու-
թիւնս հոգեղէն։
Օրհնեմք՝ զոր ոչ տանին երկինք ամենայն, այլ տանին նիւ-
թական և նուաստական ակնզեցիք։
Օրհնեմք՝ որ նստիս ի քրովբէս, և բազմիս ի սեղան սքը-
բութեան։
Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին՝ և իննեակ դասք
անմարմինոցն, բառնան մատուռնք քահանայից։
Օրհնեմք՝ զոր և սերովբէն ունելոք մատուցանէը ի բնբան
մարգարէի. իսկ աստ ձեռամբ բաշխիս հոգեղինաց և մա-
տամբ մատչիս ճաշակողաց։
Օրհնեմք՝ որ ոչ զարշիս յաղտեղութենէ մարմնական կրից,
այլ մաքրիս սրբութեամբ քով։
Օրհնեմք՝ որ զպիսպիս յանցանսն անտես առնես զաղգի
մարդկան՝ ողք հաւատով ապաւինին ի քեզ։
Օրհնեմք՝ որ միջնորդութեամբ կենարար մարմնոյ և արեան
քոյ՝ հաշտեցուցանես զհայր քո ընդ օտարացեալս մեզոք,
տալով վճիռ անատելի, ոչ ուտողացն և ոչ ըմպողացն ոչ
ունել կեանս, և ուտողացն և ըմպողացն զընակին ի քեզ,
և զքեզ ի նոսա։
Վասնզի ակրապիս մարմին և արիւն քո սուրբ կատարեալ
արձակումն է և ազատութիւն ի կապանաց մեղաց։
Օ՛ի եթէ սուրբդ ամենայն առ հաւատակ լիշին, և քոյոցդ
բարեաց կարօտին, զնաւդ և ոչ ես անկեալս ի շնորհաց և
ունայնս ի բարեզարդութեանց։
Օ՛ի եթէ այժմ ոչ ողորմիս, յորում բացեալ ես զդուռն
անձառ ձրից, երբ տայցես յայլում ժամու. քանզի անվբէպ

յայսմ ժամու է առնուլ ի քէն զինդիրս, որպէս և սուրբք
ի քաղցրութեան ժամանակի։

Օվ եթէ յորժամ ընդհանուր երկինք և երկիր առհասա-
րակ բարեխօսեն՝ ոչ լսես, այլ յորմէ ժամու զամենեսեան
ժողովեցից։

Օվ եթէ մինչ հիանան անմարմինքն դաւք ընդ առաստու-
թիւն պարգեւաց քոց, և զօրհնութիւնս մատուցանեն, ոչ
առնուս. յորժամ ի կշիռ դնես՝ զնդրդ ընկալայց։

Օվ եթէ յորժամ դաւք հրանիւթիցն գոչեն ասելով ո-
ղորմեա քո արարածոց, մասն ինձ ոչ տացի. ընդ որից այ-
լոց առից։

Ընդէմ դքեզ տէր, մի ունայն դարձուցաներ զնս յամե-
նասուրբ երեսաց քոց, անջատի պարգեւացդ իշխան։

Յորժամ յարգեալ է իրրեւ զգնաս ի լուծանել ծովու մե-
ծիդ պարգեւք, ուստի և ինձ կարելի մի բաւական է. զի
սակաւն քո անչափ ունի մեծութիւն, և առաւելեալ է
քան զնորս ծովու։

Օվ եթէ ի ծագիլ լուսոյ արեգականդ ոչ լուսաւորիմ, ի
գիշերի որպէս պայծառացայց։

Եւ եթէ ձրի բժիշկդ մեռց ես՝ և զդնդ կենաց ոչ տացես,
այլ ոմն զոից բժիշկ զնի բժշկեցայց։

Եթէ յարուցչիդ պատահեալ մեռանիմ, և ո՞զնս յարուցի։
Եթէ բնութեամբ ձոխացուցիչդ զաղքատութիւնս ոչ բարձ-
ցես, առ այլ ոմն երթայց ի փարթամաց։

Ընդ խաղաղութեան աշխարհիս զոր շնորհես, տուր և ինձ
խաղաղութիւն յամբոխից կրից. ընդ հաստատութեան եկե-
դեցւոյ՝ հաստատեա և զաւժեալ անձինս։

Ընդ քահանայապետաց և քահանայից՝ սարկաւագաց և
դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանու-
թեան, զօրութեամբ քո և զնս ընդ հովանեաւ քով ամրացո։

Ընդ Թագաւորաց և իշխանաց՝ զօրավարաց և զօրականաց յաղթող և զհս ի վերայ անհնազանդ Թշնամեացն արասցես։ Ընդ ննջեցելոցն հանգստացելոց յիշեա և զհս տէր զհանգուցեալս մեղաւք. զորս ի խորոյն հաներ անդնդոց, ընդ նոսին հան և զհս ի չարին բանդէ՝ միջնորդութեամբ կենարար մարմնոյ քոյ և արեան, արժանապէս գոհանալ զողորմութենէ քումմէ։ Գոհանամ զքէն տէր՝ որ արժանի արարեր զհս տեսանել սուրբ խորհրդոյ քոյ։

Գոհանամ՝ զի զսոսկալին և զահաւորն լուայց զօրհնութեան։ Գոհանամ՝ զի զաստուածախօսութիւն քո լսել արժանացայ։ Գոհանամ՝ որ զհոգիս յօտով լցեր, և զսիրտս ուրախութեամբ։

Օ՜ն օրհնութիւն կամ զղօրութիւն քեզ մատուցանեմ՝ աստուած իմ Յիսուս, զի արժանի եղէ կենաց հոգիդ և անմահարար բաժակիդ։

Գխաեմ զի չար է ինձ մերձենալն չարեաք, և տարակուսանք հեռանալն. մանաւանդ զի անստուտ սահմանեցեր, եթէ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեանս ոչ ունիցի յանձին իւրում։

Ընդ այսմանակս խոստովանիմ, զի ես մեռեալ եմ, և քեզ է յարուցանելն. զի փառաւորեցից զքեզ ընդ հոգ քոյ ամենազօրի, և ընդ ամենասուրբ հոգւոյդ ճշմարտի, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։

Ընդունակալ ամենախնամ աստուած՝ յամենայնի օրհնեալ. որ յամենայնի ես և ամենեցուն անհաս՝ և բովանդակեալ պահես զամենայն արարածս՝ զհոգիսն և զհոգիսն, զանձինս և զնիւթս։ զի մահկանացուս կանաք ես և անմահութեան յարմարացուցիչ։ Հաց զղուռն ողորմութեան քոյ՝ զհաց, և ծագեա լոյս խաւարելոյս։ Ծանրացեալս բեռամբք մեղաց՝ թեթեւացո. զեւացեալս աղաւեղաւ կրից՝ սպիտակացո. զսառուցեալս յաստուածային սիրոյդ՝ ջերմացո.

զմիածնալս անառնական սահմամբ՝ զգաստացո։ Օ, եմ բռնալս ի ծուղակ որսողին՝ փրկեա և ազատեա. զմոռնելս ի ժանեաց կերչին՝ կորզեա և կենդանարծեա. և զհոգիս խաւարեալ մեղօք՝ անշէջ լուսով քով լուսաւորեա, և միշտ առ քեզ հայեցո։ Օ, գերեալ խորհուրդս ի գերողէն՝ առ քեզ դարձո. զըմբռնեալ կամս ի խարդախողէն՝ զերծո. զյոժարութիւնս՝ քաղցրութեամբ ի քեզ միացո. զբանական մտան հոգւոյս՝ խոհեմացո. զբարմանականն արիացո. զցանկականն ողջախոհացո, և առ քեզ դարձո. զերիս մասունս՝ արդարութեամբ ամրացո. զնեմմացեալ միտս՝ պայծառացո։

Օ, ներտրամադրեալ բնութիւն բանիս՝ հոգւով քո խառնեա. զարտաբերեալս յօգուտ լսողաց՝ շնորհօք քո ներկեա. զզգայարանս կարկառման մտացս՝ առ քեզ հայեցո. զզգայութիւն պատուհանացս՝ ազդմամբ քո լցո։ Ականելեացս՝ ցոյց զողորմութիւն քո. լսելեացս՝ լսելի արա զձայն քո. ճաշակելեացս՝ քաղցրասցին բանք քո. հոտոտելեացս՝ բուրեսցի հոտ կենաց քոց, միշտ առ քեզ պաղատիլ և աղաչել և երկիրպագանել՝ բաղխմամբ կրծից, տարածմամբ ձեռաց, տառանմամբ մատանց, կականմամբ ձայնից, հառաչմամբ սրտից, հեծութեամբ ողբոյ, արտասուօք աչաց, յայտնութեամբ գաղտնեաց, խոստովանութեամբ մեղանաց, և ի քէն ընդունիլ թողութիւն սխալանաց, քաւութիւն յանցանաց, հանդիստ փառաց, և զուարճանալ տեսութեամբ աչաց, և վայելել ի փառս երրեակ անձնաւորութեանդ յաւիտենից յաւիտեանս. ամէն։

Տէր Առաքել վարդապետի ասացեալ ներբողեան
ի սուրբ Գրիգոր Նարեկացին։

Երիւական լոյս երկնային, Յիսուս Քրիստոս հօր միա-
ծին, լեր շնորհիւ քո անքնին, զսուրբ Գրիգոր Նարեկացին։
Ընդլեալ աղբիւր անհիւթական, անճառ հոգւովդ աստ-
ուածական, մեղուցելոց յոյս փրկութեան, յանցաւորաց ազ-
գի մարդկան։

Գանձ անսպառ անապական, աննիւթ նիւթով շարադրա-
կան, զի որք առնուն փարթամանան, շահով երկնից ար-
քայութեան։

Գեղ խոցելոց ի բանսարկուէն, և անջատումն ի չար ախ-
տէն, մեզ օգնական լինի և ղէն, ընդդէմ այսոց նետա-
ձգողէն։

Երանելի տէր սուրբ Գրիգոր, դուռըն բացեր մեզ հոգե-
ւոր, ուսոյց ցուցեր մատոյ բոլոր, բանիւ քոյին արդիւնաւոր։
Օ՜արքայն երկնից աչօք տեսար, զհոգին աստուած սուրբ
ընկալար, հօրըն լուսոյ ուռ կազմեցար, յորմէն Քրիստոս
պատուաստեցար։

Ի՜ին հերովըն մաքրեցար, անտես բոցովըն վառեցար, ընդ
աստուծոյ խօսակցեցար, մեղուցելոց ցուցեր դու ճար։
Ընտրեալ ծաղիկս ի սուրբ գրոց, հաւաքեցեր ի մի շարոց,
դեղ կազմեցեր հիւանդ հոգւոց, պարգեւեցեր ձիր մարդ-
կայնոց։

Թախանձանաց բանս լալագին, բարբառեցար դու ի խորին,
խորտակեցեր զժանիս չարին, զդիւաց զընդին Լեգէօնին։
Ժամանակաւ յետին ցուցար, քան զառաջինսըն պատուե-

ցար, յերկկոյիս լոյս ծագեցար, քան զմիջօրեայ պայծառացար,

Համաստեղեաւք քո անքնին, անրիծ վարուքդ իսկ ի մարմին, եղեր պարծանք տանս Աբրամին, ազգանազան ազգ սրմնին:

Լուսաւորչին համանըման, Գրիգորիոս արթուն անուան, զի որք նովաւ ի լոյս դարձան, եւս առաւել քեւ ցնծացան: Յաջակալ մարմնով ընդ Քրիստոսի, զօրհանապազ միշտ յաղթի, Գրիգորիոս լոյս գերարփի, լուսաւորիչ մեզ ի հոգի: Ծաղիկ յաշնան ժամ յայտնեցար, անմահութեան հոտ բուրեցար, Գրիգորիոս ծառ ծաղկեցար, պտուղ կենաց պարգեւեցար:

Կեանք մեղուցեալ մարդկան ցուցեր, յուսահատից լոյս կանգնեցեր, Գրիգորիոս բանս երգեցեր, յանցաւորաց կանոնս եդեր:

Ազգըդն ջարին անխըղճի, որ ընդ մարդկան պատուհասի, Գրիգորիոս, սուր ներկայի, սուրբ աղօթիւքդըդ խորտակի: Զայնիւ քոյին հրսկոզական, սանդարամետն ահիւ դողան, Գրիգորիոս դու աննման, հոգանութեամբ բնութենան մարդկան: Զամբարտաւան ձեռանէ փառաց, ի գաւառին ըստ ըշտեւնաց, քան զարեգակն ընդ աստեղաց, նոյնպէս բան քո ընդ այլ կտակաց:

Ձըրագ եղեալ յաշտանակի, ըստ հրամանի տեառն Յիսուսի, Գրիգորիոս մարմնով յերկրի, հոգւով ի դասս հրեղէն զընդի.

Աշտահոսան հոգւովն անձառ, յարմարեցեր բանիւ մեզ ձառ, Գրիգորիոս մըտաք պայծառ, փարատեցեր զմեղաց մըռայլ:

Ցանեզ լուսոյդ լոյս կոչեցար, յաշտանակի մարմնոյդ եղար, եկեղեցւոյ Ջահ վառեցար, խառար հոգւոց դու լուսարար:

Նախանձաւոր հարանց վարուց, ճգնաւորաց նախնի դասուց,
Գրիգորիոս ցանկ խրատուց, բանս խօսեցար վասն նոցունց:
Շառաւիղօք բարեբնական, առեր շնորհս և դաւաղան, քա-
րոզ լինել որդւոց մարդկան, կոխելով զձեն անդընդական:
Ուրախանան յաւէժական, ազգըս Հայոց Թորգոմական, յոր-
ժամ լեան զքո խօսեալ բան, որ զեղ կենաց է փրկութեան:
Զարին յաղթեմք քոյին երդով, և զնա ուժգին խոցոտելով,
զըսպիս մեղաց մեր մաքրելով, քաղցրանուագ այսու դեղով:
Պարուց վերնոյն հրաւիրեալն, եղեր մարմնով հաճանըման,
Գրիգորիոս կանդնեալ արձան, ըզըշտեալ ծոմն յանդիման:
Ջնջեալ ի մէնջ զաղտըս մեղաց, սուրբ աղօթիւք քո յո-
ւթնկաց, Գրիգորիոս տեղ պանծանաց, ակն լուսոյ հա-
յաստանեայց:

Ոտին կենաց մեզ կազմեցեր, առատապէս մեզ բաշխե-
ցեր, Գրիգորիոս կոչ արարեր, զքաղցեալս հոգւով կերա-
կրեցեր:

Սուրբ և մաքուր բանից քոյին, այլասեռից ազգ ցանկալին,
եռափափաք սիրով եկին, և գծագրեալ առեալ գնացին:
Վըշտացելոց դու մխիթար, և նեղելոց անդորրարար, ակը
սուրբ Գրիգոր հայր բարեբար, այսահարից դեղ և հընար:
Տաղանդ շնորհաց զոր ընկալար, բազմապատիկ զայն շահեցար,
Գրիգորիոս կատարեալ այր, աստուածութեանըն կամարար:
Բամից ստեղծչին դու խօսակից, ճգնաւորաց աղօթակից,
վարդապետաց հանուրց վարժից, Գրիգորիոս պետ բազմաց:
Յնծան մանկունք սուրբ հաւատոյ, ընդ լուսակիր աղօթըս քո,
Գրիգորիոս դու սիւն լուսոյ, հայաստանեայց եկեղեցւոյ:
Խնդանդ հոգւոցըս մարդկային, բարեխօսեա առաւել քան զմեզ
սուրբ աղօթից քոց կցորդին, բանք տիրամօր ասպուա-
ծածնին:

Փայտըն կենաց սրբոյ խաչին, և ձայն սրբոյ Կարապետին, Ստեփաննոսին՝ սուրբ Գրիգորին, յորմէս լուսոյ զմեզ ծնողին: Ահա ըզՔրիստոս փառաբանեմք, ընդ հօր հոգւով երկրպագեմք, Հրեշտակութեանն փառս վերիրգեմք, աստուածութեամբ մի դաւանեմք:



պետական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
ի. ան. Ա. Մյասնիկյան



ԱԽԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մատթէոսի

ՏԻՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլեացւոց. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա՝ և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ և զամենայն ախտս ի ժողովրդեանն: Եւ էլ լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէս պէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա: Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլէէ և ի Դեկապօլեայ և Երուսաղէմ և ի Հրէաստանէ, և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա:

Այլ երբեւ էջ ի լեռնէ անտի, դնացին զնի նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկիրպագանէր նմա, և ասէր. տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել: Զգեաց զձեռն իւր և հասոյց ի նա Յիսուս՝ և ասէ. կամիմ, սրբեաց. և վազվազակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն: Եւ ասէ ցնա Յիսուս, զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային. և մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա:

Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, և ասէր. տէր, մանուկ իմ անկեալ հայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ: Ասէ

ցնա Յիսուս. նա եկիր՝ և բժշկեցից զնա: Պատասխանի նա հարիւրապետն և ասէ. տէր, չեմ բաւական՝ եթէ ընդ կա- կաւ իմով մտցես. այլ ասա բանիւ, և բժշկեսցի մանուկն իմ: Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս, ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա զայս՝ և առնէ: Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցայնոսիկ՝ որ ընդ հետեւն երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ Իսրայէլի այս- պիսի հաւատս գտի երբէք: Այլ ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից և յարեւմտից եկեսցեն՝ և բազմասցին ընդ Ա- բրահամու և ընդ Սահակայ՝ և ընդ Յակոբու յարքայութեան երկնից: ԵՒ որդիքն արքայութեան ելցեն ի խաւարն ար- տաքին. անդ եղիցի լալ և կրճել առամանց: ԵՒ ասէ Յի- սուս ցհարիւրապետն. երթ, և որպէս հաւատացեր եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն ծառայ յաւուր յայնմիկ: ԵՒ ե- կեալ Յիսուս ի տուն Պետրոսի,ետես զի զրաքնէ ծառայ անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ ծառայ՝ և երթող զնա ջերմին. յոտն եկաց՝ և պաշտէր զնա: Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և հան զայս- սոն բանիւ. և զամենայն հիւանդան բժշկեաց: Օ՛ի լցի բանն, որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի. նա զհի- ւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ: ԵՒ իբրեւ անց յայնկոյս լերինն զերծեսացոյց, պատասխանին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ: ԵՒ ահա աղաղակեցին և ասեն. զի՞ կայ մեր և քո Յիսուս որդի աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: Եւ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական: ԵՒ դեւքն աղաչէին զնա և ասէին. եթէ հանես զմեզ ասէ, հրամայեա մեզ երթալ յերամակ խոզից: ԵՒ ասէ

ցնոսա. երթայք, և նոքա եկեալ գնացին յերամանին խողից. և դիմեաց ամենայն երամանին ի գարէ անտի ի ծով, և մեռան ի ջուրսն: Եւ խոզարածքն փախեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, և զերս դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ առաջ Յիսուսի. իրրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի գնասցէ ի սահմանաց նոցա:

Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս, և եկն ի քաղաք իւր: Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ գնէր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Քաջալ լեր որդեակ քո: Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միմս. հայհոյէ դա: Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր: Զի՞նչ գիւրին է. ասել՝ Թողեալ լինին քեզ մեղք քո, թէ ասել արի և շրջեաց: Եայլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի Թողել զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՛ առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո: Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր: Իրրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւորեցին զաստուած զտուեալն այնպիսի իշխանութիւն՝ մարդկան:

Ա՚ինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր. դուստր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դիցես զձեռն քո ի վերայ նորա՝ և կեցցէ: Յարեաւ Յիսուս՝ և գնաց զկնի նորա ա շակերտաքն հանդերձ: Եւ ահա կին մի տասներկոսամանամեայ՝ մատուցեալ կիտոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձից նորա: Վասն զի ասէր ի մտի իւրում, թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ: Ետ Յիսուս իրրեւ դարձաւ և ետես զնա՝ ասէ. քաջալերեաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ի ժամին յայնմանէ: Իրրեւ

ևկն Յիսուս ՚ի տուն իշխանին, և եահս զփողարան և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. ՚ի բաց գնացէք, զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ: Եւ ծաղր առնէին զնա: Եւ իբրեւ եհ ամբոխն ՚ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն: Եւ եհ համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն:

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զկնի եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ և ասէին. ողորմեաց մեզ որդի Դաւթի: Եւ իբրեւ ևկն ՚ի տուն, մատեան առ նա կոյրքն. և ասէ ցնոսա Յիսուս. հաւատայք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն ցնա՝ այո, տէր: Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք նոցա. և սաստեաց նոցա Յիսուս՝ և ասէ. զգոյշ կացէք՝ մի՛ ոք գիտասցէ: Եւ նոքա ելեալ համբաւեցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն: Եւ յելանելն նոցա արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւահար: Եւ յելանելն դիւին՝ խօսեցաւ համրն. և զարմացան ժողովուրդքն՝ և ասեն. թէ և ոչ երբէք երեւեցաւ այսպիսի ինչ ՚ի Իսրայէլի: Իսկ փարիսեցիքն ասէին, թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս:

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ գիւղս. ուսուցանէր ՚ի ժողովուրդս նոցա, և քարոզէր զաւետարանն արքայութեան. և բժշկէր զամենայն ախտս և զամենայն հիւանդութիւնս ՚ի ժողովրդեանն: Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ՚ի նոսա. զի էին աշխատեալք և ցրուեալք իբրեւ զոչխարս, որոց ոչ իցէ հովիւ: Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր. հունձք բազում են՝ և մշակք սակաւ: Աղաչեցէք զտէր հնձոյ՝ զի հանցէ մշակս ՚ի հունձս իւր: Եւ կոչեցեալ առ ինքն զերկոտասանեակսն աշակերտսն իւր, եառ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս;

Եւ գնացեալ անտի Յիսուս եկն ի ժողովուրդն նոցա։ Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր զօսացեալ էր. հարցին ցնա՝ և ասեն, եթէ արդեօք իցէ ի շաբաթու բժշկել. զի չարասցեն զնմանէ։ Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի, և անկանիցի այն ի խորխորատ ի շաբաթու. միթէ ոչ ունիցի և յարուցանիցէ զնա։ Իսկ արդ՝ որչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս գործել։ Յայնժամ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղեւ ողջ իբրեւ զմիւսն։ Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն զնա։

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասէին. միթէ սա իցէ Քրիստոսն որդի Դաւթի։ Իսկ փարիսեցիքն իրրեւ լուան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Ահեղզեբուղաս իշխանաւն դիւաց։

Եւ ելեալ անտի Յիսուս գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի։ Եւ ահա կին մի քանանացի ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակեր և ասէր. ողորմեաց ինձ, տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար այսահարի։ Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր։ Նա պատասխանի ետ և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ չխաւոս կորուսեալս տանն Իսրայէլի։ Եւ նա մատուցեալ երկիրպագանէր նմա և ասէր, տէր, օգնեա ինձ։ Պատասխանի ետ նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ և արկանել շանց։ Եւ նա ասէ. այո, տէր, քանզի և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց։ Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս և ասէ.

ով կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս: Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու:

Եւ գնացեալ անտի Յիսուս, եկն ի ծովեզրն գալիլեացւոց. և ելեալ ի լեառն նստէր անդ: Ա՝ատեան առ նա ժողովուրդք բազումք որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս կոյս համեմս միակողմանիս, և այլ բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա: Ա՝ինչեւ զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համերբն խօսէին, կաղք գնային, միակողմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւոր առնէին զաստուած Իսրայէլի:

Եւ իրրեւ եկն ի ժողովուրդն, մատեաւ այր մի՝ ի ծունր իջանէր և ասէր. տէր, ողորմեաց որդւոյ իմում, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ի հուր՝ և երբէք ի ջուր: Եւ մատուցի զնա աշակերտացն քոյ՝ և ոչ կարացին բժշկել: Պատասխանի եւ Յիսուս՝ և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ ցերբ իցեմ ընդ ձեզ՝ մինչեւ ցերբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս. և ածին զնա առ Յիսուս: Եւ սաստեաց զնա Յիսուս՝ և ել ի նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ: Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս. մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա: Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ: Ա՝մէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ: Այլ այս ազգ ոչ ելանի՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք:

Եւ յելանելն նոցա Գալիլեացւոց, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա կոյրք երկու նստէին առ ճանապարհաւն. իրրեւ լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողորմեաց մեզ, Յիսուս, որդի Դաւթի: Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա եւս ա-

ուսել աղաղակէին և ասէին, տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի: Զատեղ առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ: Ասեն ցնա. տէր, զի բացցին աչք մեր. և գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա:

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Մարկոսի

ՏԷՐԱՄՐ ՄԵՐՈՎ ՅԻՍՈՒՍԻՒ ՔՐԻՍՏՈՍԻ

Եւ մտանէն ի Կափառնաում, և իսկ և իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա. և զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր ըզնոսա իբրեւ իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն: Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում այս պիղծ գոյր ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ. Թոյլ տուր, զի կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ով ես սուրբդ աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս և ասէ, կարկեաց և ել ի դմանէ: Եւ զարկոյց զնա այն պիղծ և աղաղակեաց ի ձայն մեծ, և ել ի նմանէ: Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հցծել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին նմա: Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն գաւառիցեայ:

Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն, եկն ի տուն Սիմոնի և Անդրեայ՝ յակոբու և յովհաննու հանդերձ. և զքանչ Սիմոնի զնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա: Մատուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա. և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնա:

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս ի սէս սէս ախտից, և դեւս բազումս եհան, և ոչ տայր խօսել զնոսայն, զի գիտէին զնա թէ Քրիստոս է:

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս: Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ և որ ընդ նմանն էին. և իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդրեն զքեզ. և ասէ ցնոսա. եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ: Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն գալիլեացիս, և դեւս հանէր: Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր իջանէր՝ և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Իսկ Յիսուս զթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ ի նա՝ և ասէ ցնա, կամիմ, սրբեաց: Եւ իբրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ: Եւ առաքեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ: Օ՛գոյշ լեր՝ մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց զքեզ քահանային. և մատո վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց:

Եւ մտեալ դարձեալ ի Կափառնաում յետ աւուրց, լուր եղեւ եթէ ի տան է: Եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն: Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից. և իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զտարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն

իջուցին զմահիճն յորում կայր անդամալոյծն: Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ լինին քեզ մեղք քո: Եւ էին ոմանք ի գրոց անտի՝ որ անդ նստէին. և խորհէին ի սիրտս իւրեանց. զինչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ոչ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի աստուած: Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞նչ խորհիք զայդ ի սիրտս ձեր: Զինչ գիւրին է. ասել ցանդամալոյծն՝ թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի, առ զմահիճս քո և երթ ի տուն քո: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն. քեզ ասեմ, արի, առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո: Եւ յարեաւ վազվազակի առեալ զմահիճսն, և առաջի ամենեցուն. մինչդեռ զարմանալ ամենեցուն՝ և փառաւորէ առնել զաստուած՝ և ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք:

Եւ ելեալ միւսանգամ ի ժողովուրդն, և էր անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր: Եւ սպասէին նմա՝ եթէ բժշկիցէ զնա ի շաբաթուն՝ զի չարաիսօսեսցեն զնմանէ: Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ էր. արի, անց ի մէջ. և ասէ ցնոսա. զի՞նչ արժան է ի շաբաթու, բարի՞ զործել՝ եթէ չար առնել, օգի մի սպրեցուցանել՝ եթէ կորուսանել. և նոքա լռէին: Եւ հայեցեալ Յիսուս զնոքօք լի ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն նորա: Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հերովդիանոսաքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նորա՝ թէ զիարդ կորուսցեն զնա:

Իսկ Յիսուս աշակերտաքն իւրովք գնաց ի ծովեզրն. և բազում ժողովուրդ ի գալիլեացւոց երթային զետ նորա. և

ի Հրէաստանէ, և Երուսաղէմէ, և յամենայն Յորդանանէ, և որք ի Տիւրոսէ և ի Սիդոնէ. բազում ժողովուրդ իրրեւ լսէին որչափ ինչ առնէր, գային առ նա: Եւ ասէ ցաշակերտան իւր, զի նաւակ մի պատրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի նեղիացեն զնա: Քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ խառնել զնովաւ՝ զի մերձենային առ նա. որք ունին ախտս ինչ: Եւ այսք պիղծք յորժամ տեսանէին զնա, անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին. Թէ դու ես որդին աստուծոյ. և նա յոյժ սաստկր նոցա, զի մի յայտնի առնիցեն զնա:

Եւ ելն յայնկոյս ծովուն յաշխարհն գերգեսացւոց. և ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պատահեաց նմա այր մի ի գերեզմանացն՝ զոր ունէր այս պիղծ. որոյ և բնակութիւն իւր իսկ ի գերեզմանս էր. և ոչ շղթայիւք ոք եւս կարէր կապել զնա. վասն բազում անգամ ոտնակապք և շղթայիւք կապիլոյ, և խզելոյ ի նմանէ շղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանապազ զցայգ և զցերեկ ի գերեզմանս և ի լերինս աղաղակէր, և կոծէր զանձն իւր քարամբք: Իրրեւ ետես զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ և երկիրպագ նմա: Աղաղակեաց ի ձայն մեծ՝ և ասէ, զի կայ իմ և քո՝ Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ. երդմնեցուցանեմ զքեզ յաստուած, մի տանջեր զիս: Քանզի ասէր ցնա. Ել այսպ պիղծ ի մարդոյ այսի. և հարցանէր ցնա՝ Թէ զի՞նչ է անուն քո. և ասէ ցնա Լեգէոնն անուն է իմ, քանզի բազումք եմք: Եւ աղաչէին զնա յոյժ, զի մի առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխարհն: Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց արօտական մեծ: Աղաչեցին զնա ամենայն դեւքն և ասեն. առաքեա զմեզ ի խոզսն, զի մտցուք ի նոսա: Եւ հրամայեաց նոցա. և իրրեւ ելին այսքն պիղծք՝ մտին ի խոզսն, և

դիմեաց երամակն ի դարէ անտի ի ծովն. էին իբրեւ երկու հազարք, և հեղձնուին ի ծովուն: Եւ խոզարածքն փախեան, և պատմեցին ի քաղաքին և յագարակս, և ելին տեսանել զինչ էր՝ որ գործեցաւն: Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւահարն՝ զի նստեր զգեցեալ և զգաստացեալ, որ ուներ զլեգէոնն, և զահի հարան: Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն էր, թէ զինչ եղեւ այսահարին, և զինչ վասն խոզինն: Եւ սկսան աղաչել զնա գնալ ի սահմանաց նոցա: Եւ իբրեւ եմուտ նա ի նաւն, աղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա էիցէ. և Յիսուս ոչ եա նմա թոյլ, այլ ասէ ցնա. երթ ի տուն քո առ ընտանիս քո, և պատմեա նոցա, որ ինչ միանգամ տէր արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ: Եւ չոքաւ՝ և սկսաւ քարոզել ի Դեկապողիս, զոր ինչ արար նմա Յիսուս, և ամենեքին զարմանային:

Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծովեզերբն: Եւ ահա մի ի ժողովրդապետացն գայր, որում անուն էր Յայրոս. և իբրեւ տեսս զնա՝ անկաւ առ ոտս նորա. աղաչէր զնա յոյժ և ասէր, թէ դուստր նորա մերձ է ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձեռն, որպէս զի ապրեսցի և կեցցէ: Եւ գնաց ընդ նմա. երթայր և ժողովուրդ բազում զկնա նորա, և նեղէին զնա: Եւ կին մի էր ի տեառատեսութեան արեան զբսան տարի. և յոյժ վշտացեալ ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն՝ և չէր ինչ օգտեալ, այլ եւս առաւել զայրացեալ: Իբրեւ լուաւ զՅիսուսէ՝ եկն ի միջ ամբոխին յետոյ՝ և բուռն եհար զհանդերձ նորա. քանզի խորհէր ի մտի, թէ միայն մերձեցայց ի հանդերձս նորա, փրկեցայց: Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա. և գիտաց ի մարմնի իւր թէ բժշկեցաւ ի տանջանացն: Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօրութիւնն

որ եւ ի նմանէ, դարձաւ յամբոխն եւ ասէ. ով մերձեցաւ ի հանդերձս իմ: Եւ ասեն ցնա աշակերտքն, տեսանես՝ զի ամբոխք նեղէ զքեզ, և ասես՝ թէ ով մերձեցաւ ի հանդերձս իմ: Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ով զայն արար: Եւ կինն զարհուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար. քանզի գիտէր զինչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն իրան ստուգութեամբ: Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ի տանջանաց քոց:

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ի տանէ ժողովրդապետին, և ասեն՝ թէ դուստրն քո մեռաւ, զի եւս աշխատ առնես զվարդապետդ: Իսկ Յիսուս իբրեւ լուաւ բանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն. մի երկնչիր, բայց միայն հաւատա. և ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ զեղբայրն Յակոբայ: Գայ ի տուն ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալագանս, և աղաղակ յոյժ. և մտեալ ի նոսա՝ ասէ ցնոսա. զի խռովեալ էք և լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ. և ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա որ ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն. և կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա. տալիթա կումի, որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ, արի. և վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ամաց իրեւ երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք: Եւ պատուիրէր տալ նոցա յոյժ, զի մի ոք գիտասցէ զայն. և ասաց տալ նմա ուտել:

Եւ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գաննեսարէթ. և իբրեւ ելին ի նաւէ անտի՝ իսկ և իսկ ճանեան զնա ա՛յր տեղւոյն այնորիկ. և ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ

լեկ. և ուր և մնանէր ի ղեօղս կամ ի քաղաքս կամ յագա-
րակս, ի հրապարակս դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա՝
զի գոնէ ի քղանցս հանդերձից նորա մերձենայցին. և որ
միանգամ մերձենայնն՝ փրկէին։

Եւ անտի յարուցեալ՝ եկն ի սահմանս Տիւրոսի և Սի-
դոնի. և մտեալ ի տուն՝ ոչ ուրուք կամէր յայտնել, և ոչ
կարաց ծածկել։ Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր
նեղեալ էր յայսոյ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա. և կինն
էր հեթանոս՝ փիւնիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի
զդեւն հանցէ ի դստերէ նորա։ Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ
տուր՝ նախ յագեցին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ
զհաց մանկանց և արկանել շանց։ Նա պատասխանի ետ և
ասէ. տէր, և շունք ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին.
և ասէ ցնա. վասն այդր բանի երթ, էլ դեւն ի դստերէ
քումմէ։ Գնաց ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն, և ըզ-
դուստրն, զի անկեալ դնէր ի մահիճս։

Եւ ելեալ միւսանգամ ի սահմանացն Տիւրոսի և Սիդոնի,
և եկն ի ծովեզերն գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի Դե-
կապօլիս։ Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր. և ա-
ղաչէին՝ զի ձեռն դիցէ ի վերայ նորա. և առեալ զնա մե-
կուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝
և եթուք անդր. և կալաւ զլեզուէ նորա. հայեցաւ յերկինս՝
յոգւոց եհան՝ և ասէ. Եփփաթայ՝ որ է բացիր. և նոյնժա-
մայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա.
և խօսէր ուղիղ։ Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել
քարոզէին. և եւս քան զեւս զարմանային և ասէին. զամե-
նայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և հա-
մից խօսել։

Գնաց ի Ղեկապօլիտա. և ածեն առաջի նորա կոյր մի, և

աղաչէին զնա՝ զի մերձենայի ի նա. և առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուք յաչս նորա, և ձեռն եդ ի վերայ նորա. և հարցանէր զնա՝ թէ տեսանիցէ ինչ: Նայեաւ՝ և ասէր. տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին իբրեւ զծառս: Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա՝ եբաց, և տեսանէր. ողջացաւ՝ և տեսանէր համարձակ զամենայն: Ընդակեաց զնա ի տուն իւր՝ և ասէ. ի շէնդ մի մտանիցես, այլ երթ ի տուն քո. և յորժամ ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես ի շինին:

Եւ եկեալ առ աշակերտան, տեսին ամբոխ շուրջ զնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա: Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա: Եւ հարց ցնոսա՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ նոսա: Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն և ասէ. վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր, և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա. և փրփրէ՝ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտան քո զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա: Պատասխանի ետ նոցա և ասէ. ով ազգ անհաւատ՝ մինչեւ յե՞րբ իցեմ առ ձեզ. մինչեւ ցե՞րբ անասցեմ ձեզ. ածէք զնա առ իս: Եւ ածին զնա առ նա. իբրեւ տեսս զնա այն, վաղվաղակի շարժեաց զնա, և անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր: Եհարց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղեւ դմա. և նա ասէ. ի մանկութենէ. բազում անգամ ի հուր արկանէ զդա և ի ջուր՝ զի կորուսցէ. արդ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ տէր՝ գթացեալ ի վերայ մեր: Եւ Յիսուս ասէ ցնա. ասացեր թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ և ասէ. հաւատամ, տէր՝ օգնեա անհաւատութեանս իմում: Իբրեւ ետես Յիսուս՝

եթէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսոյն պղծոյ և ասէ. համրդ և խուլ այս՝ ես տամ քեզ հրամայեմ, ել ի դմանէ, և այլ եւս մի մտանիցես ի դա: Եւ աղաղակեաց՝ և յոյժ լկեաց զնա, և ել. և եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմայ իսկ ասել թէ մեռաւ. և Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, և կանգնեցաւ: Եւ իբրեւ եմուտ նա ի տունն, աշակերտքն առանձինն հարցին զնա. մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա: Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահովք և աղօթիւք:

Եւ գան յերիքով. և ընդ ելանելն նորա յերիքովէ աշակերտաքն՝ և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի: Իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել, որդի Դաւթի Յիսուս՝ ողորմեաց ինձ: Եւ սաստէին նմա բազումք զի լռեսցէ. և նա առաւել եւս աղաղակէր. որդի Դաւթի ողորմեաց ինձ: Օ՛տեղի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա, կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեաց, արի՛ կոչէ զքեզ: Եւ նորա ընկենլով զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս: Պատասխանի եւ նմա Յիսուս և ասէ. զի՞նչ կամիս թէ արարից քեզ. ասէ ցնա կոյրն. րաբբունի՛ զի բացայց: Եւ Յիսուս ասէ ցնա, երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա ի ճանապարհին:

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Ղուկասու

ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ էջ ի Կափառնաում՝ ի քաղաքն գալիլեացւոց և ու-
սուցանէր զնոսա ի շաբաթին. և զարմանային ընդ վարդա-
պետութիւն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա: Եւ
էր ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւ պղծոյ, և
աղաղակեաց ի ձայն մեծ, ասէ. Թո՛ւլացո, զի՞ կայ մեր և
քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ
զքեզ՝ ո՞վ ես սուրբդ աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս
և ասէ. պապանձեաց և ել ի դմանէ. զգեանեաց զնա գետն
ի մէջն անդ՝ և ել ի նմանէ, և ինչ ոչ վնասեաց նմա: Եւ
եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս
և ասէին. զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրու-
թեամբ սաստէ այսոցպղծոյ՝ և ելանեն: Եւ երթայր հռո-
չակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառսն:

Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի, եմուտ ի տունն Սի-
մոնի: Օդբանչ Սիմոնի տապնատէր ջերմամբ մեծաւ, և
աղաչեցին զնա վասն նորա: Եկաց առ նմա՝ սաստեաց ջեր-
մանին, և եթող զնա. և վազվազակի յարեաւ և պաշտէր
զնա: Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին հի-
ւանդք ի պէս պէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա. և նա իւ-
րաքանչիւր ումեք ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա.
ելանէին դեւք ի բազմաց, աղաղակէին և ասէին. եթէ դու
ես որդի աստուծոյ. և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թող
խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոս է:

Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի քաղաքացն, ահա այր մի
ի բորոտութեամբ լիրեւ առեալ զՅիսուս՝ անկեալ ի վերայ

երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. տէր, եթէ կամիս կարող ես զես սրբել: Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ի նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն: Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ երթ, ցոյց զանձն քո քահանային. և մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա: Եւ յորդեր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց. և նա խոյս տայր յանապատս տեղիս, և կայր յաղօթս:

Եւ եղեւ ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց գալիլեացւոց՝ և հրէաստանի և երուսաղէմի. և զօրութիւն տեառն էր ի բժշկել զնոսա: Եւ ահա արք բերէին մահճակք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել ի ներքս՝ և դնել առաջի նորա: Եւ իրրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիս և ի ցուցն կախեցին զնա, և իջուցին մահճակն հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք քո: Սկսան խորհել գրիչքն և փարիսեցիքն, և ասեն. ո՞ է սա որ խօսի զհայհոյութիւնս, ոչ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն աստուած: Իրրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞ խորհիք ի սիրտս ձեր: Ո՞րինչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի առ զմահճակդ քո՝ և երթ ի տուն քո. և առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զնեբեւ յորոյ վերայ անկեալ գնէր, գնաց ի տուն իւր, և փառաւորէր զաստուած: Զարմանք

կալան զամենեսեան, և փառաւոր առնէին զաստուած. լի եղեն ահիւ, և ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշան:

Եւ եղեւ ՚ի միւսում շաբաթուն մնանել նմա ՚ի ժողովուրդն՝ և ուսուցանել. և էր անդ այր մի՝ և ձեռն իւր աջ գօսացեալ էր: Եւ սպասէին նմա դպիրքն և փարիսեցիք՝ թէ ՚ի շաբաթուն բժշկիցէ, զի գտանիցեն չարախօսութիւն ըզնմանէ. և նա գիտէր զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ էր. արի անդ ՚ի մէնջ. և նա յարուցեալ եկաց: Ասէ ցնոսա Յիսուս. հարցից ինչ զձեզ. զի՞նչ արժան է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, ոգի՞ մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել: Եւ հայեցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա. ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նորա իբրեւ զմիւսն: Եւ նոքա լցան յիմարութեամբ, և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի:

Եւ էզեալ նոքօք հանդերձ ՚ի տեղի մի տափարակ. և ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յամենայն Հրէաստանէ և Երուսաղէմէ և յայնմ կողմանէ՝ և ՚ի ծովեզերքն Տիւրոսի և Սիդոնի. որ եկին լսել ՚ի նմանէ՝ և բժշկել ՚ի հիւանդութենէ իւրեանց. և նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին. և ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ՚ի նա, զի զօրութիւն բազում ելանէր ՚ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին:

Եւ իբրեւ կատարեաց զամենայն զբանս իւր ՚ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ՚ի Կափառնաում: Հարիւրապետի ումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ՚ի վախճանել, որ էր նմա պատուական: Եւ իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ՚ի հրէից, աղաչէր զնա՝ զի եկեսցէ և ապրեցուսցէ զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ասելով՝ և ասէին, թէ արժանի է՝ որում ըզ-

շնորհս զայս առնես։ Օ՜ի սիրէ զազգս մեր, և զժողովրդա-
նոցն նա շինեաց մեզ։ Եւ Յիսուս գնաց ընդ նոսա։ Իբրեւ
ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրա-
պետն բարեկամս, և ասէ ցնա. տէր մի ինչ աշխատ լինիր,
զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես։ Վասն
որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի՝ առ քեզ գալոյ. այլ
ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ. քանզի և ես այր մի
եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զին-
ուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում թէ եկ,
և գայ. և ծառայի իմում թէ արա զայս, և առնէ։ Եւ
իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողո-
վուրդն որ երթայրն զնա նորա՝ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝
թէ և ոչ Իսրայէլի այսչափ հաւատս գտի։ Եւ դարձան
անգրէն պատգամաւորքն ի տուն, և գտին զծառայն հի-
ւանդ՝ բժշկեալ։

Եւ եղեւ ի վաղիւն երթայր ի քաղաք մի, որում անուն
էր Նային. երթայրն ընդ նմա և աշակերտք նորա և ժողո-
վուրդք բազում։ Իբրեւ մերձ եղեւ ի դուռն քաղաքին, և
ահա ելանէր մեռեալ մի որդի միամօր մօր իւրոյ, և նա էր
այրի. և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։ Իբրեւ
եռես զնա տէր՝ գթացաւ ի նա և ասէ. մի լար։ Եւ մա-
տուցեալ մերձեցաւ ի դագաղն. և որք բարձեալ տանէին՝
զտեղի առին. և ասէ, պատանի դու՝ քեզ ասեմ՝ արի։
Յանդնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ
զնա ցմայր իւր։ Եւ ահ կալաւ զամենեսին, և փառաւոր
առնէին զաստուած՝ և ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յա-
րուցեալ է ի մէջ մերում, և եթէ այց արար աստուած
ժողովրդեան իւրում ի բարութիւն։ Եւ ել զոյգս այս ընդ
ամենայն Հրէաստան վասն նորա. և ընդ ամենայն կողմանս
աշխարհին։

Եւ պատմեցին Յովհաննու աշակերտքն իւր զամն ամենայնի այսորիկ: Եւ կոչեաց առ ինքն երիս ոմանս յաշակերտացն իւրոց՝ Յովհաննէս, առաքեաց առ տէր և ասէ. դո՛ւ ես որ գալոյն ես, եթէ այլում ակնկալացուք: Եւ ելեալ արքն առ նա՝ ասեն, Յովհաննէս Մկրտիչ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ. դո՛ւ ես որ գալոյն ես՝ եթէ այլում ակնկալացուք: Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս ի հիւանդութենէ և ի հարուածոց և չարոց ոգւոց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել: Պատասխանի ետ նոցա և ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէք և լուայք. զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. և երանի իցէ՝ որ ոչ գայթագղեսցի յիս:

Եւ նաեւեցին իջին յաշխարհն գերգեսացւոց. որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ: Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում կին դեւք. և բազում ժամանակս չէր հանգերձ զգեցեալ՝ և ոչ ի տան բնակեալ, այլ ի գերեզմանս: Եւ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ քո և քո Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի տանջեր զիս: Պատուիրէր ոգւոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապեր ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր ի դիւէն յանապատս: Եհարց զնա Յիսուս և ասէ. զի՞նչ է անուն քեզ. և նա ասէ, Լեգէովն. զի դեւք բազումք մտեալ էին ի նա: Եւ աղաչէին զնա՝ զի մի հրամայեսցէ նոցա երթալ յանդունդսն: Եւ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական ի լերինն, և աղաչեցին զնա զի հրամայեսցէ նոցա մտանել ի նոսա. և հրամայեաց նոցա: Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին ի

խոշևանն. և ելեալ երամային ի գահէ անտի ի Ծովային՝ և հնդձաւ: Իբրև տեսին խոշարաձքն զերան որ եղեն՝ փախեան, և պատմեցին ի քաղաքին և յազարսան: Եւ իբրև եկեն տեսանել զգործն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի գերեքն ելեալ էին, զդեցեալ և զգաստացեալ նստեր առ ոտն Յիսուսի, և երկեան: Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ Թէ զնաիրդ վրկեցաւ դիւահարն: Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմանիքն գերգեասցոյ՝ գնալ ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տաղնապէին. և նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն: Աղաչէր զնա այրն՝ ուստի գերեքն ելեալ էին՝ շրջել ընդ նմա, արձակեաց զնա՝ և ասէ. դարձ ի տուն քո, և պատմեա՝ զոր միանգամ արար քեզ աստուած. գնաց ի քաղաքն և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս:

Եւ իբրև դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան սպի ունէին նմա: Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի տուն նորա. զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրև երիտասանից. և էր մերձ ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա: Եւ կին մի էր ի տեառնասուրթեան արեան ամաց երիտասանից, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկիլ: Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա. և նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա: Եւ ասէ Յիսուս. ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս: Իբրև ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմանն էին. վարդապետ, ժողովուրդք զնդին և նեղեն զքեզ: Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն: Իբրև տես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դո-

ղալով և անկաւ առաջի նորա, թէ վասն ոչոյ իրաց մեր-
ձեցաւ ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և
թէ որպէս բժշկեցաւ առժամայն: Նա ասէ. քաջալերեաց,
դուստր. հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն:

Նա մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապե-
տին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի ինչ աշխատ
առներ զդա: Իսկ Յիսուս լսելով լուաւ, պատասխանի ետ
նմա՝ և ասէ. մի երկնչիր, միայն հաւատա՝ և կեցցէ: Նա
մաեալ ի տունն՝ ոչ զոք ներող մտանել, բայց միայն զՊետ-
րոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և
զմայր նորա: Լային ամենեքեան՝ և կոծէին զնա: Նա նա
ասէ. մի լայք՝ զի չէ մեռեալ՝ այլ ննջէ: Նա նոքա ծաղր
առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ: Նա նորա հանեալ
զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և
ասէ. արի, կաց մանուկ դու. և դարձաւ ոգի նորա, և կանգ-
նեցաւ վաղվաղակի, և հրամայեաց տալ նմա ուտել. և զար-
մացան ծնողքն նորա. և նա պատուիրեր մի ումեք ասել՝ որ
ինչ եղեւն:

Նա եղեւ ի վաղիւն մինչ իջանէին նոքա ի լեռնէ անտի,
ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում: Նա ահա այր մի
ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ, ա-
ղաչեմ զքեզ հայեաց յորդի իմ, զի միածին է ինձ. և ահա
այս հարկանի ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ և
թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ի նը-
մանէ խորտակեալ զնա. և աղաչեցի զաշակերտսն քո զի հանցեն
զնա, և ոչ կարացին: Պատասխանի ետ Յիսուս և ասէ.
ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ կիրը եղէց ընդ ձեզ՝ և
մնայցեմ ձեզ. մատո այսր զորդին քո: Նա մինչդեռ մատ-
չէր, զարկոյց զնա դեւն՝ և շարժեցոյց: Սաստեաց Յիսուս
ոգւոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն. և ետ զնա հօրն իւր:

Եւ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն առաւժոյ. և ի զարմանալ ամենեցուն ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտան իւր. դիք դուք ի լսելիս ձեր բանս զայսոսիկ. զի որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան:

Եւ հանէք զնա մի հատ. և եղեւ լինելոյ դիւին՝ խօսելոցա հատին, և զարմացան ամենայն ժողովուրդքն: Եւ ամենք ի նոցանէ ասեն. Ահեղդերեզա իշխանաւն դիւաց հանէ զա զդեւս: Եւ այլք փորձէին՝ և նշան յերկնից խընդրէին ի նմանէ: Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ Ահեղդերեզա իշխանաւն դիւաց հանէ զա զդեւս: Եթէ ես Ահեղդերեզա հանեմ զդեւս, որդիքն ձեր ի՞ն հանիցեն. վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք: Իսկ եթէ մատամբ աստուծոյ հանեմ զդեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն աստուծոյ: Յորժամ հզօր վառեալ պահիցէ զտուն իւր, ի խաղաղութեան են ինչք նորա: Այլ եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա, զպատառաքինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ էր, և զաւար նորա բաշխեսցէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ է իմ, և որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ: Յորժամ այսն ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ. և իբրեւ ոչ գտանէ, ասէ. դարձայց անդրէն ի տուն իմ ուստի ելի: Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ: Յայնժամ երթայ և առնու եօթն այլ այսու չար եւս քան զինքն՝ և մտանէ բնակի անդ, և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն: Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, ձայն երարձ կին մի ի ժողովրդենէ անտի և ասէ. երանի է որովայնին՝ որ կրեացն զքեզ

և սահմանն՝ որ դիեցուցին զքիզ: Եւ նա ասէ. Նա եւթանիւ պտղովիկ է, որ լանն զբանն աստուծոյ, և առնէն:

Եւ ուսուցանէր ի միում ժողովրդանոցացն ի շաբաթս: Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութետասն. և էր կարկամեալ, և ոչ կարէր ամենեւին ի վեր հայել: Եւ տեսեալ զնա Յիսուսի՝ կոչեաց առ ինքն՝ և ասէ ցնա. կին դու՝ արձակեալ ես ի հիւանդութենէդ քումմէ: Եւ եդ ի վերայ նորա ձեռն, և առժամայն ուղղեցաւ, և փառաւորէր զաստուած: Պատասխանի ետ ժողովրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէր ի շաբաթու բժշկեաց Յիսուս, և ասէ ցժողովուրդն. վեց օր է՝ յորս արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, և մի յաւուր շաբաթու: Պատասխանի ետ նմա տէր՝ և ասէ. կեղծաւորք, իւրաքանչիւրդ ի ձէնջ ի շաբաթու ոչ արձակէ զէշն իւր կամ զէշ ի մսրոյ՝ և տանի ոռոգ ջուր: Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր. զոր կապեաց սատանայ ահաւադիկ ութետասն ամ, ոչ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու: Եւ զայս իրրեւ ասէր, յամօթ լինէին ամենեքին որ հակառակին կային նմա. և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ առաքնայն փառաւորութեանցն որ գործէին ի նմանէ:

Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց, և նորա ապահին նմա: Եւ ահա այր ումն էր անդ ջրդողեալ առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցօրէնսուրսն և ցփարիսեցիս. եթէ արժան իցէ ի շաբաթու բժշկել: Եւ նորա լուռ եղեն. և բռնեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, և արձակեաց: Եւ ասէ ցնոսա. որդի ուրուք ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի ի ջրհոր, և ոչ վազվազակի հանիցէ զնա յաւուր շաբաթու: Եւ ոչ կարացին տալ նմա պատասխանի առ այն:

Եւ եղեւ մինչ երթային նա յերուսաղէմ, և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և գալիլեացւոց: Եւ մինչդեռ մտանէր ի գիւղ ուրեմն, պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին ի հեռաստանէ, բարձին ձայնս՝ և ասեն. Յիսուս վարդապետ, ողորմեաց մեզ: Եւ երբեմն տես ըզնոսա, ասէ ցնոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայիցն. և եղեւ երբեմն գնային, առժամայն սրբեցան: Մի ոմն ի նոցանէ երբեմն տես՝ թէ բժշկեցաւ, դարձաւ անդրէն՝ ի ձայն մեծ փառաւորէ առնէր զաստուած. անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, և գոհանայր զնմանէ. և ինքն էր սամարացի: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. ո՞չ տասն սոքա սրբեցան, իսկ արդ՝ ինուանքն ո՞ւր են: Ո՞չ ոք գտան դառնալ տալ փառս աստուծոյ, բայց միայն այլազգիս այս: Եւ ասէ ցնա. արի, գնա. զի հաւատք քո կեցուցին զքեզ:

Եւ եղեւ ի մտանելն նորա յերկիրքն, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ: Երբեմն լուաւ զանցանել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զինչ իցէ այն: Եւ պատմէցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ: Ընդաղաղակեաց և ասէ. Յիսուս, որդի Դաւթի՝ ողորմեաց ինձ: Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա եւս առաւել աղաղակէր. որդի Դաւթի, ողորմեաց ինձ: Ո՞տեղի էառ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր. և երբեմն մերձ եղեւ առ նա, հարց զնա և ասէ. զի՞նչ կամիս գուս՝ զի արարից քեզ. և նա ասէ. տէր, զի բացցին աչք իմ՝ և տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ: Եւ առժամայն հասս, երթայր զհետ նորա՝ և փառաւորէ առնէր զաստուած. և ամենայն ժողովրդեանն տեսեալ, տայր գոհութիւն աստուծոյ:

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու

ՑԻՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՓՐԻՍՏՈՍ

Ու յետ երկուց աւուրց ել անտի և գնաց ի Գալիլեայ: Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց, եթէ մարգարէ ի հայրենի գաւառի պատիւ ոչ ունի: Երբ յորժամ եկն նա ի Գալիլեայ, ընկալան զնա գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր արար Երուսաղէմ ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին ի տօնն: Եկն գարձեալ ի կանա գալիլեացւոց՝ ուր արար զջուրն գինի. և անդ էր թագաւորն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնաում: Նա իբրեւ լուաւ եթէ Յիսուս եկեալ է ի հրէաստանէ ի Գալիլեայ, եկն առ նա՝ և աղաչէր, զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանել: Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանէք՝ ոչ հաւատայք: Ասէ ցնա թագաւորացն. տէր, էջ մինչեւ մեռանիլ իցէ մանուկն իմ: Ասէ ցնա Յիսուս. երթ՝ որդին քո կենդանի է. և հաւատաց այսր բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, և գնաց: Ու մինչդեռ իջանէր, ընդ առաջ եղեն նմա ծառայքն նորա. առեխս եւտուն և ասեն, եթէ մանուկն նորա կենդանի է: Հարցանէր զնոսա վասն ժամուն՝ յորում ապաքինեալ. և ասեն ցնա, եւթկ յերեկնորդ ժամուն եթող զնա ջերմն: Գիտաց հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասաց ցնա Յիսուս՝ թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն և ամենայն տունն իւր: Զայս գործեալ երկրորդ նշանս արար Յիսուս եկեալ ի հրէաստանէ ի Գալիլեայ:


Յետ այսորիկ ոմն էր հրեից, և էլ Յիսուս յերուսաղէմ: Ու էր յերուսաղէմ ի Պրոպատիկէ աւազանին, որ

կոչէր երրայեցերէն Աթհիզդայ՝ հինգ սրահ։ Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւանդաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջրոյն յուզելոյ։ Եւ հրեշտակ աստուծոյ իջանէր ըստ ժամանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ ի շարժումն ջրոյն իջանէր յաւազանն՝ բժշկէր, ոչ ունելով նշան հիւանդութեան։ Եւ անդ էր այր մի, որոյ երեսուն և ութ ամ էր ի հիւանդութեան իւրում։ Զնա երբեւ եւս Յիսուս՝ պի անկեալ դնէր, և գիտաց նմա բազում ժամանակք են այնուհետեւ, ասէ ցնա. կամիս ողջ լինել։ Պատասխանի եւ նմա հիւանդն. տէր, ոչ զոք ունիմ, թէ յորժամ՝ ջուրքն յուզեցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջադոյն իջանէ։ Ասէ ցնա Յիսուս. արի, առ զմահիճս քո՝ և գնա։ Եւ ողջացաւ այրն, և յարեաւ՝ եառ զմահիճս իւր՝ և շրջէր. և էր շաբաթ յաւուրն յայնմիկ։ Ասեն հրեայքն ցբժշկեալն. շաբաթ է՝ և ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո։ Պատասխանի եւ նոցա և ասէ. որ բժշկեացն զիս, նա ասաց ցիս, առ զմահիճս քո՝ և գնա։ Հարցին ցնա և ասեն. ով է այրն՝ որ ասաց ցքեզ, առ զմահիճս քո՝ և շրջեաց։ Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ով էցե. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի տեղւոջէ անտի։ Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին, և ասէ ցնա. ահաւադիկ ողջացար, մի եւս մեղանչեր՝ զի մի չար եւս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն՝ և պատմեաց հրեից, եթէ Յիսուս էր որ բժշկեացն զիս։ Եւ վասն այսորիկ հալածէին զՅիսուս հրեայքն, զի զայն առնէր ի շաբաթու։ Եւ Յիսուս պատասխանի եւ նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, և ես գործեմ։ Վասն այսորիկ առաւել խնդրէին հրեայքն սպանանել զնա. զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլեւ Հայր իւր կոչէր զաստուած, և հաւասար առնէր զանձ աստուծոյ։

Եւ մինչդեռ անցանէր՝ եւս այր մի կոչ ի ձեզ. և հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ասեն. ռաբբի, ով վնաս է, զորա՝ թէ հօր և մօր իւրոյ զի կոչ ծնիցի: Պատասխանի եւս յիսուս. ոչ զորա վնաս է, և ոչ հօր և մօր իւրոյ. այլ զի յայտնի լինիցին գործքն աստուծոյ ի նմա: Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ օր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել: Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի: Այս իբրեւ ասաց, եթուք ի գետին՝ և արար կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին: Եւ ասէ ցնա. երթ, լուա յաւազանին Սելովմայ. որ թարգմանի առաքեալ. չորաւ լուացաւ. եկն և տեսանէր: Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին. ո՞չ սա էր՝ որ նստէրն և մուրանայր. կէսքն ասէին. նա է: Այլքն ասէին. ոչ՝ այլ նման է նմա. և ինքն ասէր՝ թէ ես եմ: Ասեն ցնա. իսկ զիարդ բացան աչք քո: Նա ետ պատասխանի. այր մի՝ որում յիսուս ասեն, կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. երթ ի Սելովամ, և լուա. չորայ լուացայ՝ և տեսանեմ: Ասեն ցնա. ուր է նա. ասէ ցնոսա. ոչ գիտեմ: Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոչն էր: Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար յիսուս. և երաց զաչս կուրին: Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն, թէ զիարդ տեսանէ. և նա ասէ ցնոսա. կաւ եդ ի վերայ աչաց իմոց, և լուացայ՝ և տեսանեմ: Ասեն ոմանք ի փարիսեցւոցն. ոչ է այրն այն յաստուծոյ, զի զշաբաթս ոչ պահէ: Այլքն ասէին. իսկ զիարդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել: Եւ էին հերձուածք ի մէջ նոցա: Ասեն դարձեալ ցկոյրն. դու զի՞ ասես վասն նորա՝ զի երաց զաչս քո: Եւ նա ասէ՝ թէ մարգարէ է: Եւ ոչ հաւատային հրէայքն զնմանէ՝ եթէ կոչ էր՝ և բացաւ. մինչեւ կո-

ելեալին զՃնողս բացելոյն. հարցին ցնոսա և ասեն՝ սա է որ-
դին ձեր, զորմէ դուքն ասէիք, եթէ կոյր ծնաւ. արդ՝ զի-
պիդ տեսանէ: Պատասխանի եղեն նոցա Ծնողքն նորա՝ և
ասեն. գիտեմք զի սա է որդին մեր, և զի կոյր ծնաւ. բայց
զիպիդ այժմ տեսանի՝ ոչ գիտեմք. կամ թէ՝ ո՛վ երբայց զաչս
դորա՝ մեք ոչ գիտեմք. ցդա իսկ հարցէք, ինքնին ի չափ
հասեալ է. ինքն իսկ խօսեսցի վասն իւր: Զայս ասացին
Ծնողքն նորա, զի երկնչէին ի հրէիցն. քանզի ուխտ եդեալ
էր հրէից, եթէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ի բաց
կացցէ ի ժողովրդենէն: Վասն այնորիկ ասացին Ծնողքն նորա
թէ ինքնին ի չափ հասեալ է, ցնա իսկ հարցէք: Դար-
ձեալ կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ կոյրն էր. և ասեն
ցնա. տուր փառս աստուծոյ, մեք գիտեմք՝ զի այրն այն մե-
ղաւոր է: Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ ես ոչ գիտեմ.
բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ և արդ տեսանեմ: Դարձեալ
ասեն ցնա. զի՞նչ արար քեզ, զիա՞րդ երբայց զաչս քո: Պա-
տասխանի ետ նոցա. այժմ ասացի ձեզ՝ և ոչ լուայք. զի՞
կամիք միւսանգամ լսել. միթէ և դուք կամիք աշակերտիլ
նմա: Նզրա հայհոյէին զնա՝ և ասէին. դու լինիր նորա ա-
շակերտ. մեք Մովսէսի աշակերտք եմք: Մեք գիտեմք՝ զի
ընդ Մովսէսի խօսեցաւ աստուած. զսա ոչ գիտեմք ուստի
իցէ: Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա. այդ իսկ են
պանդխտիք. զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ, և զիա՞րդ զաչս
երբայց: Գիտեմք զի աստուած մեղաւորաց ոչ լսէ, բայց եթէ
աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամս նորա առնիցէ, նմա լսէ:
Ի յաւիտենից ոք ոչ լուաւ՝ եթէ երբայց ոք զաչս կուրի ի
ծնէ կոյր ծնելոյ: Եթէ ոչ յաստուածոյ էր այրն այն՝ ոչ կա-
րէր առնել ինչ: Պատասխանի ետուն և ասեն ցնա. ի մեղս
իսկ ծնեալ ես ամենեւին, և դու վարդապետ լինիս մեր:
Եւ հանին զնա արտաքս: Լուաւ Յիսուս՝ եթէ հանին

զնա արտաքս, և իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. դու հաւատա՞ս յորդի աստուծոյ: Նա պատասխանի ետ և ասէ. տէր, ո՞վ է՝ զի հաւատացից ի նա: Ասէ ցնա Յիսուս. և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է: Նա ասէ. հաւատամ, տէր, և երկիրպագ նմա:



ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ

ԽՐԹԻՆ ԲԱՌԻՑ ԻՆՉ ՄԱՏԵՆԻՄ

Ադդով. Ձ-ո-ր-ի-ս՝ ո-ր-ք-ո-ր-ե-ի-ն գ-ո-գ-ո-ն-ա-ն է։

Ադին. Ե-ր-կ-ի՛-ր, գ-ր-ի-չ-ի-ն պ-ի-ղ-ը։

Ադոնայ աւեր. Ա-գ-ո-ն-ա-յ։

Ազատագրեալ. Ա-զ-ա-տ-ե-ա-լ։

Ազդարան. Խ-ո-գ-ո-ր գ-ա-լ-ը- պ-ի-ղ. Ժ-ո-ղ. 2։ Խ-ո-գ-ո-ր գ-ո-ր-ծ-ո-ղ ի՛-ր Ե-ա-ս-ո-ւ, ո-ր է բ-ե-ր-ա-ն ի՛-ր լ-ս-ո-ղ-ը-ն։ Հգ. 2։

Ազդր. Գ-ո-ւ-յ-ս-ը-ն։

Ազն. Ա-զ-ի, գ-ե-լ-ի-ք։

Ազնիւք. Օ-ր-հ-ն-ե-ր-ո-վ։

Ազնուանալ հոգմ. Տ-ի-ր-ա-կ-ա-ն հ-ա-ս-ո-ւ հ-ա-լ։

Ազնիւ. Տ-ի-ր-ա-կ-ա-ն. Լ-ե. 3։ Ա-ռ-ա-ք. 2Ի. 3։

Ազրամեծար. Ա-յ-բ-ե-ր-ե-ն ը-ն-դ-ո-ւ-ն-ե-լ։

Ախտաբծաթոյն. Ե-ի-ա-ը ը-ա-ր-ե-ց։

Ածանցական. Ա-ն-ա-ռ-ո-ր, ը-ն-դ-ա-ն-ո-ւ-կ։

Ակաս. Ն-ա-ա-ա բ-ե-ր-ե-ի, փ-ա-յ-տ։

Ակնայայրաս. Ա-ն-դ-ը ճ-ա-ռ-ա-ւ։

Ակնառու. Խ-ո-ր-ի-ն ն-ա-յ-ո-ղ։

Ակոմբ. ժ-ա-ղ-ո-վ, գ-ի-հ-ի-ր, ի-ր-ա-ր։

Ակաբոսել. Ա-ս-բ-ե-լ։

Ակաւադել. Ա-ս-բ-ե-լ, ճ-ե-շ-ը-տ-ե-լ։

Ակէյարմար. Ա-զ-ի-ւ-վ լ-ի-ն-ա-ծ։

Ակիւաբկոտիւն. Ք-ե-ր-բ-ի-ւ, բ-ա-ղ-ը-ա-ն-ք-ի-ւ-ր։

Ակնեալ. Գ-ո-յ-ե-լ։

Ակնեալ ազգարան. Գ-ո-յ-ա-ց-ա-ծ ք-ի-ր-ե, ի՛-ր լ-ս-ո-ղ-ը-ն։

Ակոպակ. Տ-ի-ր, խ-ո-չ-ո։

Ակշռամանք. Ա-գ-ա-ճ-ա-գ-ա-ծ-ո-ւ-թ-ի-ւ-ն։

Ակրբէք. Տ-ի-ր-ե-ք-ե-ն։ Ա-ի-ա-ա։

Ակրբի ըմբռնեալին. Ա-ա-ճ-ո-ղ ա-ի-ա-ա։

Ակռա. Ա-ն-ա-յ, ի-ա-ի-ա-ն-ա-յ։

Ակռական. Ա-ն-ա-կ-ի, հ-ա-ղ ը-ն-դ-ո-ւ-ն-ե-լ։

Ակռական ախտ. Թ-ո-ւ-ր-ը ճ-ո-ր-ո-ղ, ո-ր է ց-ա-ն-ի-ս-ի-ւ-ն-ք։

Ակռատուղ. Մ-ի-ս-ի-ւ-ն։

Ակռոտիւն. Մ-ի-ս-ի-ւ-ն, ճ-ա-ղ-ա-ր-ե-լ, բ-ա-ս-ս։

Ակռոտուած. Ա-ն-ա-ռ-ո-ղ-ա-ց-ա-ծ ի-ր-ա-ն-ք։

Ակռտոտիւն. Ա-ն-ա-ռ-ո-ղ-ա-ց-ա-ծ ի-ր-ա-ն-ք։

Ակռտոտիւն ակռաց. Թ-ո-ւ-ր-ի ա-ն-ա-ռ-ո-ղ-ա-ց-ա-ծ ի-ր-ա-ն-ք։

Ակռտոտիւն ակռաց.

Պիչ, ռ-ւրտ-ր· Ի՛Գ· 2· Գ-ռւնէլ, գնե՛ր· Ծ՛Ջ· 2· Խ-ռնէր ի՛ե՛ռ՛ն-ռ՛լ ն-յ-ռ՛լ· 2Ի՛· 2·

Անհամոզելի՛· Խ-ռ-ռ ռ-ռ՛ն չէ՛ն-ռ՛լ, ի՛ն-ռ՛ր·

Անհատնում ելի՛· Ան՛ի՛ն-ռ՛ն-ռ՛ն ելի՛, ռ-ռ՛ե՛ս ռ-ռ՛լ·

Անձամբ· Մ՛-ռ՛ն-ռ՛·

Անձի՛ր· Ն-ռ՛ն-ռ՛ր·

Անձնամատն· Ի՛ն-ռ գն՛ն-ռ՛ե՛ ռ-ռ՛ն-ռ՛լ·

Անձուկ· Նե՛ղ· Ե՛· 2· Ք՛ի՛ռ ռ՛ե՛· ժ՛Ե՛· 2·

Անկարի՛ր ջ-ռ-ռ-ռ՛կ· Վ՛ի՛ր ե՛ւ՛ի՛լ ւ՛ն՛ռ՛ղ նեռ՛ք-ռ-ռ՛ր ե՛ւ ջ-ռ-ռ՛ք-ռ՛·

Անշաշախ· Փ-ռ՛, ի՛ն-ռ՛ք·

Անշանաղադ· Շ՛ռ՛ն-ռ՛ը-ռ՛, գ-ռյ՛ն-ռ՛, գ-ռ-ռ՛ռ՛ն-ռ՛ը·

Անոպոպ· Ե՛ռ-ռ՛ն՛, ի՛ռ-յ՛ն-ռ՛·

Անոսո-ռ· Տ՛ե՛ն՛ւ ւ՛ռ-ռ՛ք-ռ՛, ե՛ը-ռ՛լ-ռ՛ն՛ռ՛ռ՛լ·

Անորակ· Գ-ռ՛ն ւ-ռ՛ն-ռ՛, ր՛ե՛ռ՛ռ՛ի՛կ·

Անուր· Հ-ռ՛լ՛ռ՛·

Անուրբ· Տ՛ի՛ւ ռ՛ւ ւ-ռ՛ի՛ր-ռ՛·

Անպատաւար· Գ-ռ՛ռ ւ-ռ՛ն-ռ՛, հ՛ն՛ռ՛ռ՛ը-ռ՛·

Անպատճելի· Ե՛ռ ն՛ի՛ռ՛ն-ռ՛ը, ե՛հ՛ռ՛լ ւ՛ե՛լ՛ւ՛ռ՛ն՛ռ՛·

Անսպիւռ· Գ-ռ՛ի՛ռ՛ռ՛ի՛ն ւ-ռ՛ն-ռ՛, ե՛ռ՛ռ՛ի՛կ, ռ՛ռ՛ն՛ռ՛ռ՛ը-ռ՛·

Անվճար· Ան՛ռ՛ռ՛լ, ի՛ռ՛ռ՛ռ

Ակար· պ-ախ---ն մ-ր-ա- մ- ան---ն է։
Ակթա անվնաց։ Սէ-ն ւ-ա-ո-ն մ-ր-
ւ-ո-ի մ- ան---ն է։
Բաթելլն. պ-ա-ա- ւ-ա-ո-ն է։
Բագին· կ---ի ան---ն է։
Բազմակ· ն-ա-ո-ա- ո-ի։
Բազմական· Ա-ե-ի-ո ն-ա-ա-. Խ-. 1. Ե
Ղ-ի- 3։ ն-ա-ո-ա- ո-ի- Ղ-. 3։
Բազմանդեանան թարգմանագ-ի- Շ-ա-
ա- ո-ի-ո-ո-ն-ի-ը; ի-ա- ֆ-ն-ա-ր-վ ի-ա-
ե-ո-ն-ի-ը։
Բազմայաժեան· Շ-ա բ-ն-ի գ-ը-ա-ա-ա-, ւ-ի-
ն-ի- ա-ա-ւ-ո-ն։
Բազմասուեղ-ենան· Շ-ա ֆ-ւ-ղ-ո-վ, ա-ը-
ւ-ը գ---ա-ե-ւ-ը։
Բազմաբկածենան· Շ-ա ե-ւ-յ-ն-ե-ա-ա, գ-ե-
ւ-ը։
Բահազ· կ---ի ան---ն է։
Բամբեան· Զ-ւ-ի-ա-, գ-ւ-։
Բանգազուշեալ· Խ-ւ-ց-ն-ա-, ւ-ւ-ւ-ը-։
Բանին անբաժանակամ-ա-ի-ւ-ն· Խ-ա-ի-ն կ-ա-
ղ-ը ն-ա ը-ն-ւ-ը, ի-ն-ի -- գ-ն-ի ի-ա-
---ա- ի-ա-ւ-ը։
Բառաւյի· Սէ---ն ւ-ի-ն-ի, ւ-ա-ա-ա-ա-։
Բասիլ· Վ---ն-ւ- ե- ի-ա-ր ց---ն-ա-։
Բասրելի· Մ-ե-ա-գ-ր-ւ-ւ-ի, ա-ւ-գ-ւ-ն-մ-ա-
ւ-ա-ւ-ի-։
Բարառանութիւն· Բ-ա-ի, ի-ա-գ-ե-ր ց---
ց---ն-ա- ի-ա-ի։
Բարաւուցական· Բ-ա-ի ց---ց-ն-ա-, ի-ա-
գ-ե-ր ն-ա-ա-ա-ա-։
Բարաւար· Դ-ա-ն գ-ր-ե ւ-ի-ը։
Բարեաուխ-ի- Ա-ն-ա- ն-ա-ն-ա-։
Բարեբարի· Զ-ա-ա-ի-ա ն-ա-ա-ա-ա-ն-ե-ն-ի-
ա-ն-ն-ն է։
Բարձր· թ-ա-ի-ա-։
Բարեանակ մահոզկուզեան· Ա-ո-ա-ի գ-ի-ա-
ր գ-ի-ե-ւ-ի ա-ւ-ւ-ե-ո- ա-ն-ի։
Բաւականականա· Ի-ա-ն-ա-ի-ա-ի-ա-, ւ-ա-ն։
Բաւիղ· Ս-ւ-ի, ա- ո-ւ-ւ-ա-ի ի- գ-ւ-ն
վ-ո- ի-ա-ւ-ւ-ո-։
Բեղբար· Ս-ա-ն-ա-։
Բեհզեղբ-ւ-ղ· ճ-ն-ն-ի-ա- ւ-ա-ա-ա-ի-ը,
ի---ա գ- ի։
Բեժանք· կ-ի-ա-գ-ի-ա- ի-ւ-, ւ-ւ-ի-ն,
ի-ւ-ւ-ը-ո-։
Բիծանք պոցակիծք· կ-ւ-ի գ-ա- ի-ա---ի
---ի-ն-ի-ը։
Բոլորապատուղ· Ո-ի-ի-ի-ւ, ի-ո-ո- ի-ե-ի-ւ-ի-
Բոսորայ դիակունք· կ-ւ-ւ-ե-ի-ն ա-ի-
ն-ո-ի-ի-ի ւ-ի-ը։
Բոսորային· կ-ւ-ւ-ե-ի-ն, ի-ւ-ւ-ի-։
Բուժեալ· Բ-ի-ի---։
Բուժեալ· Ս-ա-ի, գ-ւ-ի-ն-գ-ւ ի-ա-ի-։
Բռնակալ· ճ-ե-գ-ո---ա-ւ, գ-ա-ա-ն-ւ-ը։
Բռնաճոխնեան· Գ-ո- ի-ւ-ա- ի-ա-ի-ի-ի

Գործնականաց գործի· Գործնա՜ւ ա՛ւր։
Գումարապահ· Ախորժ, գեղչող։
Գումնել· Գոյն տալ, ներկել։
Գուպար· Զօրք, ճիրկ ասպետի։
Գրիչ, գրանիչ· Փոշտ, սափոր։
Գրքանանական· Գրավ ընծայ։
Գրքոյ, Գրքական· Բիծ, սրճիկն։
Գրչակալ· Փափուկ ներգոն։
Գրկանք· Սէրվ երկիւղ, ի՜ոճիրագործ։
Գրքոյան· Յոգնիկ երկրի, լինիլ։
Գօշիկ· Խնձորագործիկ, սերտը ցօղագործիկ։
Գօսանակ· Զորհնակ։
Դագան, Ընկերոջ· Երկու երգիչ եւ ինքնին անգամ։
Դանդաչիլ· Երերալ, ծռմռալ ոտքիվ։
Դանդաչելցուցանել· Երերցնելով յոյն հանել։
Դասակ· Սիրելի, գեղեցիկ։
Դասասակ· Պիկար։
Դասակարկիր· Վճիռ, որոշիչ։
Դաբասասան· Դրախտ, գահոյք։
Դեղեւակալ· Դողդողալ։
Դեղնաբ· Ոսկեայ ի՜ս արծաթի ջրագրել։
Դերաբերիսաս· Նեռն, բիճճա՜ւ։
Դիմնիկ· Փոքր ի՜ն, ի՜ոյս լոյս։
Դժոխորովմայն· Փորձ գիտելոյ գեր ելլալոյ։
Դժուարամարելի· Անհնարին գիտալոյ։
Դժուարաբ· Եղերական, տարաբախտական։
Դիմագրաւութիւն· Մահը ուղիղ առնելով հարուածը։
Դիմակերպութիւն· Ոյժառնելոյ, փնովիւրի։
Դիմակա դիմակս· Թիկունքիս, ետեւիս։
Դիտակ· Տեսանելոյ բոյոյ տեղ։
Դիտակ ասաց· Գտաւ ճիշդ տեղն հայոյց։
Դիւանաճնճղաք զհայաստան· Սպառնոյն ըստ հեթանոս տեղ։
Դիւրագիտելի· Դիւրաւ երեւնալի։
Դոյժ· Խուճապ, ետեւ։
Դրամանապահ անուանագրութիւն· Ոյժ ընծա՜ն անուն գրելը։
Դրանդ· Դուռն վերի միջի։
Դրժել· Խոստեան գառնալ։
Դրտակ, Դրտագ· Շինած բան, խոտ։
Դրօշ· Պայտ։
Դրոշեալ· Փորած խոտի պատկեր։

Եդեմ· Դրախտին երկիրը։
Եղոմմացի· Ետոմայ տերունեան։
Եզոզ· Եղ վերուկ, լինիլ ելուկ։
Եմովպացի· Ընդհանուր, տրոգ։
Եսլենացի· Ճշմարիտ, բառի։
Եղեամն· Գերազանց։
Եղեռնագործ· Զորհնակութիւն, պիղծ անօրէնութիւն։
Եղերական ջալ· Լալիականութիւն լացը։
Եղեւնի· Սերկեւիլ ի՜ս ըստ ուղիղ։
Եղէգնախուռնակ· Պահապան եղերելոյ։
Եղէգնախուռ· Խոշոր ի՜ոտրոտի հոգի։
Եղիճ· Ընդերքն խոտ։
Եղկութիւն· Խեղճութիւն։
Եմակ· Զոր, տերեւ։
Երկերիլ· Քարհատիլ։
Երախայրիք· Ընծի պտղոյն։
Երեսխաղ· Լալիականութիւն տրտմութիւն։
Երանան· Լալիականութիւն տրտմութիւն։
Երանակ· Սիրելի։
Երանգ· Գոյն, բերի։
Երասան, Երասանակ, կամ։
Երասանակալ· Կերպ բանալ, ընդունելոյ
Երեխմանութիւն· Սերտ ընկերութիւն խոտ։
Երէց· Տարի, տառ։
Երեւիլ· Ծառի ի խոտի ելանել։
Երիզապհանալ· Երկու ընտանի ընկերութիւն։
Երիմացեալ· Զորհնակ։
Երինջ· Կերած լավ, գառնալ։
Երիտասարդ· Երկրորդ ընկերութիւն ի՜ոչ ունելոյ։
Երկակրկնութիւն· Երկու տարբերութիւն բառն, ընդհանուր գոյն ու գոյութիւն, ցորեկն ու գիշերը։
Երկեւանութիւն· Կալոտ ընդհանուր։
Երկնաճեմ· Երկնային հանդէս, գառնալ։
Երկնել· Գտանելու գալ ուղիղ։
Երկոտրակ· Լալիականութիւն ուրախ ելանել։
Երկրորդութիւն· Կրկնութիւն։
Երմն· Գոյն, բերի։
Զազրահարմի· Խիստ գարշելի։
Զակատիլ· Բառն ի վերայ տեր իրողութեան գալ։
Զանգատիլ· Քարի ի բանելի խոստանալ։ Ուղի խոչ ելանել։
Զառածելով· Մոլորած, ճամբէն ելած։
Զարհատաստակ· Զորհնակութիւն գերելով։

Զարմանալի. Զ-րմ-ն-լի բ-ն.
Զեղծանիլ. Ը-ր-ու-ել, գ-ղ-ծ-ւթ, է-ր իր ելլել.
Զբաղում. Ա-ի-ի-ն-ն չ-ն-ղ-ը, ն-մ-ե-ր.
Զբմիաղ. Ո-ր-ի-ն-ն-ն, վ-ֆ-, ւ-ֆ-.
Զբնդալ. Շ-ր-ւ-ր-ն-ի.
Զբնդան. Զ-ն-ն-ն.
Զիամ. Խ-լ-ն-ի-ր-ն (Ա-ն-մ-ն-ն-ի-ո-ի) ն-ի-ն ո-ւ-ի ի-ւ-ի.
Զի-բովին երթալ. Ի-ն-վ-ի-ե ֆ-ղ-շ-ն-ի.
Զկծեցուցիչ. Ս-ր ի-ղ-ղ-ն-ն-ղ.
Զկծիլ. Ս-ր-ե-ը ե-ր-ի, ի-ֆ-ն-ն-վ-ի ը-ւ-ը.
Զմռաւիլը. Ա-ը-ւ-ն-ն-վ-ւ ւ-ղ-ն-ն.
Զոփալ. Զ-փ-մ-ա-լ. 8-ր-ե-ն ը-ղ-ւ-լ.
Զբահ-ա-ա-կան. գ-ր-ը-դ, դ-լ, ա-ղ-ը-ա-վ.
Զբաւել. Վ-ի-ր-ղ-շ-ն-ի, դ-ի-ր-ֆ-ի.
Զօգել. Կ-դ-շ-ն-ի.
Զօրեն. Ն-ո-ն, գ-ո, ի-գ-.
Ըղձակերա. Փ-ֆ-ո-ի-ը-.
Ըղձութիւն. Փ-ֆ-ո-, ո-ր-ը-.
Ըմբերանիլ. գ-գ-ո-ն-ի-ղ-ե-ն-ի-լ.
Ըմբոշխնիլ. Ը-ո-ի-լ.
Ըմբոշխնիլի. Ը-ո-ի-ղ՝ ո-ր ե ո-ի-ո-.
Ըմպակկաւ. Ա-ր-ո-ի-ր-ն-ո-ե, ր-ը-լ-ի-ր.
Ընդակից. Հ-ե-ը ե-ղ-ե, ո-յ-ե-ո-ը, ո-ո-վ-ր-ւ-ն-.
Ընդամեցուցիչ. Թ-ր-ի-ր-ն-ղ-ւ-ե-ր-ե-ի-ն-ղ
Ընդդոյնակալ. Գ-ո-ի-ն գ-լ ի-ղ-ւ-ր-ե, գ-ն-ո-ե.
Ընդերք. Փ-ր-ն գ-լ-ի-ն-ի-ր-ը, գ-ղ-ը-ր-ո-ի-.
Ընդ կրաւնկն գառնալ. Ե-ր գ-ո-ո-ն-լ.
Ընդհատ. Հ-ե-ո-ո, գ-լ-ո-, ֆ-ր-ի-լ-ը.
Ընդհիմարկութիւն. Օ-ր-ն-ա-ի-ն ը-ո-ե-լ-ը.
Ընդհիմնել. Ի-ե-ր-ե ե-ս-լ. Լ-ի. 3. ի-ն-ի-ե ը-ւ-ւ-լ. 2Զ. 1.
Ընդունայնաբանիլ քերան. գ-ը գ-ե-ը վ-ո-ր ե-ր-ի-ն-ե, ն-ֆ-ի-լ ը-ո-ն-ֆ-ր-ի.
Ընդոպահկիլ. Ն-ե-ո-ե յ-ե-ի-լ.
Ընդվզիլ. Գ-ւ-ո-ի ե-ս-լ, գ-ը ֆ-ո-ւ-ը-ե-ո-ի-.
Ընթերցաց. Մ-ե-ը ի-ր-ո-ի.
Ընկերացիալ. Զ-ր-ի գ-լ գ-ր-ի-ր-ւ ի-ը-ո-ի.
Ընկղմիլ. Ս-ը-ի-ւ-լ, գ-ի-ը ը-ն-ի-ն-ւ-լ.
Ընկրկիլ. Ե-ո ե-ս-ի-ւ-լ.
Բառասնեակ. Հ-ո-ւ-ի-ո-ո-ո-ի, ի-ե-լ-ն-ն-ի-ւ-լ
Բառանչ. Հ-ո-ո-ւ-ն-ե-.
Բառը. ի-ո-լ ո-ի-ը, ո-ր-ղ-ո-ն ջ-ո-ո-ն-ո-.
Բարբհհաս. կ-ո-ո-ե-ի ո-ն-ո-ն-ի-ե, ղ-ը բ-ո-ը- Ա-ի-ե-կ-ո-ո-ո կ-ղ-ը ի-ն-ի-ը ի-ը.
Բարեմափաւոն. Ը-լ ե-ղ-ի-լ ի-ո-ն-ղ-ը.
Բարեմասաբ. փ-ո-ն, դ-լ, ի-ո-ն ո-ը ը-ղ-ը-ը-ը.
Բարեվաղցանց. Մ-ղ-ն-ը ո-ղ-ն-ո-ը, ի-ե-ի-ը ը-ն-ը-ը.
Բեհզան. Մ-ո-ն-ի, ի-ր-ո-ն ի-ն-լ.
Բեհլաղիր. Խ-ղ-ո ֆ-ո-ը-ը.
Բեհբամասաթիւն. Խ-լ-ի-ի գ-ո-ի-ո-ի-ն-ն, ի-ե-ղ-ո-ի-ն-ի-ն-ն-ի-ն-ն-ի-ն

Լինել. Ընդմեջ ելլել, երեսդիմ ելլել։
Լուծ. Թեր-ակն ի-նիք. թ. 1։ Պա-տահառութիւն. խն. 2։
Լուծք առաւարք ամպից. Կախք ի-ջեւորութիւն հաւ-ասարելոյ։
Լուզակ. Լուզող ինդոն։
Լուանցոյց. Երբ-եմն լոյս հանելը տեղ գա-ճ։
Լուանական դիպուած. Թաղ-ուըլը։
Լուացող. Ձոր խոռ, դեր տեղ-ացիկի։
Լպրշալ. Ընճոյ, ուրշլ։
Լսարան. Սա-ս ինձ-ս տեղ, ինչպես՝ տեղ-ացիլը։
Լսելափակ. Անձը փոս-ոք։
Լսնացնալ. ձերփակ, ինչպես՝ ուլիս-ոց վերի-ն տեղը։
Լրատարար. Լիւ լիշ-ոն։
Լրթագոյն. Խոս-ող մարդ։
Խամրարնալ. Ընդ-ոյ, խոտ-ոց խելք։
Խակախոտհալ-ութիւն. Խոտ-որ փոր։
Խակակամի. Խոմ։
Խազատարար հրամայական. կին-ոջ՝ իր-ևի դեռ երդ՝ ինձնէնդ-ոլ։
Խաղը, խմիղը, Հաղը. Ուրիշոյն, փոս-որ։
Խայրիկ. Պոռ-ոտիկ։
Խաւանիմ. Խոնարհ-ուլ, վեհերիլ։
Խարան. Ես-ը տալիլը երկու. Զ. 1։ 8-ալեռնիլ երբ խոս-. 2Ի. 2։
Խարդաւանք. Խոխիմ-ոյնութեան, ֆինդ։
Խարխափանք. Քերթ ուլոս-ոտ։
Խարխալնալ. Խոխոռ։
Խափուցանել. Խոփոռնել, գեղ նիմիր։
Խելք. Ն-ոռ-ոս իշլ։
Խելք չլինացող. Ն-ոռ-ոս իշլին ուլիմիլը տեղը։
Խնդրելացնալ. Լուտեղծիր հոփոռնել ինդոնել։
Խժական բարբառոս. Կոպիտ, խորհուրդ, խոսմոլ։
Խիզախել. Համարձակիլ։
Խիմի. Խոռոտ, ոռնձը։
Խլրտուածք. Կիշտ տեղը ուրինչ, բնական ինդիր։
Խոպրի, Խոպրի. Հանգին փոյոտ ընդունը, գեղացի։
Խոչրիմ. Խոնարհլը, փնտռիլը։
Խոնձիգք. Խոռոմ, վերի, ուռլեր։
Խոնկաւորութիւն. Օրհնեալ։
Խոշոր. Տեսչի։
Խոհեր. Գործչի, հաստատ ինդ։
Խոզխոզնալ. Մարմոն, գոչալնիլը։
Խոպանացնալ. Ձոր-ոյնիլ, խոտ-ոց խոտ։
Խոսնալ. Ներթ ի չեմ։
Խորշակ. Ցոփ հավ, ամ իրլի։
Խուել. Ձուլորիլ, եկեղեցի վերից։
Խուզել. Փնտոռիլ։
Խուժ. Խոխոռոտնի։
Խուժադուժ. Վայրենի, խոնհնոռոս։
Խուճապել. Ընճեր ուլիսի ընդ։
Խուն. Քիչ։
Խոփ. Ուրոյն երկոն, ոռոն տեղերի։
Խոխ. Ձուլը ուլերիլ։
Խորոց. Երկու բոն իրարի բռնալ։
Խրխնամալ. Խոխոռիլ, ուլոռիլ։
Խրճիթ. Սենոյն, ուլոռ, կիրկին։
Խրնամք. Կոպոց, տեղերի։
Խոլական ցնորք. Խելն ոռ գնդի իրենիլը։
Խօսնականացչաբոզական գործի. Լեզուտաւելութիւն. Ծայրատելութիւն։
Ծակրոտ. Քերթոս ն ոռոնքոս ծոլ, ելլոռ։
Ծնկադնչալ. Հանգ ոռ մոռ։
Ծորձար. Լեռնեքոս ձել տեղ, յոր։
Ծորուշ. Կոծիկը, վոռնձը։
Ծուռնք. Պոռոտոս, տեղ իրերիլոլորը։
Ծուռակ. Ուրուոյն, ոռոսոտ։
Ծուռ և ծռմլեան. Սոռ, Սոյոս ես ուլոռոտ փնտռիլքոց։
Ծրդեալ. Ուղեկիր, ուղեյոն։
Կապտարել. Զոր-ոշնել, բերիլել։
Կայմ. Հոռոր։
Կանանել. Հիմիկոլով լոռ, ես-որ ես-որ ուլոռոտ։
Կաղակարծ, Կեղակարծ. Շան-հեծի։
Կազմանձողական. Ես-որ-ես-նոռնել ելլոռլ։
Կայլի. Ցոռիշոռ-եկով խոռոտ։
Կայտառ. Վերոյոռ ինդոն, ինչպես՝ տեղերի։
Կապարան հոգևական. Ձոռն՝ ուլիսոռ, ներոռ։
Կապարանք գլխոյ. Ն-ոռոս բերեն իր-ես ների ուռերը, խոսոռոլոռնելը։

Ձագարձ. Դեռ գրելու ժամն, օրվանն։
Կապուտ. Երկնքի, ծովի։
Կառափիչ. Գլուխ խրող, ճգնող։
Կարասիմ մեր. Մարդիս չհամար, դժվարի։
Կաբեկցել. Ցավեցնել ըլլալ։
Կարմիր. Ոչինչ, վերնիկ, արտոյտ։
Կարծրիտան. Տիկնիկի վիզը, ըսպին ըլլալ, ինչպես՝ ծղոտիս վերի կին։
Կարկառ. Քարերու խշշուն։
Կարկաչել. Երիցներել, ծռացնել։
Կարկառ կրճատել. Վեր վերցնելով ղրկել։
Կարկինհան. Ճեմելիք տալ՝ որ գիմերը ըլլա իրարու նման, համեմատ։
Կարոտխնդություն. Կարոտախոհություն։
Կասկառնաստ. Ցորդանան գետին բերանը տեղ տալով գալ։
Կափարացանել. Գոռալ։
Կեզեքարել. Պատռել։
Կենդանախարսկ կայծակն. Երեքով մեկ կենդանախարսկ կայծակ։
Կենդանախարսկ. Կեռնալ տարօրինակ պատկեր։
Կխաչար. Կես գայլանալ եղած ընտանի։
Կխոի կորիւն. Մեկ չափի երեսուն։
Կխրտան. Պարզից ներքին ոչ անասնե կ։
Կկիզ. Կարտ գոռալ, գոռոզանալ։
Կմախք. Մարմնի տարօրինակ։
Կնդրուկ. Ընտել հասած ծիրանու գարնանային։
Կնիւն. Սալ, քարի տեղ բռնած խոտ։
Կողկոզանք. Խոտ իջնելի ներքին լուծ։
Կոշկոճել. Խոտ աղբարել, գոնելիք։
Կորակոր գնացք. Ծռմռելով երթալով։
Կուզ. Խոն, ուղղություն։
Կասնագ. Ծայրը ծռած, սուր։
Նափել. Երկրագործել։
Կանաչ. Զարդանալ։
Կանաչ դիպուած. Զարմանալի գեղեցիկ։
Կրկնապատիկ անհարկելի. Թեթևորեն ուժգին եղած՝ որ ոչ ըսվի։
Կրկնապատկեն. Երբ ուրիշ մը ըսած խոսքը, ուրիշ մը ևս ծռացնելի ուղղությամբ, ուրիշ մ՚ալ վերադարձնելով։
Կրկնապարտյր կասնագ. Շատ ուժգին ծայրը նստած, ինչպես ի գերեզման խոցը։
Կրկնատ. Շատ ուժգին։
Կրտսեր. Երբ իրմե ընդունել, ինչպես։

Հաւպագ. Ձայն, լսելի։
Հալուկ. Ինչ ուղղելի եղբ։
Հաղթ. Ուրիշին, գոռոզ։
Համաձայնաբար զգայնանալու համար. Միմեանց հանդեպ ունենալ։
Համագրաճիւն. Հանգրվանքին, հանգիստ։
Համանեղումեան օրինք. Երբոր եղած ներս օրենք, եղածները ներս վերահիմք, ինչպես եր Մովսեսեան օրենքը՝ ուր ընդ ոտն, հան։
Համատատ երբ. Կարճ խոսակցություն։
Համատեալ յանձրգեալ միաբերանութիւն. Ընդհանրական գոռոզությամբ գոռոզություն։
Համատիւռ. Ընդեր իրմե խոչընդել եղած։
Համրաթակ վատահանեան. Սէգերնդի ըլլալը խոսիլ։
Հայհոյանդամաց կրկուտ. Կեղծիքի հոմար ըլլալ ձերբը, խոտան։
Հայհոյանդուածն. Ընդեր անդեր ընդհանրական ընդերը։
Հանդիսափառ. Մեկ կամ նման ծառ ունենալ։
Հանդոյց. Կապ, պինդ։
Հանդամանախոյ. Մեկ իրողություն, նման։
Հանդերձատորիկ. Զգեստորելու, զգեստորելու։
Հանի. Մարմ, գեր նեղնե։ Հանի Մովսեսյան. Մարմնի գեր ոսկերը, որ է Գլխի ոսկին։
Հաչելաչ. Ուխտած, խոսքին եղած։
Հասատան. Հաստատելը իմ իրենը տեղ, գտնելու։
Հասատանք. Հաստատություն, օրենքներ։
Հասատանել. Կարգած, ըստ ոչ։
Հարեւանցի հերեւանութիւն. Ընդհանրական եղած ոչխարի։
Հարեւանդիկք. Երեսները, ոչ թեև հանդես։
Հարիւրցեակ. Լիքը ոչխար, իրենը եղած։
Հեծան. Հաստ ձայն, օրինակ. 2. խոսքին իմ իրենին գոռոզը. Գլ. 6։
Հեծանոց. Հարմանձիներուն մեծ հանդիսությունը, որով յորդը ոչխարին ևս զարդարեն։

Հեղեղավայր· Ջրոյ հոսման տեղ, հեղ·
Հեղեղատ· Պղտիկ լճակ· Հեղեղատ կեզ-
բանի· Երեսունվեց հատիկ ունի ան·
Հեղիաս· Եղէգ մրգատուն·
Հեղյուս· Բնախօս· Լուծ·
Հենդեկ, Ծուղ· մարդոց ընկեր·
Հենուլ· Կոտ տրտնել, տեղ տրհոմոյ·
Հեռաձայ· Գալոց ժողով·
Հերպատած տուհկ· Ցերեկնդրուկ գիհա-
կերով ընդրկուած ձոռ·
Հէն· Զէնիցի· ռռռլոյ·
Հիւղ· Մոխր ջուր, հիւլէ·
Հմայեկ· Կախարդական հմայիչ·
Հմայք· Փող, դափնեշուշան·
Հնարագիր· Ցուցանող հռետորական ըն·
Հոգեկաթ· Հոգւով տրտում ընկեր
հոգեռոյծ·
Հաղագաստան· Հագուստ ծոպերով·
Համանիւ· Պատկերի հերհամար, միեւնոյն
ձեւ·
Համբոյր· Համբոյրի ձեւ ընդունելոյ
հոգեռոյծ·
Հանելուկ· Հանգոյ, ցոյց բանաստեղծի մը
ոգի·
Հովիտ· Ձոր, տեղի·
Հրաշեկ· Կրակի պէս հրդեհ·
Հրապարակ արբունական· Թագաւորական
տեղ հրամանելի·
Հրատապ· Կրակի պէս տաքցնող·
Հօրան· Ընդեր հերկիս·
Ձագանք· Խոչոռնոցներուն, մանրուս·
Ձագկել· Ծծնիլ·
Ձեղուն· Օդային ծածկ, թաղոն·
Ձեռնագործ· Ձեռագրել բռնաբարող·
Ձեռնածուս· Կախարդ պատճէն·
Ձեռնէրկեց· Ցասնալ նեղսրտող·
Ձուլածոյ· Թափանցիկ ապակի·
Ղօղիլ· Պտտանիլ·
Ճապուկ· Կոշուկ, ճապուկ բառաս. Կո-
շուկ բորբ՝ էրէն ոգեղեցուն·
Ճարպ· Փորի եղ, իւ եղոյ·
Ճինճեր· Մէնդի էրէսորը՝ ներկիչ·
Ճինճերել· Քերիչ եւլիլ· Բ. 2· Սերոյ
էթիլ· ԺԲ· 1·
Ճիրան· Սուր ընդունելու ճոպ, բռնելի·
Ճնշեալ մղել· Սեղմելով տանիլ·
Ճչդով· Ելմէնուն պէտք ընդունել·
Մաղնեսիա վճմ· Մշակութեան բուրգ·
Մածուած լոյս· Քրիստոնէական է·
Մածուած լասար· Կնոջ ինչեր·
Մակագրիլ· Լրագրի կամ տպագրի տե-

Մակարդիլ· Պտղոյ կամ հեղուկի տե-
ղուկանալ·
Մաճ· Սպաս ուղեղ·
Մանաւանաս· Քեզի հանուելով պատճառ·
Մանկագ· Մանկական, օրհնած·
Մառնամանուս· Մարդ պատանեալ կնոջ-
մարդկեղոյզ· Շատ մազոտ·
Մարմանդլուճ· Ցանկապատ հարեմներ·
Մեծգիտական· Խիստ տեղի, բնա-
կան·
Մեկին· Ցայդ նէլ, նկարագրեալ·
Մենգազէն· Ընտրել, ընդունիլ·
Մեղմել· Թուլցնել, նուազեցնել·
Մեղսամակարդ· Մեղքով ղեկավարեալ·
Մեղքոտ· Կատարած մեղաւոր է·
Մեռած· Դառնացրած, ցաւցած· Ան-
տեղի մեռած է·
Մերաաբեր· Մեր, այնիսկ հարազատ այլ
կնոջ·
Մերկամրցանակ· Ձգողի ճկուն ընդ-
դիմադրող, ինչպես բեհեզի կտորը·
Մերկապատանց· Ցայտուն, ուժեղ·
Մերքնոյ· Գործիք, խոհանոցային տաշտ·
Մղձէ· Քամի, սիրտ·
Մղձաբհաս· Կռիւի ընթացքին տեղ բռնել
սկսողաց հոմար·
Մխիթ· Ընդոծոյ, խոնջած, պահուած բան·
Մժեղ· Մորթի, ոչխարենին·
Մժղուկ· Գիշերի, ցիկտիր հոգեվարք·
Միխղձուտ· Ճանապարհ մի դժուարանալ
տալ ինքնին մէկ, տեղիներուն·
Մղձկիլ· Լալէ ետք, տալկոտոտիլ·
Մղտապատաս· Մարդը հանգստանալ տեղ
ընդունիլ·
Մոզդ· Ընկերացող ուղեկից է·
Մօտեցեցուցիչ· Սերտ խնդրագրելու, իրա-
ւազրելու·
Մուխ· Ներկին ներս տալը·
Մուն· Մոխր ճանճ·
Մուրճ· Թուլցնի վերցնել·
Մտել· Մտանիլ, հագնիլ, ներկել·
Բմշկիլ· Մտելմտոտել·
Մրցանակ· Կարելիութեան ճկնիլ· ԺԲ·
Կարելիութեան հարց դատելէ· ԿԱ·
Մօր· Ցեխ, ըմպոց·
Ցաբեթեան տուհմ· Նոյնանուանութիւն ցե-
ղերէ ոմանց անունէն, որ է Հայոց ոմն

Ցամաքը յամբութիւն. Շատ ուշ ուսանելը։

Ցամքասիրն. Ո՛չ ճարպոտ, ոչ լեռնային երկիր։

Ցանբաս. Ընտիր, նրբահոտ։

Ցայտաստակ. Ինքնաստիճան նաւակ։

Ցանգաստութիւն. Լռութիւն, օձ։

Ցանգել. Վերջը հասնել, լռել։

Ցանկասար. Ո՛չ ոքան, ինքնագիտ։

Ցանձանձել. Թախծ ընել, ինձ վիշտ տալ։

Ցանգք. Մեղք, ոճիր։

Ցառաջաստակ. Ընդ ընդունել, երկրի սերմնիւն։

Ցարագոյ. Երեսին գոյնի փոխուիլ, գունատիլ։

Ցարգահատել. Ցոհասիրել զոհ։

Ցարմնել. Վերջն ծնողով ծագիլ, ծագիլ պէս պէս ելնիլ։

Ցարմատատած. Ցալի պէս սերտ կից։

Ցառակիրել. Ճոխ գինի, անուրախութիւնը երեսին ընել։

Ցառնական, Ցառնական. Ընծայատուն, խոհանոց պէս։

Ցափրացնել. Ցաղտոտել, զանազանել։

Ցեզուակ. Ասացվի։

Ցեղամարկել. Փոխանիլ, տեղէ տեղ գալ. ի. 3։ Երթիլ. Ի զ. 1։

Ցեղյեղել. Փոխանիլ, ինդրել ընել. թ. 2։ Շատ երեսի չնչիլ կամ. 2։

Ցեռաւել. (ճանապարհ) ելանելիք։

Ցեսանել. Սրել, դնչպել ընել։

Ցերիւրանի. Զարդարուիլ, ծաղկիլ բերելը։

Ցէտ և Ցզոյգել. Երթալ ի փոքրաց ամասն կոն։

Ցղփացեալ. Խիտ կտրած։

Ցոգնչան. Ցնծալուդ տարի, ծնունդեան տարի։

Ցոլմամեղձ ծառ. Շատ խորտակ բեղմամեղձ ծառ, իւրի ինքնեն։

Ցողղ գնգերիլ. Լինցայ ուղղալ ոլմոն։

Ցոյլ մտաց. Մտմտուք, մտին ալեկոծութ։

Ցոմանակ. Ասանել, ոգի։

Ցորիրդանան. Անուն գետի։

Ցօթասպանել. Կռնակին վրայ ծեծելով յիներ։

Ցուսիի քրտունք. Աշուց տրտիմ, ծանր ինչ։

Ցուսամի. Հանդիպել, ի ներքոյն հանդիպել։

Ցուսոյ ձգտման. Ցոյսին ինձը, ուռճացնելը։

Ցօգնգարձն. Կիրակ կիրակ։

Ցօնդիցն յաւանդութիւն. Ընդունելութեան հանդերձութիւնը, ըղձութիւնը, մաղթանքը ելեւէջնելիք։

Ցոշատիլ. Գոտեւ գոտեւ ընելով։

Ցախտացնել. Ասկի ծեծ ծանրանալը։

Ցախտիլ. Սիրել սովորելը։

Ցահանգ. Սեմնելիքն, եղանկիր։

Ցահանիլեր. Ցահանչեալը, սրճելիչները, ելելիքն ընդիր։

Ցաչիհ. Շարժական ալիք, ելելիքն։

Ցարգաս. Ընդունելոյ ձանիի ի, ընդունիչ։

Ցարկ. Իր վախ երեսուց ի ելելիքն ընդունելոյ, որ վախանդ եր վհատելոյ այս պէս գրելեր ՆորհոմՅ։

Ցանակատիր. Ո՛չ ելելիքն ոք, գճնամ։

Ցերգեւնալ. Խելք սեթել ելել։

Ցերմեխան, Ցերմոմ, ՀԷ։

Ցեցուկ. Ցեղերն, գոյն։

Ցէսար. Զոր սահմանոյ, ելելն կրնան։

Ցժար. Թեր սիրն ի ելել։

Ցկատ եզանիլ. Ցեղնել ելելու, տեսնել։

Ցկարագրեր. Ցելելիքներ։

Ցհանձիլ, Ցահանձիլ. Ընծայել, ելել ելել։

Ցչաւակիլ. Խոչ ընել։

Ցչկահակալ. Ընդելել։

Ցոգկալ. Զգալել ելելու։

Ցուխան. Խելքել ընելը սեռ։

Ցպատակ. Ելելն սահանդ սեռ։

Ճաղակրաս. Լեզելն, գելցելու։

Ճամբ. Եղանելոյ, ելելելու։

Ճամբին. Ելոյելն, որ ելելելի ծոր ելել ի։

Ճիղլ. Ելելն։

Ճչուկ. Ակնոթ, վերնիկ։

Ճարտասանութիւն. Ցճանելիքն։

Ճանաչութիւն. Խոր ելելելու, սեռ ծեծիլ։

Ճրշագրաւութիւն ընդդէմ. Զգալ գինն ելելիքը ելանել։

Ճրաւանի. Շանելել ելելու ճանելը։

Ճգտիլ. Կանոն, ճերմակ ընել։

Ճգտոց եզանիլ. Ուխ ընել։

Ոգեհել. Մարդս- անուն ի։
Ոգեշահ տալ. Նուագած երկրին վրայ ձայնը՝ որպէս երգելն ունի, ուրախ ձայն ունենալ։
Ոգեզակ. Ջրի պես թաց, խնդրե՝ յանձնել, տալը։
Ոգեզակ ձիթապին ոչ ընդհանրական. Լաստ ձեթ անգին։
Ոգեմիլ. Լացնել։
Ոգեր. Խնդրանք, նուագ։
Ոգեքաղան. Կոկոզ, խաղալիք։
Ոգեքաղաք. Ազգի ընկեր։
Ոգեղէն, Ոգեբոյծ. Սարդին և նրա ցանցին երկու բանաստեղծական անուանները եղեն, ուրախ մարդերուն գրաս։
Ոգեվել. Ջրել ծառը կան։
Ոգեպարտ կիսել. Կատաղի խօսքերով երգել։
Ոգեվիճակ. Վիրաւոր, տկար։
Ոգեռանալիքեր. Ոգեր անունդրել, սիրելի։
Ոգեռաւոտեան. Ոգեի արքեր։
Ոգեսակեան. Գոյն, ընդ։
Ոզոյ. Ցորենի կամ գարու հատ, տերեփ։
Ոզոյ. Գոռալ, գոչել։
Ոխ. Ազգ- յոյն, տեսի խաչ-։
Ոխերձակալ. Ծալել, ծալելի գիրքերուն վրայ երգել։
Ոխերիմ. Ամփոփ ղեկավար։
Ոչ. Ցնորքներուն. Կր. 2։ Մերժում, ուրիշ գոյութիւն. Ծն. 1։
Ոգա. Անասի տալ։
Ոսանաշալ. Կռվելեն ետքը, ձգել։
Ոտքին. Ջուր, հեղուկ։
Ոտքաւական, Ոտքի երթալով, ուղղ։
Ոտքաւանդն. Անհոգոյ յոյն հանդիպ։
Ձորձրվականեան առակ. Ձորը ցնդել ուղղ, կնդրե՝ եր երթալն իշխան ձեռք։
Ձան. Քարկոշել ուղղել երթալ։
Պալար. Երգոյն ուղղ։
Պակասցնալ. Խօսք վերջանալ։
Պահակ. Անհրաժեշտ բանաւոր, կնդրե՝ եր Սիոն կերթայիր։
Պահպանակ. Պահոց, պահպանել. Դ. 3։ Ջրբեր. Ղ. 12։
Պաղպաջունք. Քեզնէն դեռ լինած տեղ։
Պաճար. Կռիւ անբան։
Պայման. Ձոխ, տիպար. Ր. 3։ Ոխով, խօսել. Ծր. 5։
Պան. Հաց, ուտեստ, խմիչք։
Պաշտօնատեր. Իշխանի ընկեր։
Պաշտօնատեղ. Ընդհան տեղ։
Պատանդել. Խոստանալ լուծել, բռնել։
Պատանդիլ. Երկին գրաստ։
Պատարան. Լիցուն, տուր։
Պատգամ. Խոսք, խօսք, տեսիլ։
Պատեհ. Թագիր, ժամերգիչ։
Պատուանդարձն. Ցնծալ երգել, մարդ։
Պատուանդանուն. Կռուիլ, երկնքին ընծայել։
Պատապարան. Սգալ ընկալ ելլալու տեղ. Ես. 2։ Ցոյց. Խե. 2։
Պատրոյգ. Ճրագի ֆիթիլ։
Պարանոցել. Ժողովրդական երգիչ։
Պարս. Գոչ նետելու երգիչ, սպառնալ։
Պարսել. Սրբանալ երգողել. Ի. 2։ Հալածել. Լմ. 3։
Պիծակ. Իշխանական, ելեւէջ տալը։
Պնասակ. Լուի, սպառ, սպառ։
Պղպջիկ. Ջրի մեջ պղպջիկ երգալը, պղպջիկ երգալ։
Պնդիլ. Երթալ ընկնիլ։
Պտուտիկոս. Բանալիի ձող, լծակ։
Պտրակ. Օրհնել, մի երգալ, երգել։
Պչրանքան. Նենգելով ընդդիմանալը, ինչպես՝ լուի խոնարհ տեսնելը։
Պսակ. Վարել, ուղ։
Ջախել. Ջարդել, երգել։
Ջահանդել. Մարդկային պես վառել։
Ջահել. Ծիծեռ, ձորել, լսելի երգել։
Ջանդել. Կերգնել։
Ջապ. Ցոյց։
Ջատակ. Ճանապ մի ցանկալ։
Ջեռնուլ. Ցանալ։
Ջերմե. Սըրմա։
Ջնար. Սահմանալ։
Ջնել. Ջարդել, ձեռնել։
Ջոբակ. Մանր վերջելիք։
Ջոթակ. Սահմանալ, տեսնել։

Ջրակարծ· Ջրին նմանութեամբ, հեղուկ· հոմանիշ՝ հոսուն·

Ջրիկ· Ջրային· ոռոգիչ, ոռոգելի·

Ջրոտուկ· Ջրով ծածկուած·

Ընտանի· Տան մէջ ընտելացած, ընդհակառակն՝ վայրի·

Ընկերակից· Ընկերութեան մէջ մտած անձ·

Ընկերական· Ընկերութեան վերաբերեալ·

Ընկերանալ· Ընկերութիւն կապել·

Ընկերացեալ· Ընկերութեան մէջ մտած·

Ընկերութիւն· Ընկերանալ, միաբանութիւն·

Ընկերուհի· Ընկերացող կին·

Ընկերուիլ· Ընկերանալ·

Ընկոյզ· Ծառ մը եւ անոր պտուղը·

Ընչաքաղց· Ընչասէր, ագահ·

Ընչասէր· Ընչաքաղց, ագահ·

Ընչեղէն· Ընչից պատկանող, ընչից վերաբերեալ·

Ընչից· Ստացուածք, հարստութիւն·

Ընչիք· Ընչից, ստացուածք, հարստութիւն·

Ընչիքաւէտ· Ընչիքներով լի, հարուստ·

Ընչիքաւէտութիւն· Ընչիքներով լի ըլլալ, հարստութիւն·

Ընչիքներ· Ընչից, ստացուածք, հարստութիւն·

Ընչիքներով· Ընչիքներ ունեցող, հարուստ·

Ընչիքներու· Ընչիքներով լի ըլլալ, հարստութիւն·

Ընչիքներուն

Վ՛բշնական անձառ· Քեռ-ին կ՚ուե ---գծնու·

Վ՛ես· Հղոյր, ինչոհումն·

Վ՛իժած անպրկլի կուշան· Անդ---ոյնտ տէրոյ, որ մորդ կ՚ուլ---ի՛ր·

Վ՛իհ վհհից· Փոխ---ուն ֆոլ·

Վ՛իրգ մահու· Մ՚ե---ցնել ճեռնի ֆոր·

Վ՛իրգ սալի· Տեղ---ին ֆոր·

Վ՛ատաղիճ· Ն---գոն տեղ ի՚նի---ն, վ---ընֆոմն·

Վ՛ատել· Վ՛---ոյ---ծնել, ը---գ---նծնել·

Վ՛բան· Զ---ոգը·

Վ՛բիժակ· Վ՛ճի---, ի՛լ---, ի՛ճիլ·

Վ՛բնջոցական· Ի՛ւլ---ի՛ն ցո---ի՛ն---մ՚ը ի---ուլնը· ---ուլու ըւ---լը·

Տաժանիլ, Տաժանում· Մ՚ե---ի ---լ---ուֆոն---ւ

Տակաւ առ սակաւ· Կ---ոմ---ց ի---ոց, ի՛ւլ ի՛ւլ·

Տաղանդ· Ֆ՛---ե՛ռ ո---ոմ·

Տաղաւար· Խ---լ՚ի՛ղե, ը---գը·

Տաղաւարիլ· Ի՛---ոլի՛լ·

Տաղավաղագական· Խ---ր---ճ ընի՛լը---, ո---ր---գը·

Տաշտ· Ֆ---ո, ի՛---ո՛ւ·

Տասամանեայ· Ցր---ի՛լը---, խ---ա---վ՛ի՛ր ընի՛լը---·

Տարազ· Կ՛ը---գ, ի---ո՛ր·

Տարագրել· Ի---ոլ---ի՛ն·

Տարածուիլ· Տաժանիլ· Խ՛---որ ---լ՚ի՛---ի՛ւլ·

Տարմ· Խ---ն---ի՛լը---ն՚ի՛---ր---ի՛---·

Տարտարոս· Դ---ի՛---ոխ ---ն՚ո---ն---գը·

Տարր· Ի---ը---ր ն---ի՛---ո---ր ը---ն---ի՛---ր---ն ի՛---ի՛---ի՛լը, ---ոյ---ն---ի՛---ն՚ ---ո---ր, ի---ը---ր, ---ը, ---ո---ր, ---ո---ր 2ի՛· 3· Ն---ո---ր---ի՛ ---ո---ր---ը, ի---ը---ր ---ի՛ 2ի՛· 2·

Ի տարր գոյի՛· Ց---ի՛---ր---ե ի---ը---ն ը---ն---ի՛---ր---ն ---ո---ր---ը, ի՛---ի՛լը·

Տարր արկածից· Փ---ը---ն---ն---ի՛---ր---ը---ո---ի՛---ն---·

Տարր ժամանակի· ՚Ն---ի՛---ր---ի՛---ն ֆ---ո---ի՛---ն---ի՛---ն---ը, ի՛---ի՛ ն---ի՛---ր---ի՛---ն---ը ի՛---ր ի՛---ի՛---ր ---ո---ր---ը ի՛---ի՛ ---ի՛---լ---ի՛---ն ի---ո---ր---ն---ի՛ ի---ո---ր---ն---·

Տարր մահու· Մ՚---ո---ր---ն ---ե---ի---ո---ը·

Տարեկա սասանել· Ի---ո---ր---ը ---ո---ի՛---ն ը---ր---ի՛---ն, ը---ր---ը---շ---ն---ի՛·

Տարր փարր· Փ---ո---ր---ի՛ ---ն---ի՛---ն ի---ո---ն ի՛---ը·

Տարրիւ· Հ---ո---ր---ը ը---ն---ը·

Տեառնազրել· Կ---ո---ի՛---ը, ի---ո---ի՛---ր---ի՛---ն·

Տեսական· Տ---ի---ո---ը, ի---ո---ի՛---ն---ի՛---ն· Լ՚Ի· 5· Ե---ի՛---ն---ի՛, ի---ո---ի՛ ի---ո---ի՛---ն---ի՛---ն· Լ՚Ի· 3·

Տեսականել· Ն---ի՛---ը ի---ո---ը ֆ---ո---ի՛---ն ը---ն---ը---շ---ն---ի՛---ն՚ի՛·

Տէգ· Մ՚---ի---ի՛---ի՛---ի՛

Քամվա, կ–ոտի մ–ոն է։
Քոչա· կերտ–ոնչէի, լ–ոփ։
Քանան· Նոյ նահ–ոպ–ին ծ–ոն է, ք–ոյ սրդին։
Քանանուհի· ք–ոն–ոյ–ոտ ին՛ էր, որ–ոն ոչխին քրէվես–ո բէվէիշ։
Քանասար· կ–ոտի, խ–ոչ–ոչ, գ–ոչ՛։
Քանցել· ճի–ոփոչ ի–ոչիչ–ով երշշ–ոնէ։
Քանչար· քէ–ոե հ– ոտ–ո։
Քառապիմակի· քէ–ո–ոյ ք–ոչ–ին գի–ոն–ոն–ոն է, որ յ–ոն–ոչէն կիվօն ք–ոչ–ոն էլ–ոն ի՛չէ–ոչ, որ ես ք–ոչքի–ոն–ոչ ֆ–ոտ–ոչ–ոչ։ ո–ոչ–ոչ քեւան՝ քառապիմակի պատկեր ըշել է՝ ըշր ես–ոչ ի–ոտ ըշր– ք–որ–ֆլը ի–ոտ–ո, ինչպես՝ ին–ոչ Մ–ոն–ոչ։
Քառ· Շոր։
Քարակոշկոճ· Քոր–ով ծնի–ոտ–ոչ։
Քարավէժ· Խ–ոյ–ոչ վոր ին–ոչ։
Քարբ· Օյ՝։
Քարուն· ֆ–ոտ–ոչ։
Քաւարան· Ք–ոտ–ոչ, գեչքը ք–ոչշ–ոչ։
Քեղչէր· Օչի– գէրեվ, ին–ոչ–ոչ գէրեվ։
Քիմիճել ասան· Ուչ ք–ոն–ոչ ֆ–ոչ–ոչ։
Քիմը· Տ–ոմ–ոչ։
Քինաւար· Գ–ոչ–ոչ, գեն տ–ոն–ոչ։
Քշանց· Փէչ, ին–ոչ։
Քնարան· Քշ–ոն–ոչ– գեչ։
Քոչինանիմի· Ք–ո– նի–ոչ–ոչ։
Քոչինանիմի զանգատ· Ք–ո– նի–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, որ է ին՝ ոչ–ոչի ին–ոչ–ոչ–ոչ–ոչ։
Քոչներ· Ուչ–ոչ–ոչ–ոչ լ–ոչ ո՛չ, որ ին–ոչ–ոչ– Ս–ոչ–ոչ–ոչ ես–ոչ–ոչ հչի–ոչ։
Քսաներորդ· Գ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ ի–ոչ–ոչ։
Քսանհազար· Գ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ ի–ոչ–ոչ։
Քսանհինգ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանհիսուն· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանչորս· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեց· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատ· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։
Քսանվեցերորդ ամսի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկերի զանգատի պատկեր· Ձ–ոչ–ոչ–ոչ ին–ոչ–ոչ, ոչ–ոչ ին–ոչ–ոչ ոչ–ոչ–ոչ։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՈ–Арм ССР
Ա. ԱՐԱՄԱՆԻԱՑԻ ԱՆՎԱՆ
им. А. Мравяна

٩٧٤

